Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏԱԼԻ ՍՈՒՔ

9(56)
Ս-53

Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

(19-րդ դարի 90-ական թթ. — 1914 թ.)

1652

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1982

ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԿԱՆ ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
Ин-т востоковед. АН АрмССР

ԳՄԴ 63.3 (5 Թու)
Կ—53

Գրախոս՝ պատմ. գիտ.
դոկտոր-պրոֆ. Վ. ԴԻԼՈՅԱՆ
Խմբագիր՝ Բ. Հ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Կիրակոսյան Ջ. Ս.

Կ—53 Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ։— Եր.։ Հայաստան, 1982, 360 էջ։

Մենագրության մեջ նկարագրված է, թե ինչպես XIX դարի վերջերին օսմանյան կյանքի քաղաքական ասպարեզ իջած երիտասարդ թուրքերը ստեղծեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, թմբկահարեցին թուրքական պետությունը վերակառուցելու, բարեփոխելու իրենց ծրագրերը։ Իշխանության գլուխ անցնելով (1908-ին), երիտթուրքերն իրենց դրսևորեցին որպես մոլի շովինիստներ, զարկ տվեցին պան-թուրքիզմին, ոտնահարեցին երկրի ոչ թուրք ժողովուրդների տարրական իրավունքները։ Նրանք Թուրքիան ներքաշեցին առաջին համաշխարհային պատերազմի հորձանուտը, կազմակերպեցին արևմտահայության հրեշավոր գենոցիդը, հակասովետական ինտերվենցիա սանձազերծեցին Անդրկովկասում։ Երիտթուրքերը դատապարտվում են քաղաքակրթության ու մարդկության դեմ իրենց կատարած չարագործությունների համար։

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար։

Կ $\frac{0506000000}{701(01)82}$ 58—82 ԳՄԴ 63.3 (5 Թու)
Ց47

© «Հայաստան» հրատարակչություն, 1982

ՆԱԽԱԲԱՆ

1981-ի մարտին Ստամբուլում հանդիսավորությամբ, պետական ու զինվորական պատիվներով նշվեց ոճրագործ Թալեաթի սպանության 60-ամյակը։ Հոծ բազմության, պետական ու զինվորական մարդկանց մասնակցությամբ թուրքական պետական հիմնի մեղեդիների ներքո կատարվեցին թուրքական ավանդական արարողություններ։

Տեռորիզմի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին համաբտակող այսօրվա թուրքական զինվորական իշխանավորները գլուխ խոնարհեցին, հարգանքի տուրք մատուցեցին տեռորիստի ու մարդասպանի, հայոց զանգվածային բնաջնջման գլխավոր կազմակերպչի «հիշատակին»...

Հիրավի, ներկայիս Թուրքիայի պորտաբույծ վերնախավը՝ հողատեր-կալվածատերերը, կապիտալիստները, առևտրականները, պետական պաշտոնյաները, միլիտարիստ-զինվորականները հեծած աշխատավոր ժողովրդի վզին, երկրում իրականացնելով հակաժողովրդական, հակադեմոկրատական քաղաքականություն, գործնականում ապացուցում են, որ իրենք երիտասարդ թուրքերի ավանդների հետևողական պաշտպաններն ու ժառանգորդներն են, թուրքիզմի դրոշակակիրները, «գորշ գայլերի» հարազատ զավակները։ Եվ եթե ժամանակ առ ժամանակ «գորշ գայլերը» միմյանց կոկորդ են կրծում՝ դա նույնպես թուրքական իրականության ավանդական երևույթներից է։

Վերը նշված արարողություններից մի քանի շաբաթ անց Անկարայում «գիտական» ֆորումում ապացուցվում էր, որ

Քեմալ Աթաթուրքը հակասոցիալիստ էր, որ նա միշտ հպարտացել էր գիտական սոցիալիզմը չընդունելու համար, որ զուր են թուրքական ազգային-ազատագրական շարժման հաջողության գործում գերագնահատում հարևան մեծ պետության դերը, որ Թուրքիայում ամեն ինչ կատարվել է թուրքավարի, թուրքերի համար և հանուն Թուրքիայի: Այս ֆորումը կրկին շեշտը դրեց թուրքականության, ասել է թե թուրքիզմի, երիտասարդ թուրքերի դավանած գաղափարախոսության վրա:

Եթե մեր հիշատակած այս երկու եղելություններին ավելացնենք այսօրվա թուրքական պետական ու ոչ պետական պրոպագանդան, թուրքական ժամանակակից պատմաբանների ու, ընդհանրապես, քաղաքական թեմաներով գրող հեղինակների գրվածքները, նրանցում արտահայտվող շովինիստական, այլամերժ, ռասիստական մտքերն ու կոչերը, օսմանյան կայսրության «վեհության» ու «հզորության» մասին հիշատակությունները, նրա կործանման վերաբերյալ չդադարող հոգոցները, պարզ կդառնա, որ թուրքական պետության տնօրենները այսօր ևս իրենց համարում են դարավոր չարիքի ժառանգորդներ ու ավանդապահներ, նրա պաշտպաններ ու փաստաբաններ:

Թուրքական հոոի պետականության հարվածներից առավել տուժել է հայ ժողովուրդը: Նրան ոչնչացնելու, իր ավանդական հողերից զրկելու քաղաքականությունը դրվեց պետական հիմքերի վրա և սկսեց իրականացվել սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք: XIX դարի 90-ական թվականներին ոչնչացվեց 300 հազար հայ: Արևմտահայության համապարփակ ողբերգությունը գործնականում իրականացվեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին երիտասարդ թուրքերի ձեռքով: Արևմտյան Հայաստանն ամայացավ: Հայ ժողովուրդը դարձավ գաղթականների, սովյալների, որբերի, լլկված ու տնավեր մարդկանց ազգ: Նրա բեկորները ցրվեցին աշխարհով մեկ, հանգրվանեցին Ռուսաստանում ու արաբական երկրներում, փրկություն որոնեցին հեռուներում, հասան Եվրոպա, Ամերիկա ու Ավստրալիա...

1920-ի աշնանը հայ ժողովրդին, արդեն Արևելյան Հայաստանի տարածքի վրա, նոր հարված հասցրին քեմալականների և կարաբեքիրների «նոր» Թուրքիայի բանակները: Հայաստանը նորից կորցրեց իր տարածքի մի մասը, տվեց 200 հազար մարդկային զոհ: 1920-ին և 1921-ի աշնանը նույն բախտին արժանացավ Կիլիկիան, որտեղ վերախմբված հայությանը սրի քաշեցին թուրքական զինվորական իշխանությունները արևմտաեվրոպական իմպերիալիստների բացահայտ թողտվությամբ:

Կատարվածը միևնույն գլխավոր գծի տարբեր փուլերն էին, իրականացված միևնույն հետևողականությամբ, նպատակ ունենալով հայ ժողովրդին զրկել հայրենիք ունենալու, ապրելու ու գոյատևելու իրավունքից:

Հայ ժողովրդի ազգային ու պետական շահերը, նրա ձգտումը՝ Ռուսաստանի հովանու տակ ընթանալ գոյատևման ու առաջադիմության ուղիով, հանդիպում էին օսմանիզմի ու պանիսլամիզմի, թուրքիզմի ու պանթուրքիզմի, սուլթանիզմի ու իրենց «հեղափոխական» հորջորջած երիտթուրքերի մարդատյաց թշնամությանը: Նույնը շարունակվեց հանրապետական Թուրքիայի դիկտատոր Քեմալ Աթաթուրքի օրոք: Այսօր նույն դիրքորոշումն են որդեգրել զինվորական հեղաշրջման միջոցով իշխանության գլուխ կանգնած թուրք միլիտարիստ-շովինիստները, ՆԱՏՕ-ի պնակալեզները:

Ահա թե ինչու այսօրվա Թուրքիայում հավասարապես հարգանք են մատուցում Թալեաթի ու Աթաթուրքի հիշատակին, նրանց անունների հետ առնչում թուրքական պետության կայունությունն ու հավերժությունը: Այսօրվա թուրքական քաղաքական ու գեղարվեստական գրականության մեջ դրական հերոս է նաև «կարմիր սուլթանը», Վ. Ի. Լենինի խոսքերով ասած՝ մեծ մարդասպան «թուրքական Նիկոլայ II-ը»՝ Աբդուլ Համիդ II-ը:

Ընդսմին, պատմության թուրքական ըմբռնումները, որպես կանոն, ասպարեզ են բերվում ու քննարկվում են շեշտված հակառուսական, հակասովետական ու հակակոմունիստական դիրքերից: Թուրքական նկրտումների հակաժողովրդական էության բացահայտումն ու մերկացումը միաժամանակ նշանակում են հարված հասցնել հակակոմունիզմի

ու հակասովետիզմի թուրք պաշտպաններին, նշանակում է ժողովրդին դատապարտել հայրենասիրության ու կոմունիզմի գաղափարներին, սովետական հայրենիքին նվիրվածության ու հավատարմության ոգով:

«Ժողովրդա-հանրապետական կուսակցության», «Արդարություն» կուսակցության, թե զինվորական հրամանատարության կառավարման ժամանակ Թուրքիան ահա արդեն երեսունհինգ տարի է, ինչ գոյատևում է՝ ՆԱՏՕ-ին վաճառելով իր ռազմաստրատեգիական դիրքը, սակարկելով Սովետական Միության և սոցիալիստական մյուս պետությունների դեմ ագրեսիվ պլաններին մասնակցելու շուրջը: Իսկ թուրք աշխատավորը աշխատանք է որոնում Եվրոպայի երկրներում: Մարդկային գործունեության և ոչ մի ասպարեզում, առաջադիմության և ոչ մի ոլորտում Թուրքիան չի արձանագրել աչքի ընկնող որևէ հաջողություն:

Առ այսօր Թուրքիայում ոչ ոք չի ժխտել 1920-ին հրապարակված Նեմիմ բեյի հուշերը, նրա փրկած ու հանրությանը հանձնած երիտթուրքական հայասպան գաղտնի հեռագրերի, կարգադրությունների, հրամանների բովանդակությունը: Դրանք հայտնի են ամբողջ աշխարհին: Դրանք հրապարակված են անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, ռուսերեն, հայերեն և այլ լեզուներով: Դրանց լուսանկարված ֆաքսիմիլեներին ծանոթ են հազարավոր մարդիկ: Թուրքական պաշտոնական շրջանների լռությունը, նրանց հարափոփոխ դիրքը դեռևս ապացույց չեն հայոց նկատմամբ կատարված չարագործությունը դատապարտելու անհրաժեշտության բացակայության: Իսկ թուրքական պատմագիտությունը շրջանցում է փաստերը, յուրովի հյուսում արևմտահայության ողբերգության սեփական վարկածը:

Թուրքական պրոպագանդան ոչ միայն խեղաթյուրում է պատմական իրողությունները, սեփական ժողովրդի նոր սերունդներից թաքցնում ճշմարտությունը, այլև դիմում է կեղծիքների, գրքերից ու մամուլի էջերից, ռադիոյի ու հեռուստատեսության միջոցով օր ու գիշեր ստի հեղեղ է թափում նրանց վրա: Թուրք տգետ զանգվածին մեծ դոզայով թշնամություն են ներարկում ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ մյուս ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ: Պաշտոնապես

անտեսվում է քուրդ ժողովրդի գոյությունը, չեն ճանաչվում նրա ինքնությունը, ազգային ինքնորոշման նրա իրավունքը: Վերջերս Թուրքիայի հասարակական աշխատանքների նախկին մինիստր Շերաֆեդդին Ելչին 2 տարվա ու 3 ամսվա բանտարկության դատապարտվեց միայն այն բանի համար, որ ասել էր, թե «ես քուրդ եմ, Թուրքիայում քրդեր կան»: Նրան մեղադրեցին «քրդական և պառակտողական պրոպագանդայի» մեջ[1]: Քրդական բանվորական կուսակցության դեմ պայքարի քողի տակ Արևելյան Անատոլիայի, Արևմտյան Հայաստանի ու Քուրդիստանի նահանգներում քուրդ բնակչությունը ենթարկվում է զանգվածային բռնությունների, սպանությունների ու ռեպրեսիաների: Տեռորիզմի դեմ պայքարելու քողի տակ այսօր Թուրքիայում ոչնչացվում են դեմոկրատական ամենատարրական ազատությունները: Արհմիութենական, կուսակցական գործունեությունն արգելված է: Պառլամենտարիզմը ոտնահարված է: Ավանդական կուսակցությունները զրկված են իրենց նախկին դիրքից: Զինվորական դիկտատուրան ամեն ինչ անում է ելնելով ՆԱՏՕ-ի շահերից և վարձատրվում ամերիկյան ու իմպերիալիստական մյուս ուժերի կողմից:

□

Ներկա գրքում մենք փորձել ենք ընթերցողին ծանոթացնել թուրքիզմի պատմությանը՝ սկսած նրա խանձարուրից, երբ XIX դարի ավարտին սկիզբ դրվեց թուրքականության գաղափարաբանությանը, վերջացրած երիտթուրքերով, քեմալականներով և այսօրվա թուրքիզմով, ցույց տալով նրանց օրգանական հաջորդականությունը, փոխկապվածությունը, նրանց հետապնդած նպատակների ու ծրագրերի ժառանգականությունն ու միասնականությունը: Մեր առաջնահերթ խնդիրն է ցույց տալ երիտթուրքերի շովինիզմը, նրանց դավանած թուրքիզմի ու պանթուրքիզմի հակահայկական բնույթը: Երիտթուրքերի գաղափարախոսությունն ու պրակտիկ գործունեությունն ուսումնասիրող ռուս, սովետական,

[1] "News Week", N. Y., 6. IV. 1981, p. 24.

եվրոպական արևելագետները, թուրքագետները հիմնական-նում շրջանցել են հայկական աղբյուրները, մամուլն ու գրականությունը: Մինչդեռ արևմտահայ քաղաքական-հասարակական գործիչները սերտորեն առնչվել են թուրք նացիոնալիստների հետ, հարուստ գրավոր ժառանգություն թողել թերթերի, ամսագրերի ու գրքերի էջերում, նամակների ու այլ փաստաթղթերի մեջ:

Չնայած կատարված որոշակի աշխատանքին, մենք դեռ շատ անելիքներ ունենք երիտթուրքերի հակաժողովրդական, հակամարդկային գործողությունները մերկացնելու, նրանց չարագործությունների լրիվ պատկերը բացահայտելու բնագավառում:

Դեռևս իրենց ուսումնասիրողներին են սպասում անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, թուրքերեն բազմահարուստ նյութերը: Երիտթուրքերը պետք է դատապարտվեն այնպես, ինչպես գերմանական ֆաշիստները: Նրանց չարագործությունները պետք է բացահայտվեն, խարազանվեն հանուն պատմական ճշմարտության, հանուն այն բանի, որ այսօրվա ու վաղվա սերունդները ճիշտ գաղափար ունենան մեր ժողովրդի դառնությունների մասին, ճիշտ կողմնորոշվեն հայրենասիրության խնդիրներում, ըմբռնեն ժողովուրդների բարեկամության ու համագործակցության մեր ժողովրդի համար այնքան անհրաժեշտ սկզբունքները, Սովետական մեծ Միության, եղբայրական ռուս ժողովրդի փրկարար դերը նրա պատմական ճակատագրում:

Սովետական թուրքագիտությունը, սկսած 20-ական թվականներից, լրջորեն զբաղվել է երիտթուրքական ախտի ուսումնասիրության ու դատապարտման խնդիրներով: Տըպվել են բազմաթիվ մենագրություններ, հոդվածներ, արխիվային հարուստ փաստաթղթեր: Այդ հրապարակումներում, բնականաբար, տեղ է հատկացվել նաև արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կատարած չարագործությանը: Ոմանք տվել են կատարվածի ոչ վատ պատկերը: Մյուսները հիշատակել են այն: Ոմանք էլ շրջանցել են այդ փաստերը: Չնայած որոշակի թերիներին, սովետական արևելագիտությունը, մասնավորապես թուրքագիտությունը, անդրադարձել է այդ խնդիրներին:

Սակայն, որքան էլ տարօրինակ թվա, շատ քիչ բան է արվել մեզ մոտ, Սովետական Հայաստանում, սովետահայ պատմագիտության մեջ: Ըստ էության մինչև 1965 թվականը մեր պատմագիտության մեջ միայն թռուցիկ կերպով, դեպքից դեպք է հիշատակվել 1915-ը ու նրա պատճառած արհավիրքը: Միայն 1965-ից սկսած խնդրի ուսումնասիրությունը դրվեց որոշակի հիմքերի վրա: Քանիցս այս խնդրին անդրադարձան «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերը, սովետական նշանավոր գիտնականներն ու ժուռնալիստները: Արդեն հրապարակում առկա է բազմապիսի պատմագիտական գրականություն:

Այնուամենայնիվ, դեռևս քիչ բան է արվում բուրժուական, մասնավորապես, թուրքական կեղծիքները քննադատելու ու դատապարտելու ուղղությամբ:

Պատմության կեղծարարությունը Թուրքիայում կատարվում է պետական մակարդակով, հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունը քողարկելու, հանրահայտ փաստերն աղավաղելու գործին մասնակցում են ինչպես թուրք մտավորականները, ռադիոն ու հեռուստատեսությունը, այնպես և պետական ու զինվորական գործիչները:

Երիտթուրքերի այսօրվա փաստաբաններից ոմանք փորձում են քողարկել կատարված չարագործությունը, մյուսները լղարիկ փաստարկներ են մեջտեղ բերում պաշտպանության տակ վերցնելու թուրքական պետականության խայտառակությունը: Ոմանք էլ այնքան են լկտիացել, որ ուռճարում են պատմությունը, նրա օրենքները, նրա ճշմարտությունները և փորձում են հարցականի տակ վերցնել... Հայաստան երկրի գոյությունը իսկ: Այսօր այդպիսի դիրքերից են ճառախոսում Թուրքիայի հանրապետության զինվորական ղեկավարները: Թուրքերն իրենք էին Էրզրումի կուսակալությունն անվանում «Էրմենիստան»: Դա ընդունված բան էր ժամանակի թուրքական պաշտոնական գրագրության կամ պատմագիտական գրականության մեջ: Իսկ երիտթուրքական կեղծարարները փորձում էին ամբողջապես ջնջել այդ ճշմարտությունը: Նույն բանն են այսօր անում թուրքական պատմաբաններն ու քաղաքական գործիչները:

Մենք մեր առջև նպատակ չենք դրել տալ Թուրքիայի պատմության սիստեմատիկ շարադրանքը: Ինչպես ընթերցողը կնկատի, գիրքը կառուցված է այն էական փաստերի, դեպքերի ու դեմքերի բնութագրման վրա, որոնք առավել բնորոշ էին երիտթուրքերի կառավարման շրջանին:

Մեր խնդիրն է ցույց տալ երիտթուրքերի գործունեության հիմնական ուղեգիծը, մասնավորապես բացահայտելով նրանց քաղաքականության հակահայկական դրսևորումները:

Մենք անհրաժեշտ ենք համարել երիտթուրքերի քաղաքականության դրսևորումները քննարկել կոնկրետ իրադարձությունների կապակցությամբ, կոնկրետ փուլերում, քաջ գիտակցելով, որ 1908-ին նրանք այն չէին, ինչ էին 1900-ին, իսկ 1912-ին կամ 1915-ին բոլորովին այլ տրամադրություն ունեին և հրեշավոր մտադրություններ էին փայփայում ու իրականացնում: XIX դարի 90-ական թվականների հայկական հարցի դրսևորումներին անդրադառնում ենք լոկ երիտթուրքական նացիոնալիստների քաղաքական հավատամքն ուսումնասիրելու և պարզաբանելու առումով:

Մենագրությունը բաղկացած է երկու գրքից: Ներկա հատորը ժամանակագրական առումով քննարկվող նյութն ընդգրկում է մինչև 1914-ի առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը: Աշխատության երկրորդ գրքում լուսաբանվում և քննադատվում են ինչպես երիտթուրքական հայասպան քաղաքականության հանգամանքները, այնպես և 1918-ից մինչև մեր օրերը թուրքիզմի դրսևորումների ռեակցիոն էությունը:

Թե որքանով է մեզ հաջողվել խնդրի կատարումը, կասի անաչառ ընթերցողը, որի ձայնին մենք կունկնդրենք ուշադրությամբ՝ մեր հետագա հրապարակումներն իրականացնելիս:

1981
Երևան—Եղվարդ

ՑԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սուլթանի միահեծան իշխանությունը առաջադիմության հետադիմական թշնամի: Օսմանյան կայսրության ներքին հակասությունները, իմպերիալիզմի գաղութատիրական քաղաքականությունը խարխլում էին թուրք բռնապետության հիմքերը: Պանիսլամիզմը պետական գաղափարախոսություն: Արևմտահայ աշխատավորության դրության վատթարացումը: Հայ էֆենդիները, Կ. Պոլսի մեծահարուստ վերնախավը «ազգեն բոլորովին անջատված կրնան համարվիլ»: Հայ ժողովրդի հակաթուրքական ազգային-ազատագրական մաքառումները: Հայոց ազգային կուսակցությունների գործունեությունը: Արևմտահայության զանգվածային ոչնչացման թուրքական պետական քաղաքականության սկզբնավորումը:

Երիտթուրքական շարժման առաջացման հանգամանքների մասին որպեսզի ընթերցողը համապարփակ պատկերացում ունենա, հարկ է թեկուզ համառոտակի պատկերացում տալ XIX դարի 90-ական թվականներին օսմանյան կայսրության ներսում և նրա շուրջը եվրոպական քաղաքականության մեջ տեղ գտած կարևորագույն իրադարձությունների մասին: Այս նպատակով նախքան բուն նյութի շարադրմանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ սուլթան Աբդուլ Համիդ II-ի «զուլումի» քաղաքականությանը, թուրքական կյանքի սոցիալ-տնտեսական զարգացման որոշ ասպեկտներին, արևմտահայության կոտորածին, հայոց կուսակցությունների գործունեությանը, տերությունների քաղաքականությանը:

XIX դարի 80-ական թվականների ավարտին հակահայկական ռեպրեսիաներն արդեն դրված էին լայն հիմքերի վրա: Լրտեսությունը, հետապնդումները, ձերբակալությունները,

ռազմաստիկանական այլ միջոցառումները դառնում էին Բ. դռան գլխավոր զբաղմունքը։ «Արմենիայի», «Հայաստանի», «Հնչակի» շուրջը համախմբված հայ հայրենասերների հակաթուրքական, հակասուլթանական խոսքից ու գործից խիստ անհանգստացած սուլթան Աբդուլ Համիդ II-ը դիմում է իր գլխավորած պետականության զինանոցի բոլոր միջոցներին՝ խեղդելու համար հայոց ազատագրական պայքարը։ Հայաստանի խնդիրը միահեծան ինքնակալը համարում էր օսմանյան կայսրության գոյության էական պայմանը և մտադիր չէր ո՛չ Բուլղարիայի օրինակը կիրառել, ո՛չ Լիբանանի մարոնիթների նման հայերին ինքնավարություն շնորհել։

Նա՝ օսմանների արյունակից շառավիղը, առավել նպատակահարմար էր համարում կտրել հայերի կոկորդը, քան զեկավարվել մարդկային բանականության տարրական չափանիշներով։ Արևմտահայության բնականոն ձգտումները դրսից հրահրված «խռովություններ» համարելով, նա մահմեդականների մոլեռանդությունը հրահրում էր «գյավուրների» դեմ։ Քրդական ֆեոդալական վերնախավի ավանդական հակահայկական խժդժությունները, ավազակությունները, ավարառությունները Վանի ու Կարինի նահանգներում վերցվեցին պետական հովանավորության տակ, երբ 90-ական թթ. սկզբից կյանքի կոչվեցին «համիդիե» գնդերը։ Այդ ժամանակից սկսած «հայոց բնաջնջումն այլևս դարձած էր թուրք պետության միակ ներքին և բացորոշ քաղաքականությունը»* (20, էջ 539)։ 1895-ին հայկական հարցի մասին հոդվածով հանդես եկած անգլիացի հեղինակ Վալտեր Հարրիսը համոզված էր, որ համիդիե գնդերի ավերիչ արշավանքները Բ. դռան նպատակային քաղաքականության հիմքն էին և պետք է ստիպեին հայերին հեռանալ հայրենի երկրից (39, էջ 13)։

Իրենք իսկ, եվրոպական գործիչներն են խոստովանում, որ Բեռլինի կոնգրեսից հետո հայ ժողովրդի վիճակը Թուրքիայում ոչ միայն չբարելավվեց, այլ ավելի վատացավ։ 1896 թվականին Ջ. Բրայսը «Անդրկովկաս և Արարատ» վերտառությամբ գրքի համար լրացուցիչ գրած՝ «Հայկական հարցի քսան տարին» գլխում ընդգծում էր խնդրի այդ կողմը։ «Այդ քսան տարիները հայ քրիստոնյաների համար շատ ավելի մեծ տառապանքներով էին լցված,— գրում է նա,— քան իրենց նախնիները տեսել էին Հայաստանի՝ առաջին թուրքական նվաճումներից հետո անցած ութ դարերի ընթացքում։ Դրանք թշվառության, ջարդի, մարտիրոսության, հոգեվարքի և հուսահատության տարիներ էին» (50, էջ 445)։ Շարունակելով իր միտքը, Բրայսը նշում էր մեծ տերությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի միջամտության բացասական հետևանքները։ Հայերի վիճակը ոչ թե բարելավվեց, ինչպես ակնկալվում էր, այլ ավելի վատացավ, նպաստելով հայ ժողովրդի մի ստվար հատվածի ոչնչացմանը (50, էջ 446)։ Սովետական պատմաբանները ցույց են տվել հպատակ ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման վրա թուրքական տիրապետության ունեցած «խոր հետադիմական ազդեցությունը» (43, էջ 29)։

Սուլթանի միահեծան իշխանությունն առաջադիմության հետևողական թշնամին էր։ Նրա սոցիալ-դասակարգային հենարանը օսմանյան պետության ամենահետամնաց, ամենահետադիմական դասակարգերն ու խավերն էին։ Կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացումը խաթարվում էր ամենուրեք։ Քիչ թե շատ առաջադիմական նախաձեռնությունները խեղդվում էին խանձարուրում։ Կապիտալիստական Եվրոպայի տնտեսական, սոցիալական զարգացման ազդեցություններին արձագանքում էր հունական, հրեական, սլավոնական, հայկական բուրժուազիան և հետո միայն թուրքական, մահմեդական մյուս ազգությունների տնտեսական-առևտրական վերնախավը։ Տնտեսական-առևտրական գործառնությունների ակտիվության տեսակետից թուրքական նորելուկ բուրժուազիան շատ էր ետ մնում իր մրցակիցներից։ Նա բոլորովին էլ ի վիճակի չէր միայնակ գլխավորելու հսկայածավալ հետամնաց երկրի արտադրողական ուժերի զարգացման գործը։ Տանուլ տալով տնտեսական զարգացման բնագավառում ծայր առած մրցակցությունը, թուրքական նորելուկ բուրժուազիայի ներկայացուցիչները հենվում էին սուլթանի իշխանության, պետական մարմինների օժանդակության վրա բռնի ուժով կանխելու, ի չիք

* Ասում են, թե «օսման» բառը թուրքական ծագում ունի և նշանակում է «սրունք ջախջախող» (10, էջ 29)։

դարձնելու հույների, սլավոնների, հայերի, հրեաների բացահայտ առավելությունները։

Ըստ «Սպեկտեյտըր» ամսագրի, Բ. դուռը վախենում էր հայերից, նրանց խելքից, խիզախությունից, անկոտրում ազգային ձգտումներից, ինչպես նաև ռուսական սահմանին նրանց մոտիկությունից, որից այն կողմ ռուսական կառավարման ներքո ապրում էր մեկ միլիոն հայ։ Արդեն 1891-ին այդ ամսագիրն ահազանգում էր, որ Բ. դուռը պատրաստվում է մասսայական տեռորի օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ, նպատակ ունենալով հայերին տեղահանել և գաղթեցնել Ռուսաստան (63, էջ 86)։

Հայերը տուժում էին ինչպես իրենց մահմեդական հարևաններից, առանձնապես քրդական ցեղերը, այնպես և Թուրքական կառավարչական պաշտոնյաներից՝ գիշատիչ ոստիկանապետից, ագահ հարկահավաքից, կաշառակեր դատավորից և այլ կողոպտիչներից։

Աբդուլ Համիդ II-ի կառավարման դատապարտելի մեթոդների, վայրենի բարքերի հիմնավոր քննադատությունը տվել է անգլիական դիվանագետ, իր կյանքի մեծ մասը Կ. Պոլսում անցկացրած Պիրսը։ Աբդուլ Համիդի կյանքին ու գործունեությանը նվիրված նրա գրքի XIV գլուխն ամբողջապես նվիրված է այդ խնդիրների լուսաբանությանը (60, էջ 331—350)։ Սուլթանն իրեն շրջապատել էր ապաշնորհ մինիստրներով ու խորհրդականներով, որոնք բախշիշի սիրահարներ էին, կորանի ուսմունքի կույր հետևորդներ։ Պիրսը նկատում է, թե «ճշմարտություն է, որ ընդհանրապես Թուրքերը, գործիմացությանը (բիզնեսին) անտեղյակ լինելով, տհաս պատկերացում ունեն տնտեսագիտության տարրական օրենքների մասին, և այս տեսակետից Աբդուլ Համիդը տիպիկ Թուրք էր» (60, էջ 263)։

Գերմանական «Ալգեմայնե Մյունխեն ցայտունգ» թերթն իր էջերը լայնորեն բացել էր Թուրքերի օգտին գրված հոդվածների առջև։ Դրանցից մեկը Օսման բեյի հեղինակությամբ արտատպվել էր «Նոր դարի» էջերում (23, № 70, 1895)։ «Նոր դարի» Կ. Պոլսի թղթակից «Մարսը» հանդես եկավ պատասխան հոդվածով («Հայոց խնդիրը և Օսման բեյը») (23, № 84, 1895)։ Մայոր Օսման բեյը շտապել էր գրչի մի հարվածով Հայաստանը ջնջել քաղաքական շահմատի վրայից։ Նա չէր ըմբռնում, թե ինչի վրա է հիմնված հայոց խնդիրը։ Հոդվածագիրը նկատում էր, որ Թուրքական իշխանությունների հակահայկական ընթացքը խարսխվում էր ինչպես քաղաքական, այնպես և տնտեսական դրդապատճառներով։ «Հայը առաջադիմական, կուլտուրական հատկություններ ունի, հայը ջանասեր, աշխատասեր է, հայը քաջ է խելքով, քաջ է հոգով ու մտքով. հայն այնքան նեղ ու դառը պայմանների մեջ անգամ կարողացել է եվրոպական քաղաքակրթությունը յուրացնել, պահպանել յուր եկեղեցին, կրոնն ու լեզուն. հայը ստեղծեց և զարգացրեց մեր երկրի առևտրականությունը, ծաղկեցրեց մեր գրականությունը, նպաստեց մեր տպագրական արվեստի առաջադիմությանը. հայը կարողացավ նաև մի քանի անգամ փրկել մեզ կատարյալ անկումից...

Ուրեմն այդ հայի վիճակը եթե բարելավենք, եթե նրա հարստությունը թողնենք իր ձեռքում, եթե ասպարեզ տանք զարգանալու, առաջադիմելու և աճելու,— նա մի օր ամենայն իրավամբ կգա, կնստի մեր գլխին ու մեզ կասի՝ որովհետև դուք քաղաքակրթության ասպարեզում անընդունակ եք, որովհետև դուք ձեր ծանրությամբ արգելք եք դառնում մարդկային հասարակության ընդհանուր լուսավորության և առաջադիմության գործին, ուրեմն դուք մեզ տիրապետելու և կառավարելու իրավունք չունեք, մենք ձեզ պիտի տիրապետենք ու կառավարենք... Իսկ լուսավորության ախտով վարակված Եվրոպան էլ ոչ միայն իրավունք կտա հային, այլև ուժ կտա, այլև կաջակցի նրան, նրա՝ մեր գլխին տեր դառնալու գործին...» (23, № 84, 1895)։

Ջարդերից մի փոքր առաջ, 1895-ի ապրիլի 5-ին, սուլթանը Անգլիայի դեսպան Ֆիլիպ Քերրիին ասում էր. «Հայերը հարուստ են, ու Թուրքերը աղքատ» (49, № 1, 1896)։ Այսօր այս նույն կեղծիքը կրկնում են ժամանակակից Թուրք հեղինակները, առանց սոցիալ-դասակարգային վերլուծության, առանց վիճակագրության, հենց այնպես, զուտ քմահաճ մոտեցմամբ, անտեսելով հայ գյուղացիական զանգվածների, քաղաքի աշխատավոր խավերի աղքատ ու թշվառ վիճակը։

Թուրքական բուրժուազիան դասակարգ էր դառնում XIX և XX դդ. սահմանագլխին։ Կապիտալիստ էին դառնում հո-

զատերերի, զինվորական ծառայողների ծոցից ելած մարդիկ։ Առևտրական բուրժուազիան կապված էր ֆեոդալական հողատիրության հետ, իսկ կալվածատերերը՝ առևտրավաշխառական կապիտալի հետ։ Բուրժուազիան շահագրգռված էր գյուղացիության ֆեոդալական շահագործմամբ։

Սովետահայ արևելագետ Հովհ. Ինճիկյանը հանգամանալից ուսումնասիրությամբ ցույց է տվել թուրքական էկոնոմիկայում ուժերի փոխհարաբերությունը, հունականի, հայկականի, հրեականի համեմատությամբ թուրք բուրժուազիայի խղճուկ, ածանցյալ իրավիճակը (37)։ Օրինակ, Այնթապ քաղաքը 1890—91 թթ. ուներ 43 հազար բնակիչ, որից մոտ 16,3 հազարը հայեր էին։ Սրանց ձեռքին էին կենտրոնացած վաճառականությունն ու արհեստները։ Մանածագործությունը խիստ զարգացած արհեստ էր, կապված Մանչեստրի հետ։ Հայ վաճառականները զարկ էին տվել եվրոպական, մասնավորապես, գերմանական ապրանքների ներմուծմանը (3, № 47, 1891)։ Ամենուրեք, Արևմտյան Հայաստանի թե Կիլիկիայի կենտրոններում հայ մանրբուրժուական առևտրական ու արհեստավորական խավերը շեշտված կենսունակություն էին դրսևորում տնտեսական զարգացման բոլոր բնագավառներում։

Բացի կղերական դասից, մելիքության ու բեկության աղայական մնացորդներից, հայ ժողովրդի բոլոր մնացած խավերը կենսապես շահագրգռված էին տնտեսական ու սոցիալական արագ զարգացմամբ, մտավոր-կուլտուրական վերածնությամբ։

Օսմանյան կայսրության ներքին հակասությունները, կապիտալիստական հարաբերությունների զարգացման ճանապարհին բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ խոչընդոտների առկայությունը, զարգացած եվրոպական պետությունների գաղութատիրական քաղաքականությունը խորացնում էին հրսկայածավալ երկրի հարաճուն ճգնաժամը։ Սուլթան Աբդուլ Համիդ II-ը բարդ ու խճճված ներհակությունների կծիկից ելք էր որոնում։ XIX դարի երկրորդ կեսին ծագած կրոնաքաղաքական ռեակցիոն հոսանք պանիսլամիզմը (կամ համիսլամականությունը) սուլթան Համիդի իշխանության հովանու տակ դարձավ պետական գաղափարախոսություն, որը քարոզում էր բոլոր երկրների մահմեդականների միավորում, պահանջում խեղդել ճնշված ազգերի ազգային-ազատագրական շարժումները։ Բալկաններում քրիստոնեական նահանգները կորցնելուն զուգընթաց սուլթանն ավելի էր շեշտում իր խալիֆ (բոլոր մահմեդականների հոգևոր առաջնորդ) լինելու հանգամանքը։ Նա պարծենում էր, թե պանիսլամիզմի միջոցով զառնալու է աշխարհի ամենաազդեցիկ միապետը (51, էջ 291)։ Նա ասում էր. «Ես նախ և առաջ հավատացյալների իշխանն եմ և դրանից հետո միայն օսմանցիների միապետը» (16, № 41, 1913) և ձգտում էր բոլոր իսլամներին համախմբել իր հովանու տակ։ Սակայն նրան չէին ենթարկվում շիաները, վահապիները և մուսուլմանական ոչ ուղղափառ ուրիշ աղանդներ։ Տակավին 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի միջոցին Թուրքիան պատվիրակներ ուղարկեց Թուրքմենստան, Խիվա, Բուխարա, փորձելով նրանց խաներին գրգռել Ռուսիայի դեմ։ Մի պատվիրակություն էլ գնաց Աֆղանստանի էմիր Շեր Ալիի մոտ՝ Թուրքիայի և Աֆղանստանի միջև զինակցություն կնքելու առաքելությամբ։ Սակայն այս ամենը ապարդյուն անցավ։ Համիդը գերվիշների, աստղագետների (աստղահմա) ազդեցության տակ էր։ Սրանք սուլթանին ներարկում էին այն պատրանքը, թե մի փոքր անց բոլոր մահմեդականները պիտի կռվեն Եվրոպայի դեմ։ Նրա այդ վարժապետները դեր խաղացին նաև Արաբի փաշայի հակաանգլիական ապստամբության (1882), Թունիսի հակաֆրանսիական ընդվզումների ժամանակ և այլն։ Սրանցից Տաֆերը, որը Համիդի անձնական կրոնավորն էր դեռ մինչև նրա սուլթան դառնալը, գլխավորեց պանիսլամիզմը Լիբիայում, իսկ Էսադը՝ Եգիպտոսում (24, № 2, 1900)։ Սրանց գլխավորությամբ էր, որ սկիզբ է առնում հակաքրիստոնեական շարժումը Համիդի հսկայածավալ կայսրության մեջ։ Կապիտալիստական Եվրոպայի գաղութատիրական քաղաքականությանը հակադրվում էր ընդհանրապես հակաառաջադիմական, հակաեվրոպական գլոբալ մի շարժում։ «Բոլոր մուսուլմանները եղբայր են»՝ հռչակում էին Կ. Պոլսի կրոնավորները, օսմանյան բանակի հաղթանակը պանծացնելով։ Այս գաղափարն օգտագործվում էր հակաեվրոպական, հակառուսա-

կան իմաստով, ձգտելով նվաճել մուսուլմանական աշխարհի համակրանքը։

Արաբական ազգային շարժման վերելքին զուգընթաց, օսմանյան կայսրության և մեծ տերությունների միջև պայքարն ավելի էր սրվում, պայքար, որը XIX դարի վերջին և XX դարի սկզբին արդեն խիստ անհանգստացնում էր սուլթան Համիդին։ Նա դիմում էր պանիսլամիզմի գաղափարախոսությանը, փորձում ընդհանուր մահմեդական ճակատ կազմել ընդդեմ արևմտաեվրոպական երկրների։ Ինքնապահպանման բնազդը թուրքական տիրապետող վերնախավին մղում էր ծայրահեղությունների, մեկ իմպերիալիստական տերությունից մյուսին փարվելուն, միայն թե շրջանցեին կայսրության փլուզման վտանգը։

Պանիսլամիզմի տեսաբանն ու հիմնադիրը Ջեմալ էդ-դին էլ Աֆղանին էր։ Նա դարձել էր սուլթանի մերձավորագույն խորհրդականը և կոչ էր անում հանուն իսլամի միավորվել ընդդեմ քրիստոնեական Եվրոպայի, որը ճնշում էր մահմեդականությանն ամբողջ աշխարհում (32, էջ 303)։ «Հնչակը» գրում էր, որ թուրքական «Մալումաթ» և «Սաբահ» թերթերը «...Անգլիային խրատ են տալիս մահմեդական Հնդկաստանի հետ «մարդասիրաբար» վարվելու, «խելացի, ժողովրդասեր, քաղաքակիրթ» ընթացք ունենալու դեպի նա, «սովամահ չանելու» նրան, «չկոտորելու բնիկներին», չբռնաբարելու կիներին...»։ ...Որ Անգլիայի թաթերը մաքուր չեն Հնդկաստանում, մենք այդ գիտենք, բայց որ նրա գլխին դայլի ավետաբան կարդացողը լինի սուլթանը, հիրավի, դա անճոռնի մասխարության չափն էլ անցնում է...» (17, № 9, 1897, էջ 65)։ Պանիսլամիզմի գլխավորներին փայփայում, սիրաշահում և օգտագործում էին գերմանական քաղաքագետները, նրանց տեսությունն օգտագործելով Անգլիայի և Ռուսաստանի ազդեցությունն իրենց մահմեդական հպատակների վրա թուլացնելու համար։ Հետագայում Ջեմալ էդ-դինն իբր հեռացավ սուլթանից, մերձեցավ երիտթուրքական շարժմանը և, նույնիսկ, խորհուրդ էր տալիս նրա շարքերում ներգրավել ոչ մահմեդական տարրերին (56, էջ 188)։

Պանիսլամիզմի մյուս կենտրոնը Քաֆրն էր (Հյուսիս-Արևմտյան Աֆրիկա), որտեղ գործում էր Սինուզի նշանավոր

միաբանության կենտրոնական վարչությունը։ Համիսլամական շարժման հիմնադիրներից մեկը ալժիրցի Սեիդ Մուհամմեդ ադ-Սինուզին էր, որը XIX դարի կեսերին քարոզում էր իսլամի վարչապետության մաքրությունը։ Միաբանության գործակալները հասնում էին մինչև Հնդկաստան ու Ճավա։

1897-ին սուլթանի մի նոր իրադեով (հրամանագրով) հրամայվեց առանձին ուշադրությամբ վերաբերվել կորանի դասավանդման գործին թուրքական գավառների մեդրեսներում (դպրոցներում)։ Իբրև ուսումնական առարկա կորանի վարդապետությանը մեծ նշանակություն տրվեց։ Այն պետք է զորավոր միջոց ծառայեր քաղաքական գերիշխանության հասնելու, հետևաբար և քրիստոնյա ժողովուրդներին մահմեդականությանը ստորադրելու համար։

Պանիսլամիզմի կրոնական-քաղաքական կոնցեպցիան բոլոր մահմեդականներին խալիֆի գերագույն իշխանությանը ենթարկելու նպատակն էր հետապնդում։ Ջիհադի և գազավաթի՝ անհավատների դեմ մուսուլմանների սրբազան պատերազմի տեսությունը պանիսլամիզմի կարևոր բաղկացուցիչ մասն էր։ Պանիսլամիզմը քարոզում էր մուսուլմանների քաղաքական ու կրոնական բացառիկության մասին ցնդաբանությունը։

Սուլթանն ու իսլամի նրա հավատարիմ սպասավորները ճիգ ու ջանք չէին խնայում Արևմտյան Հայաստանում մահմեդական կրոնի դիրքերն ամրապնդելու ուղղությամբ։ Դրա առաջին պայմանը հայության բռնի հավատափոխությունն էր։ Հայերին իսլամության մղելու քաղաքականությունը «Հայաստանի մեջ երկաթե ձեռքով կգործադրվի»,— գրում էին 1900-ին։ «Հեքիարիի նահանգին մեջ 450 հայ պարտավորվել է մահմեդականություն ընդունել, չկարենալով այլևս կառավարական հալածանքին տոկալ։ Կ. Պոլսեն կհեռագրվի, թե հայոց իսլամացման ծրագիրը մասնավոր ջանքերով կգործադրվի Դիարբեքիրի և Խարբերդի նահանգներուն մեջ» (24, № 9, 1900, էջ 136)։

Չնայած սուլթանի ու նրա պանիսլամիստ խորհրդականների ջանքերին, 90-ական թվականներին սուլթանի իշխանության շուրջը մահմեդական աշխարհի համախմբումն արդյունք չտվեց։ Օսմանյան կայսրության ներսում օրավուր

խորանում էին ազգային զարթոնքի, ազգային ինքնուրույնության պրոցեսները։ Հասունանում էր Բալկաններում թուրքական տիրապետության մնացորդներին վերջին հուժկու հարվածը հասցնելու պահը։ Վերելք էր ապրում արաբ ժողովուրդների ազատագրական շարժումը։ Հայկական կազմակերպությունների գործողությունները ժամանակ առ ժամանակ խուճապի էին մատնում իրեն իսկ՝ սուլթանին։ Եվ, վերջապես, բուն թուրքական շարժումը, օսմանյան իրականության քաղաքական ասպարեզ իջած և օսմանյան հայրենիքը փրկելու գործն իրենց նշանաբանը դարձրած երիտթուրքական կազմակերպությունները վերջնականապես խառնում էին սուլթանի քարտերը։

Ասենք նաև, որ օսմանյան կայսրության տիրապետող դասակարգերի համար պանիսլամիզմը ձեռնտու գաղափարախոսություն էր, քանի որ իսլամի անունից հօգուտ իրենց շահագործվում էին մահմեդական ժողովուրդները։ «Իսկական օսմանները» թեև հանդես էին գալիս պանիսլամիզմի դրոշի ներքո, միևնույն ժամանակ հանդիսանում էին թաքնված պանթուրքիստներ։ Բացի կրոնն օգտագործելուց, նրանք հանդես էին գալիս իրենց շուրջը թուրքալեզու ժողովուրդներին միավորելու և համախմբելու դիրքերից։ Վեր բարձրացող թուրքական բուրժուազիայի և նրա հաստատումն ու ամրապնդումն ապահովող մտավորականության, զինվորականության և կղերական ուժերի համար պանիսլամիզմը ձեռնտու էր արտասահմանի մահմեդական ժողովուրդների օժանդակությունն ապահովելու համար։ Բայց երկրի ներսում անհամեմատ օգտակար էր թուրքիզմը, որը քարոզում էր թուրք ժողովրդի միավորումը ըստ լեզվական ու ռասայական հատկանիշների։

Այս մասին ավելի հանգամանորեն կխոսենք ստորև։

□

«Միդհատի կուսակցության և երեսփոխանական ժողովին ջնջումովը սուլթան Համիդն օսմանյան կայսրության բացարձակ տերը եղավ» (24, 1900, էջ 307)։ Նա ճանաչում ու գնահատում էր մարդկանց միայն մի դասակարգ՝ լրտեսներին

(44, էջ 40)։ Տների խուզարկություններ, եկեղեցիների պղծում, ուսուցիչների ձերբակալություններ, դպրոցների փակում, հրդեհումներ, քաղաքական բանտարկություններ ու անվերջ, անհամար դատավարություններ։ Հասարակության առաջընթացին հակադրվում էին բիրտ ուժը, յաթաղանը, զնդանը։

Ահա թե ինչպես էին նկարագրում սուլթանի իշխանությունը 90-ականների սկզբին։ «Ամբողջ կայսրության մեջ ուրիշ բան չկա, բայց եթե Սելդրզ-Քեոշքի սիրականներու և առանձնաշնորհեալ ընտանիքներու տիրապետություն մը, որք կհրդփանան և կապրեն ճնշված ժողովուրդներուն հարստահարումեն և աշխատութենեն», «փաղիշահներուն բռնապետությունն ամենեն ահռելի պատճառներեն մին է դոր երկնային և բացարձակ իշխանության պատմությունն արձանագրած ըլլա երբեք։ Տկարները ճնշելով տուրք առնել և պերճանքի ու ճոխության մեջ ապրել, այս եղած է և այս է տակավին այդ երկրակալներուն գլխավոր, միակ հոգսը։ Ուսկից որ անցած և ուր որ բնակած են, հոգիներն աղոտած են և երկիրն ամուլ դարձուցած»։ «...Ժողովրդի կացությունն օրըստօրե ավելի կծանրանա։ Ապահովություն չկա ոչ մի տեղ...»։ Ամենուրեք այդպես էր։ Օրինակ, Ալաշկերտ գյուղաքաղաքի նոր կառավարիչը նախկին ավազակապետի որդի էր, ազգությամբ քուրդ։ Նրա գլխավոր զբաղմունքը հայերի հաշվին կողոպուտ անելն էր (19, № 13—14, 1891)։

Առաջին հայացքից սուլթանը միահեծան տերն էր իր տերության։ Իրականում գավառում ամեն ինչ թողնված էր տեղական փաշաների ու բեկերի քմահաճույքներին։ Երբ ամերիկյան համալսարաններից մեկի պրոֆեսորը գավառում տեղի փաշային սպառնում է, թե կբողոքի սուլթանին իրեն հասցված վիրավորանքի համար, ինքնիշխան փաշան հայտարարում է, թե ինքն է իր նահանգի տերը և ամերիկացու հետ կարող է անել այն, ինչ ցանկանում է։ Ամերիկյան «Արենա» ամսագիրը նշում էր, որ այդ փաստը ճշմարիտ պատկերացում է տալիս Թուրքիայում ստեղծված դրության մասին և պաշտպանում էր Հայաստանում քրիստոնյա «ազնիվ և իրական նահանգապետ» կարգելու հարցադրումը (62, էջ 368)։ Թուրքական գործերին քաջածանոթ Մոլթքեն իր «Թուրքական նամականու» մեջ ցույց էր տալիս այն «անարդար

հալածանքները», որոնց ենթարկվում էին հայերը Թուրք կառավարության կողմից։ Իսկ ընդհանրապես, Թուրքահպատակ դառնալուց ի վեր հայերը երբեք կյանքի, պատվի և ինչքի ապահովություն չեն վայելել (5, № 3, 1900, էջ 89)։ Համիդյան Թուրքիան ձգտում էր «ջնջել առաջադիմական զգացումները», «խեղդել ամեն մի մտավոր և հոգեկան թռիչք, որ կհամարձակվի տիրապետության նեխած մթնոլորտից վեր թռչելով, ազատ կյանքի քաղցր օդը շնչել» (23, № 116, 1895)։ Այս բանն ավելի շատ զգում էին այն ուժերը, որոնք արթնացել էին և բռնել զարգացման, կյանքի ու առաջադիմության ուղին։

Այլակրոն, այլացեղ ժողովրդական զանգվածների դրությունն ավելի ծանր էր, քան Թուրքերինը, քանի որ նվաճված, ստրկացված ժողովուրդների մոտ սոցիալական ճնշմանը գումարվում էր նաև ազգային և կրոնական հալածանքը (47, էջ 24—25)։ «Թեև Բարձրագույն դռան բոլոր հպատակները հավասարապես կրում էին անկում ապրող պետական օրգանիզմի թշվառությունը և մահմեդական տարբեր ցեղերը՝ դրուզներ, քրդեր, արաբներ, նույնպես ապստամբում էին Թուրքական լծի դեմ, բայց և այնպես անջատողական ձգտումը ամենից առաջ հատուկ էր քրիստոնյա երկրներին։ ...Առկա էին այն բոլոր տարրերը, որոնք պետք է առաջ բերեին քրիստոնյա ազգերի՝ հույների, բոսնիացիների և հերցեգովենների, սերբերի և բուլղարների մահացու կռիվը Թուրքիայի դեմ։ Հերթն այժմ հայերինն է» (12, էջ 142—143)։

Օսմանյան կայսրության ամենաբնորոշ կողմն այն էր, որ «Թուրք բռնապետության հիմքը խարխլվում էր. նրա՝ իբրև ժամանակակից պետության զարգացման հիմքը, սակայն, չի ստեղծվում։ Այդ պատճառով էլ նա պետք է խորտակվի ոչ որպես կառավարական ձև, այլ որպես պետություն, ոչ թե դասակարգային պայքարի, այլ ազգային կռիվների հետևանքով։ Իսկ ի՞նչ կստեղծվի,— հարց էր տալիս Ռոզա Լյուքսեմբուրգը,— դա վերածնված Թուրքիա չի լինի, այլ մի շարք նոր պետություններ՝ կտրված Թուրքիայի մարմնից» (12, էջ 143)։ Այս տողերը նա գրել է 1896-ի հոկտեմբերին։

«Օսմանցին չի կրնար ընդունել, որ անհավատ հպատակներն իրեն պես ազատ, իրեն հավասար, բարօրիկ, հանգիստ

և փառավոր լինին, քանզի բարօրություն և հաջողություն միայն ճշմարիտ կրոնի պարգևներն են։ ...Նրա ըմբռնմամբ «գյավուր» կամ անհավատ բառը հոմանիշ է թշվառության, մոլորության և անիծյալ վիճակի... Օսմանցվոց ըմբռնմամբ «զճիշտն ասելով՝ գյավուրն ապրելու ալ իրավունք չունի» (18, № 12, 1893, էջ 185)։ Ահա այսպես էր նկարագրում ամերիկահայ «Հայք» թերթը Թուրքական դժնի իրականությունը 1893-ին։ Ոստիկանության նոր նախարար կարգված Շեֆիգ բեյը սպառնում էր Կ. Պոլիսը մաքրել «վնասակար ամեն տարրերից»։ Նա հայտարարում էր, թե հայերի դեմ այնպիսի միջոցների է դիմելու, որ նրանց աչքում 1890—1896 թթ. շրջանը, իր նախորդների պաշտոնավարության տարիները հայերի համար ոսկե դար ներկայանային (24, № 22, 1900, էջ 348)։

Համիդի հրամանով գրաքննադատությունը մամուլի էջերից իսպառ վերացրել էր աշխարհագրական և պատմական անունները, ասենք՝ «Մուրադ», «Միդհատ փաշա», «Հայաստան», «Մակեդոնիա» և այլն։ Երկու տարի շարունակ Թուրքիայի բնակչությունը չգիտեր Սերբիայի թագավոր Ալեքսանդրի և թագուհի Դրագայի մահվան մասին։ Միայն 1905-ին Թուրքական թերթերը գրեցին նրանց «կայծակնահար» լինելու մասին, լռության մատնելով իսկությունը։ Հետագայում արգելվել էր որևէ բան գրել պարսից մեջլիսի կամ ռուսական պետական դումայի մասին (44, էջ 49)։

Բ. դուռը կաշառքի միջոցով գտնում էր վարձկան փաստաբաններ ու բարեկամներ, որոնք առանց խղճի խայթի սևը սպիտակ էին ներկայացնում, բարին՝ չար, անբարեկարգը՝ բարեկարգ։ Սրանց շարքում պետք է հիշել «Ռևյու դ'Օրիան» ֆրանսատառ Թուրքական շաբաթաթերթը, որը ամբողջովին ծառայագրվել էր Թուրքական դժնի իրականության գովերգությանը։ Սա օգտվում էր Թուրքական պետական գանձարանից։ Այս թերթի բնաբանն էր՝ խաբենք, քանի որ աշխարհը կամենում է խաբվել։

«Հայ թերթերուն վրա կանխարգել գրաքննությունը 1888-ի հոկտեմբերին սկսավ հաստատվել» (24, № 14, 1900, էջ 220)։ Մահվան սպառնալիքի տակ Համիդն արգելում էր հայկական թերթերի մուտքը կայսրության ներքին շրջանները

(26, էջ 290)։ Հայոց պատմության, աշխարհագրության դասավանդումն արգելված էր ամբողջ Թուրքիայում. այդ առարկաներին նվիրված գրքերը բռնագրավվում էին, այրվում, իսկ ուսուցիչներն ու հեղինակները ենթարկվում պատժի՝ որպես ոճրագործներ։

Կ. Պոլսում միևնույն խստությունն էր տարածվում հայ, հույն, թուրք և եվրոպական լեզվով հրատարակվող թերթերի վրա։ «Եղանակին համեմատ այս կամ այն ցեղը ավելի կամ նվազ խստության կենթարկվի իր թերթերուն միջոցով։ Ինչ որ կներվի մեկուն, ոճիր է ուրիշին համար։ Թուրք օրագրությունը ամենեն ավելի ծանրապես շղթայվածն է»,— կարդում ենք ժամանակի մի թերթում։ «Հայ և հույն թերթերը կասկածոտ կառավարության մը միշտ գրգռված կրպահեին վերջին քանի մը տարիներս...»։ Կ. Պոլսի մամուլի «վերին հընկողությունը» Սագզ Հովհաննես, Ստեփան Արզուման, Պարթև էֆենդիներին էր հանձնված։ Իսկ XIX դարի վերջին Կ. Պոլսի եվրոպական մամուլի վերատեսուչը Նշան Սեֆերյան անունով մեկն էր (24, № 14, 1900, էջ 219—220)։

Ահա թե ինչպես է նկարագրում իրավիճակը ականատեսը (Արփ. Արփիարյանը). «Երբ կհասնենք 1891 թվականին, օրագրության համար հեղձուցիչ մթնոլորտ մը արդեն ստեղծված կըգտնենք։ Երեք տարիե հետե հայ մամուլը կանխարգել գրաքննության ենթարկված ըլլալով, իրավունքները կամաց-կամաց իրմեն խլվեր են... Հայոց ինքնուրույն հին կյանքի մը հիշատակը բնաջնջելու խորհուրդով արգելված էր պատմական որևէ տեղեկության հրապարակումը» (24, № 19, 1899, էջ 297)։ Իսկ հետո՝ «օսմանյան իշխանությունը առանց որևէ ակնածանքի բացարձակորեն կըջախջախե հայությանը ակներև կերպով։ Հայոց համար հանրային կյանք գոյություն չունի. պատրիարքարանը Դռան մեկ ճյուղը կհամարվի...» (24, № 19, 1899, էջ 298)։ 1890-ին թուրքական իշխանությունները թնդանոթներ տեղափոխեցին Հայաստան, սկսեցին վերանորոգել և կարգի գցել ամրոցները, Կարինից հեռացնել կասկածելի երիտասարդներին։ Կ. Պոլսից եկած հրամանի համաձայն Մարտինիի հրացաններ էին բաժանվել Մշո, Բաղեշի, Վանի, Բայազետի և Ալաշկերտի քրդերին։ «Դեյլի նյուսը» գրել էր, թե «քրդերն արդեն զինված էին նոր հրացաններով» (19, № 1, և № 2, 1890)։ Թուրքերն իրենք էին գանգատվում, թե «Համիդիե հեծելազորքին զինվորագրությենեն ի վեր քրդերն անտանելի դարձած են» (24, № 7, 1898, էջ 107)։

Շուտով գործի անցան մոլլաներն ու մզկիթները։ Բաղեշի մզկիթներում իմամները հակահայկական քարոզներ էին կարդում։ Հայերը վախից ուրբաթ օրերը խանութները չէին բացում։ Լոնդոնի «Թայմսը» գրեց, թե 1878-ից ի վեր Եվրոպայի տված խորհուրդները լսելի չեղան սուլթանին։ Նրա կարծիքով միակ ազդու միջոցը մնում էր Հայաստանը զենքի ուժով գրավելը։ «Թայմսը» նկատում էր հայոց անմիաբանությունը, ինչը կարող էր վատ հետևանքներ ունենալ (19, № 1 և 2, 1890)։ Շատ հայեր ապաստանեցին Ռուսաստանում։ Արդեն 1894-ի հոկտեմբերին մոտ 3000 փախստականներ գտնվում էին ռուսական կառավարության հովանավորության տակ (23, № 70, 1895)։

Սուլթանական ռեժիմի հարվածներից ամենից շատ տուժում էին արևմտահայ աշխատավորական զանգվածները։ Հայ աշխատավոր գյուղացիներին հողից զրկելու պրոցեսն ավելի էր խորացել։ XIX դարի ավարտին արևմտահայ գյուղացիների հողերի վրա մուսուլման գաղթականներին ամրացնելու քաղաքականությունը համապարփակ բնույթ էր ստացել։ Պանդխտությունը գնալով ավելի էր ծավալվում։ Կ. Պոլսի մեծահարուստ վերնախավի ու գավառահայ աշխատավոր զանգվածների միջև օտարացման նախկին վիճակը շարունակվում էր։ Հայերի ինքնությանը նպաստող ամեն մի միջոցառում իշխանությունները գավառահայության համար բացառում էին։ Հայոց համար թերթ լույս չէր տեսնում ո՛չ Վանում, ո՛չ Էրզրումում, ո՛չ Արևմտյան Հայաստանի մյուս կենտրոններում։ Աշխատանքի մարդիկ, խաղաղ ու ապահով կյանքի կարոտ արևմտահայ աշխատավոր գյուղացիությունը, մանրբուրժուական խավերը Ռուսաստանի հովանավորության ու պաշտպանության մեջ էին տեսնում գոյատևելու իրենց հեռանկարը։

90-ական թվականների սկզբին Կ. Պոլսի մեծահարուստ վերնախավը, էֆենդիական դասը, Բ. դռան հետ կապված մյուս փողատեր խավերը ունեին սուլթանական իշխանությա-

նց հարմարվելու դիրքորոշում։ Արևմտահայ աշխատավոր զանգվածների սոցիալ-տնտեսական վիճակի վատացման, քաղաքական իրավազրկության հետագա խորացման պրոցեսը հիմնականում մնում էր նրանց օտար մի բան։ Քաղաքական պայքարի ասպարեզ իջած հայոց կուսակցական կազմակերպությունների գործունեությունից նրանք խորշում էին այնպես, ինչպես սատանան լույսից։ Կ. Պոլսի ու մյուս օտարերկրյա կենտրոններում իր գործունեությունը ծավալած հայոց վերնախավի ապազգային դիրքորոշումը պախարակելով, նրանք գրում էին այն մասին, թե «մենք երախտապարտ պետք է լինենք հայ գյուղացուն, որ դարերից ի վեր ամեն ազգի դժոխային չարչարանքները կրելով, ամենայն արիությամբ պահապան հրեշտակ, կենսատու արև հանդիսացավ յուր հայրենյաց, Հայաստանի ապագա իրական վերածնության։ Հայաստանը փրկեց հայ գյուղացին, յուր հայրենիքի փրկության առաջին, գլխավոր շարժիչ ուժը» (23, № 160, 1895)։

Այլ էր բանը Կ. Պոլսում, Իզմիրում, հայաշատ մյուս առափնյա քաղաքներում։ Հայ էֆենդիները ծառայամիտ էին, սուլթանասեր։ Ժամանակները քիչ բան էին փոխել։ 1880-ին պոլսեցի մեծահարուստ Արթին Դադյան հայը մի նամակ էր գրել Ներսես պատրիարքին, որտեղ պատմել էր թուրքական նախարարների նիստում հայկական հարցի մասին ընդունված գաղտնի որոշման մասին։ Պատրիարքը այդ նամակը հանձնել էր մի հայ վաճառականի, որ նա փոխանցի Սարգիս Համամջյանին (սա բարձր պաշտոններ էր վարել օսմանյան կայսրության արտաքին գործերի մինիստրությունում, Հռոմում երկու տարի եղել էր թուրքական դեսպան, քաջ գիտակ էր ֆրանսերենին)։ Այս հավատարիմ պաշտոնյան գաղտնի թուղթն ուղղակի դնում է սուլթանի սեղանին։ Դադյան էֆենդին «սուլթանին ոտքերը իյնալով ներողություն կբխնդրե»։ 90-ական թվականների ավարտին էֆենդիների դիրքը մնաց նույնը։ Այդ նկատի ուներ Արփ. Արփիարյանը, երբ գրում էր, թե «Դռան ծառայության մեջ գտնվող ամեն հայ, որ իր ազգին չարիք մը չըներ, արդեն... ազգին բարիք մը բրած է...» (24, № 23 և 24, 1900, էջ 358)։

Սուլթանը «հայ երկրագործ դասին աղքատացնում էր ու հուսահատեցնում հարկերը ծանրացնելով»։ Նրանց տեղում

բնակեցնում էր չերքեզների, չեչենների և լեզգիների։ Անպատիժ էր թողնում քրդերի վայրենություններն ու բռնաբարությունները, նրանց զենք բանեցնելու իրավունք շնորհում, իսկ հայերին արգելում։ Նա հալածում էր ուսուցիչներին և խիստ հսկողություն սահմանում դպրոցների վրա։ «Նախկին սուլթանների ֆերմաններով նվիրագործված ազգային առանձնաշնորհումներն ու իրավունքները բռնաբարվում էին և ոտքի տակ կոխվում։ Պատրիարքարանն ու ազգային ժողովը դարձել էին մասխարաջություն»։ Ազգային կյանքի մեջ ահագին դեր էր տրվում թուրքական protégé-ներին՝ հայության պատրիարքին, Սիմոն բեյին, Նուրյան էֆենդուն և այլոց, զարկ էր տրվում անբարոյականությանը, պատիվ, պաշտոն և արծաթ էր տրվում մատնիչներին (33, № 39, 1889)։

1890-ի դեկտեմբերի 2-ին «Լե Սեմաֆոր դե Մարսել» լրագիրը հրապարակել էր մոտ 40 հայ պաշտոնատար անձանց ու վաճառականների գոհունակության և հավատարմության ուղերձի պատճեն։ Ստորագրողների մեջ էին ֆինանսների մինիստր Հակոբ փաշան, Եգիպտոսի Խեդիֆ Իսմայիլ փաշայի Կ. Պոլսի գործակատար Աբրահամ փաշան, դատական գործերի նախարարության խորհրդական Վահան էֆենդին և արտաքին գործերի նախարարության խորհրդական Հարություն Դադյան փաշան։ Թերթը գրում էր, որ նույն պահին թուրքական իշխանությունները ձերբակալում էին մեծ թվով հայ մտավորականների, այդ թվում ուղերձն ստորագրողների հարազատներին, և գալիս այն եզրակացության, թե այդպիսի անմիաբանության պայմաններում հեշտ է ընթերցողներին ցույց տալ, «թե հայկական խնդիրը հեռու է կարգադրվելեն, հակառակ ամեն հավատարմական ուղերձների»։ Թերթը շեշտում էր, որ «հայկական խնդիրը երթալով կկընճռոտի ու կխառնակվի և մարդ չգիտե, թե ինչպես պիտի վերջանա» (3, № 34, 1890)։

Մ. Փորթուգալյանը փաստորեն պատասխանում էր սուլթանի քղանցքը համբուրող մարդկանց, երբ գրում էր. «Իսկ եթե կան տակավին մարդիկ, որոնք այնչափ անամոթ և լիրբ են, որ այսչափ սոսկալի հարստահարություններից հետո դեռ երես ունեն ներկայանալու և ասելու, թե Թուրք կառավարությունը բարեխնամ է, թե հարստահարություն չկա Հայաս-

տանի մեջ և «Արմենիայի» գրածները սուտ են և այլն, այդպիսի պնդերեսներին խոսք հասկացնելու աշխատանքը զուր է արդեն»։ «Պետք է ուրեմն թուրք կառավարության լուծի տակ հեծող Հայաստանի այդ վարչական դրությունը բանդել,— եզրակացնում էր Մ. Փորթուգալյանը,— պետք է հեղափոխությամբ տապալել այդ խեղճ երկրի վրա ծանրացող բռնապետությունը, որպեսզի կարողանա Հայաստանն ազատ շունչ առնել, մի բարեկարգ վարչությամբ ապահովվել» (23, № 62, 1889)։

Օսման փաշան ու նրա նմանները, հիշատակելով, թե Հակոբ, Արթին, Դավուդ, Ֆրնկա, Միքայել փաշաների ձեռքում է գտնվել դրամատան, ֆինանսների, արտաքին գործերի և այլ մինիստրություններն ու գերատեսչությունները, պահանջում էին, որ միլիոնավոր հայեր լռությամբ անցնեին մի քանի հայերի վայելած փառքի, պատվի և շնորհների կողքով։ «Ինչպե՞ս կարելի է պահանջել միլիոնավոր հայերից, որ իրենց կրած տանջանքների, բռնության ու հալածանքների մասին չգանգատվեն, չտրտնջան, թե ինչ է իրենց միջից մի քանի հակոբներ, նուբարներ, արթիններ և այլք մեծամեծներ պաշտոն են վարում, շնորհներ, պատիվներ են վայելում» (23, № 86, 1895)։

Շատ շատերի համար տիրապետող մտայնությունն այն էր, որ «պատրիարքը որքան իմաստուն և կորովամիտ ալ որ լիներ, գթություն միայն կրնար հայցել այդպիսի ժողովրդի համար, բարվոք կառավարություն կրնար պահանջել, բայց ճշմարիտն ըսելով, չէր կրնար ինքնօրինություն, ազատություն պահանջել... Ազատություն չպահանջվեր բանիվ, այլ կառնվի բռնությամբ, կստացվի կռվով և կպահպանվի զորությամբ» (18, № 8, 1893, էջ 121)։

Փողատեր վերնախավի մարդիկ ժլատ էին, ազգային գործերի նկատմամբ անտարբեր, աշխատավոր մարդուն շահագործում էին ոչ պակաս դաժանությամբ, քան թուրք կալվածատերն ու պաշտոնյան։ Նրանք պատրաստ էին շռայլ ծախսեր անել, նվերներ մատուցել սուլթանին ու նրա շրջապատին, բայց զլանալ և քոռ կոպեկ չտալ ազգային գործերի համար։ Նշելով մեծահարուստ արևմտահայերի ժլատությունը, դրամը չծախսելու մոլուցքը, Արփ. Արփիարյանը մի

առիթով հիշեցրել էր Նար-պեյի օրինակը, որը 1878-ին Պետերբուրգ այցելելիս կանգ էր առել հյուրանոցի անհամեմատ էժան 5-րդ հարկում։ Իսկ Ռուսիայի ծերունազարդ վարչապետ Գորչակովը նրան փոխադարձ - այցելության գնալիս հևիհև, հազիվ էր բարձրացել նրա հարկաբաժինը (24, № 20, 15, 1898, էջ 306)։

Ինչպես թուրքական բանակը, այնպես էլ էֆենդիների բանակը միայն ուտելու վարժված էին։ «Դարերե ի վեր քեֆովը ապրողը հանկարծ չի կրնար առատուն մութն ու լուսուն գործի վազել, մինչև գիշեր շարաշար աշխատել, մանավանդ երբ ստիպողական հարկը զիրենք չի մղեր այդ զոհողության»։ Տնտեսական մարզում «օտարամուտ աշխարհակալողները հաղթվեր են իրենցմե հաղթվող ժողովուրդեն»։ Այս պարտությունն արդեն ակներև էր XIX դարի 90-ական թվականներին։ Արդեն այն ժամանակ տեսանելի էր, որ թուրք մահմեդականը վաճառականության, արդյունագործության ասպարեզներում կարող էր հաջողություն ունենալ հույսը կառավարության վրա դնելով և ոչ թե հաջողության հասնել ազատ կապիտալիստական մրցության միջոցով։ Հաճախ էր գրվում այն մասին, որ թուրքական պետական ծառայության մեջ գտնվող «հայ էֆենդիները հայ ժողովրդի հետ ոչ հոգեկան, ոչ մտավորական հաղորդակցության մեջ են։ Այս վերջին քսան տարիներս անոնք ազգեն բոլորովին անջատված կրնան համարվիլ։ Միշտ ահուդողի մեջ զգուշավոր կապրին, իրենց հայ ազգայնությունը իրենց ոճիրն է։ Կընմանին հանցավորներու, որոնք մինչև մահերնին ոստիկանական խիստ հսկողության ներքո ապրելու դատապարտված են» (24, № 21, 1899, էջ 322)։

Կ. Պոլսի հայոց վերնախավի շրջաններում որոշակիորեն նկատվում էր ընդհանրապես հայերի հակաթուրքականությունը դատափետելու, մերժելու մտայնություն։ Մարդկանց անհանգիստ, ընդվզող խմբերին դանակոծում էին, հայհոյում բանավոր ու գրավոր։ Ըմբոստները մշտապես ենթարկվում էին մատնության իրենց իսկ հայ լրտեսների ու գործակալների ձեռքով։ Առաջացել էր մի որոշակի գաղափարական հոսանք, որը հակաթուրքական բոլոր շարժումները համարում էր վնասակար, դատապարտում էր Խրիմյանին, Վարժապետ-

յանին (11), Իզմիրլյանին և այլոց, քարոզում կրավորական նություն, ենթարկվելու ստրկամիտ հոգեբանություն։

Այդպես մտածողների համար ուրիշ միջոց չկար, քան հարմարվելը։ Կ. Պոլսի հայոց վերնախավը սուլթանին գովերգելու մեջ մյուս ազգերի մեծահարուստներից ետ չէր մնում։ 1894-ին, թե 1899-ին «նորեն մայր տաճարին զանգակները մեծագոչ կըհրավիրեն հայ ժողովուրդը «թագավոր փառաց» երգելով գոհանալ աստուծմե տարի մը ևս սուլթան Համիդը հայ ազգին պարգևած ըլլալուն համար։ Նորեն հայ մամուլը իր ձայնը հառնելով եվրոպացի, հույն, հրեա, թուրք մամուլին նվագահանդեսին, կրպանծացնե սուլթան Համիդի քսաներեք տարվան իմաստությունը»։ «Նորեն մեր պատրիարքը և մեր ժողովրդականները վազեվազ Եըլդըզ կերթան... Համիդին տանելու քրիստոնեության ու քաղաքակրթության երախտագիտական մեծարանքները» (24, № 18, 1899, էջ 281)։ Ահա այսպես էր նկարագրում Կ. Պոլսի վերնախավի վարքագիծը «Հրազդան» անունով հեղինակը «Օրվա կյանքը» նյութի մեջ Լոնդոնի «Նոր կյանքի» էջերում 1899-ի սեպտեմբերին։

Ամենևին էլ պատահական չէր, որ 1898-ի աշնանը Արշ. Չոպանյանը նկատում էր, որ Կ. Պոլիսը՝ «Թուրքիո հայոց մտավորական կենտրոնը՝ պղտոր լույս մը կարձակե այս վայրկյանիս» (5, № 1, 1898, էջ 5)։

Սակայն միևնույն պահին ակտիվ գործունեություն ծավալեցին 80-ական թվականների ավարտին հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզ իջած և սուլթանի միահեծան իշխանությանը կռվի ձեռնոց նետած հայ ազգային հակաթուրքական թարմ ուժերը։

□

1890-ից սկսած ակզբում «Հնչակ», ապա Հ. Հ. դաշնակցություն կուսակցությունները պրակտիկ գործողությունների դիմեցին բուն օսմանյան կայսրությունում։ Մեկը մյուսից առաջ ընկնելով, միմյանց վարկաբեկելով, այդ կազմակերպություններից յուրաքանչյուրը ձգտում էր իր ձեռքը վերցնել արևմտահայության ազատագրության գործի ղեկավարման մենաշնորհը։ Սկզբում ավելի ակտիվ էր «Հնչակը», ավելի

մեծաթիվ էին նրա կազմակերպություններն ու համակիրները։ Հետո, աստիճանաբար, Հ. Հ. դաշնակցությունն առավել ակտիվ դարձավ, մանավանդ երբ «Հնչակը» պառակտվեց։

1890-ի Գում Գափուի ցույցից մինչև 1895-ի օսմանյան բանկի գրավումը Հնչակ—դաշնակ մրցապայքարը չէր նպաստում հակասուլթանական միասնական ճակատ ստեղծելուն, բռնակալությանը հուժկու հարված հասցնելուն։ Չնայած անհաս հերոսների խիզախությանն ու անձնուրացությանը, ընդհանուր առմամբ կռիվը կայծկլտում ու մարում էր, զարնվելով օսմանյան պետականության պրահին, եվրոպական գիվանագիտության խարդավանքներին, մշտապես զգալով դաշնակից ուժերի բացակայությունը։ Ամենամեծ շարիքը համազգային ճակատի, ուժերի համախմբման բացակայությունն էր։ Ազգային պետականության ու անկախության իրավունք նվաճած նախորդ բոլոր երկրների (Հունաստան, Սերբիա, Չեռնոգորիա, Բուլգարիա և այլն) պայքարից հայկական շարժումը նախ և առաջ տարբերվում էր հենց դրանով։

«Քրիստոնյա ազգերը, տվյալ դեպքում հայերը, ուզում են ազատագրվել թուրքական տիրապետության լծից, և սոցիալ-դեմոկրատիան անվերապահորեն պետք է ճանաչե այդ»։ Ռոզա Լյուքսեմբուրգը շեշտում էր թուրքական իրականության տարբերությունները կապիտալիստական երկրների պայմաններից (բանվորական շարժման բացակայությունը, բռնակալության ձևերը և այլն), որ սուլթանի տիրապետությունից «քրիստոնյա երկրները», այդ թվում և հայերը, «կպոկվեն սոցիալական բնական զարգացման կամ, ավելի շուտ, քայքայման հետևանքով»։ Նա սոցիալ-դեմոկրատիայի խնդիրն էր համարում պաշտպանել ազատագրական այդ մաքառումները, քանի որ «քրիստոնյա երկրների ազատագրումը Թուրքիայից միջազգային քաղաքական կյանքում առաջադիմություն էր նշանակում»։ Նա կոչ էր անում՝ «քրիստոնյա ազգերի ինքնուրույնության ձգտումներին վերաբերվել լիակատար համակրանքով» (12, էջ 143—147)։

Ազգային շարժումը «...այսպես թե այնպես քաղաքականության ասպարեզ է գրավում բնակչության բոլոր դասակարգերը» (1, հ. 20, էջ 499)։ Բայց այդ պրոցեսը հայ իրականության մեջ չափազանց բարդ պայմաններում էր տեղի

ունենում։ «...Ազգի ազատագրման համար անհրաժեշտ էր ապահովել նրա բոլոր կենսունակ ուժերի ընդհանրությունը...» (15, էջ 55)։

«Ուր պետք է ուժ փնտրել» առաջնորդողում («Արմենիա», № 40, 20. II, 1889) Մ. Փորթուգալյանը գրում էր. «Կուզանք, թե քուրդը կկողոպտե, կսպանե մեզ, թուրքը կսարսափահարե. գթություն և պաշտպանություն կմուրանք օտարներեն, քրիստոնյա Եվրոպայեն։ Տկարներին բնական է փափաքիլ, որ մի մեծ ուժ գտնեն զիրենք պաշտպանելու համար։ Բայց ո՞ւր պետք է փնտրել, ո՞ւր կարելի է գտնել այդ ուժը»։ «Երբ ժողովրդին մեջ ուժ գոյացած չէ իր պաշտպանության համար, երբ բռնության դեմ բռնի միջոցներով դիմադրելու հոգին չեն քաջալերեր և զորացներ անոր մեջ, այդպիսի պայմանների մեջ լոկ եվրոպական տերություններին և ժողովուրդներին վրա հույսեր տալը բոլորովին վնասակար մի ընթացք է, ժողովուրդը հուսախաբության մեջ գլորել է, ժամանակի կորուստ է»։ «Ուստի ամեն ջանք պետք է ի գործ դնել ժողովրդին մեջ քաջալերելու, զորացնելու համար ազատության ոգին և երբ այդ ուժն այն աստիճանի հասած կլինի, որ կարող կլինի բռնի միջոցներով պահանջել յուր իրավունք, այդ ժամանակ իրեն ձայն կհուզե նաև Եվրոպան, որ յուր շահերի համար կստիպվի ականջ տալ և ուշադրություն դարձնել հայերի պահանջներին»։

Տակավին 1893-ին ամերիկահայ «Հայք» հանդեսը (խմբ. Մ. Ս. Գաբրիելյան) գրում էր. «Հայկական խնդիրն ուրեմն լոկ հացի, հանգստության, կենաց և ընչից ու պատվո ապահովության խնդիր չէ, որպես հաճախ կըսվի։ ...Հայկական խնդիրը հայ ազգի գոյության և չգոյության, Հայաստանի վերածնման կամ վերջնական կորստյան խնդիրն է» (18, № 8, էջ 119)։ Հոդվածագիրը Եվրոպայից պահանջում էր «կամ թույլ տալ, որ մեր հարստահարյալ գավառք կցվին Ռուսիո, կամ թույլ տալ, որ Հայաստան ինքն իրեն համար թափի ազատության ճիգեր և ի պատեհ ժամուն օգնել» (18, № 8, էջ 119)։ «Խոսքի զորությամբ օտարաց միջամտությունը խնդրելով, ազատ և ինքնօրեն լինելու հույսն տկարի ցնորք է. պարտ է մեզ մարտնչել, արյուն թափել՝ ճշմարտապես ազատ և ինքնօրեն լինել կարենալու համար» (4)։

1896 թվականի սկզբին Կարինում, ապա Կ. Պոլսում հայերը բողոքի ցույցեր արեցին, դիմումներ հղեցին թուրքական իշխանություններին, նրանց ներկայացնելով իրենց պահանջները։ Կարինում հայոց եկեղեցին խուզարկվել և անարգվել էր։ Մի հայ երիտասարդ գնդակահարել էր թուրք սպայի։ Այնուհետև տեղի էին ունեցել հայ-թուրքական արյունոտ ընդհարումներ, որոնց զոհ գնացին և վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ։ Կ. Պոլսում պատրիարքը տեղեկագիր ներկայացրեց կառավարությանը։ Սուլթանը հայերին մեղադրեց «իբրև առաջին գրգռիչը» (19, № 21 և 22, 1890)։

Եվրոպական թերթերից մի քանիսը փորձեցին խնդիրը բացատրել Ռուսաստանի մեքենայություններով, մյուսները՝ Անգլիայի գրգռիչ դերով։ Լոնդոնի «Թայմսը» գրեց, թե «հայերն առաջին անգամ ցույց տվեցին, թե կարող են մարտնչել» (19, № 21 և 22, 1890)։

1890-ի հուլիսի 9-ին «Հայաստան» թերթի թղթակիցը հայտնում էր Կարինից. «Սոսկումը շարունակվում է քաղաքում. 40-ից ավելի հայեր և երեք քահանա ձերբակալվել էին որպես հունիսի 20-ի արյունահեղ կռվի գրգռողներ։ Ոչ մի մահմեդական չէր բանտարկված»։ Թերթն ապացուցում էր, որ «այս խորհրդավոր գործը նախապես սահմանված և կարգադրված էր օսմանյան նախարարությունեն» (19, № 23—24, 1890, էջ 3)։ Հունիսի 18-ին տեղի ունեցավ խուզարկություն։ Ոչ մի կասկածելի բան չգտնվեց։ Հուլիսի 19-ին ժողովուրդը գրգռվեց։ Եկեղեցին հռչակվեց սրբապղծված։ Խանութները փակվեցին։ Որոշվեց բողոք գրել իշխանություններին։ Առաջնորդ Գևորգ վ. Ութուճյանը մի քանի երեելի հայերի հետ գնաց վալիի մոտ և մի քանի բացատրություններ խնդրեց։ Վալին ընդունեց եղելությունը և խոստացավ իմաց տալ մեծ եպարքոսին լուրի սուտ լինելու մասին։ Ժողովրդի գրգռվածությունը շարունակվեց։ Խանութները վերաբացելու ժամանակ խառնակություններ առաջացան. հարձակումներ միմյանց վրա։ Մեջտեղ եկան թուրք զինվորականությունը, բաշիբոզուկները (3, № 4, 1890)։

1890-ի հուլիսի 27-ին, Գում Գափուի («Ավազի դուռ») մայր եկեղեցում թուրքիկներ ցրելուց հետո ամբիոն բարձրացած Հարություն Ճանգյուլյանը հրապարակեց մի թուղթ,

որը կոչվում էր «Մեր պահանջքը»։ Այստեղ նկարագրվում էին երկրում հայ ժողովրդի նկատմամբ կատարվող բռնություններն ու հարստահարությունները և խնդրվում էր պատրիարքից, «որ նա մեզ առաջնորդե կառավարություն, որպեսզի անձամբ խնդրենք իրմե, որ հանի մայր երկրին այժմյան անտանելի կացության վերջ մը տալ» (3, № 6, 1890)։ Այնուհետև պատրիարք Աշըգյանին ստիպեցին երկուհազարանոց ամբոխի գլուխ անցած շարժվել սուլթանի պալատը՝ հայերի վիճակը բարվոքելու մասին համախոսականը նրան հանձնելու։ Տեղի է ունենում ընդհարում ոստիկանության և ցուցարարների միջև։ Մի քանի հոգի սպանվում են, մի քանիսը ձերբակալվում։ «Կեցցե՛ ազատությունը, կեցցե՛ Հայաստանը», «Կեցցե՛ հայրենասերները» լոզունգները թրնդացնում էին երկինքը։ Կայսերական թաղրան կոխկրտած և սուլթանի պատկերը պատռած քաֆեճի Արթին աղան դատապարտվեց մահապատժի, երեք ուրիշներ՝ 15 տարվա բանտարկության։ Ձերբակալվածների թիվը հասնում էր 600-ի։ Այդ ամենից հետո, օգոստոսի 1-ին Խորեն Աշըգյան պատրիարքը հրաժարականի մասին իր հայտարարությունը հղեց մեծ եպարքոսին, հիշատակելով ինչպես Կարնո, այնպես և Կ. Պոլսի դեպքերը, ապացուցելով, որ ժողովրդի հուսահատության պայմաններում ինքը չի կարող իր պաշտոնը կատարել։ Նա գրում էր ազգի նկատմամբ «պետական անկարգապահության», «կասկածի», «ժողովրդի հուզյալ» վիճակի և այլնի մասին (3, № 1, 1890)։

Կ. Պոլսի «Միդան» շաբաթաթերթը (խմբագիրն ու տնօրենը օսմանյան գրականության երևելիներից Մուրադ բեյն էր, որ ավելի ուշ դարձավ երիտթուրքերի ղեկավարներից մեկը) հոդված նվիրեց Գում Գափուի դեպքին՝ «Քաղաքական տեսություն» խորագրի տակ։ Ըստ թերթի այդ դեպքը «հավատարիմ հայ ազգն ամոթով և ուրիշ օսմանցիներն ալ ապշությամբ ու ցավով տեսան»։ Թերթը գրում էր «անիմաստ», անդեպ խռովության մասին, այն վերագրում «մի քանի օտար գործիչների խռովահույզ թելադրանքների, պնդում, որ «ամենից ավելի հայ ազգը պիտի գոհ լինի, որ այսպիսի արկածները չկրկնվեն»։ «Միզանը» պնդում էր, որ վեհ. սուլթանի հովանու տակ բոլոր օսմանցիներն իրենց իրավունքներով ու

պարտավորություններով հավասար են։ Հեղինակը պատմական էքսկուրսներով փորձում էր ապացուցել, որ թուրքերը մեղմ չունեն հայոց պետության չգոյության համար, քանզի նրանք այն կորցրել են շատ վաղ անցյալում։ Նա հայերին կոչ էր անում մնալ հավատարիմ (3, № 3, 1890)։

Գերմանական «Ալգեմայնե ցայտունգ» լրագիրը (13. 8. 1890, № 213) հատուկ հոդված նվիրեց Գում Գափուի հայկական ելույթին, նկարագրելով մանրամասները։ «Մենք Հայաստանի ինքնավարություն կուզենք», «Կեցցե՛ Հայաստանը», «Կեցցե՛ ազատությունը» լոզունգները հնչում էին բոլոր կողմերից։ «Գում Գափուի այն տները, որոնց պատուհաններից հայ տիկնայք կիրակի օրը Հայաստանի ազատության համար կբռռային, այսօր պետք է խուզարկվեն»։ Պատրիարքին հանձնարարվել էր հորդոր գրել «Թուրքիայի ասիական նահանգների հայ եկեղեցականությանը», որպեսզի այնտեղ «ետ կանգնեին այլևս ցույցերից» (3, № 2, 1890)։

«Արմենիա» թերթում «Ո՞վ է ոճրագործը» հոդվածում «Վ.»-ն, անդրադառնալով Հայաստանում և Կ. Պոլսում հայերի բռնադատումներին և խոշտանգումներին, որ իրականացվում էր թուրքական պատժական օրենքի 54-րդ հոդվածով, հարց է տալիս. «Մի՞թե ոճրագործություն է իր ազգի պատմությունը կարդալ և իր նախահայրերի վրա գրված մի որևիցե բանաստեղծություն ունենալ իր մոտ։ Մի՞թե ոճրագործություն է դպրոցներ բանալ և ազգ ժողովուրդը կրթել, հայրենի երկրի ժողովրդի կյանքը ուսումնասիրել, զանազան գավառների հայերի վիճակագրական ցուցակը պատրաստել, անօրեն և անզգամ պաշտոնյաների քմահաճ և հարստահարող ընթացքին վրա կառավարության ուշադրությունը հրավիրել, անձնական կարգով կամ ուսման նպատակով արտասահման երթալ, մի՞թե ոճրագործություն է իր բռնաբարված քրոջ, կնոջ կամ աղջկա համար բողոքել կառավարության» (22, № 36, 1890)։

Այդ օրերին Փորթուգալյանը գրում էր. «Հայ ժողովրդի համբերության բաժակը լցված է, այլ չէ կարող տանել... Թուրք կառավարության հարստահարությունները և անամոթ ճնշումները չափ ու սահման չեն ճանչեր այլևս... Այժմ հայ ժողովուրդը շարժման մեջ է։ Հեղափոխական դաղափարները,

որոնք հինգ տարի առաջ ծիծաղելի և անիրագործելի կթվային, այսօր մարմին առած կենդանություն դարձած են։ ...Երբ գաղափարը արմատ բռնած է ժողովրդի սրտի մեջ, նա ժողովրդին հետ կենդանի կմնա, կաճի և կզորնա»։ «Սակայն որչափ որ ուրախալի է այս շարժման սկզբնավորությունը, նույնչափ ալ երկյուղալի է, սովորականեն ավելի զգուշության կարոտ է» (22, № 1, 1890)։ Մ. Փորթուգալյանը շեշտում էր, որ «ցույցերը պետք է անել ոչ թե ցույց արած լինելու համար, այլ դրանով հայրենիքին մի օգուտ բերելու համար» (3, № 40, 1891)։

«Հայաստան» թերթի «Մեր բարեկամք» վերտառության տակ հանդես էին գալիս եվրոպական անվանի մտավորականներ, որոնք իրենց համակրանքն էին հայտնում հայ ժողովրդի արդարացի պայքարին, ցանկանում նրան հաջողություն և առաջադիմություն։ Բրյուսելի համալսարանի պրոֆ. Ալֆոնս Ռիվիեն կոչ էր անում չտարվել այնպիսի ցույցերով և մեթոդներով, որոնք հակառակ են կարգին ու օրենավորության։ Նույն ձևով էին արտահայտվում Ֆրանսիայի ազգային մեծ ժողովի անդամ Լ. Թրարիեոն, իտալացի փաստաբան Չեզարե Նորբան։

Ինքը՝ «Հայաստան» թերթը դատապարտում էր Գում Գափուի ցույցը։ Թերթը կարծում էր, որ անգլիական դեսպան սըր Ու. Ուայթը Լոնդոնից վերադառնալով Կ. Պոլիս, «գործունյա կերպով զբաղված էր հայոց վիճակի բարելավմամբ և հայոց խնդրով» (19, № 23—24, 1890)։

Սուլթանը մշտապես երազ էր տեսնում, թե «հայերը վրան հարձակած գինքը կխողխողեն»։ Թերթը գրում էր, որ Հայաստանի մեջ կազմված հեղափոխական ընկերությունների անդամները «ամենագործունյա» երիտասարդներ էին, նշանավոր ընտանիքների զավակներ։ Դրանք բոլորն էլ երդվում էին «մեռնել հայրենյաց վրա, ամենախիստ կանոնապահության մը հպատակելով», բոլորն էլ «հանդուգն ու հաստատամիտ անձինք էին», «հայրենյաց վրիժառուներ» (19, № 1 և 2, 1890)։ Սրանք ասում էին, որ Կարինը և Գում Գափուն, այնտեղ թափված արյունը «չշարժեցին Եվրոպան», արդարությանը և գթությանը ուղղված բողոքներն անլսելի մնացին, այսուհետև Հայաստանի մեջ իրավանց դատին հաղթանակել

տվողը միայն «հեղափոխությունը» պետք է լինի։ Կոչ էր արվում կռվել մատնիչների և անտարբերների դեմ։ Կ. Պոլսում գործում էր «հեղափոխական դատարան», որի վճիռը խիստ էր և որոշակի։ Ցոմսակներ էին ուղարկում հարուստ հայերին, նրանցից դրամ պահանջում, չտվողները պատժվում էին։ Սպառնալից նամակներ էին հղվում թուրքական բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք հայտնի էին իրենց հայատյաց վարքագծով։ 1890-ի սեպտեմբերի 27-ին տեռորի ենթարկվեց Գում Գափուի եկեղեցու քահանա, մատնիչ տեր Սուքիասը։

Տեռորը դառնում էր կուսակցական գործունեության էական գիծը։ 1890-ի սեպտեմբերի 29-ին տեռորի զոհ դարձավ փաստաբան Խաչիկ Պետրոսյանը, որը մատնիչի անուն էր հանել։ Հոկտեմբերի 1-ին սպանվեց Սեբաստիայի առաջնորդարանի մատնիչ վարդապետը։ Իշխանությունների հետ գործակցած Սիմոն բեյ Մաքսուդը (քաղաքական լուրհրդի նախկին ատենապետ) և հանրածանոթ Նուրյան էֆենդին սպառնալի թղթեր ստացան. պահանջվում էր վերջ տալ մատնություններին։ 1890-ի սեպտեմբերի 29-ին երկու ահաբեկիչ մտնում են պատրիարքարան և ատրճանակի սպառնալիքի տակ ստիպում Աշըդյանին հրաժարվել պատրիարքի աթոռից։

«Հայաստան» թերթի Կ. Պոլսի թղթակից Վարդանը 1891-ի հունիսի 22-ին հաղորդում էր. «Ազգին պետք է պետ մը, որ կարենա քայլ առ քայլ կռվել Դոան հետ և Փարիզի ու Բեռլինի դաշնագրերը ստորագրող մեծ տերությանց դեսպաններուն մոտ պահանջել իրագործումն խոստումներուն ու բարենորոգումներուն, որոնք այնքան մեծաշռինդ ծանուցված են կես դարե ի վեր և ամուլ կմնան, բայց որոնք միայն կարող են բարեկարգություն և հանդարտություն հարուցել հայ հասարակության մեջ» (19, № 15, 1891)։ Սա մի ուղղություն էր։ Սրա կողքին առնանում էր կռվի, մաքառման, կորով ցուցադրելու ուղին։ Անձնազոհ մարդկանց խմբերը չէին երկընչում ո՛չ կախաղանից, ո՛չ թուրքական զնդանից։ Նրանք մահվանը նայում էին բաց աչքերով, համոզված լինելով, որ իրենց արյունով ճանապարհ են հարթելու հայրենիքի անկախության ու ազատության համար։

«Համակերպած զանգվածին մեջեն հրավառ երիտասարդություն մը ելավ։ Մասնախմբեր կազմվեցին ինքնապաշտ-

պանության գործը պատրաստելու, արդարությունը հաստատելու համար։ Դիմադրությունը սկսավ ուրվագծվել ժողովրդին մեջ։ Ապստամբ խմբակներ զենքով պատասխանեցին բրդերու ելուզակային հերոսներուն, ցույցեր տեղի ունեցան»։ Ահա այսպես էր նկարագրում Արշ. Զոպանյանը այդ պահի գլխավոր պրոցեսը (24, № 15, 1898, էջ 229)։ «Հնչակը» պահանջում էր ինքնավարության քաղաքական իրավունք հայ ժողովրդի համար։ Նրա ղեկավարները կարծում էին, որ մեծ տերությունների միջոցով հայկական մարզերում քրիստոնյա նահանգապետի նշանակումը շունչ առնելու հնարավորություն կտար հայ ժողովրդին։ Նաղարբեկը ժխտում էր իրենց վերագրվող անարխիզմը, չէր համաձայնվում նրանց հետ, ովքեր «Հնչակին» պահպանողականություն էին վերագրում (59, էջ 522)։ Սակայն հնչակյանների գործունեության մեջ ակնառու թերիներ կային։ Հնչակյանները ժողովներ էին անում, կազմակերպություններ ստեղծում Փոքր Ասիայի տարբեր կենտրոններում, հաշվի չառնելով այն ճշմարտությունը, որ «ո՛չ Կ. Պոլիս, ո՛չ Մարզվան, ո՛չ Զորում, ո՛չ ալ Յոզկաթ և Կեսարիա իրենց շրջաններով իրականության մեջ Հայաստան չէին» (2, էջ 1143)։

Խոսելով հնչակյան կուսակցության վետերան Շմավոնի (Գաբրիել Կաֆյանցի) մասին, ժամանակին նրա գործունեության մասին այսպես էր գրում նրա գործընկերներից մեկը. Շմավոնը «դաղափարի արկածախնդրութենեն այնքան տարված, այնքան հափշտակված էր, որ օր առաջ կուզեր Կարլ Մարքսի ընկերավարական սկզբունքները արևմտահայոց մեջ իրագործված տեսնել։ Թե ո՞ր աստիճանի հնարավորություն կար իր այդ նոր դաղափարները այս նոր միջավայրին մեջ տարածելու, ինքն ալ չէր գիտեր։ Կյանքին մեջ առաջին անգամն էր, որ Թուրքիա կգտնվեր։ Բացարձակապես անծանոթ էր ինչպես հայոց, նույնպես Թուրքերու նիստուկացին ու անոնց հոգեբանական ձգտումներուն» (2, էջ 1141)։

1890-ին Թիֆլիսում հիմնված, ապա Եվրոպայի տարբեր կենտրոններում կազմակերպական ու դաղափարական գործունեություն ծավալած «Հայ հեղափոխականների դաշնակցությունը» «Հնչակի» նման նույնպես ռուսական ժողովրդական-ընկերավարական դաղափարներով կրթված ռուսահայ մտավորականության զավակն էր (7, էջ 124)։ Մենք արդեն ցույց ենք տվել, որ Ալեքսանդր III-ի սանձազերծած սևհարյուրյակային ռեակցիայի պայմաններում, երբ Ռուսաստանում XIX դ. 80-ական թվականներին հասարակական եռանդը մատնվեց անկման, նարոդովոլական հեղափոխական շարժման շարքերից շատերը հեռացան և բռնեցին ազգային-ազատագրական պայքարի ուղին։ Զգալի թվով հայ երիտասարդներ, թողնելով Մոսկվայի, Պետերբուրգի համալսարանական նստարանները, բռնեցին Թուրքահայաստանի ճանապարհը (13)։ Մենք մատնացույց ենք անում խնդրի այս կողմը, քանզի Թուրքական իրականությանը քաջածանոթ, արևմտահայ ժողովրդի դարդն ու ցավը լավ իմացող մարդիկ միայն իրավունք ունեին հավակնելու նրան ղեկավարելու պատվին ու պատասխանատվությանը։ Իրականում Թուրքական դժնի իրականության նկատմամբ նրանք փորձում էին կիրառել չափանիշներ, սխեմաներ, որոնց օգտակարության գործակիցը շատ ցածր էր։

Դաշնակցությունը ի սկզբանե հավակնում էր «համազգային կուսակցության» դերին, Թուրքական տիրապետության դեմ արևմտահայության ազատագրական պայքարի ղեկավարության մենաշնորհին։ Արդեն XIX դ. 90-ական թվականներին այդ կուսակցությունն իր շարքերում ուներ ազգային բուրժուազիայի, մտավորականության, քաղաքի ու գյուղի աշխատավոր դասակարգերի ծոցից ելած բազմաթիվ ներկայացուցիչներ։ Սա պատահական երևույթ չէր, այլ պայմանավորված էր ժամանակի հասարակական ուժերի զարգացման մակարդակով, նրանց փոխհարաբերությամբ։ Մատնացույց անելով բուրժուական կուսակցությունների այդ առանձնահատկությունը, Վ. Ի. Լենինը գրել է. «Տարբեր դասակարգերը «մեկ կուսակցությամբ» ընդգրկելու փորձերը կամ ճիգերը հատուկ են հենց այդ դարաշրջանի բուրժուական դեմոկրատիզմին, երբ նա պետք է իր գլխավոր թշնամուն տեսներ ետևում և ոչ թե առջևում, ճորտատերերի մեջ և ոչ թե պրոլետարիատի մեջ» (1, հ. 21, էջ 300)։ Ազգային դեմոկրատիզմը ձգտում էր Թուրքական տիրապետության դեմ մղված պայքարում միավորել հայ բնակչության բոլոր խավերին։ Օսմանյան կայսրության պայմաններում դաշնակցության սոցիալական ընդ-

գրկումը բնական բան էր, մանավանդ որ տակավին բացակայում էր պրոլետարիատը իր դասական հասկացողությամբ։ Ֆեոդալական-կղերական հետադիմության դեմ առաջադեմ ուժերին միավորելու ձգտումը միանգամայն օրինաչափ ցանկություն էր։ «Դաշնակցական, ինչպես նաև հին հնչակյան կուսակցությունը, հիմնված Ռուսաստանի մեջ, կառաջնորդվեր ռուսահայ մտավորականներեն, որոնք անծանոթ էին տաճկահայ պայմաններին, Թուրքերի վայրագ ձգտումներին ու նրանց նենգամտությանը։ Նրանք առաջնորդեցին հեղափոխական և կամ ինքնապաշտպանության շարժումները մասնակի ցույցերով, աղմկալից ռեկլամներով ու ցուցամոլությամբ, գործեցին միահեծան ու ինքնագլուխ» (20, էջ 7 Ա). «Հ. Հ. դաշնակցության հիմնադիրները նարոդնիկներու դրպրոցեն» դուրս եկած մարդիկ էին. ոմանք, ինչպես, օրինակ, Քրիստափոր Միքայելյանը, Զավարյանը և ուրիշներ, հարած էին ռուսական նարոդնիկական կազմակերպությանը։ Սրանց նախաձեռնած պայքարի սկզբնավորումը համընկնում է «Ռուսաստանում բանվորական մամուլի անցյալից» հոդվածում Ռուսաստանում ազատագրական շարժման վերաբերյալ Վ. Ի. Լենինի ձեռակերպած ժամանակագրական երկրորդ փուլին՝ «ռազնոչինական կամ բուրժուազեմոկրատական» փուլին (8, էջ 56)։

Ինչպես նկատում է դաշնակցական ոչ անհայտ գործիչ Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան), «լինելով ռուս ընկերավարական շարժման բովեն դուրս եկած հեղափոխականներ և սոցիալիստներ, անոնք սակայն չկամեցան ընկերավարական նորագույն հասկացողությանց ու գործելակերպերու վրա խարսխել հայ քաղաքական հեղափոխությունը... Հ. Հ. դաշնակցության հիմնադիրներու համար սոցիալիզմը եղավ գերազանցապես բարոյական մեկ պահանջ, տեսական մեկ սկզբունք, բայց ոչ քաղաքական հրատապ գործ» (8, էջ 55—56)։

Դաշնակցությունն ըստ էության նույն Եվրոպայի վրա էր հույսը դնում, երբ դիմում էր ցուցարարության, առանց հաշվի առնելու պահը, հանգամանքները, պայմանները։ Նա և՛ դեմ էր խոշոր դրամատերերին, և՛ հենվում էր նրանց վրա, երբեմն էլ պատժում նրանց՝ չենթարկվելու դեպքում։ Նա

փորձում էր ապաղասակարգային գաղափարախոսության միջոցով միավորել հակառակորդ դասակարգերին։ Ազգային միավորման չափազանց բարդ պրոցեսում, երբ գործին մասնակից էին Կ. Պոլսի և Թիֆլիսի, Բաքվի ու եվրոպական քաղաքների մեծահարուստ հայերը և Մշո դաշտի գյուղացիությունն ու Ռուսահայաստանի արհեստավորությունը՝ դա չափազանց դժվարիրագործելի խնդիր էր։ Չկար ազգային շուկա, չկային հայրենի որոշակի սահմաններ, կային իրար ոչ նման պայմաններ, օտար միջավայր, թշնամական ուժերի շրջապատ։ «...Նորակազմ «դաշնակցության» գաղափարաբանությունը սկզբում չուներ որոշ գծված արմատական ուղղություն մը և պատրաստ էր ընդունելու իր շարքերուն մեջ տարբեր աշխարհայացքի տեր մարդիկ հանուն ընդհանուր դատի և պայքարի հաջողության»,— գրում է Միք. Վարանդյանը (27, էջ 61)։

Դաշնակցության մեջ մտան Թուրքահայաստանի ցաքուցրիվ խմբերի ներկայացուցիչները, կովկասցի երիտասարդներ, ռուսական նարոդովոլական խմբերի հայ անդամներ և որոշ հնչակյաններ։ Ինչպես նշում է ռուս հեղինակ Գուտորը, Մոսկվայի ուսանողության շարքերից էին դուրս եկել դաշնակցության ամենաականավոր ղեկավարները։

Մանրբուրժուական առևտրական խավերի ներկայացուցիչներից շատերը աստիճանաբար դրամ կուտակելով, առևտրական ու արհեստավորական իրավիճակից անցնելու էին տնտեսապես զորեղ դիրքերի, վերածվելու էին իսկական բուրժուաների։ Հայոց իրականության մեջ նույնպես պրոլետարացող խավերը շուտով ընթանալու էին գիտական սոցիալիզմի ուղիով։ Առաջավոր մարտիկի դերը կարող է կատարել միայն այն կուսակցությունը, գրել է Վ. Ի. Լենինը, որը ղեկավարվում է առաջավոր տեսությամբ։ Այս պահանջը օտար էր հայկական այն կազմակերպություններին, որոնք ստանձնել էին արևմտահայության ազատագրությունը գլխավորելու գործը։ Մի դեպքում տեսությամբ տարված, ոմանք անտեսում էին բուն երկրի սոցիալ-տնտեսական, դասակարգային ու քաղաքական պայմանները, մյուս դեպքում արհամարհվում էր տեսությունը, առաջին պլան էին մղվում մերկ

գործնականը, դիպվածը, ցաքուցրիվ գործողությունները։

Դաշնակցության նույն տեսաբան Ռ. Դարբինյանը ժամանակին արտահայտել է իր համախոհների մտայնությունը. «Կուսակցությանց հաջողության համար գրված ծրագիրները, պաշտոնական աշխարհայեցողությունները, տեսական, տեսաբանական տվյալները անհամեմատ ավելի փոքրիկ, երկրորդական դեր կկատարեն, քան սովորաբար կկարծվի» (8, էջ 58—59)։

Բացակայում էին խոհեմությունը, զգուշավորությունը, սեփական ու թշնամու ուժերի անհավասարության գիտակցումը։ «Զինակիր խումբ մը, որ մեկ տասնյակ հրացան ու դաշույն կփոխադրեր Հայաստան, ավելի մեծ արժեք ուներ մեր ոնց աչքին, քան տասնյակ ծրագիրներ գալոց քաղաքական-ընկերային կարգերու մասին»,— խոստովանում է Միք. Վարանդյանը (27, էջ 85)։

Արդեն 1891-ին դաշնակցություն կուսակցության օրգան «Դրոշակը» հայտարարում էր, որ «մեր այժմյան պահանջների գլխավոր կետերը մնում են մոտավորապես նույնը», ինչ 1878 թվականի կոնգրեսին էր ներկայացրել պատրիարք Ներսեսը։ Թերթը գրում էր, որ «ուղարկված պատգամավորությունները, որոնց թվումն էր և Խրիմյան Հայրիկը, կատարեցին իրենց դերը մեծ հաջողությամբ (?), ներկայացնելով Եվրոպայի առաջ հայ ազգի ներկա թշվառ դրությունը և մտցնել տալով Բեռլինի դաշնագրի մեջ հայոց ազգին վերաբերյալ 61-րդ հոդվածը» (9, № 1, 1891, էջ 2—3)։ Ահավասիկ պատմաքաղաքական ոչ ճշգրիտ մտածելակերպի մի ցցուն օրինակ։ Հենց սկզբից դաշնակցության ղեկավարները խնդրի քննարկման հիմքում դնում էին այն մոտեցումը, որ հայկական հարցը ներքին քաղաքականության խնդիր չէ, այլ միջազգային հարց, քանի որ միջազգային դիվանագիտության փաստաթղթերով (Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդված, 1895-ի մայիսի 11-ի բարենորոգումների ծրագիր) այն վավերացված էր որպես այդպիսին։

Հ. Հ. դաշնակցությունը 1891-ին գլխավոր խնդիր էր համարում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված հայկական բարենորոգումների իրականացումը։ Սա

պետք է կատարվեր եվրոպական պետությունների միջամտությամբ, ցույցերի ու զինված ելույթների միջոցով։ Հ. Հ. դաշնակցության ղեկավարները «հուսով էին, որ Եվրոպան պաշտպանելու էր այն պահանջները, որ ապստամբ հայ ժողովուրդը ներկայացնելու էր սուլթանական կառավարությանը» (35, հավելված, էջ 48)։ Դաշնակցական առաջին գործիչները դրսևորում էին, որ հայ ժողովրդի «փրկությունը եվրոպական մեծ պետությունների դիվանագիտական աջակցության և միջամտության մեջ է» («Հայրենիք», 1932, № 3, էջ 102)։

Անգլիական փորձված դիվանագետ, թուրքական կյանքին քաջատեղյակ էդ. Պիրսը, անդրադառնալով հայկական կուսակցությունների հակասուլթանական գործողություններին, «վտանգավոր և հիմար էր» համարում նրանց այն հույսը, որ անկարգությունների միջոցով կարող էին հասնել Եվրոպայի արդյունավետ միջամտության։ «Հույսը հիմար էր, քանի որ միակ երկիրը, որ կարող էր հաջողությամբ միջամտել, Ռուսաստանն էր, իսկ իրենք տուժողներն այն ժամանակ խոստովանում էին, որ Ռուսաստանի դիրքը բարեկամական չէր»։ Պիրսն այնուհետև գրում էր, որ իր ձեռքերն ազատ զգալով, Համիդը որոշել էր հպատակների հետ վարվել այնպես, ինչպես ինքն է կամենում (60, էջ 232)։

Դաշնակցության հիմնադիրներն իրենց հրապարակախոսության մեջ ոչ միայն չէին արտասանում անկախություն բառը, այլև չէին ընդունում այն որպես պահանջ։ «Դրոշակում» (№ 5, 1893) կարդում ենք. «Մենք հակառակ ենք այն հայցագքներին, որոնք ժողովրդի դրության բարեփոխումն անպայման կապում են միմիայն նրա անկախության հետ»։ Բնորոշ է, որ միևնույն պահին նույն բանն էին գրում Լոնդոնի բուրժուական «Հայաստան» թերթի տնօրենները։ Ամեն անգամ առաջնորդող հոդվածներում նրանք ընդգծում էին այն միտքը, թե «հայերն անկախության գաղափարներ չեն սնուցաներ»։ (19, № 16, 1891)։

Միք. Վարանդյանը հաստատում է, որ «դաշնակցության քաղաքագետներն այն օրերու պայմանների մեջ հրաժարվեցին անկախության սկզբունքից»։ Նա ակնարկում էր իր կուսակցության «անփութության» մասին, որը սահմանակցում էր «արհամարհանքին» լուրջ խնդիրների նկատմամբ (27,

էջ 119—120)։ 1892-ին ընդունված Հ. Հ. դաշնակցության կուսակցության ծրագրում ասված էր, որ կուսակցության «նպատակն է ապստամբության միջոցով Թուրքահայաստանի մեջ ձեռք բերել քաղաքական ու տնտեսական ազատություն»։ Քաղաքական անկախության խնդիր չէր դրվում։ Ինչպես խոստովանում է Գ. Գյոզալյանը, «խնդիրը մնում էր մութ» (7, էջ 126)։

Խնդիր էր դրվում թոթափել Թուրքական խայտառակ լուծը, ոչնչացնել արդի միապետական բռնակալ ռեժիմը, ձեռք բերել ազգերի համերաշխություն, աշխատանքի ապահովություն, խղճի, խոսքի և համագումարների ազատություն։ Սա մանրբուրժուական սոցիալիզմի տիպիկ արտահայտություն էր։ Ընթերցողին հիշեցնենք, որ Կ. Մարքսը մանրբուրժուական սոցիալիզմը բնորոշում էր որպես «ոչխարային, սենտիմենտալ, ուտոպիական սոցիալիզմ»։

Մի կողմից, «Դրոշակը» գրում էր, որ «տաճկահայերի կողմից միանգամայն անօգուտ և մինչև անգամ վտանգավոր է հույս դնել օտարի վրա և սպասել, թե Թուրքաց կառավարությունը ինքն իր կամքով բարենորոգումներ կշնորհե հայերին։ Ցանկացած վիճակը ձեռք բերելու համար մեզ մնում է միայն դիմել այն միջոցին, որին դիմել են մեզնից առաջ միևնույն հանգամանքների մեջ գտնվող ուրիշ մեզ նման քրիստոնյա ազգերը։ Այդ միջոցը ժողովրդական ապստամբությունն է։ Ուրիշ ելք չկա»։ Մյուս կողմից, դաշնակցությունն իր բոլոր գործողությունները, ցույցերը կառուցում էր միմիայն արտաքին աֆեկտացիայի վրա, փորձելով Եվրոպայի ուշադրությունը հրավիրել Հայաստանի վրա։ Ժողովրդական ապստամբությունը միայն սուբյեկտիվ ցանկությամբ չի պայմանավորված։ Դաշնակների կազմակերպած ելույթները տակավին ժողովրդական ապստամբություններ չէին։ Իսկ եթե իսկապես ժողովրդական մեծ ապստամբություն բռնկվեր, ապա հարց է, թե այն առանց ռուսական օգնության հաջողություն կունենա՞ր, թե՞ ոչ։

Հետագայում վիճակը չփոխվեց։ Երիտթուրքերի հետ մերձեցման նախօրյակին դաշնակցության ծրագրի անորոշությունն արտահայտվեց Քր. Միքայելյանի «Միություն Թուրքերի հետ» հոդվածում, որտեղ նա հայտարարում էր, թե

իրենք չեն ձգտում անպատճառ Թուրքական «պետությունից անջատվելուն» (21, էջ 107)։ Գործունեության գլխավոր գիծը Եվրոպական դիվանագիտությանն ապավինելն էր։ «...կազմակերպված ու բռնի ուժով կովել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դեմ, մինչև որ վեց պետությունների երաշխավորված միջամտությամբ այդ կարգերը դեպի լավը կփոխվեն» (21, էջ 42)։ Վկայակոչելով Ռոլեն Ժեքմենին, Լեփսիուսին, Մոսկվայի համալսարանի պրոֆ. Կամարովսկուն, Էմիլ Դիլոնին, Մակ Քոլին, Ջեյմս Բրայսին, Գրինին և այլոց, նա փորձում է ապացուցել իրենց գործելակերպի ճշտությունը, Թուրքական տիրապետության դեմ իրենց ընտրած միջոցներով պայքարելու անհրաժեշտությունը։ Կուսակցությունների տակտիկան, գործելակերպը, մեթոդները շափազանց հարափոփոխ էին, երբեմն բացահայտ արկածախնդրական։ Իսկ «շրջահայեցողությունն ու խոհականությունը, ավա՜ղ, հայ գործչի առաջնակարգ առաքինությունները չեն...», խոստովանում էր Միք. Վարանդյանը, վերլուծելով իր կուսակցության առաջամարտիկների կատարած գործողությունների արդյունքները, վնասն ու օգուտը (27, էջ 29)։ «Օսմանյան կառավարությունը Ռուսիո դեսպանատան պաշտոնյա Մաքսիմովի միջոցով կբանակցի, խոստանալով բարենորոգումներ գործադրել Թուրքահայաստանի մեջ, եթե դաշնակցականները հեռանան օտոմանյան բանկեն, առանց որևէ վնաս հասցնելու։ Համիդ կհաջողի խաբել միամիտ դաշնակցականները, որոնք տակավին Դարդանելեն դուրս չէին ելած, երբ Խասգյուղի անգեն հայերը կոտորածի և ավարառության ենթարկվեցան, և մայրաքաղաքին փողոցներուն մեջ մի քանի հազար հայեր ջարդվեցան» (2, էջ 1145)։

Արևմտահայության ազատագրական պայքարի մեծ երախտավոր, Կարինի «Պաշտպան հայրենյաց» ընկերության ղեկավար Կերեկեյանը (14) բանտում մնաց չորս տարի։ Ազատվելուց հետո վայելում էր «փորձառու, խոհեմ և հինցած գործչի» հեղինակություն։ «Նորեկ և անփորձ գործիչներին» նա բացատրում էր, թե նախ հարկավոր է ավելի խնամքով պատրաստվել, ապա նոր սուլթանի իշխանության դեմ գործնական քայլերի դիմել։ «Տղայական անփորձ շարժումներու շրջանը փակենք և մարդու պես գործելու ուժ պատրաս-

տենք»,— ասում էր նա (18, № 7, 1894, էջ 105—106)։ Կերեկցյանին սպանեցին արկածախնդրական գործերին մասնակցելուց հրաժարվելու համար։ Նա ոչ ոքի չմատնեց մեռնելուց առաջ։

«Հայք» թերթը գրում էր, որ «ռուսահայ սոցիալիստներն այնքան ատելի են ցարին, որքան սուլթանին» (18, № 6, 1894, էջ 93)։ Նյու Յորքի «Ինդեփենդենտ» շաբաթաթերթը մի հոդված էր տպագրել («Հայկական պրոպագանդա»), որտեղ գրում էր. «Բնավ հույս չկա ապստամբությունից, և հեղափոխականների հույսն այնքան կարող է լինել, որ իրենց տգետ գործիչներն ապստամբության գրգռելով, այնպիսի կոտորածների տեղի տան, որ Եվրոպան ստիպվի միջամտել և երկրին կառավարությունն իր ձեռքն առնի» (18, № 6, 1894, էջ 93)։ Սա ասվում էր 1894-ին։

«Հայքը» ողջունում էր «Ազատ Հայաստան»* թերթի ծնունդն այն առումով, որ նրա վերնագիրը հայոց հայրենիքի ազատությանն էր վերաբերում, թեև չէր բաժանում նրա ընկերավարական բովանդակությունը (18, № 3, 1894, էջ 44)։

Ժամանակները փոխվել էին։ Հայ ժողովրդի ոգին այլ էր դարձել։ Մի ժամանակ, երբ հայ մարդուն հարվածում էին, նա կծկվում էր, աղաչում-պաղատում, գթություն էր հայցում։ Այժմ հայը պաշտպանվում էր, ընդվզում, սեփական իրավունքը պաշտպանելու համար զոհվում։ Վաղվա օրը շատերին ներկայանում էր հաղթանակներով առլեցուն։

Լավատեսությունը չափ ու սահման չուներ։ Հայաստանը ներկայանում էր որպես մի անպարտելի հսկա, իսկ Թուրքիան՝ մի գաճաճ։ «Հերիք, որդյակք... մեր բահերն էլ կանեն նոցա (իմա՝ թուրքերին) շանսատակ»,— սա էր անհիմն լավատեսների դևիզը (27, էջ 83—84)։

Դարեր ի վեր ճնշված, հարստահարված, իր ազատության համար արթնացած հայ ժողովուրդն ուզում էր ջարդել ստրկության շղթաները։ Բայց շղթաները ջարդելու համար

* 1893-ին Թիֆլիսում Աշ. Խումարյանի, Ս. Խանոյանի, Ս. Մարտիկյանի և այլոց հիմնադրած «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» թերթը, որը սոցիալիզմի գաղափարների առաջին պրոպագանդիստներից մեկն էր հայ իրականության մեջ։

էր պետք։ Ժողովուրդն իր ճանապարհին հանդիպում էր նախ բանդաքարթությանը թշնամի, հետադիմության միջնաբերդ սուլթանի ասիական բռնակալությանը, որն իր թնդանոթներով, իր զազրելի պաշտոնյաների միջոցով ձգտում էր խեղդել այդ ձգտումը, ավելի երկարատև շղթաներ կռել տանջահար ժողովրդի բազուկներին։ Գրում էին, թե «ազգային հարբուտությունը կպակսի մեզի։ Ազգասիրությունն ալ կպակսի։ Արիասրտությունն ալ կպակսի» (18, № 11, 1894, էջ 169)։ Կարծես թե միայն շտապում էին հերոսանալ, բայց ոչ պսակված տեսնել իրենց գերմարդկային ջանքերը։

Արշակ Չոպանյանը, որ Հ. Հ. դաշնակցություն և Հնչակ կուսակցությունների գործողություններին վերաբերվում էր քննադատաբար, Աղբյուր Սերոբին անվանում էր գյուղացական մարդ, շեշտում, որ «մարդիկ, որ կյանքերը վտանգելով սահմանագլուխը կանցնեն և տաճկական Հայաստանի իրենց եղբայրներուն օգնելու կերթան, ուրիշ բան չեն կրնար ներշնչել, բայց եթե հարգանք ու հիացում» (5, № 3, 1900, էջ 88)։

Խոսելով Կուկունյանցի ու մյուս խմբերի անհաջողության մասին, «Ճանապարհորդ» անունով հեղինակը այսպես էր թղթակցում «Հայքին»՝ «Ինձ կերևի թե որոշ ծրագրի համեմատ չեղան այս շարժումները, ձեռնհաս ղեկավարության ներքո չգործեցին խմբապետները և չկար իրենց մեջ ընդհանուր հատակագիծ և համաձայնություն» (18, № 3, 1894, էջ 40)։

Մ. Չերազը «Հայք» թերթի խմբագրությանը գրած իր մի նամակում (1893) հիշում էր, որ 1878-ին Բեռլինում իր հետ ունեցած մի տեսակցության ժամանակ Լորիս-Մելիքովը Հայ գյուղացիությանը զինելու, նրան զենք մատակարարելու գործն իրականացնելու կոչ էր արել։ Գյուղացիները Լորիս-Մելիքովին պատասխանել էին, թե «աղա, չենք կրնար, օսմանլուն զուլում է, չենք կրնար» (18, № 19, 1893, էջ 303—304)։

Ճիշտ է, ժողովուրդը եկել էր այն համոզման, «թե առանց հեղափոխական կռվի ներելի չէր որևէ աջակցություն ակնկալել Եվրոպայեն»։ Բայց հեղափոխական կռիվը լուրջ նախապատրաստություն էր պահանջում։ Արփ. Արփիարյանն ավելացնում էր, թե «սխալեցանք, երբ Եվրոպա նստող հե-

դափոխական վարիչներու վրա չափազանց համարում ունեցանք, և անոնց ապավինելով պիտի չտնսանի գոնե առժամյա ընդդիմադրության մը նախապատրաստություններ ընելու» (18, № 2, 1900, էջ 18)։

Ժնևում հայ սոցիալիստները հրատարակում էին «Համայնք» թերթը, որը «Օբշչինա» ռուսական սոցիալիստական թերթի թարգմանությունն էր։ «Թե ռուս սոցիալիստներ հայերեն «Համայնքին» կոգնե՞ն կամ որքա՞ն կոգնեն, այն չեմք գիտեր, բայց տարակույս չկա, թե հայանուն և ռուսանուն սոցիալիստի սերտ և սրտագին խնամության մեջ են իբրև նույն իդեականով ոգևորված գործիչներ»։ Այնուհետև, ծաղրելով ցարից կամ եվրոպական կառավարություններից օժանդակություն ակնկալած մարդկանց, հոդվածագիրը շարունակում էր. «Երկար խորհելու պետք չկա հասկանալու համար, թե ցարին կառավարությունը որքան դժգոհությամբ կտեսնե, որ ռուս սոցիալիստի կամ սոցա աշակերտի՝ հայոց մեջ հարգելի և համակրելի գործիչներ եղեր են»։ Այնուհետև կարդում ենք. «Մենք բոլորովին ծաղրելի կը լինեմք, երբ ակնկալեմք, որ ցարը ռուս սոցիալիստների աշակերտները կամ աշակերտաց աշակերտները թրքաց բանտեն, կախաղանեն ազատելու համար միջնորդե» (18, № 3, 1894, էջ 37)։

Այսպիսով, արդեն այն ժամանակ մատնացույց էր արվում տերությունների, դիվանագիտության, նաև ցարի վրա հույս դնելու հայոց քաղաքական կուսակցությունների սխալականությունը։ Արևմտահայության ազատագրությանը չէին կարող նպաստել գաղութատիրության ասպետները։ Ցարը չէր կարող օգնություն ցույց տալ Հնչակին ու Հ. Հ. դաշնակցությանը, որոնց համարում էր իր սեփական թշնամիները, ռուս սոցիալիստների աշակերտները։ Սակայն, ցավոք, բուրժուական Եվրոպայից ու ցարիզմից սպասվելիք ակնկալությունների անհեթեթ պրակտիկան շարունակվեց տարիներ։

1896-ից սկսած հայոց կուսակցությունների շարքերը խարխլվեցին. գործադրված մեթոդները, պարտիզանական կռիվները արդյունք չէին տվել, Եվրոպան ըստ էության մնացել էր անտարբեր։ Հնչակ կուսակցությունը պառակտվեց։ Հ. Հ. դաշնակցությունն ընկավ անկումային վիճակի մեջ։ Մինչ այդ նրա ղեկավարները արհամարհում էին երիտթուրքական

շարժումը, կասկածամիտ էին և նրան մերձենալու, համագործակցելու մասին չէին էլ մտածում (35, հավելված, էջ 55)։ Այժմ պայմաններն այլ էին և վերաբերմունքն էլ աստիճանաբար փոխվելու էր։ Հ. Հ. դաշնակցությունը դարասկզբին աստիճանաբար փարվում էր հակասուլթանական համակայսրական շարժմանը։

Բնորոշ է հետևյալ փաստը. հույների հետ հարաբերությունների առաջին իսկ սրման պահին դաշնակցությունը հրապարակեց մի կոչ, որտեղ ասվում էր, թե «այս պահին օսմանյան բոլոր ազգությունների համերաշխության գաղափարը պետք է լինի հայկական շրջանների ղեկավար գաղափարը» և որ «նրա բոլոր ժողովուրդներին պետք է վերաբերվել հարգանքի զգացմունքով, քաղաքական համբերությամբ և եղբայրական համերաշխությամբ» (35, հավելված, էջ 55)։ Այս հայտարարությունը ցույց է տալիս, որ Հ. Հ. դաշնակցությունն ակտիվորեն տուրք էր տալիս օսմանյան հայրենիքի ամբողջականության երիտթուրքական գաղափարին։

Ստորև կտեսնենք թուրքական քաղաքական կյանքի ասպարեզ իջած երիտասարդ թուրքերի կազմակերպության և հայոց քաղաքական կուսակցությունների առնչությունների բնույթն ու ձևերը։

□

XIX դարի 90-ական թթ. կեսերին արևմտահայությունը ենթարկվեց թուրքական պետականության մահաբեր հարվածներին։ Նախ, ընթերցողին համառոտակի հիշեցնենք հայոց զանգվածային կոտորածների հանգամանքները, այնուհետև ցույց տանք, թե ինչպիսին էր այդ խնդրում երիտթուրքերի դիրքորոշումը։

Ա. Ջիվելեգովի բնութագրմամբ, «...սուլթան Համիդը որոշել էր կոտորել իր հայ հայդուկներին, իսկ տերությունները երկչոտությամբ էին բողոքում համիդյան խաղերի դեմ...»։ Նա գրում է, որ 1892-ից մինչև 1912 թվականը Արևմտյան Հայաստանում ոչնչացվել էր 612 հազար մարդ (36, էջ 10, 16)։ Թուրքական ոչ անհայտ պետական գործիչ Իսմայիլ Քեմալն իր հուշերում գրում է, թե Համիդի աչքում հայերը

վանդավոր դարձան Եվրոպայի, մասնավորապես Անգլիայի ակտիվ միջամտությունների հետևանքով։ Ամբողջ կայսրության մեջ ցրված հայերն, ասում էր նա, ապատ կերպով օգտվում էին թուրքերենից, շփվում էին իրենց մուսուլման հարևանների հետ և միակ ժողովուրդն էր, որ կարող էր, սուլթանի կարծիքով, կործանարար գաղափարներ տարածել։ Սուլթանին դուր չէր գալիս քրիստոնյաների, մասնավորապես հայերի էվոլյուցիան, որոնք եվրոպական տիպի դպրոցներ էին բացել և հաջողությամբ առևտուր էին անում, «ազդեցիկ, գործուն էին դառնում մուսուլմանական պետության մեջ»։ Նա թշնամաբար էր տրամադրված Եվրոպայի հետ հաջողությամբ առևտուրը զարգացնող հայերի նկատմամբ (55, էջ 256)։

Արդեն 1890-ի հոկտեմբերին Փարիզի թերթերից մեկի թղթակիցը հաղորդել էր, թե «ջարդվող քրիստոնյաները օգնություն են աղաղակում և նրանց ձայնը համակրական արձագանք է գտնում Ռուսիայում», որ «Թուրքահայաստանը սպանդանոցի ընդարձակ դաշտ է դարձել, որտեղից ահաբեկված ժողովուրդը փախչում է Պարսկաստան և Անդրկովկաս» (3, № 126, 1890)։

Աստիճանաբար հայկական շարժումը սուլթանին ներկայանում էր հիպերբոլիկ տեսքով, սպառնալից չափերով։ Նա սարսափում էր եվրոպական ու հայկական թերթերի հաղորդումներից։ Նա սկսեց որոճալ հայերին հարված հասցնելու միտքը։ Համիդն իր համախոհների հետ միասին կազմել էր ամբողջ Արևմտյան Հայաստանի տղամարդ բնակչությանը կոտորելու հրեշավոր ծրագիր (35, հավելված, էջ 50)։ Խնդիրը հանգամանորեն ուսումնասիրած անգլուհի Վիթլինը նշում է, որ 90-ական թվականների հայկական ողբերգությունն ուներ մի քանի ասպեկտ. դա և՛ սոցիալական հեղափոխություն էր, և՛ բռնակալության սարքած օրգիա, և՛ կրոնական պատերազմ (66, էջ 178)։

«Հարստահարության և ջարդերուն գաղտնիքը այն վախն է, զոր թուրքը ունի առաջադեմասեր քաղաքային տարրեն, բանի որ կզգա, թե ինք բան մը ընելու անկարող է և ուրիշ բան չէ, բայց եթե հարկահավաք զինվոր մը»,— գրում է

թուրքական գործերին քաջատեղյակ մի այլ հեղինակ (24, № 21, 1900)։

1890—1893 թթ. անցուդարձին, ցույցերին, դատավարություններին, թուրքական մամուլի նյութերին ծանոթանալիս աչքի է զարնում այն հանգամանքը, որ թուրքական պաշտոնական շրջանները սկզբում խուսափում էին հայերին քաղաքական լուրջ ծրագրեր ու մտադրություններ վերագրելուց։ Սակայն շուտով իրավիճակը փոխվեց։ Փոքր Հայքի դեպքերից հետո, երբ Անկարայի մանրամասները հրապարակվեցին (1893-ի հունիսին), «Հնչակ», «ազատություն», «հեղափոխություն» բառերի արտասանությունն անգամ ոճրագործություն համարվեց։ «Փոքր Հայքի դեպքերեն վերջն է, որ սուլթանը հաստատապես ծրագրեց հայկական ջարդ մը և հայոց տնտեսական փչացումը. ու ալ իր բոլոր քաղաքականությունը նկրտելով այս ահեղ ապագային կովանը պատրաստելու»,— գրել է Ա. Արփիարյանը («Նոր կյանք», № 13, 1. 7. 1898, էջ 200)։

> 1893-ին թուրքական իշխանությունները ծավալուն գործողություններ իրականացրին հնչակյան պրոպագանդիստներին ոչնչացնելու, վնասազերծելու ուղղությամբ։ Ձերբակալվածներին հավաքեցին Անկարայում։ Այստեղ էին բերել հայ երիտասարդներ Մարզվանից, Յոզգաթից, Եվերեկից, Կեսարիայից։ Դատական գործը դրվեց կուսակալ Աբեդին փաշայի (կրետացի, բանաստեղծ և հունագետ) վրա։ Ըստ էության սուլթանն ուզում էր նրան նույնպես սպանել, որովհետև սրան կասկածում էր երիտթուրքական շարժմանը հարելու մեջ։ Դատավարության ժամանակ հայ երիտասարդները բուռն կերպով ճնշադատեցին թուրքական իրականությունը, կառավարման սիստեմը, հարստահարությունները ու անարդարությունները։ Սկզբում կախաղանի միջոցով մահապատժի դատապարտվեցին 17 հոգի (Անտոն Ռշտունի, Կարապետ Թումայան, Մարտիրոս Չիվանյան, Զելո-Թորոս Մառուկյան և ուրիշներ), հետո սուլթանը «մեծահոգաբար» հրաց թիվը հասցրեց մինչև հինգի, որոնց նկատմամբ մահապատիժն իրականացվեց 1893-ի հուլիսի 10-ի արշալույսին։ Մահվանից առաջ լսվում էին «Կեցցե՛ Հայաստանը» բացականչությունները։ Բանտից գրված մի նամակում ասվում էր. «Հայուն ազատությունը հայը պետք է դարբնե. մուրալը օգուտ չունի, միշտ պիտի խաբեն...»։

1893-ից սկսած սուլթանը «հայոց կործանումին ծրագիր սկսավ գործադրության դնել»։ «Իսլամները, որ Բուլղարիոն

դեպքերը չէին մոռցած և կսարսափեին Գլադստոնի անունեն, ահռելի կատաղությամբ պիտի լցվեին ընդդեմ հայերուն, որոնք Ասիո իսլամներն ալ եվրոպական Թուրքիո իսլամներուն բախտակից ընել կուզեին։ Թուրք թերթերուն մեջ հրատարակված այդ ատենագրությունները օսմանյան կայսրության ամեն անկյունը տարածվելով, հայերուն և իսլամներուն միջև պատերազմի փողհարը եղան» (24, № 13, 1898, էջ 201)։ Բազմաթիվ էին փաստերը, երբ հայ մտավորականներին առանց հիմքի ձերբակալում էին, տանջում, ոտնահարում նրանց արժանապատվությունը (64, էջ 345—347)։

Սասունի կոտորածը, որ տեղի ունեցավ 1894-ի սեպտեմբերին, կազմակերպված էր իր իսկ սուլթան Համիդի ձեռքով, նրա ուղղակի ցուցումներով։ Ի նշան շնորհակալության, սուլթանը շքանշանով պարգևատրեց կոտորածն իրականացրած բանակային կորպուսի հրամանատար Զեքի փաշային և մեծաքսյա դրոշներ ուղարկեց քրդական չորս հրոսակախմբերի պետերին (45, էջ 225—230)։

Ռուս հեղինակ Միխայլովը հավաստում է, որ արյուն հեղելուց առաջ սուլթանն առանձին խորհրդակցել էր սոֆտաների հետ, որոնք շուտով դիմեցին հայերին կոտորելու քարոզին (44, էջ 76)։

> Զարմանալի է, բայց փաստ է, որ մեր օրերում գտնվում են ուսումնասիրողներ, որոնք կրկնում են Արմինիուս Վամբերիի գովասանքները սուլթան Աբդուլ Համիդ II-ի անձի ու գործի հասցեին։ «Մեծ մարդասպանը» նրանց պատկերացմամբ «փափուկ էր», «բարեհամբույր», «հավասարակշռված», նույնիսկ «ազնիվ» ու «արի», օժտված «նկուն խելքով» (տե՛ս Г. З. Алиев. Турция в период правления младотурок — 1908—1918, М., 1972, стр. 29—30);

Սուլթանը «Իմամ բոզ» մահմեդական տոնի ժամանակ, պալատում, աղոթքի հետ մեկտեղ, զուտ կրոնական մոլեռանդությամբ կոչ էր անում կոտորել հայերին։ Նա ասում էր, թե ուղղափառ հավատացյալները հայերին սպանելու համար հաշիվ կտան միայն աստծու առջև, և թե ինքն էլ հանդես կգա դատավորի դերում։ Այս վկայության հեղինակը գրում է, թե այդ աղոթք-կոչից հետո, մյուս օրը, տեղի ունեցավ ամենավայրագ, ամենաարյունոտ կոտորածը (61, էջ 40—41)։ Անգլիացի պատմաբան Ք. Ուոկերն անգլիական Ֆորին օֆիսի

արխիվներից քաղած նոր նյութերի հիման վրա ցույց է տալիս սուլթան Աբդուլ Համիդ II-ի անմիջական մասնակցությունը Սասունի կոտորածի կազմակերպմանը, հայոց շեների կործանմանը։ Նա մասնավորապես վկայակոչում է Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանության գլխավոր դրագոման Ադամ Բլոկի 1894-ի դեկտեմբերի 25-ի զեկուցագիրը, որը ժամանակին հանրության ուշադրությանը չէր հանձնվել պաշտոնական «Կապույտ գրքի» էջերում տպագրելու միջոցով։ Այս զեկուցագրում ցույց է տրվում սուլթանի, Էրզինջանի չորրորդ բանակի հրամանատար մարշալ Զեքի փաշայի, սուլթանի առաջին քարտուղար Սուրեյա փաշայի, «վայրենաբարո» Աբդուլլահ փաշայի անմիջական մասնակցությունը Սասունի ողբերգության կազմակերպմանը (65, էջ 146—147)։

Սովետական արևելագետ Գ. Բոնդարևսկին գրում է, որ թուրքական ներգաղթողներին արևելյան նահանգները բերելու քաղաքականության հետևանքով էր, որ 1894-ին բռնկվեց Սասունի գյուղացիական ապստամբությունը, որը, ըստ նրա, «Աբդուլ Համիդ II-ի և նրա մինիստրների վաղուց սպասված առիթն էր»։ Նա նշում է, որ «թուրքական փաշաներն անձամբ սուլթանից հրաման ստացան արյան մեջ խեղդելու ապստամբությունը» (30, էջ 59)։

90-ական թվականներին սուլթանի հայասպան քաղաքականության մասին «Դիվանագիտության պատմություն» սովետական պաշտոնական հրատարակության մեջ կարդում ենք. «Սուլթան Աբդուլ Համիդը կազմակերպեց հայ բնակչության զանգվածային կոտորած Փոքր Ասիայի մի շարք վայրերում, իսկ հետո՝ նաև իր կայսրության մայրաքաղաքում» (38, էջ 333)։ Ավելին Նաղարբեկը 1896-ին «Քոնտեմպորարի ռևյու» ամսագրում տպագրած իր հոդվածում ցույց էր տալիս, որ 1895-ի սեպտեմբերի 18-ի ցույցը խաղաղ միջոցառում էր, որ դրա մասին հնչակյան կազմկոմիտեն 2—3 օր առաջ պաշտոնապես իրազեկ էր պահել ինչպես Թ. դռանը, այնպես և վեց տերությունների դեսպաններին (59, էջ 515)։ Նա ցույց էր տալիս, որ հայերը մասամբ զինված էին զուտ զգուշավորության նկատառումներով։

1895-ին Աբդուլ Համիդի կազմակերպած հակահայկական խժդժություններն ու կոտորածները սկիզբ առան սեպտեմ-

բերի 30-ին, Ակ-Հիսարում՝ հոկտեմբերի 3-ին, Տրապիզոնում (ուր Կ. Պոլսից հատուկ զորամաս էր ուղարկվել)՝ հոկտեմբերի 8-ին, Երզնկայում՝ հոկտեմբերի 21-ին, Բաբերդում՝ հոկտեմբերի 25-ին, Բիթլիսում՝ հոկտեմբերի 27-ին, Էրզրումում՝ հոկտեմբերի 30-ին, Արաբկիրում՝ նոյեմբերի 1—5-ին, Դիարբեքիրում՝ նոյեմբերի 1-ին, Մալաթիայում՝ նոյեմբերի 4—9-ին, Խարբերդում՝ նոյեմբերի 10-ին, Սվասում՝ նոյեմբերի 12-ին, Ամասիայում՝ նոյեմբերի 15-ին, Այնթափում՝ նոյեմբերի 15-ին, Մարզվանում՝ նոյեմբերի 15-ին, Մաբաշում՝ նոյեմբերի 18-ին, Կեսարիայում՝ նոյեմբերի 30-ին և այլուր։ Ուրֆայի երկրորդ կոտորածը (1895 թ. դեկտեմբերի 28—29-ը) ամենավերջինն ու սարսափելին էր. 3000 հոգու փակեցին եկեղեցում և կենդանի-կենդանի խորովեցին հրդեհի դրակներում (50, էջ 495)։

Այս շարագործությունները նկարագրված են ականատեսների կողմից, ռուսական, անգլիական հյուպատոսների հաշվեմատյաններում, ժամանակին լույս ընծայված բազմաթիվ գրքերում։ Այս մասին հարուստ նյութեր ու փաստաթղթեր են ամփոփված «Геноцид армян в османской империи» ժողովածուում (34)։ Նոր փաստեր բերել և արդեն ասվածն ու ապացուցվածը կրկնել իմաստ չունի։ Սակայն անհրաժեշտ է նորից կրկնել այն ճշմարտությունը, որ հակահայկական ալիքը ոչ մի տարերային բան չէր պարունակում։ Այն կազմակերպված էր սուլթանի և նրա իշխանությունների կողմից։ Բրայսը նշում է, որ կոտորածներն ամենուրեք միևնույն բնորոշ կողմերն ունեին։ Սրանք «հանկարծակի և մոլեռանդության տարերային բռնկումներ չէին», այլ «խնամքով, նախօրոք կազմակերպված գործ էին (50, էջ 497)։ Նա ավելացնում է, որ շարագործությանը մասնակցում էին և՛ մահմեդական հոգևորականները, և՛ զինվորներն ու ժանդարմները։ Իշխանությունների համակրանքն ու մասնակցությունն այդ սև գործին ակնհայտ էր։ «Պաշտոնական շրջանները երբեմն ուղղություն էին տալիս զինվորների ու ամբոխի գործողություններին,— գրում է Բրայսը,— բայց ավելի հաճախ դիտողի դերում էին»։ Նա գրում է, որ այն դեպքերում, երբ իշխանությունները փորձեցին խոչընդոտել կոտորածները,

նրանց դա հաջողվեց։ Այդպիսի դեպք տեղի ունեցավ միայն Մուշում։

Ամիսներ շարունակ, Մարմարա ծովից մինչև Պարսկաստանի սահմանը, քրիստոնյաները կոտորվում էին քաղաք առ քաղաք։ «Խաղաղասեր, երկչոտ ժողովուրդը երբեք չէր մտածել ընդվզել սուլթանի դեմ կամ ձեռք բարձրացնել մահմեդական հարևանների վրա։ Բազմաթիվ գյուղեր հրո ճարակ դարձան, եկեղեցիներ մզկիթների վերածվեցին, կանայք բռնաբարվեցին, տղաներ և աղջիկներ գուրս տարվեցին և վաճառվեցին որպես ստրուկներ» (50, էջ 510)։ Այսպես է նկարագրել կատարված դեպքերին քաջածանոթ անգլիացի Ջեյմս Բրայսը։ «Աբդուլ Համիդը մահ էր տարածում իր ձեռքի մի շարժումով»։ Ահա թե ինչպես է նկարագրում նույն հեղինակը Կ. Պոլսում Համիդի սարքած սպանդը։ «Նա այնքան հեռուն գնաց, որ որոշում էր, թե ինչպիսի զենք պետք է գործադրվի։ Նա չէր սիրում հրաձգային զենքը։ Բարձր աղմուկն ազդում էր նրա նյարդերի վրա։ Նա կարգադրեց գլուխ կտրողների իր բանակը զինել արճճե գլխիկ ունեցող մահակներով և երեք օր շարունակ նավահանգստային թաղամասից, ուր գտնվում է շուկան, լսվում էր հաստոցների ձայնը, որոնց վրա փականագործներն աշխատում էին կատարելու նրա պահանջը։ Երեք օր շարունակ մահակների հարվածների աղմուկը չէր դադարում, մինչև որ մեռյալ լռությունն իջավ հայկական փողոցների վրա» (66, էջ 177—178)։

Ամֆիտեատրովը գրում է, որ խնդիրն իրականացնում էին հիմնականում կայազորի զորքերը։ Մարդկանց սպանում էին գլխավորապես սառը զենքերով, այնուհետև նախապես մոբիլիզացված սայլերով ու կառքերով դիակները թափում ծովը (28, էջ 5—6)։ Սուլթան Համիդն այդ օրերին սահմանեց լկտիության և երեսպաշտության նոր ռեկորդ։ Նա բողոքում էր Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանին, թե պետք չէ նահանգներում առերևութական կոտորածների մասին ստահոդ լուրեր տարածել։ Նա դրանք հեքիաթ էր հռչակում և իր համախոհ միապետների, բռնակալների համերաշխությունն ու համակրանքը շահելու նպատակով հայտարարում, թե ավելին չի արվել, քան կարգ ու կանոնը հեղափոխականների ոտնձգություններից զերծ պահելը, թե ազրեսորները հայերն

էին, թե իբր բանտերում ոչ մի տանջանք չէր կիրառվել և, ընդհանրապես, տանջանքներն իբր իր կողմից վաղուց արգելված էին թուրքական իրականության մեջ (50, էջ 510)։

Թուրք հեղինակ Սաղիկ Շահիդ բեյը, տակավին 1898-ին հանգամանորեն վերլուծելով արևմտահայության նկատմամբ կատարված չարագործությունները, եզրակացնում էր, որ «հայոց վերջին ջարդը նախապես մտածված էր, պլանավորված և կարգադրված էր սուլթանի կողմից» (67, էջ 207)։

Կոտորվածների թիվը սովորաբար հաշվվում է 300 հազար մարդ։ Իսկ անգլիացի Ուիլյամ Ռամզեյը այն հաշվում է 500 հազար (60, էջ 239)։ Ըստ ֆրանսիացի պատմաբան Ժակ Մորգանի, 1894—1896 թթ. սպանվել էր 200 հազար հայ, 100 հազարը բռնի մահմեդականացվել էր, 100 հազար աղջիկ ու կին քշվել էին հարեմները (58, էջ 305)։ Ֆրանսիացի Էմիլ Անտուանը նշում է, որ 1895—1896 թթ. սպանվել էր 247 255 մարդ։ Նա մասնավորապես անդրադառնում է Վանի նահանգի Արճեշի արյունոտ դեպքերին, որտեղ տասը տարեկանից մեծ բոլոր տղամարդկանց կոտորեցին։ Արճեշում 1896-ի հունիսին կոտորվել էր 30 հազար հայ (54, էջ 80—90)։ Ըստ ռուս հեղինակ Գուտորի հաշվումների, քանդվել, ավերվել էր 50 հազար տուն և 8 հազար գյուղ։ Նա գրում է, որ հայկական ձեռներեցությանը անուղղելի հարված հասցվեց (35, հավելված, էջ 51)։ Թուրքերի նպատակն էր կոտորածների մի ամբողջ սիստեմ գործադրելով հասնել այն բանին, որպեսզի մի լայնարձակ տարածության վրա ոչ մի հայ կին չկարողանար դառնալ հայ երեխայի մայր (50, էջ 514)։

Ահա թե ինչպես է նկարագրվում օտոմանյան բանկի դրամման պահին սուլթանի գործողությունների հակահայկական նպատակասլաց բնույթը։ 1896-ի օգոստոսին, երբ տակավին օտոմանյան բանկը հայ խմբի ձեռքում էր, Համիդը Կ. Պոլիս բերել տվեց քրդերի ու լազերի զինված խմբեր, որոնք քաղաքի թուրքական ամենախավար ու մոլեռանդ ամբոխի հետ ձեռք ձեռքի տված հաշվեհարդար տեսան խաղաղ հայ բնակչության հետ։ Կոտորածը շարունակվեց երկու օր։ Նախապես կառքեր էին բերվել սպանվածների դիակները դուրս տանելու, հետքերը քողարկելու համար։ Կ. Պոլսում սպանվածների թիվը հասնում էր 8750 մարդու։ Այլ աղբյուր-

ներ այս թիվը ցույց են տալիս 10 հազար (50, էջ 515—517)։ Այդ սահմռկեցուցիչ չարագործությանը մասնակցեցին որոշ պաշտոնատար անձինք՝ ոստիկաններ, զինվորականներ։ Տերությունների դեսպանները բավարարվեցին նրանով, որ հրաժարվեցին լուսավորել իրենց տները սուլթանի ծննդյան օրվա առթիվ։

Երբ եվրոպական մի ընկերության տնօրեն Կ. Պոլսում իր թուրք ծառայողներից բացատրություն է պահանջում երկու օր աշխատանքից բացակայելու համար, նրանք պատասխանում են, որ զորակոչվել էին հայերի ջարդին մասնակցելու (60, էջ 266)։ Անգլիական «Ռամզես» նավի սպաներից մեկն ականատես էր եղել (1896-ի օգոստոսի վերջին) Կ. Պոլսի փողոցներում կազմակերպված արյունահեղությանը։ Նա գրում է, որ մարդասպանության այդ հրեշավոր գործողությանը մասնակցում էին թուրքական բանակի սպաները, պետական ծառայողները։ Հայերին սպանում էին ինչպես առնետների (57, էջ 304—305)։ Կոտորածների միջոցին ձերբակալված հայերի թիվն անցավ 25 հազարից։ Մեկ ամսվա ընթացքում բանտարկյալների կեսից ավելին առանց դատի ոչնչացվեց ամենաբարբարոսական ձևերով (22, էջ 17—18)։ Յաթաղանին զոհ գնացին մեծ թվով պանդուխտներ, որոնց թիվը 90-ական թվականների կեսերին Կ. Պոլսում հասնում էր 40 հազարի (24, № 21, 1899, էջ 328)։ Անգլիացի Պիրսը գրում է, որ Կ. Պոլսի հայ համայնքը գերազանցապես կոտորվեցին։ Շուտով նրանց տեղը բռնեցին թուրքերը (61, էջ 52)։

Ահա թե ինչպես է կատարված բնութագրել եվրոպական սոցիալ-դեմոկրատիայի ճանաչված ղեկավարներից էդ. Բեռնշտայնը. «Ս. Բարդուղիմեոսի գիշերաջարդը, Տրոկետայի կոտորածը, 1792-ի, 1848-ի, 1871-ի արյունահեղ կռիվները, նույնիսկ Քիոսի, Լիբանանի և Բուլղարիայի ջարդերը նսեմանում են սուլթանի պաշտոնյաների հովանավորությամբ կամ նրանց հրամանով Հայաստանի մեջ գործված արյունուշտ շվայտությունների առջև, կատարված մի ժողովրդի դեմ, որի միակ հանցանքն է հակառակել հարստահարությանը...» (6, էջ 26)։

Մատնացույց անելով զանգվածային կոտորածի նախապես կազմակերպված լինելու փաստը և դրանում թուրքական

կառավարողների սև դերը, գերմանական գեներալ ֆոն Դեր Գոլցը «Միլիտար Վոշենբլատ» թերթում գրել էր (1897 թ.), թե «հայկական կոտորածները Փոքր Ասիայում և Կ. Պոլսում ոչ թե թուրքերի ֆանատիկոսության գործն էին, այլ նախապես մտածված քաղաքական դավադրության հետևանք, այնպես որ այդ գազանությունների համար պետք է մեղադրել մի քանի մարդկանց, այլ ոչ թե ժողովրդին» (23, № 77, 1897)։

Պիրսը բազմաթիվ ապացույցներ է վկայակոչում այն մասին, որ 1893—1897 թթ. ընթացքում յուրաքանչյուր եվրոպացի Կ. Պոլսում գիտեր բազմաթիվ դեպքեր, երբ մուսուլմաններին պատժում էին տանջված հայերին օգնելու համար։ Համիդը օտարերկրյա դեսպաններին և իր շրջապատին միշտ մատնացույց էր անում իր իրավունքները Հայաստանի նկատմամբ, զգացնել տալով, որ ինքը Հայաստանն ուզում է կառավարել այնպես, ինչպես ինքն է ուզում (60, էջ 264—265)։

Արշակ Չոպանյանն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ «տեսնվեցան նույնիսկ պաշտոնյաներ և ուսեմաններ, որ իրենց դիրքը վտանգեցին անզգամ հրամանին գործադրությանն ընդդիմանալով կամ ջարդարարներեն հալածված հայեր ազատելով» (25, էջ 130)։

Սակայն, ընդհանուր առմամբ, սուլթանին ու նրա պալատական վերնախավին, որպես կանոն, հաջողվում էր գրգռել մահմեդական խուժանի մոլեռանդ բանդաներին, նրանց մղել սանձարձակ բռնություններ։

Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանատան դրագոման Ֆիցմորիսը մանրամասնորեն նկարագրել է Ուրֆա քաղաքի 70 հազար բնակչության մոտ կեսը կազմող հայության նկատմամբ 1896-ի աշնանը և ձմռանը թուրքական իշխանությունների և խուժանի կատարած վայրագությունները։ Նախ, հայերին զրկել էին բողոքելու, կենտրոն հեռագրելու հնարավորությունից։ Հայկական թաղի ջուրը կտրել էին։ Իսկ դեկտեմբերի 28-ին կազմակերպվեց քաղաքի հայ բնակչության սարսափելի կոտորածը։ Հարյուր երիտասարդ հայերի կոկորդները կտրեցին մի ինչ-որ շեյխի կոչով։ Հայերի տները կողոպտվեցին։ Երեք հազար հայի կոտորեցին եկեղեցում (60, էջ 251)։ Կոտորածների պահին Արևմտյան Հայաստանից ոչ մի նամակ դուրս չէր թողնվում։ Իսկ զանգվածային

կոտորածի օրերին թուրքական թերթերն այնպիսի դիրք էին բռնել, այնպես էին խեղաթյուրում դեպքերի իմաստը, որ փաստերին անտեղյակ, անդիտակ մարդիկ կարող էին մտածել, որ ոչ մի արտակարգ բան էլ չի կատարվում, որ ամենաշատը երկրի արևելքում մի փոքր ավելացել է կողոպտիչների ու ավազակների թիվը։

Այնուամենայնիվ, երբ եվրոպական ու ամերիկյան թերթերում աղմուկ բարձրացավ հայոց կոտորածների շուրջը, ամերիկյան «Նյու Յորք Հերալդ» թերթի տնօրեն Գորդոն Բեննեթը հատուկ ժամանեց Կ. Պոլիս իրադարձությունների մասին որոշակի ինֆորմացիա ստանալու նպատակով։ Նա հանդիպեց սուլթանի հետ և հայտարարեց, թե ինքը չի ուզում հավատալ ո՛չ թուրքական, ո՛չ հայկական թերթերի լուրերին և ցանկանում է իր թղթակցին ուղարկել դեպքերի վայրը։ Սուլթանն ստիպված տեղի տվեց, և վանական Հեփվորթը ճանապարհ ընկավ Արևմտյան Հայաստան։ Չնայած թուրքական իշխանությունների բոլոր ջանքերին՝ խանգարելու նրա առաքելությանը, այնուամենայնիվ, Հեփվորթը գրեց ու առանձին գրքով հրապարակեց իր տեսածն ու գիտցածը (53)։ Այս գիրքը հանդամանալից պատկերացում է տալիս տեղի ունեցած արհավիրքի մասին։ Հեփվորթը հատուկ ուշադրություն է դարձնում տնտեսական խնդիրներին, շեշտում ազգային ախոյանության տնտեսական հիմքը, նշում է, որ թուրքերը նախանձում էին հայերին նրանց գործիմացության, ձեռնարեցության համար։

«Հայկական սարսափները» հավաստի են նկարագրել ամուսիններ պրոֆ. Ռենդել Հարիսը և Հելեն Հարիսը իրենց գրքում (52)։ Սրանք 1896-ին այցելել էին Հայաստան (Ալեքսանդրետ—Այնթափ—Ուրֆա)։ Նրանք ընտրել էին նամակագրության ժանրը իրենց ընթերցողներին Հայաստանում կատարված սարսափներին ծանոթացնելու համար։ Նամակները գրված էին հայ ժողովրդի նկատմամբ խորին համակրանքի, թուրքական բարբարոսությունների դատապարտման ոգով։

Մալաթիայում, նկարագրում է Հելեն Հարիսը, եղան դեպքեր, երբ թուրք բեկը օգնեց հայերին, թրքուհիները փրկեցին վիրավոր հայերին, թաքցրին նրանց հարեմներում և այլն։ Գրքում նկարագրված է մի դեպք, երբ քրդական գյուղը հրա-

Ժարվել էր մասնակցել հարևան հայերի կոտորածին (52, էջ 174)։ Խարբերդից 1896-ի սեպտեմբերի 21-ին գրած նամակում ռիկին Հարիսը այն համոզմունքին էր, որ անկարգություններ սարքելու մեջ հայերին մեղադրելու փորձերը զուրկ էին որևէ հիմքից։ «Հարձակվո՞ւմ են արդյոք գառները գայլերի վրա»,— հարց էր տալիս նա (52, էջ 207)։

Անգլիացի մի այլ հեղինակ՝ Արգայլի Դուքսը գրում է, թե «թուրքերի դաժան գործողությունները պատահականություն չեն. դրանք քրոնիկ և օրգանական բնույթ ունեն»։ «Անգլիայի պատասխանատվությունը» գրքի հեղինակը շեշտում է հետևյալը. երբեմն թուրքական իշխանությունների կողմից բռնության և վիրավորանքի հազար դեպքից մեկի ժամանակ այս կամ այն գյուղում բանը հասնում է ինքնապաշտպանության։ Զապթիան զինաթափված է և կարող է նույնիսկ սպանվել։ Անմիջապես թուրքական նահանգապետը գյուղի վրա բաց է թողնում անկանոն զորքի հրոսակներին, որոնք գրգռված կողոպուտի ծարավից, բռնությունից և մոլեռանդ ատելությունից, գործի են անցնում։ Այսպես կոչված ապստամբությունը ճնշվում է առանց խտրության՝ տղամարդկանց, կանանց և երեխաների համատարած կոտորածով։ «Ահա թուրքական կառավարության սովորական գործողությունը»,— եզրակացնում է նա (29, էջ 89—92)։

Արդեն 1896-ին Ավետիս Նազարբեկը նկատում էր, որ Համիդի նշանաբանն է՝ հայկական հարցը լուծել հայերին կոտորելու միջոցով (59, էջ 516)։ 90-ական թվականների կեսերի թուրքական չարագործության համաշնապատկերն ամենայն մանրամասնությամբ, փաստերով, վերլուծություններով, նաև ֆոտոիլյուստրացիաներով տրված է ամերիկյան միսիոներ Բլիսի գրքում (48)։ Այս ականատեսի աչքից ոչինչ չի վրիպել։ Գրքում ընթերցողը կարող է գտնել բոլոր կարևոր երևույթների, դեպքերի հավաստի նկարագրություններն ու բնութագրումները։ Նրա եզրակացությունը որոշակի է ու համոզիչ. ամեն ինչ կատարվել էր սուլթանի գիտությամբ ու ղեկավարությամբ։

1896-ի օգոստոսին Կ. Պոլսում կատարվածը հանգամանորեն նկարագրել է ռուս հեղինակ Օ. Կայդանովան 1897-ին Մոսկվայում լույս տեսած ժողովածուում (31, էջ 75—79)։

Նույն ժողովածուում տեղ է տրված նաև ֆրանսիացի Վիկտոր Բերարի գրքի (La politique du Sultan, Paris, 1897) մի հատվածին՝ «Օգոստոսյան սպանությունները Կ. Պոլսում», որը բազմակողմանի պատկերացում է տալիս թուրքական իշխանությունների չարագործությունների մասին։ Զատազանց հարուստ վկայություններ են պարունակում անգլիական և ամերիկյան ամսագրերի էջերում տպագրված նյութերը, հոդվածները, որոնց հեղինակները՝ հանապարհորդներ, միսիոներներ, առևտրականներ, արժեքավոր վկայություններ են թողել սերունդներին, սակայն հանիրավի ցայսօր մեզ մոտ դրանք լրջորեն և բազմակողմանիորեն չեն ուսումնասիրվել։

Հուրախություն մեզ, այդ նյութերն արդեն հրապարակի վրա են դրվում շնորհիվ մեր երիտասարդ ուսումնասիրողների (39, 40, 41, 42)։

1894—1897 թթ. Աբդուլ Համիդի կազմակերպած չարագործության դրդապատճառները անգլիական դիվանագետ Պիրսը պարզաբանում է հետևյալ կերպ։ Նախ նա այդպիսի գործելակերպը վերագրում է մահմեդական ավանդական այն համոզմանը, որ իրենք օժտված են քրիստոնյաներին ճնշելու և տիրապետելու ամենակարող իրավունքով։ Այնուհետև մատնանշվում է այն կարևոր հանգամանքը, որ հայերը կարողացել էին իրենց ձեռքում կենտրոնացնել տնտեսական հզոր լծակները։ Երկրի կապիտալիստական զարգացման ասպարեզում հայերը հանդես էին գալիս առաջամարտիկների դերում։ Չէ որ հողատիրության, պետական կառավարման մարզում նրանք հիմնականում իրավազուրկ էին։ Նշելով կրթության բնագավառում հայերի անհամեմատ բարձր եռանդն ու ձեռք բերած զգալի արդյունքը, հեղինակը եզրակացնում է, որ նրանք արդեն գիտակցում էին ազգային ինքնության, ազատության անհրաժեշտությունը։ Պիրսը չի անտեսում նաև Ռուսաստանում և ԱՄՆ-ում հայկական հեղափոխական կազմակերպությունների դերը, որոնց գործունեությունն ուղղված էր Աբդուլ Համիդի տիրապետության դեմ։ «Այս կազմակերպությունների գործունեությունը,— կարդում ենք նույն հեղինակի մոտ,— Աբդուլ Համիդին առիթ ծառայեց կոտորածները կազմակերպելու համար» (60, էջ 276—277)։

Նույն միտքը հաստատում է անգլիացի մի այլ հեղինակ։ Նա գրում է, թե Թուրքերը առիթ, հիմք էին փնտրում իրականացնելու իրենց հակահայկական զարհուրելի ծրագիրը և այդպիսին հանդիսացավ հեղափոխական կազմակերպությունների գործունեության աշխուժացումը (53, էջ 282)։ Ամեն ինչ նախապատրաստված էր, մնում էր առիթը։ Իսկ հեղափոխական, ազատագրական պայքար մղող ժողովուրդների դեմ միասնական էին թե՛ միապետները, թե՛ գաղութատեր պետությունների տնօրենները։

Եվ քանի որ Եվրոպան բացի դատարկահնչուն բողոքներ հղելուց, ուրիշ ոչինչ չէր անում, իսկ Ռուսաստանը մտադրություն չուներ ինտերվենցիա կատարելու, սուլթանը և նրա համախոհների բանդան իրենց ձեռքերն ազատ էին համարում շարագործությունները շարունակելու խնդրում (60, էջ 277)։ Նույն հեղինակը բազմաթիվ փաստերով ապացուցում է, որ մահմեդական մոլեռանդությունը հայերի դեմ բորբոքում էր անձամբ Աբդուլ Համիդը։ Նրա գիտությամբ և ցանկությամբ էին հատուկ քարոզներ կարդացվում մզկիթներում (60, էջ 278)։ Նա չէր թողարկում ատելությունը հայերի նկատմամբ։ Հայկական զրոցները նա փակում էր այնտեղ, որտեղ հնարավոր էր։ Արգելված էր այն բոլոր գրքերի մուտքը Թուրքիա, որոնք կարող էին որևէ ձևով սնունդ տալ հայ ժողովրդի ինքնուրույնության ձգտումներին։ Օրինակ, Հայաստան անվան հիշատակություն պարունակող աշխարհագրության դասագրքի մուտքն արգելված էր։ Հայկական թերթերն առանձնահատուկ խստությամբ էին գրաքննվում պետական մարմինների կողմից։ Հայերի միջավայրում ամենուրեք խրախուսվում էր լրտեսությունը։ Դատարաններում հակահայկական վճիռները սովորական բան էին։ Մեծ թիվ էին կազմում ոչնչով չհիմնավորված, չապացուցված բանտարկությունները։ Հակահայկականությունը դարձել էր Աբդուլ Համիդի ներքին քաղաքականության բնորոշ կողմերից մեկը։ Պիրսը խոստովանում է, որ «ոչինչ XIX դարում չի կարող համեմատվել այն սարսափների հետ, որ կատարվել են Թուրքիայում» (60, էջ 295)։

Թե ինչպիսին էր Եվրոպայի դերը հայոց ողբերգության մեջ, դիպուկ է բնութագրում «Հնչակը». «Երբ վերջին տեղ-

տեմբեր ամսին սուլթանն իր առջև դրված բարենորոգումների ծրագիր կոչված հայտնի ծաղրածուական թղթի կտորն էր ստորագրում և ամբողջ աշխարհին ցույց էր տալիս այդ, իբրև սուլթանական «արդարադատության զիջում», եվրոպական մամուլը ծափահարում էր նրան։ Եվրոպական բոլոր թերթերն այդ նամակի առիթով մի սրտաշարժ խմբերգ էին կազմել, ներբողներ կարդալով եվրոպական դիպլոմատիայի վարպետությանը, որն այնպիսի մի ծանր խնդիր, ինչպիսին հայկականն է, «լուծեց», առանց տեղի տալու եվրոպական պատերազմի։ «Մնում էր միայն տոնի վերջին տեսարանը, որպեսզի եվրոպական պետությունները, համբուրվելով սուլթանի հետ, ներողություն խնդրեին նրանից այն «վշտերի» համար, որ «ակամա» պատճառեցին նրան, երբ... սկսեցին կատարվել այդ վերջին գործողության տեսարանները՝ ջարդեր, ջարդեր, անընդհատ ջարդեր»։

1894—1895 թթ. «կոտորածներն ու սարսափները եղան... Թուրքական պատասխանը մեր այն օրինավոր խնդրանքներուն, որով արդարություն և վարչական բարենորոգում կուզեինք մեր հինավուրց հայկական հայրենիքին մեջ, խնդրանքներ, որոնք Բերլինի դաշնագիրը ստորագրող եվրոպական մեծ պետությանց վավերացումը և աջակցությունը ստացած էին» (24, № 15, 1900, էջ 240)։

90-ական թվականների ավարտին կարծես թե անդորր իջավ Արևմտյան Հայաստանի դաշտերի ու լեռների վրա։ Ջարդված ժողովուրդն աստիճանաբար հարմարվում էր նոր իրավիճակին։ Ոմանք բռնում էին արտագնացության ճանապարհը, մյուսները ոտք էին դնում կռվի, հեղափոխական նոր դոտեմարտերի ուղին։

1. Լենին Վ. Ի., Երկ, 5-րդ հրատ., Երևան։
2. Ալպոյաճյան Աշ., Եվդոկիո հայոց պատմություն, Կահիրե, 1952։
3. «Արմենիա», Թերթ, Մարսել։
4. «Ազգային քաղաքականություն», «Հայք», Նյու Յորք, № 10, 7. 6. 1893, էջ 151։
5. «Անահիտ», ամսագիր, Փարիզ։
6. Բեռնշտայն Էդ., Հայկական տանջանքները և Եվրոպան, Ժնև, 1906։

7. Ղազարյան Գ., Հայ բաղաքական մտքի զարգացումը և Հ. Հ. դաշնակցությունը, Փարիզ, 1927։
8. Խարիբյան Ռ., Հայ բաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք» ամսագիր, № 1, 1922։
9. «Գրոշակ», թերթ, ժնև։
10. Նազրեյան Գ., Աբդուլ Համիդ Բ Կարմիր սուլթանը, 1930, Բեյրութ։
11. Թումանյան Ս., Հ. Հեղափոխությունը պատմական տեսակետից, Կ. Պոլիս, 1932։
12. Լյուքսեմբուրգ Ռ., Ազգերի պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան, պրոֆ. Գ. Ղարիբջանյանի հրատարակումը, «Բաներեր Երևանի համալսարանի», 1971, № 2։
13. Կիրակոսյան Զ., Բուրժուական գիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 80-ական թթ.), Երևան, 1980։
14. Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965։
15. Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Երևան, 1956։
16. «Հորիզոն», թերթ, Թիֆլիս։
17. «Հնչակ», թերթ, ժնև։
18. «Հայք», թերթ, Նյու Յորք։
19. «Հայաստան», թերթ, Լոնդոն։
20. Ճիզմեճյան Մ. Գ., Պատմություն ամերիկահայ բաղաքական կուսակցությանց, 1890—1925, Ֆրեզնո, 1930։
21. Միքայելյան Քր., Հեղափոխականի մտքերը, ժնև, 1906։
22. Մաք, Թուրքական բանտերը, ժնև, 1906։
23. «Նոր կյանք», ամսաթերթ, Լոնդոն։
24. «Նոր դար», թերթ, Թիֆլիս։
25. Զոպանյան Սրշ., Դեմքեր. «Մկրտիչ Խրիմյան», Փարիզ, 1924։
26. Սանակյան Ռ., Հայ թուրքագիտությունը 1908—1920 թթ., ժողովածու, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», № 10, Թուրքիա, Երևան, 1979։
27. Վարանդյան Մ., Հ. Հ. դաշնակցության պատմություն, առաջին հատոր, Փարիզ, 1932։

28. Амфитеатров А. Армянский вопрос, СПб. 1906.
29. Аргайльский, Герцог, Ответственность Англии в восточном вопросе, факты и воспоминания за сорок лет, СПб, 1906.
30. Бондаревский Г. Л. Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток (1888—1903), Ташкент, 1955.

31. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898.
32. Бутаев И. Основные моменты в развитии национального движения на мусульманском Востоке, сб. «Колониальный Восток», Л. 1924.
33. Вандаль Альберт Армения и турецкие реформы, СПб, 1908.
34. Геноцид армян в Османской Империи, Сборник, под редакцией проф. Нерсисяна М. Г., Ереван, 1966.
35. Гутор М. Д. Новейшая история Турции и Персии (XVIII, XIX и XX столетия), Тифлис,
36. Дживелегов А. Будущее Турецкой Армении, М., 1911.
37. Инджикян О. Г. Буржуазия Османской Империи. Ереван, 1977.
38. История дипломатии, т. II, М., 1963.
39. Киракосян А. Дж. Армянский вопрос на страницах журналов Великобритании (середина 90-х гг. XIX века), АН Арм. ССР, сектор научной информации по общественным наукам. Ереван, 1980.
40. Киракосян А. Дж. Армянский вопрос на страницах журналов США, «Вестник общественных наук», 3(447), АН Арм. ССР, 1980.
41. Киракосян А. Дж. Из истории русско-английских отношений по армянскому вопросу, «Вестник архивов Армении», 3(55), Ереван, 1979.
42. Киракосян А. Дж. Антиармянская политика султана Абдул-Гамида в оценке западных авторов, «Молодой научный работник, общественные науки», Ереванский университет, 1(29), 1979.
43. Лазарев М. С. Крушение турецкого господства на Арабском Востоке, М., 1960.
44. Михайлов В. Кровавый султан.
45. Положение армян в Турции до вмешательства держав в 1895г., Предисловие проф. Л. А. Камаровского,
46. Тамамшев И. Политическая судьба Константинополя, Балканских народов и отношение их к России и западно-европейским государствам, СПб, 1887.
47. Шпилькова В. И. Младотурецкая революция, 1908—1909 гг., М., 1977.
48. Bliss C. M. Turkey and the Armenian attrocities, A reign of Terror, Philadelphia, 1896.
49 «Blue Book» London.

50 Bryce J., Transcaucasia and Ararat, London, 1896.
51 Hamlin, Cyrus The Genesis and Evolution of the Turkish Massacre...
52 Harris J. R. and Harris Helen B. Letters from the Scenes of the Recent Armenian massacres, Published by James Nisbet, Co, Ltd, 1897.
53 Hepworth, H. Through Armenia on Horse back, London, 1898.
54 Emile, Antoine, D'Armenie, Bruxelles, 1897.
55 Kemal, Ismail The Memoirs of Ismail Kemal. Edited by Sommerville Story. With Preface by William Morton Fullerton, London, 1920.
56 Kuran, Ahmet Bedevi Inkiläp Tarihimiz, Ve «Jön Türkler», Istanbul, 1945.
57 Mc Dermot, George The Great Assassin and the Cristians of Armenia, «Catholic World», vol. 64, 1896, № 4.
58 Morgan J. The History of the Armenian People, From the Remotest Times to the Present Day, 1949, N. Y.
59 Nazarbek A., Zeitun, «Contemporary Review», London, 1896, vol. 69.
60 Pears, Edwin Life of Abdul Hamid, Chapter XIV Estimate of the Character of Abdul Hamid, p. 331—350. N .Y., 1917.
61 Pears, Edwin Turkey and its people, London, 1912.
62 Stein, Robert Armenia must have a European Governor, «The Arena», Boston, vol. 12, 1895.
63 The Armenian Debate «The Spectator», vol. 67, London, July, 18, 1891.
64 Turkey and Armenian atrocities.
65 Walker Chr., Armenia, The Survival of a Nation, N. Y., 1980.
66 Wittlin, Alma Abdul Hamid, The Shadow of God, London, 1940.
67 Sadik Shahid Bey, Islam, Turkey and Armenia, and How They Happened. Turkish Mysteries Unveiled. St. Louis, 1898.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ XIX Դ. 90-ԱԿԱՆ ԹԹ.

Մեծ տերությունների բաղամականությունը: Նիկոլայ II-ը «հայկական հարցն օգտագործում էր Անգլիայի հետ հաշիվներ մաքրելու համար»: Ռուս առաջադեմ մարդիկ համակիր էին արևմտահայության ազատագրության գործին: Մեծ Բրիտանիայի մեծամասնական բաղամականության մութ ծալքերը: Հայկական հարցում Սալիսբերիի խարդավանքների ժամանակակից մեկնաբանությունները: Վիլհելմյան Գերմանիան թուրքական պետականության ամբողջականության պաշտպանի դերում: Ֆրանսիայի թուրքանպաստ բաղամականությունը: Հանոտո: Ֆրանսիական սոցիալիստ Ժան Ժաուրեսը Եվրոպան հոչակում է սուլթանի հայասպան բաղամականության մեղսակից: Հայկական հարցի արձագանքները ԱՄՆ-ում: Բուրժուական դիվանագիտությունից օգնություն ակնկալողների ապատումների ապալումը:

Եվրոպական տերությունների և օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների շահերի միջև, ինչ խոսք, առկա էր բացահայտ հակադրություն: Սակայն սուլթանի տիրապետությունն ամենամեծ չարիքն էր, որ ինչ-որ մի պահ մոռացության էր տալիս եվրոպական տերություններից սպասվող վտանգը, և թուրքական լուծը թոթափելու ձգտող ճնշված ժողովուրդները, նրանց հասարակական-քաղաքական ակտիվ ուժերը փարվում էին դիվանագիտությանը: Ինչպես նկատել է Ռոզա Լյուքսեմբուրգը, դիվանագիտությունը «վառվող տաշեղ էր նետում դարերի անդորրությունից և շահագործումից լեռան չափ դիզված բոցավառ նյութի մեջ» (9, էջ 143):

Ավանդականորեն բուրժուական դիվանագիտությունն օգտվում էր հակասուլթանական շարժումներից՝ սուլթանի վրա

ճնշում գործադրելու, նրա պետության վրա իր ազդեցությունը տարածելու, տնտեսական ու քաղաքական օգուտներ քաղելու համար։ Ինչպես Կ. Մարքսն է նկատել՝ խնդիրն այն էր, թե ինչպես վարվել Թուրքիայի հետ։

Ֆրանսիացի պատմաբան Վանդալը ժամանակին շատ դիպուկ է սրամտել, ասելով, թե «Արևելյան հարցը, ըստ էության, արևմտյան հարց է» (34, էջ 387)։ Եվրոպական քաղաքականության մեջ որոշակի էր այն գիծը, թե հիվանդը որպեսզի առողջանա, նախ չպետք է մեռնի։ Արևմտյան Հայաստանը որպեսզի բարեկարգվի, չպետք է Ռուսաստանի մաս կազմի։

Ահա թե ինչ էր գրում այդ մասին «Հնչակ» թերթը. «Եվրոպական դիպլոմատները, սկսած Սոլբսերիից և վերջացրած Լոբանով-Ռոստովսկիով, բարկանում ու հանդիմանում են մեզ,— մեզ, որ մի փոքրիկ ազգ ենք և որ, վերջին հաշվով... Եվրոպային դրանից ոչ ցուրտ կլինի և ոչ տաք,— ...հանդիմանում են, թե ինչ իրավունքով մենք վրդովում ու շփոթում ենք Թուրքիայի ներքին քաղաքականությունը և վտանգի ենթարկում նրա գոյությունը։ Տեսնում եք, բանն այն է, որ Թուրքիայի ամբողջական մնալը (intégrité) պայման է Եվրոպայի խաղաղության և եթե այդ «խաղաղությանը» պետք լինի մի քանի միլիոն հոգուց բաղկացած մեկ ազգի կորուստը, Եվրոպան այդ «չնչին» զոհողությունը կանի, որովհետև, վերջիվերջո, չէ որ իր «շահն» է այդ պահանջում» (11, № 1, 1896, էջ 1)։

Այնուամենայնիվ փաստ է, որ թուրքական լուծը թոթափած հույներն ու սերբերը, բուլղարներն ու ռումինները՝ Բալկաններում, վրացիները և հայերը՝ օսմանյան կայսրության արևելքում իրենց հույսերը, ձգտումները մշտապես կապում էին Ռուսիայի, նաև եվրոպական կառավարությունների և քրիստոնյա ժողովուրդների օգնության հետ։ «Ռուս-թուրքական պատերազմները ցարիզմն իրագործում էր տիրապետող դասակարգերի՝ ազնվականության և բուրժուազիայի շահերին համապատասխան։ Իրենց օբյեկտիվ հետևանքներով դրանք կրում էին առաջադիմական բնույթ, քանի որ արագացնում էին սուլթանական ճնշումից բալկանյան և Թուրքիայի իշխանությանը ենթակա մյուս ժողովուրդների ազատագրման պրոցեսը» (24, էջ 6)։

Արևելյան հարցի գոյության ամբողջ ընթացքում մեծ է եղել Ռուսաստանի արտաքին քաղաքականության դերը։ Եթե այն XIX դ. 70-ական թվականների ավարտին համապատասխանում էր թուրքական լծից ազատագրվող թե՛ սլավոնների, թե՛ հայերի ազատագրական տենչերին, ապա 90-ական թվականներին ներքին քաղաքականության ընդգծված հետադիմականությունն անդրադառնում էր ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության վրա։ Նիկոլայ II-ն ու Աբդուլ Համիդ II-ը բարեկամացել էին։ Նրանց աչքում թուրքական լուծը թոթափելու ձգտող հայկական կազմակերպությունները խռովարարներ էին, խառնակիչներ, վտանգավոր տարրեր։ Ռուսաստանը խուսափում էր կոնֆլիկտներից աշխարհի այդ ռեգիոնում, քանզի զբաղված էր այլ մասերում։ Միաժամանակ, Ռուսաստանը, մերձենալով Ֆրանսիայի հետ, փորձում էր շրջանցել պատերազմի բռնկման հնարավորությունը։ Լենն գրել է, թե «հայի արյունն էր թափվում, իսկ եվրոպական պետություններն այդ արյունը դարձրին միջազգային առևտրի առարկա» (8, էջ 7)։

Տակավին չկար այն ուժը, որին կռթնելով հայոց քաղաքական կուսակցությունները կարողանային հաջողության հասնել։ Միջազգային կյանքի ասպարեզում տնօրինում էր բուրժուական Եվրոպան։ Արևմուտքի դեմոկրատական, առաջադիմական ուժերը դեռ անզոր էին հաղթահարելու իմպերիալիստական տերությունների հետապնդած շահախնդիր տենդենցները։

Աբդուլ Համիդը փորձված քաղաքագետ էր։ Նրան հաջողվեց մտերմական հարաբերություններ հաստատել Գերմանիայի կայզեր հետ, և լավ հարաբերություններ ցարի հետ։ Բալկանյան երկրների միապետներն էլ մեկը մյուսի ետևից Կ. Պոլիս գնացին։ Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր սուլթանի բարեկամությունը վայելել։ Սրանք մոռացել էին իրենց երեկվա օրը, և օսմանյան կայսրության հետ իրենց քաղաքականությունը կառուցում էին, անտեսելով ճնշվածների, տվյալ դեպքում արևմտահայության իրավունքները հարգելու անհրաժեշտությունը։ 1894—1896 թթ. Ֆրանսիան

և Անգլիան Թուրքիայի նկատմամբ «վարանոտ» քաղաքակա-
նության հետևեցին։ Իսկ 1896-ից հետո Անգլիայի արևելյան
քաղաքականությունը բացարձակ թուրքասիրական դարձավ։
Սուլթանը ցարին քծնում էր, միաժամանակ կատարում էր
Գերմանիայի պահանջները։ Սուլթանին հաջողվել էր լավ
հարաբերություններ հաստատել Ավստրո-Հունգարիայի ար-
քունիքի հետ։

XIX դարի 90-ական թթ. կեսերին թուրքական հակահայ-
կական քաղաքականությունը շահեց այն բանից, որ Ռուսաս-
տանի դիվանագիտության մերձավորարևելյան գործելակեր-
պը փոփոխության էր ենթարկվել։ Ակադեմիկոս Ֆ. Ռոզենը
նկատում է, որ Նիկոլայ II-ը «հայկական հարցն օգտա-
գործում էր Անգլիայի հետ հաշիվներ մաքրելու համար» (33,
էջ 3)։ «Դիվանագիտության պատմության» մեջ կարդում ենք.
«Ցարական կառավարությունն այն ժամանակ առանձնապես
շահագրգռված չէր Հայաստանը զավթելու մեջ։ Նա հասկա-
նում էր, որ անգլիական առաջարկությունը կկռվեցնի Թուր-
քիայի հետ, ինչը անգլիական դիվանագիտության գլխավոր
խնդիրն էր» (27, էջ 335)։

Հայերի ջարդի, ողբերգական վիճակի մասին ոչ բոլոր
լուրերն էին հասնում ռուս ժողովրդին։ Այլապես «տեղի կու-
նենար հայ ժողովրդի նկատմամբ համակրանքի պայթյուն։
Սակայն չափազանց քիչ նորություններ էին հասնում ռուս
ընթերցողին կամ նրանց կարևորությունը հասցվում էր նվա-
զագույնի» (54, էջ 44)։ «Վեստնիկ Եվրոպի» ռուսական ամ-
սագիրը մամուլին կոչ էր անում ողջունել տերությունների
համատեղ ջանքերը հայոց դժվարին վիճակը բարելավելու
համար (23, հ. 6, գիրք 12, 1896, էջ 860)։

Ռուսական քաղաքականության հասցեին շատ էր գրվում
այն առումով, թե Պետերբուրգը չի ցանկանում նոր կռիվ
Թուրքիայի հետ, քանի դեռ չի եկել ժամը Կ. Պոլսի վրայով
դեպի տաք ջրերը վերջնական ելք ստանալու համար (55,
էջ 263)։

Ռուսական մամուլը եռանդուն արշավանք էր սկսել անգ-
լիական քաղաքականության դեմ, շեշտելով, թե Անգլիան
անկեղծ չէ հայոց խնդրում յուր հետևած քաղաքականության
մեջ և Արևմտյան Հայաստանի նկատմամբ ունի հետին մտ-

քեր։ Իսկ ռուսական «Նովոյե վրեմյա» թերթը (№ 6883, 1895)
հայոց հարցի աշխուժացումն անհիմն ձևով կապում էր «բրի-
տանական կառավարության բանսարկուներին» հետ։
«Նորդ» լրագիրը, որ ռուսաց արտաքին գործերի մինիստրու-
թյան ձայնափող թերթն էր համարվում, հերքում էր հայկա-
կան հարցում Ռուսաստանի կարծեցյալ ակտիվության հնա-
բավորությունը, հայտարարում, որ «այդ բոլոր լուրերն ավելի
քան չափազանցված են։ Մենք հաստատապես գիտենք, որ
ռուսաց կառավարությունը մտադիր չէ հայոց խնդրում փոխել
յուր բարեկամական հարաբերությունը դեպի Բ. դուռը» (18,
№ 156, 1895)։ Ռուսական արքունիքն անթույլատրելի էր
համարում իր սահմանների մոտ «անկարգությունների ու
ագիտացիայի» մշտական օջախի առկայությունը (34, էջ
306)։

1894-ին արդեն երեք տարի կաթողիկոսի պաշտոնը զբա-
ղեցնող Խրիմյանն այցելում է Պետերբուրգ, տեսակցում Նի-
կոլայ II-ին։ Պետերբուրգում նա ասում էր, թե հայ ժողովրդի
ռուսահայ հատվածը «իրեն բախտավոր է զգում, որ վայելում
է ռուսական պաշտպանությունը», որ արևմտահայությունը
շարունակում է հեծել թուրքական կրնկի տակ։ Նա հույս էր
հայտնում, որ հասել է ժամը և վերջ պետք է տրվի արևմտա-
հայության տառապանքներին, որ Ռուսիայի թագավորի «բար-
յացակամ հաճությամբ» պետք է վախճան տրվի հայոց վա-
ղեմի և հին խնդրին։ «Մեր հույսը նրա վրա է և նրանից ենք
ակնկալում ամեն ինչ»,— ասում էր Խրիմյանը (6, էջ 68)։
Նորընծա թագավորը ընդհանուր խոսքերից այն կողմ չանց-
ավ։

1894-ի դեկտեմբերի 3-ին Թուրքիայի արտաքին գործերի
մինիստրությունը Պետերբուրգի իր դեսպանի միջոցով ուզում
էր իմանալ Սասունի դեպքերի կապակցությամբ ցարական
կառավարության դիրքի և այդ հարցում անգլիական կառա-
վարության գործողությունների նկատմամբ նրա վերաբեր-
մունքի մասին։ Նիկոլայ II-ը այդ առթիվ մի թղթի վրա մա-
կագրում է. «Օտար վանք սեփական կանոնադրությամբ չեն
մտնում»։ Մի այլ մակագրությամբ ցարը հասկացնել էր
տալիս, որ ռուսական թերթերը չեն միջամտում Թուրքիայի
ներքին գործերին, որ նրանք միայն արտատպում են օտար-

երկրյա աղբյուրներից համապատասխան նյութեր։ Մի այլ առիթով՝ Բիթլիսում հակահայկական խժդժությունները հետաքննելու մասին Նելիդովի հարցադրման կապակցությամբ Նիկոլայ II-ը Աբդուլ Համիդի ցանկության հետ հաշվի նստելու տեսակետ է արտահայտում (30, հ. 44, 1931, էջ 11—13)։ 1895-ի հունվարին Նիկոլայ II-ը համերաշխում էր Կ. Պոլսում դեսպան Նելիդովի գործողություններին, միաժամանակ անհրաժեշտ համարում, որպեսզի Սասունի կոտորածը հետաքննող հանձնաժողովում ռուս պատվիրակը գործեր ֆրանսիացու հետ համատեղ, հեռու մնալով անգլիական պատվիրակից, որը «կարող էր այլ նպատակներ հետապնդել»։ Նիկոլայ II-ը գտնում էր, որ «հանձնաժողովը պետք է ստուգի, դնահատի և դրանով սահմանափակվի, խուսափելով հիմնավոր հետաքննությունից և հաշվետվություններից, որոնք չափից ավելի կգրգռեին հասարակական կարծիքը» (33, էջ 25)։

1895-ի հունիսի 4-ին Պետերբուրգում անգլիական դեսպան Քիմբերլեյը արտաքին գործերի մինիստրին հայտնում էր ռուսաց արտաքին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկու հետ իր տեսակցության մասին։ Վերջինս, շարադրելով իր կառավարության դիրքը հայկական բարենորոգումների հարցում, ընդգծում էր Բ. դռան վրա բռնի ուժ գործադրելու աննպատակահարմարությունը, պատճառաբանելով, թե դա կնպաստի հայկական անկախ թագավորություն ստեղծելուն, հայկական գավառում հայերի բացառիկ առավելությունների մասին «հայկական կոմիտեների» ծրագրի իրականացմանը։ «Ռուսաստանը չի կարող հավանություն տալ իր սահմանակցին նոր Բուլղարիայի կազմվելուն» (39, № 1, 1896, էջ 37, 76)։ Լոբանով-Ռոստովսկին գտնում էր, որ «հայկական անկարգություններն անգլիական բանսարկությունների արդյունք են, և դրանք նրան վտանգավոր էին թվում այն պատճառով, որ դրանց մեջ նա տեսնում էր թուրքական կայսրության անկման սկիզբը» (34, էջ 307)։ Նա դեմ էր արտահայտվում թուրքահպատակ առանձին ժողովուրդների ինքնավարությանը, դրա մեջ տեսնելով Թուրքիայի փլուզման վտանգ։ Իսկ Նիկոլայ II-ը մի առիթով չթաքցրեց իր վերաբերմունքը և բացորոշ ասաց, թե «ինքը հոգնել է այդ հայկական հարցից» (34, էջ 306)։ 1895-ի օգոստոսի 9-ին մինիստր Լոբանով-Ռոստովսկին հայտարարեց, որ Ռուսաստանը դեմ է Թուրքիայի նկատմամբ ուժ գործադրելուն։ Իսկ 1896-ի հունվարի 16-ին, երբ արդեն երեք ամիս շարունակվում էր կոտորածը, նա ոչ մի հիմք չէր տեսնում կորցնելու իր հավատը սուլթանի բարի կամքի նկատմամբ, որն «անում էր իր լավագույնը», ինչպես ինքն էր համոզված։ Մի քանի օր անց նա ավելացրեց, թե ցանկալի է սուլթանի բարի ցանկությանը, նրա հայեցողությանը թողնել ռեֆորմների իրագործումը, օգնել սուլթանին, տալով նրան անհրաժեշտ ժամանակ բարձրացնելու իր հեղինակությունը իր հպատակ ապստամբ բնակչության աչքում։ Իսկ Ավստրիայի արտաքին գործերի մինիստրը լիտիորեն հայտարարել էր, թե «սուլթանը կարող է դադարեցնել կոտորածները, երբ որ ցանկանա» (40, էջ 509—510)։

Հայկական կուսակցությունների գործունեության ակտիվացումն ավելի ու ավելի զգուշավոր էր դարձնում ցարական իշխանություններին։ Բոլոր դեպքերում այդ կազմակերպությունների գործն ու խոսքը նրանց ներկայանում էին որպես վարակիչ, վնասակար մի բան (48, էջ 295—296)։ Հայ ժողովրդի հակաթուրքական պայքարի մեջ ցարիզմը վտանգ էր տեսնում նաև իր շահերի համար Անդրկովկասում։ Հայկական կազմակերպությունների ակտիվությունը չափավորելու, կանխելու նպատակով ցարական իշխանությունները դիմեցին խստությունների, խուզարկությունների ու բանտարկություններ։ 90-ական թվականների կեսերին, երբ թուրքահայերի խնդիրը սուր բնույթ էր ստացել, Անդրկովկասում ամեն մի չինովնիկ իր պարտքն էր համարում քրքրել և գտնել «հայկական դավադրություններ»։

Թերթերը գրում էին, թե «ռուսերեն լեզուն հայոց ընտանեկան լեզու դարձած է շատ տեղ. բայց եթե հարկ լինի, օրենքի ուժով ալ կուզեն ձուլման քաղաքականությունն առաջ տանել» (10, № 3, 1894)։

Լոնդոնի «Իվնինգ ստանդարտ» թերթը գրում էր. «Ռուսիան ունի միլիոնավոր մահմեդական տարր, մի՞թե յուր առաջին սայթաքումից նրանք գլուխ չեն բարձրացնի։ Մի անդամահերձ Թուրքիայի և մրափող Պարսկաստանի փոխա-

բեն մի Հայաստան, նույնիսկ մի հայկական պետություն Ռուսիային անհամեմատ օգտավետ և նպաստավոր կարող է լինել, քան թե վնասակար» (18, № 153, 1895)։

Մոսկվայի «Ռուսսկիե վեդոմոստին» գրում էր, թե չի կարելի բարենորոգումների իրականացումը թողնել միայն Բ. դռան հայեցողությանը։ Թերթը մտահոգվում էր, որ «բարերար և խելացի ռեֆորմը», եթե հանձնվի «գռեհիկ, նենգամիտ, «բախշիշների» վրա դաստիարակված պաշտոնյաների ձեռքը», կխեղաթյուրվի և կհավասարեցվի զրոյի։ Եվ ահա թե ինչու Ռուսիայի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանների սուլթանին տված հայտագրի մեջ միջազգային կոնտրոլ է սահմանվում ռեֆորմներ մտցնելու վերաբերմամբ, հանձին մի առանձին կոմիսարի, որ պիտի նշանակվի պետությունների համաձայնությամբ» (18, № 98, 1895)։

Ցարական կառավարության վարած հետադիմական, հակաժողովրդական քաղաքականությանը զուգահեռ ռուս առաջավոր հասարակական ուժերը մեծագույն համակրանքով էին հետևում հայոց գործերի ելևէջներին, դատապարտում սուլթանի քաղաքականությունը։ Հեշտ չէր ցարական սևհարյուրակային ռեժիմի պայմաններում համակրանքի ու պաշտպանության ձայն բարձրացնել հոգուտ կոտորվող հայ ժողովրդի։ Ռուս մտավորականության, դեմոկրատ ու առաջադեմ մարդկանց հայանպաստ դիրքորոշման լավագույն արտահայտությունը «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» (Մոսկվա, 1897) ժողովածուն է, որի էջերում ռուս բարի ու հումանիստ մարդիկ իրենց խոսքն ասացին թուրքական բարբարոսությունների դեմ։ Նրանք հանդես եկան հայ ժողովրդի նկատմամբ համակրական հոդվածներով, ակնարկներով ու բանաստեղծություններով։ Ռուս մեծանուն գրականագետներ Յու. Վեսելովսկին, Լ. Կամարովսկին, Օ. Կայդանովան, Դ. Անուչինը, Ա. Սազոնովը, Կ. Բալմոնտը, Մ. Նիկոլսկին և ուրիշներ իրենց հայագիտական հոդվածներով ռուս հասարակությանը պարզում էին հայ ժողովրդի կուլտուրայի, պատմության հարստությունները, նկարագրում թուրքական լծի տակ նրա տանջանքները, բողոքի ձայն բարձրացնում ընդդեմ արևմտահայության նկատմամբ կատարված չարագործությունների։

1896-ին Պետերբուրգում լույս տեսավ մի ժողովածու, որի մեջ ամփոփված էին Գլադստոնի ճառը, Ռոլեն-Ժեկմենի, Մակ-Քոլի, Գրինի, Դիլոնի, Դիևի և այլոց հոդվածները։ Ժողովածուի առաջաբանը պատկանում է ռուս հայտնի պրոֆ. Լ. Ա. Կամարովսկու գրչին։ Վերլուծելով հայկական հարցի քաղաքական-դիվանագիտական ասպեկտները, պրոֆ. Կամարովսկին այն միտքն է հայտնում, որ հայկական հարցը գոյություն կունենա այնքան ժամանակ, քանի դեռ հայերը գտնվում են թուրքական լծի՝ «բռնության և ստի խորհրդանիշի» տակ։ «Դառն է ու ամոթալի,— գրում է նա,— բայց ստիպված ենք խոստովանել, որ Եվրոպայի պաշտպանությունը... հավանաբար Թուրքիայի քրիստոնյաների համար դարձավ ոչ թե բարիք, այլ չարիք այն տեսակետից, որ ուժեղացրեց մահմեդականների կատաղությունը նրանց դեմ և մահմեդականների աչքերը բացեց Եվրոպայի բազուկի թափանցիկության նկատմամբ...» (32, էջ 8—9)։

Թուրքիայում հայերի դրությանը նվիրված ժողովածուի լույսընծայման առիթով Պետերբուրգի ամսագրերից մեկը գրեց, որ վերջապես ռուս ընթերցողը պատկերացում կկազմի իրերի դրության մասին։ Նշվում էր խնդրի այն կողմը, որ հայկական հարցի աշխուժացումը ոչ թե անգլիական դիվանագիտության բանսարկությունների արդյունքն էր, այլ թուրքական իրականության հակահայկական էության արգասիքը (23, հ. 1, գիրք 1, 1896, էջ 465)։

Չնայած ցարիզմի ռեակցիոն քաղաքականությանը, հայ ժողովրդի երկու հատվածներն էլ իրենց ճակատագրի հարցում մշտապես հույսը չէին կտրում Ռուսաստանի, ռուս ժողովրդի որոշիչ դերից։

«Մեր հայերի համար էլ տարին սկսվում է մխիթարական նշաններով։ Ռուսիայի ընտիր զավակների լեզվով և գրչով հրավեր է կարդացվում ամբողջ պետության բնակիչներին օգնության ձեռք մեկնելու հալածված և թշվառության մատնված թուրքահայերին»,— այսպես էր գրում 1897-ի հունվարի 1-ին «Նոր դարը»։ «Մի ոռպե մտածեցեք՝ հայն ինչո՞ւ պիտի ուզենա բաժանվել Ռուսիայից, ի՞նչ նպատակով։ Մի ժողովուրդ շրջապատված թվով ավելի օտար ցեղերով, հարևան էլ ունենալով Տանկաստանի պես մի վայրենի ու բար-

բարոս կառավարություն, կարո՞ղ է նույնիսկ երազել բաժանվելու Ռուսիայից, որի հետ կապված է ճակատագրորեն ու պատմականորեն: Կովկասահայ ժողովուրդը Ռուսիայից բաժանվելու ոչ մի միտում ու ձգտում չունի: Նա ուզում է և կմնա Ռուսաստանի անբաժանելի մասը» (12, № 3, 1906)։

Այսպես էին գրում հայոց թերթերը XX դարասկզբին։

1900-ին Արշ. Զոպանյանը, պատասխանելով դաշնակցության «Դրոշակ» թերթի «նախատինքների, հայհոյանքների ու զրպարտությունների տարափին», գրում էր. «Ես միշտ կմտածեմ, թե քաղաքականապես հայ իշխանություններն ու կուսակցությունները ոչինչ ընելու են՝ Ռուսիան գրգռող կամ մեզի դեմ զայրացնող, որովհետև մեր ապագային վճռումին մեջ Ռուսիան ճակատագրականապես սահմանված է ամենամեծ դեր մը կատարելու...»։ Նա խորհուրդ էր տալիս արյուն չթափել «Պոբեդոնոսցևի Ռուսիայեն գրավվելու համար», «պատրաստել ժողովուրդը ինքնապաշտպանության և առանց նոր ջարդերու պատրվակ տալու, սպասել դեպքերուն, ջանալով, որ կարելի եղածին չափ ուժ վերագտնենք ու խտացնենք, որպեսզի կարենանք ճիգ մը փորձել, երբ պատեհ առիթ մը ներկայանա...» (3, № 3, 1900, էջ 95)։ Այնուհետև նա շարունակում էր, որ «Ռուսական գրավումով մեծ Հայաստանի ազգաբնակչությունը կազատվի նյութական տառապանքներե և սարկական կացութենե, բայց ազգին «գերագույն բաղձանքը» իրագործված չըլլար» (3, № 4—5, 1900, էջ 130)։

Այս ամենը ենթադրություններ էին, երազանքներ ու հարցադրումներ, որոնք չափազանց հեռու մնացին ռեալ իրականության դառնություններից ու չարիքներից։

□

XIX դարի 90-ական թթ. թուրքական բռնակալության դեմ հայոց ազատագրական մաքառումների ժամանակ եվրոպական դիվանագիտության սարքած խաղերի մեջ ամենաակտիվ դերը պատկանում էր Լոնդոնին։ Ընդսմին պահպանողական ու լիբերալ կուսակցությունների կառավարությունները փոխարինում էին մեկը մյուսին, բայց Լոնդոնի կաբինետի թուրքական քաղաքականությունը մնում էր, ըստ էության,

անփոփոխ։ Տարբերությունն այն էր, որ լիբերալները և, մանավանդ, կյանքի վերջին տարիներն անցկացնող Գլադստոնը ավելի շատ էին խոսում հայկական հարցի մասին, քան պահպանողական Սոլսբերին և նրա համախոհները։ Անգլիական մամուլը լի էր հայկական գործերի մասին ամեն տեսակի մեկնաբանություններով, որոնց մեջ, ինչ խոսք, քիչ չէին համակրական խոսքերը, «խղճահարման» բացականչությունները։ Այս առումով բավական ակտիվ էին եկեղեցական-լիբերալ շրջանները։

Թվում էր, թե փոխվել էր Վիլհելմ Պիտի, Պալմերստոնի ու Դիզրայելիի ավանդական քաղաքականությունը, որի իմաստն էր օսմանյան կայսրությունը միշտ պաշտպանել ոչ թե թուրքական պետականության համար, այլ իր իսկ Մեծ Բրիտանիայի գաղութատիրական համապարփակ շահերից ելնելով։ Հակառուսականությունն այդ քաղաքականության հիմքն էր։ 90-ական թթ. կեսերին թվում էր, թե այդ քաղաքականությունը փոփոխություններ էր կրել, կարծես թե բրիտանական առյուծը Եգիպտոսը վերջնականապես կլանելու նպատակով դեմ չէր Հայաստանը Ռուսաստանին զիջելու և ընդհանրապես օսմանյան ժառանգության բաժանման հնարավորությանը։ Սակայն իրադարձությունների զարգացումը ցույց տվեց, որ անգլիական քաղաքագետների պահպանողականությունը նորից դրսևորվեց հենց հայկական հարցի արծարծման ժամանակ։ Նորից շարունակվեց Սոլսբերիի ու Լայարդի շեշտված հակահայկական գիծը։ Շուտով Սոլսբերին արտասանելու էր՝ «անգլիական նավերը չեն կարող բարձրանալ Տավրոսի լեռների գագաթները» բացորոշ դավաճանական արտահայտությունը։ Անգլիական գաղութարարները շատ բարդ խաղեր էին խաղում։ Խոսքը մի բան էր, գործը մի այլ բան։

Թուրքական գործերում Անգլիայի գլխավոր նպատակը գերմանա-ռուսական անտագոնիզմը սրելն էր, նրանց բախումից առավելագույն օգուտ քաղելը։ Գերմանիան իր հերթին ամեն կերպ սրում էր անգլո-ռուսական հակասությունները։ Թուրքիան դառնալու էր գերմանական իմպերիալիզմի գլխավոր հենակետը, որտեղից հարվածներ էին հասցվելու Ռուսաստանին՝ Կովկասում և Անգլիային՝ Եգիպտոսի շրջա-

նում, Հնդկաստանի մատույցներում։ Այս ծրագրում առաջնահերթ տեղ էր հատկացվում Բաղդադի երկաթուղուն, որը Վիլհելմ II-ը հռչակել էր որպես «իր ճանապարհ»։

Անգլիական կառավարողները, ինչ խոսք, դեմ էին Թուրքերմանական մերձեցմանը, ուզում էին, որ շարքից դուրս գար Համիդը իր պրոգերմանական քաղաքականությամբ։ Թուրքիան բաժանելու մասին իրենց առաջարկներով անգլիական քաղաքագետները փորձում էին սրել ավստրո-ռուսական, ռուս-գերմանական հակասությունները, օրինականացնել Եգիպտոսի զավթումը, ամրապնդվել Պարսից ծոցի շրջանում և Միջագետքում։ Հենց այս նպատակն էին հետապնդում հակաթուրքական ելույթները պառլամենտում, բարձրաձայն աղմուկը, երեսպաշտական հայասիրական հայտարարությունները։

Անգլո-գերմանական հարաբերությունների վատացման կապակցությամբ Լոնդոնի կառավարությունը ձգտում էր մեղմացնել, բարելավել իր հարաբերությունները և փոխըմբռնման հասնել Ռուսաստանի հետ (23, հ. 6, գիրք 12, էջ 261—262)։ 1894-ի ավարտին անգլիական կառավարությունը չինճապոնական պատերազմի հարցերում կոնտակտներ փնտրելով Ռուսաստանի հետ, միաժամանակ փորձում էր համաձայնության գալ օսմանյան տերության մասնակի բաժանման խնդրում. նա ցանկանում էր, որպեսզի ցարիզմը ճանաչեր Անգլիայի տիրապետությունը Եգիպտոսում և ստիպեր սուլթանին անելու միևնույնը։ Դրա դիմաց Անգլիան Ռուսաստանին ընդառաջելու էր Թուրքահայաստանը գրավելու խնդրում (27, էջ 335)։

Հայտնի է, որ Մեծ Բրիտանիան քանիցս փորձել էր կազմակերպել օսմանյան ժառանգության բաժանումը մեկ Գերմանիայի հետ, մեկ՝ Ռուսաստանի հետ։ Բայց Ռուսաստանի քաղաքականության մեջ ընդհանուր առմամբ գերակշռում էր ստատուս քվոն պահպանելու գիծը։ Քանի որ 90-ական թվականներին այդ տեսակետին էին նաև Ավստրո-Հունգարիան, Գերմանիան և Ֆրանսիան, ապա այդ գիծն էլ հաղթանակ տարավ մերձավորարևելյան ճգնաժամի ընթացքում (37, էջ 101)։

Ռուսաստանը հետաձգում էր արևելյան հարցի հանգուցա-

լուծումը մինչև որ կավարտվեր Սիբիրի երկաթգծի կառուցումը։ Ավստրիական մի թերթ նկատում էր, որ հայկական հարցում իր լկտիությամբ աչքի ընկնող Սոլսբերին «Հայաստանի գնով ուզում է Ռուսիայից և Ֆրանսիայից մի ուրիշ բան գնել, ուրիշ խոսքով՝ Թուրքիան պիտի վճարի, որ Անգլիան Եգիպտոսում խաղաղ մնա»։ Գերմանական մի այլ թերթ գրում էր, որ «Անգլիան հայոց խնդիրը լուծել ուզելով Ռուսիայի բարեկամությունն է ձեռք բերել ուզում, ուրիշ խոսքով՝ Անգլիան ուզում է, որ Ռուսիան Թուրքահայաստանը գրավի, որպեսզի ինքը Եգիպտոսում խաղաղ մնա» (18, № 152, 1895)։ Եվ տարիներ շարունակ միևնույն խոսակցությունները, առանց գործնական որևէ քայլի։

XIX դարի 80-ական, ինչպես նաև 90-ական թվականների առաջին կեսին անգլիական արտաքին քաղաքականության իրականացման գործում նորից առաջին ջութակի դերում էր մեզ արդեն ծանոթ Սոլսբերին։ 1881 թվականից, Բիքոնսֆիլդի (Դիզրայելի) մահից հետո, գլխավորելով պահպանողական կուսակցությունը, որն այն ժամանակ օպոզիցիայում էր, նա 1885 թվականի հունիսից, փոքր ընդմիջումով, մինչև 1892 թվականի օգոստոսը, ապա 1895 թվականի հունիսից մինչև 1902 թվականի հուլիսը պրեմիեր մինիստր էր, արտաքին գործերի մինիստր, փաստորեն բրիտանական իմպերիալիզմի անխոնջ պարագլուխը։

Սոլսբերին 80-ական թվականներին Անգլիայի գլխավոր հակառակորդներ համարում էր Ռուսաստանին և Ֆրանսիային, որոնց դեմ պայքարելու համար նա ձգտում էր օգտագործել Գերմանիային և նրա գլխավորած եռյակ դաշինքը։ Թրծված այս քաղաքագետը պատկանում էր բրիտանական դիվանագիտության ավանդական դպրոցին, որը հավատում էր «հավասարակշռության քաղաքականությանը» և գտնում էր, որ Անգլիայի արդյունաբերական հեգեմոնիան ու ծովային հզորությունը նրան հնարավորություն են ընձեռում պահպանել ձեռքերի ազատությունը և իրեն չկաշկանդել մշտական դաշինքներով մինչ այն պահը, քանի դեռ դրա ծայրահեղ անհրաժեշտությունը չի ծագել։ Դա էր պատճառը, որ Սոլսբերին քանիցս հրաժարվել է Բիսմարկի առաջարկություններից՝ հարելու եռյակ դաշինքին։ Միայն ավելի ուշ, իր վարչապե-

տության վերջին տարիներին (1895—1902 թթ.) Սոլսբերին որոշ չափով նահանջեց անգլիական քաղաքականության այդ գծից, որն ինքը ժամանակին անվանել էր «փայլուն մեկուսացման» (splendid isolation) քաղաքականություն։ «Սպեկտեյտորը» ամսագիրը «Լորդ Սոլսբերին Թուրքիայում» խմբագրականում գրում էր. Թուրքիայի անկումը նոր դարաշրջան կհանդիսանա Եվրոպայի պատմության մեջ (49, էջ 808)։ Եվ այս գործում շեշտվում էր Սոլսբերիի դերը։

XIX դարի 90-ական թվականներին Սոլսբերին քանիցս նշում էր, թե իբր Անգլիայի համար միևնույնն է՝ Ռուսաստանը կամրանա, թե ոչ Բոսֆորի ափերին (31, էջ 160)։ Սա նույնպես տակտիկական քայլ էր, որի հիմքում միևնույն մեթոդներն էին, ինչ նախորդ տասնամյակում, երբ գաղութային էքսպանսիայի գլուխ անցած Սոլսբերին զավթում էր Զանզիբարը, Ռոդեզիան, համաձայնագրեր կնքում Պորտուգալիայի և Բելգիայի, Գերմանիայի ու Ֆրանսիայի հետ։

Վերջին տարիներս անգլիական քաղաքագետներն ու պատմաբանները առանձնակի հետևողականությամբ «ճշտում են» պատմական փաստերը, վերանայում նախկինում գրածները, զգուշորեն վերաբերվում Թուրքիայի հետ Անգլիայի ունեցած հարաբերություններին։ Օրինակ, նրանք ժխտում են այն փաստը, որ 1895-ի օգոստոսի 7-ին գերմանական կանցլերի ու անգլիական վարչապետի հանդիպման ժամանակ վերջինս Թուրքիան բաժանելու մասին առաջարկ է արել։ Այս բանը խիստ հուզված է հիշատակում անգլիացի Գրենվելը վերջերս հրապարակած իր մենագրության մեջ (43)։ Անգլիական պատմաբանների օրինակին են հետևում ամերիկացիները։ Սրանք առանձին զգուշությամբ են վերաբերվում սուլթանական Թուրքիայի XIX դարի պատմության հարցերին, աշխատում են շրջանցել պատմական ճշմարտությունները, երբեմն խեղաթյուրել դրանք։ Ինչո՞ւ։ Միայն այն նպատակով, որպեսզի չվիրավորեն ՆԱՏՕ-ի անդամ այսօրվա Թուրքիայի տնօրեններին։ Օրինակ, այդպիսի բնույթի է անգլուհի Մարգարետ Մ. Ջեֆերսոնի «Լորդ Սոլսբերին և Արևելյան հարցը 1890—1898 թթ» հոդվածը (46)։ Մ. Ջեֆերսոնը գտնում է, որ Սոլսբերիի քաղաքականությունը երկար տարիներ լուսաբանվել ու մեկնաբանվել է միակողմանիորեն այն պատճառով, որ փակ են եղել անգլիական արխիվները, իսկ հրապարակի վրա առկա գերմանական փաստաթղթերը լրիվ չեն բացահայտել պատմական իրողությունները։ Դա վերաբերում է Լոնդոնում գերմանական դեսպան Գացֆելդին Սոլսբերիի ասած այն խոսքերին, թե «մենք մեր փողը վատ ձիու վրա ենք դնում» (իմա՝ Թուրքիայի վրա։— Ջ. Կ.)։ Անգլուհի հեղինակը փորձում է ապացուցել, որ Սոլսբերին հակաթուրք չի եղել, որ նա չի հեռացել Բիքոնսֆիլդի «չափավոր թուրքասիրական և ուժեղ հակառուսական քաղաքականությունից» (31, էջ 118)։ Նա հենվում է անգլիացի մի այլ պրոֆ. Վ. Ն. Մեդլիկոտի վրա, որը դեռևս 1927-ին գրել էր, թե Սոլսբերին գուցե և ցանկացել էր արմատապես փոխել բրիտանական քաղաքականությունը, բայց իրականում այն չէր իրագործել (46, էջ 44)։ Ջեֆերսոնը նշում է, որ Սոլսբերիի թղթերը արխիվային նկուղներից հանելուց, ավստրիական արխիվները բացելուց հետո XIX դարի 90-ական թվականների իրողությունները կարող են անհամեմատ հանգամանորեն լուսաբանվել։ Քննարկելով Կ. Պոլսի, նեղուցների հարցում Բրիտանիայի վարած հակառուսական քաղաքականությունը, նա գրում է, որ 1892-ին Սոլսբերին դատում էր մենույն կատեգորիաներով ու չափանիշներով, ինչ որ անում էր Բիքոնսֆիլդը 1870-ական թվականներին։ Ըստ Ջեֆերսոնի նա լավ պատկերացնում էր, որ Եգիպտոսն այլևս չէր խաղալու այն դերը Մերձավոր Արևելքում բրիտանական գաղութատիրության ռազմաստրատեգիական հաշիվներում, եթե Ռուսաստանը տիրեր Կ. Պոլսին և Փոքր Ասիայի վրայով զրոհեր Սուեզի ջրանցքը Սիբիրյի տարածքից (46, էջ 47)։ Ինչպես տեսնում ենք, Ջեֆերսոնը, տուրք տալով այսօրվա հակասովետիզմին, փորձում է թուրքական հասարակական կարծիքը հրահրել ցարական երեկվա իրական, թե իր երևակայությամբ հարձակողական պլանների դեմ։ Սա պատմության պրեզենտիստական մեկնաբանման տիպիկ օրինակ է։ Ջեֆերսոնին հետաքրքրում է ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային շոյելու, Ռուսաստանի դեմ մտքեր պղտորելու խնդիրը։ Այս նպատակով նա Սոլսբերիից հեռացնում է օսմանյան կայսրության բաժանման միտքը, գրում է, թե Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ տերությունների 1895-ի մայիսի ծրագրի անհա-

ջողությունից հետո, երբ սուլթանը մերժեց այն իրականացնել, Սոլսբերին մնում էր օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման կողմնակից։ Մ. Ջեֆերսոնն իր ասածները հաստատելու համար հայհոյում է դեսպան Գացֆելդին, որն իբր զրույցների ժամանակ ճիշտ չէր հասկացել Սոլսբերիի մտքերը, մեղադրում է նրան մասնավոր զրույցները գաղտնի պահելու մասին խոստումը անաղնվորեն դրժելու մեջ (46, էջ 49—50)։

Միաժամանակ Մեծ Բրիտանիայի թուրքոֆիլ քաղաքականությունը գովերգելիս անգլուհի հեղինակն այնքան է ոգևորվում, որ խոստովանում է շատ ճշմարտություններ։ Օրինակ, Լոնդոնի կառավարության նիստերից մեկը նկարագրելիս նա նշում է, թե Սոլսբերին նույնպիսի հակառուսական դիրքերում էր, ինչպես Բալֆուրը, Չեմբեռլենը և Գոշենը այն պահին, երբ ռուսական նավատորմը պատրաստվում էր գործողություններ սկսելու հայերին թուրքական յաթաղանից փրկելու նպատակով։ Այդ նիստում Սոլսբերին իր գործընկերներին հավաստիացումներ էր անում ընդդեմ Ռուսաստանի (46, էջ 50)։

Միջամտելով հօգուտ հայերի, անգլիական կառավարությունը ձգտում էր վախեցնել սուլթանին, նրան ստիպել համակերպվել Եգիպտոսի անգլիական օկուպացման հետ և ցարի ու կայզեր հետ բարեկամությունը փոխել բրիտանականով։ «Այսպիսով, նա հույս ուներ նորից Թուրքիան ենթարկել անգլիական ազդեցությանը, ինչպես որ նա կար Պալմերստոնի և Դիզրայելիի օրոք» (27, էջ 334)։ Լոնդոնի կառավարությունը հայկական հարցում խաղում էր ճկունորեն, բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում օգտագործում էր գլոբալ նպատակներին համապատասխան։

Հիրավի, եթե նախկինում անգլիական դիվանագիտությունը բրիտանական էքսպանսիան Մերձավոր Արևելքում քողարկում էր «օսմանյան կայսրության ամբողջականության պաշտպանության» մասին վերամբարձ հայտարարություններով, ապա 1895-ին Սոլսբերին հանդես եկավ այդ կայսրությունը բաժան-բաժան անելու առաջարկությամբ, բանակցությունների մեջ մտնելով գերմանական կառավարության հետ։ Նա Անգլիային բաժին էր նախատեսել Միջագետքն ու Արա-

բիան։ Վիլհելմ II-ը չպաշտպանեց այդ պլանը, քանի որ բարեկամացել էր սուլթանի հետ և նույնանման շահագիտական պլաններ էր հետամտում։ Իսկ Ռուսաստանը ստիպեց Անգլիային հրաժարվել Դարդանելն նավատորմ մտցնելու մտադրությունից, քանի որ դրա տակ ցարական դիվանագիտությունը տեսնում էր ոչ թե հայերին պաշտպանելու, այլ նեղուցները զավթելու որոշակի մտադրություն։

Հայերին իրական օգնություն ցույց տալու մտադրությունը օտար է եղել բրիտանական պաշտոնական շրջաններին։ 1895-ի նոյեմբերի 9-ին Սոլսբերին իր հրապարակային ճառում արդեն նահանջ կատարելով, բարենորոգում էր պահանջում Թուրքիայի բոլոր հպատակների համար։ Նա գտնում էր, որ ամբողջ բնակչությունը միանման տառապում է չարաշահումներից և անկարգություններից, որ մի որևէ կրոնի հետևորդների համար բարելավում պահանջել, մյուսների համար՝ ոչ, «անարդարացի է», «թուլացնում է եվրոպական միջամտության նշանակությունն ու ազդեցությունը» (23, էջ 862)։ Սա արդեն սուլթանին բացահայտ զիջում կատարելու քայլ էր։

Ժամանակին Լոնդոնում գերմանական դեսպան Գացֆելդի ու Սոլսբերիի զրույցների քաղաքական բովանդակությունը համոզիչ կերպով բացահայտել է ակադեմիկոս Ռոշտեյնը (34, էջ 307—310, 387)։ Նա ցույց է տվել, որ «Սոլսբերին պատրաստ էր գնալ Թուրքիայի բաժանման, որպեսզի Ռուսաստանին հեռու պահեր Հեռավոր Արևելքից...» (34, էջ 317)։

Անգլիական մամուլում եղան Ռուսաստանին Թուրքիայի դեմ կռվի կոչող, Հայաստանի գրավման համար միջոցների դիմելու հանձնարարականներ։ Կամ Արևմտյան Հայաստանի գրավում Ռուսաստանի կողմից, գրում էր «Նեյշն» ամսագիրը, կամ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կատարման պահանջ անգլիական կառավարության օրինակով (53, էջ 94)։ «Սպեկտեյտրը» շաբաթաթերթը «Հայկական դեպատներ» խմբագրական հոդվածում Սոլսբերիին խորհուրդ էր տալիս պարզ ու հստակ հայտարարել Բ. դռանը, որ քանի դեռ նա չի կիրառել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը, Անգլիան չի խոչընդոտի Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավմանը (52, էջ 86)։ Իսկ երբ միջազգային իրադրությունը փոխվեց,

Սոլսբերին Գացֆելդին հայտարարեց, թե «հայկական գործում կատարված բարելավման պատճառով» (?) նա վճռականորեն հրաժարվել է Թուրքիայի բաժանման մասին իր մտքից, և որ իր նախկին խոսակցությունները պետք է համարել զուտ ակադեմիական, որոնք նկատի էին առնվում հեռավոր հնարավորության համար (34, էջ 313)։

Ընդհանրապես XIX դարի 90-ական թվականներին հայկական հարցում անգլիական քաղաքականությունը խարդախության գլուխգործոց էր։

1890-ի օգոստոսի 15 (27)-ին թղթակիցը Կ. Պոլսից «Արմենիային» Վանի անգլիական հյուպատոսի մասին գրում էր. «Մենք հավատք չունենք, թե այս հյուպատոսը հայոց նպաստավոր տեղեկություններ տա իր կառավարության, դեպի ճշմարտությունը խոստովանելով, զի նա ավելի քուրդին բծեղ մեկն է եղած, քան ճշմարտասեր պաշտոնյա»։ Ընդհանրապես Տիգրանակերտի, Վանի անգլիական հյուպատոսները «խեղաթյուրում էին դեպքերը թուրք պաշտոնյաների աչքը մտնելու համար, կարծես թե նրանցից կախում ունենար իրենց ապրուստը» (5, № 6, 1890)։ Կարինի անգլիական հյուպատոս Քլեֆորդ Լոյդը իռլանդացի էր, վարել էր իռլանդական բանտերի ընդհանուր տեսուչի պաշտոնը, այնուհետև նույն պաշտոնում աչքի էր ընկել իր խստություններով ու անհաջողություններով Եգիպտոսում և ամենուրեք։ Սոլսբերիի կողմից Կարինում հյուպատոսի պաշտոնում կարգված այս հետախույզն ու դիվանագետը աչքի ընկավ նաև թուրքասիրությամբ և հայերի նկատմամբ ունեցած թշնամանքով (5, № 34, 1890)։

Անգլիական դիվանագետները՝ դեսպանները Կ. Պոլսում, հյուպատոսները գավառում, ամեն ինչ գիտեին, ամեն ինչի մասին զեկուցում էին կառավարությանը։ Ընդհանուր առմամբ նրանց տեղեկությունները հանգամանալից էին, ընդգրկում էին խնդրի տարբեր կողմերը, ու հիմնականում դրանք հրապարակվում էին բրիտանական կառավարական «Կապույտ գրքերում», իսկ խիստ կարևորները մնում էին փակ, Ֆորին օֆիսի արխիվներում։ Թուրքական իշխանությունների հակահայկական նպատակադրումները, պլանները, գործողությունները անգլիական գաղութատեր տնօրեններին հայտնի էին ու պարզ։ Բայց նրանք խորամանկ խաղերից ու դեմագոգիկ հայտարարություններից այն կողմ չանցան։ Ամեն ինչ տեղի էր ունենում մոտավորապես այսպես. օրինակ, սուլթանի հետ Անգլիայի դեսպան սըր Ֆիլիպ Քերրիի ունեցած զրույցի ժամանակ դեսպանը փաստեր էր արձանագրում, որ Թուրքահայաստանում տիրող բռնությունից և հալածանքներից են առաջացել հայկական շարժումները։ Սուլթանը ժխտում էր որևէ բռնության կամ հալածանքի առկայությունը, այլապես ինքը տեղեկացած կլիներ պատրիարքի միջոցով (18, № 55, 1895)։ Եվ այսպես, տարիներ շարունակ։ Սուլթանը համոզված էր, որ Արևմուտքը հայոց օգտին ոչ մի գործնական քայլի չէր դիմելու և անում էր այն, ինչը բխում էր իր պետության շահերից։ 1895-ի նոյեմբերի վերջին սուլթանը Ստամբուլում անգլիական դեսպան Քերրիի հետ փարիսեցիաբար քննարկում էր հայկական բարենորոգումների տարբերակները, անհրաժեշտ էր համարում 1) համոզել մեծ տերություններին, որ ինքն այդ հարցում անկեղծ է. 2) համոզել հայերին, որ նրանք իրոք բարենորոգումներ կստանան. 3) համոզել մուսուլմաններին, որ բարենորոգումներն իրենց շահերը չեն ոտնահարելու և այլն (39, № 2, 1896)։ Համիդը բրիտանական դեսպանից խնդրում էր հայերին խորհուրդ տալ հանգիստ մնալ և «իրեն հնարավորություն ընձեռել իրականացնելու բարենորոգումները, որոնք չէին կարող գործադրվել, քանի դեռ կարգն ու հանգստությունը չեն վերահաստատվել» (40, էջ 510)։ Բարենորոգումների իրականացման մասին սուլթանի բոլոր խոստումները խաբեություն էին։

«Դեյլի նյուս» թերթը, որ անգլիական կառավարության պաշտոնական օրգանն էր, խոսքով պահանջում էր, որ Հայաստանը լինի օսմանյան պետությունից անջատ, առանձնաշնորհյալ մի նահանգ, ունենա իր անկախ վարչությունը՝ միայն անվանապես գտնվելով սուլթանի ինքնակալության տակ։ Այլ լրագրողներ գրում էին այն մասին, որ եթե Անգլիային հաջողվեր հայերին ազատել թուրքական կառավարության լծից, դրանով նա ամենահաջող կերպով պիտի կարողանար վերականգնել իր խարխլված ազդեցությունը Արևելյան Եվրոպայում (18, № 82, 1895)։ Անգլիայից վճռական գործողություն ակնկալած հայերը համոզված էին, որ թեև «Սոլսբերին միշտ դեմ է եղել հայկական հարցի հարուց-

մանն», բայց համոզվելով, որ «Թուրքիան անուղղելի մի բարբարոս պետություն է», իբր փոխել էր իր դիրքորոշումը (18, № 116, 1895)։ Մանավանդ որ անգլիական թագուհի Վիկտորյան իր գահակալական ճառում (1895, օգոստոս) ասել էր. «Ասիական հայկական նահանգներում ներքին խռովություններ ծագեցին ու տեղիք տվեցին այնպիսի խժդժություններ, որ առաջ բերեցին Եվրոպայի քրիստոնյա ազգերի ցասումն ընդհանրապես և իմ ժողովրդինը՝ մասնավորապես։ «Հարատև անկարգությունների առաջն առնելու նպատակով,— ասում էր նա,— Ռուսիո կայսեր և ֆրանսիական հանրապետության պրեզիդենտի դեսպանները սուլթանի կառավարությանն առաջարկած բարենորոգումների նախագծով հույս ունեին թեթևացնել հայ ժողովրդի վիճակը (18, № 146, 1895)։

Սոլսբերիի օրգան «Ստանդարտը», համեմատելով հայոց և մակեդոնական խնդիրներն իրար հետ, նկատում էր, որ նրանց քաղաքական դրությունն ու պայմանները բոլորովին տարբեր էին, ուստի ոչ մի կերպ չէր կարելի հուսալ, թե հաջողություն կունենա այն փորձը, որով ուզում էին հայոց խնդիրը ծագելու առթիվ հետաքրքրել Եվրոպան մակեդոնական օրինակով (18, № 120, 1895)։ Նույն թերթը դատապարտում էր հայկական կոմիտեների գործողությունները, բայց շեշտում էր դիվանագիտական միջոցներով հայերին սատար լինելու իր և անգլիական կառավարության պատրաստակամությունը։ «Թուրքերի համար կա միայն երկու ելք. կամ ռեֆորմներ մտցնել Հայաստանում, կամ չքանալ աշխարհի երեսից»,— գրում էր թերթը։

Ճիշտ է ժամանակներն ու պայմանները փոխվել էին, բայց Սոլսբերին մնում էր Բիքոնսֆիլդի քաղաքականության ժառանգորդը։ 1897-ի հունվարի 19-ին արտասանած իր մի ճառում Սոլսբերին փորձում էր օրիգինալ ձևանալ։ Նա ասում էր, թե Բիքոնսֆիլդը ինքնուրույն քաղաքականություն չի ունեցել, թե այն ժառանգել է նախորդներից, մասնավորապես Պալմերստոնից։ Սոլսբերին պատասխանելով Քեմբերլեին, ասում էր, թե Անգլիան սխալ էր գործել, չհամաձայնվելով 1853-ի ռուսական առաջարկությանը «հիվանդ մարդու» ժառանգությունը բաժան-բաժան անելու մասին։ Այս ամենից

հետո բրիտանական քաղաքականության տնօրենը վերապահորեն նահանջում էր, ասելով, թե թագուհու կառավարությունը արևելյան հարցում գործում է մյուս պետությունների հետ համերաշխությամբ և կրում է ընդհանուր պատասխանատվության միայն մի մասը։ Սա հայկական հարցում անգլիական քաղաքականության տեղատվության ակնբախ դրսևորումն էր, որի սկիզբը դրվել էր 1896-ին շոտլանդական Բալմորալ ամրոցում բարձր մակարդակով անգլո-ռուսական հանդիպումների ժամանակ։

Այժմ արդեն մեզ հայտնի են 1896-ին Շոտլանդիայի Բալմորալ ամրոցում ռուսաց ցար Նիկոլայ II-ի ու անգլիական թագուհի Վիկտորյայի հանդիպման, բանակցությունների բովանդակությունն ու հանգամանքները։ Անգլիական պաշտոնական շրջանները ութսուն տարի անց վերջապես հրապարակեցին հանդիպումներին ամենաակտիվ մասնակցություն ունեցած Սոլսբերիի օրագիրը (50)։ Մինչև հրապարակումը դրան ծանոթ է եղել բրիտանական մի քանի բարձրաստիճան պաշտոնյա։ Մենք հիմա գիտենք, որ այդ հանդիպման ժամանակ կործանման դուռը հասցված հայ ժողովրդի օգտին ո՛չ ցարը, ո՛չ բրիտանական մեծերը և ոչ մի լավ խոսք չեն փոխանակել։

Մինչ այդ իշխանության գլուխ կանգնած լիբերալ կուսակցության կառավարությունը միայն խոսքով էր հակաթուրքական գծի հետևում։ Գլադստոնի լիբերալ կուսակցությունը 1895-ի հունվարին թուրքահայերի ազատագրության խնդիրը դարձրել էր պառլամենտական ընդհանուր ընտրությունների լոզունգներից մեկը (28, № 5, 1895)։ Իրականում, «կատարելապես ստույգ է», որ Ռոզբերիի «ազատամիտ կաբինետը դեռ անցյալ սեպտեմբեր ամսին գիտեր այդ սպանդի (Սասնա նախճիր) գլխավոր իրողություններն ու ամենայն միջոց գործ դրեց թաքցնելու դրանք հասարակությունից այն ժամանակվանից մինչև յուր հրաժարման օրը (18, № 150, 1895)։ Ռոզբերիի սենտիմենտալ քաղաքականությանը փոխարինեց Սոլսբերիի հաշվենկատ քաղաքականությունը։ Թուրքերն ուրախ էին այդ փոփոխությամբ։ 1895-ի հուլիսի 5-ին «Ալբերտ Հոլլում» արտասանած իր ճառում Ռոզբերին չափազանց վերամբարձ տոնով ասում էր. «Կառավարությունը

ները չկանկացան հաստատել մի զուտ և ինքնավար Հայաստան... բայց պետությունները պահանջեցին, ինչպես և պիտի շարունակեն պահանջել, որ Բ. դուռը տա այնպիսի երաշխավորություններ, որ վերջին տարվա սոսկալի պատահարներն այլևս չկրկնվեն»։ Նա սպառնում էր, որ հակառակ դեպքում Թուրքերը «գործ կունենան ոչ միայն պաշտոնական մինիստրության հետ, այլև միացյալ թագավորության ամբողջ քրիստոնյա ժողովրդի հետ» (18, № 121, 1895)։

1895-ի սեպտեմբերից մինչև 1896-ի սեպտեմբերը Անգլիայում տեղի էին ունենում հայկական հարցին նվիրված «անկուսակցական» (nonparty) միտինգներ, որոնք հատուկ բանաձևեր էին ընդունում։ Այս մասսայական միջոցառումների վրա էր հենվում անգլիական հայտնի հասարակական գործիչ Ջորջ Ռասսելը, լավատեսորեն պնդելով, թե Սոլսբերին չի կարող չքննարկել հայկական հարցը (51, էջ 22)։

Լոնդոնում Թուրքական դեսպան Ռուստեմ փաշան աղիողորմ արցունք էր թափել, երբ թագուհու առաջին մինիստրը նրան հայտնել էր, թե հայկական բարենորոգումներին դիմադրելը կնշանակի սուլթանի տերության բաժանում։ Իսկ գերմանական մամուլը, մշտապես հակաանգլիական դիրք գրավելով, ամեն ինչ անում էր հօգուտ Թուրքական շահերի։ Գերմանական թերթերից մեկը գրել էր, թե «Ռոզբերին ու Քեմբերլիջը Բ. դռան դեմ սկսած արշավանքով ընկել էին մի անել փողոցի մեջ, որտեղից նրանք ո՛չ առաջ և ո՛չ ետ կարող էին գնալ» (18, № 147, 1895)։

1896-ի ավարտին Սոլսբերին արեց իր տխրահռչակ արտահայտությունը. «Աշխարհում ոչ մի նավատորմ չի կարող հաղթահարել Տավրոսի լեռները, որպեսզի պաշտպանի հայերին» (47, էջ 273)։ Նա խոսում էր հայոց երկրի լեռնոտ լինելու մասին, որ անգլիական ահեղ բանակը նույնպես անուժ կլինի որևէ օգնություն ցույց տալու կոտորվող հայերին։ Այս մասին էր գրում նաև ամերիկահայ Մ. Գուլեսյանը Բոստոնի «Արենա» ամսագրում իր հրապարակած «Անգլիայի ձեռքը Թուրքերի կազմակերպած կոտորածներում» հոդվածում (45, էջ 271)։

«Հնչակը» գրում էր, որ Սոլսբերին իր ճառերից մեկում «...հույս է հայտնում, որ եթե սուլթանը միաժամանակ

հանգիստ մնա, նա թերևս կատարի իր խոստացած բարենորոգումները»։ Սոլսբերիի այդ ճառն արդեն Անգլիայի խայտառակ նահանջն էր հայկական դատից և նրա այդ տարօրինակ հույսը մի փուչ ու խուսափողական խոսք էր, որի բացարձակ խոստովանությունը իր՝ Սոլսբերիի քաղաքականության կրած պարտությունն էր Արևելքում»։ (11, № 2, 1896, էջ 9)։ Տարիներ անց Ջեյմս Բրայսը խոստովանում էր. «...լորդ Սոլսբերին, Հայաստանում ընտրելով հաջող հոգեբանական պահը, կարող էր կանգնեցնել ջարդերը արագ և եռանդուն գործողությամբ։ Ես դեռ այժմ էլ հավատում եմ, որ եթե մենք 1895—1896-ին ուղարկեինք մեր նավատորմը Կ. Պոլիս, Թուրքիան ստիպված կլիներ զիջել, փույթ չէ նույնիսկ եթե մենք մենակ լինեինք» (14, № 6, 1905, էջ 70)։ Այնուհետև, ընդհանրացնելով իր խոսքը, նա ասում էր. «Եթե այդ քրիստոնյա կոչված պետությունները պարտքի ամենափոքր գիտակցությունն ունենային, հայկական հարցը կլուծվեր առանց որևէ դժվարության» (14, № 6, 1905, էջ 71)։

1895-ի նույն պահին Սոլսբերին և գաղութների մինիստր Ջ. Չեմբեռլենը զինված ջոկատ ուղարկեցին Տրանսվաալի բուրժուական հանրապետության դեմ։ Հարավային Աֆրիկան տվյալ դեպքում շատ ավելի «մոտ էր» անգլիական գաղութարարներին, քան Հայաստանը։ Իսկ Կ. Պոլսում հայերի մեջ կային լավատեսներ, որոնք առանց խորամուխ լինելու քաղաքականության էության մեջ, կարծում էին, թե «այսօր էլ մյուս բոլոր պետություններից ավելի Անգլիան է, որ պաշտպանում է դժբախտ հայերի դատը» (18, № 3, 1895)։ 1900-ին «Դեյլի նյուսը» գրում էր, թե «Մեծ Հայաստանի փրկությունն այլևս ռուսական գրավումին մեջ կարելի է փնտրել»։

Երբ 1904-ին Խրիմյան Հայրիկի մասնակցությամբ արևմտահայության դատի մասին դիմումներ հղվեցին եվրոպական արքունիքներին, Անգլիայի թագավորը մերժեց ընդունել հայերի պատվիրակությանը։ Իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտը նշելով իր «համակրանքը» հայերի նկատմամբ, միաժամանակ հրաժարվեց որևէ բան անել, պատճառաբանելով, թե իր կառավարությունը չի ստորագրել Բեռլինի պայմանագիրը (19, էջ 112)։

Միք. Վարանդյանը 1913 թվականին, Անգլիո կուռքից

հիասթափված, խոստովանում էր. «Ո՞վ կարող էր այն ժամանակ գուշակել... գալիքը։ Ո՞ր դիվային հանճարը կարող էր նախատեսել այն հրեշավոր դավաճանությունը, որ հայության դեմ պիտի սադրեր սահմանադրական և ազատասեր Անգլիան» (22, էջ 161)։

□

Սուլթանի գլխավոր հենարանը և օժանդակողը կայզերական Գերմանիան էր, որը XIX դարի 80-ական թվականներից որոշակի ռազմաքաղաքական ազդեցություն էր նվաճել օսմանյան կայսրությունում։ Ընդդիմանալով Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական ու տնտեսական պահանջախնդրություններին, արդեն 90-ական թվականների սկզբից սուլթանը որոշակի հույսեր էր կապում Գերմանիայի հետ։ Նա կարծում էր, որ այդ միջոցով կկարողանար խուսափել գաղութային քաղաքականության ճանկերից։

Հարկ չկա հանգամանորեն քննարկելու Մերձավոր և Միջին Արևելք, մասնավորապես Թուրքիա գերմանական տնտեսական և քաղաքական ներթափանցման մանրամասները։ Սովետական պատմաբանները (Ռոշտեյն, Խվոստով, Երուսալիմսկի, Բոնդարևսկի, Սիլին, Օրուջև և ուրիշներ) իրենց ուսումնասիրություններում տվել են խնդրի սպառիչ պատկերը։ Մեզ հետաքրքրողն այստեղ գերմանական պետականության, դիվանագիտության դերքորոշումն է բուն հայկական հարցի նկատմամբ միջիմպերիալիստական պայքարի և հայկական ազատագրական ոգորումների հանդեպ նրա բռնած դիրքի առումով։

Սոլսբերիի վկայությամբ (1887 թ.) Բիսմարկը ցանկանում էր, որ Ռուսաստանը տեր դառնար Կ. Պոլսին, քանի որ համոզված էր, որ այդ դեպքում Թուրքիան, Անգլիան և Ավստրիան ստիպված էին լինելու պատերազմել, իսկ ինքը պահպանելու էր չեզոքություն և հարմար առիթի դեպքում նոր հարված էր հասցնելու Ֆրանսիային (36, էջ 44)։ Գերմանացի Կարլ Գելֆերիխը, որը «Դեյչե բանկի» ղեկավարներից մեկն էր, Բաղդադի (Անատոլիայի) երկաթգծի շինարարության դիրեկտորը, Մերձավոր Արևելքում Վիլհելմ II-ի

ծրագրի իրագործողը, հետագայում՝ Միրբախից հետո Գերմանիայի դեսպանը Սովետական Ռուսաստանում, Մոսկվայում 1924-ին տպագրած իր գրքում գրում է, որ սուլթան Համիդն իսկապես հավատում էր, որ Գերմանիան տերիտորիալ նպատակներ չէր հետապնդում օսմանյան կայսրությունում. և պաշտպանում էր Թուրքիայի անկախությունն ու անձեռնմխելիությունը (25, էջ 86)։

Օտոմանյան բանկի վրա կատարված հարձակումից հետո սուլթանը անմիջապես Բեռլին ուղարկեց իր գեներալներից Գրումբկով փաշային, որը Վիլհելմ կայզերին հանձնեց Համիդի շնորհակալական ուղերձը։ Նույն պահին գերմանական իշխանությունները Գերմանիայից վտարեցին պրոֆ. Թումայանին, նախապես նրան արգելելով հրապարակային դասախոսություններ կարդալ հայերի օգտին և դրամական հանգանակություն կազմակերպել կարիքավոր հայերի համար (18, № 5, 1897)։

«Ամոթ մեզ բոլորիս»,— ասում էր Կայզերը, ծանոթանալով հայոց կոտորածների մասին Կ. Պոլսից ստացած թղթերին։ Նա զայրացած բացականչում էր, թե պետք է խոսի սուլթանի հետ, որ այդ ամենը կատարվում է «քրիստոնյաների հետ», որ այդպիսի վերաբերմունքը «կտարածվի և մյուս սպիտակ (?) քրիստոնյաների վրա»։ Մյուս կողմից, իր ամբողջ քաղաքականությամբ Գերմանիայի տնօրենը սատար էր կանգնում սուլթանին (34, էջ 312)։ Երեսպաշտորեն հոգոց հանելով հայկական ջարդերի և անմեղ զոհերի համար, Վիլհելմ II-ը, կանցլեր Հոհենլոեն և արտաքին գործերի պետական քարտուղար Մարշալն իրենց գործողություններով փաստորեն խրախուսում էին ջարդարարներին։ Իսկ Կ. Պոլսում գերմանական դեսպան Զաուրման այնքան բացորոշ էր պաշտպանում Աբդուլ Համիդ II-ին, որ վերջինս 1896-ի սեպտեմբերին՝ կոտորածի բուռն պահին, հնարավոր համարեց խորհրդակցել նրա հետ հայկական հարցում հետագա գործողությունների շուրջը։ «Գերմանական մամուլը գովեստ չմնաց, որ չկարդար սուլթանին գլխուն»,— 1900-ի նոյեմբերի 1-ին գրում էր Լոնդոնի «Նոր կյանքը»։

Երբ Գերմանիայի ռայխստագում ընդդիմադիր կուսակցության ղեկավար Պ. Ռիխտերը, խոսելով Գերմանիայի արե-

վելյան քաղաքականության մասին, ասաց՝ «Մենք որևէ հա-մակրանք չունենք հայերին կոտորող թուրքերի նկատմամբ», արտաքին գործոց նախարար Պ. ֆոն Բյուլովը պատասխանեց սառնասրտորեն. «Նախամեծար կըհամարիմ հայկական խնդրով բնավ չըզբաղվիլ»։

Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում, գտնվեցին մարդիկ, որոնք, անտեսելով հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, հանուն ազատության, առաջադիմության ու ազգային ինքնուրույնության նրա անձնազոհ պայքարը, փորձում էին արտաքին ազդակների մեջ տեսնել ստեղծված խռովահույզ վիճակը։ Երիտթուրքերը կառչում էին նման անհիմն գիրքորոշումից։ Այս խնդրում նրանք սուլթանի հետ լրիվ համերաշխ էին։

1895-ին «Ֆորվերտսի» էջերում տպագրած իր հոդվածներում Վիլհելմ Լիբկնեխտը հայկական շարժումները, խլըրտումները հռչակել էր ռուսական գործակալությունների ստեղծագործություն։ Մեծ սոցիալիստը չափազանցնում էր ռուսական գործոնը, անտեսում թուրքական բռնակալության սև դերը։ Վիլհելմ Լիբկնեխտի նման «Լա Պոտիտ Ռեպուբլիկի» էջերում (այդ թերթը խմբագրում էր Միլերանը) սուր հոդված հրապարակեց Ժան Ժորեսը, որտեղ նույնպես «հայ նացիոնալիստական շարժումը» հռչակեց «ցարիզմի սադրանքների արգասիք» (21, էջ 171—172)։ Մի փոքր հետո նա ճշտեց իր դիրքը, հանդես գալով սուլթանիզմի հետևողական քննադատությամբ ու հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությամբ։ Սովետական պատմաբան Երուսալիմսկին գերմանական իմպերիալիզմի քննադատությանը նվիրված իր մենագրության մեջ անդրադառնալով այդ խնդրին, ցույց է տալիս Վիլհելմ Լիբկնեխտի սխալականությունը, ապացուցում հայկական շարժման նկատմամբ նման վերաբերմունքի հիմնազուրկ լինելը (26)։

1895-ի համիդյան ջարդերից հետո Գերմանիայում կազմակերպվեց երկու մեծ հայրենասիրական միություն, որոնցից մեկի հիմնադիրն էր հռչակավոր եգիպտաբան և լեզվաբան Ռիհարդ Լեփսիուսի որդին՝ Իոհաննես Լեփսիուսը։ Սրա հիմնած միությունը կոչվում էր «Լեփսիուս Օրիենթ Միսիոն», որը Եդեսիայում (Ուրֆա) պահում էր մեծ որբանոց՝ զայրոց-

հիվանդանոց-արհեստանոց ճյուղերով։ Մյուս միության հիմնադիրը դոկտոր Լոհմանն էր (7, էջ 35)։ Սրանք երկուսն էլ կրոնականներ էին։ Առաջինը գործում էր Ֆրանկֆուրտում, մյուսը՝ Բեռլինում, Հանովերում, Համբուրգում, Սաքսոնիայում, Բրանդենբուրգում։ Լեփսիուսը հիմնադրեց և տարիներ շարունակ հրատարակեց «Քրիստոնեական Արևելք» («Christliche Orient») ամսագիրը, որի էջերում հայանպաստ նյութեր էր հրապարակում։ Սրանք շրջեցին Գերմանիայում, խոսեցին թուրքահայերի դրության մասին, նվիրատվություններ հավաքեցին։ «Դոկտոր Լեփսիուսը խեղճ, հալածյալ և սովատանջ ժողովրդին օգնելու հարցն այնքան մոտիկ է ընդունում յուր սրտին, որ ցանկանում է միաժամանակ պաստորական պաշտոնը մի կողմ ձգել, որպեսզի կարողանա յուր ուժերն ի մի հավաքելով, ավելի եռանդով գործել» (4, № 13, 1897)։ Լեփսիուսի ջանքերով 1897-ի հունվարի 16—17-ին գումարվեց հայոց բարեկամների չորրորդ ընդհանուր և բազմամարդ ժողովը՝ իշխան Բերնսդորֆի նախագահությամբ։ 1896-ին 565 հազար մարկ դրամ էր հավաքվել և ուղարկվել Արևմտյան Հայաստանի սովյալներին։ Սրանց ջանքերով 60 որբ հայ երեխա հասել էր Ֆրանկֆուրտ։

Սակայն գերմանական հասարակական ուժերն անզոր էին ներազդելու սուլթանի ոճրապարտ քաղաքականության վրա, փոխելու սեփական կառավարության քաղաքականությունը։ Հետագայում Գերմանիայի մերձավորարևելյան քաղաքականությունը, երիտթուրք կառավարողների հետ նրա դաշինքը կործանարար եղավ արևմտահայության համար։

XX դարի առաջին տասնամյակներին գերմանական կառավարող շրջաններն ավելի մեծ թափ հաղորդեցին էքսպանսիային Միջագետքում, մանավանդ որ կորցրել էին Կարմիր ծովի արաբական ծովափին ամրապնդվելու հույսը։ Այս գործում չափազանց ակտիվ էր Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Մարշալը, որը մինչև 1912 թվականը (մինչև Լոնդոն տեղափոխվելը) գերմանական ազդեցությունը Թուրքիայում տարածելու գլխավոր ջատագովներից և իրականացնողներից մեկն էր։

90-ական թվականների կեսերին սուլթանին պաշտպանում էր նաև Ֆրանսիայի կառավարությունը։ Օսմանյան տերության մեջ հսկայական ֆինանսական կապիտալ ներդրած ֆրանսիական կապիտալիստների օլիգարխիան չափից ավելի անհանգստացած էր «հայկական խռովություններից», որոնք կարող էին խախտել «անդորրը»։ Պաշտոնական Ֆրանսիան ընթացավ սուլթանի իշխանությունը պաշտպանելու ու շոյելու ուղիով։ «Թուրքիայի փլուզումն ու մասնատումը սպառնում էին ֆրանսիական կապիտալների ապահովությանը» (27, էջ 340)։ Սակայն պաշտոնական Ֆրանսիայի կողքին կար առաջադեմ, սոցիալիստական, դեմոկրատական ուժերի Ֆրանսիան։ Այս ուժերը բավական դիրք ու ազդեցություն ունեին ֆրանսիական ազգային ժողովում, որի ամբիոնից հետևողական քննադատության ենթարկվեց կառավարության քաղաքականությունը, մասնավորապես արտաքին գործերի մինիստր Հանոտոյի ուղեգիծը։ Նա այդ պաշտոնին էր 1895-ից մինչև 1898 թվականը։ Վերջինիս հարվածում էին ցարիզմին մերձենալու, նրա սեհարյուրակային գործելակերպը «ընկալելու» և նրա հետ համագործակցելու համար։

Հանոտոն Կ. Պոլսի 1895-ի ջարդերից երկու ամիս, Տրապիզոնի, Արաբկիրի, Դիարբեքիրի և ամբողջ Հայաստանի ջարդերից մի քանի օր անց գրում էր, թե «անկեղծորեն հուզվելու բան չկա այս տեսարանի համար», թե այս ամենը սովորական «միջադեպեր են» և թե պետք է թողնել, որ սուլթանը «միայնակ» «ի գործ դնե իր իշխանությունը» («Նոր կյանք», № 15, 1898, էջ 238)։ Նա պնդում էր, որ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում հայերը մեծամասնություն չեն կազմում և դժվար թե կարողանան կազմակերպել իրենց իշխանության կորիզը։

Ֆրանսիական մամուլը հիմնականում ձայնակցում էր կառավարության թուրքանպաստ գործողություններին։ Ֆրանսիական կառավարությունն ընդառաջել էր սուլթանին և երիտասարդ թուրքերին ու հայ հեղափոխականներին լրտեսելու նպատակով թույլ էր տվել թուրքական լրտեսական ցանցի գործունեությունը Փարիզում։ 1901-ին նա ստիպված եղավ

դադարեցնել թուրք լրտեսների գործունեությունը («Նոր կյանք», № 16, 1901)։

Պետերբուրգի «Վեստնիկ Եվրոպի» ամսագիրը, մատնացույց անելով Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Հանոտոյի անհիմն պնդումն այն մասին, թե իբր հայերի ջարդի մեջ մեծ պատասխանատվություն ունեին «անգլո-հայկական կոմիտեները», գրում էր, թե առավել սարսափելի զանգվածային սպանությունները բաժին էին ընկել Փոքր Ասիայի խուլ ծայրամասերին, ուր չէր թափանցել և ոչ մի արտաքին արհեստական ազդեցություն։ Ջարդը կատարվել էր այնպիսի տեղերում, որտեղ բնակիչները բացառապես մանր առևտրականներ, արհեստավորներ և երկրագործներ էին և չէին կարող նույնիսկ հեռավոր գաղափար ունենալ անգլո-հայկական կոմիտեների մասին (23, հ. 6, գիրք 12, 1896, էջ 813—814)։

Հայերը հուսախաբվեցին ոչ միայն Անգլիայից, այլև Ֆրանսիայից։ Նրանց քաղաքականությունը նպաստավոր եղավ թուրքերի համար։ «Աստված նույնպես թուրքացել է»,— ասում էին հայերն այն օրերին։ «Նոր դարի» թղթակիցը բողոքում էր, որ Փարիզի և Վիեննայի թերթերը Պոլսում պատահած խառնակությունները խեղաթյուրել են..., որ «շատ թերթեր արդեն կաշառված են» (18, № 185, 1895)։

Ահա թե ինչպես էր նկարագրում դեպքերի զարգացումը Փարիզի «Թան» թերթի Կահիրեի թղթակիցը (7, 19. XII, 1896). «Հայերը դեռ շարունակում են գալ Պոլսից եկող բոլոր շոգենավերով և դժվար է նախատեսել, թե երբ պիտի վերջանա այս ցավալի փախուստը։ Ամենքն էլ՝ հարուստ, թե աղքատ, փախչում են թուրքական մայրաքաղաքից...»։ Փարիզում նույնպես «բավականին մեծ թվով գաղթականներ կան, որոնք ետին թշվառության մեջ են գտնվում» (18, № 8, 1897)։

1896-ի նոյեմբերի 3-ին դեպուտատների պալատում Ժան Ժորեսն արտասանեց իր հռչակավոր ճառը հայ ժողովրդի տառապանքների, տերությունների քաղաքականության մասին։ Նա հիշեցնում էր Բեռլինի կոնգրեսը, նրա ընդունած որոշումները, ծաղրում եվրոպական դիվանագիտության տված հանդիսավոր խոստումները։ Նրան ծափահարեցին, երբ նա քննադատեց Հանոտոյին, որը աչք փակելով հայոց հարյուր

հազարավոր զոհերի առջև, դաժանորեն ճառախոսում էր հենց նույն հայերի դեմ։ «Մենք նույնպես խաղաղություն ենք տենչում,— ասում էր Ժորեսն ի պատասխան Հանոտոյի, որը հայերին մեղադրում էր միջազգային անդորրը խախտելու մեջ,— բայց այնպիսի խաղաղություն, որը... խարսխվի հայ հպատակների երաշխավորված իրավունքների հարգանքի, անվտանգության ապահովման և կյանքի պահպանման վրա»։ Նա պահանջում էր քննարկել սուլթանի, իրեն իսկ՝ Եվրոպայի պատասխանատվության հարցը։ Ժան Ժորեսը դեպուտատներին նորից նկարագրում էր արևմտահայության սարսափները, մեղադրում սուլթանին ու նրա գլուխ կտրող պաշտոնյաներին, դատապարտում Եվրոպայի անտարբերությունը։ «Ինքը սուլթանն է ցանկացել կոտորածը, նա է այն կազմակերպել և ղեկավարել»։ Ժան Ժորեսը Եվրոպան հռչակեց սուլթանի հայասպան քաղաքականության մեղսակից։ «Սուլթանի համախոհներն են մանավանդ Անգլիան, Ռուսիան և Ֆրանսիան»,— ասաց նա։ Նա հայտարարում էր, որ Եվրոպան չի կատարել իր ստանձնած պարտավորությունները։ Սակայն նրա առաջարկած բանաձևը մերժվում է 451 ձայնով, ընդդեմ 54-ի (18, № 189, 1896)։ Ֆրանսիական բուրժուազիան ընթանում էր իմպերիալիստական ուղիով։

Հնչակյանների բացատրական աշխատանքի, միջամտության շնորհիվ Ժան Ժորեսը մի քանի փոքրիկ հոդված նվիրեց թուրք բռնապետության քննադատությանը։ Այդ ժամանակ էր, որ նա կարդաց մի շարք գրքեր հայ ժողովրդի պատմությունից։ Մասնավորապես նրան հիացրել էին Խորենացու «առնական ոճն» ու Եղիշեի «քնարերգությունը»։ Նա կարդացել էր Նուբար փաշայի ծախսով հրատարակված Վիկտոր Լանգլուայի երկհատորը (21, էջ 173)։ Եվ պատահական չէր, որ նա 1896-ի նոյեմբերի 3-ին ֆրանսիական ազգային ժողովում Դրնի Քոշենից, կոմս դը Մեռնից հետո ամբիոն բարձրացավ պաշտպանելու հայոց դատը թուրքական բռնակալներից և եվրոպական Արգայլի Դուքսի գիրքը։ Ժորեսի այդ օրվա ճառը, 1894-ի Սասունի ժողովրդական ապստամբության նրա նկարագրությունը, ժամանակին համարվել են տրամաբանված հռետորության գլուխգործոց։ Նա դատապարտեց ռուս-ֆրանսիական դաշինքի քաղաքականությունը, մի ամ-

բողջ ազգի ոչնչացման նկատմամբ ոճրագործ անտարբերությունը։ Երբ ժողովի նախագահ Բրիսոնը նրանից պահանջեց ետ վերցնել Ֆրանսիայի համար վիրավորական խոսքերը, Ժորեսը բարձրաձայն հայտարարեց, թե ինքը պատրաստ է ետ վերցնելու իր ասածը, եթե Ֆրանսիան ջնջի վերջին չորս տարիների իր պատմությունը (21, էջ 174)։

Ժորեսին պատասխանողը եղավ դեպուտատ Հումբերտը, որը հայոց դատի հեղինակ հռչակեց Անգլիային ու Ֆրանսիային և նրա դաշնակից Ռուսաստանի առաջնահերթ խնդիրը համարեց հարվածել Ալբիոնի խարդավանքներին։ Հետո պարզվեց, որ նա կաշառվել էր երիտթուրք վտարանդիների կողմից։ Նա այն թեզն էր զարգացնում, թե հայ ժողովրդի մեծամասնությունն իբր ոչ մի գանգատ չուներ օսմանյան կառավարության դեմ։ Հումբերտ կոչված վարձկանը հայերին էր մեղադրում նախահարձակ լինելու մեջ։

Ս. Սապահ Գուլյանը Ժորեսին անվանում էր «աննման ընկերավարական հռետոր»։ «Երբ պ. Ժորեսը խոսում է, թշնամի ու բարեկամ գիտեն, որ համոզմունքի անկեղծությունը նրա ամենամեծ հատկանիշն է, ուստի երբ բարեկամները լիուլի ծափահարում են, թշնամիները միայն սքանչանալով են բավականանում» (18, № 8, 1897)։

Արևմտյան Հայաստան՝ տեղում փաստերին ծանոթանալու համար ուղարկված պատվիրակության ղեկավար ֆրանսիացի Վիկտոր Բերարը վերադարձից հետո «Ռևյու դե Պարի» հանդեսում հայանպաստ հոդվածներ էր տպագրում («Սուլթանի քաղաքականությունը» վերնագրով)։ Հետաքրքրականն այն է, որ այդ նույն հանդեսի խմբագիրներից մեկը նույն Հանոտոն էր։ Վիկտոր Բերարը Ալբերտ Վանդալի և այլոց հետ մշտապես հայանպաստ դասախոսություններ էր կարդում ֆրանսիական հասարակության տարբեր խավերի համար։ Մասնավորապես մեծ հաջողություն ունեցավ Լիոնի համալսարանում կարդացած նրա դասախոսությունը «Հայկական սարսափների» մասին (18, № 3, 1897)։

Հանոտոն մանկրում էր, խուսանավում։ Նա ստիպված հատուկ ստեղծված հանձնաժողովին Ալբերտ Վանդալի միջոցով առաջարկեց. 1. օսմանյան կայսրության ամբողջական բարեփոխության խնդիրը հայերի ապահովության նկատմամբ. 2.

ինչպիսի չափավոր բարենորոգումներից հայերը գոհ կլինեին։ Հանձնաժողովի անդամներ, հայտնի պատմաբաններ Լավիսն ու Ալբերտ Վանդալը և ուրիշներ հանդեցին մի եզրակացության, ըստ որի օսմանյան կայսրության ամբողջական բաբեփոխման սկզբունքին չառարկելով, միաժամանակ պնդեցին հայոց ինքնուրույն, ամբողջությունից անկախ բարենորոգումների անհրաժեշտության վրա (20)։

Հանոտոն փորձում էր ֆրանսիական ազգային ժողովին համոզել, թե ինքը լռելյայն ավելի շատ բան է արել հայոց հարցի համար, քան հայտնի էր հրապարակով։ Նա հարցապնդող Կոշենին խոստանում էր ավելին անել, որ 1897-ի փետրվարին լույս տեսնող ֆրանսիական դիվանագիտական գրագրությունների «Դեղին գիրքը» իբր ապացույցն էր հայանպաստ իր քաղաքականության*։ Պ. Հանոտոն «առանձնապես ուրախ էր, որ յուր բարեկամ Վանդալը հայկական խնդրի մասին խոսելով՝ իրեն մեծապես աջակցած պիտի լիներ» (18, № 22, 1897)։ «Դեղին գիրքը» բաղկացած էր 471 էջից (1893—1897 թթ. փաստաթղթերը)։ Այն հաստատում էր, որ Ֆրանսիայի և Ռուսիայի միջև անկեղծ համաձայնություն է եղել։ Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնի՝ Հանոտոյին հղած յուրաքանչյուր հեռագիրը մի-մի բողոք էր սուլթանի կառավարության դեմ (18, № 23, 1897)։

«Դեղին գիրքն» ուներ մի հավելված (120 էջ) և բովանդակում էր 1895—1896-ի գլխավոր անցքերի նկարագրությունը։ «Հավելվածի» վերնագիրն էր՝ «Դիվանագիտական վավերաթղթեր։ Հայկական գործեր։ Հավելված»։

		էջ
Տրապիզոնի անցքերը	(1895 X)	1
Էրզրումի —»—	(1895 X—XI)	15
Դիարբեքիրի —»—	(1895 X—XI)	20
Սվասի —»—	(1895 XI)	37
Ուրֆայի —»—	(1895 XII)	46
Մալաթիայի —»—	(1895)	41

* Վախենալով, որ հասարակական կարծիքը բուն կերպով կրողոքի իր քաղաքականության դեմ, Հանոտոն հետաձգել էր նրա լույսընծայումը մինչև 1896 թվականը։

Զեյթունի գործերը	(1895 X—1896 IV)	52
Բոնի հավատափոխություն	(1895 XII—1896 VIII)	85
Մերսին Ադանայի անցքերը	(1895 X—1896 III)	95
Ակրես-Շեքլեի անցքերը	(1895 XII—1896 V)	100
Կեսարիայի և Էնդրալի անցքերը	(1895 XII—1896 XI)	113
Ալեքսանդրեթի գավառ	(1895 XI—1896 X)	126
Հալեպի նահանգ	(1895 XI—1896 XI)	120

Սորբոնի նորագույն պատմության ամենահեղինակավոր պրոֆ. Էռնեստ Լավիսը, որը ֆրանսիական ակադեմիայի անդամ էր, «Ռևյու դե Պարի» հանդեսի խմբագիրներից մեկը, Վիկտոր Բերարի ճշմարտացի հոդվածների ազդեցության տակ հանդես եկավ հրապարակախոսական մի շնչով գրված հայանպաստ գրությամբ, որտեղ ցույց տվեց Ֆրանսիայի ավանդական քաղաքականությանը ֆրանսիական կառավարության դիրքորոշման հակառակ լինելը (18, № 6, 1897)։ Իսկ Դենիս Կոշենը Սապահ Գուլյանի հետ ունեցած հանդիպումից հետո պատրաստել էր մի գրություն, որով Թուրքասեր մինիստր Հանոտոյին ապացուցում էր, թե Հայաստանի վիճակի բարելավման մասին նրա տեղեկություններն ու տվյալները սխալ էին (18, № 7, 1897)։

Ազգային ժողովում Հանոտոյի քաղաքականությունը խրստագույնս դատապարտում էին Կոշենը, Ժորեսը։ Թղթակիցը ժամանակին նկատել է. «Կիսատ-պռատ տեղեկագրերի համար պ. Հանոտոյի գլխին հայհոյանք էր որ թափվում էր, մանավանդ ընկերավարականների կողմից։ Պ. Ժորեսը կանգնած, երեսը պ. մինիստրին դարձրած, տեղն եկած ամեն խոսքի համար մի-մի «հանդիմանություն» էր ուղղում։ Պ. Հանոտոն գլխիկոր դրության մեջ էր» (18, № 32, 1897)։ Ապացուցվեց, որ Հանոտոն՝ «մինիստրը սուտ է խոսել»։ «Պ. Հանոտոն կարդում է։ Ճառի առաջին մասը ընդհանուր ծիծաղով է անցնում։ Երբ հասավ այն կատարին, թե «զուր ասում եք «ինչո՞ւ համար թուրքաց դեմ ուժ չբաներցրիք», այն ժամանակ ծիծաղի, հռհռոցի մի սոսկալի որոտում տեղի ունեցավ, որովհետև այդպիսի խոսք ոչ ոք չէր ասել։ Պ. Հանոտոն նախապես իր ճառը գրել էր, կարծելով, թե այդպիսի բան կարող էին ասել, սակայն սխալվել էր»։

Երբ Լոնդոնից Փարիզ ժամանած Ավետիս Նաղարբեկին առաջարկեցին հրապարակային դասախոսություն կարդալ հայոց հարցի մասին, ապա հարկ եղավ այդ խնդիրը համաձայնեցնել Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Հանոտոյի հետ։ Վերջինս մերժեց և հրաժարվեց հանդիպել հայ հեղափոխական գործչի հետ, իր քայլը պատճառաբանելով ֆրանսիական շահերին չվնասելու մտահոգությամբ։ Այդ այն պահին էր, երբ եվրոպական մեծ տերությունների դիվանագետները մշակում էին հայոց ռեֆորմների նախագիծը։

Այդ օրերին «Ռևյու դե Պարիի» էջերում տպագրվեց նույն Հանոտոյի թուրքասիրական մի հոդվածը (հեղինակը թաքնված էր եռաստղ ստորագրության տակ), որտեղ նա գովաբանում էր սուլթան Համիդի քաղաքական կորովամտությունը և «նուրբ մատները» (21, էջ 152—153)։ Այնուհետև նա հանդիպում էր ունեցել հայոց հարցի շուրջը դասախոսելու պատրաստակամություն հայտնած, Ֆրանսիայի ակադեմիայի անդամ, պատմաբան և քաղաքագետ Ալբերտ Վանդալի հետ, համոզելու նրան հարձակողական և քննադատական դիրք չբռնել Թուրքիայի նկատմամբ (21, էջ 154)։

Ալ. Վանդալը հանդես եկավ Փարիզի աշխարհագրական ընկերության սրահում «Թուրքիան և հայկական բարեկարգությունները» դասախոսությամբ, քաղաքական գործիչների, պետական բարձր պաշտոնյաների, դեսպանների, գիտնականների, մամուլի աշխատողների ներկայությամբ։ Նա ցույց տվեց, որ օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ցավերն իսկապես հնարավոր էր դարմանել մասնակի բարեկարգությունների և ինքնավարության միջոցով։ Այստեղ էր, որ նա առաջին անգամ արտասանեց «կարմիր սուլթան» արտահայտությունը, որը սխալմամբ երբեմն վերագրվել է Գլադստոնին։ Բնորոշ է, որ Ահմեդ Ռիզան և նրա համախոհ երիտթուրքերը ոչ միայն խանգարում էին դասախոսին, այլև տուրուդմփոց սարքեցին սրահում (21, էջ 155)։ «Պրո Արմենիա» թերթում Կլեմանսոն դատապարտում էր Ֆրանսիայի երեսփոխանական ժողովի նախագահ Դեշանելին, որը 1900-ի ամռանը Կ. Պոլիս էր գնացել սուլթանի արյունոտ ձեռքից պատվո նշան ու պարգև ստանալու։ Կլեմանսոն իր հոդվածը վերնագրել էր «Արյունոտ ձեռքը» («Նոր կյանք», № 22,

1900)։ Առաջին հայացքից 1895—1897 թթ. կոտորածների ժամանակ ամբողջ Եվրոպան, բացառությամբ Գերմանիայի, զայրացած էր կարմիր սուլթանի դեմ. միտինգներ էին տեղի ունենում Անգլիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում և այլուր։ Այդ երկրների մամուլը քննարկում էր, դատապարտում Համիդի հակահայկական գործունեությունը։ Սակայն թե՛ անգլիական, թե՛ ֆրանսիական դիվանագիտությունը ոչ մի լուրջ միտք չուներ ներազդելու սուլթանի վրա։ Ընդհանուր դժգոհությունը նրանց կողմից օգտագործվում էր սուլթանից ավելի շատ քաղաքական և տնտեսական զիջումներ կորզելու համար։

Ֆրանսիական պետական մարմինների դիրքորոշման, հասարակական կարծիքի վրա փորձում էին ներազդել Փարիզում հաստատված երիտթուրքական շարժման պիոներները։ Այս մասին հետո։

□

ԱՄՆ-ի կառավարությունը, պրեզիդենտ Քլիվլենդը հայոց ողբերգության պահին նույնպես պլատոնական դիրք բռնեցին։ Նրանց խոսքն ու գործը նույնպես իրարից հեռու էին։ Պրեզիդենտը նույնիսկ բողոքի հուշագիր ներկայացրեց Բ. դռանը։ Բայց ավելին չարվեց, թեև ամերիկյան հասարակական կարծիքն իր բողոքի ձայնը բարձրացրեց հօգուտ հայ ժողովրդի պաշտպանության։ Այս գործում ակնհայտ էր ԱՄՆ-ի հայկական համայնքի ակտիվ դերը։ Չնայած նա փոքրաթիվ էր, այնուամենայնիվ ԱՄՆ-ի մեծ քաղաքներում կազմակերպվեցին բողոքի ժողովներ և միտինգներ։ Ամերիկյան մամուլը լի էր ականատեսների պատմածներով, հոդվածներով, բողոքի խոսքերով։ ԱՄՆ-ի մտավորականության շարքերում գտնվեցին հումանիստներ, հայասերներ, որոնք համերաշխության իրենց խոսքն ուղղեցին հայ ժողովրդին, բարոյական ու նյութական օգնություն կազմակերպեցին նրան։

1880-ական թվականներին հայ պանդուխտների առանձին խմբեր ԱՄՆ էին մեկնում աշխատելու և փող վաստակելու նպատակով։ 1890—1894 թթ. հատկապես մեծ չափեր ընդունեց խարբերդցիների արտագաղթը։ Սա Կ. Պոլսի Գում Ֆա-

փուի և Էրզրումի դեպքերից հետո Թուրքական կառավարության որդեգրած հայահալած դիրքի անմիջական հետևանքն էր։ 1884—1895 թթ. ժամանակաշրջանում Խարբերդի գավառից համարյա ամեն տուն մի զարիբ ուներ ամերիկյան հողում։ Նրանց թիվը շարունակ ավելանում էր։ Հայերը հիմնվում էին Նյու Յորքում, Ուստրում, Բոստոնում, Պրովիդենսում և Նյու Ինգլանդի զանազան քաղաքներում (13, էջ 1)։ Ամերիկա մեկնող հայ գաղթականների քարավանները գլխավորապես անցնում էին Մարսելով։ Ոմանք այցելում էին «Արմենիայի» խմբագրատուն, Մ. Փորթուգալյանին, զրուցում նրա հետ հայոց հարցի, նրա լուծման ուղիների շուրջը (13, էջ 2)։

Ամերիկահայերն ակտիվորեն քննարկում էին միջազգային քաղաքականության խնդիրները։ Մ. Հ. Գուլեսյան անունով հեղինակը հանգամանալից քննադատության էր ենթարկում Մեծ Բրիտանիայի Թուրքական քաղաքականությունը, մեկառմեկ ցույց տալով 60 տարվա ընթացքում Լոնդոնի կատարած հակամարդկային արարքները։ Նա իր հոդվածներից մեկը վերնագրել էր այսպես՝ «Անգլիայի ձեռքը Թուրքական կոտորածների մեջ» (45, էջ 273—277)։

Տակավին 1893-ին ամերիկահայերի հակաթուրքական ելույթներն ու գործողությունները գրավել էին ամերիկյան իշխանությունների, նաև պրեզիդենտ Քլիվլենդի ուշադրությունը։ Առանձնապես ակտիվություն էին դրսևորում ամերիկահայ հայտնի գործիչ Մ. Ս. Դաբրիելյանը և նրա խմբագրած «Հայք» երկշաբաթաթերթի շուրջը խմբված մարդիկ։ 1894-ի դեկտեմբերի 3-ին ԱՄՆ-ի սենատը բանաձև ընդունեց հայկական կոտորածների կապակցությամբ։ Այս փաստաթղթում դատապարտվում էր Թուրքական իշխանությունների քաղաքականությունը և տերություններին առաջարկվում էր համատեղ ուղերձ հղել Թուրքական կառավարությանը։ Պրեզիդենտը չընդառաջեց սենատին, պատճառաբանելով, թե բացի թերթերի գրածներից ու Կ. Պոլսում իր դեսպան Թերելի երկու հեռագրերից, ինքն ուրիշ լուր չունի։ Նա հրաժարվեց միջամտել Թուրքիայի գործերին նաև այն պատճառաբանությամբ, թե Բեռլինի պայմանագրի տակ չկա ԱՄՆ-ի ստորագրությունը (42, էջ 24)։

Կոնգրեսին հղած իր տարեկան ուղերձի մեջ նա խոսել էր նաև Թուրքիայի հետ ԱՄՆ-ի փոխհարաբերություններին մասին, ի միջի այլոց ակնարկելով նաև «Հայք» թերթի գործունեությունը։ Առիթը հանդիսացել էր Մարզվան քաղաքի ամերիկյան Անատոլիա կոլեջի հրկիզումը և կողոպուտը Թուրք խուժանի ձեռքով, ինչը արժանացել էր «Թուրք կառավարության առերևույթ անտարբերությանը»։ Պրեզիդենտը մատնացույց էր անում Թուրք պաշտոնյաների մեղսակցությունը, պահանջում պատժել հանցավորներին, հատուցել վնասների դիմաց (10, № 23, 1898, էջ 357)։ Քլիվլենդը սակայն, ըստ էության, համերաշխում էր սուլթանի այն հակահայկական քաղաքականությանը, ըստ որի հայերն ԱՄՆ-ի քաղաքացիությունն էին ընդունում ոչ թե «անկեղծորեն նույնանալու մեր ժողովրդյան հետ (այսինքն՝ ամերիկյան), այլ այն նպատակով, որ դառնան իրենց ծննդավայրն ու ապաստամբություն նյութեն»։ Պրեզիդենտը մատնացույց էր անում, որ ԱՄՆ-ում լույս տեսնող հայոց մի թերթ (նկատի ուներ «Հայքը») իր ընթերցողներին խրատում էր զինվել, կազմակերպվել և մասնակցել ասիական գավառաց մեջ օսմանյան իշխանությունը կործանելուն։ Նա կոնգրեսին իրազեկ էր պահում, որ օսմանյան կառավարությունն իրեն ծանուցել էր իր հողից արտաքսելու այն հայերին, որոնք 1868-ից ի վեր քաղաքացիություն էին ստացել ԱՄՆ-ում (10, № 23, 1893, էջ 360)։

Իրադարձությունների զարգացումը ստիպեց Քլիվլենդին իր հյուպատոս ներկայացուցիչը նշանակել տերությունների հանձնաժողովում որպես դիտորդ։ Սուլթանն անմիջապես հայտարարեց, թե չի ճանաչում այդ հյուպատոսի լիազորությունները (42, էջ 25)։

Ամերիկյան սենատը երկրորդ բանաձևն ընդունեց 1895-ի դեկտեմբերի 4-ին։ Պրեզիդենտից պահանջվում էր հասարակայնությանը պարզաբանել ամերիկյան քաղաքացիների սեփականության նկատմամբ Թուրքական իշխանությունների ոտնձգությունների, հայերի նկատմամբ կատարված վայրագությունների հանգամանքները։ Այս բանաձևին ի պատասխան պետական քարտուղար Օլնին հայտարարեց, թե «կոտորածների մասին մամուլի տեղեկությունները մեծապես չափազանցված են» (42, էջ 26)։

«Հայք» թերթի խմբագիր դոկտոր Մ. Ս. Գաբրիելյանը պրեզիդենտ Քլիվլենդին հղած իր նամակում գրում էր, թե ինքը նախկին թուրքահպատակ է, այժմ ամերիկյան քաղաքացի և ցանկանում է նրան պարզել իր դիրքորոշումը։ Նա ապացուցում էր, որ հայերը Արևմտյան Հայաստանում թուրք սուլթանի իշխանությունը ոչ թե կործանելու, այլ բարեկարգելու ցանկություն են փայփայում։ Նա Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի կատարումն էր պահանջում տերություններից, ցույց էր տալիս, որ թուրքերը «կմերժեն որևէ բարեկարգություն անել և կջանան ամենայն հնարավոր անհաջողության մատնել հայոց ճիգերը իրենք զիրենք բարվոքելու և խոստացյալ բարենորոգմանց համար» (10, № 23, 1893, էջ 361—362)։ Իր նամակում Գաբրիելյանը վկայակոչում էր 1893-ի հոկտեմբերի 28-ին «Աութլուկ» ամերիկյան պարբերականում Ֆ. Է. Քլարկի հրապարակած ճանապարհորդական նոթերը, որտեղ ցույց էին տրվում սուլթանի իշխանությունների հակահայկական խժդժությունները, ապահով ապրելու հայոց իրավունքը (10, № 23, 1893, էջ 363)։ Նամակագիրը ժխտում էր, թե իր թերթը հայոց ապստամբության կոչ է արել և շեշտում էր տերությունների օգնությամբ հայոց բարվոքումը նվաճելու ուղին։ Նա պրեզիդենտից խնդրում էր խրատ տալ Բ. դռան Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Թերելին՝ «հետևել ավելի բարվոք» և ազատական քաղաքականության դրիստոնյա հպատակների նկատմամբ։

1894-ի Սասունի և 1895—96-ի հայկական ընդհանուր կոտորածները ցնցեցին ինչպես ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, նույնպես և ամերիկահայությանը։ «Ֆրենդս օֆ Արմենիա» («Հայաստանի բարեկամներ») ընկերությունը մասսայական միտինգներ կազմակերպեց Բոստոնում, Ուստրում, Պրովիդենսում և այլ քաղաքներում։ Ամերիկյան հասարակական կարծիքը ծանոթանում է հայոց դատի մանրամասնեերին։ Սենատոր Ջորջ Հոարը, բանաստեղծուհի Ալիս Սթոուն Բլեքուելը և շատ ուրիշներ հանդես եկան ճառախոսությամբ հօգուտ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության (13, էջ 43)։ 1894-ի դեկտեմբերի 18-ին Նյու Յորքի «Չիքերինգ Հոլի» լայնատարածք սրահում հավաքված ամերիկացիներն ու ամերիկահայերը բոլորի միտինգ արեցին թուրք կառա-

վարության հակահայկական խժդժությունների դեմ։ Գլխավոր ատենախոսը նշանավոր արևելագետ Ուիլյամ Հ. Տորդն էր, «Ինդեփենդենտ» թերթի խմբագիրը։ Նա ճանապարհորդել էր Արևելքում, քաջատեղյակ էր Թուրքիային։ Նա դատապարտեց Սասունի կոտորածի պատասխանատուներին. «Զարդին ահավոր տեսարաններն աննկարագրելի են և անհանդուրժելի», «աշխարհ չի կրնար աչք գոցել այս սարսափելի ընթացքին», «կհավատամ, թե պարկեշտ թուրք կառավարությունն անհուսալի բան է» (10, № 16, 1894, էջ 236—237)։

Այդ միտինգում միսիոներ Բլիսը պատմում էր Վանի, Բաղեշի, Մուշի դեպքերի մասին, պահանջում, որպեսզի ԱՄՆ-ի կառավարությունը միջամտեր թուրքական գործերին, պաշտպաներ հայերին յաթաղանի հարվածներից (10, № 16, 1894, էջ 238)։ Ամերիկյան հեղինակները խնդրին մոտենում էին գլխավորապես քրիստոնեական բարոյականության, հայերի հետ կրոնական համերաշխության դիրքերից (50 ա)։ Իսկ միսիոներները՝ «իրենց գործի տեսակետից» և «հիրավի չէինք կրնար սպասել, որ նոքա զգային ինչ-որ մենք հայերս կզգանք»։ Կային թուրքախոս միսիոներներ, որոնք մեծ մասամբ «թուրքասեր ալ են»։ Սրանցից մեկը (Բարնըմին) 1894-ի փետրվարի 15-ին «Բոստոն Հերալդ» թերթի մեջ իր ընթերցողներին համոզում էր, որ «հայոց ստվար մեծամասնությունը կարդալ-գրել չգիտե և հազիվ պատրաստ է ինքնավարության, մինչև իսկ եթե Հայաստան զատ երկիր մի լիներ և զուտ հայաբնակ»։ «Մարդ դժվար կրնա կարդալ այդպիսի հոդվածներ առանց սրտմտելու»,— գրում էր «Հայքի» խմբագիրը (10, № 4, 1894, էջ 54)։ 1895-ին Սայրուս Համլինը, որը հայտնի էր իր հայանպաստ հոդվածներով ու գրքերով, մի քանի ժողովներ կազմակերպեց Բոստոնում ընդդեմ թուրքական վայրագությունների։ Որոշ միջոցառումների հրավիրվում էին ամերիկյան նահանգապետեր, քաղաքագլուխներ (18, № 31, 33, 34, 1895)։ «Նյու Յորք Հերալդի», «Թայմսի», «Տրիբունի» և այլ թերթերի նյութերը ցույց են տալիս, որ հայերի նկատմամբ կատարված բարբարոսությունները առաջացրել էին ամերիկյան հասարակական լայն շրջանների զայրույթը։ 1895-ին Նյու Յորքում մեծ տպաքանակով (20 հազար օրինակ) լույս ընծայվեց ամերիկյան միսիոներ Ֆրե-

դերիկ Գրինի գիրքը (44)։ Նա գործել էր Վանում, ականատես եղել 1893—94 թթ. Թուրքական իշխանությունների հակահայկական գործողություններին և դրանք ճշմարտացիորեն արտացոլել իր գրքի էջերում։

1895-ի հունիսին Նյու Յորքում ստեղծվել էր մի այլ կազմակերպություն՝ «Հայոց հայրենասիրական դաշնակցությունը» (նախագահ Մ. Ս. Գաբրիելյան), որը նպատակ ուներ «օսմանյան Հայաստանը Թուրքաց լծեն ազատելու համար ի գործ դնել ամեն ջանք...»։ Կազմակերպության հիմնադիրները ջանում էին, որ «Եվրոպիո համակիր աջակցության անհրաժեշտ պետք ունի հայ ազգը» (10, № 14, 1895, էջ 197—198)։ Այս կազմակերպությունը նույնպես միտինգներ էր գումարում Նյու Յորքում, կազմակերպում էր ատենախոսություններ։ Ստեղծվել և անգլերենով կատարվում էր «Սասուն» երգը (10, № 14, 1895, էջ 199)։

Ամերիկյան թերթերը քննադատել էին Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Թերելին, որը բացի անգլերենից, ուրիշ ոչ մի լեզու չգիտեր, «ամեն գործում միշտ գնում էր սուլթանի քեֆով»։ Նրա քաղաքականությունն էր՝ հավատարիմ մնալ քաղաքական միսիոներների ավանդույթներին Թուրքիայում, այսինքն՝ ջանալ Թուրքերի հետ համերաշխ լինել, չվնասելու համար միսիոներական գործին։ Ռուսական «Նովոյե վրեմյա» թերթը զարմանք էր հայտնել, որ ԱՄՆ-ը հյուպատոս էր նշանակում Էրզրումում, թեև Հայաստանում ամերիկյան քաղաքացիներ չկային (18, № 5, 1895)։

Միաժամանակ հայոց որոշ թերթեր լավատեսորեն ուրախացել էին, որ Վաշինգտոնի կառավարությունը իր հյուպատոսին Սվասում հրահանգ էր հղել մասնակցելու Սասունի գործերի քննիչ հանձնաժողովին։ Հույս էր հայտնվում, թե ԱՄՆ-ի «կառավարությունը որոշել էր ազդու մասնակցություն ունենալ Հայաստանի գործերի մեջ»։ Նշվում էր նաև, թե Անգլիան ու Ֆրանսիան դժգոհ էին, որ ԱՄՆ-ի կառավարությունը կարող էր օգտվել հանգամանքներից և Արևելքում ձեռք բերել համապատասխան ազդեցություն։ Այս խնդրին հոդվածներ էր նվիրել Լոնդոնի «Թայմսը», որը «խորհրդավոր» էր համարել ԱՄՆ-ի դիրքորոշումը (18, № 7, 1895)։

Բոստոնում հայ ուսանողների հիմնած ակումբում ստեղծվել էր մի խումբ, որը ջանում էր հայ ժողովրդի ներկա կյանքն ու անցյալի պատմությունը ներկայացնել Ամերիկայի հասարակությանը (18, № 59, 1895)։ «Հայաստանի միության բարեկամների» տարեկան ժողովում կազմակերպության նախագահ ընտրվեց Ջուլիա Ուորդ Հաուն, փոխնախագահներ՝ Հեյլը, օրիորդ Բլաքուելը, պրոֆ. Պիբոդին, պրոֆ. Հենրի Ալենը, պարոն Բլաքուելը, արձանագիր-քարտուղար Գուլեսյանը և ուրիշներ (18, № 44, 1895)։ 1896-ին Նյու Յորքում լույս տեսավ «Արյունած Հայաստան» գիրքը, որի հեղինակներն էին Ուիլյամսը Չիկագոյից և Գաբրիելյանը Նյու Յորքից։

1896-ին իր տարեկան ուղերձում պրեզիդենտ Քլիվլենդը ցավ էր հայտնում, որ անկարող է զեկուցել Ասիական Թուրքիայում գրության բարելավման մասին։ Ամերիկացի հեղինակ Լ. Ջ. Գրդոնը շտապում է համոզել իր ընթերցողներին, թե ԱՄՆ-ը «անուժ էր ռեալ և էֆեկտիվ գործողությունների դիմելու» (42, էջ 26)։ Սա բացահայտ կեղծիք էր։ ԱՄՆ-ի կառավարությունը չօգնեց արևմտահայությանը։ Մի քանի տարի անց ամերիկյան իմպերիալիստները կռիվ էին տալու Ֆիլիպինների համար, աշխարհի վերաբաժանման համար, որովհետև այդ էր պահանջում ամերիկյան կապիտալիստների շահը։

□

Ամբողջովին տապալվեցին արևմտաեվրոպական դիվանագիտությունից օգնություն ակնկալելու հայոց ազգային կուսակցությունների լավատեսական սպասումները։ Ռուս հեղինակ Պ. Ցվետկովը ժամանակին նկատել էր, որ Թուրքական գործերի մեջ առկա չարիքների ոչ փոքր մասը հենց Եվրոպայի ստեղծածն էր (38, էջ 32)։

Սասնա դեպքերի քննություններն ըստ էության անցան ապարդյուն, քանի որ Թուրք կառավարությունն ինքն էր և՛ ոճրագործ, և՛ դատավոր, և՛ գործադիր։ Իսկ եվրոպական դիվանագիտությունը անամոթ և անխիղճ հանդիսատեսի դեր միայն պիտի կատարեր Սասնո ողբերգության մեջ,— գրել է դեպքերին ականատես Համբարձում Երամյանը։ 1895-ի մա-

յիսին՝ տերությունների մայիսյան դիվանագիտական ծրագրի հրապարակման օրերին, Սոլսբերին, պատասխանելով Գլադստոնի հարցապնդումին, չէր թաքցնում, որ ռազմական ուժ գործադրելու միտք չունենալով, վիճաբանություններով և ճառերով զուտ գրգռում ենք ցեղային ատելությունները և արյունալի դեպքերի առիթ ստեղծում Թուրքիայում։

Իզուր էր Սապահ Գուլյանը 1895-ի օգոստոսին լավատեսորեն հաղորդում Փարիզից, թե «դիվանագիտության շահերի տեսակետից այսօր հայկական խնդիրը բոլորովին ապահովված կարելի է համարել ստուգիվ» (18, № 156, 1895)։ Իսկ մի փոքր անց «Հնչակը» գրում էր. «Եվրոպական տերություններն իրենց ամբողջ ընթացքով այս վերջին տարվա միջոցին ապացուցեցին, որ իրենք բնավ հետամուտ չեն հայկական դատի բավարար լուծման և կատարելապես անտարբեր են դեպի հայկական կոտորածները, և նրանցից ոմանք մինչև իսկ ոչ թե անտարբեր են, այլև գաղտնի գործակից ու նեցուկ են սուլթանին՝ սրա ամբողջ հայակործան քաղաքականության ու գործողությունների մեջ։ Եվ ահա այսօր այդ հին գազանը, այդ հրեշավոր մարդը, որ իր ամբողջ կայսրությունը հեղեղեց հայոց արյունով, այդ ամենավախկոտը վախկոտ բռնապետներից, ամենազզվելին գարշատիպ արարածներից և ամենաանհագն արյունախումներից, այդ սուլթան Համիդը, իր շալվարը հավաքած մինչև ծնկները և առաջ գնալով արյան մեջ՝ ոճրագործի դաշույնն է փայլեցնում և մեկ ազգ ճգնում ոչնչացնել ամբողջ լուսավոր Եվրոպայի լուսավոր քաղաքակրթության արևի տակ և դարձյալ մնում է անպատիժ...» (11, № 17, 1896, էջ 130)։

Երբ 1895-ի սեպտեմբերին հայոց արյունը հոսեց Կ. Պոլսի փողոցներում, պատրիարքարանում հավաքված եկեղեցականներից մեկը բղավեց պատրիարքի երեսին. «Սրբազան, ո՞ւր են դեսպանները. տաճիկները երբ Վան կատու մը սատկցնեին, դեսպանները ամենքը մեկտեղ կրվազեին կուգային իմանալու, թե ինչ եղած է, հիմա արյունը կվազե, ո՞ւր են» («Նոր կյանք», № 15, 1898, էջ 210)։ Լրտեսների ցուցումով ոստիկանները Կ. Պոլսում ձերբակալում են մի հայ երիտասարդի։ Վերջինս ցույց է տալիս դեսպանատան թարգմանի ստորագրությունը կրող թուղթ։ Ոստիկանը սուրը քաշելով

կտրում է երիտասարդի մատներն, ասելով. «Ես կտրեցի մատներդ, որով բռնել էիր այդ թուղթը, այժմ արյունվա մատներով դնա և բողոքիր, թող թուղթը քեզ տվողը քեզ պաշտպանե» (18, № 183, 1895)։

Իսկ Ռեյտեր գործակալությունը 1895-ի հոկտեմբերի 3-ին հաղորդում էր Կ. Պոլսից, որ տերությունների դեսպանատները շոնդալից ազդարարություններ էին արել օսմանյան արտաքին գործերի մինիստրին՝ հայ բանտարկյալների և վիրավորների նկատմամբ ոստիկանության և մահմեդական խուժանի գործած չարագործությունների դեմ։ Սրանցից շատերը սպանվել էին բրերով, խոշտանգվել էին անգթորեն (18, № 179, 1895)։ Վիեննայի բոլոր թերթերն առաջնորդողներ էին նվիրել Կ. Պոլսի ջարդի նկարագրություններին։ Գերմանական թերթերը շտապում էին ազդարարելու, թե հայերի ըմբոստ ցույցը խանգարելու էր հայոց բարենորոգումների իրագործմանը։

Ամերիկյան սոցիալիստ Լուիզ Արդրը գրում էր, թե եվրոպական կառավարություններն ամենևին էլ չեն մտահոգվի, եթե բոլոր հայերին էլ ջարդեին, քանի դեռ իրենց շահերը վտանգված չէին Թուրքիայում։ Նա ցույց էր տալիս, որ «վերջին քառորդ դարում հայերի կրած տառապանքին ու կոտորածներին գրեթե բոլորովին անտարբեր մնացած է Եվրոպան» (2, էջ 14)։ Նա դեմ էր սոցիալիստական քարոզչությանը Թուրքիայում, քանի որ այն լրիվ անպատրաստ էր համարում թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական զարգացման համար։ «Այդ երկրում տիրող պայմաններում սոցիալիզմ քարոզելը նմանվում է քարե սալահատակների վրա սերմ ցանելուն և վայ նրան, որ քարի վրա սերմ ցանելով հունձի է սպասում» (2, էջ 16)։

«Նոր դարի» թղթակիցը Կ. Պոլսից հաղորդում էր. «Եթե Եվրոպան շարունակի դանդաղել, ես այժմ համոզվում եմ, որ թուրք նենգամիտ քաղաքականությունը Հայաստանում էլ հայ չի թողնիլ, հայերը կամ սպանված կամ գաղթած կըլինեն» (18, № 156, 1895)։ Մի քանի օր անց նույն թերթին Կ. Պոլսից հաղորդում էին հետևյալը. «Համարյա թե ամենայն օր սարսափելի կոտորածների լուրեր ենք առնում Թուրքահայաստանի զանազան անկյուններից։ Այլևս միառմի թվել

անհնարին է։ Բավական է ասել, որ կառավարությունը ռեֆորմների ծրագիրն ընդունելուց առաջ վճռել է, եթե հնար է ամբողջ հայությանը ջնջել» (18, № 158, 1895)։

Եվրոպայի մտավորականներն իրենք էին գրում, որ «Եվրոպան է, որ համերաշխաբար անլուր եղեռնի մը պատասխանատվությունը ստանձնած է»։ Նրանցից մեկը բացականչում էր. «Մեծ մարդասպանը Աբդուլ Համիդը չէ, մեծ մարդասպանը Եվրոպան է»։ Նա ցույց էր տալ՝, որ սուլթանը ոգևորվեց, տեսնելով, թե ինչպես «բովանդակ Եվրոպան Ռուսիո կարգելեր հայերը պաշտպանել, հետո տեսավ, որ բովանդակ Եվրոպան անզգա կըմնար զարհուրելի ջարդերու առջև։ Այս ամենը քաջալերություն էր դահիճին։ Սուլթանն ասիկա այդպես հասկնալու էր, և այդպես ալ հասկըցավ» («Նոր կյանք», № 20, 1899, էջ 317)։

Երբ 1896-ին եվրոպական և ամերիկյան ընկերությունները դիմեցին Բ. դռանը, որ նրանց իրավունք շնորհվի սովյալ և վիրավոր հայերին, մանավանդ որբերին օգնության հասնելու, Բ. դուռը նախ չհամաձայնվեց, բայց հետո թույլ տվեց պայմանով, որ այդ օգնությունը քաղաքական նպատակներով չօգտագործվի (17, էջ 223)։

Գաղութատեր պետությունների դիվանագետներն ավելի զգուշավոր դարձան, երբ 1897-ին Թուրքիան հաղթանակ տարավ Հունաստանի նկատմամբ։ Մահմեդական պետության հաջողությունը ոգևորության ալիք էր հարուցել Հնդկաստանի, Ռուսաստանի ու այլ երկրների մահմեդականների մոտ։ Օսմանյան կայսրության հաղթանակը բոլոր մուսուլմանները տոնում էին որպես սեփական հաղթանակ, կազմակերպելով հանդեսներ, ցույցեր, հրավառություններ։

Մակեդոնիայում բարենորոգումներ իրականացնելու մասին Մյուրցշտեգում 1903-ի նոյեմբերի 20-ին Ռուսաստանի և Ավստրիայի միջև կնքված համաձայնությամբ ոչ թե մակեդոնացիներին զոհացում տրվեց, այլ ավելի ամրապնդվեցին սուլթանի դիրքերը Մակեդոնիայում։ «Պաշտոնական Եվրոպայի սանկցիայով Մակեդոնիան ձեռքն ու ոտքը կապված դրվեց Թուրքիայի քմահաճույքի տակ» (14, № 8, 1905, էջ 42)։ Այս ծրագիրը նախկինում բազմիցս կրկնված և քանիցս կյանքի կոչվից մերժված մեթոդների կրկնությունն էր։ Եվրոպական դիվանագիտությունը գործնականում ոչինչ չէր տալիս, թեև գրգռում էր սուլթանի կատաղության նոպաները։ Բավական է հիշատակել, որ 1903—1905 թթ. Մակեդոնիայում 201 գյուղ ավերվեց, 12440 տուն կողոպտվեց, մոտ 5000 մարդ սպանվեց, հազարավոր կանայք ու աղջիկներ բռնաբարվեցին, հազարավոր ընտանիքներ սնանկացան և աղքատացան (14, № 8, 1905, էջ 42—43)։ Սուլթանն անպատիժ էր իր չարագործությունների մեջ։ Նրան խրախուսում էր տասնյակ տարիների փորձը։ Նա երբեք լուրջ նշանակություն չէր տալիս եվրոպական դիվանագիտության թղթարարությանը։

1904-ին Խրիմյանը եպիսկոպոսներ Սարաճյան Հովսեփի և Այվազյան Սահակի միջոցով իր անունից հայոց հարցի մասին դիմումներ հղեց եվրոպական արքունիքներին։ Ֆրանսիայի հանրապետության նախագահ Լուբեն պատասխանեց, թե անհրաժեշտության դեպքում արտաքին գործերի մինիստր Դելքասեն հարկ եղածը գործի կդնե։ Էդվարդ թագավորը Լոնդոնում մերժեց պատվիրակներին ընդունել։ Սրանք անցնում են Ամերիկա, այցելում Թ. Ռուզվելտին, որը պատասխանում է, թե հետաքրքրվում է հայերի հարցով, բայց չի կարող ոչինչ անել, քանի որ ԱՄՆ-ը չի ստորագրել Բեռլինի պայմանագիրը (15, էջ 136—137)։ Այս ձեռնարկությունը կրկնվում է 1907-ին, Լահեի դեսպանախորհրդի ժամանակ։ Այս անգամ էլ պետությունների ներկայացուցիչները հրաժարվեցին տեսակցել կաթողիկոսական պատգամավորների հետ։ 1907-ի օգոստոսի 10-ին Լահեի դեսպանաժողովի նախագահ Նելիդովը մերժում է հայոց խնդիրը դնել ժողովի քննարկման։ Այդ ժողովին դիմում են հղում «Պրո-Արմենիայի» խմբագիր Պիեռ Քեաոը, «Ռևյու դը Պարիի» խմբագիր Վիկտոր Բերարը, Անատոլ Ֆրանսը և Պրեսանսեն։

Իր կյանքի վերջին օրերին, դժգոհ Լահեի դեսպանախորհրդի վերաբերմունքից, Խրիմյանը շարունակում էր դիմումներ հղել Էդուարդ թագավորին, Անգլիայի կառավարության ղեկավարներին։

90-ական թվականների ճգնաժամի ժամանակ Աբդուլ Համիդ II-ին հաջողվեց հասնել իր նպատակին՝ պահպանել փտած ֆեոդալական-միահեծան ռեժիմը և ազգային-կրոնա-

կան ճնշումը (27, էջ 344—345)։ Պաշտոնական Արևմուտքը միայն ոգեշնչեց մեծ մարգասպանին, ոչնչով չկանխեց հայոց ողբերգությունը։ Ռուսական, եվրոպական ու ամերիկյան հասարակական կարծիքը, քրիստոնեասեր եկեղեցականների բողոքներն ու համակրական հոգոցները անզոր եղան բուրժուական աշխարհի տնօրենների հակաժողովրդական բարքերի առջև։

«Եվրոպական տերությունները միշտ թողնում էին Թուրքիային կատարելու իր արյունալի գործը, մինչև որ գալիս էր րոպեն, որ հարմար էին գտնում միջամտության համար հանուն իրենց շահերի, երբ պետություններից մեկը կամ մյուսը րոպեն հարմար կհամարի հափշտակելու նրանից համեղ կտորներ և... օգուտ ձեռք կբերի գերիշխան ազդեցություն Թուրքիայի ճակատագրի նկատմամբ» (11, № 5, 1897, էջ 34)։

Արևմտաեվրոպական պետությունների «տիրապետող դասակարգերը» վարում էին «գաղութների թալանման, օտար ազգերի ճնշման», «բանվորական շարժման ճնշման քաղաքականություն» (1, հ. 21, էջ 386), և նրանք չէին կարող զուտ «քրիստոնեասիրության» հիման վրա օգնության ձեռք մեկնել Թուրքական դժոխքում գալարվող արևմտահայությանը։

Ահավասիկ, այսպիսին էր օսմանյան ներքին ու արտաքին վիճակը XIX դարի 90-ական թվականներին, երբ քաղաքական կյանքի ասպարեզ ելավ երիտթուրքական շարժումը։

1. Ենին Վ. Ի., Երկեր, 4-րդ հրատ., Երևան։
2. Սրզբբ Լուիզ, Ընկերավարություն և Թուրքիա, Ալեքսանդրիա, 1910, (Արտատպված է Ջիկագոյի «Ազգ» թերթի № 36, 5. 1. 1910)։
3. «Անահիտ», ամսագիր, Փարիզ։
4. Սրշակ Սարկավագ, Հայոց բարեկամները Գերմանիայում, «Նոր դար» № 13, 25. 1. 1897։
5. «Արմենիա», թերթ, Մարսել։
6. Գյոզալյան Գ., Խրիմյան Հայրիկ, Գաղափարների աշխարհ, Բեյրութ, 1954։
7. Ժամկոչյան Բ. Կ. Պատմություն Մամուրեթ Ուլ Ազիզի գերման որբանոցներու, Բեյրութ, 1973։
8. Լեո, Հայ հերոսներ, «Ռազմիկ» թերթ, Երևան, 1920, № 14։

9. Լյուքսեմբուրգ Ռ., Ազգերի պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան, «Բաներեր Երևանի համալսարանի», № 2, 1971։
10. «Հայք», թերթ, «Նյու Յորք»։
11. «Հնչակ», թերթ, ժնև։
12. «Հառաջ», թերթ, Թիֆլիս։
13. Ճիզմեճյան Մ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության, 1890—1925, Ֆրեզնո, 1936։
14. «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս։
15. Մուշեղ Արքեպիսկոպոս, Հայկական մզձավանջը. քննական վերլուծումներ, Բոստոն, 1916։
16. «Մշակ», թերթ, Թիֆլիս։
17. Մելիք-Կարագյոզյան Գ., Գերմանական օգնության ընկերությունները Տաճկահայաստանի համար, «Մուրճ», № 2, 1900։
18. «Նոր դար», թերթ, Թիֆլիս։
19. Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937։
20. Սապահ Գուլյան Ս., Ֆրանսիան և հայոց խնդիրը, «Նոր դար», № 2, 6. 1. 1897։
21. Սապահ Գուլյան Ս., Պատասխանատուները, Պրովիդենս, 1916։
22. Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն, 1913, հ. Բ.։
23. Вестник Европы», журнал, СПб.
24. Восточный вопрос во внешней политике России (конец XVIII—начало XX в.), Москва, 1978.
25. **Гельферих К.** Накануне мировой войны, М.. 1924.
26. **Ерусалимский А.** Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX века, М,-Л., 1948.
27. История дипломатии, т. II, 1963.
28. «Кавказ», газета, Тифлис.
29. **Контансон Л.** Реформы в Азиатской Турции. Армянский вопрос. М., 1914.
30. «Красный Архив», Москва.
31. **Покровский М.** Русский империализм в прошлом и настоящем. «Внешняя политика», Сборник, Л., 1919.
32. Положение армян в Турции до вмешательства держав в 1895, М., 1896.
33. **Ротштейн Ф.** «Дневник В. Н. Ламздорфа», «Красный Архив», М,-Л., 1931, т. 3 (46)

34. Ротштейн А. Ф. Международные отношения в конце XIX века, М.-Л., 1960.
35. Силин А. С. Экспансия Германии на Ближнем Востоке в конце XIX века, М., 1971.
36. Хвостов В. Кризис внешней политики Бисмарка, «Историк марксист», № 5 (39), 1934.
37. Хвостов В. Проблема захвата Босфора в 90-х годах XIX века. «Историк марксист», т. 20, 1930.
38. Цветков П. Турция и ислам при Абдул-Хамиде, «Средняя Азия». Ташкент, 1910, кн. VI.

39 «Blue Book» London
40 Bryce J. Transcaucasia and Ararat, London, 1896.
41 Gooch G. P. History of Modern Europe, 1878—1919, London, 1923.
42 Gordon L. J. American Relations with Turkey—1830—1930, An Economic Interpretation, Philadelphia, 1938.
43 Grenville J. A. S. Lord Salisbury and Foreign Policy. The Close of the Nineteenth Century, London, 1964.
44 Greene F. The Armenian Crisis in Turkey—The Massacre of 1894, N. J.
45 Gulesian M. H. England's hand in Turkish Massacres, «The Arena», Boston, 1897, vol. 17
46 Jeffererson M. Margaret Lord Salisbury and the Eastern Question, «The Slavonic and East European Review», London, 1960, XII, vol. XXXIX, N. 92.
47 Kennedy A. L. Salisbury, 1830—1903, London, 1953.
48 Kurkjian V. A History of Armenia, N. J, 1958.
49 Lord Salisbury in Turkey, «The Spectator», London, vol. 75, 1895, XII.
50 Lord Salisbury's Conversations with the Tsar at Balmoral, 27 and 29 September, «The Slavonic and East European Review», vol. XXXIX, N. 92, London, XII, 1960.
50 a Mc Dermot G. Great Assasin and the Christians of Armenia, «Catholic World», N. Y., vol. 64, 1896, p. 295.
51 Russell G. Armenia and the Forward Movement, «The Contemporary Review», vol. 71, London, 1896.

52 The Armenian Debate, «The Spectator», London, 18. VII. 1891, vol. 67.
53 The Armenian Resolutions, «The Nation», N. J., 30. XI. 1896 vol, 62.
54 The Armenian Trouble, «The Nation», N. J. 1895, vol. 60.
55 The Policy of Russia in Turkey, «The Spectator», London, vol. 76, 22. II. 1896.
56 Williams A. W. and Gabriel M. S. Bleeding Armenia, Its History and Horrors Under the Curse of Islam, N. Y., 1896.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԽԱՆՁԱՐՈՒՐԸ

(XIX դարի ավարտ—XX դարի սկիզբ)

Երիտթուրքերը «նոր օսմանների» գործի շարունակողներ: Սահմանադրական շարժման վերաբացումը: Երիտթուրքական առաջին բջիջները: «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը: Երիտթուրքական խմբերը Եվրոպայում: Ահմեդ Ռիզա բեյի «Մեշվերեթը» (Փարիզ) ու Մուրադ բեյի «Միզանը» (Կահիրե) և նրանց հակասուլթանական պրոպագանդան: Երիտթուրքերի քաղաքական հավատամքի խանձարուրը. օսմանիզմ, իսլամիզմ, թուրքիզմ: Սուլթանի հայասպան քաղաքականությունը. հայոց ազատագրական մաքառումները Երիտթուրքերի հայեցակետով: Եվրոպական առաջադիմական հասարակական-քաղաքական շրջանները և երիտթուրքերը: Հայոց քաղաքական կազմակերպությունների և երիտթուրքերի առաջին կոնտակտները:

XIX դարի 90-ական թվականների կեսերին, երբ արևմտահայության ազգային-ազատագրական մաքառումները վերելք էին ապրում, երբ նորից հայկական հարցը դարձել էր միջազգային դիվանագիտության քննարկումների առարկա, օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման ամենալավատես երկրպագուներն անգամ անհանգստացան։ Նիրհից արթնացան, տեղից շարժվեցին օսմանյան իրականության հասարակական այն խմբերը, որոնք թուրքական պետականությունը Եվրոպայի ոտնձգություններից փրկելու, Համիդի կառավարման մերժելի մեթոդներից ազատելու ուղիներ էին փնտրում։

Արդեն 90-ական թվականների սկզբին կենդանության նշաններ ցույց տվեց 70-ական թթ. ավարտին և 80-ական թվականների ամբողջ ընթացքում սուլթանի հարվածներին

ենթարկված և ցաք ու ցրիվ արված «նոր օսմանների»[1] *շարժումը։ Երեկ համաօսմանյան շարժման հնարավորությունը կարծես բացառված էր, քանի որ սուլթանի ընդդիմադիր մարդիկ խողխողված էին բանտերում կամ խեղդված Բոսֆորի ջրերում, մյուսները քարշ էին գալիս եվրոպական քաղաքներում։*

Դեռևս թանզիմաթի ռեֆորմների շրջանում թուրքերի ազգային ինքնագիտակցությունը վերելք ապրեց, արաբա-պարսկական կուլտուրական ընդհանրությունից առանձնանալու ձգտում առաջացավ։ Թուրքական կուլտուրայի մեջ ազգային ինքնուրույնություն փնտրելը համընկնում էր թուրքերի ազգային ինքնաճանաչման պրոցեսի խանձարուրի հետ։ Իսկ «ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերելքը և «հիվանդ մարդու» նկատմամբ եվրոպական տերությունների պահանջախնդրությունները... անմիջապես այդ որոնումներն ուղղեցին դեպի նացիոնալիզմի հունը» (18, էջ 68)։

XIX դարում օսմանյան կայսրությունը տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամ էր ապրում։ Թուրք ռեֆորմատորների փորձերը փրկելու պետությունը տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամից, անխուսափելի գահավիժումից, ֆեոդալամուսուլմանական կայսրության հիմքերն ամրապնդելու նրանց ջանքերը ավարտվում էին անհաջողությամբ։ Ոմանց պատկերացումներով թուրքական կուլտուրան նույնպես այլևս սպասելիք չուներ արաբական և պարսից կուլտուրաներից և իմպուլսներ պետք է փնտրեր Եվրոպայում։ Մյուսները հանդես էին գալիս արևմտականացման դեմ՝ հանուն զտարյուն իսլամական, հետո արդեն զուտ թուրքական կուլտուրայի դիրքերի ամրապնդման։

Այսպիսով, թուրք առաջին լուսավորիչների պատկերացմամբ պետք է ստեղծվեր զուտ թուրքականը, որն իր ճանա-

1 Եվրոպական արևելագիտության մեջ «նոր օսմաններին» թե «երիտասարդ թուրքերի» շարժումներն ունեն մեկ անվանում՝ «ժեան թուրք»։ Ռուսական և սովետական թուրքագիտությունը «երիտասարդ թուրք» անվանումն օգտագործում է գլխավորապես «Իթթիհադ վե թերաքզ»— «Միություն և առաջադիմություն» կուսակցության և երիտթուրքական շարժման առումով։

պարհին պետք է հաղթահարեր ինչպես Արևելքի ավանդական կապանքները, այնպես և Արևմուտքի ազդեցությունը։ Սակայն դա հեշտ խնդիր չէր։ Պետությունը ազգերի ու ժողովուրդների կոնգլոմերատ էր, որտեղ թուրքերի դերը տակավին աննշան էր։

XIX դարի վերջին մի անգլիացի հեղինակ կարծես թե կրկնում էր Կ. Մարքսի խոսքերը սեփական երկրում թուրքերի օկուպանտներ լինելու մասին և գրում էր. «Թուրքերը մինչև այսօր պարզապես գրավման բանակ մըն են նույնիսկ Կ. Պոլիս» (13, № 21, 1900, էջ 332)։ «Նոր օսմանների» շարժման էության վրա ուշադրություն էր դարձրել Կ. Մարքսը Ֆ. Էնգելսին գրած իր մի նամակում։ Նա նրանց անվանում էր Ղուրանի վրա հենվող պուրիտանական կուսակցություն (25, հ. XXIV, էջ 452)։ Նրանց պարագլուխ Միդհատ փաշան գեներալ-նահանգապետ էր եղել Բուլղարիայում, ապա Բաղդադում, ամենուրեք արյան ու արցունքի հետքեր թողնելով իր ետեւից (33, էջ 7)։ «Միդհատ փաշան նախ աշխատելով ճզմել, ճնշել, խեղդել» «հեղափոխությունը, ամեն առտու իրիկուն տասնյակ բուլղարներ» կախեց... 30000 բուլղար ջարդվեցավ» (3, № 4—5, 1900, էջ 127)։ Այսպիսի մեթոդներ ու գործելակերպ ունեցած թուրք պաշտոնյան չէր կարող լուսավոր ծրագրեր փայփայել մյուս ժողովուրդների համար։ Նրա հեղինակած սահմանադրությունն էլ կիսատ-պռատ մի բան էր։ «Սահմանադրությունը եղավ թուրքերուն ձեռք այն փաստը, որուն կոթնելով, մերժեցին եվրոպական միջամտությունը բարենորոգումներու խնդրույն մեջ։ Այս եղավ սահմանադրություն կոչված քաղաքական կատակերգության առաջին արարվածը» (3, № 4—5, 1900, էջ 126)։ Սա 1876-ի դեկտեմբերին էր։ Միդհատի հոգևոր ուսուցիչները շատ ավելի բարի նպատակներ ունեին թերևս։ Սակայն մեծ չէր նրանց ազդեցությունը, որովհետև անգրագետ թուրք զանգվածի վրա թույլ էր նրանց գեղարվեստական խոսքի ներգործությունը։ Նամիկ Քեմալն էր առաջին թուրքը, որ թուրքական նացիոնալիզմ քարոզեց գեղարվեստական երկերի միջոցով։ Նա առաջինն օգտագործեց վաթան (հայրենիք), հուրիեթ (ազատություն), մեջրութիեթ (սահմանադրական կառավարություն) տերմինները (39, էջ 6)։ Ինչպես Նամիկ Քեմալը, այնպես և

նրա համախոհները ձգտում էին դահընկեց անել սուլթանին, բայց ձեռք չէին բարձրացնում սուլթանատի, որպես ինստիտուտի վրա, օսմանների դինաստիան սուրբ էին համարում թուրքերի համար։

Սուլթանին հաջողվեց ցաքուցրիվ անել «նոր օսմանների» կազմակերպությունները։ Մի մասը ոչնչացվեց բանտերում ու աքսորավայրերում, մյուսը՝ հանդրվանեց Եվրոպայի տարբեր կենտրոններում։ Շարժումը կարծես թե դադարեց։ Սկսվեց Համիդ II-ի թագավորության սև շրջանը. երկրում ամեն ինչ գրված էր նրա կրնկի տակ։ Այդ շրջանի մասին գրվում էր, որ «վերջին քսան տարիներու բռնապետությունը թուրքերուն վրա որքան ավելի ծանրացավ, անոնց միտքն ալ այնքան ավելի խոնարհեցավ...» (13, № 20, 1899, էջ 306)։ «XIX դ. ավարտին և XX դարի սկզբին Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի առանձնահատկությունն այն էր,— գրում է սովետական պատմաբան Ի. Գ. Սենկևիչը,— որ թուրքական հեղափոխական շարժումը զարգանում էր զուգահեռաբար օսմանյան կայսրության մեջ մտնող ոչ թուրք ժողովուրդների առավել հզոր ազատագրական շարժման հետ» (29, էջ 31)։

«Նոր օսմանների» հետ համատեղ սահմանադրական Թուրքիա ստեղծելու գաղափարի իրագործմանը մասնակցած ժամանակի հայ լուսավոր մտավորականները շուտով հիասթափություն ապրեցին, հանդիպելով մի կողմից սուլթան Համիդի զուլումին, մյուս կողմից, «նոր օսմանների» շովինիստական կեցվածքին։

Երիտթուրքական առաջին անլեգալ խմբակը ստեղծվեց 1889-ին ռազմաբժշկական ուսումնարանում։ Սկզբում երիտասարդ թուրքերի կազմակերպությունը կոչվեց «Իթթիհամ վե թերագզը» (1892), հետո այն վերանվանվեց «Իթթիհադը Օսմանի» և ավելի ուշ՝ «Իթթիհադ վե թերագզը» («Միություն և առաջադիմություն»)։ Նրա հիմնադիրներն էին ռազմաբժշկական ուսումնարանի սովորողներ թուրք Շերեֆեդդինը, ալբանացի Իբրահիմ Թեմոն, քրդեր Իսհակ Սուքութին և Աբդուլլա Ջևդեթը, բոսնիացի Ալի Ռյուշթյուն՝ բոլորն էլ մահմեդականներ։ Իթթիհադիստների հիմնական կադրերը սպաներն էին և սովորող զինվորական երիտասարդությունը։

Ոմանք պնդում են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջին բջիջը ստեղծվել էր Ժնևում 1891-ին (37, էջ 144)։

Երիտթուրքական առաջին բջջների, նրանց կազմակերպական անդրանիկ քայլերի մասին շատ է գրվել։ Մեր խնդիրը չէ պատմել նրանց մասին ընդհանրապես, այլ միայն պատկերացում տալ նրանց գործունեության հակահայկական կողմերի, երիտթուրք-հայ քաղաքական առնչությունների մասին։ Այդ շարժման սկզբնավորման հանգամանքները, 90-ական թթ. ոչ թուրք ազգությունների քաղաքական կազմակերպությունների հետ երիտթուրքերի կապերի, համագործակցության ու վերաբերմունքի խնդիրները նախ վատ են ուսումնասիրված, հետո բոլորովին չեն լուսաբանված հայկական աղբյուրների հիման վրա։

90-ական թթ. երիտթուրքերը դաստիարակվեցին նոր օսմանների՝ Իբրահիմ Շինասիի, Նամիկ Քեմալի և մյուսների գրքերի ու գաղափարների վրա։

Արդեն երիտթուրքական կազմակերպության խանձարուրում նրա հիմնադիրները բացասական դիրք բռնեցին հայոց ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ։ «Իթթիհադ վե թերաքքի» հիմնադիրներից Թեմոն իր հուշերում պատմում է, որ իրենց կազմակերպության հիմնադրման առաջնահերթ պատճառը կայսրությունը փրկելն էր, որ Աբդուլ Համիդը ի վիճակի չէր այդ բանը անել։ Թեմոյի ու ընկերների առաջին իսկ կոչում, անդրադառնալով հայերի «անպատկառ գործողություններին», այնուամենայնիվ, դրանք «զուլումի, բռնապետության և վատ կառավարելու» հետևանք էին համարում։ Նրանք քննադատում էին սուլթանին, որ թուրք ժողովրդին չէր հրավիրում պատժելու հայերին» (40, էջ 21)։

Հետադիմական ուժերը փորձում էին ապացուցել, որ երիտթուրքերը թուրքեր և մահմեդականներ չեն, որ նրանք աթեիստներ են, հրեաներ և ազատ մասոններ, որոնք նպատակ են դրել կործանել իսլամն ու խալիֆաթը։ Սակայն իրականում այդպես չէր։ Երիտթուրքերը դեմ չէին իսլամին։

Շուտով պարզ դարձավ, որ նրանք կրթություն էին ստանում Փարիզում, տիրապետում ֆրանսերենին, սակայն շարունակում էին պաշտել իրենց շարիաթը և ամեն մի քայլ ձգտում էին հիմնավորել սուրբ օրենքով (21, էջ 245)։

Երիտթուրքերը նոր ծնունդ առնող թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչներն էին։ Սակայն այդ բուրժուազիան արդյունաբերական չէր։ Առևտուրը նույնպես հիմնականում թուրքերի ձեռքում չէր։ Երիտթուրքերի շարքերում համարյա չկային կապիտալիստներ, հողատերեր, առևտրականներ, բայց մեծ թիվ էին կազմում զինվորականները, պաշտոնյաները։ Նրանց մեծամասնությունը թուրքական մանր բուրժուազիայի ծոցից ելած մարդիկ էին, որոնք «ագահորեն ձգտում էին իշխանության, որպեսզի այն վերածեին իրենց տնտեսական վերելքի և տիրապետության լծակի» (24, էջ 42)։

Դժգոհությունը սուլթանի իշխանությունից պայմանավորված էր առաջին հերթին այն բանով, որ սպաներն ամիսներով, տարիներով աշխատավարձ չէին ստանում։ Այս հանգամանքը զարկ էր տալիս կաշառակերությանը, ծախվածությանը, ֆավորիտիզմին նաև բանակի շարքերում (33, էջ 2, 4, 31)։ Ժամանակ առ ժամանակ պետական պաշտոնյաների կրճատումները փողոց էին նետում հարյուրավոր մարդկանց, որոնք չարությամբ էին արտահայտվում տիրող կարգերի հասցեին, հակապետական ագիտացիա վարում։ Փոքր չէր կիսաքաղց գոյություն քարշ տվող ուլեմների և սոֆտաների թիվը։

Այնուամենայնիվ, երիտթուրքական շարժումն արտացոլում էր վեր բարձրացող թուրքական բուրժուազիայի և լիբերալ կալվածատիրության շահերը։ Երիտթուրքերը ձգտում էին միավորել սուլթանի իշխանությունից դժգոհ տարրերին, անկախ նրանց քաղաքական երանգից։ Զափազանց խայտաբղետ և գաղափարապես աններդաշնակ էին նրանց տարբեր խմբերը։ Նրանք ժողովրդի լայն խավերի վրա ազդեցություն չունեին։ «Երիտթուրքական շարժումը,— գրում է Գ. Ալիևը,— չէր օգտվում Եվրոպայի առաջադիմական հասարակայնության պաշտպանությունից, որը չէր հավատում այդ շարժման կենսականությանն ու ուժին և միակ ելքը Թուրքիայի համար տեսնում էր մեծ տերությունների հսկողության տակ բարենորոգումների իրականացման մեջ» (19, էջ 330)։

Լիբերալ բուրժուական երիտթուրքական շարժումը ձգտում էր Թուրքիան վերածել բուրժուազգային պետության։ Երիտ-

Թուրքերը հիշում էին XIX դարի 70-ական թվականների իրավիճակը, երբ օտարերկրյա միջամտությունը կանխելու միջոց համարվեց պաշտամենտական կարգին փարվելը։ Այժմ նույնպես «Միդհատի սահմանադրությունը նպատակ ուներ արտաքին երևույթները փրկելով արգելել եվրոպական միջամտությունը Թուրքիո գործերուն մեջ»։ «Այդ սահմանադրությունն ալ համիսլամական գաղափարին գործիք մըն էր։ Սուլթան Համիդ իր վրա առավ համիսլամության գործը, առանց սակայն որևէ Միդհատի մը ընկերակցության կամ խալիֆային իշխանության մեջ սահմանադրական որևէ ոտընձգության։ Միայն իսլամությունը և անոր գլուխը միահեծան խալիֆ սուլթանը հրամանատար։ Հին ու նոր Թուրքիան միացան սուլթան Համիդի անձին մեջ» (13, № 5, 1899, էջ 66)։

1894—95 թթ. զանգվածային ջարդերից հետո երկրի արևելյան գավառներում հայոց տեղն սկսում էր բռնել թուրք մանրբուրժուազիան։ Առաջ անցնելով ասենք, որ չնայած կոտորածին, չնայած իշխանությունների կողմից թուրք բուրժուազիայի նկատմամբ հովանավորության քաղաքականությանը, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նրան, այնուամենայնիվ, չէր հաջողվել շուկայից դուրս մղել հայազգի բուրժուազիային։ Մրցակցությունը շարունակվում էր նոր ուժով։ Հայոց տնտեսական ակտիվությունն էր, որ գրգռում ու կատաղեցնում էր թուրք բուրժուազիայի քաղաքական պարագլուխներին. նրանք այլևս չէին հանդուրժելու երկրի ներքին շուկայում հայոց տնտեսական վերընթացը։

XIX դարի ավարտին թուրք մտավորականության ջոկատը մեծացել էր զինվորականների և բժիշկների, փոստային աշխատողների, պետական պարտքի օտարերկրյա վարչության պաշտոնյաների հաշվին (24, էջ 41)։ Պաշտոնյաների հսկա բանակի շարքերում մեծ էր դժգոհների թիվը։ Համիդյան գործակալները նրանց հանգիստ չէին տալիս։ Աշխատասիրող մտավորականները, կիսատ-պռատ կյանք վարող, ցածր վարձատրվող պաշտոնյաների խավը համախմբվում էին երիտթուրքական խմբակներում։ Այստեղ էին ուսանողները, ռազմական ուսումնարանների սովորողները։ 1901-ին երիտթուրքերի կողմն անցած սպաների թիվը հասնում էր

երկու հազար վեց հարյուրի (33, էջ 26)։ Թուրքերի մեկնաբանությամբ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անվանման առաջին բառը՝ «միությունը» վերաբերում էր կայսրության բոլոր ժողովուրդների և ազգությունների միասնությունն ապահովելուն։ Սակայն արդեն այն ժամանակ երիտթուրքերը տուրք տալով ազգային բացառիկության քարոզին, սիրում էին շեշտել, թե թուրքերը 400 ձիավորներով եկան Փոքր Ասիա, բայց կարողացան հիմնել մի հսկա կայսրություն։ Համիդ II-ին քննադատում էին այն բանի համար, որ նա վճռական չէր մեծ Թուրքեստան ստեղծելու գործում։ Նրան քննադատում էին ավելի մոլի շովինիստները, պանիսլամականները և պանթուրքիստները (27. 3. 7. 1909)։

«Յուրաքանչյուր պաշտոնյա, բարձրաստիճան դեմք, որ նեղացած էր կառավարությունից, անցնում էր սահմանը և սպառնում իրեն հոչակել երիտթուրք» (31, էջ 167)։ Մեծ քանակությամբ տարածվող պամֆլետներում քննադատության սլաքն ուղղվում էր Աբդուլ Համիդի անձի դեմ։ Նրանցից մեկում ասվում էր, որ «մարդկության պատմությունը չգիտե ավելի անագնիվ, ագահ և ստոր միապետ»։ Նրան համեմատում էին սև օձի, դեղին կարիճի հետ (28, էջ 183—184)։

Արդեն 1893-ին սուլթանը լրջորեն մտահոգված էր երիտթուրքերի ու հայերի միջև հնարավոր կապերի, համագործակցության շուրջը։ Սակայն, երբ այս բանը հաստատող փաստեր չստացավ, առժամանակ ապահով զգաց, սահմանադրությունը վերահաստատելու գործում հայոց անտարբերության մեջ համոզվեց և «ծայրահեղ խստություններու դիմելե զգուշացավ։ Դատարաններու արձակած մահավճիռները չգործադրվեցան, և ներումներն իրարու կհաջորդեին։ Բայց Փոքր Հայքի դեպքերը հանկարծ ուղղակի սուլթանի դահը կործանելու և անձը մեջտեղեն վերցնելու ձգտում երևան բերին։ Այդ օրե սուլթանը մոլեգնելով հայոց «դաս մը տալը» իր քաղաքականության գերագույն նպատակը ըրավ» (13, № 13, 1898, էջ 200)։

Այնուամենայնիվ, սուլթանն ավելի սարսափում էր երիտթուրքերի պրոպագանդայից. չէ որ նրանք ռեժիմի փոփոխություն էին պահանջում, իսկ հայերը միայն հայոց բարե-

նորոգումների, ինքնավարության խնդիր էին հարուցում։ Փարիզում թուրքաց դեսպան Մյունիր բեյը ջանք չէր խնայում ի հայտ բերելու երիտթուրքերի բջիջները, նրանց անդամներին։ Սուլթանի բանագնացները տարբեր պատրվակներով Ֆրանսիա էին այցելում երիտթուրքերին կաշառելու, վնասազերծելու նպատակով։ Սուլթանից դժգոհ բոլոր տարրերին համարում էին երիտասարդ թուրքերի համակիր կամ նրանց գործակից։ «Հեղինակավոր թուրքերու Եվրոպա գումարումը ամենածանր մտահոգություն կպատճառե սուլթանին, վասնզի իրեն դեմ իսլամական ընդհանուր շարժումի մը վտանգը կտեսնե» (13, № 11, 1900, էջ 175)։

Սուլթանի համար բոլոր ընդդիմադիր մուսուլման տարրերը «երիտասարդ թուրք» էին։ Նա նրանց ոչնչացնում էր անխնա կերպով, իրեն հատուկ մեթոդներով։ Մաք Քոլի «Սուլթանը և եվրոպական տերությունները» գիրքը անգլերենից ֆրանսերենի թարգմանած Ցորպեն Կոհեն իր առաջաբանում պնդում էր, որ 90-ական թվականների մի քանի տարում սուլթանը մոտ հիսուն հազար այդպիսի մուսուլմաններ էր ոչնչացրել՝ կախաղանի, յաթաղանի, գնդակահարության ու զնդանների միջոցով։ Նա իր համակրանքն էր արտահայտում սուլթանից տուժած և՛ հայերի, և՛ երիտթուրքերի նկատմամբ (13, № 16, 1899, էջ 255)։

1896—1897 թթ. «ազգին երեք չորրորդը երիտասարդ թուրքերուն հետ էր, ու ամեն մարդ բացեիբաց սուլթանի ու նրա կառավարության դեմ կխոսեր ու կդավեր»։ Սակայն սուլթանի իշխանությունը պահպանվեց։ Նրան հաջողվեց համընդհանուր շարժումը շրջանցել։ Մի փոքր անց նա ձեռնամուխ եղավ երիտթուրքերի ոչնչացմանը։ «Ասոնցմե շատը սպանվեցան, ոմանք աքսորվեցան, ուրիշներ կաշառվեցան, և ոմանք ալ համոզվեցան, թե սուլթանը երկրին բարիքին համար գիշեր ցերեկ կաշխատեր կոր և մոռցան իրենց տրտունջները» (3, № 24, 1898, էջ 382)։

Այդ պրոցեսը դիպուկ է բնութագրել հնչակյան ճանաչված գործիչ, դեպքերին ականատես Ս. Սապահ Գուլյանը. «Փարիզը դարձել էր ուխտատեղի. մի տեսակ թուրք Արշակավան. ով պաշտոն էր ուզում կամ պաշտոնի բարձրացում, և չէր կարողանում իր առաջադրած նպատակին հասնել, վազում, գալիս էր Փարիզ և իրեն «երիտասարդ» հայտարարում։ ...«Երիտասարդ թրքությունը» մի տեսակ միջոց էր դարձել սուլթան Համիդի կառավարությունից պաշտոններ, դրամներ, առավելություններ կորզելու և անձնական վրեժխնդրություններ առաջ մղելու։ Սրանց մեջ կային և լրտեսներ, և գաղափարազուրկ ոչնչություններ։ Պատեհապաշտ բախտախնդիրները սեփական շահից մղված մեկ «երիտասարդ» թուրք էին, մեկ «զառամյալ» թշվառականներ» (15, էջ 137)։

Մեր հիշատակած դեսպան Մյունիր բեյին (հետո փաշա) հաջողվեց հսկողության տակ առնել երիտասարդ թուրքերի հավաքույթները, ժողովները և որոշակի ուղղություն տալ նրանց գործողություններին։ Դժվար էր որոշել երիտթուրքերից ով էր լրտես, ով ոչ։ Սակայն մի բան պարզ էր, որ և իշխանության ներկայացուցիչները, և նրանցից դժգոհները միասնական էին թուրքականության, ազգայնական գաղափարաբանության հարցում, այլամերժ էին, չէին ընդունում կայսրության մյուս ժողովուրդների ձգտումների օրինականությունը, բոլոր միջոցները գործադրում էին խափանելու թուրքական պետականության շահերի դեմ ուղղված յուրաքանչյուր փորձ։

1879-ից 1907-ը արտասահմանում լույս էր տեսնում մոտ 120 ընդդիմադիր թերթ։ «Մեշվերեթը» (խորհուրդ) Փարիզում, «Միզանը» (կշեռք) Կահիրեում, «Իսթիքլյալը» (ապագա) Նեապոլում, այլ թերթեր Աթենքում, Բուխարեստում, Լոնդոնում, Սոֆիայում և այլուր լույս էին տեսնում հակասուլթանական նշանաբանով։ Սրանց էջերում երիտթուրքերն «իրենց դասակարգային և քաղաքական աշխարհայացքի հետևանքով երկրի սոցիալական և քաղաքական բազմաթիվ պրոբլեմներ գլխավորապես հանգեցնում էին թագավորող միապետի արատներին» (34, էջ 34)։

Երիտթուրքերի մամուլում շուտով թուրքերի հասցեին ավելի ու ավելի հաճախ սկսեց լսվել «Միլլեթ ի հաքիմի» (տիրապետող ազգ) արտահայտությունը։

«Մեշվերեթ» թերթի առաջին համարը լույս տեսավ 1895-ին։

1896-ի սկզբին Փարիզի երիտասարդ թուրքերի մասնաժողովը սկսեց հրատարակել նաև «La jeune Turquie»

(«Երիտասարդ Թուրքիա») ֆրանսերեն լրագիրը (12, № 35, 1896)։ Ինչպես ֆրանսիական ծախու թերթերը, որոնց վճարում էր Մյունիր բեյը, այնպես և երիտթուրքերի նորաթուխ լրագրերը, արդարացնում էին հայոց ջարդերը, սպառնալիքներ կարդում հայոց հասցեին (6, էջ 415)։ Իրենց նախորդների՝ «նոր օսմանների» նման երիտթուրքական գրիչներն օսմանյան կայսրության բոլոր արատները բացատրում էին սուլթանի անձով, նրա վատ կառավարմամբ։ Նրանց մտահոգության գլխավոր առարկան իշխանությունը զավթելն էր, պետության ամբողջականության պահպանումը, եվրոպական ճնշմանը դիմագրավելը։ Երիտթուրքերը կանգնում էին միևնույն սուլթանական դիրքերում, երբ խոսքը վերաբերում էր ճնշված ժողովուրդների ինքնուրույնությանը, նրանց ազատագրությանը։ Դեռ ավելին։ Նրանց գրվածքներում արդեն շարժման խանձարուրում ակնհայտ էին բոլոր մահմեդականների միավորման, բոլոր թուրքալեզու ժողովուրդների համախմբման քարոզի տարրերը։ Երիտթուրքական պրոպագանդան մակերեսային նետեր էր արձակում սուլթանի անձի դեմ, ի վիճակի չլինելով խորազնին վերլուծելու խնդիրները։ Նրանք ոչ թե խորամուխ էին լինում երկրի սոցիալ-տընտեսական պայմանների մանրամասների մեջ, այլ փորձում էին ամեն ինչ հանգեցնել սուլթանի անձնավորության արատներին, ձեռք չտալով երկրի կառավարման սիստեմին։ Հետաքրքրական է, որ երիտթուրքական թերթերում սուլթան Համիդին անվանում էին «իսլամի աշխարհի մեծագույն թշնամի», «անաստված», «օսմանյան սուլթանատի մեծագույն դժբախտություն»։ Այսինքն, նրանք իսլամի դիրքերից էին հարձակումներ գործում միապետի անձի վրա։ Իրականում սուլթանն ինքը պանիսլամիզմի ջերմեռանդ պաշտպանն էր։

Թուրք պատմաբան Ահմեդ Բեգևի Քուրանը թուրքական հեղափոխությանը նվիրված իր գրքում հավաստում է, որ միայն սկսած 1894-ից, երբ Կ. Պոլսում հայերն անցան ակտիվ հակասուլթանական գործունեության, երիտթուրքական ղեկավարները, անհանգստացած Անգլիայի և Ֆրանսիայի դիրքից, սկսեցին եվրոպացիներին համոզել, որ երկրում ոչ միայն հայերն էին մատնված զրկանքների, այլև բոլոր օսմանցիները։ Նրանք սկսեցին շատախոսել այն մասին, որ

տերությունների դիվանագիտական որոշումները պետք է ծառայեն ոչ միայն մի որևէ փոքրամասնության (իմա՝ հայերի), այլև բոլոր օսմանցիների շահերին։ Սարսափած հայկական շարժման ուժեղացումից, 1894-ին երիտթուրքական կոմիտեն մի մանիֆեստ հրապարակեց, որը ոչ թե բռնակալությունը տապալելու, այլ լիբերալ ռեֆորմներն իրականացնելու կոչ էր անում (19, էջ 57)։

Ի. Թեմոն ու նրա մյուս երիտթուրք համախոհները հանդես եկան հայկական կազմակերպությունների ինքնուրույն ելույթների դեմ, պաշտպանելով սուլթանի դեմ բոլոր «օսմանների» պայքարի թեզը, հանուն «ընդհանուր հայրենիքի»։ Թեմոյի գրած մի կոչ-թռուցիկում քամահրանք կար հայերի «համարձակության» հասցեին, որոնք քաջություն էին ունեցել հարձակում կատարել ամենաբարձր և հարգելի «ինստանցիայի»՝ Բարձր դռան վրա։ Փաստաթղթի մեջ ափսոսանք էր հայտնվում հայրենակից հայերի նման վարքագծի համար (28, էջ 171)։

Սովետական թուրքագետ Ա. Ալիմովը դեռևս 1935-ին շեշտում էր այն հանգամանքը, որ XIX դ. 90-ական թթ. հայկական հարցի շուրջը կատարվածը, հայկական ջարդերը, իմպերիալիստական տերությունների քաղաքականությունն ավելի բացորոշ էին ցուցադրում օսմանյան կայսրության ներքին հակասությունների ողջ էությունը և երիտթուրքերին հրում գործողությունների, դաղափարական պայքարի ընդդեմ սուլթանական ռեժիմի (20, էջ 17)։ Յու. Պետրոսյանը գրում է. «Անհրաժեշտ է նշել, որ 1894—1895 թթ. հայերի կոտորածը զգալի դեր խաղաց թուրք մտավորականության դաղափարական արթնացման մեջ» (28, էջ 172)։ Հայերին բարենորոգումներ շնորհելը երիտթուրքերը մեկնաբանում էին որպես կայսրության ամբողջականության խախտում, որպես ազգային հպարտության նսեմացում։ Այսօր էլ թուրք պատմաբանները մերժում են 1880-ի և 1895-ի եվրոպական տերությունների հայանպաստ դիվանագիտական նախաձեռնությունները, բացականչելով. «Ինչո՞ւ պետք է հայերը հատուկ կերպով առանձնացվեն»։ Ինչպես այն ժամանակ, նույնպես և մեր օրերում թուրքական մտավորականությանը օտար է ազգի

ինքնորոշման իրավունքը հարգելու, ճանաչելու ունակությունը։

«Փարիզի «երիտասարդ» ասված ավելի մոլեռանդ լամուկներն ամենայն կատաղությամբ են վերաբերվում դեպի Կ. Պոլսի շարժումը»,— Փարիզից հաղորդում էր «Նոր դարի» թղթակից Ս. Սապահ Գուլյանը։ Նա գրում էր, որ երիտթուրքերին կատաղեցնում էր հայերի ակտիվությունը, այն հանգամանքը, որ սուլթանը հաշվի է նստում հայերի հետ (12, № 183, 1895)։

Երիտթուրքերի առաջին ծրագրային ձևակերպումները երևացին «Մեշվերեթի» էջերում. «Մեր նշանաբանն է «կարգուկանոն և առաջադիմություն...» Մենք բարենորոգումներ ենք պահանջում ամբողջ կայսրության... ոչ թե մի որևէ ազգության շահերին համապատասխան, այլ օսմանյան կայսրության բոլոր քաղաքացիների համար... Մենք դեմ ենք օսմանյան կայսրության գործերին օտարերկրյա տերությունների ուղղակի միջամտությանը» (38, էջ 25)։ Ինչպես կռահում է ընթերցողը, երիտթուրքերին գրգռել էին հայոց շարժումը, Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ իրականացնելու հայկական քաղաքական կուսակցությունների և եվրոպական դիվանագիտության պլանները։

«Միություն և առաջադիմություն» օսմանյան կազմակերպության կանոնադրության 4-րդ հոդվածում անհրաժեշտ էր համարվում հռչակել, որ «Օսմանի ազնիվ տոհմը հավասարապես մնար սուլթանի և խալիֆաթի գահի վրա։ Սակայն, եթե (դինաստիայի անդամները) կկատարեն գործողություններ, որոնք դեմ կլինեն շարիաթին ու օրենքին, համաձայն չեն լինի սահմանադրական կառավարման հետ և մարդկային ու քաղաքացիական իրավունքներ չեն ապահովի, այդ դեպքում շարիաթի ու օրենքի համաձայն նրանց նկատմամբ ձեռք կառնվեն անհրաժեշտ միջոցներ» (28, էջ 176—177)։

Ինչպես Եվրոպայի, այնպես և ԱՄՆ-ի հայկական գաղթօջախներում, կուսակցական ու մտավորական շրջաններում որոշակի պատկերացում կար թուրքական իրականության կառավարմանը հավակնած երիտթուրքական շարժման մասին։ Ահա թե ինչ ենք կարդում ամերիկահայ «Հայք» հանդեսում. «Պարզ և համառոտ ասելով՝ այդ երիտասարդ թուրքերը ոչ

բավական լուսամիտ են, ոչ բավական բազմաթիվ, ոչ բավական խանդավառյալ։ Դոքա մեր ազգին այնքան թշնամի են, որքան սոֆթայք։ Չենք կրնար լավ բան ակնկալել ադոնցմե... Դոքա ոգևորված չեն բարձր գաղափարականով և քաղաքակիրթ մտոք։ Թեպետ զԵվրոպա առ ժամանակ մը նս խաբելու լավագույն միջոցն կըլիներ եթե դոքա հաջողեին նոր փադիշահ մի դնել գահուն վերա և սահմանադրություն հրուչակել...»։ Մ. Ս. Գաբրիելյանը 1895-ին գրել էր այն, ինչ տեղի ունեցավ 13 տարի անց՝ 1908-ին։ Նա կռահում էր երիտթուրքերի ընթացքը, որովհետև ուսումնասիրել էր և գիտեր նրանց էությունը (8, № 19, 1895, էջ 268—269)։ 1900-ին Արփ. Արփիարյանը գրում էր, որ «հայը չքացնելու համար ոչ հին թուրք կա, ոչ նոր թուրք, ոչ երիտասարդ թուրք, ոչ ծեր թուրք կա, այլ՝ թուրք միայն։ ...1895-ի քաղաքականությունը շարունակությունն է և կատարելագործությունը 1875-ի հայաջինջ քաղաքականության» (13, № 16, 1900, էջ 246)։

Երիտթուրքերի սիրած մեթոդը հայկական հարցն արտաքին ինտրիգների արգասիք ցույց տալն էր։ 1895-ին նրանց մի խումբ վեց մեծ տերությունների ներկայացուցիչներին հղել էր մի հայտարարություն, որի մեջ պահանջում էր բարենորոգումները կատարել ոչ միայն հայաբնակ նահանգներում, այլ ամբողջ Թուրքիայում։ Այս կապակցությամբ մասնախումբը խնդրում էր տերություններից, որ նրանք աջակցեին թուրք սահմանադրության վերահաստատման գործին օսմանյան կայսրության մեջ (12, № 209, 1895)։ Իհարկե, սեփական երկրի, սեփական կյանքի բարելավման մասին մտածող թուրք մարդը նույնպես կարող էր մտածել այն մասին, «թե արդյոք պետությունները մահմեդական ժողովրդին օգնելու համար մի բան չեն կարող անել, ինչպես որ քրիստոնյաներին» (14)։ Սա մի անգոհունակության զգացում էր, պայմանավորված եվրոպական միջամտությունից օգտվելու ցանկությամբ։

Երիտթուրքերի պարագլուխների մի մասը Ռուսաստանից հեռացած մարդիկ էին, որոնք վատ գիտեին Թուրքիան, նրա ժողովրդին, երկրի պայմանները, հոգսերը։ Մյուս մասը եվրոպական Թուրքիայի առափնյա քաղաքներից էր և գաղափար

չուներ իսկական Թուրքիայի, նրա ծայրագավառների մասին։ Բնականաբար սրանք ոչինչ չգիտեին նաև Հայաստանի իրական վիճակի մասին։ Ռուս լրագրող Արիադնա Տիրկովան այս առումով հիշում է երիտթուրքերի պաշտոնական օրգան «Թանին» թերթի խմբագիր Ջահիդին, որը տոն էր տալիս կուսակցական կյանքին, գաղափարական գործերին, բայց ոչ մի անգամ ոտք չէր դրել կայսրության ասիական մասում (32, էջ 117)։

Մահմուդ Դամադ փաշան իր հրապարակային ելույթներում այն միտքն էր զարգացնում, որ «Արևելքը տառապեցնող չարիքներուն պատճառը ոչ թե իսլամությունն է, այլ բռնապետությունը»։ Նա գտնում էր, որ անկախությունը պահպանած Թուրքիան և Իրանը պետք է վերածնվեին առանց կրոնը փոխելու։ «Իսլամության վերածննդի նախաձեռնողը Թուրքիան է»։ (13, № 10, 1900, էջ 160)։ Մի փոքր անց նույն Մահմուդ Դամադը Եգիպտոսում հայերին իսլամների հետ միաբանության կոչ էր անում (13, № 21, 1900, էջ 323)։

Կ. Պոլսում գաղտնի տարածվել էին երիտթուրքական բազմաթիվ կոչեր ու գրքույկներ՝ թուրքական կայսրությունը փրկելու մասին։ Սրանցից մեկի մեջ ծննում ապաստանած Թիմալի Հիլմի էֆենդին գրում էր, որ «օսմանյան ազգը մահամերձ դրության մեջ է. ազգային բոլոր ուժերը գտնվում են զորքի մեջ. նա պիտի սկսի գործել» (12, № 78, 1897)։ Արդեն այն ժամանակ երիտթուրքերը լայն պրոպագանդա էին մղում բանակային զորամասերում։

Երիտթուրքերն սկզբնական շրջանում նույնպես միասնական չէին։ Նրանց խմբերը մշտապես գզվռտոցների մեջ էին։ Նրանք անսկզբունք դիրքերից վարկաբեկում էին միմյանց, ծաղրում ու վատաբանում։ Նրանք միշտ էլ հակված էին սուլթանի հետ կոմպրոմիս փնտրելուն։ 1898—1900 թթ. երիտթուրքերի վտարանդիական կենտրոնների գործունեությունը սահմանափակվում էր մի քանի թերթերի ու պրոպագանդիստական գրքույկների հրատարակումով։ Նրանց անմիաբանությունը խոչընդոտում էր ֆեոդալական-միահեծանության դեմ քաղաքական պայքարի ծավալումը։ Միավորվելու, մի հզոր կազմակերպություն ստեղծելու գաղափարը գործնական հողի վրա դրվեց 1899-ին (28, էջ 192, 193, 198)։ Այնուհետև միավորվելու գաղափարը զարգացրեց Ալի Ֆահրին 1900-ին ժնևում հրատարակած իր գրքույկում (35)։ Այդ գրքույկում նա հայկական, մակեդոնական, ալբանական հեղափոխական խմբերին ու կոմիտեներին կոչ էր անում չպայքարել սեփական ազգային իրավունքների ու շահերի ապահովման համար, այլ համախմբվել երիտթուրքերի շուրջը՝ Համիդի ու նրա ռեժիմի դեմ ընդհանուր պայքարը հաջողությամբ իր վախճանին հասցնելու համար։ Հայերին հիշեցնելով կոտորածի սարսափները, երիտթուրք գործիչը զգուշացնում էր, որ դրանց կրկնվելը կանխելու համար հարկավոր է, որպեսզի «հայ հայրենակիցներն» իրենց պայքարում ընթանային երիտթուրքերի հետ մի շարքում։ Ինչպես նկատում է Յու. Պետրոսյանը, գրքույկում բացահայտորեն զգացվում է երիտթուրքական պրոպագանդային հատուկ իրենց անկախության համար պայքարելու կայսրության ոչ թուրք ժողովուրդների իրավունքի բացասումը (28, էջ 200)։

Փարիզաբնակ թուրքերը «Օրիենտ» թերթի հրավերով մասնակցել էին սուլթանի գահակալության տարեդարձին նվիրված հանդեսին, որին ներկա էին նաև մեծ թվով ֆրանսիացիներ։ Սապահ Գուլյանը «Նոր դարի» ընթերցողներին հաղորդում էր հետևյալը. «Երիտասարդ թուրքերը չմասնակցեցին, սկզբունքով դեմ լինելով ներկա կառավարությանը, բայց որոնք այժմ ավելի մոլեռանդորեն ատում են հայերին և հայկական խնդիրը, պատճառ բերելով, որ հայերը օսմանյան պետության ներկա թուլությունից օգտվելով՝ ուզում են բաժանվել և այդպիսով կայսրության վերջնական լուծման առիթ դառնալ։ Մինչդեռ իրենց հետ պետք է միանային ամբողջ կայսրությունը բարօրելու և ամրապնդելու»։ Սապահ Գուլյանը նրանց անվանում էր «Միդհատին հետևող ուրվականներ» (12, № 161, 1895)։

Փարիզի վտարանդի երիտթուրքերի մեջ աչքի ընկավ և արտասահմանյան կենտրոնի ղեկավար դարձավ Ահմեդ Ռիզան*։ Նա սահմանադրության վերականգնման խաղաղ ուղու

* Ահմեդ Ռիզա բեյը կովկասցի էր, մոր կողմից ավստրիացի (28, էջ 168)։ Նա Փարիզում էր հաստատվել 1888-ին։ Նրա խմբագրած «Մեշվերեթ» թերթի առաջին համարը Փարիզում լույս տեսավ

կողմնակից էր։ Նա իր քաղաքական հայացքների լեյտմոտիվը դարձրել էր Արևմուտքի միջամտության դեմ աղմկարարությունը։ Ահմեդ Ռիզան թուրքերի արժանապատվության համար վիրավորական էր համարում օտարերկրացիների ակտիվությունն ու միջամտությունը օսմանյան հայրենիքի ներքին գործերին։

Ահմեդ Ռիզան հմուտ պարսկագետ էր, լավ ծանոթ ռուսաց լեզվին։ Նա թուրքական թերթերի էջերում քարոզում էր իսլամական աշխարհի վերածնության անհրաժեշտությունը։ Նա թղթակցում էր նաև Թիֆլիսի ռուսերեն «Կավկազ» թերթին։ Նա ամեն առիթով փորձում էր ապացուցել, թե հայկական հարցը արտաքին դրդումների արդյունք է։ Փարիզի «Մաթեն» (1892) թերթում տպագրած իր մի հոդվածում պանիսլամական դիրքերից թուրքական և պարսկական կառավարություններին կոչ էր անում միասնական ջանքերով կանխել հայկական պետության վերականգնման վտանգը։ Պահանջվում էր սաղմի մեջ խեղդել հայոց շարժումը։ Նա մի գրքույկ էր հրապարակել ի պաշտպանություն Կորանի, կնոջը հռչակելով «պիղծ էակ», փաստելով նրա հարեմական դրության և բազմակնության անհրաժեշտությունը, «մարդկային բնավորության պահանջին բոլորովին համապատասխան լինելը» (15, էջ 132)։ Ահա այսպիսի հայացքներ ունեցող մարդը հավակնում էր ուղղություն տալ երիտասարդ թուրքերի ու նոր Թուրքիայի գործերին։ Ահմեդ Ռիզան ու նրա համախոհները շատախոսում էին համիսլամության հողի վրա արաբներին, թուրքերին, պարսիկներին, ալբանացիներին միավորելու անհրաժեշտության մասին։

1895-ի դեկտեմբերին (գոյություն ունեցավ մինչև 1908-ը)։ Թերթի անդրանիկ համարում հրապարակված խմբագրական հոդվածում ասվում էր, որ նպատակ չէր դրվում խորտակել կառավարող դինաստիան, որի «գոյությունը մենք անհրաժեշտ ենք համարում կարգը պահպանելու համար, այլ առաջադիմություն տարածելու համար և նրան հասնելու խաղաղ ճանապարհով»։ Այստեղ արդեն պատասխան էր տրվում հեղափոխական բռնի միջոցների դիմած հայկական կազմակերպություններին։ Հոդվածում ասված էր. «Մեր դեմն է «կարգուկանոն ու առաջադիմություն» և մեզ օտար են ուժի միջոցով ձեռք բերվող լուծումները։ Մենք բարենորոգումներ ենք պահանջում, բայց ոչ թե այս կամ այն նահանգի, այլ ամբողջ կայսրության համար»։

Երիտթուրքական շարժման աջ թևը գլխավորում էր դաղստանցի Մուրադ բեյը*, որը Կահիրեում լույս էր ընծայում վերը հիշատակված «Միզան» թերթը։ Սա քննադատության կրակն ուղղում էր գլխավորապես սուլթանի անձի դեմ։ Ազգային հարցի լուծման ասպարեզում նա ռեակցիոն դիրք էր գրավում։ 1894—1895 թթ. հայերի կոտորածի ժամանակ նա հավանություն էր տալիս Աբդուլ Համիդ II-ի քաղաքականությանը (34, էջ 37)։ «Միզան» թերթը հարկ էր համարել բողոքել այն պնդումների դեմ, թե իբր այդ կուսակցությունը թշնամի էր օսմանյան արքայական տոհմին։ «Դա բոլորովին ճիշտ չէ,— ասում էր «Միզանը»,— երիտասարդ թուրքերի կուսակցությունը ցանկանում է միայն, որ Թուրքիայում օրինավոր վարչություն լինի և կռիվ է մղում նրանց դեմ, ովքեր չեն հետևում օրենքներին» (12, № 111, 1897)։

Մուրադ բեյը ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները համարում էր դիվանագիտական բանսարկությունների արգասիք, դեմ էր արտահայտվում կայսրությունից հայերի անջատման ձգտմանը, այն համարում էր «վիրավորական մահմեդականների հպարտության համար» (28, էջ 181—182)։ Հետաքրքրական է, որ Մուրադ բեյն ընդունելով Թուրքիայում պառլամենտարիզմ մտցնելու հնարավորու-

* Մուրադ բեյը նույնպես կովկասցի էր (Դաղստանից), երևսուն տարեկան, պատմության ուսուցիչ, ավարտել էր Պետերբուրգի համալսարանը, խոսում էր ռուսերեն և ֆրանսերեն։ 90-ական թթ. սկզբին նա Ստամբուլում լույս էր ընծայում «Միզան» թերթը, որտեղ համիդյան դիրքերից հակահայկական գիծ էր անցկացնում։ Հետո փախուստ տալով Կ. Պոլսից, նա հաստատվեց Կահիրեում, որտեղ սկսեց լույս ընծայել իր նոր թերթը միևնույն անունով։ Նրա գրչին է պատկանում «Թուրքիայի ուժն ու թուլությունը» գրքույկը, որը երիտթուրքական գրականության տարածում գտած գործերից էր։ Գերմանացի Ֆոն-դեր Հոլցը, որ քաջատեղյակ էր Արևելքի գործերին, ծանոթացել էր վտարանդի Մուրադի գրածներին, հարցազրույցներին ու տեղեկություններին, դրանք համեմատել էր Վամբերիի կարծիքների հետ, որոնք տեղ էին գտել ֆրանսիական «Ռևյու դե ռևյու» ամսագրում (1897 թ., դեկտեմբեր) հրապարակված նույնպես «Թուրքիայի ուժը և թուլությունը» վերնագրով հոդվածում։ Գերմանացի գեներալը Վամբերիի ու Մուրադ բեյի անհամոզիչ պնդումներին անդրադարձել էր «Դոյչե Ռունդշաու» ամսագրում տպագրած իր գրախոսականում (10, № 18, 1898), Կորաններ կարդալով երիտթուրք խմբագրի դլխին։

թյուններն ու առավելությունները, միաժամանակ գտնում էր, թե թուրք հասարակությունը տակավին հասունացած չէ պառլամենտական կառավարման համար։ «Միզան» թերթը 1897-ին հանդես եկավ Թեսալիան Թուրքիայի կազմում պահելու օգտին, Թրիկուլա քաղաքից թուրքական զորքերը հեռացնելու դեմ (12, № 109, 1897)։ Ճնշված ժողովուրդների ազատագրության հարցերում ըստ էության ոչ մի տարբերություն չկար սուլթանի ու նրա քաղաքական հակառակորդների միջև։

Սուլթանի բանագնացները ժամանակ առ ժամանակ գնում էին Փարիզ և Լոնդոն բանակցելու երիտթուրքերի թերթերի խմբագիրներ Մուրադ բեյի (Միզան), Ահմեդ Ռիզա բեյի (Մեշվերեթ) և Սելիմ բեյի (Հյուրիեթ) հետ, նրանց տալիս էին պարգևներ, խոստանում անարգել Թուրքիա մտնելու արտոնություն, պատվավոր պաշտոններ՝ միայն թե նրանք հրաժարվեին իրենց գործունեությունից։ Շատերը հրաժարվում էին հետագա պայքարից, հանձնվում սուլթանի ողորմածությանը, մյուսները շարունակում հին ընթացքը։ Մուրադ բեյը, որ մահվան պատժից խուսափելով, Եվրոպայում թղթի վրա ջանքուփշուր էր անում օսմանյան ամբողջ վարչությունը՝ Բալթանից սկսած մինչև ամենահետին պաշտոնյան, շոյվեց սուլթանից և վերադարձավ Կ. Պոլիս։ Նրան բարձր պաշտոն տվին։ «Ճոճոան ֆրազների տակ պստիկ հոգի բովանդակող և անձնական շահերի հետամուտ եղող մարդու մի հետաքրքրքրական տիպ է այդ Մուրադ բեյը»,— կարդում ենք «Նոր դարի» էջերում։

Պատասխանելով «Իքդամ» թերթի խմբագրի հարցերին, Մուրադն իր Եվրոպա մեկնելը պատճառաբանում էր հայրենասիրությամբ, այն իմաստով, որ հայկական հարցի առընչությամբ օսմանցիների և իսլամության հասցեին Եվրոպայում տարածում գտած ոտնձգություններին հակահարված տար։ Նա ցավ էր հայտնում, զղջում իր երբեմնի հրատարակությունների համար (12, № 144, 1897)։ Նա բացահայտ դավաճան դուրս եկավ։ Կ. Պոլիս վերադառնալով նա Ելդրզ-Քեոշկին հանձնեց այն անձանց լրիվ ցուցակը, որոնք նրա հետ քաղաքական նամակագրություն էին ունեցել, տեղեկություններ հայտնել Թուրքիայից։ Բազմաթիվ մարդիկ զնդան նետվեցին, պատժվեցին։ Հետո Եգիպտոսում, Ֆրանսիայում և Շվեյցարիայում եղած ժամանակ իր ստացած բոլոր նամակները և երիտասարդ թուրքերի մասնաժողովի նախագահ եղած ժամանակ այդ մասնաժողովի ունեցած գրագրությունները Մուրադ բեյը Փարիզից Կ. Պոլիս բերել տվեց սիրիացի Ալեքսանդր էֆենդու ձեռքով և հանձնեց սուլթանին (12, № 149, 1897)։ Թերթերը գրում էին, որ երիտթուրքական շարժման մասնակիցներից շատերը հետամուտ էին միայն անձնական նպատակների։ «Հենց որ այդ նպատակներին հասան, նրանց զայրույթը վերջացավ կարծես մի մոգական գավազանի զորությամբ»։ Նման վարքագիծ դրսևորեցին Փարիզում 1891-ից հրատարակված «Լյա թուրքիե կոնտեմպորեն» թերթի երիտթուրք հրատարակիչները, Լոնդոնում 1892-ից հրատարակված «Լյա թուրքիե» լրագրի ղեկավարները։ Լոնդոնում հրատարակված «Հյուրիեթ» թերթի երիտթուրք խմբագիրը պարտավորվել էր փակել թերթը, միայն թե իրեն արտոնություն տրվեր Բեյրութում ջրանցք շինելու (12, № 172, 1897)։

Ինչպես երիտթուրքերի, այնպես և հայկական կազմակերպությունների հետ կապի մեջ մտած Համիդ II-ը ձգտում էր ամեն գնով հասնել նրանց գործունեության չեզոքացմանը։ 1897-ի նոյեմբերին սուլթանն այդ նպատակով Փարիզ ուղարկեց Գևորգ Բլբուլյանին (էդիրնեի նախկին ընդհանուր դատախազ), փորձելով Փարիզի իր դեսպան Մյունիր բեյի միջոցով, հայ կազմակերպություններին խոստումներ տալու ճանապարհով չեզոքացնել նրանց (13, № 12, 1899, էջ 186—191)։

□

Ինչպես հայոց քաղաքական կուսակցությունները, այնպես և երիտթուրքերի գաղափարական ակտիվ գործունեությունը ծավալվել էր եվրոպական կենտրոններում։ Այստեղ էին տպագրվում նրանց թերթերը, դումարվում ժողովները։ Թե՛ հայկական, թե՛ թուրքական գործիչները ձգտում էին իրենց դատին հաղորդակից դարձնել եվրոպական դեմոկրա-

տական շրջաններին, նրանց ծանոթացնել ժողովրդի դարդոտ-ցավին, իրենց նպատակներին ու ծրագրերին։

Փարիզի երիտթուրքական վտարանդիության տիրապետող մտայնությունը օսմանյան կայսրությունն իր կենտրոնաձիգ իշխանությամբ, առանձնահատուկ թուրքական տիրապետությամբ պահպանելն էր, որի իշխող գաղափարախոսությունը լինելու էր թուրքիզմը։ Նրանք գիտեին, որ դեմոկրատիայի հաստատումով թուրքերը հեշտությամբ կարող էին կորցնել իրենց արտոնյալ վիճակը կայսրության գործերում, մանավանդ որ ամբողջ բնակչության մեջ փոքրամասնություն էին կազմում։ Այդ պահին զարկ տրվեց թուրքական ռասայի առաջնայնության, նրա ղեկավարությամբ քաղաքական միություն ստեղծելու քարոզին։

Ժխտելով ազգային-ազատագրական շարժման ինքնաբուխ բնույթը, Ռիզա բեյը, Մուրադ բեյը և մյուսները ամեն ինչ վերագրում էին դիվանագիտությանը, սուլթանական լուծը թոթափելու հայերի ցանկությունը նրանք համարում էին անընդունելի մի բան թե՛ պետական և թե՛ կրոնական առումով։ Երիտթուրքերի գաղափարախոսները ոչ միայն փորձում էին ապացուցել անկախության համար ոչ թուրք ժողովուրդների պայքարի աննպատակահարմարությունը, այլև ժխտում էին դրանում նրանց իրավունքը։ Եվ ամեն անգամ դիմում էին սպառնալիքների։

Թուրքերը քրիստոնյա ազգություններից ետ էին մնում ոչ միայն սոցիալ-տնտեսական ու կուլտուրական մակարդակի, այլև ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման, ազգային գաղափարների զարգացման առումով (23, էջ 187)։ Երիտթուրքերը դեռ չէին բարձրացել ճնշված ազգերի առաջադիմական ուժերի բնական պահանջներն ըմբռնելու մակարդակին։ Նրանք ի վիճակի չէին ընկալելու «ազգությունների բնական ձգտումը» պոկվելու օսմանյան կայսրության ամբողջությունից և անկախ գոյությամբ «բնազդաբար որոշելու սոցիալական ավելի բարձր զարգացման ուղի» (7)։ Երիտթուրք «տեսաբանները» չէին ըմբռնում, որ չէր կարելի թուրքական տնտեսության հետամնացության պատճառները միակողմանիորեն փնտրել միմիայն օտարերկրյա տերությունների վարած քաղաքականության մեջ։ Օսմանյան կայսրության հետամնացության սոցիալ-տնտեսական արմատները շատ խորն էին թաքնված թուրքերի ցեղային, ազգային, կրոնական ու պետական ինստիտուտների էության մեջ։ Իրողությունն այն է, որ իրենց դարավոր տիրապետության ընթացքում թուրք տիրակալները հսկայածավալ տարածքների վրա ավելի քանդեցին, քան շինեցին, ավելի վայելում էին, քան վերարտադրում։

Ինչպես «նոր օսմանները», երիտթուրքերի պարագլուխները նույնպես կարծում էին, որ սուլթանին դիմելով, նրա ուշադրությունը սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրների լուծման անհրաժեշտության վրա հրավիրելով, կհաջողեին բարելավել երկրի վիճակը։ Ահմեդ Ռիզա բեյը 1889—1894 թթ. յոթ անգամ դիմեց Աբդուլ Համիդին, նրան կոչ անելով վերականգնել սահմանադրական կարգը (28, էջ 169)։ Տեղեկանալով, որ Ահմեդ Ռիզան սուր կերպով հանդես էր եկել դաշնակցական ու հնչակյան կոմիտեների հակասուլթանական գործողությունների դեմ, որ նա դեմ էր արտահայտվել հայկական անկախ պետության կազմավորմանը, Աբդուլ Համիդ II-ը որոշել էր ներում շնորհել Ահմեդ Ռիզա բեյին և նրան իրավունք տալ վերադառնալ հայրենիք (28, էջ 182)։

Միայն երիտթուրքերի մեծապետական արհամարհական վերաբերմունքով պետք է բացատրել այն փաստը, որ հայկական հարցի էությունը երբեք ճշմարիտ մեկնաբանություն ու բացատրություն չէր ստանում իրեն հեղափոխական հորջորջած վտարանդիական թուրքական մամուլի էջերում։ XIX դարի 90-ական թթ. կեսերին, երբ հայկական հարցի շուրջը, օսմանյան կայսրության ներքին լարմանը զուգընթաց, դիվանագիտական ակտիվությունը հասավ իր գագաթնակետին, երբ սուլթանի որոգայթներին զոհ էին դառնում բյուրավոր հայ մարդիկ, իսկ մեծ տերությունների ռազմական միջամտությունը կարծես թե ռեալ բան էր ներկայանում, երիտթուրքերն իրենց թերթերի էջերում ճնշվածներին չէին պաշտպանում, արդարության ու մարդկայնության գաղափարները մոռացել ու թուրք մեծապետական շահերն էին գուրգուրում։ Նրանք հայ ժողովրդի մասին դատում էին Կ. Պոլսի ու առափնյա մյուս քաղաքների հայ փողատեր-ունևոր դասա-

կարգերի օրինակով։ Հայ բուրժուազիան անխտիր ներկայացվում էր որպես բացասական կատեգորիա, որպես թուրք ժողովրդի գլխավոր տգրուկներից մեկը։

Միտումնավոր կերպով մոռացության էին տրվում արևմտահայ գավառական զանգվածները, նրանց հոգսերն ու ոգորումները։ Արևմտաեվրոպական բուլվարային մամուլի ներկայացուցիչներն էլ Բոսֆորից արևելք չէին անցնում և իրենց լրագրային մարզանքները սկսում ու ավարտում էին Կ. Պոլսի փողոցներով ու սրճարաններով։ Երիտթուրքերը հայրենիքին սպառնացող վտանգը տեսնում էին հայկական բարենորոգումների, մեծ տերությունների ակտիվ քաղաքականության մեջ։ Երբ 1896-ի հունիսին Փարիզում Արշ. Զոպանյանը հրատարակեց Հայաստանից գրված նամակների մի հավաքածու՝ պարզ ու ահավոր նկարագրություններով (Ժորժ Կլեմանսոյի հոդված-առաջաբանով), հասարակությունը զայրացավ։ Երիտթուրքերը ցնցվեցին, անհանգստացան և հակամիջոցների դիմեցին։ Պատահական չէ, որ Համիդին գահընկեց անելու դավադրությունը նախատեսվում էր 1896-ի օգոստոսին, երբ հայոց կոտորածի առիթով ռեալ բան էր թվում տերությունների միջամտությունը (28, էջ 190)։ Հետո Համիդը երևան բերեց իթթիհադի կողմից իր անձի դեմ սարքված դավադրությունը և շատ շատերի բանտ նետեց կամ աքսորի դատապարտեց։ Հեղաշրջման մյուս փորձը երիտթուրքերն արեցին 1897-ի օգոստոսին։ Ձախողված կազմակերպիչները ձերբակալվեցին։ Կառավարությունը կազմակերպեց դատական պրոցես դավադիրների նկատմամբ։ 13 մարդ մահապատժի ենթարկվեց, 22-ը դատապարտվեցին ցմահ, մնացածները տարբեր ժամկետների բանտարկության։ Երիտթուրքերին հարելու ամբաստանությամբ ձերբակալել էին նույնիսկ սուլթանի հարեմի կանանցից 14 հոգու (12, № 128, 1897)։

Երբ ֆրանսիական դատարանը դատում էր Ահմեդ Ռիզային և մյուսներին սուլթանին վիրավորելու ամբաստանության համար, Ստամբուլից Փարիզ ժամանած սուլթանի պատվիրակ Զիա փաշան կաշառք էր առաջարկում ֆրանսիական թերթերին, որպեսզի նրանք պաշտպանեին թուրքական կառավարությանը։ Դատարանում հանդես եկած Կլեմանսոն պահանջում էր չդատապարտել Ահմեդ Ռիզային, քանզի, իր ասելով,

Գլադստոնն էր սուլթանին անվանել «մեծ մարդասպան» և ոչ թե երիտթուրք գործիչը (12, № 130, 1897)։ Դատարանը բավարարվեց ամբաստանյալներին տուգանելով։ Իհարկե ֆրանսիական հասարակական-քաղաքական գործիչները չէին էլ կարող սպառիչ պատկերացում ունենալ երիտթուրքերի մասին։ Ոմանք նրանց հետ հույսեր էին կապում, մյուսները կարողացել էին ըմբռնել, թե նրանցից ով ինչ էր իրենից ներկայացնում։ Ահավասիկ ինչ է ասել ֆրանսիական սոցիալիստ, Ժան Ժորեսի համախոհ, «Յումանիտե» թերթի հիմնադիրներից Ֆրանսիս դը Պրեսանսեն երիտասարդ թուրքերի մասին. «Նրանց ինչ լինելը ես շատ լավ գիտեմ. համոզված եմ, որ նրանցից ամեն մեկը մի-մի սուլթան Համիդ է. Ահմեդ Ռիզայի ինչ տեսակ մոլեռանդ թուրք լինելը ես շատ լավ գիտեմ։ Նրանք բոլորը եվրոպատյաց, քաղաքակրթության թշնամի, արյունախում մարդիկ են. ոչ նրանց ծերին պիտ հավատալ, ոչ էլ երիտասարդին» (15, էջ 214)։ Ահմեդ Ռիզան փորձում էր «խաղաղ առաջադիմական» ներկայանալ, հեռու մնալ հեղափոխական շարժումից, իր մտքերն ու առաջարկություններն իբր բխեցնում էր պոզիտիվիստական փիլիսոփայության դրույթներից։ Սա էլ պայմանավորված էր նրանով, որ Փարիզում թուրք գործիչն իր ազատ ժամերին հետևում էր «Կոլլեժ դե Ֆրանսի» դասընթացներին, լսում Ֆրանսիայի հայտնի պոզիտիվիստ փիլիսոփաներ Օգյուստ Կոնտի և Պիեռ Լաֆիտի դասախոսությունները։ Սակայն Ահմեդ Ռիզան հեռու էր հասարակական ու տնտեսական պրոբլեմները ուսումնասիրելու և ըմբռնելու կարողությունից։ Նա անտարբեր էր բանվորական, եվրոպական սոցիալիստական շարժմանը, ծանոթ չէր մարքսիզմին։ Միաժամանակ, Ահմեդ Ռիզան Պիեռ Լաֆիտի միակ թուրք ուսանողն էր, որին նա ծանոթացրեց Ֆրանսիայի վերնախավի հետ, Փարիզի պետական մարդկանց հաղորդակից դարձնելով նրա հետապնդած գործին ու կուսակցական նպատակներին։ Պիեռ Լաֆիտին մոտ կանգնած ֆրանսիական թերթերի խմբագիրները թուրքասիրական նյութերի հեղեղ էին սարքում, Թուրքիայի գոյության իրավունքը հավաստելով, հունական ու հայկական «խռովությունները» դատապարտելով։ Սրանց փիլիսոփայությունը հանգում էր այն մտքին, թե պետք է թուրքական պե-

տությանը հանգիստ թողնել, որպեսզի նա խաղաղ և հանդարտ կերպով, աստիճանաբար զարգանա և վճռի իր ներքին խնդիրները։ Ահմեդ Ռիզան ու ֆրանսիական պոզիտիվիստները Թուրքիայում հեղափոխությունը ժխտողների և պախարակողների դերում էին։ Նրանք հավերժացնում էին ճնշված ժողովուրդների ստրկական վիճակն այդ պետության ճիրաններում։ Երիտթուրքական գաղափարախոսներն իրենց ֆրանսիացի համակիրների հետ միասին ջանք չէին խնայում ֆրանսիական հասարակական կարծիքը հայոց դեմ ուղղելու համար։

Ֆրանսիական «Ժյուստիս» (արդարություն) թերթը տարեկան 4000 ֆրանկ էր պահանջել հայկական հարցի լուսաբանմանը շաբաթական երկու սյունակ նվիրելու համար։ Իսկ միաժամանակ հեշտությամբ տեղ էր տալիս սուլթանի խրախուսած հակահայկական ստահոդ լուրերին։ Ընդհանուր առմամբ, իհարկե, «երիտասարդ թուրքերը Եվրոպային տակավին որևէ լուրջ համակրանքի հայտարար ապացույց մը չունեցան» (13, № 14, 1900, էջ 211)։ Բայց մասնավորություններում եվրոպական հասարակական կյանքի տարբեր թևերը ինչ խոսք որ տարբեր մոտեցումներ դրսևորեցին։

Երբ 90-ական թվականների կեսերին հայոց հակաթուրքական ընդվզումը թևակոխեց իր վերելքի շրջանը, Ահմեդ Ռիզայի ֆրանսիացի ուսուցիչները շատ զարմացան։ Նրանց կարծիքով Կ. Պոլսի մի քանի հարյուր վաշխառու հայ կաթոլիկներից բացի հայ ժողովուրդ չկար։ Ֆրանսիացի փիլիսոփան հայ ժողովրդի մասին իր գիտելիքները քաղել էր... Ահմեդ Ռիզայից, որը հայոց հեղափոխական ելույթների մասնակիցներին ու ղեկավարներին ներկայացրել էր որպես ռուսական կառավարության գործակալներ։

Փարիզում Աղաևը մի հրապարակային դասախոսության մեջ հայտարարեց, թե Թուրքիան, Աֆղանստանը, Կովկասը, Պարսկաստանը, Թուրքեստանը պետք է միանան և Կովկասյան լեռնաշղթայից մինչև Պարսից ծոց, Ալթայան լեռներից մինչև Միջերկրական ստեղծեն մի ամբողջություն՝ թուրանա-թուրքական ցեղերին պատկանող մի պետություն։ Նա չէր խորշում մյուս ցեղերի ոչնչացման, ձուլման մասին խոսելուց։ Այդ ծրագրի իրականացման ճանապարհին Աղաևը հայոց պետության ստեղծման հնարավորությունը համարում էր մի սոսկալի չարիք, որի վերացումը կարևորագույն խնդիր էր հռչակում։

Ահմեդ Ռիզայի «Մեշվերեթ» թերթի գլխավոր քաղաքական գիծը հակառուսականությունն էր։ Երիտթուրքերի պարագլուխները ձգտում էին կապեր հաստատել եվրոպական առաջադիմական, նաև սոցիալիստական շրջանների հետ։ Նրանք փորձում էին վարկաբեկել հայկական ազատագրական պայքարը, հայկական կուսակցություններին, հոդվածներ էին զետեղում ֆրանսիական, գերմանական մամուլի էջերում։ Քիչ չէին դեպքերը, երբ գործադրվում էին անթույլատրելի մեթոդներ, երբ գիտակցաբար կատարվում էին խեղաթյուրումներ, կեղծիքներ՝ ապակողմնորոշելու համար եվրոպական հասարակական-քաղաքական կարծիքը։ Ժամանակ առ ժամանակ եվրոպական պառլամենտների ամբիոններից արտասանված ճառերում, թե մամուլի էջերում տպագրված հոդվածներում հայ-թուրքական հարաբերությունների հարցը միախառնվում էր եվրոպական քաղաքականության ելևէջներին ու տարուբերումներին։

Ֆրանսիական բուրժուական մամուլը խիստ վնասակար դիրք էր բռնել հայոց խնդրի արծարծումներում։ Հարյուրավոր տաճիկ, արաբ ուսանողներ, որ սովորում էին Ֆրանսիայում, ճշգրիտ պատկերացում չստացան այդ թերթերից հայոց պայքարի նպատակների ու ծրագրերի մասին։ «Ֆրանսիական մամուլը, եթե ոչ ուղղակի, գեթ կողմնակի կերպով առիթ եղավ,— այն օրերին «Նոր դարի» էջերում Փարիզից գրում էր Սապահ Գուլյանը,— որ այսօր նույնիսկ ազատամիտ անվանված թուրք կուսակցությունն ավելի մեծ թշնամանքով է վերաբերվում դեպի հայկական շարժումը, քան յուր մոլեռանդ հավատակից-հայրենակիցները։ Այդ լրագրերի հայկական խնդրի բնավորության սխալ ըմբռնումը տեղիք տվեց այդ quasi (հազիվ թե)— ազատամիտ ասված թուրք լամուկներին կարծելու, թե հայը գործիք է դարձած այս ու այն պետության, թե նրա բաղձանքն ուղղակի հակառակ է օսմանյան ազգային-պետական շահերին» (16)։

Հակառակ հայանպաստ ժողովների ընդունած բանաձևերի, Լոնդոնում գումարվում է մահմեդականների մի միտինգ,

որը բողոքի բանաձև է ընդունում Լոնդոնի թերթերի դեմ, որոնք նկարագրել էին թուրքերի գազանությունները հայերի նկատմամբ։ Շնորհավորական հեռագիր հղվեց թուրքական բանակին։ Միտինգը արձանագրեց. «Թուրքիան կկործանվի, եթե Հայաստանում բարենորոգումներ մտցվեն Բեռլինի դաշնագրի պահանջի համաձայն» (12, № 79, 1895)։

Վաշինգտոն ժամանած մի երիտթուրք գործիչ փորձում էր ազդել ամերիկյան հասարակական կարծիքի վրա, ապացուցելու համար, որ Համիդի իշխանությունից քրիստոնյաներից ոչ պակաս տուժում էին թուրքերը, որ Թուրքիան պետք էր բարեկարգել բոլորի, բայց ոչ միայն հայերի համար։ Այս երիտթուրքն իր հետ բերել և տարածում էր «Երիտասարդ Թուրքիա» բրոշյուրը, որն ապացուցում էր, թե թուրքերի դրությունը մի քանի տեսակետներից ավելի վատ է, քան հայերինը (12, № 49, 1895)։

Երբ Փարիզի կանայք մարդաշատ ժողով հրավիրեցին ի պաշտպանություն Համիդյան դահիճների հարվածներից նվաղող հայ ժողովրդի, իթթիհադական պարագլուխները շտապեցին իրենց «Մեշվերեթ» թերթում խրատ տալ ֆրանսուհիներին՝ չվնասել ֆրանսիական դիվանագիտությանն իրենց անխոհեմ խոսվածքներով։ Իսկ ամենահատկանշականն այն էր, որ «Մեշվերեթը» գայրացել էր «օսմանյան վեհապետության պատիվը, ազգի բարի համբավը» վիրավորելու համար (15, էջ 157)։ Ահա երիտթուրք «հեղափոխականների» հավատամքը. նրանք սուլթանի շարագործության փաստաբանների դերում էին։ Երիտթուրքերը կատաղում էին տեսնելով Փարիզի սրահների պատերին փակցված «Հայաստանը հային» լոզունգները։ «Մեշվերեթը» փորձում էր իր ընթերցողներին համոզել, թե հայերը վիպասաններ, բանաստեղծներ, դասական ու նոր գրականություն չեն ունեցել, որ նրանց կուլտուրան նույն թուրքական կուլտուրան է։

Իհարկե նման դատարկաբանությունները գործից անտեղյակ, հայ ժողովրդի պատմությանն ու կուլտուրային անծանոթ տգետ մարդկանց համար էին։ Բայց, այնուամենայնիվ, հետք էին թողնում, վնաս պատճառում։

Եվրոպացի ազնիվ, հումանիստ, դեմոկրատ մտավորականներն իրենց խոսքով ու գրչով հանդես էին գալիս ճշմարիտ դիրքերից, դատապարտում կեղծիքն ու սուտը։

Երբ Ալբերտ Վանդալը 1500 հոգանոց դահլիճում դասախոսություն էր կարդում հայկական հարցի մասին, երիտթուրք ուսանողներն աղմուկ-աղաղակով փորձում էին խլացնել ճշմարիտ խոսքը։ Թուրքական դաղտնի գործակալները, գնված մարդիկ ամեն ինչ արեցին խանգարելու Գաստոն Դիշոնի դասախոսությունը, որը տեղի ունեցավ Փարիզի «գիտնականների ընկերությանց» դահլիճում 1897-ի հունվարի 20-ին (12, № 33, 1897)։

Լոնդոնի «Թայմսի» հայտնի թղթակից Բլովիզին հաջողել էր ձեռք գցել և հրատարակել 1895-ի մայիսի 11-ի ծրագիրն ամբողջապես։ Դրանից հետո թե հին ու նոր, թե ծեր ու երիտասարդ թուրքերը միացան ապացուցելու հայոց բարենորոգում շնորհելու աննպատակահարմարությունը։ «Մեշվերեթը» միացավ այդ հորձանքին։ Իսկ Փարիզ ժամանած երիտթուրքերի կուսակցության դանձապահ Նազիմը, որին Ահմեդ Ռիզան հնչակ գործիչներին էր ներկայացրել «Կաֆե Վոլտեռում», սահմանադրության անհրաժեշտության թեզն էր զարգացնում։ Ժխտելով օսմանյան կայսրության տիրապետությունից ազատագրվելու ոչ թուրք ժողովուրդների իրավունքը, երիտթուրքական պարագլուխները փորձում էին ամեն ինչ վերագրել դիվանագիտական խարդավանքներին։ Այնինչ «այն պնդումները, թե Թուրքիայում տեղի ունեցած ապստամբություններն ու ազգային կռիվները իբր ցարական կառավարության գործակալների կողմից արհեստականորեն ստեղծված պուտչեր են, նույնքան «խորիմաստ են», ինչքան և բուրժուազիայի այն պնդումները, թե ժամանակակից բանվորական ողջ շարժումը սոցիալ-դեմոկրատական մի քանի խառնակիչների գործն է» (7, էջ 143)։

□

Ծովափնյա քաղաքներում իրենց տնտեսական գործունեությունը ծավալած, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի կենտրոններում իրենց հարստությունն ստեղծող ու մսխող արևմտահայ կոմպրադորներն ու նրանց զավակները, օտարեր-

կըրյա ծառայության մեջ մտնող հայազգի պաշտոնյաները տուրք էին տալիս օսմանյան կայսրությունը բուրժուական ուղիով առաջ մղելու երիտթուրքական հարցադրումներին, ժամանակ առ ժամանակ իրենց նյութական օժանդակություններով էական դեր խաղում թուրք վտարանդիության ծրագրերի իրականացման գործում։ Այդ մարդկանց վարքագծին հատուկ էր կոսմոպոլիտիզմը, սեփական ժողովրդի քաղաքական ձգտումների նկատմամբ օտարությունը։ Ինչպես որ գտնվեցին հայ փողատեր մարդիկ, պաշտոնյաներ, որոնք հավատարմորեն ծառայեցին Համիդի իշխանությանը, այնպես էլ հիմա ասպարեզ եկան ստահակներ, որոնք քայլեցին երիտթուրքերի հետ, ծառայեցին նրանց նպատակներին։ Երիտթուրքական գործիչները ճարպկորեն օգտագործում էին այդպիսի մարդկանց. իրենց շահերին համապատասխան։ Անհրաժեշտության դեպքում նրանք քծնում էին, շաղակրատում, երբ պետք էր լինում սպառնում էին, ահաբեկում։ Նման դեպքերի մասին կարելի է բազմաթիվ փաստեր հիշատակել։

Ահա թե այդ մասին ինչ է գրում Սապահ Գուլյանը. «Ո՞վ է թափանցել, կարդացել, հայելու վրա առել թուրքի հոգին, երբ նա հային պետք ունի, նրա օգնության անհրաժեշտությունն է զգում։ Այդ րոպեին նրա քծնանքը, շողոքորթությունը, ծամածռությունները բնորոշիչ, հատկանշական, ինքնուրույն ցեղային չե՞ն» (15, էջ 162—163)։ Երիտասարդ թուրքերը չէին թաքցնում, որ օգտվում էին հայերի օժանդակությունից։ Նրանք մի հայտարարություն էին հրապարակել, որտեղ օգնողների շարքում հիշատակվում էին նաև հույներն ու սերբերը (12, № 19, 1897)։

Կեսարացի, Փարիզում բժշկություն սովորող Նալբանդյանը դարձել էր շեմ իթթիհադական։ Նա հրապարակավ, ազգուկ-ազգակով բրոշյուր ընդունեց։ Այդ արարողությունը գլխավորեց, այն էլ մի առանձին հանդիսավորությամբ, դեսպան Մյունիր բեյը։ Նալբանդյանը դարձավ Մեհմեդ Ալի։ Թուրքական պրոպագանդան այսպիսի օրինակներով ուզում էր ցույց տալ եվրոպային, թե հայերը թուրքանում էին ոչ թե բռնի, այլ իրենց հոժար կամքով, որ Փարիզի համալսարանի ուսանողը կամավոր է հեռանում իր կրոնից ու ազգությունից և ընդունում իսլամն ու բրոշյուրը։ Ուրեմն անհիմն են արևմտահայության նկատմամբ բռնությունների, կոտորածների մասին խոսակցությունները (15, էջ 159)։

Հայկական հարցի դիվանագիտական արծարծումների մեջ փորձում էր դեր խաղալ Լոնդոնի պարսից դեսպան հայազգի Մելքոն խանը։ Նա որոշակի հեղինակություն ուներ դիվանագիտության մարզում, համարվում էր Պարսկաստանի «Միդհատ», խոսում էր սահմանադրական Պարսկաստանի մասին, մշտապես շփվում էր պարսից և թուրք ուսանողների հետ, որպես կանոն, խուսափելով հայկական շրջանակներից։ «Մին այն հայ իրական խելքերից, որ իսպառ, վարձու է տրվում օտարներին, առանց իր ազգի համար շոշափելի, հարատև, արդյունավետ, մնայուն մի բան անելու։ Նա դեսպան էր եղած, խանի տիտղոս ուներ, լավ հարստության տեր էր, Փարիզի մեջ ընկերային դիրք ուներ» (15, էջ 143)։

Երիտթուրքերն օգտվեցին նրա հեղինակությունից ու ծառայությունից։ Նա մի հոդված գրեց «Ռևյու դե Պարի» թերթում, որտեղ ըստ էության պաշտպանում էր երիտթուրքերի տեսակետները։ Ըստ Մելքոն խանի, եվրոպացիները չգիտեին Արևելքը և չպետք է միշամտեին Թուրքիայի ու Պարսկաստանի ներքին գործերին, նրանց երիտասարդներին թողնելով իրենց տան կառավարումը։ Նա գրում էր Թուրքիան ամբողջապես բարենորոգելու անհրաժեշտության մասին, դեմ խոսելով Հայաստանի բարենորոգումներին ու ինքնավարությունը։ Նա հակառակ էր առանձին ազգերի ազատագրական շարժումներին և շատախոսում էր օսմանյան կայսրության համապետական հոգսերի մասին։ Մելքոն խանը օսմանյան կայսրության ամբողջությունը պահպանելու փաստաբանի դերում էր։ Ինչպես հավաստում է Սապահ Գուլյանը, «իթթիհադականները մի առանձին հրճվանքի մեջ էին։ Ահմեդ Ռիզան մեզ տեսնելիս մի տեսակ սիգաճեմ քայլվածք էր առնում և ամբարտավանության հասնող ժպիտով հարցնում՝ տեսա՞ք» (15, էջ 144)։

Նա գրում է, որ հոդվածն ազդեցություն թողեց, նոր համակիրներ նվիրելով երիտթուրքերին։ Անվանի դիվանագետի հեղինակությունը դեր էր խաղացել։ Նրա օրինակին հետևելով, հայ դրամատերերը նյութապես օգնեցին իթթիհադին։ Զմյուռնացի հայտնի վաճառական Ս. Սպարթլյանը 2000 ոսկի էր տվել Ահմեդ Ռիզայի գլխավորած այդ կազմակերպությանը, որի շնորհիվ «Մեշվերեթ» թերթի ծավալը մեծացավ և

նրա ֆրանսերեն և թուրքերեն հրատարակությունները բոլորովին նոր, ճոխ տեսք ստացան։ Սրանք փաստեր են, որոնք շրջանցել հնարավոր չէ, երբ խոսում ես երիտթուրքական շարժման մասին։ Սրանք փաստեր են, որոնց իմացությունը խիստ կարևոր է արևմտահայության քաղաքական ճակատագրի նրբերանգներն ըմբռնելու համար։

Ահմեդ Ռիզան փորձել էր Նուբար փաշային նույնպես հանդես բերել հօգուտ իրենց փայփայած ծրագրի, սակայն նպատակին չէր հասել. նա հրաժարվել էր այդ առաջարկությունն ընդունելուց։ Նորածին իթթիհադը բոլոր միջոցներով ձգտում էր խափանել հայոց ինքնուրույնության դրսևորումները, խանգարել արևմտահայության վիճակի բարելավմանը։ Հին ու նոր թուրքերի շահերը նույնն էին։

Մելքոն խանը երբեմն կատարում էր նաև սուլթան Աբդուլ Համիդի հանձնարարությունները։ Նա գնացել էր ֆրանսիացի Անրի Ռոշֆորի* մոտ, նրան խնդրելով ընդունել սուլթանի բանագնաց Ջեմալէդդին փաշային, որի նպատակն էր կաշառել հայ հեղափոխականներին, ապակողմնորոշել եվրոպական հասարակական կարծիքը։ Մելքոն խանին այդ խնդրով դիմել էր Կ. Պոլսի հայտնի մեծահարուստ Արթին փաշա Դադյանը։ Ջեմալէդդինը Ռոշֆորին ցույց էր տվել արդեն կաշառված եվրոպական գործիչների անունների ցուցակը։ Այստեղ էր նաև Գերմանիայի Վիլհելմ կայսրի անունը, որն ստացել էր 6 միլիոն ֆրանկ։ Ռոշֆորն ամեն ինչ մանրամասնությամբ հրապարակեց մամուլում։

Քիչ չէին այն սարկամիտ հայ հեղինակները, որոնք Ահմեդ Ռիզայի թելադրանքով թերթերի էջերում շարադրում էին «իրենց» տեսակետները հայոց հարցի շուրջը, տուրք տալով թուրքական խորամանկ խաղերին։ Սրանք գրում էին, թե սիրում էին թուրքերին, թե շնորհակալ էին իրենց դրության համար, որ գանգատ չունեին և միայն ցանկանում էին վերահաստատված տեսնել սահմանադրությունը Թուրքիայում։ Վատն այն էր, որ սրանց բերանով մեջտեղ էին բերում երկրի ամբողջականության պահպանման գաղափարը, դատապարտում էին ամեն տեսակի անջատողական դրսևորում, մասնավոր բարեկարգությունների անհրաժեշտությունը։ Հատկապես աչքի էր ընկել պոլսեցի կաթոլիկ Ալանյանը, որը հանդես էր գալիս իթթիհադի ջերմեռանդ պաշտպանությամբ։ Հայ հրապարակախոսներից ոմանք ընդհանուր առմամբ ճիշտ կողմնորոշվելով թուրքիզմի հարցում, ըմբռնելով նրա հայավնաս էությունը, երբեմն չէին խորանում երևույթների, մարդկանց, նրանց գործերի մեջ և գրավոր ու բանավոր խոսքում անում էին մակերեսային պարզունակ դատողություններ։

Խոսելով Ռիզա բեյի մասին, Արփ. Արփիարյանը ժամանակին նկատել էր, որ «Մեշվերեթի» խմբագիրը «պարկեշտ հայրենասեր մըն է, որուն հետ կրնանք թշնամանալ, բայց զոր չենք կրնար արհամարհել» (13, № 21, 1900, էջ 326)։ Ինչ խոսք, որ «պարկեշտ» բառը երբեք տեղին չէր։

«Մեշվերեթն» ուներ հայ խմբագիրներ և թղթակիցներ։ Նրանցից մեկը «Օսման» կեղծ անվան տակ հոդվածներ էր գրում միայն հայերի համար բարենորոգումներ անցկացնելու եվրոպական դիվանագիտության հարցադրման դեմ։ Չէ որ եվրոպական դիվանագիտության հարցադրման դեմ։ Չէ որ ներիտթուրքերը մայիսի 11-ի ծրագիրը համարում էին անջատողականության սաղմ, ինքնուրույնության սկզբնավորում։ Իսկ հայ մարդիկ այդ ծրագիրն ընկալում էին որպես «հայ պատմանհատական գոյության մի փոքրիկ նախապայման, տարրական երաշխիք»։ Ըստ էության «Մեշվերեթը» վեց նահանգների և հայ ազգի վերաբերյալ նույն բանն էր ասում, ինչ որ սուլթան Համիդի տիտղոսավոր ներկայացուցիչները» (15, էջ 142—143)։ Ահավասիկ թե ինչ էր ասում մի երիտասարդ թուրք 1895-ի մայիսյան ծրագրի առիթով. «Եթե ծրագիրը ստորագրենք, Հայաստան մը ստեղծած կըլլանք, մեր կայսրության ձեռքեն պիտի ելնեն ոչ միայն մեր ամենաբերրի գավառները, այլև գործոն ժողովուրդ» (8, № 12, 1895, էջ 164)։

1895-ի վերջերին մայիսի 11-ի ծրագրի մոտալուտ ընդունման ազդեցության տակ դեմքին կեղծ ժպիտ խաղացնող, բայց թույնով լցված երիտթուրքական շարժման գլխավոր տեսաբաններից դոկտոր Նազիմը Սապահ Գուլյանին ասում

* Անրի Ռոշֆոր (1831—1913)— ֆրանսիական հայտնի հրապարակախոս, քաղաքական գործիչ։ 1897-ին մասնակցել էր Կրետե կղզու հակաթուրքական ապստամբության կազմակերպմանը։

էր. «Վերջապես առաք բարի վայելում, դարձյալ որպես եղբայրներ միասին պիտի լինենք։ Դուք պետության արևելյան թումբը պիտի կազմեք և մեր ընդհանուր վերածննդի օրինակը, պատճառը դառնաք... էլ մոռանանք մեր կռիվները...» (15, էջ 16)։ Ինչ խոսք, որ սա երեսպաշտություն էր, որի ետևում թաքնված էր ահավոր չարություն։

Արփ. Արփիարյանը նկարագրել է 1895-ի սկզբներին Փարիզում կայացած հայ-թուրք համատեղ ժողովը, ուր քննարկվում էին համագործակցության խնդիրները։ «Ջերմ ու երկարատև վիճաբանությունները կարելի եղավ հասկընալ թե ընդհանուր փափագ մը կար հայ երիտասարդներուն մեջ թուրքերուն հետ համաձայնությամբ օսմանյան կայսրությունն օժտել ավստրիականին մոտեցող կազմակերպությամբ մը, որուն մեջ Հայաստանը Հունգարիո տեղը պիտի բռներ»։ Այնուհետև նա զգում է, թե «բարի տրամադրություններ դուրս ուրիշ որևէ ուժի վրա կռթնելու դրություն չունեին» հայ, թուրք միացյալ հավաքները և «անօգուտ է» համարում մասնակցել նրանց (13, № 21, 1900, էջ 324)։

Փարիզում Արփ. Արփիարյանը Արշ. Զոպանյանի միջոցով տեսակցում է Ռիզա բեյի հետ, որի անունը նա լսել էր տակավին Կ. Պոլսում։ Երկու ժամ տևած տեսակցությունից նա գալիս է այն հետևության, որ հայ գործիչների ու երիտասարդ թուրքերի համագործակցությունը կարող էր օգտակար լինել, բայց «ծրագրի մը վրա համաձայնությունը դժվարին կերևար»։ Արփիարյանը թեև պակասավոր է համարել Ռիզայի ծրագիրը, որը բավարարում էր լոկ միդհատյան սահմանադրության վերականգնումով, այնուամենայնիվ, հարկ չէր համարել վիճել։ Սակայն այն պահին նա մտածում էր «հետաձգել տալ Թուրքիո այլևայլ նահանգներուն քաղաքական կամ տնտեսական գրավումը եվրոպական պետությանց կողմեն», որից հետո կարողանալու էին «հանդարտորեն խորհել Թուրքիո փրկության համար» այլ ծրագրերի կենսագործման միջոցով (13, № 21, 1900, էջ 324)։

Արփիարյանը Հայաստանը Թուրքիայից անջատելու մասին չէր մտածում։ Նա խոստանում է Լոնդոն վերադառնալուց հետո կենտրոնի հետ համաձայնեցնել «ավելի հիմնավոր բանակցությանց սկզբնավորման» հարցը։

Լոնդոնում արդեն ստացվել էր «Միզան» թերթի հրավերը «աջ կարկառելու» երիտթուրքերին։ Արփ. Արփիարյանը գրում է, որ «Միզանի» խմբագիր Մուրադ բեյը մինչ այդ Փարիզի «Ֆիգարոյի» խմբագրի հետ ունեցած իր տեսակցությունների ժամանակ «նախատած էր հայ ազգը»։ Ըստ Մուրադի «հայը պարզապես թուրքին ծառայելե զատ ուրիշ առավելություն մը չէր կրնար ունենալ» (13, № 21, 1900, էջ 324)։ Իսկ այժմ այս հայատյաց գործիչը ոչ միայն համատեղ պայքարի կոչ էր անում, այլև «նիզակածցության մեջ հրամանատարությունը մեզի հանձնելու առաջարկություն կներկայացներ»։ «Կռվին մեջ հրամայողը դուք եղեք և մենք հնազանդինք ձեզի»,— երեսպաշտորեն հայտարարում էր «Միզան» թերթի տնօրենը Արփ. Արփիարյանին ու մյուսներին։ Սա առաջին դեպքն էր, որ հակասուլթանական պայքարում երիտասարդ թուրքերը «հայոց ուղղակի դիմում կընեին» (13, № 21, 1900, էջ 324—325)։

Խնդիրը քննարկելու նպատակով Լոնդոն են հրավիրվում այլ հայ ընկերներ։ 1896-ի ապրիլի սկզբին հարցը ենթարկվում է համատեղ քննարկման։ Ռիզա բեյը ֆրանսերեն գրած իր նամակով պարզել էր երիտթուրքերի առաջարկները, որոնք միաբան գործակցության խնդիրը պիտի կազմեին։ Դիվանագիտական նրբին շնորհներով օժտված Ռիզան ուղարկել էր իր այցաքարտը հայերեն տառերով, բայց թուրքերեն լեզվով՝ ինքնագիր մի քանի գեղեցիկ խոսք վրան գրված։ Ռիզա բեյը հաղորդել էր, որ եթե միդհատյան սահմանադրության վերականգնման մտքին հավանություն տրվեց, ինքը պատրաստ էր Լոնդոն ժամանել մանրամասները քննարկելու համար։

Արփ. Արփիարյանը գրում է. «Մենք սակայն այդ առաջարկներուն ոչ հաստատական, ոչ մերժողական պատասխան մը տալ որոշեցինք։ Երիտասարդ թուրքերուն հետ միասին օսմանյան կայսրության կացությունը հիմնովին քննելե հետո ծրագիր մը պատրաստելը ավելի նպատակահարմար համարեցինք»։ Սուրեն Սուրենյան անունով մեկը, որ վերակազմյալ հնչակների կենտրոնի անդամներից էր, ուղարկվում է Փարիզ հանդիպելու Ռիզայի հետ։ Հանդիպումը տեղի է ունենում, Սուրենյանը վերադառնում է Լոնդոն, սակայն «նույն օրերը ներքին խնդիրներ ծագելով, այլևս մոռացվեցավ երի-

տասարդ թուրքերուն հետ հարաբերության գործը» (13, № 21, 1900, էջ 325)։

1896-ի օգոստոսին, երբ Ռիզա բեյը Լոնդոն է գալիս անգլիական պաշտոնատար մարդկանց հետ հանդիպելու, նրանցից խորհուրդ է ստանում հայոց հետ կապերի մեջ մտնել։ Լոնդոնում, թե Փարիզում տեղի են ունենում նոր հանդիպումներ։ Արփ. Արփիարյանը հիշում է, թե «Միզանի» խմբագիր Մուրադը ինչպիսի արհամարհանքով էր արտահայտվել իր համակուսակիցների հասցեին. «Անոնք թուրք են, ի՞նչ կհասկրնան քաղաքական խնդիրներե և վարչական գործերե. ես անոնց պես չեմ, վասնզի դաղստանցի եմ»։ «Թուրք» անունը նա արտասանել էր «արհամարհական ուժգին շեշտով» (13, № 21, 1900, էջ 325)։ Երիտասարդ թուրքերի ներքին գժտությունները, Մուրադի այդպիսի կեցվածքը պարտավորեցնում էին զգուշավոր լինել։ Ռիզան և մյուսները հայերից պահանջում էին բավարարվել միդհատյան սահմանադրության վերականգնման համար համատեղ պայքարով և հրաժարվել ինքնավար Հայաստանի պահանջից։ «Մեր պատասխանը եղավ. Հայաստանի ինքնավարության դատը ամբողջ հայ ազգին սեփականությունն է։ Ոչ պատրիարքը, ոչ ազգային ժողովը, ոչ որևէ կուսակցություն իրավունք ունի առանց ամբողջ ազգին արտոնելու, հանուն ազգին այդ դատին հակառակող որևէ հանձնարարության ներքև մտնել։ Մենք կուսակցություն մըն ենք, և մեր իրավասության շրջանակին մեջ կրնանք խոսիլ միայն» (էջ 325)։ «Որպեսզի հնարավոր ըլլա օսմանյան սահմանադրությունը վերակենդանացնել, հարկ է նախ և առաջ սուլթանը չեզոքացնել»,— հայտարարեցին հայ գործիչները (13, № 21, 1900, էջ 325)։ Իսկ սուլթանին նեղացնելու և ոչ մի միտք չունեին երիտասարդ թուրքերը. նրանք «կրմբոստանային սուլթանը չեզոքացնելու գաղափարին դեմ»։ «Իրարմե բաժնվեցանք առանց որևէ վերջնական կարգադրության մը»,— ասում է Արփ. Արփիարյանը։

Հիրավի, երիտթուրքերը միայն ձգտում էին հայերին, նրանց շարժումը ծառայեցնել իրենց նպատակներին, չեզոքացնելով նրանց ինքնուրույն նպատակադրումները, ձգտումները։ Որոշ իրադրությունների մեջ երիտթուրքերի ղեկավարները Եվրոպական հասարակական կարծիքին դուր գալու համար կեղծում էին իրենց, հայոց համակիրներ ձևանում։ Ի միջի այլոց սուլթանի անձը վիրավորելու համար դատի տրված Ահմեդ Ռիզան և Խալիլ Հանեմը արդարացվեցին նաև այն բանի համար, որ խորամանկորեն իրենց զայրույթն էին արտահայտել հայկական կոտորածների առիթով (38, էջ 37)։

Երբ 1896-ի կոտորածի թեժ պահին Փարիզում Սապահ Գուլյանը ֆրանսիական պառլամենտի մոտ հանդիպում է Ահմեդ Ռիզային և դոկտոր Նազըմին, Ահմեդ Ռիզան դիմելով նրան ասում է. «Պ. Սապահ Գուլյան, այս անգամ 10 հազարներով են կոտորում... ո՞ւր մնաց հայկական դատը, մայիսի 11-ի ծրագիրը, եվրոպական միջամտությունը...»։ «Դոկտոր» Նազըմը հոգեկան մի առանձին ցնծությամբ ավելացրեց. «Այս մի քանի օրվա կոտորածների թիվը 100 հազարից անցել է երևի, էլ հայ չպիտի թողնեն» (15, էջ 167)։ Մենք իրավունք չունենք չհավատալ այս տողերին։ Սապահ Գուլյանի «Պատասխանատուները» գիրքը տպագրվել է 1916-ին, այսինքն երիտթուրքերի իշխանության տապալումից երկու տարի առաջ։ Նրան ոչինչ չէր խանգարում ասելու ճշմարտությունը, հիշատակելու այնպիսի հանգամանքներ, որոնք ընդհուպ բնութագրում են երիտթուրքերին, նրանց քաղաքական հավատամքը, նրանց հայատյացությունը։

Սապահ Գուլյանը երիտթուրքերի պարագլուխներին ասել էր. «Պր. Ռիզա բեյ, գիտցիր, համոզվիր, որ 10 հազարներ ունենք կոտորվելու համար, 100 հազարներ էլ օսմանյան բռնապետությունը փլցնելու. միլիոններ էլ՝ Ազատ, Անկախ Հայաստան առաջ բերելու։ Դուք մեռնում եք անհետանալու համար, մենք մեռնում ենք վերածնվելու, ապրելու նպատակով։ Իսկ դոկտոր Նազըմի հրճվանքին էլ այն կասեմ, որ ապագա ազատ Հայաստանի մեջ մենք ձեզ չենք կոտորի, այլ քաղաքակիրթ մարդիկ կդարձնենք. առայժմ դուք ձեր ճանապարհով, մենք՝ մեր։ Դեռ կտեսնվենք» (15, էջ 167)։

Երիտթուրքերի ղեկավարները ֆրանսիական թերթերի անօրեններին համոզում էին, թե օսմանյան բանկը գրավելու նպատակը կողոպուտն էր, թե գավառներում, ամենուրեք հայերն էին եղել նախահարձակը թուրքերի վրա։ Նույնիսկ «Պրտի ժուռնալի» հավելվածում հրապարակվեց մի պատկեր, թե ինչպես Բիթլիսի զինված հայերն իբր հարձակ-

վել էին մզկիթում աղոթող «անմեղ և անգեն» թուրքերի վրա (15, էջ 171)։

Մի անգլիացի գրում էր. «Շատ ազատական թուրքերու հանդիպած եմ, որոնք ազատությունը և հավասարությունը բերնե չէին ձգեր, բայց անոնց մեջ մեկը չգտա, որ չհավաներ 1895—96-ի հայկական ջարդերուն և չփորձեր արդարացնել զանոնք։ Ասոր փոխարեն ալ թուրքիո քրիստոնյաները ազատական կամ «երիտասարդ» թուրքերուն համար ավելի համակրանք մը չեն տածեր, քան հին և մոլեռանդ թուրքերու համար» (13, № 21, 1900, էջ 331—332)։

Երիտթուրքերն իրենց թերթերի էջերում այն ժամանակ եվրոպական տերությունների ուշադրությունն էին հրավիրում Հայաստանում քրդերի վայրենություններին, Սերբիայում և Մակեդոնիայում ալբանացիների ձեռքով իրականացված էքսցեսներին, զզվանքով էին խոսում Աբդուլ Համիդի պանիսլամական ձգտումների, Գերմանիայի հետ նրա բարեկամության և այլնի մասին (33, էջ 22)։ Սա ուշադրությունն իրերի բուն վիճակից շեղելու մի տակտիկա էր։ Եթե քրդական ժողովրդական ցեղերի վերնախավը հակահայկական էքսցեսներ էր անում, ապա դա թուրքական պետականության արգասիքն էր։ Եթե մահմեդական առնառուները փորձում էին իրենց կամքը թելադրել քրիստոնյա հարևաններին՝ նույնպես թուրքական պետականության հակամարդկային պատկերը հաստատող փաստ էր։

Ժամանակին «Դրոշակը» գրում էր. «Եթե ազգայնական որոշ հակամարտություն կա այսօր տաճկի ու տաճկահայի միջև— դա գլխավորապես կառավարության շնորհիվ է» (5, № 5, 1898)։

Մենք ձեռքի տակ չունենք փաստեր, որոնք հաստատեին, թե երբ սկսվեց Հ. Հ. դաշնակցության և երիտթուրքերի «համագործակցության» մեղրամիսը։ Ինչպես հնչակները, վերակազմյալ հնչակները, այնպես և դաշնակները խոր հիասթափություն ապրեցին 1896-ից սկսած, երբ ոչ Եվրոպայի կառավարողները, ոչ ռուսաց Նիկոլայ II-ը չբռնեցին սուլթանի արյունոտ թաթը, երբ խորտակվեց հայոց ազատագրական պայքարը բուրժուական դիվանագիտության օգնության միջոցով հաղթանակով պսակելու հայ ազգային կուսակցությունների անհիմն լավատեսությունը։

Առաջ էր գալիս նոր տրամադրություն։ Ուժերը վերախմբավորելու, հնարավորությունները վերագնահատելու նոր մտայնություն։

Ինչպես հավաստում է Արշակ Ալպոյաճյանը, «Դաշնակցությունը Քրիստափորի (Միքայելյան— Ջ. Կ.) ազդեցությամբ սկզբում մերժեց միանալ երիտասարդ թուրքերուն, երբ անոնք առաջարկ բերին բոլոր հեղափոխական հոսանքներու միացյալ ջանքերով տապալելու սուլթանին բռնապետությունը» (2, էջ 916)։ Հ. Հ. դաշնակցության «Դրոշակ» թերթը սկսեց գրել հայ և թուրք «երկու ազգությունների» «հաշտության ու անդորրության» անհրաժեշտության մասին, որ նրանք «ընդհանուր ջանքերով կդիմեն դեպի բարձրագույն քաղաքակրթություն» (5, № 5, 1898)։

Հայտնի է, որ 1898-ի սկզբներին Կահիրեում երիտթուրքերը նորից հայկական կազմակերպությունների հետ համագործակցելու նախաձեռնություն ի հայտ բերին։ Դարավերջին «Դրոշակ» թերթում հրապարակված կոչերից մեկում ասված էր. «Օսմանյան Հայաստանը կռվում է, օսմանյան Հայաստանը օգնության է կանչում. այնտեղ են մեր եղբայրները, թշվառ հայ ազգի ամենաթշվառ անդամները. այնտեղ մենք իրավունք ենք ձեռք բերել արդեն, արյունով և դաշնագրերով հաստատված միջազգային իրավունք, որ խոստանում է մեզ վերջապես ազատ մի անկյուն, ուր հայը չի համարվի «գյաուր», «արմյաշկա» կամ «թափառական հրեա», այլ մարդ, մարդ օժտված մարդկային բոլոր իրավունքներով. այնտեղ է բաբախում այժմ մեր ցեղի սիրտը, այնտեղ է ծածանում հեղափոխական դրոշը, որ իր կողքերում կրում է մեր ազգի պատիվը և ազատությունը» (5, № 8, 1899)։

Սա պայքարը վերսկսելու, ուժերը համախմբելու մի նոր ձգտում էր։ Մյուս կողմից, երիտթուրքերը փորձում էին միասնական ճակատ ստեղծել ընդդեմ սուլթանի։

«Բարենորոգում պահանջող մահմեդականների հետզհետե ավելի տարածվող դժգոհությունը և հայկական հեղափոխական մասնաժողովների գրգռությունները, որոնք միջոց մը անգործն մնալե հետո նորեն ասպարեզ կիջնեն, թերևս Մա-

կեղոնիայեն ավելի մտատանջություն կպատճառեն օսմանյան կառավարությանը։ Ամեն օր սպաներ, քաղաքային պաշտոնյաներ, սոֆտաներ, ուլեմներ Կ. Պոլսեն կամ գավառներեն կփախչին Եվրոպա ապաստանելու և անկե հարվածելու համար ներկա վարչական դրությունը»,— «Երիտասարդ Թուրքերը և հայերը» թղթակցության մեջ գրում էին Կ. Պոլսից (4, № 69, 1899)։

1899-ի մայիսին հրապարակվեց Հ. Հ. դաշնակցության և Մակեդոնական գերագույն կոմիտեի համատեղ հայտարարությունը՝ ուղղված քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքին, խաղաղության խորհրդաժողովի առթիվ։ Այնտեղ բողոք էր հայտնվում, որ Լահեի խորհրդաժողովն իր օրակարգից դուրս է թողել հայկական և մակեդոնական խնդիրները։

Այս հայտարարությունն ուղղված էր սուլթանական ռեժիմի դեմ։ Հունիսի 15-ին այն ցրվեց խորհրդաժողովի մասնակիցներին, վեց տերությունների ներկայացուցիչներին և մամուլի օրգաններին (5, № 5, 1899)։ Սուլթանի դեմ պայքարի կոչը երիտթուրքերի սրտով էր։ Բայց նրանք զայրանում էին, որ հայկական կազմակերպությունը առանց իրենց համագործակցում էր այլ ընդդիմադիր խմբերի հետ։

Երիտթուրքերի պարագլուխները չէին վստահում հայերին։ Այս բանն ապացուցելու համար թուրք պատմաբան Քուրանը մասնավորապես հիշատակում է 1900-ի հուլիսին գրված մի նամակ (36, էջ 126)։ 1900-ին իշխան Սապահէդդինը և Լյութֆուլլա բեյը «Օսմանյան քաղաքացիներին» վերնագրով մի հայտարարություն հրապարակեցին, որտեղ «անդարմանելի աղետների ենթարկվող թուրք, արաբ, ալբանացի, հայ, մակեդոնացի, հույն, քուրդ, հրեա և մյուս հայրենակիցներին» միասնության կոչ ուղղեցին։ Հայտարարության մեջ խնդիր էր դրվում «անհապաղ մեզ տեղեկացնել» «ազգերի մտադրությունները» «հանուն օսմանցիների շահերի» (36, էջ 135)։ Սրանք էլ նախաձեռնեցին երիտթուրքական առաջին կոնգրեսի հրավիրումը։ Սրանք նույնպես դեմ էին ճնշված ազգերին անկախություն շնորհելուն։ «Երիտթուրքերը օսմանյան կայսրության վերականգնումին համար երկրին արդի իրական կացության ըմբռնումովը պատրաստված որոշակի ծրագիր» չունեին։ Նրանք խորհուրդներ էին հղանում «առանց

դանոնք ճշգրիտ, որոշ գծերով ներկայացնելու»։ Սակայն թե «Օսմանլի», թե «Մեշվերեթ» թերթերը, թե Դամադ Մահմուդ փաշայի հրատարակությունները «իսլամության հզորացումին դատը կպաշտպանեն»։ Արդեն այն ժամանակ գրվում էր, որ «երբ Թուրքիո բարձրագույն վարիչները երիտասարդ թուրքերը ըլլան, ասոնք միշտ մահմեդականության զորավիգներք պիտի մնան և պիտի աշխատին իսլամ տարրին դիրքը բարձր և հզոր պահել» (13, № 14, 1900, էջ 210)։

Երիտթուրքերի գործունեության ակտիվացման առիթով «Նոր կյանքը» 1900-ին գրում էր, թե սուլթանը «իր հավատակիցներեն սոսկալու վիճակի մեջ կրգտնվի»։ Նույն թվականի ապրիլին Կ. Պոլսի զինվորական բժշկական ուսումնարանում 90 երիտասարդ ձերբակալվեց, որոնք բոլորն էլ դատապարտվեցին բանտարկության ու աքսորի։ Թերթերը գրում էին, որ «ամենքն ալ առաջնակարգ ընտանիքներու պատկանող, բարեկիրթ և ուսյալ երիտասարդներ, զորս լրտեսները մատնած էին իբր դժգոհներ»։ Սուլթանը վախենում էր անգամ «ամենապզտիկ երիտթուրքից» (13, № 9, 1900, էջ 142)։

«Հակասուլթանական շարժումը Պոլիս իսլամներուն մեջ հետզհետե կտարածվի. հետևանքները սկսած են սպառնալից երևնալ, սուլթանին կյանքը ծանրապես վտանգված է,— գրում էր Լոնդոնի «Նոր կյանքը»։— Երիտասարդ թուրքերը հիմակ Ելդըզը ոտք դրած են ու առաջին փորձ մը ըրեր են սուլթանը մեռցնելու համար...» (13, № 10, 1900, էջ 158)։

Դեռևս 1900-ին Արփ. Արփիարյանը գրում էր. «Սուլթանը Թուրքիան թրքացնել կուզե. պիտի հաջողե. չենք կարծեր։ Ամեն պարագայի մեջ թրքամոլությունը չէ, որ կայսրությունը պիտի փրկե, ընդհակառակը» (13, № 23—24, 1900, էջ 358)։

Արշ. Չոպանյանը պատասխանելով «Ֆրանքֆուրթեր ցայտունգ» թերթում տպագրված հոդվածաշարի հեղինակ Գելքին, գրում էր, որ «առնաուտները, դրուզները, չերքեզները և քրդերը ուրիշ բան չեն եղած և չեն միշտ, բայց եթե գործիքներ Թուրք կառավարության ձեռքը, որ միակ հանցավորն է»։ Նա ցույց էր տալիս, թե «անկարելի է, որ սուլթանը, որ միևնույն ժամանակ խալիֆն է, իր քրիստոնյա հպատակները մահմեդական հպատակներուն հավասար նկատե»։ «Որպեսզի Տաճկաստանը կարենա լրջորեն բարենորոգվել ու եվրոպական

տերություն մը ձևացնել, անհրաժեշտ է, որ սուլթանը օսմանյան կառավարության լոկ կայսրը, աշխարհական պետը ըլլա. այն ատեն կրնա օսմանյան բոլոր հպատակներուն օրենքի առջև հավասարությունը ընդունել. բայց կրկարծե՞ք, որ թուրքերը կարենան կամ ուզեն այս էական բարենորոգումը գործադրել։ Ես կտարակուսեմ, քանի որ երիտասարդ թուրքերն անգամ այս արմատական փոփոխության անհրաժեշտությունը երբեք չեն ճանչնար» (3, № 3, 1900, էջ 88)։

1900-ին Կ. Պոլսում գաղտնորեն նոր բանակցություններ էին տեղի ունեցել հայոց քաղաքական շրջանների և երիտթուրքերի միջև, սակայն, ըստ «Նոր կյանքի» խոստովանության, «առանց հաջող արդյունքի»։ Այնուամենայնիվ, ակնհայտ էր, որ բանակցություններն անհամեմատ լրջորեն են տեղի ունենում։ Խնդիրն այն էր, թե «ազատական թուրքերը» ինչ չափով էին ուզում հաշվի առնել արևմտահայության արդարացի պահանջները (13, № 22, 1900, էջ 350)։

Երիտթուրքերը կապեր էին հաստատել սուլթանին ընդդիմադիր այլ ժողովուրդների կազմակերպությունների հետ։ Նրանք փորձում էին իրենց կողմը գրավել քրդական ցաք ու ցրիվ խմբերին։

Լոնդոնի «Քուրդիստան» թերթը լույս էր ընծայում Օսման փաշան։ Բայց թերթը բնականաբար ներգործություն չուներ քրդերի վրա այն պարզ պատճառով, որ «կարդալ գրել գիտցող քուրդ չի գտնվիր»։ Օսման փաշան իր թերթում ծանուցում էր տպագրել, թե առաջիկայում գնալու էր երկիր, որ իր «ազգին գլուխը անցնելով քրդերն ու հայերը պիտի փրկե թուրքական բռնապետությունից» (13, № 22, 1900, էջ 349)։

Երբ Արշ. Չոպանյանի մտահղացմամբ մի նամակ գրվեց Կահիրեի «Քուրդիստան» թերթի խմբագիր Աբդուռահման բեյին, վերջինս շատ սիրալիր պատասխանեց, թե «...գիտեմ քրդերուն և հայերուն շահը միևնույնն է, և ասոր համար է, որ ես միշտ ուզած եմ լրագրիս միջոցով ջնջել այն ատելությունը, որ գոյացած է այս երկու ժողովուրդներուն միջև...» (3, № 4—5, 1900, էջ 138)։

Թուրքական միահեծանության և եվրոպական իմպերիալիզմի համար անհամեմատ վտանգավոր կլիներ, եթե հայ-

կական ազատագրական շարժումը ունենար բնական դաշնակիցներ բուն երկրում, դուրս գար նեղ ազգային սահմաններից և միաձուլվեր մի ընդհանուր հորձանքի մեջ։ Այդ դեպքում շարժման հետ չէր կարելի կռվել ջարդերի միջոցով։ Սակայն օսմանյան կայսրության ծայրագավառներում սոցիալ-տնտեսական, քաղաքական ծայր աստիճան հետամնացությունը բացառում էր միասնական հակասուլթանական ճակատի կազմավորումը։ Պատմականորեն հասունացած չէր այդ պրոցեսը։ Ահա թե ինչու սուլթանական իշխանությունը հաջողությամբ օգտվում էր այդ կացությունից, հայկական շարժման առանձնացված բնույթից և, հենվելով Եվրոպայի կամ եվրոպական առանձին տերությունների պաշտպանության վրա (գաղտնի թե բացահայտ), մահմեդական խավարամիտ զանգվածներին գրգռում էր հայերի դեմ, դրանով իսկ ապահովելով իր գոյատևումը։

1902-ին Փարիզում գումարած իրենց ազգային կոնգրեսում թուրք «հեղափոխականները» իրենց կոչում էին օսմանցիներ, բայց ոչ թուրքեր (39, էջ 7)։ Ազգի գաղափարը դեռ չափազանց թույլ էր։ Բոլորից, խառնափնթոր ընդհանուրից մի նոր ազգ, օտոմանյան կամ օսմանյան ազգ ստեղծելու մարմաջն էր այն պահին տիրապետողը։ Առաջինը, որ թուրք տերմինից կառչելու, բոլորին թուրքացնելու գաղափարը մեջտեղ բերեց Զիա Գյոք Ալփն էր։ «Անհրաժեշտ է յուրաքանչյուրին թուրք համարել»,— հայտարարեց նա (39, էջ 19)։

1902-ի համագումարում քննարկման առարկա էր դարձել այն հարցը, որ միայն մամուլով ու պրոպագանդայով հնարավոր չէր հեղափոխություն կատարել, ուստի անհրաժեշտ համարվեց ապահովել ռազմական ուժի, զինվորականների մասնակցությունը (40, էջ 40)։ Սապահէդդինը, որ նախագահում էր 1902-ին Փարիզում հրավիրված «Ազատ օսմաններին» առաջին համագումարում, կանգնեց հայ ներկայացուցիչների այն առաջարկության պաշտպանության դիրքերում, թե առանց արտաքին միջամտության օսմաններն իրենց ուժերով անկարող են բարեփոխել երկիրը (34, էջ 41)։

Համագումարի աշխատանքը հանգամանորեն նկարագրել է թուրք պատմաբան Քուրանը։ Ըստ նրա, մտքերի փոխանա-

կությունը հիմնականում ընթացավ հետևյալ երկու հարցերի շուրջը.

ա) Միայն պրոպագանդայով և հրատարակություններով հնարավոր չէ հեղափոխություն կատարել. պետք է աշխատել գինյալ ուժերի մասնակցությունը ևս ապահովել հեղափոխական շարժումին։

բ) Հրավիրել օտարերկրյա կառավարությունների միջամտությունը՝ երկրում բարենորոգությունների անցկացման համար։

...Այսինքն, ներսում (երկրի) հեղափոխական շարժում սկսելու դեպքում մենք պետք է այնպիսի ազատ և դեմոկրատական մի կառավարության հետ համաձայնության գանք, որը կարող լինի չեզոքացնել այնպիսի պետությունների միջամտությունը, որոնք կցանկանային շահեր ակնկալել մեր այդ շարժումից։ (Սրանք Սապահէդդինի ձևակերպումներն են միջամտության հարցի վերաբերյալ)։

Սապահէդդինի կողմնակիցները, որոնք կոնգրեսում մեծամասնություն էին կազմում և համաձայն էին նրա տված բացատրությունների եղանակով մի միջամտության, կոչվեցան «միջամտողականներ» (müdaheleci), իսկ մյուսները (այսինքն՝ Ահմեդ Ռիզա բեյի կողմնակիցները)՝ «ոչ միջամտողականներ» (ademi müdaheleci)։

Ահմեդ Ռիզա բեյի «չմիջամտելու» առարկությունը զարմանք պատճառեց, որովհետև նա վաղուց ի վեր «Մեշվերեթ» թերթում իր ստորագրությամբ հոդվածներ էր լույս ընծայել, որոնցում Անգլիային և Ֆրանսիային հրավիրում էր միջամտել ընդդեմ սուլթան Համիդի ռեժիմի (36, էջ 152)։

Ահմեդ Բեդլի Քուրանը գրում է. ««Միջամտողականների» խմբակի առաջնորդներից Սապահէդդինը երկրի փրկությանը չէր նայում սոսկ սովորական հայրենասիրության տեսանկյունից, այլ նկատի էր առնում նաև երկրի էթնոգրաֆիկ և սոցիալական հանգամանքները, հետևաբար, ելնելով ընդհանուր շահերից, նա չէր ցանկանում, որ քրիստոնյա տարրերի կողմից առաջարկված պահանջներն ամբողջությամբ մերժվեն։ Իսկ երբ երկրի շահն էր պահանջում, նա ամենևին էլ չէր խուսափում ճակատ տալ նրանց դեմ, որոնք միջամտության քողի տակ գուցե սնուցում էին այլ նպատակներ։ Նա, 1905

թվականին, հայկական կոմիտեների դեմ լույս ընծայած իր բաց նամակում դատապարտել էր այն հայկական հրատարակությունները, «որոնք դեմ էին թուրքական շահերին և վնասակար՝ օսմանցիներին» (36, էջ 153)։

Թուրք պատմաբան Քուրանը այնուհետև նշում է, որ երբ երիտթուրքերը ջանում էին երկրում հեղափոխություն առաջացնել, Աբդուլ Համիդը երբեք ձեռնածալ չէր նստում։ Նա օսմանյան կառավարության դեսպաններին մղում էր ամեն տեղ որոնելու հեղափոխականներին։ Նույնիսկ նա կարևոր էր համարում իմանալ այն թուրքերի մասին, որոնք կողմնակից էին լինում հարևան երկրներում կատարված քաղաքական փոփոխություններին։ Նա հարցնում էր Եգիպտոսի արտակարգ կոմիսար Ահմեդ Մուխթար փաշային, թե ովքե՞ր էին Իրանում սահմանադրություն հռչակելու առիթով շնորհավորական հեռագրեր ուղարկողները։ Մյուս կողմից, Վաշինգտոնի դեսպանությունից տեղեկություն էր պահանջում հայկական հեղափոխական կազմակերպությունների մասին և միջոցներ էր ձեռք առնում արգելք հանդիսանալու համար Լոնդոնում կայանալիք միտինգներին (36, էջ 165)։

Համագումարը որոշել էր ստեղծել մի խառն հանձնաժողով, որը պետք է մշակեր երիտթուրքերի և հայկական կազմակերպությունների համագործակցության եղանակները։ Ռիզա բեյը փորձել էր առարկել որոշմանը, բայց Բեհաէդդին Շաքիրի և հայ ներկայացուցիչների ճնշման տակ կոմպրոմիսային որոշումը կայացվել էր (36, էջ 235)։

Այնուամենայնիվ, կայսրության ապակենտրոնացման, հայերի ինքնավարության մասին Սապահէդդինի խոստումները հուսադրիչ էին և հայոց քաղաքական կուսակցությունների ղեկավարները թուրքական ընդդիմադիր ուժերի հետ մերձենալու, համագործակցելու հնարավորություններից չէին խորշում։ Ընդունված որոշումն առայժմ գործնական դեր չխաղաց։ Չնայած համաձայնությանը, համագործակցությունը դեռևս չիրականացավ։

1904-ին Եվրոպայի Հ. Հ. դաշնակցական ուսանողների երրորդ համագումարը մի կոչ հղեց Տաճկաստանի և Պարսկաստանի հայրենակից ուսանողներին, որի մեջ ասված էր. «Օսմանյան ազգերի ընդհանուր համերաշխությունը այդ պե-

տության գոյության և բարգավաճման անհրաժեշտ հիմքն է ու յուրաքանչյուր ժողովրդի բարօրության գաղափարը»։

Ժխտելով իրենց վերագրված «անջատական» ծրագրերը, ուսանողները գրում էին. «Քսան տարվա ամենավտանգավոր խութերի վրայից խոյացող, միշտ բաց ճակատ, միշտ հպարտ մեր կուսակցությունը չէր թաքցնի յուր անջատողական ձգտումը, եթե այդպիսին հիրավի լիներ, այլ բացորոշ կերպով կարձանագրեր իր ծրագրի մեջ և կմարմնացներ այն յուր ամեն մի գործնական քայլում։ Սակայն դաշնակցության ողջ գործունեության ընթացքում, գրավոր թե բանավոր պրոպագանդայի մեջ, անկարելի է գտնել մի հատիկ փաստ, որ հաստատեր այդպիսի մի ենթադրություն» (9)։

Պահանջվեց ևս մի քանի տարի, երբ 1907-ին Փարիզում դումարվեց մի միացյալ նոր համագումար։

1905—1907 թթ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության տարիներին, երբ «համաշխարհային կապիտալիզմը և 1905 թվականի ռուսական շարժումը վերջնականապես արթնացրել էին Ասիան» (1, հ. 19, էջ 84), աշխուժացավ նաև երիտթուրքական շարժումը։ Միություն և առաջադիմություն կոմիտեն իր նստավայրը արտասահմանից Սալոնիկ տեղափոխեց 1906-ին։

Սուլթանի ձեռնարկած միջոցների հետևանքով դարավերջին Միություն և առաջադիմություն կոմիտեի գործունեությունը նշանակալի չափով սահմանափակվել էր (26, էջ 27)։ Բացի Ահմեդ Ռիզայի ու դոկտոր Նազըմի լրագրային ու պրոպագանդիստական աշխատանքներից, ասպարեզում ոչինչ չէր մնացել։ Երիտթուրքերի շարքերը պառակտված էին։ Ահա թե ինչու երիտթուրքերը նույնպես համախոհներ էին փնտրում ոչ թուրք ազգությունների կազմակերպությունների մոտ։

Երիտթուրքերի կազմակերպությունները XX դարի սկզբին բավական տարածում գտան եվրոպական երկրներում և այլուր։ Նրանք լույս էին ընծայում բազմաթիվ թերթեր՝ «Հուրրիեթ» (Լոնդոն), «Ինջիլի Զավուշ», «Մեշվերեթ» (Փարիզ), «Օսմանլը», «Հակիկաթ», «Միզան», «Ինթիբահ», «Ինթիկամ» (Ժնև), «Կանունը Էսասի», «Սանջակ», «Ֆերատ», «Թուրք» (Եգիպտոս) և այլն։

1904-ին թուրք լուսավորիչ, գրող Նամիկ Քեմալի ողջ

Ալի Քեմալը Կահիրեում սկսեց հրատարակել «Թուրք» անունով թերթը, որի էջերում պանիսլամական շարժման մեջ Թուրքիայի կարևոր դերը պահպանելու, թուրք ազգի առաջնայնությունն ապահովելու կոչ էր անում (30, էջ 68)։ Նոր օսմանների գաղափարախոսի ժառանգը շարունակում ու զարգացնում էր թուրքական շովինիստական վարդապետությունը։

1905-ին երիտասարդ թուրքերի կենտրոնական կոմիտեն մի հատուկ կոչով, որ գրված էր ռուսերեն, դիմեց հայերին։ Սա սպառնալիքներով լի մի փաստաթուղթ էր, մի լկտի զգուշացում հայերի հասցեին։ Այս կոչի մեջ խոսվում էր դարերի ընթացքում սուլթանների կողմից հայերին արված «լավություններին» մասին, զգուշացում էր արվում բոլոր այն հայերին, որոնք կփորձեին կռիվ տալ թուրքական տիրապետության դեմ։ Սա տակավին 90-ական թթ. վերջից Ահմեդ Ռիզայի, Մուրադ բեյի որդեգրած գծի դրսևորումն էր. ոչ մի ինքնուրույնություն հայերի համար, միայն ենթարկում իրենց կամքին։ Այնտեղ մենք կարդում ենք. «Իմացեք, որ ծիծաղելի կլիներ, եթե 400 միլիոն մուսուլմանները վախենային մի բուռ հայերից, որոնք ցրված են ամբողջ երկրագնդի վրա... Մենք չենք ճանաչում ձեզ, հայ հեղափոխականներ, այդ պատճառով այսուհետև մենք հեղափոխական ենք համարելու ամեն մի հայի արական սեռից, սկսած տասնհինգ տարեկանից մինչև 70 տարեկանը և ամեն անգամ երբ դուք մեր նկատմամբ թշնամական քայլ անեք, անխնա կոտորելու ենք ձեզ ամբողջ երկրագնդի երեսին, ուր և հայը պատահի մուսուլմաններին. Արևելքում, թե Արևմուտքում, Հյուսիսում, թե Հարավում...» (11, № 9, 1905, էջ 174—175)։

Օսմանյան բռնապետության դեմ յուրաքանչյուր ոտնձգություն երիտթուրքերն ընկալում էին արդեն որպես սպառնալիք իրենց հայրենիքին։ Նրանք սուլթանի դեմ ընդվզում էին, այն էլ չափավոր դիրքերից միայն այն բանի համար, որ նա չի ապահովում կայսրության անվտանգությունն ու ամբողջականությունը, որ սուլթանի իշխանության թույլ լինելու պատճառով վտանգվում է «հայրենիքի ապագան»։ Նրանք հանդես էին գալիս հսկայական բռնապետության պահպանման դիրքերից։ Ճնշված ազգերի նկատմամբ չունեին որոշակի ծրագիր, բացի ընդհանուր բռնապետական կաթսայում պա-

հելու գաղափարից։ Երիտթուրքերի մոտ հայրենիքի հասկացողությունը նույնացվում էր ամբողջ կայսրության հետ։

Երբ 1905-ին Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Բարտելոյի կողմից հօգուտ հայերի մի հայտարարություն պատրաստվեց պրեզիդենտ Ռուզվելտին հանձնելու համար, Ս

արդեն մահափորձի թիրախ դարձավ, սպանվեց տեռորիստի ձեռքով։

90-ական թվականների վերջերին Հնչակյան կուսակցական կենտրոնի ղեկավարների տարակարծությունները կուսակցության հետապնդած նպատակների, ծրագրի և տակտիկայի հարցերում հասել էին իրենց գագաթնակետին, խոր անջրպետ ստեղծել «սոցիալիզմի» անունից խոսողների և զուտ Թուրքահայ դատով զբաղվելու կոչ անողների միջև։ «Կուսակցության ներսը հետզհետե ստեղծված էր հոսանք մը, որը դեմ էր անոր սոցիալիստական ծրագրին ու գործունեության» (13 ա, էջ 217)։ Այդ հոսանքին պատկանողները 1899-ի հունիսին Լոնդոնում կայացած ժողովում կայացրին մի որոշում, որտեղ վնասակար հռչակելով «ցույցերի գործունեությունը», նշելով, որ «Հնչակյան կուսակցության ինը տարվան այդ ուղղությամբ գործադրած աշխատանքները արդեն իրենց նպատակին հասել են և այսուհետև այդ միջոցների գործադրումը վնասակար կլինի, ուժերը կՀլատե և կվատնե, նկատելով, որ՝ սոցիալիզմը ավելորդ և վնասակար է հայոց դատին համար։ Ժողովը որոշում է՝ դադարեցնել այդ գործունեությունը և պատրաստվել ընդհանուր ապստամբության» (13 ա, էջ 269)։

1905-ի սեպտեմբերին Փարիզում կայացած Ե. պատգամավորական ժողովը մերժեց կուսակցության երկու հին ղեկավարներ Նազարբեկի և Խանազատի ներքոհիշյալ փաստաթուղթը, որտեղ տրված էր կուսակցության հետագա գործունեության ուղղությունը։

«Թուրքիո տնտեսական և սոցիալական պայմանները հարկադրել էին մեր կուսակցությանը զուտ ազգային գործունեություն վարել այնտեղ՝ Թուրքիայում։ Մի գործունեություն, որի տակտիկան ու ձևերը միանգամայն տարբեր են զուտ սոցիալ-դեմոկրատական գործունեությունից, պարզ է, որ գործունեություն սկսելով Կովկասում, Ռուսաստանում, մենք պարտավորված ենք մշակել բոլորովին տարբեր ձևեր։ Իսկ այդ պարագայում կուսակցության միևնույն կենտրոնն ու օրգանը անկարող են լինելու ղեկավարել երկու մեմյանցից բոլորովին տարբեր բնավորություն կրող հեղափոխական

շարժումները, առանց խոշոր հակասությունների մեջ ընկնելու և առանց մի երկրի շարժումը մյուսին զոհելու»։

Առաջարկվում էր երկու գործելակերպ. «Առաջինը՝ Հնչակյան կուսակցությունը բաժանվում էր երկու որոշակի ու ինքնուրույն կազմակերպություններին, մեկը զուտ սոցիալ-դեմոկրատական՝ Կովկասում, Ռուսաստանում, իսկ մյուսը ազգայնական՝ Թուրքիայում։ Նրանք ունենալու են իրենց հատուկ կենտրոնները և օրգանները։ Գործելու են միմյանցից անկախ և ինքնուրույն ձևով, պահպանելով իրար մեջ միմիայն նյութական օժանդակության կապ։

Երկրորդ՝ Հնչակյան կուսակցությունն ամբողջությամբ նվիրվում է Թուրքահայ դատին, գործունեության միակ ասպարեզ ունենալով Թրքաց Հայաստանը ու չի խառնվում Կովկասի, Ռուսաստանի շարժումներին։ Իսկ այն Հնչակյան մասնաճյուղերը, որոնք ձգտում են գործել Կովկասում, Ռուսաստանում որպես սոցիալ-դեմոկրատներ, պետք է դադարեն Հնչակյան լինելուց և միանան տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին» (13 ա, էջ 291)։ Այս փաստաթղթում արտացոլված տեսակետին էին խանազատը, Նազարբեկը և Գ. Վարդանյանը (Հրահատ, Կամսար), որոնք մոտ էին կանգնած ՌՍԴԲԿ արտասահմանյան շրջաններին։

Պատգամավորական ժողովը «նոր գործունեությունը» որակեց որպես կուսակցությունն անդամալուծելու փորձ, հիմնավոր չնկատեց կուսակցությունը երկու մասի ջլատելու անհրաժեշտությունը և ձայների մեծամասնությամբ որդեգրեց «Կովկասի մեջ պրոլետարական հեղափոխական գործունեություն, իսկ Թուրքահայաստանի մեջ պայքարել և ձեռք բերել քաղաքական դեմոկրատիա, հիմնավորված մարքսյան սկզբունքներով» ուղին (13 ա, էջ 293)։

Մեզ այստեղ հետաքրքրում է «Հնչակի» հետագա գործունեությունը Թուրքահայաստանում երիտթուրքական հեղափոխության նախօրյակին. քաղաքական դիրքորոշումը, գործնական միջոցառումները, հետապնդած նպատակների որոշակիությունը, արևմտահայության ազատագրության նրա առաջադրած ծրագիրը ոչ թե խոսքով, այլ գործով։

Արդ տեսնենք, թե ինչպիսին էր այդ կուսակցության գործունեությունը։ Երիտթուրքերի ակտիվության նկատմամբ

ընդհանուր տակտիկա մշակելու նպատակով հնչակները (մասնավորապես Մեծն Մուրադը՝ Բոյաջյան, որը Փարիզում հատուկ կոչ է հրապարակում) առաջարկություններ են անում միջկուսակցական հայկական համագումար գումարել։ Դաշնակցությունը մերժեց, հայտարարելով, թե «վաղաժամ է նման կոնգրեսի մը գումարումը» (13 ա, էջ 302)։ Զարմանալին այն է, որ նույն Հ. Հ. դաշնակցությունն անմիջապես արձագանքեց իթթիհադի կոչին՝ համատեղ համագումար հրավիրելու մասին և նույնիսկ այդ բանին հրավիրեց «Հնչակին»։ Վերջինս մերժեց մասնակցել այդ համագումարին և պատասխանեց մասնավորապես հետևյալը. «Օսմանյան բռնապետության դեմ կռվող կուսակցություններից կազմված մի ընդհանուր կոնգրեսի մենք սիրով պիտի մասնակցենք, երբ կանխապես համոզվենք, թե ձեռնարկողները լուրջ գործ են ուզում կատարել և մասնավոր նպատակ չունեն հայկական խնդիրը խեղդել տալ օսմանյան համապետական վերաշինության գործին մեջ, ինչպես որ այդպիսի միտումներ երևան են եկել շատ անգամներ նույն այդ կոնգրեսի անվան տակ» (13 ա, էջ 303)։

Իթթիհադի ղեկավարներ Ահմեդ Ռիզայի, Նազիմի և այլոց առաջարկությունները համագործակցության վերաբերյալ (Փարիզում Սապահ Գուլյանի հետ տեղի ունեցած հանդիպումների ժամանակ) մերժվում են հնչակյանների կողմից։ Վերջիններս պնդում էին հայկական հարցի հիմքում պետությունների ընդունած 1895-ի մայիսյան ծրագրի վրա, ինչը մերժում էին իթթիհադականները։ Հետաքրքրական է, որ իթթիհադականների տեսակետն է պաշտպանում Լոնդոնում Պարսկաստանի դեսպան Մելքոն խանը, որը «Ռևյու դե Պարի» թերթում նույնիսկ այդ բովանդակությամբ հոդված է տեղադրում։ Այնուհետև ֆրանսիական «Ֆիգարո» և այլ թերթերում հոդվածներ են տպագրվում հակառակ դիրքերից։ Այդ օրերին Փարիզում հաճախակի էին այն հավաքույթները, որտեղ երես առ երես հանդիպում էին հայ հեղափոխականները և երիտթուրքական վտարանդիները։ Եվ բնորոշ է, որ ամեն անգամ, երբ այս կամ այն հայ հռետորը խոսք էր բացում օսմանյան կայսրության մեջ հակահայկական հալածանքների և բռնությունների մասին, անմիջապես երիտթուրքական գործիչները վիրավորված էին համարում իրենց ազգային արժանապատվությունը, դժգոհում։

Երիտթուրքերն իրենց առաջին կոնգրեսին հրավիրեցին հնչակյաններին, բայց նրանք հրաժարվեցին մասնակցել։ Իսկ դաշնակցության ներկայացուցիչները մասնակցեցին և հուսախաբվեցին։ Հնչակյանները մինչև 1906-ը այլևս պաշտոնական ոչ մի առնչություն չունեցան իթթիհադի հետ, իսկ նրանց թերթերը շարունակեցին նրա գործունեության քննադատությունը։

1906-ի հուլիսին, երբ Ահմեդ Ռիզան, դոկտոր Նազիմը և Բիհաէդդին Շաքիրը հանդիպեցին հնչակ ղեկավարների հետ (Սապահ Գուլյան, Մ. Բոյաջյան և Ա. Աշրգպաշյան), նրանք ըմբռնում էին օսմանյան կայսրությանը սպառնացող փլուզման վտանգը և օժանդակություն էին փնտրում հայերի մոտ։ «Տակավին ամեն բան կորած չէ. դեռ կարող ենք մեր պետությունը անկումից ազատել, արաբներից ավելի՝ այս գործի մեջ, մեզ կարող են օգնել մեր հայ հայրենակիցները։ Հարկավոր է, որ միայն հասկացողության գանք և մեր փոխադարձ շահերը լավ հասկանանք»,— մի քանի անգամ կրկնում էր Ահմեդ Ռիզան (15, էջ 186—187)։

Այնուհետև տեղի ունեցած հանդիպումների ժամանակ քննարկվում էին «հայկական դատ և համապետական ուղղություն», «ինքնավար Հայաստան և Թուրքիա», «դեմոկրատական սահմանադրություն և միդհատյան սահմանադրություն», «հայկական խնդիրը և արտաքին միջամտությունը», «սոցիալիզմը և ազգայնականությունը», «ազգություն և օսմանականություն (օտոմանիզմ)» և այլ հարցեր։

Երիտթուրքերը պնդում էին բոլոր հարցերը քննարկել տերության ամբողջականությունը հարգելու անհրաժեշտությունն ընդունելով։ Նրանք նույնիսկ բերում էին Ռուսաստանի օրինակը, որտեղ միասնական, համընդհանուր պայքար էր մղվում միայն ցարի իշխանության դեմ։ Սակայն երիտթուրքերն ընդունեցին քաղաքական ինքնավար Հայաստան ստեղծելու հարցադրումը։ Այն չպետք է անջատվեր կայսրությունից, բայց կարող էր ունենալ եվրոպացի կառավարչապետ։

Հաջորդ հանդիպումների ժամանակ, երբ քննարկվում էին խնդրի մանրամասները, պարզ դարձավ, որ երիտթուրքերի

գաղափարախոսները այլամերժ դիրքում էին։ Նրանք Թուրքիայում մի՝ օսմանյան ազգ էին ճանաչում, այլ ազգերի գոյությունը չէին ընդունում։ Ահմեդ Բեղևի Թուրանը գրում է, որ հայերի գործողություններին ընդդիմանում էին ոչ միայն Աբդուլ Համիդն ու նրա կառավարությունը, երիտթուրքերը, այլև ամբողջ օսմանյան ազգը (36, էջ 167)։

Երիտթուրքերը փորձում էին այն տեսակետն արմատավորել, որ ընդհանուր, համապետական խնդիրները լուծելով կլուծվեին նաև մյուսները։ Հնչակյանները պատասխանում էին. «Եթե երիտասարդները ուզում են վերանորոգել ամբողջ Թուրքիան, Թուրքիայի մի մասի՝ Հայաստանի վերանորոգությունը, հայկական խնդրի լուծումը պիտի գար, որոշ աստիճանով, նպաստելու ամբողջությանը, մասնավորից ընդհանուրին երթալու մեթոդով»։ Ահմեդ Ռիզան և մյուսները հայկական դատը ճանաչելու համար պահանջում էին, որպեսզի հնչակյանները նպաստեին համապետական խնդիրների լուծմանը։ Վերջիններս հայտարարեցին, թե «Հայաստանի քաղաքական ինքնավարությունը մեր էական և առաջին պայմանն էր. միայն այդ գաղափարի ընդունելովն էր, որ մենք կարող պիտի լինեինք համաձայնության եզր գտնել» (15, էջ 190)։

Հայ ժողովրդի ապագա դահիճներից Բեհաէդդին Շաքիրը հարցրել էր, թե ինչ էին անելու հայերը Հայաստանի Թուրք և քուրդ բնակիչներին։ Պատասխան էր տրվել, որ նրանք օգտվելու էին այն բոլոր քաղաքական, տնտեսական, ընկերային իրավունքներից, ինչ-որ հայերը։ Ծանոթանալով Հայաստանի ինքնավարության սահմանների նախագծին, երիտթուրք պարագլուխները շշմել էին։ Այն ընդգրկում էր նաև Կիլիկիան։ Դրանով իսկ կայսրությունը փաստորեն բաժանվում էր երկու մասի։ Ահմեդ Ռիզան իր ընկերների անունից հայտարարեց, որ համաձայն են Կիլիկիայում բարենորոգումների մտքին տեղական պայմաններին համեմատ, իսկ Հայաստանի համար ինքնավարության՝ ոչ անջատողականության հիմունքով։

Երիտթուրքերը ժխտում էին սոցիալիզմի հնարավորությունը Թուրքիայում։ Նրանք հայտարարում էին, թե այդ մասին խոսք անգամ չի կարող լինել, քանի որ իրենք շատ բան չգիտեն նրա մասին և մտադիր չեն երկրում այդպիսի

գաղափարներ քարոզել, թուրք ժողովրդին «անընդունելի» բաներ ներարկել։

Ահմեդ Ռիզան և մյուսները մեկ ազգ՝ օսմանյան ազգ էին ճանաչում։ Կարճ ժամանակ անց Սապահ Գուլյանը «Հնչակ» թերթի էջերում (1907-ի մարտ-ապրիլ) երիտասարդ թուրքերի կողմից կուռքի վերածված միդհատյան սահմանադրությունը որակում էր «թեոկրատական», «դեսպոտական», «բացարձակապետական» և «ինքնակալական»։ Տարիներ շարունակ եվրոպական քաղաքակրթության անունից խոսող երիտթուրքական պարագլուխները բոբիկ էին ընկերային, տնտեսական, քաղաքական և այլ խնդիրների մարզում։ Եվ միանգամայն բնական է, որ ի վերջո նրանք ընթացան դեպի իրենց բնական միջավայրը, իրենց սազական և պատշաճ դերը՝ ասիականությունը կամ թուրքականությունը։

Ամենափոքր համեմատությունն անգամ բավական է համոզվելու համար, որ երիտթուրքական սոցիալ-քաղաքական միտքն իր մակարդակով զիջում էր այն ժամանակվա արևմտյան ազատագրական պայքարի քաղաքական ղեկավարների տեսական-գաղափարական պատրաստությանը։

Այս տեսակետից պատմական արժեքավոր փաստաթուղթ է Վանի դատարանում (1898) արտասանված հայ ազգային-ազատագրական պայքարի հայտնի գործիչ Փարամազի ճառը։ Այն հետաքրքրական է ա) հոետորի սոցիալ-քաղաքական հայացքներն ըմբռնելու և բ) թուրքական իրականությանը ներկայացրած նրա մեղադրանքներին ծանոթանալու տեսակետից։ Բերենք մի քանի նմուշներ նրա մտքերից։ «Սոցիալիզմ-ընկերավարություն։ Ի՞նչ է ասում այդ գիտությունը։ Նա հայտարարում է, որ մարդկային թշվառության, պատերազմների և անհավասարությանց միակ և հիմնական պատճառը տնտեսական պայմաններն են, պայմաններ, որոնք ստեղծել են շահերով և հետևաբար ըմբռնումներով իրար հակառակ դասակարգեր և որպես դարման այս շարյաց, նա գալիս է իր հրամայականը դնելու» (17, էջ 140)։ Նա համոզված էր, որ հաղթանակելու էր «մեկն ամենքի, ամենքը մեկի համար» սկզբունքը։ Փարամազը կատարել է թուրքական իրականության ճշմարիտ վերլուծությունը։ «Տիրապետող կառավարողների ազգային պաշտոնական կրոնը չէին դավանում հպա-

տակված ժողովուրդները, և նրանք շնորհիվ այս հանգամանքի էլ ենթակա էին, բացի դասակարգային զրկանքներից, կոտորածների ու հալածանքների իրենց դասակից ու բախտակից, բայց տիրապետողների կրոնը դավանող, անգիտակից խաբվածների կողմից էլ։ Նա ցույց էր տալիս, որ «կրոնը՝ շահագործողների գլխավոր զենքերից մեկը, իր տխուր դերը շատ հաջողությամբ էր կատարում» (17, էջ 141)։ Դիմելով դատարանի նախագահին, նա ասում էր. «Բռնադատում եք, որ լռեն, խեղդում եք բողոքի աննշան ձայնն անգամ։ Տանելի ոչինչ չկա այս երկրում. ազգերի գոյությանը վտանգ է սպառնում։ Դուք ծրագրել եք և եռանդով էլ գործադրում եք այդ ազգերի ջնջումը. թույլ չեք տալիս, որ ապրեն ազգերն ու ժողովուրդները, և ապա վեր եք կենում և մեղադրում, որ բաժանվում են, անջատողականներ են։ Ստեղծեցեք երկրում փոքր-ինչ տանելի կարգեր, թույլ տվեք ազատ զարգանալու, և ոչ ոք չի մտածի բաժանվել» (17, էջ 142)։ «Մենք Հայաստան, ինքնավար Հայաստան ենք ուզում այնտեղ բնակվող ժողովուրդների համար, ուր չեն տիրապետելու բռնապետական կարգեր, ուր ազգ ազգի և ցեղ ցեղի վրա չեն տիրելու, ուր բացի ժողովրդական կամքից, գոյություն չի ունենա և ոչ մի թագավոր» (17, էջ 143)։ Նա դատարանում հռչակեց՝ «Բոլոր երկրների ընչազուրկներ, միացե՛ք», խոսքը վերջացնելով «Անկցի բռնապետությունը», «կեցցե սոցիալիզմը» լոզունգներով։

Այս հարցադրումներն ընդունելի չէին ինչպես սուլթանի, այնպես և երիտթուրքերի համար։ Դրա համար էլ Փարամազին սկզբում դատեցին ու ցմահ բանտարկության դատապարտեցին սուլթանն ու նրա համախոհները, ապա Փարամազին դատեցին և 1915-ին կախաղանի միջոցով մահվան դատապարտեցին երիտթուրքերը։

Սուլթանի իշխանությունը տապալելու խնդրում օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի համախմբման գործում էական դեր խաղաց Փարիզում 1907-ի դեկտեմբերին գումարված կոնգրեսը։ Բազմաթիվ աղբյուրներ Հ. Հ. դաշնակցությանը ակտիվ և նախաձեռնող դեր են վերագրում այդ համաժողովի կազմակերպման գործում (31, էջ 174)։ Այստեղ որոշվեց համատեղ ջանքերով տապալել սուլթան Աբդուլ Համիդ II-ին։ Գուտորը գրում է, որ 1907-ի Փարիզի կոնգրեսը դաշնակցության նախաձեռնությամբ էր հրավիրված (22, հավելված, էջ 55)։

Թուրք պատմաբաններ Ահմեդ Բեդևի Քուրանը, Սինա Աքշինը, անգլիացի էռնեստ Ռամզորը գրում են, որ 1907-ի կոնգրեսը հրավիրելու առաջարկությունն արել էր դաշնակցություն կուսակցությունը (36, էջ 125, 40, էջ 62)։ Մի այլ թուրք պատմաբան՝ Յուսուֆ Հիքմեթ Բայուրը Աթաթուրքին նվիրված իր գրքում պնդում է, որ Միություն և առաջադիմություն կոմիտեն էր այդ առաջարկությունն արել, քանի որ 1907-ի ամռանը Անգլիայի և Ռուսաստանի միջև Իրանի, Աֆղանստանի և Տիբեթի վերաբերյալ կայացված համաձայնությամբ Անգլիան հեռացել էր օսմանյան կայսրությունը Ռուսաստանից «պաշտպանելու» իր ավանդական դերից և թուրքական պետության համար ստեղծվել էր վտանգավոր իրավիճակ։

1907-ի II կոնգրեսի նախաձեռնությունը թուրք պատմաբան Ահմեդ Բեդևի Քուրանն ամբողջապես վերագրում է հայերին։ Դաշնակցությունը մի նամակ է հղում Սապահէդդինին, որտեղ համագումար հրավիրելու անհրաժեշտությունն է ապացուցում։ Առաջին հանդիպումը տեղի է ունենում Բեռլինում, Սապահէդդինի բնակարանում։ Դաշնակցությունից մասնակցում են Խաչատուր Մալումյանը (Ակնունի) և մեկ ուրիշը, որի անունը թուրք պատմաբան Քուրանը չի հիշատակում (36, էջ 234)։ Դաշնակցության ներկայացուցիչները իբր ասել էին, թե սուլթանի դեմ կատարված անհաջող մահափորձը վատ տպավորություն է թողել, և որ նրանք հայկական կոմիտեների ինքնուրույն, առանձին գործունեությունը արդյունավետ բան չեն համարում և համատեղ գործելու եզրակացության են հանգել (36, էջ 235)։

Դաշնակցությունը, որ 1901-ին մերժեց գործակցել երիտթուրքերի հետ, որովհետև նրանք չէին ընդունում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով հայոց համար նախատեսված բարենորոգումների և 23-րդ հոդվածով սահմանված Կրետեի և Մակեդոնիայի վիճակի բարելավման անհրաժեշտությունը, հրաժարվեց իր դիրքորոշումից և հայտարարեց, թե հայկական և մակեդոնական խնդիրները վերցվում են միջազգային

դիվանագիտության սեղանից և դառնում օսմանյան պետության ներքին խնդիրներ (5, № 4, 1909)։

Համաժողովում, սակայն, կարծիքների, տեսակետների ներդաշնակություն չկար։ Այն բանից հետո, երբ հայ պատվիրակները հայտարարեցին, թե կոնգրես չեն եկել պաշտպանելու և ճանաչելու «սուլթանաթի և խալիֆաթի իրավունքները», այդ բանի վրա պնդող Ահմեդ Ռիզան բողոքի ցույց արեց (28, էջ 243, 247)։

Հ. Հ. դաշնակցությունը մերձեցավ երիտթուրքերին, փորձեց օգուտ քաղել 1908-ի հեղաշրջումից, անսկզբունք համագործակցության խարիսխներ ձգեց թուրք շովինիստներին, անդառնալի վնասներ պատճառելով արևմտահայության ազատագրության մաքառումներին։

Արշ. Չոպանյանն էլ է շեշտում, որ դրոշակիրներն էին նախաձեռնել օսմանյան պետության բոլոր մաքառող ընդդիմադիր տարրերի համաժողով գումարելու գործը (3, № 1—4, 1908, էջ 45)։ Արաբները, ալբանացիները և մակեդոնացիները մերժել էին մասնակցել այդ համաժողովին։ Միայն դրոշակիրներն էին համաձայնություն տվել Ահմեդ Ռիզայի զուտ թուրքական ծրագրին։ Կոնգրեսի որոշումների էական կետերն էին. 1. գահընկեց անել սուլթան Համիդին, 2. արմատապես փոխել ներկա ռեժիմը, 3. հաստատել սահմանադրական կարգեր։

Արշ. Չոպանյանը զայրանում էր, որ այնտեղ ոչ մի խոսք չէր ասված միջազգային պայմանագրերի գործադրության մասին։ Հենց սա էր, որ ուզում էր Ահմեդ Ռիզան։ Նա հիշեցնում էր 1902-ին ազատական օսմանցիների համաժողովի մասնակից դաշնակցական Պ. Սիսյանի հայտարարությունն այն մասին, որ «կա մեկը ժեռն-թուրքերու մեջ, որուն հետ հայերը երբեք չպիտի համաձայնին, և այն Ահմեդ Ռիզան է»։ Այս փաստը մատնացույց անելով, նա իր զարմանքն էր հայտնում կատարված փոփոխության առթիվ։

Արշ. Չոպանյանը ծաղրում էր դաշնակցության նոր տակտիկան, թուրքական հետամնաց իրականության մեջ թուրք, հայ, քուրդ «պրոլետարիատի» հաղթանակին ծառայելու նրա ճամարտակումները։ «Յումանիտե»-ի էջերում Լոնդեի տված մի հարցազրույցին կից տեղադրվել էր Տարոնի

Աղբյուր Սերոբի ու նրա զավակների լուսանկարը, որի տակ գրվել էր՝ «Թուրք-հայ» հեղափոխականների մի խմբանկար։ Արշ. Չոպանյանը զայրացած էր այդ նկարը տրամադրած Ակնունու վրա, որը սրբապղծություն էր արել նահատակված երեք ֆիդայիների հիշատակին (3, № 1—4, 1908, էջ 45)։ Նա նշում էր, որ հայ քաղաքական կյանքը պառակտված էր, որ հնչակյանությունը բաժանված էր երեք մասի։ «Այս տխուր կացությունը կրնար բոլորովին բարեփոխվել, եթե դաշնակցությունը, փոխանակ ժեռն-թուրքերի հետ համաձայնելու, հայ հեղափոխական բոլոր տարրերուն միացման գործին աջակցած և ուժեղ ու անկեղծ թափով մը զայն բացարձակ հաջողման հասնելու նպաստած ըլլար։ Դաշնակցությունը ճիշտ հակառակն ըրավ. այն եռանդն ու խանդավառությունը զոր ցույց տվավ թուրքերուն հետ համաձայնելու, այդ նույն եռանդն ու խանդավառությունը պարզեց տարիներե ի վեր հայ հեղափոխական կուսակցությանց միացումի ծրագիրը վիժեցնելու» (3, № 1—4, 1908, էջ 46)։ Չափազանց ուշագրավ են Արշ. Չոպանյանի ստորև բերվող խոսքերը, որոնք կանխատեսում էին արյունոտ գալիքը։ Նա գրում էր. «Այն օրը որ՝ դաշնակցության «հայ» ուժերուն աջակցության շնորհիվ՝ թուրքական արդի ռեժիմը տապալվի և սահմանադրություն մը հաստատվի, ժեռն-թուրքերը ոչ մեկ ազգի գոյություն պիտի ընդունին Տաճկաստանի մեջ, բացի օսմանյան ազգեն և նույնիսկ հայ արյունով հաստատված այդ սահմանադրությունը պիտի իբր զենք գործածեն «հայկական դատը» վերջնապես սպանելու համար» (3, № 1—4, 1908, էջ 46)։

Քննադատելով կոնգրեսի այն հայտարարությունը, թե թուրքն ու հայը հավասարապես են տառապում, հավասարապես են մաքառում արդարության և ազատության համար, Արշ. Չոպանյանը ցույց էր տալիս, որ դրանով իսկ ժխտվում էր այն ճշմարտությունը, որ թուրքն էր քանդողը, ջարդողը, շահագործողը։ Այս բանն ապացուցված էր հույների, սերբերի, բուլղարների, մարոնիթների, կրետացիների պայքարով։

Արշ. Չոպանյանը 1908-ին գրեց, թե «Փարիզի վերջին կոնգրեսին մեջ սպանվեցավ... հայկական դատը» (3, № 1—4, 1908, էջ 44)։ Դաշնակցության դիրքորոշումը նա գնահատում

էր որպես «դրոշակային կուսակցության ապազգայնական խաթարման վերջին դրվագ»։ Կոնգրեսը նա գնահատում էր որպես «ժեոն-թուրքերու համար ընդհանրապես և Ահմեդ Ռիզային հաղթանակ մը համար մասնավորապես»։ «Թուրքահայ հասարակության քաղաքական աղատագրությունը ձեռք ձգելու միակ նպատակով հիմնված այդ կուսակցությունը այս կոնգրեսին մեջ ինքզինքն հանդես բերավ իբր օսմանյան պետությունը վերականգնելու, թուրք ժողովրդի՝ հայի արյունով աղտոտված վարկը բարձրացնելու և հայու ազգությանց պատմական ինքնուրույնություններուն օսմանյան խորհրդարանի մը քուրային մեջ հալեցնելու նպաստող մարմին մը» (3, № 1—4, 1904, էջ 44)։

1. Լենին Վ. Ի., Երկեր, 4-րդ հրատ.։
2. Ալպոյաճյան Ա.Ղ., Պատմություն Մալաթիա Հայոց, Բեյրութ, 1961։
3. «Անահիտ», ամսագիր, Փարիզ։
4. «Արմենիա», թերթ, Մարսել։
5. «Դրոշակ», թերթ, ժնև։
6. Նազրենան Գուրգեն, Աբդուլ Համիդ Բ. Կարմիր սուլթանը, Բեյրութ, 1980։
7. Լյուքսեմբուրգ Ռ., Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան, «Բանբեր Երևանի համալսարանի», № 197։
8. «Հայք», թերթ, Նյու Յորք։
9. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 11։
10. «Մշակ», թերթ, Թիֆլիս։
11. «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս։
12. «Նոր դար», թերթ, Թիֆլիս։
13. «Նոր կյանք», թերթ, Լոնդոն։
13. ա. Պատմություն ս.-դ. հնչակյան կուսակցության, 1887—1962, Ա. հատոր, Բեյրութ, 1962։
14. Սապահ Գուլյան, Հայկական խռովություններ։ Թուրքի զարթումն, «Նոր դար», № 164, 13. 9, 1895։
15. Սապահ Գուլյան Ս., Պատասխանատուները, Պրովիդենս, 1916։
16. Սապահ Գուլյան Ս., Ֆրանսիական մամուլը և հայկական խնդիրը, «Նոր դար», № 149, 19. 8. 1895։
17. Քսան կախաղաններ. Նվեր 1915 հունիսի 2/15-ին, Կ. Պոլսու մեջ կախաղան հանված քսան ս.-դ. հնչակյան ընկերներու հիշատակին, Պրովիդենս, 1916։

18. Айзенштейн Н. А. Некоторые аспекты изучения культуры современной Турции, журнал «Народы Азии и Африки», № 3, 1980.
19. Алиев Г. З. Турция в период правления младотурок (1908—1918 гг.), М., 1972.
20. Алимов А. А. Революция 1908 г. в Турции. Сб. «Пробуждение Азии», М., 1935.
21. Горцев, Младотурки и рабочий вопрос. «Современник», кн. 4-ая, 1912.
22. Гутор М. Д. Новейшая история Турции и Персии (XVIII, XIX и XX столетия), Тифлис. 1913.
23. Еремеев Д. Е. Этногенез турок, М., 1971.
24. Кряжин В. Политические группировки Турции, Младотурки, журнал «Новый Восток», № 1, 1923.
25. К. Маркс, Ф. Энгельс, Соч., изд. 1.
26. Миллер А. Ф. Оттоманская империя (Султанская Турция), Высшая партийная школа при ЦК ВКП (б), М., 1946.
27. «Новое Время», газета, СПб.
28. Петросян Ю. Младотурецкое движение, М., 1971.
29. Сенкевич И. Г. Младотурецкая революция 1908 года и албанское национальное движение, «Советское востоковедение», № 1, 1958.
30. Твертинова А. С. Младотурки и пантюркизм. — «Краткие сообщения Института востоковедения АН СССР, т. XXII, М., 1956.
31. Тер-Арутюнов А. Политические партии в современной Турции, журнал «Русская мысль», № 9, 1908.
32. Тыркова Ариадна. Старая Турция и младотурки. Год в Константинополе. П., 1916.
33. Шелковников Б. Младотурки, как политическая партия и роль их в турецкой армии, «Известия штаба Кавказского военного округа», № 1—2, 1904.
34. Шпилькова В. И. Младотурецкая революция, 1908—1909 гг., М., 1977.

35 Fahri, Ali Congrés de la Jeune Turquie. Genève, 1900.
36 Kuran, Ahmed Bedevi Jnkilâp Tarihimiz ve Jön Türkler, Istanbul, 1945, h. I

37 Luke, Harry, Governor of Malta. The Making of Modern Turkey. London, 1936.
38 Ramsaur E. E. The Yong Turks. Prelude to the Revolution of 1908. New Jersey, 1957.
39 Robinson D. The ferst Turkish Republic, A Case Study in National Development, Cambridge, Massachusettes, 1963.
40 Sina Akşin 100 Soruda Jön Türkler ve Jttihat ve Terakl, 1980, Istanbul.
41 Walker Christopher J. Armenia; The Survival of a Nation, N. Y., 1980.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ

(1908—1914 թթ.)

Վ. Ի. Լենինը 1908-ի հեղաշրջման մասին: Երիտթուրքերի սոցիալ-քաղաքական էությունը: Հեղաշրջման արտաքին-քաղաքական դրդապատճառները: Երիտթուրքերը բանվորական շարժման թշնամի: Էնվերի, Թալեաթի, Ջեմալի, Նազիմի և երիտթուրքական մյուս պարագլուխների դիկտատուրայի սկզբնավորումը: Երիտթուրքերի գաղափարախոսության գենեզիսը. օսմանիզմ, պանթուրքիզմ, նաև պանիսլամիզմ: Թուրքիզմի և պանթուրքիզմի սխալ մեկնաբանությունները: Թուրքական շովինիզմի գաղափարախոսներ Զիա Գյոք Ալփի, Թեֆիկ Ալփի, Յուսուֆ Աքչուրայի և այլոց մարտաշունչ ճակառուական, ճակատայիկական տեսությունները: Անգլիացի Քրիստոֆեր Ռոկերը նացիզմի և պանթուրքիզմի նմանության մասին: 1908-ի հեղաշրջումը բուրժուական վերնախավի գործն էր:

Վ. Ի. Լենինը տվել է երիտթուրքական հեղափոխության դասակարգային գնահատականը, այն բնութագրելով որպես բուրժուական, վերնախավային: «Թուրքիայում հաղթանակեց հեղափոխական շարժումը զորքերի մեջ՝ երիտասարդ թուրքերի ղեկավարությամբ,— գրում էր Վ. Ի. Լենինը «Դյուրավառ նյութը համաշխարհային քաղաքականության մեջ» հոդվածում:— Ճիշտ է այդ հաղթանակը կես հաղթություն է կամ նույնիսկ հաղթության մի փոքր մասն է, որովհետև թուրքական Նիկոլայ Երկրորդը առայժմ միայն խոստացել է վերականգնել թուրքական հռչակավոր սահմանադրությունը» (1, հ. 15, էջ 216—217): Ավելի ուշ նա մատնացույց էր անում երիտթուրքերի չափավորությունն ու վախկոտությունը, նշում էր նրանց կատարած հեղաշրջման վերնախավային բնույթը, որը չլուծեց սոցիալ-տնտեսական ու քաղաքական և ոչ մի

խնդիր։ «Եթե օրինակի համար վերցնենք XX դարի հեղափոխությունները,— գրում էր նա «Պետություն և հեղափոխություն» գրքում,— ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական և թուրքական հեղափոխություններն էլ բուրժուական համարել։ Բայց նրանցից ոչ մեկը, ոչ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկել այդ հեղափոխություններից և ոչ մեկի մեջ» (1, հ. 25, էջ 537)։

1908-ի հեղաշրջումը և Համիդին գահընկեց անելը, որ դիպվածով հաջողությամբ պսակվեցին, Փարիզում գտնված մտավորական աքսորականների և Մակեդոնիայում գտնված թուրքական զինվորական ուժի ջանքերի միավորման արդյունք էր։

Միություն և առաջադիմություն կոմիտեն «ձգտում էր իմպերիալիզմին դիմադրելու անկարող ֆեոդալական-թեոկրատիկ օսմանյան կայսրությունը վերածել բուրժուասահմանադրական պետության, ուժեղացնել թուրքական բուրժուազիայի դիրքերը երկրի տնտեսական կյանքում և նրան մասնակից դարձնել քաղաքական իշխանությանը» (45, էջ 26)։

Անդրադառնալով երիտթուրքերի դասակարգային էությանը, ժամանակին «Իզվեստիան» շեշտում էր այն հանգամանքը, որ նացիոնալիստական այդ կուսակցության սոցիալական բազան կալվածատերերն էին, բյուրոկրատական հին ու փտած վերնախավը, որ նա չէր հենվում վեր բարձրացող նոր դասակարգերի վրա («Խորհրդային Հայաստան», № 179, 11. 8. 1922)։

Երիտթուրքական շարժումը բուրժուալիբերալ ուղղություն ուներ։ Ոմանց կողմից նրան վերագրվող բուրժուական հեղափոխականությունը կամ նույնիսկ դեմոկրատիզմը ոչ մի առնչություն չուներ իրականության հետ։ Երիտթուրքերի գործունեության մեջ չկար ո՛չ հեղափոխականություն, ո՛չ դեմոկրատիզմ։ Սուլթանի միահեծանության նկատմամբ հաղթանակ տարած երիտթուրքական արկածախնդիր պարագլուխները առաջին իսկ օրվանից ունեին մի մտահոգություն՝ փրկել օսմանյան կայսրությունը։ Այս առումով էլ նրանց շարժումն ընթացավ նախ և առաջ շովինիստական ուղիով, հպատակ ազգերի ու ժողովուրդների շահերը ոտնակոխելու ճանապարհով։

1908-ի հեղաշրջումն ուներ իր արտաքին քաղաքական դրդապատճառները։ Այն շատ բանով հիշեցնում էր 1876-ի դեկտեմբերը, երբ արևմտաեվրոպական դիվանագիտության պահանջը շրջանցելու, Բալկաններում բարենորոգումներ չմտցնելու նպատակով հռչակվեց միդհատյան սահմանադրությունը։ Հեղաշրջման նախօրյակին Մակեդոնիայի խնդիրը նորից օրակարգի հարց էր դարձել։ Նորից սուլթանը մեղադրվում էր արտաքին ճնշումից կայսրությունը պաշտպանելու անկարողության մեջ։ 1908-ի հեղաշրջումը նախ և առաջ տերությունների միջամտությունը կանխելու, օսմանյան կայսրության ամբողջականությունն արտաքին քաղաքական ոտնձգություններից զերծ պահելու նպատակ էր հետապնդում։

Երիտթուրքերի ելույթի նախօրյակին, 1908-ի հունիսի 10-ին Ռևելում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Անգլիայի և Ռուսաստանի միապետները համաձայնության եկան Մակեդոնիայում բարենորոգումներ իրականացնելու խնդրի շուրջը։ Երիտթուրքերի աչքում այս համաձայնությունը օսմանյան տիրույթների նոր բաժանման քայլ էր ներկայանում։

Հեղաշրջումն արձագանքն էր անգլո-ռուսական այն պահանջի, որով Մակեդոնիայում աշխարհիկ դատարանների գլուխ կանգնելու էին եվրոպացիներ (83, էջ 253)։ Սա հենց վկայությունն էր այն բանի, որ երիտթուրքական պարագլուխները չէին ճանաչելու ճնշված ազգերի իրավունքները, հրով ու սրով էին դիմավորելու ազգային-ազատագրական շարժման յուրաքանչյուր դրսևորում։

Ցարիզմն ակտիվացրել էր իր քաղաքականությունը թուրքական գործերում։ 1896-ից հետո առաջին անգամ խոսվում էր օսմանյան կայսրության գործերին ռազմական միջամտության հնարավորության մասին։ Այս նպատակով Պետերբուրգում 1908-ի հունվարի 21-ին հատուկ խորհրդակցություն գումարվեց։ Սակայն ակտիվ արտաքին քաղաքականության դեմ հանդես եկավ Ստոլիպինը։ Նա գտնում էր, որ «Ռուսաստանում նոր մոբիլիզացիան ուժ կհաղորդեր հեղափոխությանը, որից մենք նոր ենք սկսում դուրս գալ»։ Նա զգուշաց-

նում էր «դինամիտիայի համար» ծագելիք վտանգից (49, էջ 97)։ Արտաքին քաղաքականության բնագավառում ցարիզմի համար գլխավոր չափանիշը մնում էր ներքին վիճակը, հեղափոխության վտանգը։ Իհարկե, և՛ Ռուսաստանը, և՛ եվրոպական մյուս տերությունները բացահայտ միջամտությունից ձեռնպահ մնացին։

«Լիբերալ տրամադրված տարրերը Թուրքիայում պաշտպանեցին հեղափոխությունը, որպեսզի խանգարեին մեծ տերությունների միջամտությունը օսմանյան կայսրության ներքին գործերին և դրա հետ մեկտեղ մոդեռնացնեին Թուրքիան, բարձրացնելով տիրապետող ազգի ինքնագիտակցությունը» (36, էջ 6—7)։ Սալոնիկում, թե Կ. Պոլսում տեղի ունեցածի մեջ անսպասելի շատ բան կար։ «Անարյուն թուրքական հեղափոխությունը գլխի վրա շուռ տվեց եվրոպական դիվանագիտության բոլոր հաշիվները» (58)։ Պատմությունը կրկնվում էր։ Ինչպես 1876-ին, երբ հռչակվեց միդհատյան սահմանադրությունը, այնպես էլ 1908-ին, երբ վերահաստատվեց այդ սահմանադրությունը, գլխավոր մտահոգությունը արտաքին հարվածներից կայսրությունը փրկելն էր, պետության ամբողջականության պահպանումը։ Այս նպատակն իրականացնելու խնդրում սուլթանին շրջապատած դիվանագետ քաղաքագետների մի ստվար մասը լիովին համակարծիք էր 1908-ի պետական հարվածին, որը պետք է կանխեր կամ գոնե առժամանակ հետաձգեր տերության խորտակումը (19, էջ 89)։

Մոտավորապես նույնպիսին էր այն հայտարարության բովանդակությունը, որ երիտթուրքերի Փարիզի կենտրոնը հղեց մեծ տերությունների դեսպաններին։ Այս փաստաթղթում դեսպաններից խնդրվում էր համոզել սուլթանին հրաժարվել դիմադրությունից ու արյունահեղությունից, որ իրենք լոյալ էին լինելու մեծ տերությունների շահերի նկատմամբ և այլն։ «Եվրոպան պետք է դադարեցնի օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտությունը մակեդոնական հարցի կապակցությամբ»,— ասված էր այդ հուշագրում։ Փաստաթղթի հեղինակները Եվրոպային կոչ էին անում ձեռնպահ մնալ ինտերվենցիայի փորձից (64, էջ 101)։ Հայտարարության մեջ ոչինչ չէր ասվում երկրի ապագա պետական ու

քաղաքական կառուցվածքի մասին։ Երիտթուրքերի և ճնշված ժողովուրդների բուրժուահեղափոխական և ընդդիմադիր կազմակերպությունների միջև ձեռք էր բերվել լոկ ժամանակավոր, տակտիկական բնույթի համաձայնություն, որը հետապնդում էր իշխանությունը սուլթանից խլելու նպատակ։

Տերություններից ոչ մեկը մտահոգված չէր ճնշված ժողովուրդների ճակատագրով։ Նրանցից յուրաքանչյուրը նոր իրադրությանը համապատասխան սեփական շահն էր փնտրում Թուրքական քաոսում։ Արևմտյան դիվանագիտության վրա հույս դրած մարդկանց նոր հուսախաբությունն անխուսափելի էր։

Լոնդոնը անհանգիստ էր օսմանյան կայսրությունում գերմանական դիրքերի հարաճուն ուժեղացումից։ Այդ պատճառով էլ անգլիական կառավարությունը հույս էր փայփայում, որ 1908-ի հեղափոխությունը արտաքին քաղաքական կուրսի փոփոխություն էր առաջացնելու, և Բ. դուռը վերըստին թեքվելու էր Լոնդոնի կողմը։ Բրիտանական կաբինետի արտաքին գործերի մինիստր Է. Գրեյը հրճվանքով երիտթուրքական հեղափոխությունն անվանեց «պատմության մեջ տեղի ունեցած բարեբեր փոփոխություններից մեկը», իսկ Քամիլ փաշային փառաբանեց որպես Արևելքի Միրաբոյի (23, էջ 24)։

Անգլիական քաղաքականության շահերի տեսակետից Աբդուլ Համիդի ռեժիմն իդեալական էր մինչև այն պահը, երբ գերմանական ներթափանցումը ռեալ դարձավ։ Դրությունը փոխվեց։ Վերջին հաշվով Համիդը տապալվեց Անգլիայի և Ֆրանսիայի օժանդակությամբ։ Բայց իշխանության գլուխ անցան ոչ թե Եվրոպայում ծվարած վտարանդի երիտասարդ թուրքերը, այլ բուն երկրում, գերմանացի ֆոն դեր Հոլցի աշակերտները դարձած երիտթուրքերը։ Սկզբում կազմակերպվեց 1909-ի գարնան հակահեղափոխական հեղաշրջումը։ Հետո անգլիական դիվանագիտությունը նրբորեն Իտալիային դրդեց զավթելու Տրիպոլին։ Այս քայլով Անգլիան երեք բան շահեց. նախ, Իտալիան փաստորեն դուրս եկավ եռյակ դաշինքից՝ հեռացավ Գերմանիայից և Ավստրիայից։ Այնուհետև Թուրքիան դուրս մղվեց Հյուսիսային Աֆրիկայից, դրանով իսկ ապահովվեց Եգիպտոսի անվտանգությունը։ Երրորդ, վարկաբեկվեցին երիտթուրքերը, որոնք բացահայտեցին օս-

մանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու իրենց անկարողությունը (51, էջ 187)։

Բեռլինի կոնգրեսից հետո 30 տարիների ընթացքում Ավստրո-Հունգարիան թեև մեծապես ամրապնդվել էր Բոսնիայում և Հերցեգովինայում, բայց վերջնականապես չէր կարողացել իրացնել այդ անեքսիան։ 1908-ի հոկտեմբերին, օգտվելով երիտթուրքերի հեղաշրջման հետևանքով Թուրքիայում ստեղծված քաղաքական նոր իրավիճակից, Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր բարոն Էրենտալը փորձեց «պարզություն» մտցնել Բոսնիայի և Հերցեգովինայի հարցում։ Այդ պահին անգլիական, ինչպես նաև ռուսական դիվանագիտությունը դեմ չէր հասունացող կոնֆլիկտն օգտագործել Թուրքիային Ավստրո-Հունգարիայի, նաև Գերմանիայի դեմ գրգռելուն։ Սակայն Գերմանիայի արտաքին քաղաքականության ղեկավար Բյուլովին հաջողվեց միջնորդի դեր խաղալ, և 1909-ի փետրվարին համաձայնություն կայացվեց Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի միջև (32, էջ 48, 53, 54)։

Բալկաններում Ավստրո-Հունգարիայի էքսպանսիան պաշտպանություն էր գտնում Բեռլինում։ Այս բանն ամենասուր կերպով ազդում և դժվարացնում էր Պետերբուրգի հետ Գերմանիայի փոխհարաբերությունները։

□

Վ. Ի. Լենինն իր «Իրադարձությունները Բալկաններում և Պարսկաստանում» հոդվածում մատնանշում էր, որ երիտթուրքական «հեղափոխությունը թշնամի է օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին» (1, հ. 15, էջ 268—269)։ 1908-ի սահմանադրությունը Թուրքիային չտվեց ո՛չ իսկական իրավական պետություն, ո՛չ իսկական պառլամենտարիզմ։ Թուրքիայի սահմանադրական կարգն անմիջապես բնութագրվեց որպես խաբեություն (78, էջ 102)։

Թուրագետ Ա. Ֆ. Միլլերը երիտթուրքական հեղաշրջման մեջ տեսնում է «բուրժուական հեղափոխության առաջին արտահայտությունը» (46), թեև ինքը ինչ անց ցույց է տալիս այդ հեղաշրջման վերնախավային բնույթը, նրա ոչ ժողովրդական էությունը։

Երիտթուրքերն իշխանության տեր դարձան որպես լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչներ։ Բայց նրանք չլուծեցին բուրժուադեմոկրատական հեղափոխության հիմնական խնդիրները, ժողովրդին չազատեցին ֆեոդալիզմի կապանքներից։

Կարճ ժամանակում պարզ դարձավ, որ երիտթուրքերի կուսակցությունը կալվածատիրական, կոմպրադորական-բուրժուական մի հետադիմական կազմակերպություն է (62, էջ 54)։ Շատ շուտ ի հայտ եկան երիտթուրքերի արատները, նրանց գործելակերպի հակաժողովրդական էությունը։ Կայսրության բոլոր մասերում էլ քննարկվում էին նրանց գործողությունները, վաղվա օրվա հեռանկարները։ Եվ այս բնագավառում տեսակետների, դիպուկ բնութագրումների պակաս չէր զգացվում։

Երիտթուրքական հեղափոխությունը համեմատելով 1905—1907 թթ. ռուսական հեղափոխության հետ, Ռուսաստանի բուրժուական հրապարակախոսները և հասարակական-քաղաքական գործիչները բավարարվածության զգացումով արձանագրում էին, որ Թուրքիայում բացակայում էին դասակարգային հակասությունների սրությունը, պայքարի այն թափը, որոնց նրանք հանդիպում էին իրենց երկրում։ Կադետները երիտթուրքական հեղաշրջման, «սոցիալական շարժման» թուլության մեջ տեսնում էին ոչ թե բացասական, այլ դրական կողմ։ Օկտյաբրիստները նույնպես հավանություն էին տալիս երիտթուրքերի ներքին քաղաքականությանը (63, էջ 51)։

Ռուսական միապետական վերնախավը չափազանց անհանգիստ էր, որ Թուրքիան կընթանա դեմոկրատական զարգացման ուղիով։ «Երիտթուրքական սահմանադրականները ոչ միայն չեն շտապում արագացնել և ամրապնդել դեմոկրատական հիմունքները, այլ, ընդհակառակը, ասորիճանաբար ռեակցիայի դեմ պայքարից անցնում են ռեակցիայի հետ համաձայնության...,— գրել է Վ. Վ. Վորովսկին «Օդեսսկոյե օբոզրենիե» թերթում 1908-ի օգոստոսին։— Երիտթուրքերը ձգտում են հանգցնել հեղափոխության հրդեհը, որն իրենց իշխանության գլուխ բերեց»։ Ավելի ուշ, 1909-ի հունվարին նա գրում էր. «Ամենքին հայտնի է, որ երիտթուրքերը դրանք

թուրքական կադետներն են։ Եվ իրենց հեղափոխությունը նրանք արել են «միլյուկովյան ձևով»— պատշաճորեն կոռեկտ, պրոֆեսորավարի» (63, էջ 56)։

Երիտթուրքական ղեկավարությունը ամեն կերպ ձգտում էր իմպերիալիստական տերություններին ապացուցել իր «բարեհուսությունը»։ Նա գահի վրա պահեց Աբդուլ Համիդին, հանդես եկավ գործադուլների դեմ, դրանք ճնշեց բանակի միջոցով։ Այն շատ շուտով դարձավ ժողովրդական զանգվածների բացահայտ թշնամին, շովինիստական աղանդ (45, էջ 31)։ Դեռ ոչինչ չարած նրանք համարեցին հեղափոխությունն ավարտված, խոչընդոտեցին երկրի դեմոկրատացման պրոցեսը։

Մինչև 1911-ի նոյեմբեր իթթիհադին ընդդիմադիր թուրքական կուսակցություն չկար երկրի ներսում։ Այդ տարվա ավարտին ստեղծվեց «Լիբերալ միությունը»՝ իթթիլաֆը։ 1912-ի ապրիլին տեղի ունեցած պառլամենտական ընտրությունների ժամանակ, երբ մեծ չափով դրսևորվեց կաշառքի, կեղծիքի ու բռնությունների պրակտիկան, նորից պարզ դարձավ, որ դեմոկրատիզմի ճանապարհով երկրի առաջընթացը բացառվում է։

Երիտթուրքական սահմանադրությունը սուլթանի իրավասությանն էր թողնում մեծ վեզիրի, շեյխ ուլ-իսլամի նշանակման, երեսփոխանների պալատի ցրման և այլ իրավունքներ։ Սուլթանն անվանապես մնում էր զինված ուժերի հրամանատարի պաշտոնում։ Նա կարող էր պատերազմ հայտարարել և խաղաղություն կնքել։

Բոլշևիկյան «Պրավդան» նշում էր, որ երիտթուրքական «իշխանությունը հիմնվում էր բացառապես կոպիտ ֆիզիկական ուժի վրա», որ «նոր ռեժիմի գազանությունները, կաշառումներն ու կաշառակերությունը գրեթե ոչնչով չէին տարբերվում «կարմիր սուլթանի» ժամանակից» (53, № 93, 1912)։

Երիտթուրքական հրատարակություններից մեկում շատ բացորոշ գրվեց, որ իթթիհադն իրեն չի կարող իշխանության գլուխ պատկերացնել առանց թագավորող դինաստիայի (33, էջ 212)։ Հետագայում Ահմեդ Ռիզան չափազանց գոհ էր, որ իր՝ պառլամենտի նախագահի կողքին նստած Աբդուլ Համիդը սուլթանական ձեռքերով ջուր էր լցնում նրա բաժակի մեջ։

Երիտթուրքերը չկարողացան լուծել թուրքական իրականության առջև ծառացած հակաֆեոդալական և հակաիմպերիալիստական պայքարի խնդիրները։

Նրանց հողային քաղաքականության, գյուղացիության դրության հանդամանքները լուսաբանել է սովետահայ պատմաբան Աղատ Համբարյանը։ Նրանց իշխանության օրոք ավելի սաստկացան աշխատավորության սոցիալ-տնտեսական կեղեքումները։ Նա ցույց է տալիս, որ երիտթուրքերն ավելի խորացրին հայերի և մուհաջիրների՝ մահմեդական վերաբնակիչների հողային վեճերը (11, էջ 65, 105)։

Թուրք կոմունիստների ղեկավար Մուստաֆա Սուբխին 1918-ին ասում էր, որ երիտթուրքական հեղափոխությունը «ոչ մի օգուտ չբերեց ժողովրդին» (64, էջ 8)։ Նրանց իշխանության օրոք բանվոր դասակարգի դրությունը ոչնչով չբարելավվեց, բանվորներն օրական աշխատում էին մինչև 14 ժամ (34, էջ 255)։ Երիտթուրքերը հատուկ օրենք ընդունեցին, ըստ որի արգելվում էին արհմիությունները, գործադուլները։ Թիֆլիսի բոլշևիկյան «Բորբա» թերթը մատնացույց էր անում երիտթուրքերի ռեակցիոն էությունը, բանվորների դեմ նրանց կիրառած խիստ միջոցները, մամուլի վրա գրաքննչական հսկողության նրանց քայլերը։ Թերթը երիտթուրքերին համեմատում էր ռուսական կադետների հետ (26, № 2—4, 1908)։ Թուրքիայում բանվոր դասակարգն իր զարգացման սկզբնական շրջանից մինչև 1914-ի պատերազմը չունեցավ բանվորական սոցիալիստական որևէ կազմակերպություն, որը գլխավորեր աշխատավորության սոցիալական ու քաղաքական առաջադիմության պայքարը։ Իհարկե, պատերազմի ընթացքում որոշ տեղաշարժեր կատարվեցին. առաջացան սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ։ Սակայն բանն այն էր, որ դրանք կառուցված էին ազգային սկզբունքով և ազգային ու կրոնական հիմքի վրա և ավելի անհարազատ էին օտար երկրի այլազգի բանվորությանը, քան թուրքական բուրժուազիան («Նոր Արևելք», Երևան, № 4, 1923)։ 1915-ին կազմավորված թուրքական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը բաղկացած էր գլխավորա-

պես մտավորականներից և հազիվ 200 կայուն անդամ ուներ։ Այն գոյություն ունեցավ մինչև 1920 թվականը, փորձեց իր ազդեցությունը տարածել արհմիությունների վրա, սակայն հաջողության չհասավ («Նոր Արևելք», № 4, 1923)։

Երիտթուրքերի «կառավարման ձևը, հակառակ նրանց հռչակած սահմանադրական ռեժիմի, ոչնչով չէր տարբերվում շարիաթի վրա հիմնված հին կարգերից» (38, էջ 65)։ Կորանը շարունակում էր ուղղություն տալ երկրի հոգևոր, քաղաքացիական և նույնիսկ պետական գործունեությանը։ «Երիտթուրքերը, մտադրվելով Թուրքիան մահմեդական թեոկրատիայից վերածել իրավական պետության, չհրաժարվեցին նրան տանել շարիաթի և պանիսլամիզմի համար պայքարի ուղիով, որի հովանու տակ հույս ունեին վերածնել մեռնող Թուրքիան» (38, էջ 60—61)։ Ահա թե ինչպես է բնութագրում երիտթուրքերին Վ. Կրյաժինը տակավին 1923-ին. «Անգլիական տիպի սահմանադրականությունից նրանք անցան շարիաթի պաշտպանության, իրենց թշնամիների դիպուկ արտահայտությամբ՝ «չլմա հագցնելով սահմանադրությանը»։ Բոլոր ժողովուրդների իրավահավասարությունը ճանաչելուց նրանք անցան իրենց չափերով աննախադեպ հայկական կոտորածներին և այլն, և այլն» (39, էջ 35)։ Այնուհետև նա շեշտում էր, որ հենվելով բացառապես երիտասարդ թուրք բուրժուազիայի վրա, անսովոր չափով նեղացնելով սոցիալական բազան, երիտթուրքերը վարեցին բացահայտ ռեակցիոն և շովինիստական քաղաքականություն, որն ուղղված էր գյուղացիների, բանվորների, քրիստոնեական բուրժուազիայի դեմ և, ընդհանրապես, բոլոր «օտարների» դեմ։ Բնականաբար, երիտթուրքերն իրենց իշխանության ամրապնդման պրոցեսում ստիպված էին բլոկ կազմել առավել հետադիմական տարրի՝ հոգևորականության հետ (39, էջ 49)։

Պանիսլամիզմը երիտթուրքերի համար «թանկարժեք մի զենք էր» մյուս մուսուլմանների՝ արաբների, քրդերի և ալբանացիների հետ իրենց հարաբերությունները կարգավորելու ճանապարհին։ Սա իշխանության կենտրոնացման ձգտում էր կրոնի միջոցով, քանզի ազգային սկզբունքն այստեղ անուժ էր. Կ. Պոլսում վերակենդանացավ «մուսուլմանական միասնության ընկերությունը», լայն գործունեություն ծավալեց

«պանիսլամիստական ընկերությունը», հարյուրավոր գործակալներ բռնեցին Աֆրիկայի և Ասիայի մահմեդական երկրների ճանապարհը։

Երիտթուրքերը հավատարիմ մնացին իսլամին, նրա պահանջներին ու չափանիշներին և նախկինի նման հարեցին կրոնական պատերազմի հնից հայտնի գաղափարին։ Նրանց մեծամասնությունը մնում էր հավատարիմ հին կարգերին և հին բարքերին։ Նրանք դեմ էին կանանց ազատագրմանը։ Եվրոպայից ուզում էին վերցնել ռազմական տեխնիկա, բայց ոչ ավելին։ Նույն Թալեաթը, որին ռուս հեղինակ Գորցևն անվանում է երիտթուրքերի պարագլուխ, կուսակցության կենտրոնական կոմիտեի փակ նիստում հայտարարում էր, թե իրենք մտադրություն չունեն խախտելու մահմեդական ավանդույթները։ «Այս ճառից պարզ էր դառնում, որ քրիստոնյաների և մահմեդականների հավասարություն չէր կարող լինել, քանի որ դրան հակասում էր շարիաթը»,— գրում է Գորցևը։ Այնուհետև նա ավելացնում է, որ «սահմանադրական կարգն ամրապնդելու համար ստեղծագործական աշխատանքին ժողովրդական զանգվածներին ներգրավելու անհրաժեշտությունը գիտակցելու հետք չկա նույնիսկ այդ ճառի մեջ» (34, էջ 251—252)։

Թուրքական պառլամենտի դեպուտատների շարքում, երիտթուրքերի կողքին, որոնք իրենց հեղափոխական էին համարում, շարունակում էին տեղ զբաղեցնել գավառային խոշոր տզրուկներ, որոնք մինչև 500 գյուղ ունեին։ Պառլամենտի երիտթուրք անդամներից ստեղծվել էր մի խումբ, որը մշակել էր 10 կետից բաղկացած ծրագիր, որտեղ պահանջում էր առաջադիմական բարեկարգումներն անցկացնելիս հաշվի նստել մահմեդական ավանդույթների հետ և չոտնահարել շարիաթի օրենքները (34, էջ 249)։

Թուրքական պառլամենտում ագրարային հարցի քննարկման ժամանակ, երբ բազմաթիվ փաստեր էին բերվում գյուղացիների նկատմամբ կատարված չարագործությունների մասին, խնդիր էր հարուցվում ընդլայնել գյուղացիության հողօգտագործման իրավունքները. ներքին գործերի մինիստր Թալեաթը հայտարարում էր, թե անթույլատրելի է պետության որևէ միջամտություն գյուղացիների հետ բեկերի մաս-

նավոր հարաբերություններին, քանի որ դա «հակասում է շարիաթին»։ Մինիստրի այդ խոսքերը թուրքական պառլամենտի դեպուտատների մեծամասնությունը գիմավորեց ծափահարություններով (34, էջ 249)։ 1912-ին ռուսական «Սովրեմեննիկ» ամսագրի էջերում Գորցևը շատ դիպուկ նկատում էր, որ երիտթուրքերի անսահմանափակ տիրապետության երեք տարիների ընթացքում ոչ մի քայլ չէր արված հասունացած սոցիալական կարիքները բավարարելու ուղղությամբ (34, էջ 248)։

Երկրի տնտեսական հետամնացության, կիսագաղութային դրության խնդիրները քննարկելիս երիտասարդ թուրքերի ղեկավարները հանդես էին բերում անտեղյակություն, խնդիրների էությունն ըմբռնելու և մեկնաբանելու տնտեսական ու քաղաքական անկարողություն։ «Կարդալով նրանց գործերը,— գրում է սովետական թուրքագետ Յու. Պետրոսյանը,— կարելի է կարծել, թե այլ սուլթանի դեպքում օսմանյան կայսրությունը տնտեսական ու քաղաքական այդպիսի կախյալ վիճակում չէր լինի իմպերիալիստական տերություններից։ Օսմանյան կայսրության կիսագաղութային դրության պրոբլեմները քննարկելիս երիտթուրքերի անտարակուսելի կուրությունը նրանց՝ որպես թուրքական ազգային բուրժուազիայի տնտեսական ու քաղաքական շահերի արտահայտիչների, սոցիալական թուլության և քաղաքական տհասության հետևանք էր» (50, էջ 273)։

Ռենեգատ Պարվուսը (Ալեքսանդր Հելֆանդ) երիտթուրքերին բացատրում էր, որ առանց տնտեսական անկախության չի կարող ազգային անկախություն լինել։ Առաջին պլան քաշվեց կապիտուլյացիաների վերացման, իմպերիալիստական կապանքների ոչնչացման խնդիրը։ Այս ոգով էին գրում իրենց հոդվածները երիտթուրքական գաղափարախոսները, մոռանալով, որ թուրքական հասարակությունը տակավին պատրաստ չէր արդյունաբերական հեղաշրջման համար։ 1911-ին Տուգրատ Ալփը «Թուրք յուրդու» ամսագրում «Ասիան ասիացիների համար» տեսությունն էր զարգացնում։

Երիտթուրքերի կառավարման օրոք ֆինանսները չբարելավվեցին։ Արտաքին առևտրի հաշվեկշիռը մշտապես պասսիվ պատկեր ուներ։ 1914-ի հունվարին սպաներն ու ծառայողները աշխատավարձ չստացան։ Կրկնվում էին Համիդ II-ի ժամանակները։

Բացառությամբ Մակեդոնիայում անցկացված կիսատ-պռատ ագրարային ռեֆորմից, որն ի միջի այլոց կատարվեց կալվածատերերի (չիֆլիկի) շահերին համապատասխան և մի քանի մակերեսային ագրարային օրենքներից, որ հրապարակեց Ջավիդ բեյը համաշխարհային պատերազմի նախօրյակին, երիտթուրքերը ոչինչ չարին թուրքական գյուղացիության վիճակը բարելավելու նպատակով։ Երիտթուրքերի իշխանության հաստատումով Արևմուտքում չդադարեցին թուրքական տիրապետությունը եվրոպական մայրցամաքում խոց անվանել (15, № 259, 1914)։

Սուլթանական պաշտոնեությունն աննշան փոփոխությամբ պահպանվել էր։ Տգետ, կաշառակեր, անբան պաշտոնյաները շարունակում էին հին ընթացքը։ Երիտթուրքերը փոփոխում էին նրանց աշխատավարձը, որոշ տեղաշարժեր անում, բայց էությունը չէր փոխվում, աշխատանքի մեթոդները, անմարդկային բարքերը, ծախվածությունը, կաշառակերությունը մնում էին նույնը։ Թուրք բեկը, թուրք պաշտոնյան, զինվորականը թուրք ժողովուրդը չէր, այլ նրա դահիճը, երկրի տնտեսական քայքայվածության գլխավոր պատասխանատուն, բյուրոկրատիայի հանցագործ դաշնակիցը։ Երիտթուրքերի օրոք բեկերը պահպանեցին իրենց տնտեսական դիրքերը։

1908-ից հետո թուրքական թերթերի թիվն ավելացավ ինչպես սունկն է աճում անձրևից հետո։ «Իքդամ» թերթը լույս էր տեսնում 50 հազար, իսկ «Թանին»-ը՝ 40 հազար տպաքանակով։ «Իքդամ» թերթը նույնիսկ հատվածաբար տպեց Բաֆֆու «Խենթը», որը մինչ այդ արգելված էր երկրում (33, էջ 112)։ Բայց շուտով երիտթուրքերը ամենախիստ հսկողություն ու գրաքննություն հաստատեցին մամուլի օրգանների վրա, որոնց կտրուկ հրահանգներ էին տրվում քաղաքական այս կամ այն խնդիրը լուսաբանելու վերաբերյալ։ Շատ շուտով երիտթուրքերի մեծամասնությունն սկսեց խոսել, թե Աբդուլ Համիդը ինքնին այնքան էլ վատ չէր, թե «սխալների» (և ոչ թե ոճիրների) մեջ ոչ թե նա էր մեղավոր, այլ ապականված պալատականները։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին

Թուրքիայի բյուջեում ռազմական ծախսերը հասնում էին 37 տոկոսի, մինչդեռ Անգլիայինը՝ 33,3 % էր, Գերմանիայինը՝ 36,8, իսկ Ֆրանսիայինը՝ 29 տոկոս (34, էջ 252)։ Երիտթուրքերը սահմանադրական կարգեր ասելով հասկանում էին Թուրքիայի վերածումը ուժեղ, ռազմական տերության։ Նրանց չէին հետաքրքրում տնտեսական, իրավական, սոցիալական բարենորոգումների, բարելավումների բնագավառները։

Իր «Ազգերի լիգան, մեծ տերությունները և հայկական հարցը» (77) կապիտալ աշխատության մեջ ռուս դիվանագետ, երիտթուրքերի քաղաքական ու պետական գործունեության բացահայտմանը նվիրված մի քանի աշխատությունների հեղինակ Անդրե Մանդելշտամը ցույց է տվել, որ իթթիհադականները դեմ էին ամեն տեսակ առաջադիմության, որ կառավարման նրանց միակ սկզբունքը բռնակալությունն ու տեռորն էին։ Նա ցույց է տալիս, որ բարենորոգումների մասին նրանք դրականորեն էին արտահայտվում միմիայն օտարերկրյա ճնշման տակ, բայց ոչ մի նպատակ չունեին դրանք իրագործել։ Ինչպես Աբդուլ Համիդի, այնպես էլ երիտթուրքերի գործունեության բնորոշ կողմը քրիստոնյաների հետապնդումն ու ոչնչացումն էր, եզրակացնում է Մանդելշտամը։

Սովետական արևելագետ Մ. Ս. Լազարևը գրում է, որ չունենալով ժողովրդի օժանդակությունը, երիտթուրքերն իրենց դրությունն ամրապնդելու նպատակով զգալի զիջումներ արեցին ներքին և արտաքին ռեակցիային և արագորեն բուրժուական հեղափոխականներից վերասերվեցին հակահեղափոխականների (40, էջ 32)։

□

1911-ին, Սալոնիկի կոնգրեսի նախօրյակին, երիտթուրքերի կուսակցությունը պառակտման վտանգի առաջ էր կանգնած։ Սակայն Լիբիայում Իտալիայի սկսած պատերազմը խառնեց քարտերը, և կուսակցության մեջ առկա տարբեր խմբերը գերադասեցին պահպանել թվացող միասնությունը (34, էջ 253)։ Երիտթուրքերն իսկույն հռչակեցին իրենց լոզունգը՝ սկզբում փրկել պետությունը, հետո բարեկարգել

այն։ Բայց քանի որ՝ պետությունը փրկելը հնարավոր էր միայն ռեֆորմների միջոցով, ապա պարզ է, որ պրոբլեմատիկ էր դառնում թե՛ պետությունը փրկելը, թե՛ նրա բարեկարգումը։

Ցարական կառավարությունը ձգտում էր ժամանակավորապես կանխել Թուրքիայի կործանումը։ Արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովը խոստովանում էր, որ «Թուրքիայի արագ փլուզումը մեզ համար չի կարող ցանկալի լինել, և որ դիվանագիտական ներգործության սահմաններում պետք է անի ամեն հնարավոր բան հետաձգելու այդպիսի հանգուցալուծումը» (35, էջ 22)։ 1911-ի վերջերին Կոկովցեը գրում էր Իզվոլսկուն, թե «ավելի լավ է, որ երիտթուրքական Թուրքիան ճարճատի բոլոր թելերով, քան քարուքանդ լինի, բաժին դառնալով ամեն տեսակի ախորժակների» (35, էջ 22—23)։

Երիտթուրքերի մերձեցումը Գերմանիայի հետ հարուցում էր Անգլիայի շարությունը։ Լոնդոնի տնօրենները հակամիջոցների էին դիմում։ Այդ նրանց ակտիվ օգնությամբ էր, որ ի հակադրություն իթթիհադի, ստեղծվեց «Ազատություն և համաձայնություն» (Հյուրիեթ վը իթթիլաֆ) հակաերիտթուրքական կազմակերպությունը։ Այս ընդդիմադիր կուսակցության կազմակերպմանն (1911, նոյեմբեր) ակտիվորեն մասնակցեցին արաբ և ալբանացի երեսփոխանները, բուլղարներն ու հայերը (65, էջ 193)։

1911-ի իտալա-թուրքական պատերազմում Թուրքիայի ծանր պարտությունը, Իտալիայի կողմից Լիբիայի գրավումը ոգևորեցին բալկանյան պետություններին, որոնք ձգտում էին Եվրոպայից վերջնականապես դուրս շպրտել թուրքերին։ Բալկանյան պետությունների բլոկը, բացի Թուրքիայից, ուղղված էր նաև Ավստրո-Հունգարիայի դեմ։ Այստեղ խաչաձևվում էին Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Իտալիայի, Գերմանիայի, ինչպես նաև Անգլիայի ու Ֆրանսիայի շահերը։ Վերջին երկու պետություններն ավելի շատ մտահոգված էին Բալկանների հաշվին Ռուսաստանի կամ Գերմանիայի ուժեղանալը կանխելու հոգսով։ Ռուսաստանը դեմ չէր բալկանյան բլոկի մեջ ներքաշել նույնիսկ Թուրքիային, նրան հեռացնել Գերմանիայի ազդեցությունից և այդ բլոկը մի պատվար դարձնել դեպի Մերձավոր Արևելք ավստրո-գերմանական իմպերիալիզմի առաջխաղացման ճանապարհին։

Սակայն Թուրքիան հրաժարվեց այդ քայլից։ Նրա դեմ բալկանյան պետություններն ավելի շուտ սկսեցին պատերազմը, քան Ռուսաստանը կկարողանար ակտիվ կերպով նրան մասնակցել։ 1912-ի հոկտեմբերին Չեռնոգորիան պատերազմական գործողություններ սկսեց Թուրքիայի դեմ։ Նրան միացան Բուլղարիան և Սերբիան։ Թուրքիան պարտվեց, հաշտություն խնդրեց և դիմեց եվրոպական մեծ տերություններին։

Հույները գրավեցին Սալոնիկը, սերբերը՝ Մակեդոնիայի մեծ մասը, հյուսիսային Ալբանիան և Նովոբազարի սանջակը։ Բուլղարական բանակն ուղղակի սլանում էր դեպի Կ. Պոլիս։

1912-ի դեկտեմբերին Լոնդոնում գումարված կոնֆերանսի որոշմամբ ստեղծվեց Ալբանիա նոր պետությունը, եվրոպական Թուրքիան բաժանվեց Սերբիայի և Հունաստանի, Հունաստանի և Չեռնոգորիայի միջև։ Թուրքիային մնալու էր Կ. Պոլիսը մի փոքր տերիտորիայով եվրոպական մայրցամաքում։ Սակայն 1913-ին ռազմական գործողությունները վերսկսվեցին, որովհետև նոր հեղաշրջմամբ իշխանության գլուխ անցած երիտթուրքերի կառավարությունը մերժեց այդ պայմանները։

Ցարական կառավարությունը ձգտում էր կանխել պատերազմը, Թուրքիային սպառնալով պատերազմական գործողություններով կովկասյան ճակատում։ Այդ բանը ձախողեց Գերմանիան, որը հասկացնել տվեց, թե հանդես էր գալու Թուրքիայի կողմում։ Ռուսաստանը զիջեց, և պատերազմը շարունակվեց։ Սակայն շուտով Մակեդոնիայի շուրջը վեճ ծագեց Սերբիայի, Հունաստանի և Բուլղարիայի միջև։ Բուլղարիան ապրիլի 16-ին զինադադար կնքեց Թուրքիայի հետ, իսկ Սերբիան և Հունաստանը դաշինք կնքեցին Բուլղարիայի դեմ։ 1913-ի հունիսի 29-ին բուլղարական բանակը հարձակվեց Սերբիայի և Հունաստանի վրա։ Սրանով սկսվեց բալկանյան երկրորդ պատերազմը։

Թուրքական լծից Բալկաններն ազատագրելու առաջադիմական ձգտումը բարդացավ և խեղաթյուրվեց եվրոպական տերությունների միջամտությամբ։ Խնդիրների առաջադիմական լուծմանը խոչընդոտեց նաև այն հանգամանքը, որ Թուրքիայի դեմ պայքարի ղեկավարությունը միապետական բալ-

կանյան կառավարությունների ձեռքին էր։ Հունաստանին և Սերբիային միացավ Ռումինիան, փորձելով օգտվել հանգամանքից և Բուլղարիայից խլել Դոբրուջան։ Պարտված Թուրքիան նույնպես հրապարակ իջավ Բուլղարիայից ետ խլելու կորցրածը։ Բուլղարիան տանուլ տվեց պատերազմը, և 1913-ի օգոստոսի 10-ին Բուխարեստում կնքված խաղաղության պայմանագրով Ռումինիային դիջեց Դոբրուջան, Սերբիային՝ որոշ հենակետեր Մակեդոնիայում։

Հայ հասարակական-քաղաքական միտքը հետաքրքրությամբ հետևում էր Բալկաններում իրադարձությունների զարգացմանը, արձագանքում միջազգային կյանքի բոլոր ելևէջներին։

Ժամանակին Մեծ Բրիտանիան էր պաշտպանում օսմանյան տերության ռեակցիոն տնօրեններին։ Այժմ այդ դերը ստանձնում էր Վիլհելմ II-ի գլխավորած Գերմանիան։ Մի ժամանակ անգլիական պետական գործիչներն էին փաստաբանում «Թուրքիայի ընդհանուր բարենորոգումների» ծրագիրը, այժմ այդ տակտիկան որդեգրել էր գերմանական դիվանագիտությունը։ Ոմանք կարծում էին, որ տնտեսական ու կուլտուրական թափանցման վիթխարի ծրագրեր հղացած Գերմանիան Առաջավոր Ասիայում ամենուրեք հայերի աջակցությունն էր փնտրելու։ Մյուսները Գերմանիայի մեջ միայն վտանգ էին տեսնում։ «Այսօրվա Անգլիան չի կարող խաղալ 1878-ի նենգ Ալբիոնի» դերը և սըր Էդուարդ Գրեյը Բիջոնսֆիլդը չէ, համոզում էին մյուսները։ Սրանք կարծում էին, որ նոր կիպրոսյան դաշնագրություն, հայ ժողովրդի կենսական շահերի նոր զոհաբերում «օսմանյան ամբողջականության պաշտամունքին» այլևս անհնարին է ներկա պարագաներում։ Իհարկե, լսվում էին ձայներ, որ դիվանագիտությանը չի կարելի վստահել, «չլինենք ավելի ռուսասեր, քան Սազոնովը, մեզ պահենք մեր համակրանքն ու հակակրանքը։ Դիվանագետները թող առաջ տանեն իրենց բանակցությունները, իսկ մենք արթուն ու աչալուրջ հսկենք երկրի մեջ, կրկնապատկենք մեր ճիգը, ամեն տեղ հոլովելով ինքնօգնության միակ, գերագույն և տիրական անհրաժեշտությունը» (3, № 29, 1913)։

Սակայն նորից հույսը դրվեց տերությունների վրա, բուրժուական դիվանագիտության ակտիվ մասնակցությամբ հայկական հարցի լուծմանը հասնելու ուղու վրա։

□

1908-ից հետո երկրում ստեղծվել էր չափազանց յուրահատուկ մի մթնոլորտ։ Ոմանք երբեմն շատ պարզունակ գծերով են ներկայացրել այն։ Իրականում կացությունը և՛ բարդ էր, և՛ բազմերանգ ու հակասական։ Ամեն ինչ վարդագույն էր ներկայանում։ Մարդիկ դեռ չէին ըմբռնում խոսքի և ռեալ իրականության, ցանկությունների, ձգտումների և թուրքական արտաքինհարաբերությունների հետամնացության միջև եղած խոր տարբերությունը։

Թուրքական իրականությանը ծանոթ մարդիկ հեռու էին օգնությունից։ Նրանք գիտեին ինչ բան է սուլթանիզմը, ինչ բան է թուրքական բռնակալության պայմաններում տնտեսական կամ քաղաքական ակտիվությունը և լավատեսորեն չէին տրամադրված։ Ահա թե ինչ էր գրում ռուս հեղինակ Պ. Տալեռովը արդեն 1909-ին. «Թեոկրատիզմի անսահմանափակ ուժի պաշտպանությունից օգտվող դարավոր միահեծանության երկրում չի կարելի մի օրում, մարսելյոզի նվագակցության ու շամպայնի գավաթների զրնգոցի ներքո, զվարճալի եղբայրացման նվագակցությամբ և ընդհանուր առմամբ ֆրանսիական մեծ հեղափոխության մինիատյուր ընդօրինակմամբ... տապալել հին ռեժիմը և նրա ավերակների վրա ստեղծել նոր, արմատական կարգ, որը վերջ դներ միահեծանությանը» (59, էջ 579)։

Հիրավի, թուրքական հեղափոխությունը խոսքից, ամպագոռգոռ հայտարարություններից, ընդհանուր խոսակցություններից այն կողմ չանցավ։ Տարիներ շարունակ սուլթանի իշխանության դեմ իրենց հրատարակած թերթերի էջերում սուր ճոճած երիտթուրքական «մտավորականները» բռնեցին տունդարձի ճանապարհը։ Սրանք Կ. Պոլիս էին վերադառնում պետության մեջ իրենց «ծառայություններին» համապատասխան բարձր դիրք գրավելու երևակայական հույսերով։ Սակայն պետության ղեկն արդեն զավթել էին ուրիշները...

1906-ին Ահմեդ Ռիզան Փարիզի և Սալոնիկի իր ընկերներին հայտարարեց, թե առանց զինվորական ուժի գործադրման անհնարին է սահմանադրությունը վերահաստատել։ Այն ժամանակ Էդիրնեի և Սալոնիկի շրջանում գտնվող զինվորական մասերում շատ քիչ իթթիհադականներ կային։ Թրքացած հրեաները (դեոնմեներ), որոնք «սարըգլ» էին կոչվում, պատկանում էին ֆրանսիական «Ազատ որմնադիրների (ֆրիմասոնների) օթյակներին կամ ժողովարաններին։ «Իրենց գլխավորն էր Էմանուել Կարասոն, իր թուրք ընկերներեն էին Թալեաթ, Ջավիդ, դոկտոր Նազըմ, Ֆեհմի, Ջամփոլատ, Միդհատ Շյուքրի, Բուրսալ Թահիր և այլք։ Մուստաֆա Քեմալ, իբրև մասոն և իթթիհադական, աննշան դիրք մը ուներ» (13, էջ 316—317)։

Համիդը գահընկեց արվեց օսմանյան կայսրությունում գերմանական ազդեցությունից գժգոհ անգլիական ու ֆրանսիական կառավարողների չեզոքության և լռակյաց համաձայնության պայմաններում։ Բայց հակառակ նրանց ցանկության, իշխանությունը վերցրին ոչ թե Եվրոպայում ծվարած երիտթուրքերը, որոնց հետ սիրախաղում էին, բանակցություններ վարում անգլո-ֆրանսիական բանագնացները, այլ թուրքական սպաները, գերմանական գեներալ ֆոն դեր Հոլցի աշակերտները։ Արտաքին քաղաքական առումով ստացվեց հակառակը. սուլթանի «էկզեկուցիան օգտակար եղավ գերմանացիներին» (51, էջ 187)։

Պետք է ասել, որ մինչև 1908-ը «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների թիվը 300 մարդուց չէր անցնում (66, էջ 23)։ 1914-ին այդ թիվը հասավ 350 հազարի (13, էջ 12, 18)։

Չեն սխալվել այն հեղինակները, որոնք հեղափոխության կողմում բանակի հանդես գալը բացատրել են տարիներ շատ բունակ սիստեմատիկաբար աշխատավարձ չստանալու փաստով (39, էջ 41)։ Բանակն էլ իշխանության գլուխ կարգեց իր մարդկանց։ Սրանց մեջ կային տարբեր ազգությունների ներկայացուցիչներ։ Օրինակ, փոքր չէր ալբանացիների թիվը (56, էջ 32)։ Նրանց շարքերում կային թուրքեր, Սալոնիկի հավատափոխ հրեաներ, մահմեդականություն ընդունած սլավոններ, արաբներ, չերքեզներ և ուրիշներ։ Իթթիհադի ան-

դամներ էին «մարդասպաններն ու ելուզակները, գողերն ու դրամաշորթները», «հանրային կիները» և այլն (18, էջ 285—286)։

Շարժումը ղեկավարելուն հավակնում էին շատերը, բայց առաջին պլանի վրա կանգնեցին Էնվերը, Թալեաթը, Ջեմալը, Նազիմը, Ջավիդը՝ իրենց մերձավորներով ու համախոհներով։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին երկիրը կառավարում էր ոչ այնքան Միություն և առաջադիմություն կոմիտեն, որքան երիտթուրքական եռյակը՝ Էնվերը, Թալեաթը և Ջեմալը։ Հետագայում երիտթուրքերի «կուսակցության շարքերը համալրվում էին բացառապես թուրքական հասարակության, բանակի և բյուրոկրատիայի ամենաբարձր խավերից, այն չափազանց հեռու էր կյանքից» (61, էջ 168)։

Շուտով պետության ղեկավարման մեջ առաջին պլան մղվեց Էնվերը, որն իր ձեռքում կենտրոնացրեց թուրքական բանակի լծակները։ Էնվերը, Թալեաթն ու Ջեմալը վերջնականապես գավթեցին իշխանությունը, երբ 1913-ի հունիսին սպանեցին վարչապետ Մահմուդ Շևքեթ փաշային և հաստատեցին իրենց զինվորական-կուսակցական դիկտատուրան։

Էնվեր փաշան (ծնվ. 1881-ին) սուլթան Մեհմեդ Ռեշադ V-ի փեսան էր, արևմտահայության ոչնչացման գլխավոր կազմակերպիչներից մեկը։

1909—1913-ին զինվորական գործակալ էր Բեռլինում, 1911—1912 թթ. ղեկավարում էր թուրքական զորքերի ռազմական գործողությունները Տրիպոլիում։ 1912—1913 թթ. բալկանյան պատերազմի ժամանակ 10-րդ կորպուսի շտաբի պետն էր, 1914-ի հունվարից զինվորական մինիստր, իսկ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական բանակի գլխավոր հրամանատար։ Պարտությունից հետո փախավ Գերմանիա, հետո անցավ Ռուսաստան։ 1919-ին հեռակա կարգով դատապարտվեց մահվան։ 1922-ին մասնակցում էր բասմաչների հակասովետական ապստամբությանը Միջին Ասիայում, որտեղ սպանվեց։

Էնվերն անձամբ էր գլխավորում «Թուրանյան երիտասարդական շարժումը» («Իդջի»), որը հիշեցնում էր անգլիական տղաների սկաուտական շարժումը։ Այս կազմակերպության էմբլեման գորշ գայլն էր (բոզ քուրտ) (82, էջ 191)։

1914-ի պատերազմի նախօրյակին Էնվեր փաշան ուղղություն էր տալիս, կազմակերպում Անդրկովկաս, Միջին Ասիա պանթուրքիստական գործակալներ ուղարկելու հակառուսական գործը (37, էջ 79)։

Էնվերին հատուկ էր բախտախնդրությունը։ Ռազմական գործում նա կատարյալ մի դիլետանտ էր, իսկ քաղաքականության մեջ անկարող էր միմյանցից զատել կարելին ու անկարելին (41, էջ 25)։ Ինչպես հավատում է նրան անձամբ ճանաչած Սապան Գուլյանը, Էնվերը «կնամարդու տպավորություն էր թողնում իր սերևեթանքով, կանացի ծեփ-ծեփ ձևերով, շքեղազարդ հանդերձով, նազանքով։ «Արզախեցիների գործածած կուստո բառը նրան շատ լավ էր պատշաճում» (19, էջ 230—231)։

Մեհմեդ Թալեաթը ծնվել է 1874-ին Ադրիանապոլսում (Էդիրնե)։ Որոշ աղբյուրներ նրան ծագումով բուրք չեն համարում, այլ մահմեդականություն ընդունած սլավոնների զավակ։ Այլ աղբյուրներ պնդում են, որ նա Ադրիանապոլսի շրջանի Քիրջալիում ծնված գնչու էր (72, էջ 98)։ Հայտնի է, թե բուրգացած, մահմեդական դարձած բալկանյան սլավոնների ծոցից ելած պաշտոնյաները, հողատերերը ինչպիսի զազանային բնազդներ էին դրսևորում, ինչպիսի կրքոտությամբ էին պաշտպանում իրենց դասակարգային արտոնությունները, ճնշում սլավոն աշխատավորներին։ Նա արևմտահայության ոչնչացման գլխավոր կազմակերպիչներից մեկն էր։

Թալեաթը կուսակցության գլխավոր դեմքն էր։ Լինելով մոլի շովինիստ, նա երիտթուրքերի առավել ճնշողական քաղաքական վարդապետությունների՝ օսմանիզմի, պանիսլամիզմի և պանթուրքիզմի իրականացնողն էր (45, էջ 38)։

Ք. Ուոկերը ցույց է տալիս, որ եռյակի մեջ Թալեաթն այն դեմքն էր, որի միջոցով երիտթուրքերի կենտկոմի որոշումները փոխանցվում էին ոստիկանությանը (82, էջ 191)։

Թալեաթ փաշան ներքին գործերի մինիստր էր 1908-ին, 1911-ին և 1913—1917 թթ.։ 1913—1914 թթ. եղել է նաև ֆինանսների մինիստր։ 1917-ի փետրվարից՝ մեծ վեզիր։ 1918-ի հոկտեմբերին, Թուրքիայի պարտությունից հետո փախավ Գերմանիա։ 1919-ին հեռակա կարգով դատապարտվեց մահվան։ Սպանվեց Թեհրանի ձեռքով 1921-ին։

1943-ին Թալեաթին վերաթաղեցին Ստամբուլի «Հյուրիեթի էպեդիյե» (Հավերժական ազատություն) բլուրի վրա։

Թուրք գրող և գրականագետ Ջենաբ Շահաբեդդինը իր «Գիշատիչ թռչուններ» հոդվածում, որ լույս է տեսել «Փեյամե սաբահ» թերթում, գրել է. «Թալեաթը թունդ փառասեր

էր։ Սրան չէին բավարարում ոչ դեպուտատական տեղը, ոչ մինիստրի պորտֆելը։ Նրան քիչ էր նույնիսկ վարչապետի պաշտոնը... Նա ձգտում էր ուղած գնով ուժեղացնել իր ազդեցությունը։ Նա շրջապատել էր իրեն քծնողներով և ստրկամիտ պաշտոնյաներով... Թալեաթը ճանաչում էր լոկ այն օրենքները, որոնք նպաստում էին նրա ցանկությունների իրականացմանը։ Արդարությունը նրա համար ընդունելի էր, եթե այն, ինչպես սանդուղք, օգնում էր նրան վեր բարձրանալու։ Այն ամենը, ինչ նա իր օգտին չէր համարում, ատում էր։ Մեծ էր համարում միայն նրանց, որոնցից վախենում էր։ Թալեաթը կգերազասեր պետության կործանումն իր ձեռքերով, քան տեսնել նրա ծաղկումը ուրիշների միջոցով։ Նա օժտված էր բանսարկությունների շար հանճարով, հարվածներ հասցնելու կռնակից, խաբել և շրջանցել մարդկանց։ Թալեաթի համար ինչպես անձնական, այնպես և հասարակական կյանքում որպես հենարան, ուժ և լծակ ծառայել է բանսարկությունը»։ Նրա բնավորությանը հատուկ էր սատանայական նենգությունը, որը նա ձգտում էր քողարկել խորամանկություններով։

Ժամանակակից հայտնի թուրք պատմաբան Մ. Խ. Դանիշմենդը «Օսմանյան կայսրության բացատրական ժամանակագրության մեջ» (հ. 4, էջ 524) Թալեաթի մասին գրում է, որ նա «առանձնապես աչքի էր ընկնում ստախոսությամբ»։

Ժամանակակից Թուրքիայում չափազանց հոգատար են Թալեաթի հիշատակի նկատմամբ։ Նրանք բարձր թոշակ են նշանակել նրա այրուն («Վաթան», 5. 1. 1956)։ Ամեն տարի Թալեաթի սպանության օրը կառավարող կուսակցությունների և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների ներկայությամբ Թուրքական քաղաքներում կազմակերպվում են սգո միտինգներ, իսկ Թուրքական բանակի զինվորները համազարկ են տալիս նրա պատվին («Ենի Իստամբուլ», 16. 3. 1965)։

Սապան Գուլյանը Սալոնիկում առաջին անգամ հանդիպելով Թալեաթին (1908, օգոստոս), նրան համեմատում է շանմար օձի հետ։ «Աչքերի բոլորակների վրա արյան բծեր. պարանոցը կարճ, բուրմ պաշտոնեի «կիրթ» ձևերով, կեղծավորությունը, խորամանկությունը, խաբեությունը բանդակված էին դեմքին։ Այդպիսի դեմքերը

բնավորությունը որոշող ամենալավ վկայականն են։ Խոսում էր գլխակախ, աչքերը միշտ վար պահած, շարունակ բարիշներն իրար զարկելով։ ...Մի անզարգացած մարդ»։

Երբ Թալեաթն առաջարկում էր կանգնել «օսմանյան հողի վրա», պատասխանը լինում էր, թե «մեզ համար օսմանցի և բուրմ նոմանիշ բառեր են. օսմանցի հայեր չկան, չեն կարող լինել. կան օսմանյան հպատակ, օսմանյան քաղաքացի հայեր»։ «Թուրքիայի մեջ ոչ թե ազգ, այլ ազգեր կան» (19, էջ 231), ասում էին նրան, բայց նա պնդում էր իր տեսակետի վրա։ Ըստ էության Էնվերն ու Թալեաթը ստեղծեցին ռասայական շովինիզմի ռեժիմ։

Դեռևս 1913-ին «Հորիզոն» թերթը մատնացույց էր անում, որ «սուտը Թալեաթ բեյի գլխավոր զենքն էր» (12, 205, 1913) և շեշտում էր նրա տգիտությունը։ Թալեաթը դաժան, նենգ ու արյունարբու կարիերիստ էր։ Իր նպատակին հասնելու ճանապարհին նա ոչ մի բանի առջև կանգ չէր առնում։

Ահմեդ Ջեմալ փաշան (ծնվ. 1875-ին) արևմտահայության ոչնչացման կազմակերպիչներից մեկն էր։ Երիտթուրքական հեղաշրջման նախօրյակին նա ծառայում էր Սալոնիկում։ 1900-ին կարգվեց Ադանայի, իսկ 1911-ին Բաղդադի հահանգապետ։ Բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ սկզբում դիվիզիայի հրամանատար էր, հետո Կ. Պոլսի հահանգապետ, առաջին կորպուսի հրամանատար։ Նա եղել է հասարակական աշխատանքների մինիստր, իսկ 1914-ին՝ ծովային մինիստր։ 1914-ի ամառը հատուկ առաքելությամբ մեկնեց Ֆրանսիա (նա ընդհանրապես ֆրանսոֆիլի համբավ ուներ)։ 1915-ի սկզբին Ջեմալ փաշան գլխավորում էր Սուեզի ջրանցքի շրջանում բուրքական բանակի ռազմական գործողությունները, հետո հրամանատարն էր Սիրիայում գործող 4-րդ բանակի։ 1917-ին նա նորից ծովային ուժերի հրամանատարն էր։ Մուդրոսի զինադադարից հետո փախավ արտասահման և հետակա կարգով դատապարտվեց մահվան։ 1922-ին հայ վրիժառուների ձեռքով սպանվեց Թիֆլիսում։

Դոկտոր Նազիմը երիտթուրքական շարժման հին գործիչներից էր, կուսակցության գլխավոր տեսաբանը։ Նա իր գաղափարաբանական մարգանքների մեջ ամեն ինչ բխեցնում էր բուրքիզմի շահերից, ամեն ինչ փորձում էր ենթարկել պանթուրքիզմի ծրագրին։ Իթթիհադի կենտկոմի ազդեցիկ դեմքերից էր, որի հետ հաշվի էին նստում Էնվերն ու Թալեաթը։

Նազիմը նույնպես դեռևս էր, հրեա-մահմեդական սինկրետիստական աղանդի անդամ (82, էջ 344)։

Ուսկերը սրան համարում է Բեհաէդդին Շաքիրի նման կոփված, փորձված մտավորական՝ եվրոպական բժշկական կրթությամբ։

Նազիմը բացականչում էր, որ կրոնն իր մոտ արժեք չունի, որ իր կրոնը Թուրանն է: Նա գտնում էր, որ սուլթանի իշխանությունը տապալելու նպատակը երկրի թուրքացումն էր, թուրքի համար ապրելու և իշխելու պայմանների ստեղծումը (18, էջ 161):

Երբեմն տրիումվիրատում Ջեմալի փոխարեն անհրաժեշտ են համարում հիշատակել ֆինանսների մինիստր հրեա Ջավիդին, որն իրազեկ էր Էնվերի և Թալեաթի գործողությունների մանրամասներին, կապված էր օթոնիստական շրջանների և գերմանական դեկավար ու արևմտաեվրոպական բանկային շրջանների հետ, ուներ որոշակի ազդեցություն իթթիհադական կուսակցական դեկավար կորիզի վրա:

Սկզբնական շրջանում երիտթուրքական դեկավար կորիզում կարևոր դերի էր հավակնում սպա Մուստաֆա Քեմալը, սալոնիկցի դեռնմե հրեաներից սերված և հետագայում թուրքական հանրապետության հիմնադիրն ու պրեզիդենտը դարձած Աթաթուրքը:

Ժամանակին Քեմալին որպես երիտթուրք բանտարկել էին Նամիկ Քեմալի արգելված «Հայրենիք» պիեսն ընթերցելու համար: Ռ. Բարինգտոնը գրում է, թե Մուստաֆա Քեմալը թուրք չէր, այլ հունական, հրեական, չերքեզական հյուղերից սերված խառնուրդ (80, էջ 27): Իսկ հրա կենսագիր լորդ Կինրոսը պնդում է, թե նա իբր մակեդոնացի էր, ծնված 1881-ին, կոսմոպոլիտական Սալոնիկ քաղաքում (74 ա, էջ 3): Համիդի ռեժիմը բենադատելու համար աքսորվելով Դամասկոս, նա այնտեղ հիմնեց Վաթան վե Հուրիեթ (Հայրենիք և ազատություն) կազմակերպությունը և կապեր հաստատեց երտիթուրքական մյուս կազմակերպությունների հետ:

Արմսթրոնգը գրում է, որ երիտթուրքերի պարագլուխներ թույլ չէին տալիս, որ Քեմալը մոտ գործեր իրենց հեղ շրջանակը (66, էջ 26): Նրան չէր նկատում մասսան և անցանկալի էր պարագլուխների համար (66, էջ 26): Ըստ նույն հեղինակի, Մուստաֆա Քեմալն ատում էր երիտթուրքերի դեկավարներին՝ Էնվերին, Թալեաթին և Ջեմալին, նրանց համարում էր հոնիմ, փոքր մարդիկ, բոլորովին անկարող կառավարելու (66, էջ 26):

Կարիերիստական հողի վրա նա կոնֆլիկտի մեջ մտավ Էնվերի և մյուսների հետ և հեռացավ երիտթուրքական կուսակցությունից:

Դա 1909-ին էր, երիտթուրքական համագումարում, երբ Մ. Քեմալը հանդես եկավ բանակը քաղաքականության մեջ հերքելու դեմ, խզեց կապերը Էնվերի ու երիտթուրքական դեկավար կորիզի հետ և ելիրվեց ռազմական գործին (80, էջ 20): Ավելի ուշ նա կռվեց Լիբիայում՝ Էնվերի հրամանատարության ներքո, հետո՝ Դարդանելում: 1917-ին նա Թուրքիայի պարտության ամբողջ մեղքը բարդում էր Էնվերի, Թալեաթի և Ջեմալի՝ «կարճահասակ մարդկանց վրա» (80, էջ 23):

Մուստաֆա Քեմալը միշտ էլ երազում էր, որ երիտթուրքերի պարագլուխները կգնահատեն իր արժանիքները և իրեն կհրավիրեն

վերին օղակների մեջ և իրեն կդառնա տիրապետող անձ (66, էջ 29): Սակայն իզուր: Էնվերն ու Թալեաթն իրենց խմբով ոչ ոքի իշխանությունը զիջելու մտադրություն չունեին:

Միություն և առաջադիմություն կոմիտեն առանձնել էր երկրի բարձրագույն իշխանությունը, նշանակում ու ազատում էր մինիստրներին, ընթացք տալիս պետական կարևորագույն խնդիրներին ներքին և արտաքին քաղաքականության ասպարեզում: Կառավարության պաշտոնական ներկայացուցիչներին ստիպելով ենթարկվել իր ցուցումներին, նա միաժամանակ ոչ մի պատասխանատվություն չէր կրում ընդունվող որոշումների համար:

Կուսակցության ներսում վեճերն ու ախոյանությունը մեծ մասամբ ծագում էին անսկզբունքայնության, իշխանամոլության կամ կոռուպցիայի հողի վրա: «Իթթիհադական վարիչները շատ շուտով սուր դժգոհություններ տեղիք տվեցին: Ոչ միայն պետական եկամտաբեր պաշտոններն իրենց ձեռք անցրին, այլև սկսան ահագին գումարներ կաշառք վերցնել և պաշտոնավաճառությունը սովորական գործ դարձնել: Ով իթթիհադական էր, ով մի որևէ ազդեցիկ իթթիհադականի ազգականը, հովանավորյալն էր, նա ամենաբարձր պաշտոններին էր արժանանում», առանց հաշվի առնելու «նրա ընդունակությունները, մտավոր կարողությունները, պաշտոնի ձեռնհասությունը» (19, էջ 253):

Ինչպես նկատել է Վ. Կրյաժինը դեռևս 1923-ին իթթիհադը իրականում կուսակցություն չէր, այլ դավադիրների կազմակերպություն: Իր կառուցվածքով, հետապնդած նպատակներով այն ավելի շատ ընդհանուր բան ուներ մասոնական կազմակերպությունների, քան եվրոպական տիպի կուսակցությունների հետ: 1908-ին և նրանից հետո երիտթուրքերը քաղաքական ծրագիր չունեին: Իսկ երբ կազմակերպության տեսաբանները ձեռնամուխ եղան նրա մշակմանը, ապա այնքան շատ հակասություններ ծագեցին, որ երբեք բուրժուական կուսակցությունների պրակտիկայում չեն հանդիպում (39, էջ 35):

Երիտթուրքերի գաղափարաբանությունը բավականին առաջ էր անցել «նոր օսմանների» քաղաքական գաղափարներից, դարձել էր ավելի մարտաշունչ և այլամերժ։ Հիշեցնենք, որ «նոր օսմանների» գաղափարախոսությունը խառնաթնթոր ձևով իր մեջ էր ներառել բուրժուազիոնավորչական, փիլիսոփայական և ավանդական մահմեդական հայացքներ ու գաղափարներ։ Նրա գլխավոր ձգտումն էր եվրոպական լիբերալ ռեֆորմիզմը համատեղել, համակցել իսլամի նորմերի հետ (29, էջ 170)։ Թուրք հեղինակ Քեմալ Կարպատը հավաստում է, որ այն տարիներին նացիոնալիզմը մասսաներին ներարկվում էր կրոնական պատկերացումների միջոցով (70, էջ 254)։ Այլ կերպ հնարավոր չէր, քանի որ իսլամի առավելությունների հոգեբանությունը շատ ամուր էր նստած մահմեդական զանգվածների մեջ և այդ բանից պետք է օգտվեին երիտթուրքական շովինիստները։

Օսմանիզմին, պանթուրքիզմին զուգահեռ երիտթուրքական քաղաքական պրոպագանդան չէր խորշում աբդուլհամիդյան պանիսլամիզմի ծառայությունից։ «Չէ՞ որ Կորանը և նրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը,— գրել է Կ. Մարքսը,— ամբողջ աշխարհի աշխարհագրությունը և էթնոգրաֆիան հանգեցնում են երկու կեսի բաժանելու հասարակ և հարմար ֆորմուլայի. ուղղահավատների և անհավատների։ Անհավատը «դյավուրն է», նա թշնամի է։ Իսլամը նզովում է անհավատների ազգին և մուսուլմանների ու անհավատների միջև ստեղծում է մշտական թշնամության իրավիճակ» (43, հ. 10, էջ 6)։

Նացիոնալիզմի գաղափարախոսությունը օգտագործում էր կրոնական ընդհանրության հիման վրա Արևելքի ժողովուրդների համերաշխության քարոզները։ Աստիճանաբար միասնության վարդապետություններն իրենց տեղը զիջում էին ազգայնական կոնցեպցիաներին, որոնց մեջ կրոնը թեև կարևոր տեղ էր բռնում, բայց, որպես կանոն, դառնում էր երկրորդական գործոն։ Այս պրոցեսը բնորոշ էր Արևելքի շատ երկրների։ Այսպես էր նաև օսմանյան կայսրությունում, որտեղ պանիսլամիզմն աստիճանաբար դուրս էր մղվել թուրքիզմի և պանթուրքիզմի կողմից։

Երիտթուրքերը կառչած էին օսմանիզմի մեծապետական գաղափարներից։ Օսմանիզմի գաղափարախոսները պրոպագանդում էին օսմանիզմի վարդապետությունը, փորձում էին արմատավորել այն մտայնությունը, թե իբր օսմանյան կայսրությունը միասնական է և անբաժանելի, որ նրանում չկան առանձին ժողովուրդներ, այլ կա միայն մեկ օսմանյան ազգ։ Այս միջոցով նրանք փորձում էին ոչ թուրք ժողովուրդներին ստիպել համակերպվել իրենց վիճակի հետ, ձգտում էին կոտրել ազատագրվելու նրանց կամքը (28 ա, էջ 26)։

Երիտթուրքերը փաստորեն կրկնում էին Ալի Սուավիին, որը XIX դարի 70-ական թվականներին գրում էր, թե «օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ժողովուրդները կազմում են մի ազգ՝ օսմանների ազգը» (50, էջ 128)։ Քարոզելով միասնության գաղափարը, երիտթուրքերը նկատի ունեին այդ համահավաքի մեջ ապահովել թուրք տարրի տիրապետող դերը։

1908-ից սկսած, երբ, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, սուլթանական ինքնակալության նկատմամբ լոկ կիսահաղթանակ էր նվաճված, երիտթուրքական շարժումը թուրքական հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման գաղափարական կյանքը առաջ մղեց շովինիստական հունով (29, էջ 169)։ Սովետական արևելագիտությունը բազմակողմանիորեն քննարկել և բացահայտել է պանթուրքիզմի սոցիալ-քաղաքական էությունը, նրա ռեակցիոն, շովինիստական բնույթը։

«Փորձելով հակազդել ազգային փոքրամասնությունների սեպարատիստական տենդենցներին, Միություն և առաջադիմություն կոմիտեն իր քաղաքականության մեջ հասնում էր ծայրահեղ շովինիզմի» (45, էջ 33),— գրում է սովետական թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը։

Միություն և առաջադիմություն կոմիտեն «կուրորեն ընդօրինակելով ֆրանսիական բուրժուական հեղափոխության լոզունգները, առաջ քաշեց «օսմանյան կայսրության միասնության և անբաժանելիության» պահանջը և շովինիստական մոլուցքի մեջ ապացուցում էր, որ Թուրքիայում ոչ մի առանձին ժողովուրդ չկա, այլ բոլորն էլ օսմանցիներ են» (45,

էջ 31)։ Ուզբեկ արևելագետ Ա. Խ. Բաբախոջաևը նույնպես բալկանյան պատերազմներից հետո տեղի ունեցած տեղաշարժերին է վերագրում պանթուրքիզմի աշխուժացումը, առասպելական Թուրանի խնկարկումը (28 ա, էջ 26)։ Երիտթուրքերը սկսեցին լայնորեն պրոպագանդել թուրքերի «զտարյունությունը», «բարձր ռասա» լինելու կեղծ տեսությունը։ Նա փաստեր է բերում այն մասին, թե ինչպես 1908—1913 թթ. Միջին Ասիան ողողում էին պանթուրքիստական գործակալներով, որոնք հանդես էին գալիս ճանապարհորդների, վաճառականների, շեյխերի դիմակի տակ, փորձում էին կապեր հաստատել հակառուսական ուժերի հետ, նրանց նախապատրաստել ծառայելու պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարներին (28 ա, էջ 29)։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, 1908—1914 թթ., երիտթուրքական պետական ու քաղաքական կառավարման մոտավորապես վեց տարիների ընթացքում որոշակի դարձավ նրանց թուրքիստական ու պանթուրքիստական գաղափարաբանությունը։ Կյանքի էր կոչվում ոչ միայն Թուրքիան թուրք օսմաններին լողունգը, այլև թուրքախոս ժողովուրդներին իրենց ենթարկելու, Անդրկովկասը զավթելու։ Միջին Ասիայի, Ռուսաստանի, Պարսկաստանի հսկայածավալ տերիտորիաներն օսմանյան կայսրությանը կցելու կարգախոսը։

Բեռլինում դաստիարակված իթթիհադական երիտասարդ թուրքերը Ալթայ գնալու, կումիս խմելու երազներ էին հյուսում։ Ըստ նրանց Թուրքիայի տիրապետությունը պիտի տարածվեր մինչև թուրքերի նախահայր Էրթողրուլի ծննդավայրը, մինչև գորշ գայլի հայրենիքը՝ Սինցզյանի անապատները։

«Հարյուրմիլիոնանոց թուրք ժողովուրդը, հին ու երիտասարդ Թուրքեստանը, ամբողջ աշխարհը և ապագան քեզ են պատկանում»— այսպես էր ձևակերպում համաթուրքական իր գաղափարը Դանիել Վարուժանի երբեմնի մտերիմ, Սեբաստիայի կուսակալ (22, էջ 62), ազգայնամոլ բանաստեղծ Մեհմեդ Էմինը տակավին 1897-ին, իր «Ես թուրք եմ» բանաստեղծության մեջ (54, էջ 111)։ Նա երկու տողում պարզում էր համաթուրանականության ծրագիրը.

Մեկ վեթակ ունեն բոլոր մեզանները,

Մեկ բուրան պետք է ունենան բոլոր թուրքերը (9, էջ 198—199)։

1909-ին «Սիրաթի մուստակիմ» ամսագիրը (№ 83) կոչ էր անում թուրքական սուլթանի շուրջը համախմբել Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի 350—400 միլիոն մուսուլմաններին։ Թուրք շովինիստները չէին թաքցնում իրենց իսկական նպատակները։ Նույն ամսագրի էջերում նրանք հայտարարում էին. «Երբ մենք հասնենք այդ նպատակին, մենք, անտարակույս, կդառնանք ամբողջ աշխարհի վրա տիրապետող ազգ» (60, էջ 68)։

1909-ի օրենքով ազգային դիմագիծ ունեցող կուսակցությունների կազմվելն արգելվեց իթթիհադի կողմից։ Պետությունը պետք է ունենար միասնական գաղափարախոսություն, խարսխված համիսլամության և համաթրքության հիմքի վրա։ Առանձին միջոցառումներ էին իրականացվում իսլամ տարրի տնտեսական դիրքերն ամրապնդելու, նրանց տիրապետությունն ապահովելու համար։ 1911—1912-ին Գերմանիայում գործում էր մի հատուկ պանիսլամական կենտրոն, որը մշակում, կազմակերպում և հրապարակում էր համապատասխան գրականություն ու տարածում Թուրքիայում, Պարսկաստանում, Ռուսաստանի մահմեդականական մարզերում։

Սկզբում երիտթուրքական կազմակերպության անդամ կարող էին լինել բոլորը՝ առանց ցեղի ու կրոնի խտրության։ Բայց հետո նրանց բազմաթիվ փաստաթղթերում, գաղտնի շրջաբերականներում շեշտվում էր այն միտքը, որ ոչ իսլամ օսմանցին միության անդամ կարող է դառնալ որոշակի պայմաններով։ Այնուհետև ասվում էր, որ «Մեր միությունը հարազատ թուրքական միություն է»։ Թուրք պատմաբան Սինա Ակշինը գրում է, որ իթթիհադը թուրքիստական կազմակերպություն էր, որ այն թուրքիզմի գաղափարախոսությունն արմատավորեց օսմանյան պետության մեջ (65, էջ 54)։

1911-ին Սալոնիկի համագումարը որոշեց, որ Թուրքիան պետք է լիովին իսլամական երկիր դառնա, որ վաղ թե ուշ պետք է իրականացնել բոլոր թուրք հպատակների օսմանացումը, մյուս ազգերից պետք է խլել ինքնուրույն կազմակերպվելու իրավունքը, նրանց զրկել սեփական լեզվից օգտվելու հնարավորությունից։ Թուրք լեզվի արմատավորումը

համարվում էր գլխավոր խնդիրներից մեկը (10, էջ 231)։ Համագումարից անմիջապես հետո տեղերը մեկնած պատվիրակները վայրենի ազգայնականության ալիք բարձրացրին։ Ամենուրեք ժողովներ էին հրավիրվում, որտեղ թուրքականության և համաթուրքականության տեսակետներն էին քննարկվում։ Համիսլամական պրոպագանդան, քրիստոնյաների թուրքացման հարցադրումները մեծ չափեր էին ընդունել (44, էջ 40)։

Ք. Ուոկերն այն միտքն է արտահայտում, որ 1910-ին երիտթուրքերն արդեն հրաժարվել էին երկրի բոլոր ժողովուրդներին հավասար համարելու մտքից։ Այս բանը նրանք բացահայտ ցուցադրեցին հատկապես այն պահին, երբ հրաժարվեցին Թուրքահայաստանում սուլթանի օրոք հայերից խլված հողերն իրենց տերերին վերադարձնելու խնդրով զբաղվելուց։ Կ. Պոլսում այն ժամանակվա անգլիական դեսպան սըր Ջերարդ Լոութերը իր տարեկան հաշվետվության մեջ նկատել էր, թե երիտթուրքական կոմիտեն գերադասում էր երկրում ռասաների բաժանումը։ 1910-ի սեպտեմբերին նույն դեսպանն արդեն գրել էր, թե «օտոման» ըստ իթթիհադի նշանակում է «թուրք», իսկ «օսմանացումը»՝ թուրքացում։ Նա նկատում էր ոչ թուրք տարրերին թուրքացնելու իթթիհադական մտայնությունն ու գործելակերպը (82, էջ 192)։ 1910-ին հայոց դպրոցները ենթարկվեցին թուրքական պետական օրգաններին։

Պանթուրքիստները համախմբվել էին 1911-ին ստեղծված «Թուրք օջախ» ընկերության ու նրա տպագիր օրգան «Թուրք յուրդու» (Թուրքական հայրենիք) ամսագրի շուրջը։ Խմբագիրը Աքչուրա օղլի Յուսուֆն էր, Ռուսաստանից հեռացած մի վտարանդի՝ Յուսուֆ Աքչուրան, որն իր հոդվածներում ապացուցում էր Ջինաստանից մինչև Դանուբ բոլոր թուրքալեզու ժողովուրդների մեկ «միասնական ազգի» պատկանելու տեսությունը, Թուրքիայի գլխավորությամբ «թուրքական մեծ պետություն» ստեղծելու անհրաժեշտությունը (60, էջ 68)։

«Թուրք օջախ» կազմակերպության տեսաբանները «մեծ Թուրանը» նվաճելու առաքելությունն իրականացնելու էին «հրով ու սրով»։ Այսպես էր գրում Թեքին Ալփը (միակ հերոս) իր «Թուրան» գրքում։ Մշակվել էր «մինիմում ծրագիր» և «մաքսիմում ծրագիր»։ Առաջին փուլում թուրքերը նվաճելու էին «փոքր կամ նոր Թուրանը»՝ Բայկալից մինչև Ստամբուլ և Մոնղոլիայից մինչև Կազան։ Երկրորդ փուլում լուծվելու էր «մեծ Թուրանի» խնդիրը՝ Ճապոնական ջրերից մինչև Սկանդինավյան լեռները, Սառուցյալ օվկիանոսից մինչև Տիբեթի բարձրավանդակը։ Սա կատարվելու էր անխնա արշավանքների ու պատերազմների միջոցով և կազմելու էր նոր Ջինգիզիադայի դարաշրջանը (60, էջ 68—69)։

«Թուրանիան որքան լայնածավալ, այդքան նաև անմարբոնելի իրողություն մըն էր, անտարակույս։ Հողի և տիրապետության ձգտումներեն վեր՝ չընկալված, չհասկցված բան մըն էր անիկա, որուն առանցքը, սակայն, կկազմեին տիրելու, յուրացնելու, հափշտակելու անկորնչելի առաքինությունները թուրքի։ Անոր, այդ Թուրանիային, մեծությունը կճանչնար ոչ սահման և ոչ ալ կընդուներ որևէ պարագծում» (22, էջ 22)։

Պանիսլամիզմի տեսաբան Ջելալ Նուրին «Իսլամի միասնությունը» աշխատության մեջ ապացուցում էր պանիսլամիստների և պանթուրքիստների նպատակների ու խնդիրների միասնությունը։ Նա փորձում էր համոզել, որ թուրքերը մահմեդական աշխարհի ամենակարևոր մասն են, որ օսմանյան թուրքերն իր առանձնահատուկ ընդունակություններով օժտված ժողովուրդ են, և նրան պետք է ենթարկվեն մյուս թուրքալեզու ժողովուրդները։ Նա գրում էր. եթե արաբերենը կրոնի լեզուն է, ապա թուրքերենը պետք է դառնա պաշտոնական քաղաքացիական լեզու բոլոր մուսուլմանների համար։ Պանթուրքիզմի պարագլուխներ Քյոփրյուլյու Մեհմեդ Ֆուադը և Զիա Գյոք Ալփը (երկնային հերոս) նույնպես քարոզում էին պանթուրքիզմի և պանիսլամիզմի միասնության անհրաժեշտությունը։ Նրանք պանթուրքիզմի աշխուժացման, զարթոնքի մեջ էին տեսնում իսլամիզմի, օսմանիզմի ապահովության երաշխիքը (60, էջ 69)։

Օսմանացման քաղաքականությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ թուրքացում։ Այս բանը ժամանակին բացահայտել և դատապարտել էր Ատոմը (Հարություն Շահրիկյան) երիտթուրք շովինիստ Ջելալ Նուրիի «Օսմանյան կայսրության

անկման պատմությունը» գրքի վերլուծությանը նվիրած իր հրապարակումի մեջ (5)։ Բանն այն է, որ սկզբնական շրջանում երիտթուրքերը թուրքացման իրենց ծրագիրը քողարկում էին օսմանացման կամ օսմանցիության մասին շատախոսություններով։ Ավելի ուշ նրանք արդեն անցան բացահայտ թուրքացման տեսության պրոպագանդային ու իրագործմանը։

Ցարական Ռուսաստանի բազմաթիվ բուրժուազգայնական կազմակերպությունների (մուսավաթ, Բուխարայի ջադիդներ, Իթթիֆակ-ուլ-մուսլիմին) ծրագրերը խարսխված էին պանիսլամիզմի վրա։ 1909-ին Ռուսաստանից Կ. Պոլիս անցած դոկտոր Կարաբեկովը, որը Բաքվի մուսավաթական մոլի ազգայնականներից էր, չէր խորշում հայտարարել, թե թուրքական պետության շահերը պահանջում են, որ այդ երկրում չապրեն ո՛չ հայերը, ո՛չ հույները։ Շուշեցի Ահմեդ բեկ Աղաևը, 1905-ի հայ-թաթարական ընդհարումների հեղինակներից մեկը, նույնպես 1909-ին հայոց ընտանիքները քանդելու, թուրքերի մեջ ցրելու, հայերին որպես ազգ վերացնելու քարոզ էր կարդում։ Այս մասին տարիներ անց պատմել է ականատեսը, որն իր ականջներով լսել է հրեշների զրույցներն այդ թեմաներով (24)։

1910-ի հոկտեմբեր-նոյեմբերին Սալոնիկում 13 օր տևած իթթիհադի ընդհանուր ժողովը ընդունեց շովինիստական այնպիսի որոշումներ, որոնք հիմք հանդիսացան ցեղասպանության քաղաքականության իրականացման համար։ Երիտթուրքերի համագումարի կարգախոսն էր՝ «Թուրքիան միայն թուրքերի համար» (13, էջ 16—17)։ Թալեաթ բեյը խոստովանում էր. «Մենք ցանկացանք գյավուրը օսմանցի դարձնել, բայց չկարողացանք։ Այժմ միակ միջոցը նրանց զենքով ճզմելն է»։ Որդեգրվեց կենտրոնաձիգ ճնշողական քաղաքականություն՝ պանթուրքիզմի գործադրություն ջարդի միջոցով (13, էջ 319)։ Երիտթուրքերը գտնում էին, որ վաղ թե ուշ պետք է իրականացվի բոլոր թուրք հպատակների օսմանացումը և պարզ է այդ նպատակին հասնելու համար բավական չէին հետապնդումները, որ պետք էր դիմել «զինված ուժին» (67, էջ 85)։ Նրանք սկսեցին մահմեդական խավարամիտ մարդկանց մոլեռանդությունը գրգռել ինչպես հայ-

կական ռեֆորմների, այնպես և բոլոր փոքրամասնությունների ինքնավարության ձգտումների դեմ։

Կայսրության բոլոր հպատակները, անկախ իրենց ազգային պատկանելությունից և հավատից, պետք է կոչվեին «օսմաններ» (60, էջ 66)։ Այս քաղաքականությունը հաջողություն չունեցավ։ Բալկանյան պատերազմներից (1912—1913 թթ.) հետո, երբ օսմանյան պետությունը կորցրեց Բալկանյան մարզերը, երիտթուրքերն այլևս կարիք չունեին իրենց շովինիստական քաղաքականությունը «օսմանիզմի» դրոշի տակ քողարկելու։ Այս պահին, այնուամենայնիվ, հարկ եղավ զբաղվել արաբներով, քրդերով և ուշադրության կենտրոնում նորից մնաց պանիսլամիզմը (60, էջ 67)։ Ղազախ սովետական պատմաբան Ն. Սաբիթովը պանթուրքիզմի ծագումը վերագրում է 1912—1913 թթ. բալկանյան պատերազմի շրջանին (55, էջ 41)։ Իհարկե, պանթուրքիզմի առաջին սաղմերը ծլարձակվել էին շատ ավելի վաղ։ Սակայն փաստ է, որ այն ազդեցիկ գաղափարախոսություն դարձավ երիտթուրքերի պետական գործունեության տարիներին։

Թուրքիզմի և պանթուրքիզմի էությանը, դրսևորումների վերլուծությանը, լուսաբանմանն ու քննադատությանը նվիրված հարուստ գրականություն է ստեղծվել աշխարհի տարբեր երկրներում։ Ռուսաստանի, Կովկասի, նաև Իրանի հաշվին պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու ագրեսիվ պլանների մասին բազմաթիվ վկայություններ կան Զարևանդի, Հ. Հակոբոս Տաշեանի, Մուշեղ արքեպիսկոպոսի, Ե. Թոփչյանի, Անդրե Մանդելշտամի, Գոլոբորոդկոյի, Տիրկովայի, Տվերիտինովայի, Բուտաևի, Էռնեստ Ռամզորի, Ու. Հեյդի, Նիազի Բերքեսի, Տեքին Ալփի, Հալիդե Էդիպի, Ահմեդ Էմինի և այլոց հրապարակումներում։ Բոլորը հնարավոր չէ հիշատակել։ Ասենք միայն, որ դրանցում պարունակվող վկայությունները, փաստաթղթերը ոչ մի տարակուսանք չեն թողնում թուրքիզմի ու պանթուրքիզմի ագրեսիվության, նվաճողական պլանների վերաբերյալ։ «Զարգացման ուժից,— գրում է Ի. Բուտաևը,— թուրքիզմը վերածվեց ագրեսիվ-շովինիստական օտոմանիզմի, հողային-առևտրական բուրժուազիայի մեծապետական նացիոնալիզմի» (27, էջ 308)։ Միանգամայն միակողմանի և չհիմնավորված պետք է համարել

որոշ հեղինակների այն կարծիքը, թե թուրքիզմը ճնշված ազգի բուրժուական նացիոնալիզմի արտահայտությունն էր։ Մի կողմից՝ թուրքական պետականությունն իր կրնկի տակ պահում էր բազմաթիվ ճնշված ժողովուրդների, նրանց զրկում ինքնուրույնությունից և առաջադիմական զարգացման հնարավորությունից, մյուս կողմից՝ թուրքական պետությունն ինքն էր խճճված զարգացած կապիտալիստական տերությունների ֆինանսատնտեսական և քաղաքական խարդավանքներում։ Սակայն արևմտաեվրոպական գաղութային ճընշումը Թուրքիայի նկատմամբ ամենևին չէր թեթևացնում ոչ թուրք ժողովուրդների ծանր վիճակը։

1912—1913 թթ. բալկանյան պատերազմներից հետո, երբ օսմանիզմի գաղափարը պատերազմի դաշտում հօդս ցնդեց, երբ ոչ թուրք ժողովուրդների կենտրոնախույս ձգտումները հստակությամբ դրսևորվեցին քաղաքականության և գաղափարախոսության մարզերում, երիտթուրքական պարագլուխները հակվեցին դեպի թուրքիզմը ներքին և դեպի պանթուրքիզմը՝ արտաքին քաղաքականության ասպարեզում։ Թուրքիզմը տիրապետող ազգի բուրժուական նացիոնալիզմի դրսևորումն էր, ընդ որում մարտաշունչ, ագրեսիվ դրսևորումը, որը ձգտում էր ամբողջապես իր շահերին ենթարկել հսկա կայսրության ոչ թուրք հպատակներին, հրի ու սրի, բռնի միջոցներով թուրքացնել երկրի ներքին կյանքը։ Այն, ինչ չհաջողեցին անել երիտթուրքերն այս ասպարեզում, շարունակեցին և իրագործեցին քեմալականները։ Ոմանք ագրեսիվություն են տեսնում միայն պանթուրքիզմի մեջ, թուրքիզմի մեջ «առողջ, ռացիոնալ հատիկ» են փնտրում, շրջանցում այն հանգամանքը, որ թուրքիզմը թուրքական ներքին կյանքը թուրքացնում էր, ոտնահարելով ոչ թուրք ժողովուրդների տարրական իրավունքներն ու ձգտումները։ Թուրքիզմի գաղափարախոսները շատ որոշակի էին իրենց գործողություններում՝կամ թուրքացում, կամ ոչնչացում։ Վերջին հաշվով հայ ժողովրդի մի ստվար հատվածը այդ քաղաքականության զոհը գարձավ։ Օրինակ, այդպես է վարվում թուրք հեղինակ Նիզայի Բերքեսը, որը ԱՄՆ-ում, Անկարայում և Կանադայում հրատարակած մի շարք գործերում փորձում է արդարացնել թուրքիզմը, այն հակադրելով պանթուրքիզմին (68, էջ 344)։

Նա պրոբլեմը չի քննարկում օսմանյան կայսրության ճնշված ազգերի ազգային-ազատագրական պայքարի պատմական անհրաժեշտության դիրքերից։ Նա հարցին մոտենում է թուրքերի դարավոր հետամնացությունը հաղթահարելու, ազգային ինքնագիտակցությունն ամրապնդելու ասպեկտը ընդգծելու դիրքերից։ Նա շեշտը դնում է գրական, կուլտուրական զարթոնքի փաստի վրա։

Մեզ մոտ նույնպես ոմանք ստույգ և հանգամանալից պատկերացում չեն ունեցել թուրքիզմի վերաբերյալ։ Պ. Մակինցյանն էլ ժամանակին «Թուրք օջախ» շովինիստական կազմակերպությանը վերագրել է լոկ «տաճկերենը արաբական տարրերից» զտելու առաքելություն, չնկատելով նրա քաղաքական դիրքորոշումը (14, էջ 202)։

Ոչ ոք չի ժխտում, որ թուրքական նացիոնալիզմը (ինչպես նաև շատ ազգությունների մոտ XIX դարում և XX դարում) ծագեց սկզբում որպես գրական և կուլտուրական երևույթ, և միայն հետո ձեռք բերեց քաղաքական բովանդակություն։ Սակայն չի կարելի համաձայնվել, երբ սանձարձակ շովինիստ Աքչուրա օղլի Յուսուֆին, Ահմեդ Հիքմեթին, Ջելալ Նուրիին և այլոց հռչակում են «ականավոր թուրք գրականագետներ, գիտնականներ, հասարակական գործիչներ» (31, էջ 18), «մոռանալով» նրանց քաղաքական հավատամքը, նրանց անզուսպ հայատյացությունը։ Արաբների, հայերի, բալկանյան ժողովուրդների նկատմամբ թուրքիզմը խաղում էր բացարձակապես ռեակցիոն դեր, մտադիր չէր հարգել նրանց ազգային ինքնությունը, բռնել էր նրանց ֆիզիկական բնաջնջման ուղին։

«Թուրք Յուրդու» ամսագրի էջերից բերված քաղվածքները ցույց են տալիս, որ թուրքիզմի գաղափարախոսները հանդես գալով լեզվի մաքրության, այն թուրքական, արաբական և պարսկական բառերից մաքրելու, ազգային գրականություն ստեղծելու, այբուբենը փոխելու, թուրք ազգի ազգային ինքնագիտակցությունը խթանելու դիրքերից, միաժամանակ մնում էին ամենակատարյալ շովինիստները ճնշված ազգերի նկատմամբ։ Իրականում թուրքական բուրժուական նացիոնալիզմի գաղափարախոսությունը՝ թուրքիզմը (թուրքչյուլուք) հենց սկզբից դրսևորվում էր ոչ թե մաքուր ձևով, այլ պան-

թուրքիզմի մեծ խառնուրդով։ Դրա համար առաջադիմական, դեմոկրատական ազգային նկրտումների հետ մեկտեղ թուրքիստներն իրենց պրոպագանդայում մեծ տեղ էին հատկացնում շովինիզմին, օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների իրավունքների նկատմամբ անհանդուրժողականության քարոզին, ռասիզմին, թուրքերի ազգային և կուլտուրական բացառիկության մասին պնդումներին, իսկ սրա հետ մեկտեղ նաև թուրքալեզու և մահմեդական ժողովուրդներին նվաճելու նպատակով ռազմական էքսպանսիայի կոչերին։ Դրանում էլ դրսևորվում էր պանիսլամիզմի հետ թուրքիզմի միախառնումը (30, էջ 42)։

«Զիա Գյոք Ալփի պանթուրքական ուսմունքը,— գրում է սովետական պատմաբան Օ. Խ. Գիգինեյշվիլին,— Թուրքիայում ապրող բոլոր ոչ թուրքերին, անկախ այն բանից, թե նրանք քրիստոնյաներ էին կամ մահմեդականներ, դիտում էր որպես թուրքերի թշնամիների և պահանջում էր Թուրքիան վերածել էթնիկապես մաքուր թուրքական կայսրության»։

«Թուրք Յուրդու» ամսագիրը դրսևորում էր պանթուրքիստական տենդենցներ, որ Քյոփրյուլու զաղե Մեհմեդ Ֆուադի, Զիա Գյոք Ալփի, Հալիդե Էդիբի, ինչպես նաև վտարանդիներ՝ ադրբեջանցի Ահմեդ Աղաևի և թաթար Աքչուրա օղլի Յուսուֆի հոդվածները տոգորված էին սանձարձակ պանթուրքիզմով։ Ահմեդ Աղաևը «Թուրքական աշխարհ» ծավալուն հոդվածում, թուրքական աշխարհ կամ թուրքական կայսրություն ասելով պատկերացնում էր մի տարածություն, որն ընդգրկելու էր Ղրիմը, Բալկանները, Կովկասը, Բաքուն, Դերբենդը, Թերեք գետը, Կասպից ծովի հյուսիսային մասը, Աստրախանը, Սիբիրի որոշ տարածություններ, Մոնղոլիան, Թուրքմենստանը, Չինաստանի որոշ մասը, Աֆղանստանը, Բաղդադը, Մոսուլը, Էգեյան ծովը և այլն (30, էջ 118)։ Ոմանք հավակնում էին նաև Տայվանին, Կուրիլյան կղզիներին, Ճապոնիային, նաև Ֆինլանդիային ու Հունգարիային։ Ոչ անհայտ Ահմեդ Էմինը՝ Յալմանը, ֆաշիստական տիպի թուրքական այդ ժուռնալիստը գրել է, թե պանթուրքիստները սկզբում ձգտում էին «բոլոր թուրքերի» միավորման, իսկ ապա «թուրքական ծագում» ունեցող մյուս ժողովուրդների հետ, այդ թվում հունգարների, ֆիններ և բուլղարների հետ եղբայրացման (30, էջ 118)։ Հալիդե Էդիբն իր հուշերում նշել է, թե Թալեաթ փաշան մի առիթով գոհունակությամբ արտահայտվել է այն մասին, որ պանթուրքիզմն իրենց «կհասցնի մինչև Դեղին ծով» (30, էջ 119)։ Առաջ քաշելով «Ետ դեպի Թուրան» լոզունգը, թուրքական շովինիստները հանդես էին գալիս թուրքական հին սովորությունների վերականգնման օգտին, գովաբանում Աթիլլային, Չինգիզ խանին, Օգուզ խանին։ Հատկապես Զիա Գյոք Ալփի «Թուրան» բանաստեղծությունը վկայում է թուրքական շովինիստների սանձարձակ զառանցանքները։ «Ո՞ւր է այժմ Թուրանը, ո՞ւր է Ղրիմը, ի՞նչ դարձավ Կովկասը։ Կազանից մինչև Տիբեթ ամենուրեք ռուսներ են»։ Նա աղաչում է աստծուն թուրքերին վերադարձնել «ոսկե դարաշրջանը», որպեսզի «թուրքերի հայրենիքը լինի միասնական, և չլինեն փախստականներ» (30, էջ 125)։

Ահմեդ Աղաևը, Մեհմեդ Էմին Ռասուլզադեն իրենց գրվածքներում հասնում էին ծայրահեղ ռասիզմի, թուրքերի բացառիկության քարոզ էին կարդում։ Ըստ «թուրանական մեծ ռասայի» մասին նրանց պնդումների, «բացառությամբ ճապոնացիների, թուրքերն Ասիայում ամենաառաջադիմական և կուլտուրական ժողովուրդն» են և այլն։ Նսեմացնելով մյուս ժողովուրդներին, Աղաևն ուղղակի հայտարարում էր, թե «ոչ Կովկասի հայերը, ոչ էլ Կազանի ռուսները չեն կարող մրցել թուրք առևտրականների և վարպետների հետ» (30, էջ 131)։ 1962 թ. մարտի 21-ին «Յոն» ամսագրում գնդապետ Ալփասլան Թյուրքեշը տպագրեց մի հոդված, որտեղ կոչ էր անում՝ «Գործի՛ր, օ՛հ, թուրք... Դե գործի՛ր... Մենք չունենք այլևս Ռումելիա, Հունգարիա, Սիրիա, Իրաք, Պաղեստին, Եգիպտոս, Տրիպոլի, Թունիս, Ալժիր, Ղրիմ, Կովկաս։ Մեզ մնացել է միայն մեր հայրենիքի փոքր կտորը։ Հայրենիքի վերջին կտորը... Գործի՛ր ինչպես զորշ գայլ, խելքի՛ արի... Աշխատի՛ր, թող վերածնվեն անցած ժամանակները... Թող նորից ծածանվեն հաղթանակների և փառքի դրոշները։ Թող բոլորից վեր բարձրանա Թուրքիան։ Այդ մեծ Թուրքիան դուրս է գալիս ազգային ուխտով սահմանված սահմաններից և տարածվում է մինչև Թուրան» (30, էջ 148)։

Իթթիհադական Թուրքիան, ի վիճակի չլինելով ազատվել իմպերիալիստական կախումից, ինքն էր տարածողական

պլաններ մշակում նվաճելու Կովկասը, Թուրքեստանը և այլն։ Իրենց իմպերիալիստական պլանների իրականացման համար Թուրքերը մոբիլիզացնում էին բոլոր կրոնական և նացիոնալիստական ուսմունքները։ Նրանց օտար չէին ո՛չ պանիսլամիզմի, ո՛չ պանթուրքիզմի-պանթուրանիզմի, ո՛չ կրոնական մեսիականության («Մեխտի»— կգա ժամանակ, երբ աշխարհի բոլոր մահմեդականները կդառնան երկրագնդի տիրակալը), ո՛չ թուրանական մեսիայի (գորշ գայլի, որ Բուրտոչինին՝ Թուրք ցեղի դարբնին, ցույց էր տվել ճանապարհը) գաղափարները (27, էջ 309)։

Թուրքիզմը դառնում էր թուրանիզմ։ Հիշում ու հիշեցնում էին բոլորին, որ թուրքերի հայրենիքը ոչ թե Թուրքիան կամ Թուրքեստանն են, այլ մեծ երկրամաս Թուրանը։ Այս տեսության գլխավոր հեղինակը Զիա Գյոք Ալփն էր (1875—1924)։ Նա որոշակիորեն կրել էր գերմանական բուրժուական նացիոնալիզմի մարտաշունչ ներկայացուցիչների հայացքների, հարցադրումների ու լկտի մեծամտության ազդեցությունը։ Զիա Գյոք Ալփը բղավում էր. «Անհրաժեշտ է յուրաքանչյուրին թուրք համարել» (80, էջ 19)։

Երիտթուրքական կուսակցության «Կենտրոնական կոմիտեում նստած էին այնպիսի մարդիկ, որոնք թուրքիզմի ազգայնական ծրագրի մեջ տեսնում էին թուրքերի՝ իբրև ազգի, զարգացման պարտադիր նախապայմանը, որի միջոցով միայն հնարավոր էր իրականացնել իրենց միտած եվրոպականացումը» (23, էջ 26)։ Սրանք ձգտում էին մեկ ազգի մեջ կենտրոնացնել բազմազգ պետության բնակչությանը, ամրապնդել իսլամական միությունը և Գյոք Ալփի ու մյուսների տեսությունները համապատասխանեցնում էին իրենց գործնական նպատակներին։ Թեև Արմստրոնգը վկայում է, որ «Թուրքիան թուրքերի համար» լոզունգը Մուստաֆա Քեմալը հակադրում էր երիտթուրքերի քաղաքական պլատֆորմին տակավին համաշխարհային պատերազմի նախօրյակին (66, էջ 28։

Պանթուրքիստների ռասիստական երազը պետք է իրականացվեր երեք փուլով։ Պանթուրքիզմին և իսլամին նվիրված իր աշխատության մեջ Սերժ Զենկովսկին հետևյալ կերպ է ձևակերպում այդ փուլերի իրականացման հերթականությունը։ Նախ օտոմանյան թուրքերը պետք է ամրացնեին իրենց դիրքերը կայսրության ներսում և թուրքացնեին փոքրամասնություններին, հետո սկսվելու էր պանթուրքական փուլի շրջանը, երբ օսմանյան թուրքերի մերձավորագույն ազգակիցները՝ Ռուսաստանի և Պարսկաստանի ադրբեջանցիները պետք է ներառնվեին թուրքական պետության մեջ։ Երրորդ փուլում թուրքական պետականության հովանու տակ պետք է համախմբվեին Ասիայի բոլոր թուրանյան թուրքալեզու ժողովուրդները (75, էջ 111)։

1914-ի օգոստոսի 14-ին «Թանին» թերթի էջերում Զիա Գյոք Ալփը տպագրեց իր «Կարմիր երգը», որի մեջ կոչ էր անում՝ թող «Թուրքիան մեծանա, դառնա Թուրան ծագից ծագ», «Ալթայները պիտի դառնան երկիր վեհ, եվ Թուրանին սուլթանը լինի մեծ իշխան» (22, էջ 26—27)։

Պանթուրքիզմ կամ պանթուրանիզմ (թուրքերեն türkçülük) ասելով երիտթուրքերը նկատի ունեին բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորումը Թուրքիայի իշխանության տակ։ Երիտթուրքերի գաղափարախոսները հանգամանորեն մշակում էին իրենց «երրորդ քաղաքական սիստեմը»՝ պանթուրքիզմը։ 1911-ին Ստամբուլում լույս տեսավ մի գրքույկ, որը վերնագրված էր. «Երեք քաղաքական սիստեմներ»։ Յուսուֆ Աքչուրան, Ալի Քեմալը և Ֆերիդ Ահմեդը այդ գրքույկի էջերում զարգացնում էին յուրաքանչյուրն իր տեսակետը այն մասին, թե երեք ուղղություններից որ մեկը՝ օսմանիզմը, պանիսլամիզմը, թե պանթուրքիզմն է դառնալու ամենաօգտավետ քաղաքական դոկտրինան Թուրքիայի համար (60, էջ 68)։ Զիա Գյոք Ալփը հայտարարում էր, որ իրենք գաղափարախոսության մեջ պլյուրալիստներ են, որ հենց ազգային գաղափարախոսությունը թուրքիզմն է (türkçülük)։ Ինտերնացիոնալ գաղափարախոսությունը՝ իսլամությունը (islamlik), օսմանյան ժողովուրդների համագործակցության գաղափարը օսմանիզմն է (osmanlilik) (60, էջ 70)։

Նախ պահանջվում էր թուրքացնել կայսրության բոլոր ժողովուրդներին, քանի որ նրանք չէին պաշտպանելու թուրքալեզու ժողովուրդների ձգտումը մեկ մայր հայրենիքի շուրջը համախմբվելու գործում։ Այս գործում մեծ դեր էր վերապահվում կառավարությանն ու թուրք մտավորականությանը։

«Մտավորականությունը ազգային զգացմունքին պետք է ավելացնի գիտակցված թուրքիզմ, իսկ կառավարությունը պետք է մերժի օսմանիզմը, տարբերի մեկը մյուսից՝ մուսուլմաններին ու թուրքերին և հովանավորի միայն թուրքերին։ Թուրքիայում այլ ազգություններ չպետք է գոյություն ունենան։ Ոչ թուրքերը կամ պետք է թուրքացվեն, կամ պետք է հեռանան երկրից։ Միայն թուրքիզմի հիմքերն իրականացնելուց հետո Թուրքիայի համար հնարավորություն կստեղծվի նրա սահմաններից դուրս մնացած թուրքերին միավորելու համար (54, էջ 113)։

Այնուհետև, իբր հեշտությամբ իրականացվելու էր օգուզական ցեղերից ծագած ժողովուրդների միավորումը մեկ գաղափարի, մեկ կուլտուրայի շուրջը։ Սրանց շարքն առաջին հերթին դասվում էին ադրբեջանցիները և Հյուսիսային Իրանում բնակվող մյուս ժողովուրդները։ Հետո պետք է համախմբվեին յակուտները, կիրգիզները, ուզբեկները, թաթարները և մյուս թուրքալեզու ազգությունները։ Այս պրոցեսն էլ հենց պանթուրքիզմի վերջնական նպատակն էր։ «Հետագա տարիներին Գյոք Ալփը, Հալիդե Էդիպը և նրանց համախոհները երազում էին մեկ իշխանության ներքո բոլոր թուրքերին միավորելու մասին, ինչը պետք է հարություն տար Աթիլայի, Չինգիզ խանի և Թամերլանի օրերին։ Այս խնդիրը հայերի նկատմամբ իրականացնելը դժվարին բան էր համարվում, քանի որ նրանք լեզվի ու կրոնի դարավոր ավանդույթներ ունեին՝ որոշակի ազգային նկարագրով։ Սակայն նկատի ունենալով իրենց նախորդների՝ Աթիլայի, Չինգիզ խանի և Թամերլանի վայրենաբարո փորձը, հայերին հաղթահարելը իրականացնելի բան էր ներկայանում (72, 82, էջ 190)։ Ամերիկացի Ռ. Դ. Ռոբինզոնն ապացուցում է, որ Զիա Գյոք Ալփի նացիոնալիզմը կյանքի կոչվեց արդեն Մ. Քեմալի իշխանության տարիներին, երբ երկրի ներքին թուրքացումն ընդգրկեց կյանքի բոլոր բնագավառները (80, էջ 19)։ «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսը իրագործվեց նրա օրոք։

Զենապ Շեհապեդդին բանաստեղծը, որն ըստ Ահմեդ Էմինի (Յալման) ազգայնամոլ չէր համարվում, ահա թե ինչ խրատ էր տալիս իր զավակին 1913-ի հուլիսի 7-ին «Ազմ» թերթում հրապարակած իր գրության մեջ։ Նա զայրացած

էր բալկանյան առաջին պատերազմում կրած ծանր պարտությունից և գաղանային կրքեր էր հարուցում իր ցեղակիցների մոտ. «Բուլղարական բանակի օրինակը ցույց տվեց, որ... յուրաքանչյուր զինվոր պետք է վերադառնա բարբարոսության օրերին, պապակի արյան, լինի անգութ մանուկներին ու կանանց, ծերերին ու տկարներին սպանելիս, անտեսի ուրիշների ինչքը, կյանքը, պատիվը։ Ուրեմն արյուն, տառապանք, անարդարություն և սուգ սփռենք. միայն այս կերպ է, որ կարող ենք սիրվել քաղաքակրթված աշխարհի կողմից» (73, էջ 108)։ Եվ սա գրում էր «ոչ ազգայնամոլը»։

Պանթուրքիզմը կյանքում իրականացնելու նպատակով երիտթուրքերը ստեղծել էին հատուկ կազմակերպություններ՝ «Թուրքական հայրենիք», «Իսկական թուրք», «Թուրքական դրոշ», «Թուրքական ուժ» և այլն։ Սրանց միջև բաժանված էին պրոպագանդայի ուղղություններն ու ֆունկցիաները։

Պանթուրքիզմի պրոպագանդան ինչպես օսմանյան կայսրությունում, այնպես էլ արտասահմանում սերտորեն միահյուսվում էր պանիսլամիզմի պրոպագանդայի հետ։ Այս փաստը չէին ժխտում նաև իրենք «երիտթուրքերը»։ Սրանք հայտարարում էին, որ «պանիսլամիզմը և պանթուրքիզմը երկու քաղաքական ծրագրեր են արտասահմանում օսմանյան կայսրության ուժը կրկնապատկելու համար։ Կուսակցությունը... օգտագործում է երկուսն էլ... (27, էջ 305)։ Այս ծրագրերին համապատասխան երիտթուրքերը ողողում էին Կովկասը, Միջին Ասիան իրենց լրտեսներով ու գործակալներով։

Ուսկերը ցույց է տալիս, որ Հայաստանը չէր երիտթուրքերի վերջնակետը, որ նրանք հայացքը հառել էին Հայաստանից արևելք ընկած հողերի վրա (82, էջ 195)։ Բայց հայերը պետք է ոչնչացվեին նախ իրենց հայրենիքը, պետությունը չպահանջելու համար։ Ինչպես նաև նրա համար, որպեսզի իրականացվեր Օգուզիստանի՝ թուրքական այն նոր մեծասահման պետության հիմնադրումը, որը տարածվելու էր Անատոլիայից մինչև Կասպից ծովի արևմտյան ու հարավային սահմանները (82, էջ 190)։ Պատահական չէր, որ 1911-ին պանթուրքիզմը ոչ միայն տեսության մեջ, այլև պրակտիկայում շեշտելու նպատակով Ալի Հուսեին Զադե

բաբվեցի թաթարը ընտրվեց իթթիհադ կուսակցության կենտրոնի անդամ։ Օսմանյան կայսրությունում չծնված մարդուն այսպիսի ղեկավար մարմնի մեջ առնելը մի ցույց էր, թե որքան տարածողական էր երիտթուրքերի ծրագիրը (82, էջ 191)։

Կ. Պոլսում հիմնվել էր ֆրանսերեն և թուրքերեն հրատարակվող մի թերթ («Լյա Թրիբյուն դը պեպլը», «Քուրսի ի Միլել»), որն իր առջև նպատակ էր դրել Հնդկաստանի, Եգիպտոսի, Ռուսաստանի, Թունիսի, Ալժիրի և այլ երկրների միլիոնավոր «ճնշված» եղբայրների մոտ արթնացնել համերաշխության զգացմունք երիտթուրքական իշխանության հանդեպ։ Թերթը կոչ էր անում չհավատալ Եվրոպայի քաղաքականությանը, որը «հակաիսլամական է և հակաասիական» (78, էջ 101)։ Ուոկերը Համիդի պանիսլամիզմի համեմատությամբ իթթիհադի ռասիզմը շատ ավելի հրեշավոր է համարում (82, էջ 195)։

Դեռևս 20-ական թվականներին սովետական արևելագիտության մեջ տիրապետող տեսակետ էր, որ «թուրքական նացիոնալիզմը վերասերվեց թուրք ազգի մեծապետական շովինիզմի՝ օտոմանիզմի, որն օժտված էր իմպերիալիզմին հատուկ գծերով, այն է՝ միլիտարիզմով, ինչը չէր արդարանում Թուրքիայի տնտեսական զրությամբ» (27, 310)։ Սակայն այժմ գտնվում են մարդիկ, որոնք փորձում են մեղմել թուրքիզմը, նրան օժտել դրական գծերով, արդարացնել նրա սանձարձակ շովինիստական էությունը։ Նման մարդանքները մարքս-լենինյան տեսությանն անհարիր մոտեցումներ են։ «Օտոմանիզմ ազգային հարցում, խոր հետադիմականություն սոցիալական հարաբերությունների ոլորտում և, վերջապես, մոլի միլիտարիզմ արտաքին քաղաքականության մարզում՝ այսպիսին էր երիտթուրքական ռեժիմի քաղաքական բանաձևը։ Թուրքիայի բախտի համար առավել ճակատագրական եղավ օտոմանիզմի, այսինքն՝ օսմանյան կայսրության բոլոր ընիկ (հետերոգեն) տարրերի բռնի թուրքացման դոկտրինան (39, էջ 42)։ Այսպես է գրել 1923-ին Վ. Կրյաժինը։

Ահավասիկ ինչպիսի ճշմարիտ և դիպուկ բնութագրություն է տվել թուրքականությանը Ինալ Բուտաևը 1925-ին Լենինգրադում հրատարակած իր գրքում. 1908-ից սկսած «օտոմանականությունը դարձավ երիտթուրքերի ազգային շովինիզմի մարտնչող քաղաքականությունը. երիտթուրքական ազգայնականությունը՝ թուրքիզմը, վերաճեց ագրեսիվ շովինիստական օտոմանիզմի և մեծապետական նացիոնալիզմի» (28, էջ 112)։ Բուտաևը շեշտում էր երկրի ներսում հայ, հույն, թուրք բուրժուազիայի կատաղի մրցապայքարի գործոնը, ցույց տալիս, որ երիտասարդ թուրքական բուրժուազիան, չկարողանալով հաղթահարել այլազգի բուրժուազիայի մրցակցությունը, նրանց նկատմամբ դիմում էր բռնի գործողությունների, նաև կոտորածի, ձգտելով հասնել օսմանյան կայսրությունում լրիվ տիրապետության (28, էջ 112)։ Նա ապացուցում էր, որ օսմանյան թուրքիզմն իր իմպերիալիստական վերափոխումով դառնում էր արդեն թուրանիզմ։ Բանն այն է, որ երիտթուրքերը թուրքացման սիստեմն իրականացնում էին հանուն օսմանյան կայսրության պահպանման և հիմնական թուրք ազգի կառավարող բուրժուազիայի մեծապետական գոյության։ «Ստեղծվում էր մերկապարանոց իմպերիալիստական թուրքական միլիտարիզմը, ռազմաքոչվորական համայնքի նորագույն ֆորմացիան առավել արկածախնդիր խմբի պարագլուխների ղեկավարությամբ, որոնք ամենաանմիջական ֆինանսական կախվածության մեջ էին ընկել Գերմանիայից» (27, էջ 309)։

Մոնաստիրում անգլիական փոխհյուպատոս Գիբերին 1910-ի օգոստոսի 28-ին հաղորդում էր Կ. Պոլիս՝ դեսպան Լոուիերին Սալոնիկում տեղի ունեցած երիտթուրքական համագումարի մանրամասների մասին։ Համագումարում Թալեաթը հայտարարել էր. «Ձեզ հայտնի է, որ սահմանադրությամբ հավասարություն հաստատվեց մահմեդականների և գյավուրների միջև, բայց դուք մեկ մարդու պես գիտեք և զգում եք, որ դա անիրագործելի իդեալ է։ Շարիաթը, անցյալի մեր ամբողջ պատմությունը և հարյուր հազարավոր մահմեդականների զգացմունքները և նույնիսկ իրենց իսկ գյավուրների զգացմունքները, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանացնելու յուրաքանչյուր փորձին, մի անանցելի պատնեշ են իսկական հավասարություն հաստատելու ճանապարհին... Այս պատճառով ոչ մի խոսք չի կարող լինել հավասարության մասին մինչև այն պահը, քանի դեռ մենք չենք իրա-

կանացրել կայսրության օսմանացման դժվարին խնդիրը, որը, ես ինձ թույլ չեմ տալիս կանխագուշակել, կլուծենք մենք նախապես վերջ դնելով բալկանյան պետությունների ագիտացիային և պրոպագանդային» (69, էջ 208—209)։

1910-ի սեպտեմբերի 6-ին Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Լոութերը արտաքին գործերի մինիստր Գրեյին հաղորդում էր երիտթուրքերի ներքին քաղաքականության մանրամասների մասին։ «Նրանց համար,— գրում էր նա,— «օտոմանը» ակներևաբար նշանակում է «թուրք» և նրանց «օսմանացման» ներկա քաղաքականությունը ոչ այլ ինչ է, քան ոչ թուրք տարրերի փշրումը թուրքական հավանգի մեջ» (69, էջ 207)։

1910-ին մի նախագիծ մտցվեց մեջլիսի քննարկման, որտեղ ասվում էր այլազգիների հետ թուրք-արիացիների ամուսնությունն արգելելու մասին (44, էջ 41, 42)։

1911-ի հոկտեմբերին Սալոնիկում կայացած տխրահռչակ համագումարում երիտթուրքերի ընդունած որոշման մեջ ասված էր. «Կայսրության բնույթը պետք է մահմեդական լինի, պետք է ապահովվի հարգանքը մահմեդական հիմնարկների և ավանդույթների նկատմամբ. մյուս ազգություններին պետք է մերժել կազմակերպվելու իրավունքը, քանի որ ապակենտրոնացումը և ինքնավարությունը դավաճանություն են թուրքական կայսրությանը։ Փոքրամասնություններն այնպիսի մեծություն են, որոնց կարելի է անվտանգ կերպով արհամարհել։ Նրանք կարող են պահպանել կրոնը, բայց ոչ լեզուն։ Թուրքական լեզվի տարածումը մահմեդական սուպրեմատիի հաստատման և մյուս տարրերի ասիմիլացման բարձրագույն միջոցն է» (79, էջ 309)։

Խոսելով երիտթուրքական ղեկավարների գաղափարական-քաղաքական գծի մասին, նույն Լոութերը 1910-ին նշում էր, որ նրանք «ձգտում են ժողովրդական զանգվածների եռանդը դարձնել իրենց քաղաքական զենքը և այն դնել շովինիստական հունի մեջ, նրան հաղորդել ազգային (այսինքն՝ ասիական) պանիսլամիզմի բնույթ» (78, էջ 99)։

1910-ին կայսրության երեսուն միլիոն բնակչության մեջ թուրքական տարրը կազմում էր մոտ 6 միլիոն (78, էջ 101)։ Լոութերը նշում է, որ թուրքերը ձգտում էին իրենց մակարդակի վրա պահել ուրիշներին և ոչ թե բարձրանալ, հասնել մյուսներին։ Նրանք մեծամասնությանը (արաբներին, հույներին, բուլղարներին և այլոց) զիջում էին կրթությամբ, խելքով, առևտրական հմտություններով։ Թուրք ազգը իբրև իշխող ազգ իր դիրքերը կարող էր պահել միայն կռվելու իր կարողությամբ, այսինքն՝ իր բանակով։ Մայրաքաղաքն ու պառլամենտը նա իր ձեռքում էր պահում զինվորական օրենքի միջոցով։ Հայերին վախեցրին Ադանայի կոտորածով, հույներին լռեցրին ահաբեկման ենթարկելով, բուլղարների քաղաքական կյանքին վերջ դրին նրանց ակումբներն ու ընկերությունները փակելով (78, էջ 101)։

Ջափաղանց ագրեսիվ էին, հարձակողական պանթուրքիստները։ Միություն և առաջադիմություն կոմիտեի աչքի ընկնող գործիչները 1915-ին Բեռլինում գերմանական կառավարությանը համոզում էին Միջին Ասիան, Դաղստանը հանձնել Թուրքիային, Պովոլժիեն հռչակել «Կազանի թագավորություն», իսկ Ղրիմը՝ «Ղրիմի խանություն» (44, էջ 52—53)։ Դեսպան Վանգենհայմը Էնվերին ու Ջեմալին խոստումներ էր շռայլում՝ «Կովկասը ձեզի տալով, ձեր առջև Թուրանի ճամփան բանալ կուզենք, Թուրքիո ամբողջականության արգելք տարրերը պիտի փչացնենք և Պարսկաստանն ալ պիտի գրավենք...» (18, էջ 24)։ Էնվերը լիովին համամիտ էր այս հարցադրմանը և իր ընկերներին կոչ էր անում չտարակուսել, որ այդ միջոցով «մենք պիտի կրնանք Թուրանի ճամփան բանալ և թուրք միությունը ապահովել» (18, էջ 31)։ Բեհաէդդին Շաքիրը ողջունում էր առիթը, Թուրանի երազի իրականացման մեջ արդեն ռեալություն էր տեսնում։

«Թուրքիան թուրքերի համար» լոզունգին երիտթուրքերն ավելացրել էին «թուրքական» բառը. այժմ արդեն ասում էին. «Թուրքական Թուրքիան թուրքերի համար»։ Թուրքիան ավարտվում էր այնտեղ, որտեղ վերջանում էր թուրքական ռասան։ Եթե ապագայի համար այդպիսի լոզունգը պարունակում էր անեքսիաների բազմախոստում պրոպագանդա, ապա համեստ ներկայի համար այն նշանակում էր ոչ ավել ոչ պակաս, քան հաշտվել մասնատված Թուրքիայի հետ։ Ընդ որում, մասնատված ոչ միայն Եվրոպայում, որտեղից վռնդվում էին թուրքերը, այլև կրճատված ասիական տա-

բածքներով և փակված էթնոգրաֆիական սահմաններում։ Դա նշանակում էր, նախ և առաջ հրաժարում Արաբիայից, Սիրիայից, Պաղեստինից։ Նոր պատկերացումներով դա նշանակում էր վերադարձ հայրենիք, Ասիա, ավելի ճիշտ Փոքր Ասիա։ Փոքր Ասիայի թուրք բնակչությունը դարձավ ինտենսիվ պրոպագանդայի և թերթային աղմուկ-աղաղակի առարկա։ Խոսում էին տնտեսական, սանիտարական վիճակի բարելավման, զարգացմանը նպաստելու անհրաժեշտության մասին։ Սակայն Փոքր Ասիան քաղաքակրթելու, Թուրքիայի էթնոգրաֆիական կորիզը բարեկարգելու համար ճշտումները պետք է կատարվեին ոչ թե թղթի ու քարտեզի վրա, այլ իրականում։ Իսկ թուրքական իշխանությունները, զինված հին մեթոդներով ու հայացքներով, նախ կոտորելու էին հայերին, այրելու էին հունական եկեղեցիները, ամայացած վայրերն էին ուղարկելու մահմեդական գաղթականներին, որոնք երբեք չէին քաղաքակրթելու այդ հողերը։ «Ազգային հարցը և լենինիզմը» հոդվածում, անդրադառնալով ազգերի և ազգային լեզուների արտակարգ կայունության, ասիմիլյացիայի քաղաքականությանը դիմադրելու վիթխարի ուժին, Ի. Ստալինը բերում էր «թուրքական ասիմիլյատորների»՝ «բոլոր ասիմիլյատորներից ամենադաժանների» օրինակը, որոնք հարյուրավոր տարիներ խոշտանգում էին բալկանյան ազգերին (21, հ. 11, էջ 359)։ Հիրավի, այդ բանը վերջնականապես ապացուցվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

Դպրոցների բարեկարգման միջոցով իթթիհադականները ձգտում էին հասնել ոչ թուրքերի թուրքացման։ Թուրքանալուց հրաժարվողները զրկվում էին պետական պաշտոն ստանալուց (65, էջ 102)։ Երիտթուրքերը հրապարակավ խոսում էին իրենց ազգայնական ծրագրերի մասին. «Մեկ ազգ, մեկ լեզու, դա է մեր նշանաբանը»,— ասում էին նրանք (20, էջ 138—139)։ Նազիմն ասում էր, որ Եվրոպայում օսմանյան կայսրության տիրապետության հնարավորությունները նեղացել են, որ «պիտի հաշտվենք այդ կացության հետ, ընդունելով, որ մեր հայրենիքը այսուհետև միայն կարող է լինել Անատոլիան։ Մի մոռացեք, որ մեր նախահայրերը Թուրանից են եկել ու այսօր Անդրկովկասում, ինչպես նաև Կասպից

ծովից դեպի արևելք տարածվող ընդարձակ հողերի վրա թուրք ցեղեր են ապրում, գրեթե միատարր, ավա՜ղ, մեր դարավոր թշնամի Ռուսաստանի լծի տակ»։ Նա կոչ էր անում պայքարել Միջերկրականից մինչև Արալյան ծով այդ ցեղերին միավորելու համար։ «Իրենց ծագման ու պատմական կոչման դիտակից թուրք մտավորականն ու քաղաքական գործիչները այս հեռանկարով միայն կարող են առաջնորդվել և դրանով խանդավառել ժողովրդին ու երիտասարդությանը, որ իրաք հաջորդած պարտություններից ու ձախորդություններից կարծես մատնվել են հուսալքման։ Իր ներքին կենսունակությունը և հմայքը խորացնող համիսլամության գաղափարի փոխարեն մեր քաղաքականության հիմնաքարը պետք է դառնա համաթուրանականությունը, որ իբրև ոգի և ձգտում, շատ ավելի խանդավառող է ու ավելի կարելություն է բովանդակում գործնական տեսակետից»,— քարոզում էր թուրքականության մարտաշունչ տեսաբանը։ Նա գտնում էր նաև, որ «այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը հայկական հարցի արմատական լուծումն էր»։ Նրա կարծիքով հայերը «պատմության բնական ընթացքով, անխուսափելիորեն պետք է անջատվեն կայսրությունից, ինչպես բալկանյան ժողովուրդները»։ Նա հիշեցնում էր, որ Բալկանների կորստի հետ հաշտվել էին ակամա և նման սխալ թույլ տալը նա համարում էր հիմարություն։ Բարենորոգումների համար հայերի պայքարը, նրա կարծիքով, հայոց անկախության սկզբնավորումն էր, իսկ արևելյան նահանգների վրա հայկական պետության կազմավորումը նա համարում էր «թուրանական ծրագրի տապանաքարը»։ Հայոց պետության կազմավորմամբ թուրքերը ոչ միայն հրաժարվելու էին թուրք ցեղերի միավորման գաղափարից, այլև թուրքական պետությունը սահմանափակված էին Կոնիայի նախկին սելջուկյան սուլթանների նեղ հողամասերի վրա։ Սրա մեջ Նազիմը տեսնում էր թուրքության մահացման սկիզբը։ Նա կոչ էր անում «միջոցներ ձեռք առնելու նման հավանականությունն ընդմիշտ խափանելու և արգելելու համար»։ Այս նպատակով իր գործընկերներին ապացուցում էր, որ «այսօրվան մեր քաղաքականության ամենակենտրոնական, անհետաձգելի և հրամայողական հարցը հայկական խնդիրն է, որին պետք է մի լուծում գտնել

ոչ թե կիսակատար, ժամանակ շահելու հաշվով, այլ արմատական և ամբողջական լուծում»։ Միաժամանակ նա բացատրում էր, որ 1908-ի սահմանադրությունից հետո հայերը բռնել են «ազգային, մշակութային, տնտեսական անօրինակ վերելքի ճամփան»։ Նա մերժում էր Արևելյան Անատոլիայի վեց նահանգներում հայերի օգտին որևէ բարենորոգում, որը տանում էր դեպի հայոց անկախություն։ Նա մերժում էր նաև նախկինում կրկնված մասնակի ջարդերի քաղաքականությունը։ Երիտթուրքերի տեսաբանը գնում էր հայ ժողովրդի համապարփակ վերացման, կայսրության մեջ հայերին բնաջնջելու խնդիրը։ «Այս առաջարկը կարող է թվալ անխիղճ, անմարդկային... Հարցը զուտ քաղաքական է, Թուրքիայի շահերի ու ապագայի հետ սերտորեն կապված խնդիր։ Կամ պետք է համաձայնվենք հայերի ամբողջական ու արմատական բնաջնջման ծրագրին, ապահովելով մեր ներկան ու ապագան, կանխանշելով մեր զարգացման ուղին և կամ մերժելով այս ծրագիրը, շարունակենք մնալ արդի կացության մեջ, մեր ոտքի տակի հողը փորելով մեր իսկ երկրի մեջ, և բռնելով քայքայման ու անհետացման ճամփան»։ Հայ ժողովրդին անվանելով «նենգամիտ, ճարտար ու ճկուն էրմենի կոչված ցեղ», նա միակ ուղին համարում էր նրա ոչնչացումը Կ. Պոլսից մինչև Բաղդադ, Բայազետից մինչև Ադանա ու Իսկենդերուն»։ Օրինակ, 1911-ին իթթիհադական երեսփոխանը Շարա-Ղշլա քաղաքում տեղի ունեցած հրապարակային ժողովում, մզկիթներում ունեցած ելույթներում բացահայտ խոսում էր «երկրից հայերին վերցնելու» մասին։ Նրանք կամ պետք է մահմեդականություն ընդունեն, որպեսզի «իրենց օսմանցիությանը հավատանք», «կամ պիտի վերցվին» (20, էջ 347)։

Սամսոն քաղաքում 1911-ին բարձր պաշտոնյա Մուստաֆա Նեջիբ բեյը, որ որոշակի դեր էր խաղացել երիտթուրքական հեղաշրջման մեջ, Սապահ Գուլյանի հետ զրույցի ժամանակ ասում էր. «Բոլորն էլ օսմանցի պիտի լինեն, օսմանցի դառնան հոգով, սրտով. մենք համոզված ենք, որ այս երկրի փրկությունը միայն ու միայն դրա մեջ պիտի լինի» (20, էջ 90)։

Սագրազամ Հագը փաշան հայ պատրիարքին ու նրան

ուղեկցողներին չքաշվեց ասել, թե հայոց հողային խնդրի լուծումը հնարավոր է միայն Միջագետքում, եթե նրանք այնտեղ գաղթել ուզեին։ Եվ սա այն վարչապետն էր, որը Բերայի անկյուններից մեկում որոշացած, մի իտալուհու հետ սեր էր խաղում այն պահին, երբ Հռոմից Թուրքական դեսպանը հեռագրել էր Կ. Պոլիս, հաղորդելով, որ իտալական ռազմանավերը ճանապարհ էին ընկել Լիբիան գրավելու համար (19, էջ 282)։ Նույն Հագը փաշան բացորոշ կերպով հայտարարել էր, թե «հայերի պատճառով քրդերին հալածելու պետք չկա», թե ոչ մի գնով չի զինաթափի քուրդ աշիրեթներին, ինչքան էլ որ նրանք հակաօրինական գործեր կատարեին։ «Հայասպան ճիվաղը աչքի առաջ էր. և սակայն հայերից շատ շատերը ոչ միայն չէին տեսնում, այլ տեսած ժամանակին էլ չտեսնելու էին զարկում։ Իթթիհադը գործում էր... (19, էջ 283)։

Անգլիացի Դավիդ Ֆրեյզերը, որ այդ տարիներին ականատեսն էր օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձություններին, վկայում է, որ երիտասարդ թուրքերը «սկզբունքորեն նպատակ էին դրել օսմանացնել ամբողջ կայսրությունը»։ Նրանք, գրում է անգլիացի հեղինակը, ուզում էին ստիպել ալբանացիներին, հայերին, հրեաներին, հույներին, արաբներին, սիրիացիներին, քրդերին և մակեդոնացիներին հրաժարվել իրենց ազգային ինքնությունից, ձուլվել մեկ ընդհանուրի մեջ, խոսել թուրքերեն, օգտվել արաբական այբուբենից և այլն (74, էջ 432)։

Նիկսարի կայմակամ Իհսան բեյը և շրջանային զինվորական հրամանատար Սաբիհ բեյը 1912-ին հնչակյաններին տրամադրել էին երիտթուրքական ղեկավարության մի շարք կարևոր վավերաթղթեր, որոնք վկայում էին հայերին ոչնչացնելու վերաբերյալ ընդունված որոշումների անընդդրկելի մարդատյացությունը։ «Հայերին չխնայեք, կենդանի շունչ չթողնեք, կայք, գույք, ամեն բան խլեցեք»,— ասված էր մի փաստաթղթում։ Սաբիհ բեյը բացատրել էր, որ «հայաջնջությունը իթթիհադականների սևեռուն գաղափարն էր» (19, էջ 303)։ Ականատեսի պատմելով, երբ 1913-ին Ադաբազարի հայությունը մեծաճոխությամբ տոնում էր հայ գրերի գյուտի և տպագրության հոբելյանները, իթթիհադը նախանձից

կատաղած, փորձեց ոստիկանության միջոցով անկարգություններ սարքել, արյուն թափել, բայց շնորհիվ հայ մարտիկների աշխատության նրան այդ չհաջողվեց։ «Հայերը չափից ավելի են վեր բարձրացել, հարկավոր է նրանց վար քաշել»,— ասում էին իթթիհադական պրոպագանդիստները։ «Ամասիայի մեջ նրանք մինչև անգամ օրինակներով հաստատեցին իրենց հետապնդած թեզը»,— գրում է Սապահ Գուլյանը (19, էջ 93)։

Տակավին պատերազմի նախօրյակին Փարամազը (Մաթևոս Սարգսյան), այցելելով Տիգրանակերտ, Խարբերդ, Մալաթիա, Կիլիկիա, հետո Վասպուրական, Կարին, ծանոթանալով քաղաքական կացությանը, իր նամակներից մեկում (գրված Տիգրանակերտից) եկել էր այն եզրակացության, որ «Իթթիհադի զուլումը չափ ու սահման չունի»։ Խարբերդից գրած մի նամակում նա նշում էր, որ երիտթուրքերը որոշել են սեփական «վարկը բարձրացնելու և գիրքի տերը մնալու համար» ենթակա «ազգություններից որևէ մեկից արյան տուրք պահանջել, կոտորել։ Վայրը այս անգամ էլ պիտի լինի Հայաստանը, ենթակա հայը» (25, էջ 15)։ Նա նկատում էր նաև, որ «հայ ազգի առաջադիմությունը սաստիկ նախանձ է գրգռում»։ Երիտթուրքերի իշխանության օրոք «իր երազած հասարակապետությունը մարմին չէր առած և չէր կրնար առնել Թուրքիո մեջ։ Իր և իրեններու բաղձանքները չէին իրագործվում, քանի որ էսվերներն ու թալեաթները նորօրինակ կատաղի բռնապետներ դարձած էին» (25, էջ 17)։ Դավառում մարդիկ տեսնում էին և իրենց այցելության եկած կուսակցական գործիչներին իրազեկ պահում, որ «իթթիհադականները սոսկալի կերպով զինվում են և աշխատում են համիսլամական, թուրք ազգայնական թույնով տոգորել ժողովրդին և քրիստոնյաների դեմ միշտ գրգռված վիճակի մեջ պահել» (20, էջ 158)։ Նման վերաբերմունքը միայն հայերի նկատմամբ չէր, որ կիրառվում էր։ Այլ բան է, որ օսմանյան կայսրության ազգություններից առավել հարմար նշանակետ դարձան հայերը, բայց մյուս ժողովուրդները նույնպես ենթարկվում էին թուրքական շովինիստների հարվածներին։ Մի թուրք պրոֆեսոր, պատասխանելով արաբ ուսանողի դժգոհությանն այն մասին, թե ինքը թուրք չէ, այլ արաբ, բղավում է. «Դուք

և ձեր ազգը պետք է իմանաք, որ թուրք կա, որ գոյություն չունի արաբ ազգ և արաբական հայրենիք, այլ կա միայն թուրքական հայրենիք» (81, էջ 27)։

Մի թուրք ժանդարմ դանիացի բուժքրոջից չէր թաքցրել իրենց քաղաքականության գաղտնիքներն այն մասին, որ սկզբում ոչնչացնելու էին հայերին, հետո հույներին, ապա քրդերին (81, էջ 29—30)։ Ավելորդ է հիշեցնել, որ այդ քաղաքականությունն իսկապես իրականացվեց հիշյալ հաջորդականությամբ, որ 1920-ական թվականների սկզբին, ապա 1955-ին և հետո ջարդի ենթարկվեցին հույները, որ նույն բախտին են արժանանում քրդերը։ Թոյնբին նկատում է, որ «ամեն մի ոչ թուրք ազգություն օսմանյան կայսրությունում արմատախիլ լինելու վտանգի տակ էր» (81, էջ 30)։ Հայերին, թե ասորիներին տեղահանելու, կոտորելու գլխավոր պատճառը Թոյնբին համարում էր ռուսական Ադրբեջանի, Պարսկաստանի և Թուրքիայի միջև, Արևելքի մահմեդականության հետ կապը պահպանելու, այդ կարևորագույն սահմանագլխում միատարր թուրքական բնակչություն ունենալու, այլակրոն, այլալեզու տարրերին ոչնչացնելու ձգտումը (81, էջ 32—33)։ Սանձարձակ պանթուրքիստ Թեքին Ալփը նույնիսկ պարսիկներին ասիմիլացված թուրքեր էր համարում (81, էջ 34)։ Նա գրում էր Եգիպտոսի, Մարոկկոյի, Թունիսի, պարսիկների ու աֆղանների միացյալ ճակատ ստեղծելու մասին, որը պետք է գլխավորեին թուրքերը։ Թեքին Ալփը գրում էր ռուսական իշխանությունից երեսուն-քառասուն միլիոն մահմեդականների ազատագրման, տասը միլիոն թուրքերի հետ միավորման հեռանկարի իրականացման մասին, որի շնորհիվ ստեղծվելու էր թուրքական մի նոր պետություն, գերմանական համազոր իր «քաղաքականությամբ»։ Թուրքական «քաղաքականությունը» նա բարձր էր դասում ֆրանսիական և անգլիական «դեգեներատ քաղաքակրթություններից» (81, էջ 36)։

Ուոկերը գրում է, թե Ալի Հուսեին Զադեն բաքվեցի էր։ Նա դարձել էր իթթիհադի կենտկոմի անդամ և առանձնապես զբաղվում էր պանթուրքական խնդիրներով, երիտթուրքերի ուշադրությունը դեպի Արևելք ուղղելով։ Ճիշտ է նա ընդամենը մի տարի դիմացավ այդ դիրքում, սակայն նրան փոխա-

րինած Բեհաէդդին Շաքիրը Փարիզում կրթություն ստացած նույնպիսի մի մոլեռանդ պանթուրքիստ էր, ինչպես գոկտոր Նազիմը և Ալի Հուսեին Ջաղեն (82, էջ 191)։

1914-ի մայիսի 5-ին թուրքական պառլամենտի նախագահ Խալիլ բեյը դեպուտատներին կոչ էր անում մոռացության չտալ Սալոնիկը, Մոնաստիրը, Յանինան, ամբողջ Ռումելիան և ռանջի հարց էր դնում (23, էջ 29)։

Ուսկերը, համեմատելով նացիզմը պանթուրքիզմի հետ, համեմատությունը համարում է զարմացնող ու ցնցող։ Նա շեշտում է, որ երկու գաղափարախոսություններն էլ հեռանում են սովորական կրոնից, դառնում դեպի հեթանոսական շրջանի առասպելները, արդարացնելու համար այնպիսի արարքները, որոնք կարսուեր կատարել նույնիսկ հեթանոսն ինքը։ Երկուսն էլ առաջ են քաշում տիրող ռասայի գաղափարը, կիրառելով տեռոր բոլոր նրանց դեմ, ովքեր չեն պատկանում այդ ռասային։ Նա վերջում ավելացնում է, թե չգիտես ինչու այդ համեմատությունից, որպես կանոն, խուսափում են պրոֆեսորները (82, էջ 191)։

□

Քանի որ խոսք բացվեց երիտթուրք-սիոնիստական առնչությունների մասին, փորձենք ընթերցողին համառոտակի պատկերացում տալ այն ժամանակվա թուրքական իրականության, երիտթուրքական շարժման մեջ սիոնիստների խաղացած դերի մասին, հիշեցնենք որոշ կարևոր եղելություններ։

Սկսած XIX դարի 90-ական թվականներից օսմանյան կայսրության քաղաքական կյանքի հարցերում, սուլթան Համիդ II-ի իրականացրած հակահայկական քաղաքականության մեջ սիոնիստները արդեն որոշ դեր էին խաղում։ Սիոնիստ-պարագլուխները փորձում էին բոլոր հնարավոր միջոցներն օգտագործել սեփական ծրագրերի իրականացման համար։ Նրանք փորձում էին օգտվել նաև հայկական հարցից, նրա շուրջը ծավալված միջազգային ախոյանությունից։

Արդեն այն ժամանակ հայ-թուրքական առնչությունների, հայ կուսակցական գործիչների ու երիտթուրքերի միջև եղած

փոխհարաբերությունների մեջ նույնպես զգալի էր սիոնիստների դերը։ Սիոնիստների պարագլուխները գործնական քայլեր արեցին սուլթան Աբդուլ Համիդ II-ի միջոցով Պաղեստինում հրեական օջախ ստեղծելու, հրեաների հին հայրենիքը վերականգնելու ուղղությամբ։ Բուն օսմանյան կայսրությունում հրեաների թիվը 500 հազարից չէր անցնում (42, էջ 193)։ Հրեաների համայնքը ակտիվ դեր էր խաղում օսմանյան կայսրության տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքում, Կ. Պոլսում, Իզմիրում, Սալոնիկում և այլ առափնյա քաղաքներում առևտրի, բանկային գործի, ֆինանսների, նաև արդյունագործության ասպարեզներում։

XIX-ի դարավերջին, երբ սիոնիզմը ձեռք բերեց որոշակի կազմակերպվածություն, տարածվեց ու հասավ ինքնահաստատման, նրա առաջնահերթ խնդիրներից մեկը սուլթանի տիրապետության տակ գտնված Երուսաղեմի հողերի վրա հրեական հայրենիքի վերանվաճման, հրեական պետականության վերականգնման հարցն էր։ Ահա թե ինչու պատահական չէր, որ սիոնիստները կապերի մեջ մտան ինչպես սուլթան Համիդ II-ի հետ, այնպես և թուրքական պետության հետագա կառավարմանը հավակնած երիտթուրքերի հետ։ Երիտթուրքական շարժումը դեռ խանձարուրի մեջ արդեն հրեա երկրպագուներ, հովանավորողներ ու հետևորդներ ուներ։ Բայց նախքան այդ խնդրի լուսաբանմանն անցնելը մի քանի խոսքով պատկերացում տանք սուլթանական իշխանության հետ հայկական հարցի առնչությամբ սիոնիստական շարժման պարագլուխների կապերի մասին։ Ընթերցողին նաև հիշեցնենք, որ խնդրի չափազանց մութ կողմերն այսօր էլ տակավին պարզ չեն, թեև վերջին տարիներս պատմության բավականին նոր, ցայսօր անհայտ էջեր հանրության սեփականությունն են դառնում տարբեր երկրներում հրապարակված արխիվային նյութերի միջոցով։

1898-ին Արփ. Արփիարյանն արդեն գրում էր, թե «Հրեությունը բանակ չունի, բայց դրամ ունի, հրեական մեծ տաղանդներ կրփայլեն Եվրոպայի մեջ, նրա ուժը ահագին է, ամեն պետություն քիչ թե շատ հրեական լուծին տակն է» (15 բ, № 20, 1898)։

Աբդուլ Համիդ II-ի հետ անմիջական կապեր էր հաստա-

տել սիոնիզմի հայրը՝ Հերցլը։ 1979-ին Ն. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ հանրության ուշադրությանը հանձնվեց արաբ պատմաբան Մարվան Բուհեյրիի «Թեոդոր Հերցլը և հայկական հարցը» հոդվածը (71), որը որոշակի պատկերացում է տալիս արևմտահայության դժվարին պահին սիոնիստների խաղացած կեղտոտ դերի մասին։ Սիոնիստների առաջնորդը փորձում էր հայկական հարցն օգտագործել իր գլխավորած շարժման քաղաքական նպատակների կենսագործման համար։ Եվրոպայում նա ձգտում էր համոզել հայկական հեղափոխական կոմիտեներին ենթարկվել սուլթանին, փորձում էր հասնել այն բանին, որպեսզի եվրոպական մամուլը չգրեր հայերի օգտին, նշանակություն չտար հայկական հարցին (71, էջ 34)։

Սուլթանի միջոցով հայկական հարցը սիոնիզմին ծառայեցնելու միտքը Հերցլին հուշում է լեհ ազնվական, միջազգային արկածախնդիր Ֆիլիպ Միքայել դե Նելինսկին (1841—1899)։ Հերցլը համոզվում է, որ հայկական հարցում սուլթանին հրեաների աջակցությունը խոստանալու դեպքում վերջինս կարող էր հակվել Երուսաղեմը հրեաներին վերադարձնելուն։ Ինչպես գրում է արաբ պատմաբան Մարվան Բուհեյրին՝ «Հերցլը շատ ժամանակ չծախսեց մամուլում և քաղաքական աշխարհում իր կապերը մոբիլիզացնելու վրա, այն հաշվով, որպեսզի համոզի հայկական հեղափոխական կոմիտեներին ընդունելու սուլթանի պայմանները» (71, էջ 19)։ Այդ նպատակով Նելինսկին ուղարկվում է Լոնդոն։ Փորձում են օգտվել նաև Սոլսբերիի աջակցությունից (Սոլսբերին ի վերջո հրաժարվում է նրա հետ հանդիպելուց) և հաշտեցնել հայկական կազմակերպությունները սուլթանի հետ։ Հերցլը ակտիվ գործունեություն է ծավալում Վիեննայում, գրում է նամակներ, կապեր հաստատում Թիֆլիսի կոմիտեի ղեկավար անդամ Ալահվերդովի, «Հրեական պետություն» գիրքը ռուսերենի թարգմանած, ժուռնալիստ, նախկին նիհիլիստ Ս. Կլյաչկայի հետ, ջանքեր չի խնայում հաղթահարելու «հայերի անվստահությունը»։ Մի նամակի մեջ Հերցլը գրում էր, թե «հայերը չպետք է իմանան, որ մեր մասնակցությունը (իմա՝ հայ-թուրք ախոյանությանը— Ջ. Կ.) պայմանավորված է մեր ազգային շահերով» (71, էջ 22)։

Հերցլի հետ նամակագրական կապ էր հաստատել Մելքոն խանը, որը 1896-ի հուլիսի 6-ին «Օբսերվեր» թերթում հրապարակած մի նամակում Հայաստանի ապագայի համար կարևոր նշանակություն էր տալիս հրեական ենթադրյալ պետության ստեղծմանը։ Այս նամակի մեջ սակայն Մելքոն խանը գտնում էր, որ հրեական պետության ստեղծման հաջողությանը ոչինչ այնպես չի նպաստի, որքան ինքնավար Հայաստանի ստեղծումը և այլն։ Ի վերջո Հերցլը Նելինսկուն ետ է կանչում Լոնդոնից և հայացքը հառում է Կ. Պոլսին։ Նա ցանկանում էր հանդիպել սուլթանի հետ։ «Թող սուլթանը մեզ շնորհի հողի այդ փոքր կտորը,— ասում էր նա,— իսկ մենք դրա դիմաց կարգի կբերենք նրա տունը, կբարելավենք նրա ֆինանսական դրությունը և նրա օգտին կտրամադրենք հասարակական կարծիքն ամբողջ աշխարհում» (71, էջ 24)։

1896-ի հունիսին Հերցլը ճանապարհվեց Կ. Պոլիս։ Բուդապեշտից նրան ընկերացավ Նելինսկին։ Ինչպես գրում է Մարվան Բուհեյրին, «Հերցլն իր հետ տանում էր Պաղեստինի գնման գլխավոր պլանը» (71, էջ 26—28)։ Խոսքը վերաբերում է Պաղեստինի համար սուլթանին 20 միլիոն ֆունտ ստեռլինգ վճարելու մասին։ Վերջիվերջո սուլթանը մերժեց սիոնիստների պլանը, թեև Հերցլին պարգևատրեց «Մեջիդիե» շքանշանով, խնդրելով նրան օգնել հայկական հարցում։

Ըստ էության սուլթանի կամքը կատարելու նպատակ էր հետապնդում Հերցլի ուղևորությունը Լոնդոն, նրա հանդիպումները հասարակական-քաղաքական տարբեր գործիչների հետ, այդ թվում նաև «Հնչակի» ղեկավար Նազարբեկի հետ։ Վերջինս մերժեց սիոնիստների ղեկավարի առաջարկները, անվստահություն արտահայտելով սուլթանին։ Սակայն Նազարբեկը շնորհակալություն էր հայտնել հրեական շարժման ղեկավարին հայերի նկատմամբ «բարի զգացումների համար» (71, էջ 29)։

Հերցլի գործընկերներից ոմանք կասկածանքի տակ վերցրին հայկական հարցում Հերցլի դիրքորոշման բարոյական հիմքերը։ Բեռնարդ Լազարը, Հերցլի ամենաառաջին համախոհներից մեկը, ի նշան բողոքի ընդդեմ Արդուլ Համիդի, դուրս եկավ սիոնիստական շարժման գործկոմի կազմից։ 1902-ին նա սիոնիզմը սուր քննադատության ենթարկեց «Պրո-Արմենիա» թերթի էջերում։

Երբ ձախողվեց Պաղեստինը գնելու սիոնիստների պլանը, նրանք հանձն առան վճարել օտոմանյան պարտքի մի մասը։ Այս խնդրում նույնպես մերժում ստացան Համիդից, թեև վերջինս հրեական մի ընկերության թույլ տվեց հաստատվելու և այգեգործությամբ զբաղվելու Պաղեստինում։ Այն ձեռնամուխ եղավ հողեր գնելուն (8, էջ 288)։

1901-ի մայիսին Հերցլը արժանանում է սուլթան Համիդի ընդունելությանը։ Միջնորդի դերը կատարել էր հունգարական հրեա արևելագետ Արմինիուս Վամբերին։ Նա հրեական ներգաղթի ծրագիր է առաջարկում սուլթանին։ Վերջինս ընդդիմանում է, թեև չի առարկում, որ իր անունով եվրոպական բանկերում մեծ գումարի ոսկի մուծվեր։ Համիդը հրեաներին իրավունք է տալիս հող գնելու Միջագետքում, հաստատվելու այնտեղ, բայց սահմանափակում է համախմբումը։ Շուտով Միջագետք, Սիրիա, Լիբանան և այլուր հաստատվելու իրավունք և օսմանյան քաղաքացիություն ստացած հրեաների հավաքատեղի դարձավ Պաղեստինը։ Հետո Համիդը միանգամից 100 հազար հրեաների Պաղեստին գաղթելու իրավունք շնորհեց (8, էջ 288)։ Հողային մեծ տարաձայնություններ գնեցին հրեաները։ Նրանք գերմանա-անգլիական «Վոլֆ» ընկերության, ֆրանսիական Ռոտշիլդների «Սիոն դը սիոն» ընկերության միջոցով այգիներ ստեղծեցին, տներ կառուցեցին։ Դրվում էին այսօրվա Իսրայելի հիմքերը՝ դրամի ուժով, խաղաղ միջոցներով, առանց արյունահեղության։ Սակայն հրեա սիոնիստ-պարագլուխները զայրույթով էին լցված Համիդի սահմանափակումների, արգելակումների նկատմամբ և որոշեցին մասնակցել Համիդի դեմ ծայր առած պայքարին։ «Կարող հրեաներն անդամագրվեցան իթթիհադին (8, էջ 289) Սալոնիկի մեջ, Թրակիայում։ Հրեական բանկերից դրամը հոսեց դեպի իթթիհադականները։ Երիտթուրքական պարագլուխները խոստացան գոհացում տալ հրեական պահանջներին, երբ իրենց ձեռքը վերցնեին իշխանությունը։ Սակայն հետագայում նրանք իրենց խոսքը դրժեցին։

Ինչի՞ն էր հանգում XIX դարի 90-ական թվականների սիոնիստական թուրքանպաստ, հակահայկական պրոպագանդան։ Հրապարակ էին իջել «թուրքագետներ», որոնք թուրքականությունն գովքն էին անում, գովերգում սուլթանի անձը, նրա

«մարդկային» գծերը։ Այս գործում մեծ դեր էր վերապահված կաշառքին։ Կ. Պոլսից դրամը հոսում էր եվրոպական թերթերի տնօրենների գրպանը։

Արմինիուս Վամբերիի, Լեոն Կահունու, Կոստանդին Բորժեսկու (Մուստաֆա Ջալալէդդին փաշա) նման ծառայամիտ թուրքագետներն ու կեղծարարները շատախոսում էին օտոմանյան թուրքերի «թուրո-արիական» ծագման մասին (76, էջ 339—342)։ Սրանք լրացնում էին համաթուրքական ծրագրի ջատագովներ Յուսուֆ Աքչուրային (Կազանից), Ալի Հուսեին Զադեին, Ահմեդ Աղաևին (Կովկասից), Գասպրինսկուն (Ղրիմից) և այլոց, որոնք օսմանյան կայսրության հիմքի վրա ապագա մեծ թուրքական տերություն ստեղծելու հնարավորությունն էին որոճում։

Սիոնիստ-թուրքասերների շարքում իր ուրույն տեղն ուներ Արմինիուս Վամբերին։ Սա ամբողջապես նվիրվել էր սուլթանի անձի ու գործի, ընդհանրապես օսմանյան տերության գովաբանությանը։ Բնականաբար նա թուրքական բռնապետության կապանքներից ազատագրվելու համար մաքառած հայ ժողովրդի հակառակորդների շարքն էր անցել։ Ժամանակի հայոց պատմագիտական ու քաղաքական գրականության մեջ, թերթային ու ամսագրային հոդվածներում նրա հակահայկական ոտնձգությունների մասին շատ է գրվել։ Սակայն վերջերս երևան են հանվել նրա կողմնակալ դիրքորոշման մասին նոր փաստեր, նոր վկայություններ։

1980-ին Ուոկերը Լոնդոնում հրատարակած իր գրքում, որի մեջ նորահայտ արխիվային նյութեր են օգտագործված, Արմինիուս Վամբերիին անվանում է կես-գիտնական, կես-ծաղրածու։ Սա արևելյան լեզուների պրոֆեսոր էր Բուդապեշտի համալսարանում։ Արտասահմանցի և ոչ մի անձնավորություն այնպիսի սերտ կապեր չէր հաստատել սուլթանի հետ, որքան նա։ Սկսած 1880-ից, նա մշտապես, տարին երկու անգամ այցելում էր Համիդին և նրա հետ քննարկում միջազգային քաղաքականության, օսմանյան կայսրության հետ կապված հարցեր։ Իսլամի, մուսուլման ժողովուրդների պատմության և թուրքերենի լավ իմացությունը նրան դարձնում էին ցանկալի հյուր սուլթանին շրջապատող տգետ պաշտոնյաների շրջանում։ Վամբերին հետևողական ռուսատյաց էր և

սուլթանի հետ ունեցած զրույցների ժամանակ մշտապես խոսքը պատեցնում էր Ռուսաստանի հակաթուրքական «մեքենայություններին» շուրջը։ Հակառուսականության հարցում նա հիշեցնում էր Դիզրայելիին ու Լայարդին։ Այժմ արդեն հայտնի է, որ բրիտանական Ֆորին օֆիսը վճարում էր նրան այդ ճամփորդությունների համար և վերադառնալուց հետո Վամբերին նրանց երկար-բարակ զեկույցներ էր գրում իր զրույցների մասին (82, էջ 145)։ Այս փաստաթղթերն արդեն լույս աշխարհ են բերվում արխիվային փոշու միջից և բավականին լույս են սփռում սուլթանի մութ գործերի վրա։

Ուոկերը, շեշտելով Վամբերիի հակառուսականությունը, գրում է, թե նա այնպիսի ատելությամբ էր լցված Ռուսաստանի նկատմամբ, որ հայերի տանջանքները դուրս էին նրա տեսադաշտից։ «Հայաստանի պոտենցիալ ազատությունը նրա համար այլ բան չէր, քան Ռուսաստանի էքսպանսիա, և նա աշխատում էր այս տեսակետը ներշնչել Ֆորին օֆիսին։ Նա գրում էր, թե «Հայկական նահանգի ստեղծումը» մի վնասակար հարված է Անգլիայի կենսական շահերին (82, էջ 146)։

1889-ի հոկտեմբերի 22-ին Վամբերին անգլիական Ֆորին օֆիսին հղած իր մի զեկույցում գրում է այն շարությունի մասին, որ սուլթան Համիդը տածում էր հայերի նկատմամբ։ «Պատմիր քո անգլիացի բարեկամներին, մասնավորապես լորդ Սոլսբերիին, որի նկատմամբ ես մեծ հարգանք եմ տածում, որ պատրաստ եմ վերացնելու չարիքը Հայաստանում, բայց ավելի շուտ թույլ կտամ անջատելու գլուխս իմ մարմնից (այստեղ նա դարձավ ավելի զրգռված), քան թույլ կտամ ստեղծել անջատ Հայաստան» (82, էջ 145—146)։

Վեց տարի հետո նույն Վամբերին անդրադառնում է Հայաստանի վերաբերյալ սուլթանի խոսքերին. «Նրանք կարող են անջատել գլուխս վզից, բայց երբեք Հայաստանը իմ կայսրությունից... Ի՞նչ է հայկական հարցը։ Մի հարվածը բավական է ամբողջ շարժումը ճզմելու համար» (82, էջ 146)։ Հայոց կոտորածի պահին «Ռևյու դ' օրիենն» (№ 16, 1895) թերթում Վամբերին աղմկում էր որոշ անգլիացիների հակաթուրքական գործողությունների դեմ։ Նա գրում է. «Թուրքիայի դեմ գործված անդադար հարձակումները վտանգավոր

են անգլիական շահերի տեսակետից, և այդ Մոլեռանդ թուրքատյացները չպետք է մոռանան, որ Անգլիայի թագուհին յուր իշխանության տակ ունի 50 միլիոնից ավելի մահմեդական ժողովուրդ, որոնք սուլթանին ընդունում են որպես մահմեդական կրոնի պետ...» (15 ա, № 70, 1895)։

«Բեռլիներ Տագեբլատ» թերթի (այն պատկանում էր հրեաներին և մշտապես թուրքասիրական գիծ էր իրականացնում (15 ա, № 116, 1895), Կ. Պոլսի թղթակից հրեա Բենհարդ Շտեռնը եվրոպական ազգերի աչքերին թոզ փչելու համար երկար ու բարակ թվարկում էր այն արտոնությունները, որ վաղուց ի վեր իբր թե վայելում էին հայերը Թուրքիայում։ Կաշառված մամուլն ու նրա կաշառված թղթակիցներն ամեն առիթից օգտվում էին ապացուցելու համար, թե հայերը հալածված չէին և թե այդ պատճառով խոսք չպետք է լիներ նրանց արտոնությունների կամ բարեկարգումների մասին։

Ֆրանսիական որոշ թերթեր արդարացնում էին թուրքական կառավարությանը, զորքին, պաշտոնյաներին, հայերին անվանում խռովարարներ, անհավատարիմ հպատակներ։ Սապահ Գուլյանը գրում էր թուրքական դեսպանատան հետ այդ թերթերի կապերի մասին, ցույց տալիս, որ «Ժուռնալ դե դեբատի» գլուխ կանգնած էին հրեա կապիտալիստներ, որոնք «Թուրքին իրենց բարեկամ էին ճանաչում», «Թուրքիային պաշտպանելը մի տեսակ հրեական հայրենասիրություն համարում» (15 ա, № 149, 1895)։ Խոսելով Ֆրանսիայի ազգային մեծ ժողովի որոշ հրեա դեպուտատների մասին, Սապահ Գուլյանը գրում էր, որ «առանց բացառության նրանք բոլորն է՛լ ավելի թշնամի են հայերին, քան թուրքը» (15 ա, № 202, 1895)։

Հրեա բուրժուական լրագրությունը գրեթե առանց բացառության հայերին ներկայացնում էր «կիսավայրենի, ավազակ»։ Այդ մամուլի վնասը հայկական հարցին չափազանց մեծ էր։ Այսպես էր գրում Նյու Յորքի «Հայք» թերթը (11 ա, № 9, 1896, էջ 139—140)։

«Քեոլնիշե Ցայտունգ» և «Բեռլիներ Տագեբլատ» թերթերը հրեաների ձեռքին էին։ Երկուսն էլ գրում էին ի վնաս հայոց խնդրի։ «Բեռլիներ Տագեբլատ» թերթն «ավելի տաճկաց դեսպանատան օրգանն էր, քան գերմանական ազատական կու-

սակցության»։ Այս թերթն ուրացավ հայոց ջարդերը, հայերին ներկայացրեց իբրև «անկախություն երազող ապստամբներ»։ «Քեռլնիշե Ցայտունգը» գրեց, թե «սուլթանը բարեխնամ, իր բոլոր հպատակաց անդորրությունն ու բարեկամությունը կամեցող լուսավորյալ և ազատամիտ ինքնակալ էր», որի նկատմամբ հայերն իբր երախտամոռ էին (11 ա, № 9, 1896, էջ 139)։

Բազելցի պրոֆ. Հյոմանը 1897-ին հրատարակեց «Հրեա ազգի զարթոնքը» գիրքը, որտեղ ասվում էր, թե Հայաստանի ազատագրությունը դեռ բնավ չի հասել իր վախճանին։ Թեոդոր Հերցլի անվանի հետևորդ, սիոնիստ Խաիմ Վայցմանը իր ապագա կնոջը 1902-ին գրած նամակում հայտնել էր, թե Բեռլինում երկար խոսակցություն էր ունեցել Էդուարդ Բեռնշտայնի ու նրա դստեր հետ։ Վայցմանը հայհոյել էր Բեռնշտայնին այն բանի համար, որ նա հովանավորության տակ էր վերցրել հայերին, այլ ոչ թե հրեաներին (71, էջ 34)։ Հիշեցնենք ընթերցողին, որ 1902-ին Էդ. Բեռնշտայնը հրապարակային դասախոսություն էր կարդացել հայկական հարցի օգտին (6)։

□

Փաստերը ցույց են տալիս, որ էական է եղել սիոնիստների դերը երիտթուրքական կազմակերպությունների ամրապնդման, 1908-ի հակասուլթանական հեղաշրջման նախապատրաստման մեջ։ Հիասթափվելով սուլթանի մերժումներից, հույսը կապելով իթթիհադականների հետ, սիոնիստները Երուսաղեմի համար մղած իրենց պայքարը սկսում էին տանել նոր ուղիով։

Օգտագործելով օսմանյան պետության առևտրի և գործարարական ասպարեզում հայկական և հրեական բուրժուազիաների մրցակցությունը, երիտթուրքերը ճարպկորեն օգտագործեցին սիոնիստների հակահայկական ծառայությունները։ Նախ, գերմանա-թուրքական կողմնորոշում ունեցող սիոնիստները հույս ունեին ինքնավար Պաղեստին ստեղծել տակավին Բ. դռան երիտթուրքական իշխանության հովանու տակ։ Այնուհետև հայոց դուրսմղումը Լևանտի առևտրաշատ ոլորտներից նույնպես օգտակար էր լինելու հրեական կապիտալի համար։

Երիտթուրքերի և սիոնիստների միջև հաստատվել էր լիակատար փոխըմբռնում։ Սալոնիկում մեծ թվով հրեաներ էին ապրում (բնակչությունը բաղկացած էր 60 հազար սեֆարդիկ հրեաներից, 20 հազար մահմեդականներից, 40 հազար հույներից, 20 հազար դավանափոխներից (դեոնմե) և 3 հազար եվրոպացիներից)։ Հրեաների ճնշող մեծամասնությունը իտալական քաղաքացիություն ուներ, օգտվում էր կապիտուլյացիոն պայմանագրերից և ենթակա չէր սուլթանի օրենքներին։ Սրանք իտալական մասոնական ժողովարանի անդամ էին։ Նրանց տները զերծ էին ոստիկանության խուզարկություններից։ Սրանց կարող էին դատել իրենց հյուպատոսություններին կից գործող դատարանները։ Այս հրեաներն էլ կազմեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնական կորիզը։ Զերծ հետապնդումներից, սրանք հավաքվում էին տներում, կազմում պլաններ, պատսպարում սուլթանի կողմից հետապնդվող քաղաքական փախստականներին (66, էջ 20)։ Պատահական չէր, որ Սալոնիկում, այս միջավայրում երիտթուրքերի կենտկոմը մնաց, գործեց, իր համագումարները հրավիրեց մինչև 1911 թվականը։ Այստեղ բազմաթիվ հրեական միություններ և կազմակերպություններ էին գործում, որոնց շարքում աչքի էր ընկնում «Ալյանս Իզրաելիթ Յունիվերսելը»։ Հրեա գործիչներ Փ. Ռիսալը (Ժոզեֆ Նեհամա), Նահումը, Պենարոյան և ուրիշներ և՛ սոցիալիստներ էին, և՛ սիոնիստներ, կապված էին ֆրիմասոնության հետ։

Հավատափոխները կամ դեոնմեները ժամանակին Իսպանիայից եկած հրեաներն էին, որ դիրքի և հարստության տեր էին դարձել։ Նրանք հիմնականում զբաղվում էին միջնորդ առևտրով Սալոնիկում, Էդիրնեում և այլ քաղաքներում։ Սրանցից ոմանք «իզմիրլի» էին կոչվում՝ ածիլած կզակներով, մյուսները՝ «սաբաթայի որդիներ»՝ ածիլած գլուխներով։ Երրորդները պատկանում էին դեոնմեների «Օսման պապա» ուղղությանը։ Սրանք իրենց սովորություններով, ուրբաթ օրերը մզկիթ հաճախելով ավելի իսլամացածներն էին։ Ջավիդ բեյը սրանց էր պատկանում (13, էջ 13)։

Լոնդոնում հրատարակվող «Միդլ իստերն ստադիս» պար-

բերականը 1971-ին (հատոր 7, № 1, էջ 89—104) հրապարակեց երիտթուրքական շարժումը բնութագրող, իթթիհադականների հակահայկական քաղաքականության ակունքները բացահայտող մի շատ կարևոր փաստաթուղթ։ Այդ փաստաթուղթը երիտթուրքական հեղափոխությունից հետո Կ. Պոլսում անգլիական դեսպան նշանակված Ջ. Լոութերի (1858—1916) հանգամանալի զեկուցագիրն էր, որ նա 1910-ի մայիսի 29-ին հղել էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Հարդինգին։ Վավերագիրը Ֆորին օֆիսի արխիվում հայտնաբերել և հանրության ուշադրությանն է հանձնել պատմաբան Էլիե Քեդուրիեն «Երիտթուրքերը, ֆրիմասոնները և Հրեաները» վերտառությամբ։ Երիտթուրքերի հայասպան քաղաքականության հանգամանքներն ուսումնասիրելու և ըմբռնելու տեսակետից այս փաստաթուղթը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, ինչում կարող է համոզվել յուրաքանչյուր ոք, ծանոթանալով նրա բովանդակությանը։

Ակներև է, որ վավերագրի իսկական հեղինակ պետք է համարել Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանատան հնագույն ու ազդեցիկ դրագոման (թարգման) Ջ. Հ. Ֆիցմորիսին (1865—1939), որը խցկվել էր երիտթուրքական ֆրիմասոնության խորքերը, նրա գաղտնիքները բացահայտելու, դրանք անգլիական գաղութատիրության շահերին ծառայեցնելու նպատակով։ Ֆիցմորիսը ոմանց կողմից ներկայացվում է որպես այդ պահին Կ. Պոլսում անգլիական գլխավոր և ազդեցիկ դեմք, որին, ըստ էության, ենթարկված էր նույնիսկ դեսպան Լոութերը (78, էջ 90)։

Դեսպան Լոութերի զեկուցագրերից կարելի է եզրակացնել, որ երիտթուրքերն ավելի վատն էին քաղաքականության մեջ, քան Աբդուլ Համիդը։ Նա երիտթուրքական իշխանության գլուխ կանգնած մարդկանց համարում էր «չար» և «ոչ կոմպետենտ», «ծախու» և «մանկամիտ» (78, էջ 90)։

Հատկանշական է, որ անգլիացի դիվանագետները, մասնավորապես դեսպան Լոութերը երբեմն երիտթուրքական կոմիտեն անվանում էր Միության և առաջադիմության հրեական կոմիտե, խոսում էր ֆրիմասոնների և հրեա երիտթուրքերի դաշինքի մասին, այն մասին, որ հրեաները երիտթուրքերի գլխավոր ոգեշնչողներն էին (78, էջ 91)։ Էլիե Քեդուրիեն գրում է, որ օսմանյան կայսրությունը հրեաների ձեռքին դարձել էր մի գործիք հրեական պետության ստեղծումն իրականացնելու ճանապարհին (78, էջ 92)։ Իսկ մինիստր Հարդինգն իր հուշերում գրել է, թե օսմանյան կայսրությունը պառլամենտական կառավարման տարիներին իրականում գտնվում էր հրեաներին ենթակա ծախու երիտթուրքական կոմիտեի կողմից գլխավորվող բանակի իշխանության ներքո (78, էջ 104)։

Հետաքրքրական է, որ արաբական շարժման մահմեդական ղեկավարներն այն տարիներին կասկածի տակ առան Միություն և առաջադիմություն կոմիտեի անկեղծությունը հրեաների և ֆրիմասոնների հետ նրա ղեկավարների ունեցած սերտ կապերի հետևանքով։

Էլիե Քեդուրիեն այս բանը ցույց է տալիս, հենվելով մասնավորապես պրոֆեսոր Z. N. Zeine-ի «The Emergence of Apab Nationalism» (Beirut, 1966) գրքում բերված փաստերի վրա (88, էջ 104)։

Ընթերցողի մոտ զզվանք է առաջացնում հայազգի այն մարդկանց քստմնելի վարքագիծը, որոնք ոչ միայն ծառայում էին երիտթուրքական պետական մարմիններում, այլ միայն դարձել էին իթթիհադական, այլև իրենց դիրքը, կարիերան պահելու համար անդամագրվել էին ֆրիմասոնական ժողովարաններին, համագործակցում էին հրեական կազմակերպությունների հետ (78, էջ 100)։

Էլիե Քեդուրիեն հավաստում է, որ 1919 թվականի Փարիզ. թաղաղության կոնֆերանսի մասնակից բրիտանական պատվիրակների համար Ֆորին օֆիսի պատմագիտական բաժինը պատրաստել էր տեղեկատու գրքեր։ Դրանցից առաջինը Առնոլդ Թոյնբիի «Մահմեդականների պատմություն» գիրքն էր, որտեղ նա գրել է, որ «Սալոնիկի հրեաներն անբաժանելի են Միություն և առաջադիմություն կոմիտեից» (78, էջ 104)։

Է. Քեդուրիեն գրում է, որ հրեաները և երիտթուրքերը միավորվել էին ետին պլան մղելու հայերին, հույներին, արաբներին, նվազեցնելու նրանց դերն ու տեղը կայսրության քաղաքական կյանքում։ Նա փորձում էր համոզել, որ հրեա մեծահարուստները ատում էին ցարական Ռուսաստանը, իսկ

Անգլիան, լինելով Ռուսաստանի դաշնակիցը, նրա դեմ էր տրամադրում հրեաներին։ Վերջիններս երիտթուրքերի հետ սիրախաղում էին նույնպես հակաանգլիական հողի վրա։ Նա ցույց է տալիս, որ Միություն և առաջադիմություն կոմիտեն, ֆրիմասոնությունը և հուդաիզմը սերտ և խճճված կապերի մեջ էին (78, էջ 92—93)։

Փաստաթուղթը որոշակի պատկերացում է տալիս թուրքական գործերում անգլիական դիվանագիտության նրբին մեթոդների ու մոտեցումների մասին։ Անգլիական դիվանագետներն ուսումնասիրում էին կացությունը, քաղաքականությունը կառուցում այն փոփոխությունների հաշվառումով, որ տեղի էին ունենում երիտթուրքական իրականության մեջ։ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր սըր Էդ. Գրեյը շտապել էր երիտթուրքական հեղափոխությունը «հիասքանչ» հռչակել (78, էջ 90)։ Եվ, ընդհանրապես, արևմտաեվրոպական բուրժուական քաղաքագետները գովասանքներ շռայլեցին երիտթուրքական հեղաշրջման շափավորության հասցեին, ճանաչելով տարիներ շարունակ եվրոպական մայրաքաղաքներում ծվարած երիտթուրք պարագլուխներին, իմանալով նրանց դասակարգային պատկանելությունը, նրանց քաղաքական հավատամքը։

Այս փաստաթղթի բովանդակության կարևորությունն այն է, որ ցույց է տալիս Կ. Պոլսում իշխանության գլուխ անցած Սալոնիկի երիտթուրքական սպաների ռեալ քաղաքականության նկատմամբ անգլիական դիվանագետների դիրքորոշումը։ Ասենք նաև, որ նման վավերագրերի նշանակությունը մեծ է, քանզի ցայսօր համաշխարհային պատմագիտությունը զբաղված է երիտթուրքական գործունեությանը վերաբերող թուրքական պետական արխիվների հարուստ նյութերից օգտվելու հնարավորությունից։

Անգլիայի արտաքին գործերի մինիստր Հարդինգին Լոուիթերը բազմակողմանի պատկերացում է տալիս Սալոնիկի սիոնիստական կազմակերպությունների, հրեա բնակչության մասին։ Նա հիշեցնում էր, որ Փարիզի ու Սալոնիկի երիտթուրքական շարժումները կապված չէին միմյանց հետ։ Ըստ նրա, Սալոնիկում 140 հազար բնակչից 80 հազարը իսպանական հրեաներ էին, 20 հազարը՝ սաբեթայ Լևի աղանդից

կամ կրիպտո հրեաներ, որոնք արտաքնապես էին մահմեդականություն ընդունել։ Սրանցից շատերը իտալական հպատակություն ունեին և որպես ազատ մասոններ հարում էին իտալական ժողովարաններին. Հռոմի հրեա քաղաքագլուխ Նաթանը համոզված մասոն էր։ Դեսպան Լոուիթերը գրում էր, որ Իտալիայի հրեա վարչապետներ Լուզատին և Սոնինոն, որոշ սենատորներ նույնպես մասոններ էին։ Նրանք պնդում էին, թե ծագումով «հին շոտլանդացիներ էին» և հետևում էին նրանց սովորույթներին։ Սալոնիկի հրեա ազդեցիկ մասոններից Էմանուել Կարասոն, որ դարձել էր օսմանյան պառլամենտի դեպուտատ, ժամանակին հիմնել էր «Մակեդոնիա Ռիզորտա» օթյակը, որի մեջ ընդգրկված երիտթուրք սպաների և ոչ զինվորականների միջոցով հրեական ազդեցություն էր տարածել Թուրքիայի նոր զարգացումների վրա (88, էջ 94)։ Օգտվելով կապիտուլյացիոն իրավունքով երաշխավորված անձի արտատերիտորիալ անձեռնմխելիությունից, նա իր օթյակում թաքցնում էր սուլթանի լրտեսների կողմից հետապնդվող երիտթուրքերին, շահում նրանց վստահությունը։

Լոուիթերը հավաստում է, որ երիտթուրքերի «ազատություն, հավասարություն և եղբայրություն» նշանաբանը միաժամանակ իտալական մասոնների դևիզն էր։ Երկուսի գույներն էլ կարմիրն ու սպիտակն էին։ Սալոնիկի իտալական հյուպատոս Օսկար Շտրաուսը, թե ամերիկացի Ջակոբ Շեֆին, որ քիչ անց նշանակվեց Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան, հրեաներին Միջագետքի հողերի վրա բնակեցնելու ջերմեռանդ կողմնակիցներ էին և գործնական իրականացնողներ։

Երբ սուլթանը գահընկեց արվեց, Սալոնիկի հրեական թերթերը շռնդալից հոդվածներ հրապարակեցին «Իսրայելի Ճընշողի»՝ Աբդուլ Համիդ II-ի դեմ, որն արհամարհել էր Հերցլի դիմումները, չէր ընդառաջել Պաղեստինում սիոնիստների իդեալների իրագործմանը (78, էջ 95)։

1909-ին Համբուրգում կայացած սիոնիստների 9-րդ համագումարը հռչակեց, որ հրեական աշխարհի բաժանումը տերիտորիալիստների և սիոնիստների՝ «թուրքական հեղափոխության հրաշքի» շնորհիվ վերացավ։ Այդ պահին էր, որ սալոնիկցի կրիպտո հրեա Ջավիդ բեյը նշանակվեց ֆինանսների մինիստր, իսկ ֆրիմասոն Թալեաթ բեյը՝ ներքին գոր-

ծերի մինիստր։ Բնորոշ է, որ երիտթուրքական զինվորական դատարանների սպաների մեծամասնությունը նույնպես ֆրիմասոններ էին։ Թալեաթը 1909-ի օգոստոսին դարձավ «Grand Orient de la Turquie» մասոնական օթյակի գլխավոր հովվապետ։ Այս կազմակերպությունը ձգտում էր իր ազդեցությունը տարածել Եգիպտոսի, Սիրիայի և այլ երկրների վրա։

Երիտթուրքերի գլխավոր տեսաբաններից դոկտոր Նազիմը նույնպես հրեական ծագում ուներ։ Նա սալոնիկցի մի կրիպտո հրեայի հետ (Ֆայեք բեյ Տոլեդո) այցելել էր հրեաների ներգաղթով զբաղվող հայտնի կազմակերպության Փարիզի մասնաճյուղը՝ դեպի Միջագետք հրեաների խմբերի ներհոսքն արագացնելու խնդրով (78, էջ 99)։

Երբ թուրքական պառլամենտին երիտթուրքերը հրամայեցին մամուլի մասին մի խիստ օրենք ընդունել «նոր ռեժիմը քննադատելու համար», թերթերի խմբագիրներին ու խմբագիրներին զսպաշապիկ հագցնելու համար, պրեսբյուրոյի դիրեկտոր նշանակվեց մի կրիպտո հրեա, որն իր ճաշակով ուղղություն էր տալիս Կ. Պոլսի մամուլին։ Օսմանյան կայսրության հեռագրական գործակալության գլուխ կարգվեց մի բաղդադցի հրեա. «հասարակական անվտանգության» գլուխը՝ նույնպես սալոնիկցի մի ֆրիմասոն և այլն (78, էջ 95)։

Լոութերը ցավով հաղորդում էր Լոնդոն, որ 1909-ին մակեդոնական զորքի հաղթանակը իտալաշունչ ֆրիմասոնության հաղթանակն էր Բրիտանիայի կողմից ճանաչված Եգիպտոսի մեծ օթյակի նկատմամբ։ Նա հաղորդում էր նաև, որ ներքին գործերի մինիստր դառնալով, Թալեաթը ընդլայնում էր ֆրիմասոնական կոմիտեների ցանցը կայսրությունում, այդ միջոցով իր մարդկանց կարևոր պաշտոնների նշանակելով գավառում։ Դեսպանը եզրակացնում էր, որ «Գրանտ օրիենտը», որի գերագույն հովվապետը Թալեաթ բեյն էր, «Թուրքիայի անտեսանելի կառավարությունն է» (78, էջ 98)։ Նույնիսկ ուլեմաներից ոմանք ֆրիմասոն դարձան։ Այն ժամանակ դա գնահատվել էր որպես «հրեական հաշիշով ժողովրդի թունավորում» (78, էջ 99)։

Այսպիսով, անգլիացի Լոութերը 1910-ին եզրակացնում էր, որ երիտթուրքական այդ շրջանի գործունեությունը գերազանցապես հրեական էր, «թուրքական»՝ ի հակադրություն օտոմանյան մյուս տարրերի, օրինակ, արաբների, հույների, բուլղարների, հայերի և այլոց։ Նա նկատում էր, որ «թուրքը գլխավորապես զինվոր է և սահմանադրական կարգի ներքո ձգտում է պահպանել իր ցեղի գերազանցությունը, որին նա կարող է հասնել լոկ բանակի միջոցով»։ Դաշն կապելով օսմանյան և օտարերկրյա հրեաների հետ, այնուհետև շեշտում է Լոութերը, երիտթուրքերը ձգտում էին մեկուսացնել մյուս ազգություններին՝ հայերին, բուլղարներին, հույներին, որոնց որպես տնտեսական հենարան ծառայեցնելու մտքից ստիպված հրաժարվել էին (78, էջ 99)։

Լոութերը ցույց էր տալիս, որ հրեաներն իրենց ձեռքն էին վերցրել երիտթուրքական կառավարման մեխանիզմի առանցքային կետերը։ Նրանք ջանքեր գործադրեցին, որ իրենց ձեռքը վերցնեին նաև հասարակաց աշխատանքների մինիստրությունը, բայց այն հանձնվեց Հալաջյան էֆենդուն զուտ այն պատճառով, որ Ադանայի կոտորածից հետո քաղաքականապես անհրաժեշտ եղավ հայի ձեռքում թողնել որևէ մինիստրական պորտֆել։ Հալաջյանն ամրապնդեց իր դիրքը, երբ անդամագրվեց Թալեաթի և Ջավիդի գլխավորած մասոնական օթյակին։ Մինչ այդ նրան քարկոծում էր հրեաների կողմից ֆինանսավորվող «Ժյոն թուրք» թերթը (78, էջ 100)։

Լոնդոնի «Ֆորտնայթլի ռևյու» ամսագրում (1910, ապրիլ) տպագրած իր հոդվածում հրեա Իսրայել Զանգվիլը, որ իր վրա էր վերցրել ամբողջ թուրքական ազգային պարտքի վճարման ծանրությունը, հրապարակավ խոստանում էր իր մայրենի լեզուն հռչակել թուրքերենը, եթե երիտթուրքերը հրեաներին անսահմանափակ ներգաղթ արտոնեին դեպի Պաղեստին։

Սալոնիկի ակտիվ սիոնիստ-երիտթուրքերի շարքերում էր Մուստաֆա Քեմալը։ Նրան տվել էին եղբայր Վեզուզա Լոջ անունը։ «Լոջը» միջազգային նիհիլիստական կազմակերպության մի մասն էր։ Նրա մեջ շատ էին քաղաքացիությունը, ազգային դեմքը կորցրած մարդիկ, որոնք խոսում էին Ռուսաստանի հակահրեական ջարդերի կամ Վիեննայի հարուստ հրեաների մասին։ Մուստաֆա Քեմալի կենսագիր Արմստրոնգը գրում է, որ Քեմալը պատկերացում չուներ հրեաների մի-

ջազգային նպատակների ու հոգսերի մասին։ Նա հպարտ էր, որ Թուրք էր և հետաքրքրվում էր Թուրքիան սուլթանի բռնակալական լծից և օտարերկրյա ճնշումից ազատագրելու խնդիրներով (66, էջ 20—21)։ Արմստրոնգը հավաստում է, որ հրեաները չէին վստահում նրան, և նա երբեք չդարձավ Միություն և առաջադիմություն՝ բարձր վերնախավի խմբակի անդամը։ Այնուհետև նա գրում է, թե Մուստաֆա Քեմալը դժգոհ էր իթթիհադի պարագլուխների շատախոսություններից ու անգործնականությունից։ Ըստ Արմստրոնգի նա չէր հարգում նրանց, կռվել էր էնվերի հետ։ Արմստրոնգը էնվերին համարում էր շտապող տղա, Թալեաթին, այդ փոստային պաշտոնյային անվանում էր «մեծ անճոռնի արջ», Ջեմալին՝ կուզիկ թխսամայր, խելքը կորցրած ասիացի, Ջավիդին՝ Սալոնիկի հավատափոխ հրեա և այլն (66, էջ 21)։

Սիոնիստների հետ երիտթուրքերի հակահայկական համագործակցության մասին գրում է Թեհրանի համալսարանի պատմության պրոֆ. Իսմայիլ Ռահինը։ Հայերի կոտորածի մեղավորներ ճանաչելով երիտթուրքերին և գերմանացիներին, թուրքական նացիոնալիզմն ու պանթուրքիզմը, պարսիկ պատմաբանն ընթերցողի ուշադրությունն է հրավիրում օսմանյան կայսրության ազդեցիկ հրեա դեմքերի բացասական դերի վրա։ Նա հիշատակում է մի ֆրանսիացու «Le Dernier bal» («Վերջին բալը») գրքի 1—36 և 46—86 էջերը, որտեղ փաստեր և ապացույցներ են արձանագրված միջազգային սիոնիզմի հակահայկական գործողությունների մասին։ Մասնավորապես հիշատակվում է 1914-ի հունիսի 23-ին Ստամբուլի Նուրի Օսման ակումբում կայացած իթթիհադ կուսակցության ակտիվիստների և սիոնիստների համատեղ գաղտնի ժողովը։ Նրան մասնակցել էր մոտ 700 մարդ, այդ թվում Թալեաթը, Բադրին, Սեզը, Ֆեքրին, Խալվին և ուրիշներ։ Հրեաներից աչքի ընկնող դեր էին խաղացել Սամուել էֆենդին, Աբրահամ էֆենդին և ուրիշներ։ Այստեղ էին նաև Ռուսաստանից հեռացած մոլի պանիսլամիստներ Ահմեդ Աղաևը, Ջելալ Կորխմազովը, Մահմուդ Թաղիևը, Ջիա բեյը և ուրիշներ։ Ժողովն ընթացավ հակառուսական կատաղի լոզունգների հեղեղով։ Հայերին մեղադրում էին ռուսասիրության մեջ։ Որոշվեց բոյկոտ հայտարարել ինչպես հայերին, նույնպես և

հույներին (17, էջ 42—43)։ Գլխավոր ճառախոսը Թալեաթն էր։

Իսմայիլ Ռահինը ցույց է տալիս, որ թուրքերի պլանն էր՝ վերացնել Հայաստանի «վտանգը» պանթուրքական աշխարհակալական ճանապարհից, Ադրբեջանի վրայով կապ հաստատել Միջին Ասիայի հետ։ 1915-ի դեկտեմբերի 31-ին Վիեննա ժամանած թուրքական պատվիրակությունը, որը գլխավորում էր Ռուսաստանից հեռացած Յուսուֆ օղլի Աբշուրան, ավստրիական կառավարությանը հանձնած հուշագրում պահանջում էր Բուխարան և Թուրքմենստանը ազատել ռուսական տիրապետությունից, Կիրգիզիային շնորհել քաղաքական անկախություն, Կազանի և Ղրիմի մուսուլմաններին դնել Թուրքիայի հպատակության տակ, ինքնավարություն շնորհել Վոլգայի բոլոր թաթարներին։ Ավստրիական կառավարությունը խոստացել էր ուսումնասիրել ու պատասխանել (17, էջ 44)։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պաշտպանելով երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը, սիոնիստների պարագլուխները ձգտում էին այդ ճանապարհով իրականացնել սեփական պլանները։ 1914—1916 թթ. առանձնապես ակտիվ էին գերմանական հրեաների ղեկավարները, որոնք լավատեսորեն փարվել էին կայզեր մերձավորարևելյան քաղաքականությանը։

1. Լենին Վ. Ի., Երկեր, 4-րդ հրատ.։
2. Ա.-Բռ, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թթ., Երևան, 1917։
3. «Աշխատանք», թերթ, Իզմիր։
4. «Արմենիա», թերթ, Բուենոս Այրես։
5. Ատամ, Օսմանյան կայսրության անկման պատմությունը։ Երիտասարդ թուրքերու վերանորոգվող դպրոցը, Կ. Պոլիս, 1913։
6. Բեռնշտայն Էդ., Հայկական տանջանքները և Եվրոպան։ Դասախոսություն կարդացված Բեռլինում 1902-ի հունիսի 26-ին, Ժնև, 1906։
7. Պանգրուեի Հր., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնապետության դեմ (1890—1910), Բեյրութ, 1973։
8. Եազբեեան Գ., Աբդուլ Համիդ Բ. Կարմիր սուլթանը, Բեյրութ, 1980։
9. Զարեևեդ, Միացյալ անկախ Թուրանիա կամ ի՞նչ կծրագրեն թուրքերը, 1926։

10. Ալիխանով Բոռ., Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն, Կ. Պոլիս, 1919։
11. Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ապատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979։
11 ա. «Հայք», Թերթ, Նյու Յորք։
12. «Հորիզոն», Թերթ, Թիֆլիս։
13. Ղազարյան Հ., Յեղասպան Թուրքը, Բեյրութ, 1968։
14. Մակինցյան Պ., Նոր Թուրքիան, «Նորք», 4-րդ գիրք, Երևան, 1924։
15. «Մշակ», Թերթ, Թիֆլիս։
15 ա. «Նոր դար», Թերթ, Թիֆլիս։
15 բ. «Նոր կյանք», Թերթ, Լոնդոն։
16. Զորմիսյան Լ., Կուսակցությունները, Բեյրութ, 1965։
17. Ռահին Իսմայիլ, Հայերի ցեղասպանությունը օսմանյան սուլթանների օրոք (պարսկերեն), 2-րդ հրատ., Թեհրան, 1972։
18. Ռիֆաթ, Մեկան Զադե, Օսմանյան հեղափոխությունը և մութ ծալքերը, թարգ. թուրք., Բեյրութ, 1938։
19. Սապահ Գուլյան Ս., Պատասխանատուները, Պրովիդենս, 1916։
20. Սապահ Գուլյան Ս., Փորր Հայքի հիշատակները, մասն 1, մայիսի 10—օգոստոսի 1, 1911, Զիկագո, 1917։
21. Ստալին Ի. Վ., Երկեր, հ. 11, էջ 359։
22. Վարդան Լևոն, Հայկական տանհինգը և հայերու լքյալ գույքերը, Բեյրութ, 1970։
23. Վեռներ Է., Թուրքիան եոյակ միությանն և Անտանտայի միջև 1914 թվականին։ Պատրանքներ և իրականություն Բոսֆորի ափերին, «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ, № 7, 1970։
24. Ուսանող տարեգիրք, Դ. Ե. Բեյրութ, 1937։
25. Քսան կախաղաններ, Նվեր 1915 հունիս 2/15-ին Կ. Պոլսու մեջ կախաղան հանված քսան ս. դ. հնչակյան ընկերներու հիշատակին, Պրովիդենս, 1916։

26. «Борьба». газета, Тифлис.
27. Бутаев И. Основные моменты в развитии национального движения на мусульманском Востоке, «Колониальный Восток», М., 1924.
28. Бутаев И. Национальная революция на Востоке, сборник «Преблемы Турции», Ленинград 1925.
28а. Бабаходжаев А. Х. Пантюркизм — орудие идеологической диверсии империализма, «Труды института Востоковедения», вып. П., Ташкент, 1954
29. «Вопросы истории», журнал № 1, 1973.
30. Гасанова Э. Идеология буржуазного национализма в Турции в период младотурок (1908—1914), изд. АН Аз. ССР, Баку, 1966.

31. Гасанова Э. О концепции тюркизма в идеологии младотурок, М., 1966.
32. Гельферих К. Накануне мировой войны, М., 1924.
33. Голобородко И. И. Старая и новая Турция, П-М., 1914.
34. Горцев, Младотурки и рабочий вопрос, «Современник», СПб, книга четвертая, 1912, апрель.
35. Гришина М. И Итало-турецкая война и Россия, «Ученые записки МГПИ им. В. И. Ленина, М., 1967, т. 252.
36. Зографски Д. Европейские державы и Балканы в начале XX века (1900—1914), М., 1970.
37. Калмыков С. Посланец из Турции, сборник «Чекисты», Ташкент, 1978.
38. Капчев Г. И. Турецкое наследство и мировая война, Стокгольм, 1917.
39. Кряжин В. Политические группировки Турции. Младотурки. «Новый Восток», № 1, 1923.
40. Лазарев М. С. Крушение Турецкого господсттва на Арабском Востоке, М., 1960.
41. Лудшувейт Е. Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., М., 1966.
42. Майский В. Германия и Ближний Восток, «Русские записки», 1916, № 1, январь, Петроград.
43. К. Маркс и Ф. Энгельс, Соч., первое изд.
44. Марунов Ю. Пантюркизм и панисламизм младотурок, (1908—1918), Краткие сообщения института народов Азии, XIV, М., 1961.
45. Миллер А. Ф. Оттоманская империя (Султанская Турция), Высшая партийная школа при ЦК КП(б), М., 1946.
46. Миллер А. Ф. 50-летие младотурецкой революции. М., 1958.
47. «Мир ислама», журнал, СПб, 1913, т. П., вып. 13.
48. «Наше время», газета, Баку.
49. «Новый Восток», журнал. № 2, 1922.
50. Петросян Ю. Младотурецкое движение, М., 1971.
51. Покровский М. Виновники войны, «Внешняя политика...», Сборник, П., 1919.
52. Попов А. Турецкая революция 1908—1909 гг. Вступительная статья и обширная документация в журн. «Красный архив», 1931, т. 43. 44, 45.

53. «Правда», газета.
54. Саакян Р. Ценное исследование (О книге Гигинейшвили О. И., «Пантюркизм и внешняя политика Османской империи», на груз. языке), «Лрабер» АН Арм. ССР. № 7, 1967.
55. Сабитов Н. Панисламизм и пантюркизм на службе империалистической реакции, «Вестник АН Казахской ССР», № 7(76), 1951.
56. Сенкевич И. Г. Младотурецкая революция и албанское национальное движение, журнал «Советское востоковедение», № 1, 1958.
57. Скиталец А. Два года турецкой конституции, «Московский ежегодник», № 33, 21, VIII. 1918.
58. «Славянские известия» журнал, СПб, № 1,1909.
59. Талетов, Старая и молодая Турция—«Славянские известия», 1909, № 4.
60. Тверитинова А. С. Младотурки и пантюркизм, «Краткие сообщения института востоковедения», № XXII, М., 1956.
61. Тер-Арутюнов А. Политические партии в современной Турции, журнал «Русская мысль», № 9, 1908.
62. Хейфец А., В. И. Ленин—великий друг народов Востока.
63. Чапкевич Е. И. Оценка большевиками младотурецкой революции, журн. «Народы Азии и Африки», № 6, 1975.
64. Шпилькова В. И. Младотурецкая революция 1908—1909 гг., М., 1977.

65 Aksin Sina 100 Soruda Jön Türkler ve Ittihat ve Terakki, Istanbul, 1980.
66 Armstrong H. C. Gray Wolf, The Life of Kemal Ataturk, N. Y., 1961.
67 Benson E. F. Cressent and Iron Cross, Edinburgh University Press, London, № 4, 1918.
68 Berkes Niyazi The Development of Secularism in Turkey, Monreal, 1964.
69 British Documents on the Origins of the War, 1898—1914, Edited by G. P. Gooch and H. Temperley, vol. IX, part I.
70 Carpat, Kemal Turkey's Politics, Princeton University Press, 1959.
71 Herzl and the Armenian question, «Journal of Palestine Studies», vol. YII, N. I, Autumn, Beirut» 1977, (Marwan R. Buheiry).

Теодор Герцель и армянский вопрос — научно-информационный бюллетень сектора научной информации по общественным наукам, АН Арм. ССР, № 7 (39), Ереван, 1979, 34 стр.
72 Heyd, Uriel Foundations of Turkish Nationalism, London, 1950.
73 Emin, Ahmed (Yalman) The Development of Modern Turkey as measured by its Press, New York, 1914.
74 Fraser, David Persia and Turkey in Revolt, Edinburgh and London, 1910.
74a Kinross, Lord Atatürk: The Rebirth of a Nation, London, 1965.
75 Lenckovsky, Serge A. Pan—Turkism and Islam in Russia, Cambridge, Massachusettes, 1960.
76 Lewis, Bernard The Emergence of Modern Turkey, London, 1961.
77 Mandelshtamme A. La Societe des Nations et les Puissances devant le Probleme Arménien, 2-ème édition, Beirut, 1970.
78 «Middle Eastern Studies», London, 1971, vol. VII, № I
79 Peace Handbooks V., X, Turkey in Asia, London, 1920.
80 Robinson, Richard D. The first Turkish Republic, A case study in National Development, Cambridge, Massachusetts, 1963.
81 Toynby A. I. Turkey: a past and Future, N. Y.
82 Walker, Christopher I. Armenia; The Survival of a Nation, N. Y., 1980.
83 Wittlin, Alma Abdul Hamid, The Shadow of God, London, 1940.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿՐՆԿԻՐ ՏԱԿ

(1908—1914 թթ.)

1908-ի հեղաշրջումը և ոչ թուրք ազգությունները: Երիտթուրքերի օսմանիզմի քաղաքականությունը: Բռնությունը և կամայականությունը մնում էին երկրի կառավարման հիմնական մեթոդ: Արաբական, ալբանական, մակեդոնական ազգային-ազատագրական պայքարի կազմակերպությունների դիմադրությունը: Թուրքական պաշտոնեությունը և ազգությունները: Իթթիհադի իշխանությունը և Կ. Պոլսի հայոց մեծահարուստ վերնախավը: Տնտեսական մրցակցությունը: Իթթիհադը Ադանայի ջարդի կազմակերպիչ: Դավառում ամեն ինչ առաջվա պես էր: 1912—1913 թթ. բալկանյան պատերազմները և հայկական հարցի վերաբացումը: Բարենորոգումների խնդիրը:

1908-ի հեղափոխությունը, սուլթանի անկումը լայն արձագանք գտան ճնշված ազգությունների և, առաջին հերթին, հայ ժողովրդի ու նրա հասարակական-քաղաքական կազմակերպությունների ու կուսակցությունների մոտ: Սակայն երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի իրադրությունը փոխվեր և ճնշված ազգերը հիասթափություն ապրեին երիտթուրքական իշխանությունից:

1909-ին Բ. Կնունյանցը շեշտում էր, որ «Թուրքիայի հասարակական կյանքում ամենալուրջ հակասությունները մինչև այժմ առաջ են եկել ազգային բախումներից» (13, էջ 100):

Սուլթան Համիդի իշխանության տապալումն իսկապես մի տոն էր օսմանյան հանրաքանի բոլոր ժողովուրդների համար: Ժողովրդի ճնշված ու ընչազուրկ զանգվածներն անձկությամբ կյանքի պայմանների բարելավում էին ակնկալում: Ալբաններն ու մակեդոնացիները, հայերն ու արաբները, բոլոր արհամարհված ու ոտնահարված ազգությունները սեփական երկրում ապահով ապրելու, իրավունքներ նվաճելու երազանքն էին փայփայում:

Երիտթուրքերը բոլոր ազգությունների քաղաքական կազմակերպությունների հետ էլ հաղորդակցվում էին, կապեր հաստատում, ամպագոռգոռ հայտարարություններ անում, բայց միշտ ազգային հարցում մնում էին զուսպ, իրենց խոստումներում ընդհանուր հայտարարություններից այն կողմ չէին անցնում: Նրանք բոլորին էլ օսմանյան ընդհանուր հայրենիքի բարենորոգման պայքարին մասնակցելու կոչ էին անում: Սակայն յուրաքանչյուր ժողովրդի, յուրաքանչյուր ազգության ձգտումները բխում էին նրանց տնտեսական, կուլտուրական զարգացման բնական պահանջներից: Նրանց հասարակական-քաղաքական ուժերն ունեին իրենց ծրագրերը, իրենց երազանքները: Նրանց կյանքում սկսվեց մի իսկական եռուզեռ, երբ 1908-ին թերթեր բացելու, ակումբներ ունենալու իրավունք տրվեց, երբ երկարամյա վտարանդիությունից սկսեցին վերադառնալ ամեն տեսակի ու ուղղության հեղափոխականները: 1905—1907 թթ. ռուսական հեղափոխության պարտությունից հետո սկսված ռեակցիայի շրջանում Ստամբուլ եկան նաև ռուսահայ քաղաքական կազմակերպությունների ակտիվիստներ:

Հայոց քաղաքական այն դեմքերը, որոնք կոչված էին խորությամբ ըմբռնելու թուրքական իրականության խմբումների էությունը, նրանց ներքին զսպանակները, այդպիսի հասունություն և իմաստնություն չունեցան: Այսօր էլ ոմանք սխալ են իրենց բնութագրումների ու ձևակերպումների մեջ: Չափազանցության տիպիկ օրինակ են Կ. Սասունու բնութագրումներն այն մասին, թե «սահմանադրության հռչակումը մեծ բարիք մը եղավ հայության համար», թե «սահմանադրության շնորհիվ հայությունը սկսավ կազդուրվել» (43, էջ 194): Երիտթուրքական իշխանությունը արևմտահայ ժողովրդական զանգվածների համար ոչ մի ժամ, ոչ մի օր բարիք չի եղել, և նրա շնորհիվ հայությունը ոչնչով չի կազդուրվել:

Կարո Սասունու նման քաղաքական «գործիչները» և՛ երեկ, և՛ այսօր իրենց շահերը շփոթում են ժողովրդի կենսական կողմնորոշումների հետ:

1908—1909 թթ. ցարական կառավարությունը հակապետական գործունեություն ծավալած դաշնակցություն կուսակցությանը պատկանելու ամբաստանությամբ ձերբակալեց և դատի հանձնեց 100-ից ավելի հայ մտավորականների և ժողովրդական ռազմիկների։ Սրանց մեջ էին նաև Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ավ. Ահարոնյանը։ Սրանց ազատման օգտին հակացարական միտինգներ կազմակերպվեցին «ազատ» Կ. Պոլսում։ Բանտից ազատ արձակված Թումանյանը հանդես եկավ այդ ցույցերի ու միտինգների դեմ, ցույց տալով իր ռուսասիրությունը և Թուրքիայի հանրաբանտ լինելու հանգամանքը։ Նրանց ելակետերը ոչ միայն տարբեր էին, այլև հակադիր։ Հայ ժողովրդի քաղաքական ուժերի գաղափարախոսության հիմքում օսմանյան կայսրությունից անջատվելու, սեփական հայրենիքը ստեղծելու նպատակն էր դրված։ Երիտթուրքերը, ընդհակառակը, ձգտում էին կանխել կենտրոնախույս ձգտումները, երկիրը տանել թուրքացման ուղիով, թուրք լեզվի ու թուրք պետականության գերիշխանության տակ ոչ թուրք ժողովուրդներին ու ազգերին ենթարկելու ճանապարհով։ Սկզբից չէր երևում տարբերության վտանգավորությունը։ Այն ժամանակ գաղափարներն էին բախվում։ Իսկ երբ երիտթուրքերն իրենց ձեռքում կենտրոնացրին պետական իշխանությունը, շարժման մեջ դրին պետական մեքենան, ապա պարզ դարձավ, որ գաղափարներն անզոր էին սվիններ առջև։

Ճիշտ է փոփոխություն էր կատարվել թուրքական իրականության մեջ, սակայն ինչպես երեկ, այսօր նույնպես երիտթուրքերի ուղեգիծը բոլորովին չէր համընկնում ճնշված ազգությունների փայփայած նպատակներին։ Իշխանության գլուխ անցնելուց հետո նրանք դառնալու էին ավելի այլամերժ, ավելի բիրտ, քան իրենց պահում էին Փարիզի սրճարաններում կան «Մեշվերեթ» թերթի էջերում։ Չպետք է անտեսել նաև, որ իշխանության գլուխ անցած Էնվերն ու Թալեաթը, Ջեմալն ու մյուսները բուռ զինվորականներ ու պաշտոնյաներ էին, հեռու մտավոր առաքինություններից։ Սրանք վտարանդիներ չէին եղել, հայ կամ արաբ հեղափոխական գործիչների հետ չէին շփվել, խոսքեր չէին տվել և ամենևին միտք չունեին սեթևեթելու նրանց հետ։ Թեև այդպիսի մեթոդներից օգտվելուց էլ չխորշեցին։ Բանի դեռ երիտթուրքերը իշխանությունը չէին գավթել, խոսքով ընդունում էին ազգերի ու ժողովուրդների, նրանց պայքարի առկայությունը երկրում։ Միություն և առաջադիմություն կոմիտեն հեղափոխության նախօրյակին հրապարակած իր՝ «Կոչ մահմեդական ժողովրդին» կոչում հռչակում էր. «Հայերը Վանում, Բիթլիսում և Դիարբեքիրում, բուլղարները Ռումելիայում և սերբերը, արաբները՝ Եմենում, թուրքերը՝ Էրզրումում, Տրապիզոնում, Կաստամունիում, դրուզները Խորանում այլևս ի վիճակի չեն տանելու բռնությունը, ապստամբել են... Այսքան ազգերի պատճառը մեր մասնատվածությունն է։ Միավորվենք» (61, էջ 18—20)։

Հիշեցնենք, որ Թուրքիայում ազգային փոխհարաբերություններին ամենից ավելի հատուկ էր այն, որ բացառությամբ Անատոլիայի, տիրապետող ազգությունը, այսինքն՝ թուրք-օսմանները ոչ մի տեղ բնակչության գերակշռող տարր չէին հանդիսանում։ Ե՛վ Արաբիայում, և՛ Միջագետքում, և՛ Քուրդիստանում, և՛ Հայաստանում թուրքերը ներկայացված էին գլխավորապես պաշտոնյաների և զինվորների խմբով, ամբողջապես օտար էին այդ երկրների արմատական ազգաբնակչությանը։ Բացի այդ, թվական տեսակետից փոքրամասնություն կազմելով, օսմանները և՛ կուլտուրական տեսակետից, և՛ նյութական բարքությամբ զգալիորեն զիջում էին ինչպես արաբներին, այնպես և հայերին (62, էջ 43)։ Նման իրավիճակը մշտապես ճկունորեն օգտագործում էր փորձառու սուլթանը։ Նա խաղում էր ինչպես ներքին հակասությունների, իրարամերժ շահերի, այնպես և արտաքին հակասությունների վրա։ Օրինակ, պետական հարվածի սարսափից ցնցված Համիդը դիմեց խորամանկության. նա դիվանագիտական կորպուսի մեջ լուր տարածեց այն մասին, թե երիտթուրքական խռովությունն ուղղված է քրիստոնյաների դեմ։ Իրենց հերթին երիտթուրքական կոմիտեները հրապարակեցին հայտարարություններ իրենց ելույթի նպատակների մասին. համիդյան ռեժիմի ոչնչացում, 1876-ի սահմանադրության վերականգնում և այլն։ Այդ փաստաթղթերում շեշտվում էր այն միտքը, թե սահմանադրական ռեժիմի հաստատումով երաշխիքներ էին ստեղծվելու երկրի բոլոր ժողո-

վուրդների կյանքի, պատվի և գույքի համար։ Երիտթուրքերն այն ժամանակ մշտապես հիշատակում էին իրենց նվիրվածությունը ժողովուրդների եղբայրության և միասնության գաղափարին, խոսում էին մակեդոնական հարցն արդարացիորեն լուծելու իրենց պատրաստակամության մասին (75, էջ 100)։

Սուլթանական ռեժիմից մասսայական դժգոհությունը գլխավորելու նպատակով երիտթուրքերն առատաձեռն խոստումներ էին շռայլում, աղաղակում «ազատության, հավասարության և եղբայրության մասին» օսմանյան կայսրության բոլոր հպատակների համար՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից և կրոնական համոզմունքներից։ Այս լոզունգը լայն ժողովրդականություն էր վայելում հիմնականում ոչ թուրք ժողովուրդների մոտ, նրանց երկրի դեմոկրատական զարգացման հնարավորության հույս ներշնչում։ Իրականում ամեն ինչ այլ կերպ էր ընթանալու։

Զգալով իրենց կազմակերպությանը և ամբողջ շարժմանը տալ «համաօսմանյան» բնույթ, երիտթուրքերն առաջին օրերի իրենց կոչերում թե իրենց, թե ժողովրդին անվանում էին «օսմաններ» (կամ օսմաններ) և խոսում էին երկրի բոլոր ժողովուրդների եղբայրության, նրանց շահերի ընդհանրության մասին (61, էջ 16)։ Նրանց գլխավոր մտահոգությունն այն էր, որպեսզի ցույց տային, թե ցանկանում էին արդարացիորեն լուծել ազգային հարցը սեփական ուժերով, առանց եվրոպական պետությունների միջամտության։

Անհիմն ոգևորությունը համակել էր շատերին։ Նրանք տեսություն չիմացող, հասարակության շարժիչ ուժերին անիրազեկ մարդիկ էին, որոնք ցանկալին ընկալում էին որպես իրականություն։ Այնուհետև, մարդիկ այնքան հոգնել էին սուլթանի բռնակալական իշխանությունից, որ կայսրության բոլոր ծայրերում հեղաշրջումն ընդունվեց համակրանքով։

Հեղափոխությանը ջերմորեն արձագանքած քրիստոնեական համայնքները (հույները, բուլղարները, սերբերը, հայերը) իրենց զարգացման բարձր մակարդակի համեմատ ակտիվություն ցուցաբերեցին երկրի հասարակական-քաղաքական կյանքում, հրապարակեցին իրենց քաղաքական-կուսակցական ծրագրերը, առաջ քաշելով գործնական նպատակներ

ու հարցադրումներ։ Քանի որ նրանք հանդես եկան իրենց ազգային ինքնությունն օսմանյան տարրերի ոտնձգություններից պաշտպանելու ակտիվ պատրաստակամությամբ, ապա երիտթուրքական կուսակցության պարագլուխներն անմիջապես առարկեցին և հայտարարեցին քրիստոնեական կազմակերպությունների առաջ քաշած դրույթների անընդունելիության մասին (71, էջ 38)։

Երիտասարդ թուրքերն արդեն մոռացել էին, որ 1907-ին մյուս ազգությունների ներկայացուցիչների հետ միասին հայտարարել էին, թե «ներկա բոլոր դժբախտությունների գլխավոր հեղինակի անհետացումը առաջին պայմանն է ամեն բարելավության։ Նրա հետ պետք է անհետանա նմանապես վարչական և քաղաքական բռնակալության, ոստիկանական սարսափի և դիվանագիտական նենգամտության սիստեմը, ապա պետք է հաստատվի ներկայացուցչական ռեժիմ, որով կայսրության բոլոր ժողովուրդները հավասար պարտականություններով ու իրավունքներով պիտի արտահայտեն իրենց կարիքները ու կամքը, և որ պիտի ապահովվի ամենքին, խաղաղ ներդաշնակցությամբ, արդարությունն ու ազատությունը»։

Ի սկզբանե երիտթուրքերի գլխավոր մտահոգությունն էր կայսրության բոլոր այլակրոն և այլացեղ ժողովուրդներին ձուլել մի զանգվածի մեջ, առաջացնել օսմանյան «ազգ», այդ միջոցով վերացնել կենտրոնախույս ձգտումները, պահպանել թուրքական ամբողջական պետությունը։ Այս ճանապարհին նրանք չէին խորշելու ո՛չ բռնությունից, ո՛չ զանգվածային կոտորածից։ Հայկական, թե՛ մակեդոնական, արաբական, թե՛ ալբանական շարժումների մեջ նրանք տեսնում էին արտաքին միջամտությունների, կայսրության մասնատման վտանգը։ Երիտթուրքերը կայսրության փրկության միակ ուղին տեսնում էին ոչ թուրք ժողովուրդների օսմանացման մեջ։ Նրանք երբեմն խոսքով ընդունել են ազգերի ինքնավարության հնարավորությունը, բայց իշխանության գլուխ անցնելով, գործնականում և ոչ մի քայլ չարին այդ ուղղությամբ (40)։ Շարիաթի մոլեռանդ կողմնակիցներն ամենուր ոռնում էին, թե սահմանադրությունը գյավուրի հնարած բանն է։

Հետագեմ տարրերը բարկանում էին, որ հայկական շրջաններում վերելք, աշխուժություն էին տեսնում։

1908-ի սեպտեմբերի 28-ին Թուրքերը Տոքատի մոտ հայտարարում էին, թե «հայերը կացնի հարվածներով պիտի ջարդվին»։ Նույնպիսի հակահայկական շարժում էր հրահրվել Սեբաստիայում։ Մի շարք վայրերում իթթիհադականները հակահայկական և հակահունական բոյկոտ հրահրեցին (2, էջ 1212—1219)։

Արդեն 1909-ին Սալոնիկում գումարված իթթիհադի Ա. համագումարը ցույց տվեց, որ երիտթուրքերն անխնա հալածելու էին ոչ թուրքերին, կիրառելու էին «օսմանցիություն կամ մահ» լոզունգը։ Այստեղ արդեն որոշված էր արևելյան վիլայեթներում մահմեդականներին զինել, իսկ քրիստոնյաներին շարունակել պահել անզեն։

Գործի դրվեց բռնի թուրքացման քաղաքականությունը, որը խռովությունների ու ապստամբությունների տեղիք տվեց կայսրության տարբեր մասերում. արաբներն ու դրուզները Պաղեստինում և Իրաքում՝ 1910-ին, Եմենում՝ 1911-ին, Ալբանիայում՝ 1910-ին, Մակեդոնիայում՝ 1912-ին։ Ալբանացիներն ըմբոստացան այն բանից հետո, երբ փորձեցին նրանց արաբական այբուբեն պարտադրել (66, էջ 33)։ Դավիդ Ֆրեյզերը նկատում է, որ երիտթուրքերը նպատակ էին դրել թուրքացնել ամբողջ կայսրությունը։ «Նրանք ուզում են, որպեսզի ալբանացիները, հայերը, հրեաները, հույները, արաբները, սիրիացիները, քրդերը և մակեդոնացիները հրաժարվեն իրենց ազգային ինքնուրույնությունից, ձուլվեն մեկ ընդհանուրի մեջ, խոսեն թուրքերեն, օգտվեն արաբական այբուբենից» (84, էջ 432)։

Ոչ թուրք զինվորներին ծաղրում էին, ճնշում շովինիստորեն տրամադրված թուրք սպաները (64, էջ 36)։ Քրիստոնյաներին զինվորագրելու օրենքն ընդունվել էր 1909-ի նոյեմբերին։

1909-ից ուժեղացած արաբական գաղտնի ընկերությունները պահանջում էին հաշվի նստել արաբների ազգային շահերի ու ձգտումների հետ։ Արաբ նացիոնալիստները շատ շուտ նկատեցին երիտթուրքերի ներքին քաղաքականության հետադիմականությունը (64, էջ 33)։ Երիտթուրքական ռեժիմի դեմ արաբ ժողովրդի ազատագրական պայքարի հանգամանքները վերլուծված և նկարագրված են սովետական արևելագետ Ս. Լազարևի ուսումնասիրության մեջ։ Երիտթուրքերը շատ ճիգ ու ջանք թափեցին կանխելու համար արաբական կոնգրեսի հրավիրումը Փարիզում։ Այնուամենայնիվ, այն գումարվեց 1913-ի հունիսին և արաբական վիլայեթներում ապակենտրոնացման հիման վրա բարենորոգումներ անցկացնելու մասին որոշումներ ընդունվեցին (64, էջ 44—45)։

Երիտթուրքերն ասում էին. «Ինչո՞ւ բաժանված մնաք մեզնից. հիմա էլ բռնապետություն չկա, հիմա սահմանադրություն կա. եկեք, միանանք, և մեկ ընդարձակ օսմանյան պետություն կազմենք...» (41, էջ 226)։ Բայց ինչպե՞ս՝ ազգային շահերը հարգելո՞ւ, թե անտեսելու հիման վրա։

Սուլթանի անկումը Ալբանիայում զիմավորեցին ցնծությամբ, ցույցերով ու միտինգներով։ Ալբան ժողովուրդը հեղափոխությունն ընկալում էր այնպես, որ թուրք պաշտոնյաներին փոխարինելու էին ալբանացիները, հաստատվելու էր ալբանական ինքնավարություն (70, էջ 36)։ Սակայն նրանց հույսերը չարդարացան։ Երիտթուրքական շովինիստները հեռու էին այդպես մտածելուց։ Նրանք Մակեդոնիայում և Թրակիայում անում էին նույն բանը, ինչ որ Արևմտյան Հայաստանում (85)։ Նրանց կիրառած թուրքացման քաղաքականությունն ընդհանուր զժգոհություն առաջացրեց ամբողջ երկրում։ «Պրավդան» գրում էր, որ չնայած թուրքական «պառլամենտի» գոյությանը, «Թուրքիային ենթակա ժողովուրդներն առաջվա նման ճնշվում ու ոչնչացվում էին» (68, № 93, 1912)։

Երիտթուրքերի թուրքացման քաղաքականությանը հպատակ ազգերը հակադրեցին ինքնավարության պահանջը։

Հայերը, ալբանացիները, մակեդոնացիները, արաբները շարունակում էին բարենորոգումներ պահանջել, համաձայն չլինելով երիտթուրքական քաղաքականությանը (79, էջ 60)։ Երիտթուրքերի կենտրոնը չէր հապաղել հայտարարել. «Նա, ով սեպարատիզմի դրոշ կբարձրացնի, նա մեր կատաղի թշնամին է։ Թող հայտնի լինի բոլորին, որ մենք սահմանադրական ռեժիմի ժամանակ էլ չենք կարող մեր դահը սատ-

կերացնել առանց ներկայումս թագավորող դինաստիայի» (73, էջ 168)։

Թուրքական սահմանադրության առաջին հոդվածում արձանագրվեց. «Թուրքիան անբաժանելի կայսրություն է։ Նրա ոչ մի մասը ոչ մի պայմանով չի կարող բաժանվել նրանից»։ Սա նշանակում է, որ երիտթուրքերը չէին ճանաչում ոչ թուրք ազգերի ինքնորոշման կամ անջատման իրավունքը և բռնի միջոցներով ձգտելու էին կանխել նման նկրտումները։ Երբ օսմանյան պառլամենտի ամբիոնից Հագը փաշան բացականչեց, թե օսմանյան պետության բոլոր հպատակները օսմանցիներ են, միայն ալբանացի մի երեսփոխան քաջություն ունեցավ բղավելու. «Ոչ, ես օսմանցի չեմ, ես ալբանացի եմ»։ Մնացյալները վախից ու անորոշությունից կծկվել ու լռել էին իրենց տեղերում։ Այնուամենայնիվ, շատ ժամանակ անց երիտթուրքերի մեծապետական հեգեմոնիզմը հանդիպեց ոչ թուրք ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների դիմադրությանը։ «Երիտթուրքերի փորձերը կոչերի միջոցով դադարեցնել ազգային բախումները,— գրում է հարավսլավ պատմաբան Դանչո Զոգրավսկին,— չէին կարող ոչ վերացնել խզումը տիրապետող ազգերի ու ճնշված ժողովուրդների և էթնիկական խմբերի միջև, ոչ էլ Թուրքիայի քաղաքացիներին վերածել ինչ-որ նոր օսմանյան ազգի ներկայացուցիչների» (59, էջ 9)։

1909—1910 թթ. ակնհայտ էր, որ ենթակա ժողովուրդները հույսը կտրած «հեղափոխական» երիտթուրքերի վարած հեղհեղուկ քաղաքականությունից, փորձում էին դիմադրության և ըմբոստության միջոցով ստիպել կենտրոնական կառավարությանը հաշվի նստել իրենց պահանջների հետ։ Կայսրության բոլոր մասերն էլ անհանգիստ էին. Միջագետքի հարավ-արևմուտքում Մունթեֆիկ արաբները, Բենի Լամերը՝ Տիգրիսի ափերին։ Շեյխ Բարազանին Մոսուլի մոտ երկու անգամ ջարդ տվեց թուրքական զորքերին (1909-ի նոյեմբերին, 1910-ի հունվարին), Բաղդադից արևելք կռիվը Համավանդի քրդերի հետ սպասվում էր ամեն րոպե։ Անգլիացի Դավիդ Ֆրեյզերը Դելայմի արաբների դեմ թուրքական բանակի գործողություններին անձամբ ականատես էր եղել (84, էջ 416—417)։

Սահմանադրական կարգերի հաստատումով սլավոնների դրությունը ոչնչով չբարելավվեց։ «Ընդհակառակը, երիտթուրքերն իրենց ազգային բացառիկությամբ քրիստոնյաներին դրեցին ավելի ծանր պայմանների մեջ, քան նախկինում էր» (63, էջ 21)։

Հույները Սամսունի շրջանում հայերի հետ ձեռք-ձեռքի տված ընդդիմանում էին երիտթուրքերի օսմանիզմի քաղաքականությանը։ Սապահ Գուլյանը հավաստում է, որ նրանց մեջ մեծ թիվ էին կազմում հայախոս հույները (42, էջ 94—95)։

Փարիզում լույս էր տեսնում «Արաբական անկախություն» հանդեսը, որի խմբագրապետն էր Նեգիբ բեյ Ազուրին։ Նա հոդվածներ էր գրում արաբական ինքնավարության, օսմանյան կայսրությունից անջատվելու օգտին։ Երբ 1908-ից հետո Ազուրին եկավ Կ. Պոլիս, երիտթուրքերը նրա դեմ շինծու գործ սարքեցին, մեղադրելով իր թուրք ծառային սպանելու մեջ։ Սա մի կերպ ճողոպրեց Կահիրե, որտեղ հիմնադրեց «Եջիպշըն թայմս» թերթը, այս անգամ շարունակելով պայքարը երիտթուրքերի դեմ։ Երիտթուրքերն արդեն այն ժամանակ հանգիստ ու խաղաղ ապրելու երաշխիքը տեսնում էին այն բանում, որպեսզի ազգությունները մոռանային իրենց ինքնությունը։ Երիտթուրքերը հասկացնել տվին բոլորին, որ իրենք «ամենևին մտադիր չեն կայսրության ոչ թուրք համայնքներին շնորհելու քաղաքական հավասարություն, ինչին որ նրանք ձգտում էին» (49, էջ 130), որ բոլորն էլ՝ հայ, հրեա, բուլղար, հույն օսմաններ են, և որ հանգիստ ու խաղաղ ապրելու համար այդ ազգերը պետք է մի կողմ դնեն իրենց «անհեթեթ» պահանջները (80)։

Երիտթուրքերը «քանի դեռ մնում էին Թուրքիայում բնակվող տարբեր ցեղերի ու ժողովուրդների եղբայրության և միասնության մասին պլատոնական երազանքների գրկում, ցանկանալով նրանց ծածկել օտոմանյան նացիոնալիզմի միակ դրոշով, քրիստոնյաները դեռ համակրում էին նրանց, բայց երբ բանը հասավ այդ վերացական գաղափարների իրագործմանը, ապա նրանց միջև տեղի ունեցավ պառակտում» (71, էջ 38),— հավաստում է իրադարձություններին ականատես ռուս հեղինակ Սկիտալեցը։ Հետո «երիտթուրքերի

ֆանտազիան աստիճանաբար սկսեց անէանալ», և նրանք սկսեցին մտածել, որ գոյություն ունեն և՛ սերբեր, և՛ բուլղարներ, և՛ հույներ ու ալբանացիներ։ Նրանք հանգեցին այն հետևության, որ չեն կարող հաշվի չնստել այն ժողովուրդների հետ, որոնց ուզում էին «խեղդել օտոմանյան ծովում» (72, էջ 237)։ Մյուս կողմից, «Անատոլիայի խավար և ֆանատիկոս տարրերն արդեն մի ամբողջ տարի ժամանակ ունեցան տեսնելու, թե ինչ ասել է հյուրիեթը, որ դա իրոք տալիս է (ըստ նոցա հասկացության, իհարկե) միայն մի բան՝ հավասարեցնում է գյավուրներին իրենց հետ, իսկ իրենց չի տալիս ոչ միայն որևէ շոշափելի բան, այլև սահմանափակում է նրանց ազատությունը» (20, № 148, 1910)։

Անտագոնիզմը ոչ միայն չէր մեղմանում, այլև ուժեղանում էր։ «Թուրքերը հասկացած էին կարծես, որ հայերուն տրված ազատության չափը ընդունելի սահմաններեն անցած էր, կարելի չէր անսանձ և անարգել ազատության մեջ պահել ժողովուրդ մը, որ ի վիճակի էր տնտեսական, մշակութային կյանքի մեջ իր իրականացումներով գերակշիռ դիրք մը գրավել կայսրութենեն ներս» (36, էջ 54)։

□

1908-ի հեղաշրջման օրերին Էնվերն ու Թալեաթը, երիտթուրքերի մյուս պարագլուխները այցելում էին հայոց եկեղեցիները, դպրոցները, գերեզմանատները, պատիվ տալիս այնտեղ թաղված հակասուլթանական պայքարում զոհված հայ ֆիդայիների հիշատակին, համերաշխության խոսքեր շռայլում և նույնիսկ արտասվում։ Հայոց դպրոցներ այցելած Էնվերը խոսում էր հայ-թուրք համագործակցության, բարեկամության հեռանկարների մասին (87, էջ 282)։ Սա պատահական չէր։ Հայոց դերը ինչպես բուն կայսրությունում, այնպես և հարևան Անդրկովկասում վերելք էր ապրում։

Հիշեցնենք, որ 1913-ին ամբողջ աշխարհում հաշվվում էր 3 665 հազար հայ, որից 2 միլիոնից ավելի Թուրքիայում, 1,5 միլիոնը Ռուսաստանում, 80 հազարը Պարսկաստանում, 50 հազարը Ամերիկայում և 50 հազարն այլ երկրներում։ Այս

թվերը հրապարակել էր Լեփսիուսն իր խմբագրած «Դեր քրիստլիխե օրիեն» հանդեսի 1913-ի մայիս-հունիսի համարում (20, № 139, 1913)։

Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Սվասի և Դիարբեքիրի շրջաններում հայերը կազմում էին բնակչության 38,9 %, մինչդեռ թուրքերը՝ 25,2, քրդերը՝ 16,3 տոկոսը, իսկ մնացածը ասորիներ էին, հույներ, պարսիկներ, լազեր, չերքեզներ։ Լեփսիուսն ընդունում էր, որ թվով հայերը «այս շրջաններում ամենից գերակշռողն էին»։ Նա ցույց էր տալիս, որ Փոքր Հայքում և Կիլիկիայում հայերի թիվը 318 հազար էր, Այնթափում՝ 24 000, Մարաշում՝ 20 000, Զեյթունում՝ 23 000 (20, № 139, 1913)։ Հայերը մյուս ազգությունների նման իրավունք ստացան մասնակցելու մեջլիսին ոչ իբրև «միլլեթ» (ազգ), այլ իբրև օսմանցիներ, օսմանյան կայսրության քաղաքացիներ։

1908-ի նոյեմբերին 2-ին բացված թուրքական մեջլիսի 230 տեղերից հայերն ունեին ընդամենը 10 տեղ։ Սա չէր արտահայտում հայերի թվի հարաբերակցությունը օսմանյան կայսրության մյուս ազգությունների թվի հետ։ Թուրքերն ունեին 107, արաբները՝ 45, ալբանացիները՝ 22, քրդերը՝ 2, հույները՝ 27, բուլղարները՝ 5, սերբերը՝ 4, հրեաները՝ 4, դրուզները՝ 1 դեպուտատական տեղ (57, էջ 277—278)։ Օսմանյան պառլամենտի առաջին նիստին այնուամենայնիվ թուրք երեսփոխանները ժողովի անդամների կեսից պակաս էին։ Նման փոխհարաբերությունը իթթիհադականներին չէր կարող բավարարել։ Նրանք դառնացած էին Բոսնիայի և Հերցեգովինայի կորստից, որ տեղի ունեցավ նույն տարվա հոկտեմբերին և յուրաքանչյուր կենտրոնախույս ձգտում դիտելու էին որպես դավաճանություն։ Իսկ 1910-ին թուրքական պառլամենտի անդամների պատկերը հետևյալ տեսքն ստացավ. 228 թուրք, 27 հույն, 4 բուլղար, 3 սերբ, 4 հայ, 3 հրեա, 1 վլախ (71, էջ 38)։

Երիտթուրքական իշխանությունը ոչ թուրք ազգությունների ու նրանց դեպուտատների ցանկությունների հետ հաշվի նստելու ոչ մի ցանկություն չուներ։ Ընդհանրապես պառլամենտն իր իրավասության մեջ դեռ չմտած արդեն կորցրեց իր արժեքը երիտթուրքական դիկտատուրայի կրնկի տակ։

Երբ թուրքական մեջլիսում արտաքին քաղաքական հարց էր քննարկվում, ապա ակնհայտ էր դառնում երիտթուրքերի միասնությունը։ Երբ ներքին քաղաքական կամ սոցիալական խնդիրներ էին քննարկվում, անմիջապես աչքի էին զարնում հակասությունները։ «Այժմ պառլամենտը գոյություն ունի կարծես թե Եվրոպայի համար, որպես մի պատնեշ, որը Թուրքիայի ինքնուրույնությունը պաշտպանում է տերությունների ոտնձգություններից»,— գրել է խնդիրը լավ ուսումնասիրած ռուս հեղինակ Գորցևը (58, էջ 251)։

Ահավասիկ երիտթուրքական պառլամենտի ճշգրիտ պատկերը, որ նկարագրել է ականատեսը. «Դա մի տեսակ արևելյան սրճարան էր։ Ոմանք հորանջում, նիրհում էին, ոմանք էլ նստած տեղերից աջ ու ձախ պոռում։ Պառլամենտական լրջության նշույլ անգամ չկար այդտեղ։ Կատարյալ մի կատակերգություն։ ...Պառլամենտների ծաղրանկար՝ օտոմանյան պառլամենտն էր դա» (41, էջ 104)։

Երիտթուրքական կառավարման շրջանին քաջածանոթ Ի. Գոլոբորոդկոն շեշտում է, որ Ասիական Թուրքիայի ամենաղարգացած ու ամենակուլտուրական տարրը հայերն էին, որոնք, չնայած Աբդուլ Համիդի հետադիմական քաղաքականությանը, հակահայկական հետապնդումներին, մնում էին առույգ, լավատես, պահպանում էին մտքի ազատությունն ու ստեղծագործական նախաձեռնությունը (57, էջ 221)։ Անգլիական «Նեյշն» շաբաթաթերթը մասնավորապես նշում էր երիտթուրքերի քաղաքական նախանձը հայերի կուլտուրական զարգացման նկատմամբ (20, № 42, 1913)։

1911-ի տվյալներով, հակառակ իթթիհադի հակահայկական կրթական հետապնդումներին, ամբողջ Արևմտյան Հայաստանի մեջ գործում էր 1083 վարժարան, 80 հազար աշակերտներով և 30 հազար աշակերտուհիներով (35, էջ 160—170)։ Այն ժամանակ օսմանյան կայսրությունում կային 1388 հայկական եկեղեցի, 134 վանք։ Միայն Կիլիկիո աթոռին ենթակա եկեղեցիների թիվը 222 էր, իսկ վանքերինը՝ 12։ Սապահ Գուլյանը հավաստում է, որ «գավառներում մեր ակումբները մի տեսակ դիվանատների, փաստաբանական գրասենյակների տեսք էին ստացել։ Այնտեղ էին գալիս ոչ միայն թուրք, քուրդ, չերքեզ, ավշար, հույն գործավորները՝

իրենց կրած զրկանքների համար օգնություն խնդրելու, այլև բոլոր նրանք, ովքեր իթթիհադական կառավարության դեմ որևէ գանգատ և բողոք ունեին» (41, էջ 300)։

Արևմտահայության ղեկավար շրջանների մոտեցումները խնդիրներին, քաղաքական կացությանը խիստ տարբեր էին։ Այլ էին գավառահայության ձգտումները, այլ էր Կ. Պոլսի վերնախավի որոճածը։ Դաշնակցությունը մի բան էր քարոզում, «Հնչակն» այլ բան պահանջում, իսկ եվրոպական դիվանագիտության միջոցով խնդիրների լուծում փնտրողներն այլ բան էին անում։ Հինգ հարյուր տարի շարունակ քաղաքական որևէ լեգալ ակտիվությունից զուրկ հայկական մտավորականությունը, թուրքական բուրժուազիայի հետ համեմատած, ավելի փոքրաքանակ հայ բուրժուազիան նույնպես աշխուժացրին իրենց գործունեությունը։ Մինչ այդ տնտեսական ուժեղ բնագծեր նվաճած հայկական բուրժուազիան սկսեց անմիջական մասնակցություն ունենալ երկրի քաղաքական-հասարակական կյանքին։ Երիտթուրքական իշխանության առաջին շրջանում բացվեցին հայկական նոր թերթեր, սկսեցին հրատարակվել նախկինում արգելված գրքերը, աշխուժացավ թատերական կյանքը։ Լեզուների, եվրոպական կուլտուրայի, իրավաբանական, հռետորական արվեստի իմացությամբ թուրքական պառլամենտի աչքի ընկնող հայ երեսփոխանները՝ Գրիգոր Զոհրապը և ուրիշներ հենց սկզբից իրենց գործունեությամբ առաջացնում էին թուրքական հետադիմական շրջանների, մոլի ազգայնականների նախանձն ու վախը։ Աստիճանաբար նրանց մոտ ուժեղանում էր այն մտայնությունը, որ վաղ թե ուշ երեկվա հլու հպատակ, խեղճ, անարգված ռայա հայը իր իշխանությունը, իր կառավարությունը նույնպես խլելու էր, ինչպես այդ արել էր տնտեսության և առևտրի ասպարեզներում։

Առաջին օրերի հայ-թուրք եղբայրության ցույցերը, գրկախառնումները, համատեղ հավաքույթները անմիջապես առաջացրին կրոնամոլ, հետադիմական ուժերի զայրույթն ու թշնամությունը։ Նրանք իրենց կարծեցյալ թե իրական արտոնությունները կորցնելու վտանգ զգացին։ Մարդկանց միտքն այդ պահին պտտվում էր սուլթանի գահընկեցության շուրջը և պակաս ուշադրության էր արժանանում իշխանությունը

առևանգած Մարդկանց քաղաքական դիմագիծը։ «Ամեն հայ, դարավոր հույսերու պայթող հրաբխեն բոցավառված, չէր ուզեր լսել դատողության բխած որևէ թելադրանք..., նրան զեկավարում էին վառ հույսերը»,— գրում է դեպքերի ականատես Գրիգորիս ծ. վարդապետ Պալաքյանը (37, էջ 31)։

1909-ի ավարտին Չիկագոյում լույս տեսած «Հայկական զարթոնք» (անգլերեն) գրքում Լեոն Արպեկը գիտակ մարդու համոզվածությամբ գրում էր, թե «երբ գրվի Թուրքիայի վերածննդի պատմությունը, մի մեծ մաս պետք է նվիրվի այդ կայսրության հայերին։ Հայերը Թուրքիայի լուսավորության, քաղաքացիական ու կրոնական ազատության պիոներներն էին» (76, էջ 85—86)։ Թուրքիայի վերափոխման պրոցեսում հայերի ակտիվությունը նշել են բազմաթիվ քաջատեղյակ հեղինակներ, թեև վերջերս որոշ «հետազոտողներ» անհիմն կերպով մոռացության են տալիս այն։ Այդ ակտիվությունն էլ առաջացնում էր խավարամոլների, շովինիստների չարությունը։

Մի հայ 1911-ին Ամասիայում Սապահ Գուլյանին ասում էր. «Երբ սահմանադրությունը եկավ, առաջին օրերին հայերի մեծամասնությունը, ես էլ նրանց հետ միասին՝ բոլորս էլ իթթիհադականներ դարձանք։ Ամենքիս էլ համոզումն այն էր, որ սահմանադրություն բերող կուսակցությունը թե՛ ընդհանուր երկրի և թե՛ բոլոր ազգերի առաջադիմության ու զարգացման պիտի աշխատի։ Գինովցած էինք։ Իթթիհադական կուսակցության վրա շատ մեծ համարում ունեինք, կարծում էինք, որ մի քանի ամիս չքաշած այս երկիրը մի Եվրոպա պիտի դառնար, որովհետև խոստումներն այդպիսին էին» (42, էջ 195)։

Թուրքական պետականության հետ իրենց բախտը կապած հայ պաշտոնյաները, երիտթուրքական կառավարման միջոցով երկրում կապիտալիստական արտադրական հարաբերությունների հաստատման մեջ իրենց հաջողությունը փնտրող հայ փողատեր, գործարար մարդիկ առանձին հայրենիքի գաղափարը հանձնել էին արխիվ։ Սրանք իթթիհադի գովքն էին անում, նվիրվում «ընդհանուր հայրենիքի» բարօրության գործին։ Հայազգի իթթիհադական Մարտիկյանը կանոնավորեց փոստի և հեռագրական ծառայությունը, Բարսեղյանը կազմակերպեց երկաթուղային սպասարկումը, Սինապյանը անուն հանեց որպես առաջնակարգ փաստաբան, Նորատունկյանը բարձրացրեց արտաքին գործոց նախարարության դերն ու նշանակությունը։

Կ. Պոլսի հայկական կյանքի, նրա հասարակական-քաղաքական մտահոգությունների, գրական ու թատերական անցուդարձի մասին շատ է գրվել։ Մենք գերադասում ենք ցույց տալ, թե նույն այդ պահին ինչպիսին էր քաղաքական կոնյունկտուրան գավառում, բուն Արևմտյան Հայաստանում։ Այս գործում մեզ օգնում են Էրզրումի, Վանի և այլ կենտրոնների խմորատիպ թերթերից քաղված և առաջին անգամ հրապարակի վրա դրվող նյութերը։ Սրանք գաղափար են տալիս մարդկանց մտածելակերպի, հարցադրումների, մտահոգությունների և սպասելիքների վերաբերյալ։

Թերթերի թիվը մեծացավ։ Բայց գավառում հայերը թերթ հրատարակելու իրավունք չստացան։ Վանում, Էրզրումում և այլուր շատացան խմորատիպ թերթերը, որոնց էջերում ճշմարտացիորեն արտացոլվում էր ժամանակի հասարակական-քաղաքական կյանքը։ Այս թերթերի նյութերից կարելի է զգալ անհանգիստ ժամանակներ ապրող մեր ժողովրդի զարկերակը։ Այս թերթերի շուրջը համախմբված մարդիկ գտնվում էին դեպքերի կիզակետում, անցուդարձի կենտրոնում և միանգամայն օբյեկտիվորեն էին նկարագրում գավառում տիրող իրադրությունը։ Օրինակ, Արամ Տեր-Զարեհ անունով հեղինակն ուսանողական «Վերածնունդ» թերթի էջերում տպագրած «Պատերազմն ու ընկերավարականները» հոդվածում (խոսքը բալկանյան պատերազմի մասին է) «հայրենասեր օսմանցուն» կոչ էր անում «իր կարողության չափով օժանդակության բաժին բերել հասարակաց այս դատին, որ արդար է» (46, № 6, 1912)։

Դժբախտություն էր, ծաղր էր, որ ոչ միայն Կ. Պոլսում, այլև գավառներում «հայ ուսուցիչներ, կարծեցյալ մտավորականներ և հայ քահանաներ» «կուռ կանգնած էին» իթթիհադի «շարքերում»։ Շատ տեղերում թաղականները, հոգաբարձուները երեխաներին պարտադիր թուրքական ազգայնական երգեր էին սովորեցնում (41, էջ 21)։ Երիտթուրքական պրոպագանդային ձայնակցող հայ իթթիհադականները խոսում էին

այն մասին, թե «մեր ազգը» սահմանադրության շնորհիվ, «մեր պետությունը լուսավորյալ Եվրոպային պիտի հասնի և մենք ամենքս, բոլոր օսմանցիներս երջանիկ, բախտավոր պիտի ապրենք» (42, էջ 136—137)։

Սկզբում երիտթուրքերը հայտարարում էին, թե ոչ մի տարբերություն չեն դնում օսմանյան կայսրության տարբեր հպատակ ազգությունների միջև ո՛չ կրոնական, ո՛չ էթնոգրաֆիական, ո՛չ քաղաքական առումով։ Նրանք ցույց էին տալիս, թե իբր ձգտում էին հավասարություն հաստատել բոլորի համար, մասնավորապես բարեհամբույր էին հայերի նկատմամբ։ Այդ իսկ պատճառով թե՛ Թուրքիայում, թե՛ Արևմուտքում շատերին թվում էր, թե երիտթուրքական հեղափոխությունը լուծելու էր հայկական հարցը (85, էջ 48)։ Շատերն էին կարծում, որ թուրքական իրականության մեջ «ազգերու համար, մանավանդ պզտիկ և պատմական ազգերու համար չկա, չէ եղած ասկե ավելի վսեմ շրջան մը» (46, № 9, 1912)։ Նույն թերթը թեև գրում էր ժողովրդի «ազգային ոգու» արթնանալու մասին, բայց տուրք էր տալիս օսմանիզմին, իր էջերը տրամադրում էր թուրք գրողների երկերի թարգմանությունների հրապարակումներին։ 1912-ի օգոստոսին ոմն Լևոն Աճեմյան «Ո՞վ ենք մենք» հոդվածում օսմանցիությանը հավատարիմ լինելու քարոզ էր կարդում, «օսմանյան պետության ամբողջականության և միության» մեջ էր տեսնում բոլոր բաղկացուցիչ տարրերի «ազատ ու համերաշխ գործակցության» հնարավորությունը, միաժամանակ երկչոտորեն հիշեցնելով «տեղային ինքնուրույնության և առաջադիմության» համար անհրաժեշտ երաշխիքների մասին, որոնք նպաստելու էին օսմանյան հայրենիքի բարգավաճումին ու վերականգնումին» (46, № 4, 1912)։

1909-ի մարտի 1-ին «Հորիզոնի» էջերում Արամ Մանուկյանը դժգոհում էր, որ իթթիհադը չի ուզում ճանաչել «մանր ազգերի գոյությունը», բոլորին համարում է «օսմանլի» (21, № 4, 1909, էջ 84)։

Թյուրիմացական լավատեսությունը տարածվել էր նաև Կովկասում։ Ահա թե ինչ էր գրում ոմն Հ. Սաղաթելյան «Հորիզոնի» էջերում։ Նախ նա Թուրքիան անվանում էր «վերածնվող», ապա փորձում էր իր ընթերցողներին ապացուցել, թե Թուրքիայում «պատմական հրաշք է» կատարվում, թե «ամբողջ հսկա կայսրության մեջ ապրող ժողովուրդների համար բացվում է քաղաքակրթության և առաջադիմության նոր դարաշրջան» (20, № 148, 1910)։

□

Երիտթուրքական կառավարողները շուտով դավաճանեցին առաջին օրերի «սկզբունքներին», դաշինք կնքեցին» մարտաշունչ իսլամի հետ, նոր սահմանադրությունը կազմեցին սրբազան մահմեդական օրենքի հովանու ներքո։ Երիտթուրքական ռեժիմն ավելի ու ավելի կրկնում էր համիդյան ժամանակների տեռորիստական մեթոդները։ Վերադարձը դեպի հին ժամանակների սանձարձակ ու հակաժողովրդական բարքերը, երիտթուրքերի կողմից իրենց իսկ տված խոստումների դրժումը առաջացնում էին ոչ թուրք ժողովուրդների դժգոհությունը։ Երիտթուրքերը նրանց պատասխանում էին տեռորով։

Չափից ավելի լավատեսների վրա առաջին սառը ջուրը լցրեց Ադանայի 1909-ի սպանդը։ Ոմանք սթափվեցին, ոմանք շարունակեցին նախկին հեղհեղուկ ընթացքը։ Դիանա Արգարը ցույց է տալիս, որ 1909 թվականի Ադանայի կոտորածը կազմակերպել և իրականացրել էր սահմանադրական կառավարությունը (76, էջ 32)։ Ադանայի հայոց ջարդին մասնակցելու համար երիտթուրքերը եվրոպական Թուրքիայից 3 գունդ (ալայ) զինվորներ ուղարկեցին դեպքերի վայրը։ Սրանց մասնակցությամբ տեղի ունեցավ ապրիլի 12-ի երկրորդ ջարդը։ Իթթիհադի Սալոնիկի կենտրոնի գաղտնի հրահանգն այս էր. «Կարճ ճամփան ընտրեցեք», «այսինքն՝ ջարդին պակաս ձգածը զինվորները թող լրացնեն» (30, էջ 15)։

Ժողովուրդը լալագին արձագանքեց.
Կոտորածն անգութ, հայերը
թող լան,
Անապատ դարձավ չքեղ Ադանան (48, էջ 260)։

1909-ին 30 հազար հայ կոտորելով, երիտթուրքերը կանգնեցին համիդյան դիրքերում։ Նույն թվականին կոտորվեցին

Հույներ, քաղդեացիներ, ասորիներ։ Մեկ տարի անց, 1910-ին՝ ալբանացիներ, հետո մակեդոնացիներ, բուլղարներ, արաբներ և ուրիշներ։

Մրցակցությունը տնտեսական հողի վրա էր։ Հայերը, Հույները, հրեաներն իրենց մեջ էին բաժանել երկրի ներմուծման ու արտահանման ամբողջ գործը։ Մինչդեռ թուրքերը վեր չէին բարձրացել պարզունակ ու փոքր խանութպանությունից (14, էջ 258)։ «Թուրքական բուրժուազիան ուժ չուներ, երկրի ուժերի իրական հարաբերակցության մեջ նշանակալից տարր չէր կազմում» (8, էջ 39)։

Հակամարտությունը տեղի էր ունենում երկրի տնտեսության մեջ զգալի դիրքեր նվաճած հայկական առևտրական բուրժուազիայի և տակավին նոր վեր բարձրացող, թույլ թուրքական բուրժուազիայի միջև, որն օգտագործում էր ինչպես թուրքական զանգվածի կրոնական մոլեռանդությունը, այնպես և պանթուրքիզմը՝ իր ճանապարհից ուժեղ մրցակցին վերացնելու համար։

Ամերիկացի Ջոզեֆ Գուիմանը մասնավորապես այս խնդրի վրա է շեշտը դնում, երբ փորձում է բացատրել ու մեկնաբանել երիտթուրքերի կազմակերպած հայոց գենոցիդը (83, էջ 12—13)։ Ըստ նրա թուրքական ներմուծման 60, արտահանման 40 և ներքին առևտրի 80 տոկոսը կատարվում էր հայերի միջոցով (83, էջ 3)։ Արդյունաբերական գործառնությունների մեջ հարյուրից հիսունը հունական էր, քսանը՝ հայկական, հինգը՝ հրեական, տասը՝ եվրոպական և միայն տասնհինգ տոկոսն էր թուրքական (56, էջ 96)։ Եթե ամբողջ օսմանյան կայսրությունում սովորող դպրոցականների թիվը 242 հազար էր, ապա դրանց կեսը՝ 120 հազարը հայոց դպրոցների աշակերտներն էին։ Լեփսիուսը «սքանչելի» է անվանում հայոց դպրոցական կազմակերպությունը (14, էջ 314)։

Կիլիկիայում 1909-ի հայոց ջարդից անմիջապես հետո թուրք հետամնաց գյուղացիներն առաջին հերթին խորտակում էին, ջարդում, փչացնում հարյուրավոր շոգեշարժ, այն «կամնակներն ու արորները, որ հայ գյուղացիները Եվրոպայից բերել էին տվել շահագործելու համար Կիլիկիայի դաշտը» (14, էջ 258)։

1909-ի Ադանայի կոտորածից հետո «հայերն այլևս դադարեցին հավատալ երիտթուրքերին» (49, էջ 130)։ Անգլիացի Բենսոնը Ադանայի ջարդն անվանում է «էքսպերիմենտալ՝ փորձնական երիտթուրքերի քաղաքականության մեջ (77, էջ 38)։

Ադանայի կոտորածի կազմակերպիչները կուսակալ Ջևադ բեյը և զորավար Ռեմզի բեյն էին։ Սրանք հրահրեցին ազգամիջյան ընդհարումները։ Այլ աղբյուրներ հաղորդում են, որ Ադանայի կոտորածի պլանավորմանը մասնակցել էին նաև Սալոնիկի սիոնիստները (81, էջ 567)։ Ադանայում լույս տեսնող թուրքական մի թերթ հայերին կոտորելու բացահայտ կոչ էր անում։ Դրանից հետո էր, որ թուրք խուժանն անարգել զավթեց զինապահեստը։ Մեվլան Զադե Ռիֆաթը կոտորածի մեջ իթթիհադի խաղացած դերը չի ժխտում (39, էջ 176—184)։

Ապացուցված բան է, որ Ադանայի հայոց կոտորածը կազմակերպել և հրահանգավորել էր երիտթուրքերի կենտրոնը, որ նրա ձգտումը մեղքը բարդել համիդականների վրա բացահայտվեց և մերժվեց համապատասխան հանձնաժողովների և ուսումնասիրությունների միջոցով (50, էջ 55)։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Թուրքիայի հայաշատ գավառներն այցելած Փարամազը նամակների միջոցով տեղեկացնում էր կենտրոն, որ «իմ այցելած գավառներուն մեջ իթթիհադի զուլումը չափ ու սահման չունի», որ «հայ ազգի առաջադիմությունը իթթիհադի սաստիկ նախանձն է գրգռում»։ Նա զգում էր, որ Հայաստանը ողողվելու էր հայի արյունով (50, էջ 84)։

Սապահ Գուլյանը գրել է, որ Ադանայի կոտորածի առթիվ «թուրքերի ցնծությունը սահման չուներ։ Կ. Պոլիս էին լցվել Ադանայի ջարդի բոլոր գլխավոր գործակատարները։ Փողոցների երթևեկողները հպարտությամբ մատնանշում էին, սրճարանների մեջ խոսակցության ընդհանուր առարկա էին այն «հայրենասերները», ովքեր Ադանայի ջարդի ժամանակ դարձել էին նշանավոր և աչքի ընկնող դեր էին կատարել։ Մի առանձին պարծենկոտությամբ, հրճվանքով ջարդարարներն ասում էին, որ այդ «գործը» իրենց բերեց պաշտոնի բարձրացում»։ «...Ադանայից տեղահանված պատասխանատու պաշտոնյաներին ավելի մեծ ոռճիկով ու բարձր պաշ-

տոնով ուղարկում էին Բրուսա, Կոնիա, Ադրիանապոլիս և հոհոռց, քրքիջ՝ դա «օդափոխություն էր», ինչպես որ իրենք էին որակում բարձրաձայն, առանց որևէ մեկից քաշվելու» (41, էջ 100)։

Եվ այս ամենը կատարվում էր հայ կուսակցական այն ղեկավարների աչքի առջև, ովքեր շարունակում էին բարեկամություն անել երիտթուրքերի հետ։ Ոչ մի ձայն, ոչ մի հակահարված հայակեր «հերոսներին», ոչ մի պատիժ նրանց, ովքեր արյուն էին թափել։ Իսկ Ադանայի անմեղ հայերին կախաղան էին բարձրացնում, հարյուրներով բանտերը լցնում, աքսորում։

Ադանայի ջարդի մեջ իշխանությունների խաղացած վնասակար դերը բացահայտել են Մուշեղ եպիսկոպոսը՝ 1909-ին հրապարակած իր գրքույկում (33) և Հ. Թերզյանը իր «Կիլիկիո աղետը» փաստերով հարուստ ուսումնասիրության մեջ (10)։ Հակառակ հայ երեսփոխանների բողոքներին, Կիլիկիայի ջարդի քննության հարցը թաղվեց օսմանյան մեջլիսի թղթերի մեջ, երբեք չդառնալով քննարկման առարկա։ Իսկ այսօր թուրքական պրոպագանդիստական գրականության մեջ ասվում է, թե իբր Ադանայի կոտորածի նախաձեռնողները հանդիսացել են հայերը։ 1981-ի փետրվարի 17-ին թուրքական «Թերջյուման» թերթը հրապարակեց «Հայկակսն ահաբեկչությանը ծնունդ տվող աղբյուրներ» պրովոկացիոն նյութը, որի առաջին երկու մասերը վերնագրված էին «Կուսմ Հայաստան, կամ գերեզման»։ Այստեղ նոր սերունդներին Ադանայի ոճիրը ներկայացվում է որպես անխուսափելի ձեռնարկ «շփացած հայերին» կարգի հրավիրելու համար։ Նման կեղծագրերի մեջ այսօրվա թուրք շովինիստները փորձում են թաքցնել իրենց նախորդների ոճրագործությունների հետքերը։

Թուրքիայի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի հանձնարարությամբ հայոց հարցի վերաբացման առիթով կազմված մի տեղեկագրում (1912. 8.—1913. 11) տրված է երիտթուրքական հեղաշրջումից հետո հայ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած անցուդարձի հանգամանալից պատկերը։ Այս փաստաթղթում նշվում էր, որ «սահմանադրական ռեժիմի վրա մեր դրած հույսերը խիստ քիչ ժամանակամիջոցի մեջ ի դերև ելան»։ Ոմանք թերահավատ էին հենց սկզբից, մյուսները հեղաշրջումից վեց ամիս անց արդեն հույսերը կորցրել էին։ Ոմանք Ադանայի ջարդի հետևանքով սթափվեցան, մյուսները շարունակեցին իրենց լավատեսական ընթացքը, համագործակցելով երիտթուրքական իշխանության հետ (24)։

1909-ի Ադանայի կոտորածը ցույց տվեց իթթիհադի պարագլուխների ու նրանց հետևորդների ոճրագործ էությունը։ Դաան ճշմարտությունն ըմբռնող հայ մարդիկ անմիջապես հասկացան, որ ի դեմս երիտթուրքերի, նրանք գործ ունեն սուլթան Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականության հարազատ ժառանգորդների հետ։ Ադանայի կոտորածի մասին Ջեմալը խոստովանել էր, թե այն արդյունք էր «վարչական ապակենտրոնացման» հայերի ձգտման (44, էջ 126)։ «Մեր ստացած ընդարձակ տեղեկագրից երևում էր,— գրել է Սապահ Դուլյանը,— որ կոտորածի սկզբնավորողները, վարող ուժերը, գործադրողները եղած էին հայտնի իթթիհադականները և նրանց կլուբները» (41)։

1909-ի մայիսի 18-ին «Ժոռնալ օֆիսիելում» պառլամենտի դեպուտատ Մ. Դենիս Կոշենը փաստերի հիման վրա ապացուցում էր Ադանայում և ամբողջ նահանգում իրականացված սարսափելի կոտորածներին թուրքական կառավարական ղորքերի մասնակցության փաստը։ Կոշենը գրում է «աննկարագրելի գազանությունների և դաժանությունների մասին», որ «Կիլիկիան քանդված և կողոպտված էր», որ «եվրոպական ռազմածովային ուժերի ներկայությունը չկանխեց կոտորածը» և այլն, և այլն։ Նա ֆրանսիական պաշտոնական շրջաններին և հասարակական կարծիքին էր դիմում, կոչ անելով ձայն բարձրացնել այդ, «հիրավի ողբերգական պահին» (78, էջ 51)։

Ֆրանսիացի Դեորգ Բրեզոլը իր «Այնտեղից անցել են թուրքերը...» (Les Turcs ont passe La...) գրքում, 1911 թվականին, ցույց էր տալիս, որ ֆրանսիական պաշտոնական շրջանները, մամուլը ամեն կերպ թաքցնում էին թուրքական չարագործությունը Ադանայում։ 1909-ին, գրում է նա, Մ. Պիշոնը ֆրանսիական պառլամենտի դեպուտատների պալատում հայտարարեց Կիլիկիայում սպանված հազարավոր հայերի մասին։ Իսկ ֆրանսիական թերթերում թուրքական դեսպանատունը կեղծ տվյալներ էր հրապարակում իբր 4000 զոհ-

վածների մասին։ «Ժամանակն է,— գրում է Գ. Բրեզոլը,— ասել ճշմարտությունը, ցույց տալ շարիքն ամբողջ մերկությամբ։ Մենք ձեռնարկել ենք այս օգտակար աշխատանքը, նախապես մի կողմ թողնելով գրական ուսումնասիրությունները, որոնք կարող էին խանգարել մեր անկողմնապահությանը։ Այս հատորը հանդիսանում է իսկական փաստաթղթերի՝ հաղորդումների, նամակների, պաշտոնական հաղորդումների, ճառերի, պառլամենտական հարցապնդումների, հոդվածների և այլնի հավաքածու...»։ Այստեղ բացվում են «արյունոտ քարտերը, արյունոտ ջարդերի պատկերները», «վիկատար սարսափները» և կարդալով դրանք ակամա հիշում ես Վիկտոր Հյուգոյի բանաստեղծության "L'Enfant grec" (Հույն երեխան) խոսքերը. «...ամեն ինչ ավերակների և սգի մեջ է. Թուրքերն անցել են այստեղով» (78, էջ 49)։

Աղանայի արյունալի դեպքերից հետո արդեն սովորական բան էր դարձել վաղվա օրվան անվստահությամբ վերաբերվելը։ «Եթե օսմանյան սահմանադրության հետ փորձանք պատահի նույն եղանակով, ինչ որ եղավ, այսինքն՝ հիմնված ֆանատիկոսության բռնկման վրա, որի համար նյութը լեցուն է այս երկրում, ամբողջ Տաճկահայաստանը կներկայացնի նույն տեսարանը, ինչ որ Կիլիկիան, միայն ավելի չար վախճանով»։ Այս տողերը գրվում էին 1910-ին (20, № 148, 1910)։

Աղանայի կոտորածին պետք է հետևեին նորերն այլ վայրերում։ Օրինակ, Սալոնիկից Ամասիայի իթթիհադական կազմակերպությանը ցուցում էր տրվել հարձակվելու հայերի վրա։ Նման բովանդակությամբ հեռագրեր տրվել էին նաև ուրիշ էշրաֆների։ «Թուրք խուժանը, մի զսպանակից գրգռվածի պես, հավաքվեց շուկան, լցվեց փողոցները»։ Դիմում են մյութասարրֆ Չերքեզ Բեքիր Սամի բեյին (42, էջ 197)։ Նա ինչ-ինչ նկատառումներով գործի է դնում իր ազդեցությունը, կանխում հայերի կոտորածը։ 1910-ի հունվարի 17-ին Սվասեն տեղեկացնում էին, որ Նիքսարի «Նայիպ Հյուսեինը իր գրգռիչ քարոզներով թուրքերին ոտքի էր հանում հայերի դեմ» (2, էջ 1213)։ Ինչպես վկայում է դեպքերին ականատես Աղան Տարոնեցին, երիտթուրքական կառավարությունը դաժան միջոցներով ջանում էր «կողոպտել, և՛

ֆիզիկապես, և՛ տնտեսապես բացարձակ անկարող վիճակի մեջ դնել Տարոնի հայությանը» (47, էջ 57)։

Բալկանյան երկրներից բերվեցին 5 հազար թուրք ոստիկաններ, զինվորականներ, հարկահավաքներ և ցրեցին հայկական նահանգների հայաշատ կենտրոններում (30, էջ 18)։ Սրանք սլավոնների մեջ ապրած, քրիստոնյաներից պարտված ու նրանց դեմ ատելությամբ լցված հրեշավոր մարդիկ էին և բնակության նոր վայրերում տուն-տեղ դնելու, արագ հարստանալու մոլուցք ունեին։ Այս նպատակին հասնելու միջոցը հայ աշխատավոր մարդու արյունը ծծելն էր, ունևորի հարստությանը, տուն ու տեղին տիրանալը։

Հայ գյուղացիության հողերը բռնագրավվում էին թուրքական իշխանությունների կողմից և հանձնվում մուհաջիրներին։ Այդ հողերի մի մասն էլ բաժին էր ընկնում քուրդ բեկերին (15, էջ 28), որոնց քաջալերում էին երիտթուրքերը։ «Հայոց համար ամենեն կենսական, հողային հարցին համար ոչ մեկ արդար կարգադրություն եղավ։ Նույնիսկ ոչ մեկ բռնագրավյալ հող իր հայ տիրոջ դարձվեցավ և շարունակվեցան բոլոր հին ռեժիմին հատուկ հարստահարություններն ու կեղեքումները» (3, էջ 918)։

Օրեցօր ակնբախ էր դառնում, որ «թե՛ հին թուրքերը, թե՛ երիտասարդ թուրքերը Ասիո մեջ Թուրքիո ամբողջությունը պահելու միակ ճարը հայերն իրենց երկրին մեջ տկարացնելը գտած են» (11, էջ 551—552)։

Երիտթուրքերի օրոք քուրդ բեկերին, շեյխերին և աղաներին ոչ ոք ձեռք չտվեց։ Սրանց ենթակա աշիրեթները պահպանվում էին նույն բարքերով, նախասահմանադրական միևնույն սովորույթներով։ Ճորտ (ոչ աշիրեթ) քրդերը ոչ մի նոր բան չէին շահել։ Քուրդ պաշտոնյաներն ու սպաները, որ համիդյան վարչաձևի օրգանական մասն էին, այժմ դարձել էին իթթիհադական և, բացառությամբ առանձին դեպքերի, ազգային զարթոնքին տուրք չէին տալիս, այլ հետևում էին համապետական ուղեգծին։

Գավառում ամեն ինչ մնում էր նույնը։ Գավառի մարդիկ ավելի շուտ զգացին, որ բարելավում չկա և ոչ մի ասպարեզում։ Էրզրումի վիլայեթն ուներ 800 հազար բնակիչ, որոնց սպասարկում էր ընդամենը 12 բժիշկ։ Երզնկայի և Բայազե-

տի մութասարիֆություններից յուրաքանչյուրում 200 հազար բնակիչ կար և յուրաքանչյուրն ուներ մեկական բժիշկ (20, էջ 246, 1913)։

Կիրասունցի մի վաճառական փորձում է ձեռնամուխ լինել ածխի և պղնձի հանքավայրի շահագործմանը Օրգուի և Կիրասունի շրջաններում, ծովից հազիվ մեկ ժամվա հեռավորության վրա։ Սակայն ոչ մի փողատեր հայ չի համաձայնվում համագործակցել, քանի որ «մի օրվա մեջ կարող էին թե՛ իրենց հանքերը ձեռքներից խլել և թե՛ ամեն ինչ փչացնել, տակնուվրա անել և իրենց դրամագլուխներն այդպիսով կորստի մատնել»։ Հանքերը շնչին գնով վաճառվել էին ֆրանսիական մի ընկերության (42, էջ 60—61)։

Ս. Սապահ Գուլյանը հնչակյան կուսակցության գործերով 1911-ի մայիսից մինչև 1912 նոյեմբերը ճանապարհորդել էր Փոքր Հայքում, հանդիպել ու զրուցել շատ ու շատ հայ մարդկանց հետ։ Նա հավաստում է, որ տիրապետող մտայնություն էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու գաղափարը։ «Երանի Ռուսիան շուտ գար և սրանց գազրելի գոյությանը վերջ տար, ու մենք էլ ազատվեինք։ Նրանք մեր արյունը ծծեցին... Թուրքը մեր հավիտենական թշնամին պիտի մնա...»,— ասում էին նրան (42, էջ 19)։

Ամեն անգամ, երբ ցույց էին տրվում կառավարական մարմինների ազգայնամոլական գործողությունները, երիտթուրքական շովինիստները ոչ թուրքերին մեղադրում էին չափազանցությունների մեջ։ 1911-ի փետրվարի 14-ին Բ. գոանը հղած իր գրության մեջ պատրիարքարանը խնդիր էր հարուցում «միայն օրենքի անաչառ կիրառում և կյանքի, պատվի ու գույքի ապահովություն»։ Պատրիարքարանը բողոքում էր մուհաջիրների վերաբնակեցման դեմ, հողերի անօրեն բռնագրավումների, եկեղեցիների, վանքերի և նույնիսկ գերեզմանոցների բռնագրավման դեմ (23)։ Աստիճանաբար պարզ էր դառնում, որ Արևմտյան Հայաստանում երիտթուրքերը և ոչ մի բարելավում անցկացնելու մտադրություն չունեին։

«Իթթիհադը և փոքր ազգությունները» հոդվածում Վանի «Հորձանք» շաբաթաթերթի հրատարակիչները ցույց էին տալիս, որ «Միություն և առաջադիմությունը» թուրքական դրժ-

բախտ իրականության մեջ հետադիմական գործոն էր դարձել։ Մասնավորապես նշվում էր գործադուլներն արգելելու մասին օրինագիծը այդ կուսակցության կողմից պառլամենտով անցկացնելու փաստը, ոտնձգությունները ոչ իսլամ ժողովուրդների կրթական հաստատությունների դեմ։ Թերթը ցույց էր տալիս, որ «մի ամբողջ քաղաքականություն է այս բոլորը, կանխապատրաստված մի ծրագրի մասերն են կարծես, որ հետզհետե երևան կուգան մաս առ մաս իրականանալու համար։ Թուրքիո պետական ամբողջ առանցքը ներկայիս այդ կուսակցությունն է դարձնողը։ Մի կողմից, բուն թափով ամեն ջանք գործ կդրվի ներքուստ պետական օրգանիզմը ի մի պահել, ամեն ինչ խաղաղ, հանդարտ և նորմալ ցույց տալ, իսկ մյուս կողմից, արտաքուստ, երբ քաղաքական այնքան տագնապներ կանցնի Թուրքիան, դիվանագիտական խաղերին այդ կուսակցությունը դիմագրավելու համար կձգտի լուծել բոլոր բողոքող բեռանները, իր թերթերի միջոցով մի անասելի հարայհրոց կբարձրացնի հայերի հանդեպ...», որոնք կբողոքեն Եվրոպային (21, № 11, 1909, էջ 242)։

«Հորձանք» թերթի խմբագրականում կարդում ենք. «Տգիտությունը, ֆանատիկ կրոնամոլությունը, թալանելու, սպանելու բնազդները պարարտ հող են ամեն մի ռեակցիոն և հայաջինջ շարժման ազդանշանին։ Եվ երբ այդ ցեղը բացեիբաց կնկատի կառավարության միակողմանի, շովեն և աչքառու ընթացքը, երբ կտեսնի, որ ավազակները և չարագործները փոխանակ պատժվելու կկանչվեն խաղաղության և եղբայրության հեռագրեր տալու և անպարտ կարձակվեն՝ նա ավելի ևս քաջալերված անսանձ կդառնա իր մտքերի և ձեռնարկների մեջ» (21, № 8, 1909, էջ 171)։

Հայերի համար ծանր վիճակը շարունակվում էր, որովհետև Համիդյան հայաջինջ ռեժիմի ոգին չէր անհետացել Տաճկաստանի իրականությունից։ Մահմեդական բնակչության մի խոշոր զանգվածը ցեղակրոնական թշնամական մոլեռանդությամբ էր լցված հայության դեմ։ «Տարիներ շարունակ տիրապետող, սպանող, հայի նամուսը բռնաբարող մուսուլման տգետ և մոլեռանդ տարրը չէր կարող փոխվել դյութական գավազանով մը, տարիներ շարունակ հային ստրուկ ճանաչող այդ արտոնյալ ցեղը չէր կարող հաշտվել այն մտքի

հետ, թե այսուհետև եղբայր և հավասար պիտի լինեն ազգերը, ռայային, գյավուրին եղբայր, հավասար ապրեն, այլևս որի՞ աշխատանքով ապրեն, որի՞ն թալանեն և պատիվը բռնաբարեն, չէ այդ անհնարին է նրանց համար» (21, № 8, 1909, էջ 171)։

Կ. Պոլսից մի թղթակցության մեջ կարդում ենք. «Երեկվա հափշտակիչ և վարդ լավատեսության վրա փչեց հոռետեսության սառը հողմը և այսօր երբեմնի մեծադղորդ ու շառաչալից ճառերը, բախվելով քար իրականության հետ, դադրած են այլևս մարդիկ ոգևորելե, զգացումներ սնուցանելե, և անոնց տեղ կլսվի նզովյալ ռեակցիայի օձի ֆշշոցը, որ կսպառնա մրուր խառնել ազգերի համերաշխության բաժակի մեջ, դուռը բանալ նորանոր ոճիրների, անմեղ զոհերի, արյուն-արցունքի» (21, № 1, 1909)։

Ընկավ բռնակալությունը, բայց բռնակալները շարունակում էին մնալ ու գործել։ «Տապալվեց սուլթանական միահեծանությունը,— գրում էր «Հորձանք» թերթը,— բայց չտապալվեցին այդ միահեծանությունն առաջացնող ազդակները» (21, № 6, 1909, էջ 116)։

Նույն «Հորձանքը» արձանագրում էր. «Մեր կյանքը, մեր երկրի դաժան օրենքները, կառավարչական բիրտ կարգերը բնավ փոխված չեն։ Կարճատև գինովությունը հառաջ եկած հուրիեթից, ծափերը և յաշասքնները անցան, և այդ բոլոր մակերեսային երևույթների տակից կերևի ընթացիկ կյանքը, որ հար և նման շարունակությունն է անցյալ բռնակալության շրջանին»։ Թերթը գրում էր գավառում շարունակվող ոճիրների, կողոպուտի ու հարստահարությունների մասին (21, № 4, 1909)։ Օրավուր հեղձուցիչ էր դառնում մահմեդական մոլեռանդության մթնոլորտը։ Թերթը «մտքի և խղճի ավազակներ և ենիչերիներ» էր համարում նրա սպասավորներին (21, № 3, 1909), քննադատում էր նաև հայ կրոնավորներին։ Խոսելով քաղցի, զանգվածային թշվառության և սովահարության մասին, նա ծաղրում էր Կ. Պոլսի ազգասերներին, որոնք «հոգիներին կրոնական սնունդ տալով, հանդերձյալ կյանքին ժառանգորդներ պատրաստելով են տարված» (21, № 4, 1909, էջ 68)։

1911—1912 թթ. «Հայաստանի մեջ համիդյան շրջանի

հատուկ կեղեքումները, հարստահարություններն ու ջարդի սպառնալիքները շարունակվեցան թերևս ավելի հավելյալ և ճոխացյալ, հայերը որոշ տեսան թե խաբեություն մը և կեղծիք մըն էին այդ սահմանադրությունը և երկրին մեջ արդարություն ու ապահովություն հաստատելու խոստումները, որոնք թուրքերը կընեին» (3, էջ 879)։

Կ. Պոլսի ուսանողական «Վերածնունդ» թերթը նկատում էր, որ «1912-ի տարին հայ կյանքի իրականության մեջ ոչինչ բերավ մխիթարական ու նորություն. պարզապես հինին շարունակությունը եղավ» (46, № 7—8, 1912)։ Նա գրում էր հայ ժողովրդի «հանրային զգացումի» հակաթթիհադական-ության մասին, երիտթուրքական կառավարության «ազգամոլ անարդար և ժողովրդասեր ոգիե զուրկ վարչության» վնասակար քայլերի մասին։ Ուսանողները ժողովրդին կոչ էին անում «իր կուսակցությունների միջոցով բլոկի ձևով միացած իթթիհադական շարժման դեմ գործել» (46, № 5, 1912)։

Քաղաքների հայ փողատեր մարդկանցից ովքեր հասկանում էին երիտթուրքերի ներքին ու արտաքին քաղաքականության իմաստը, պահանջում էին նրանց փոխառություն, դրամ շտրամադրել, քանի որ դրանով նրանք ավելի վնասակար էին դառնալու մասնավորապես Թուրքիայի մեջ ապրած ազգությունների համար։ Սակայն գտնվեցին հայ մեծահարուստներ, որոնք օգնեցին ֆինանսների մինիստր հրեա Ջավիդին փոխառություններ ստանալու գործում։ Այս «հայերը» օգնեցին հրեա Ջավիդ բեյին փոխառություններ ստանալու Թուրքիայի համար, կարծելով, թե դրանից օգտվելու էր նաև հայ բուրժուազիան։ Նա խորամանկորեն այցելում էր Եվրոպայում գործող հայոց պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին, նրան միամտացնելով, հավաստիացնելով, որ եթե փոխառությունը հաջողվեր, իրենք անպայման բարենորոգումներ պիտի գործադրեին (41, էջ 119)։ Դրամը ստանալուց հետո երիտթուրքերն իսկույն հայոց պատվիրակությունից երես դարձրին։ Բուն երկրում սպասում էին փոփոխությունների, բարելավումների, բայց իզուր։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Կ. Պոլսում մոտ 200 հազար հայ բնակչություն կար (74, էջ

77)։ Կ. Պոլսի շքեղազարդ պալատներում ու առափնյա ամառանոցներում կյանքն անցկացրած էֆենդու համար գավառը, գավառային նրանց հոգսերը մնում էին «հավիտենական անծանոթներ» (41, էջ 30)։ Նրանք Եվրոպայի կազդուրիչ բուժարանների բազմածախ հյուրերն էին։ Սրանք ազգային բարբարներ էին համարվում, որովհետև աղքատին, եկեղեցուն, դպրոցին, տերտերին դրամ, ողորմություն էին տալիս։ Սրանք պատրաստ էին դրամ տալ ու համագործակցել օսմանյան կայսրության նոր իշխանավորների հետ, միայն թե նրանք չխոչընդոտեին իրենց ֆինանսատնտեսական ապահովությունը։ Հայոց պետականության գաղափարը նրանց համար մի հեռավոր, աննշմարելի բան էր։ Տեղին է Սապահ Գուլյանի այն նկատանքը, թե «Թուրք տիրապետությունը սաստիկ կերպով խաթարել է մեր ազգային նկարագիրը, մանավանդ ինչ վերաբերում է բուն Հայաստանից դուրս՝ ծովեզրյա մասերի ու մասնավորապես Պոլսի մեջ սերնդե սերունդ ապրող հայերին» (42, էջ 19—20)։

Դարերի ընթացքում ստեղծվածը հնարավոր չէր կարճ ժամանակում արմատախիլ անել։ Մարմնապաշտ վաճառականներն ու էֆենդիները, աշխարհիկ ու կրոնական կառավարիչները գեղածիծաղ Բոսֆորի ու Մարմարա ծովի ափերից հեռանալ չէին ուզում, գավառում պաշտոն վարելուց հրաժարվում էին, քանզի Կ. Պոլսի փափուկ կյանքը գերադասում էին։ Ինչպես հավաստում էր Սապահ Գուլյանը, նույն ձևով սուլթանների մայրաքաղաքի մայթերը լցվել էին «մեծ ու փոքր, իրական ու խոսքի հեղափոխականներով։ Նրանք, շատ քիչ բացառությամբ, Պոլսից դուրս գալ չուզեցին։ Հեռավոր շրջաններ չէին գնում, գավառն անտեսում էին։ «Հայաստանը չօժտվեցավ պետք եղած թվով լուրջ, զգոն, գիտակից, առաջնակարգ գործիչներով» (41, էջ 50—51)։ Նույն հեղինակը վկայում է, որ «վարիչները» ժողովրդի մեջ չմտան։

Ի՞նչ էին մտածում փողատեր շրջանները. «միայն մի բան՝ օգտվել միդհատյան սահմանադրության բարիքներից. ավելի մեծ թվով երեսփոխաններ ունենալ օսմանյան խորհրդարանում, հավասալ բարենորոգումների գործադրությանը, եվրոպական պետությունների դիվանագիտությանը» (41, էջ 320)։

Քիչ չէին այն մարդիկ, որոնք կուրանում էին, շլանում տիրապետող, իշխանության գավազանը իր ձեռքին ունեցող, պատիվներ, պաշտոններ բաշխող իթթիհադի կեղծ ու պատիր խոսքերից, նետվող փշրանքներից և նրա «Թուրքական, ասիական խորամանկությունից, շողոմաբար մարդախաբ լեզվից»։

Այնինչ «հակաիթթիհադականությունը պետք է լիներ բոլոր կուսակցությունների «հավատամքը». նա համակուսակցական համազգային թեզ պիտի լիներ...»,— գրում է նույն հեղինակը (41, էջ 51)։ Գրում ու խոսում էին այն մասին, թե թուրքական պետությունը գնում էր դեպի ամբողջացում, դեպի միություն և «հայերն էլ նրա աշխատող գործավորներից պիտի լինեին», որ հայերի «գոյության պայմանները ընդմիշտ կցված են թուրք պետության և ազգի հետ»։ Զարմանալի է, որ նման մտայնության տուրք էին տալիս պոլսահայ ծանոթ գործիչներ։ Սրանցից մեկը հայերի խնդիրն էր համարում «բարձրացնել թուրքին... ահա հայի անմիջական և գլխավոր անելիքը»։ Իսկ իթթիհադի ղեկավարները մտածում էին, թե հայերը չափից ավելի են վեր բարձրացել, հարկավոր է նրանց վար քաշել։

Ադանայի կոտորածից հետո Կ. Պոլսի, Իզմիրի հայ վերնախավի մեջ համակերպությունը, կրավորականությունն ավելի զարգացան։ 1909-ին մի հայ աղա Իզմիրում փիլիսոփայում էր. «Պետք չէ թուրքը գրգռել, կրքերը սաստկացնել, նա գազան է. ավելի լավ է լռել, ձայն չհանել, թողնել, որ անե այն, ինչ որ կուզե, մինչև որ հագենա, ինքն իրեն հանդարտի, այդպիսով միայն կարելի է առաջն առնել... ինքնապաշտպանությունը վնաս է, մեզ նման ժողովրդի համար չէ. նա օգուտից ավելի՝ չարիքների դուռը կբանա։ Համակերպենք և մեզ բախտին հանձնենք» (41, 1916, էջ 33)։

Համիդը թագավորեց 30 տարուց ավելի։ Այդ ժամանակամիջոցում մշակվել էր մարդկանց որոշակի բնավորություն։ «Այսօր հեղափոխական, վաղը՝ հակահեղափոխական, մի օր ծայրահեղ սոցիալիստ, մյուս օրը՝ թթու ազգայնական, մի շաբաթ հայասեր, մյուսը՝ հայատյաց, տեղն եկավ թրքամոլ, տեղին էլ՝ անզուսպ թրքատյաց... և այդ բոլոր կերպափոխությունները մի անգույն, աննպատակ, գաղափարազուրկ

կյանք վարելու համար, կյանք՝ ուտելու, խմելու, զվարճանալու, պարելու, մարմնապաշտական հաճույքներ վայելելու, հեռու հասարակական ազնիվ իդեալից, ժողովրդական բոլորանվեր ձգտումներից...» (41, էջ 58)։

Այսպիսի մարդիկ, ուրացած սեփական ազգն ու նրա ցավերը, հեշտությամբ համագործակցում էին իթթիհադի հետ։ Ահավասիկ մի տիպիկ խոստովանություն. «Սուլթան Համիդի օրոք մենք բոլորս էլ լրտեսներ էինք. եթե մեկը ասի ինքը լրտես չի եղել, նա ճշմարտությունը ասած չի լինի, յուրաքանչյուր ոք մեկի լրտեսն էր, որը՝ պալատի, որը՝ այս ու այն աղայի, բեկի, փաշայի, նախարարի, որը՝ կուսակալի, մյութեսարիֆի, կայմակամի... ու մեր գոյությունն այդպես էինք կարողանում պահել, ապրելու ուրիշ միջոց չկար. ...Հիմա թեև «սահմանադրություն» կա, բայց մեր հոգին, ջղերը փոխված չեն, դարձյալ առաջվա նման իրարու վրա կասկածում ենք, մեկմեկու վրա վստահություն չունինք...» (41, էջ 36)։

1911-ին Կեսարիայի Թոմարզա գյուղի Հակովը աղան բողոք ու խնդրագիր էր հղել Էվերեկ-Ֆենեսի մյութեսարիֆին՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել գյուղը հեղափոխականներից ազատելու համար։ Գտնվում էին հայ մարդիկ, որոնք քծնում էին, շողոքորթում թուրք մեծավորներին՝ ապահովելու համար սեփական շահը։ Իթթիհադը դիմում էր այդպիսի ստահակների ծառայությանը։ Երիտթուրքերը տասնյակ հազարավոր օրինակներով տպագրեցին Մինասյան Կարապետ անունով մի հայ սպայի ներբողական ոտանավորը՝ նվիրված օսմանյան «մեծահոգոր» ազգին, նրա «վեհապանծ» սուլթաններին, որոնց շնորհիվ հայերը «երջանիկ» էին ապրել և պաշտպանել իրենց գոյությունը։ Քծնող «բանաստեղծը» հայհոյում էր սուլթանի ամրոցները գրոհող քաջարի հայ ֆիդայիներին, քաղաքական կազմակերպություններին (41, էջ 158—159)։ Բալկանյան պատերազմի օրերին, «մի քանի ժամվա մեջ հայ վաճառականները 30 հազար ոսկիով պատասխանեցին իթթիհադի բացած «ազգային հանգանակությանը»։ «Հայտնի վաճառական Ի.-ը 10 հազար ոսկի թափեց սեղանի վրա, հայ և թուրք ժողովականների առաջ, օսմանյան համալսարանի մեջ» (41, էջ 20—21)։

Երբ 1913-ին Ֆիլիպոլիս քաղաքում մի հարուստ հայ խանութպանի բացատրում էին երկրում առկա տանջանքները, ցավերը, կարիքները և պահանջում օգնել երկրի ինքնապաշտպանության գործին, նա պատասխանեց. «Այդպիսի բաների համար ես դրամ չեմ տա», պատճառաբանելով, թե ինքը դեմ է Թուրքիան քանդելուն, հեղափոխություն անելուն. իր առևտուրը, շահը, օգուտը կապված է թուրքերի հետ, ասում էր նա։ Մեկ ուրիշ հայ հարուստ Կոնստանցա քաղաքում ասում էր. «Հայրս մեռնելիս ինձ երդվեցրեց հայ հեղափոխականներին դրամ չտալ, քանի որ նրանք հայի անմեղ արյուն թափվելուն պատճառ են դառնում... ազգի շահը պահանջում է թուրքերի հետ լավ լինել, բարեկամ մնալ»։

Հայ էֆենդիական, թուրք պետական պաշտոնեությունը կազմող խավը շատ քիչ բացառությամբ՝ միահամուռ կերպով զորավիգ եղավ, ուժ տվեց իթթիհադին, հայկական կուսակցությունների «դեմ կռվելու», նրանց «ճիգերը անդամալուծելու», «ջղակոտոր անելու» համար։ Սապահ Գուլյանը նույնիսկ չի խորշում գրել, որ այդ խավը «թուրք իթթիհադականից ավելի թունդ իթթիհադական դարձավ և ամենավնասակար դերը կատարեց»։ Բազմաթիվ էին իթթիհադական հայ խմբագիրներն ու հրապարակախոսները։ «Հայ ազգային երեսփոխանական ժողովի անդամների մեջ ահագին թիվ էին կազմում հայտնի և ծածուկ, երդվյալ իթթիհադականները» (41, էջ 16, 21)։ Սրանք հավատարմության երդում էին տալիս ավետարանով ու ատրճանակով։ Սրանք հրահանգներ էին ստանում «Նարը Օսմանիե կլուբից» ու սրբորեն կատարում դրանք։ Սապահ Գուլյանը հիշատակում է Դ. աղային, որը հայերին զենք չէր վաճառում, բայց այն առաջարկում էր թուրքերին։

1912-ին Եսայան դպրոցում կայացած մի հավաքույթում հայ էֆենդիներից մեկն ամբիոնից հայտարարում էր. «Այն հայ կուսակցությունը, որ իթթիհադին հակառակում, նրա դեմ է կռվում, նրան քվե չի տալիս (խոսքը հնչակյանների մասին էր), նա հայության թշնամի է, հայ ազգի շահերի դեմ է գործում, նա պառակտիչ է»։ Այնուհետև ասվում էր. «Քանի որ բոլորս էլ օսմանցիներ ենք և օսմանցիության

մարմնացումը իթթիհադն է, «ուրեմն մենք նրան, միայն նրան պիտի հետևենք» (41, էջ 17)։

Այսպիսով, արևմտահայությունը միասնական չէր, պառակտված էր։ Պառակտված էին իրենք իսկ կուսակցությունները, որոնք ավելի շատ միմյանց դեմ էին պայքարում, քան հայրենիքի համար մարտնչում։ Հայ հասարակական-քաղաքական շրջանները հավաքական ուղեգիծ չունեցան, սեփական ժողովրդի շահերը ըմբռնելու և նրան ծառայելու իմաստությունն օտար մնաց նրանց գործունեությանը։ Ոմանք համագործակցում էին երիտթուրքերի հետ բացեիբաց։ Մյուսները նույնն էին անում սեփական դիրքը պահպանելու, օգուտ քաղելու նկատառումներով։ Կային մարդիկ, որոնք լրիվ ընդդիմադիր դիրք որդեգրեցին երիտթուրքերին։

Բալկանյան առաջին պատերազմի ավարտին, երբ արևելյան հարցը նորից դարձավ եվրոպական դիվանագիտության քննարկման առարկա, Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ կազմված Ազգային պատվիրակությունը դիմումներ հղեց տերություններին։ Այդ նպատակով կազմվել էր հավաստի և հարուստ փաստաթղթերի մի հավաքածու (La Situation des Arméniens en Turquie exposé par des documents, 1908—1912), որի մեջ ցույց էր տրվում, որ 1908-ից հետո հայերի կյանքը չէր բարելավվել, որ նրանց ունեցվածքը, պատիվը սահմանադրությամբ պաշտպանված չէին, որ հարստահարությունները շարունակվում էին (3, էջ 860)։

Արդեն 1912-ին Հովհ. Թումանյանը գրում էր, որ «Տաճկաստանը, համիդյան, թե ժեռն թուրքական, բռնապետական, թե սահմանադրական, հալածում ու կոտորում է հայերին» այն բանի համար, որ նրանք հայրենիք էին ուզում, «հարուցանում ու զարգացնում» էին հայկական հարցը։ «Էս հարցից ազատվելու հնարը,— գրում էր նա,— էսպես է վճռել թուրքի պետական հանճարը. հայերին կոտորել կամ հալածել, քշել, դաղթեցնել։ Այո, վայրագ ու անօրեն է էս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաստատ...» (12, էջ 149—150)։

Երիտթուրքերի քաղաքականության անմիջական հետևանքը մեծ չափեր ընդունած արտագաղթն էր։ 1913-ի հուլիսի 31-ին Կահիրեում գումարված բարեգործական կենտրոնական վարչության ժողովը մի կոչ ընդունեց արտագաղթի դեմ, որի մեջ մասնավորապես ասված էր. «Կեցուցեք արտագաղթի այս աղգակործան հեղեղը, հայրենակիցնե՛ր։ Ձեր բոլոր կամքերովը, ձեր բոլոր լանջքերովը, ձեր բոլոր ճակատներովը ծառացեք այդ աղետին դեմ, և ըրեք, որ անոր թափը կոտրի, թե ներսեն դուրս արգելափակելով հոսանքը, և թե դուրսեն ներս, անոր դեմ հանելով ետ դարձնողներու շարան-շարան քարավանները» (34, էջ 91)։

□

1912—1913 թթ. Բալկանյան պատերազմները միանգամայն նոր մթնոլորտ ստեղծեցին Թուրքիայի շուրջը։ Եվրոպայից թուրքերին քշում էին միևնույն նշանաբանով, ինչին խնկարկել էին եվրոպական դիվանագիտության կամ Ռուսաստանի օգնությամբ թուրքական լուծը թոթափելու կողմնակից հայ հասարակական-քաղաքական շրջանները տասնյակ տարիներ շարունակ։

Երիտթուրքական ռեժիմի հակահայկական գործողությունները, բացահայտ շովինիստական քաղաքականությունը արևմտահայությանը նորից մղեցին արտաքին ուժերի, առաջին հերթին Ռուսաստանի միջոցով իր վիճակի թեթևացում որոնելուն։ Հայոց քաղաքական ուժերը ռուս մեծ ժողովրդի հովանու տակ էին փնտրում սեփական ժողովրդի ապահովության երաշխիքը։ Շարժման մեջ դրվեցին արևմտահայության բախտով Ռուսաստանին շահագրգռելու բոլոր փոկերը։ «Ռուսսկոյե սլովո» թերթում տպված մի հոդվածում ապացուցվում էր, թե «հայերին պաշտպանելը ոչ միայն օգտակար է լինելու Ռուսաստանի համար, այլև դա անհրաժեշտ է նրա իսկ ապահովության համար»։ «Բոլոր թուրքահայերը, առանց կուսակցական խտրության... Ռուսաստանի մեջ տեսնում են իրենց միակ պաշտպանին ու փրկարարին և նախանձով են նայում ռուսահայերի խաղաղ կյանքին» (1, 30. 1. 1913)։

1912-ի հոկտեմբերին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ II-ին հղած հանգամանալից նամակում խորհուրդ էր տալիս վերադառնալ իսկական ռուսական քա-

զաքականությանը՝ «Թուրքահայերի հովանավորությանը»։ Նա հիշեցնում էր 1878-ի անցուդարձը, ցավով էր հիշատակում XIX դարի 90-ական թվականներին տեղի ունեցածը, «երբ Ռուսաստանի իսկական քաղաքականությունը հայերի նկատմամբ կտրուկ փոխվեց Սասունի կոտորածի ժամանակ, երբ հայերը իշխան Լոբանով-Ռոստովսկուց կատեգորիկ մերժում ստացան Թուրքիայի առջև միջնորդի դերում հանդես գալու համար» (67, էջ 119—120)։

Ռուսական կառավարության պաշտոնական տեսակետը հայկական խնդրի մասին եոյակ զինակցության տերություններին հաղորդվեց 1913-ի հունիսի 25-ի հուշագրով։ Այնտեղ ասված էր, որ Պետերբուրգը դեմ է օսմանյան կայսրության «անդամահատման գաղափարին», բայց պնդում է անդորը հաստատել Թուրքա-հայկական նահանգներում, որտեղ չի կարող հանդուրժել անիշխանական վիճակ, որը կարող է խիստ վտանգավոր անդրադառնալ Կովկասի վրա։ Պետերբուրգը գտնում էր, որ պետությունների լիակատար համաձայնությամբ բարենորոգումների իրականացումը կարող էր կանխել բարդություններով հղի վտանգը։

Գերմանիայում ռուսական դեսպան Սվերբեևը 1913-ի մարտի 28-ին Բեռլինից հաղորդում էր Ս. Դ. Սազոնովին հայերի շրջանում առաջացած հուզումնալից վիճակի մասին։ Հայոց գաղթօջախի պատվիրակությունը ներկայացել էր ռուսաց դեսպանատուն, խնդրելով իրենց խնդրագիրը հաղորդել Պետերբուրգ արևմտահայությանը սատար կանգնելու, Ռուսաստանին սահմանակից հայաբնակ նահանգները Ռուսաստանին միացնելու և հարակից այլ խնդիրների մասին։ Սվերբեևը հաղորդում էր, թե հայոց այդ պատվիրակությունն «անկեղծորեն զղջում էր, որ տարված երիտթուրքերի խոստումներով և դաշնակցություն կուսակցության պարագլուխների ազդեցության տակ իրենք [հայերը] որոշ ժամանակ երես էին թեքել Ռուսաստանից։ Իսկ այժմ, իրենց համոզմամբ, բոլոր հայերը հասկացել են, որ միակ փրկությունը Ռուսաստանին միանալու մեջ է» (51)։ Երբ Բեռլինում ռուս դիվանագետ Ա. Բրոնևսկին Գերմանիայի պետական քարտուղար Յագովին բացատրում էր Ռուսաստանի դիրքը հայոց բարենորոգումների հարցում, վերջինս պահանջում էր,

որպեսզի բարենորոգումներն ընդունելի լինեին Թուրքիայի համար և նրա նկատմամբ ուժ չգործադրվեր։ Բրոնևսկին նրան ասում էր, թե Թուրքիան երբեք չէր դիմադրելու այդ բարենորոգումների նախագծին, եթե չօգտվեր տերությունների երկպառակություններից (52)։ Ս. Սվերբեևը հատուկ հանդիպում ունեցավ երիտթուրքական ղեկավար դեմքերից մեկի՝ Ջավիդի հետ (1913, նոյեմբեր)։ Երբ ռուս դիվանագետը նրան բացատրում էր, որ արևմտահայության համար նախատեսվող բարենորոգումներով, նրա վիճակի բարելավումով շահագրգռված է ոչ միայն 1 միլիոնից ավելի հայ բնակչություն ունեցող Ռուսաստանը, այլև ամբողջ Եվրոպան, Ջավիդն առարկում էր, որ «հայկական հարցը Թուրքիայի համար անկյունաքարային է», որ բարենորոգումների նախագիծը խախտում է իրենց պետության սուվերեն իրավունքները (53)։

Թե՛ Գիրսը, թե՛ արտաքին գործերի մինիստր Սազոնովը առաջին հերթին հանդես էին գալիս Թուրքահայաստանում հսկողության տակ դրված բարենորոգումներն իրականացնելու օգտին, իսկ զինված միջամտությունը հնարավոր էին համարում, եթե ձախողվեր նախնական ծրագիրը։ Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը գտնում էր, որ Գերմանիան պատրաստ չէ Թուրքիայի բաժանմանը շահավետորեն մասնակցելուն։ Քանի դեռ Գերմանիան ապահով չէ, որ բաժանման դեպքում մյուս տերությունները կհամաձայնվեն իրեն մասնակից դարձնել Փոքր Ասիայի գործերին, պետք է շարունակել թուրքասիրական քաղաքականությունը (31, էջ 57)։

Ռուսաստանը նույնպես պատրաստ չէր և մտադրություն չուներ ռազմական առումով միջամտելու Թուրքիայի գործերին, Բալկանյան պատերազմին (54, էջ 30)։

Կյանքը նորից առաջին պլան քաշեց հայ ժողովրդի երկու հատվածների միավորման, միասնական հայրենիք կազմելու հնարավորության խնդիրը։ Նորից աշխուժացավ հայոց հասարակական-քաղաքական միտքը։ Հասարակական-քաղաքական ուժերը, կուսակցական ղեկավար մարդիկ քննարկում էին խնդրի տարբեր կողմերը, առաջ քաշում տարբերակներ, լավատեսական ենթադրություններ։ Անտարակույս, ամենա-

ծանրը արևմտահայության ճակատագիրը տնօրինելուն հա՝ վակնած քաղաքական ուժերի վիճակն էր։ Կ. Պոլսում իրա՝ դրությունը խաբուսիկ էր, հակասական, անորոշ ու սպասո՝ ղական։ Երիտթուրքական ժանտախտը նրանց համար տակա՝ վին թաքնված էր...

Բալկանյան պատերազմի օրերին Կ. Պոլսում լույս տես՝ նող «Ազատամարտ», «Բյուզանդիոն», «Ժամանակ» թերթե՝ րում մշտապես գործում էր «Հայկական հարց» բաժինը, ուր զետեղվում էին հայկական հարցի վերաբերյալ արտասահ՝ մանյան մամուլում լույս տեսած հոդվածներն ու լուրերը։ Այս ամենին ուշիուշով հետևում էին երիտթուրքական պե՝ տականության համապատասխան ծառայությունները։

Երբ 1912-ի դեկտեմբերին բալկանյան միացյալ ուժերից Թուրքիայի պարտությունը փաստ էր, թուրքական մինիստր Ռեշիդ բեյի խոսքերով՝ «Բալկաններու և հույներու հաջողու՝ թյունը գլխապտույտ պատճառած է հայ պոլիտիկոսներուն, որոնք հատկապես բարեհաջող բոպե գտան Եվրոպայի ուշա՝ դրությունը գրավելու հայոց խնդրույն վրա» (5, № 23, 1913)։

Հայոց բարենորոգումների խնդրի քննարկումների պահին Կ. Պոլսում շրջում էր այն լուրը, թե երիտթուրքական պարա՝ գլուխներն սպառնացել էին կոտորել հայերին, եթե նրանք չհրաժարվեին բարենորոգումների գաղափարից։ Լեփսիուսը եզրակացնում է, որ տարագրության և ջարդի մասին որոշու՝ մը պատճառաբանված էր հենց երիտթուրքերի այդ ցանկու՝ թյամբ՝ «հայերի գլխից հանել բարենորոգումի գաղափարը» (14, էջ 238—239)։

1913-ի մարտի 11-ին Գիրսը գրում էր Պետերբուրգ՝ մի՝ նիստրին, թե երիտթուրքերի կառավարությունը դադարեցրել է բանակցությունները հայկական պատրիարքարանի և, ընդ՝ հանրապես, հայերի հետ (69, էջ 25)։ Ավելի ուշ՝ 1913-ի հոկտեմբերի 29-ին նա հաղորդում էր արտաքին գործերի մի՝ նիստրին, որ «երիտթուրքերն ընդհանրապես բոլոր միջոց՝ ներով ձգտում են թաղել հայկական հարցը, այն համարելով ամենալուրջ խնդիրը Թուրքիայի ներկա դրության մեջ և վա՝ խենալով, որ հայերին տրված ամեն մի զիջում համապա՝ տասխան պահանջ կառաջադրի արաբների կողմից» (69, էջ 102)։

Հայերի հասցեին արված սպառնական հայտարարություն՝ ները սովորական բան դարձան։ 1913-ի նոյեմբերի 12-ին պատրիարքարան հղված սպառնագրի մեջ ասված էր. «Դուք, անիծյալներդ հին ռեժիմին, մեր հարգելի կառավարության գլուխն աղետներ բերիք... Պետք է գիտնաք, որ երիտասարդ թուրքերն արթնացած են այժմ... Դուք, հայերդ, այս բաները պետք է լավ գիտնաք և անոր համաձայն քայլ առնեք։ Մի մոռնաք, թե ուր կապրիք»։ Այնուհետև հայերին սպառնում էին անմիջապես գործադրել համապատասխան մեթոդներ՝ խնդիրները երիտասարդ թուրքերի կամքին համապատաս՝ խան կարգադրելու (45, էջ 34—35)։

Թուրքական հանրագիտարանում հայերին նվիրված հոդ՝ վածում (էրմենիլեր) հիշատակվում է 1914-ի նոյեմբերի 16-ին պատրիարքարան հղված ևս մի սպառնագիր։ Այն ստորագրել էին հայտնի պանթուրքիստներ (Ահմեդ Ջեմալ, Հյուսեին Ավնի, Մեհմեդ Քենան և ուրիշներ)։ «Ով հայ գյա՝ վուրներ, գիտեք, որ մժեղ մը երբ թևով թռչի՝ կյանքը կկարճ՝ նա։ Դուք, ով տխմար հերիֆներ, կթևավորվիք։ Բայց կյանք՝ ներդ կկարճնա. վերջավորության կհասնի ձեր աղտոտ կյանք՝ քը։ Կասկած չկա, որ մինչև մոտ ժամանակներս ձեր թեր՝ թերը, ձեր պատրիարքը, ձեր ժողովները, բոլորը մեկանց ձեր գլուխը պիտի անցնենք»։ «Թուրքական սուրը մինչև հիմա միլիոնավոր գյավուրներ սպանած է... այսօր թուրքերը հանձն առած են և ուխտած հայ գյավուրները... մաքրել» (45, էջ 36)։ Խարբերդում թուրք դատավորներից մեկը 1914-ի հուն՝ վարի 29-ին հայերին «ահռելի ջարդով էր սպառնում»։ «Եվ այդ եթիհադական սրիկան դատավոր է» (19, էջ 67),— գրում էր Երուխանը։ Եթե դատավորն այդպես էր դատում, ապա ինչ կանեին մյուսները։

Բալկանյան պատերազմի օրերին հայ մարդիկ պարտա՝ ճանաչ կատարում էին իրենց քաղաքացիական և զինվորա՝ կան պարտականությունները, կռվելով թուրքական բանակի կազմում (87, էջ 283)։ Բալկանյան պատերազմների ժամա՝ նակ ութ հազար հայ զինվորներ լռելյայն կռվում էին օտո՝ մանյան զինված ուժերի շարքերում (88, էջ 193)։ Անդրանիկի գլխավորած հայ կամավորների մի քանի հարյուրանոց ջո՝ կատը կռվում էր թուրքաց դեմ։ Իսկ «Սասահ» թերթի խմբ՝

բագիր Տիրան Քելեկյանը (իթթիլաֆական) 1912-ի սեպտեմբերի 21-ին սուլթան Ահմեդի մզկիթի շուրջը խմբված 100 հազար թուրք ամբոխի առաջ ելույթ էր ունենում և Բուլղարիայի դեմ պատերազմը փառաբանում։ Թալեաթից հետո խոսք էր վերցնում Հասան Ֆեհմին, հետո Հակոբ էֆենդի Բոյաջյանը... Եվ այսպես շարունակ հակասական, ծանր իրավիճակների մեջ էր Կ. Պոլսի հայությունը։

«Բալկանյան պատերազմը,— գրում է Արշ. Զուրաբյանը,— քաղաքական կուսակցություններին տարավ էլեկ իրենց նախկին՝ մինչհեղափոխության դիրքերը...»։ Այսինքն, նրանք նորից դիմեցին արտաքին ուժերին ապավինելու միջոցով հայկական հարցը լուծելու հնարավորությանը։ Զուրաբյանը, Շչեդրինի խոսքերով ասած, «անվարտիք մանուկներ էր» անվանում այն ազգային գործիչներին, որոնք թափառում էին Եվրոպայում՝ իմպերիալիստական քաղաքականության վրա ներազդելու նպատակով (38, № 23, 1917)։

Դիվանագիտական մարզում գործելը հեշտ բան չէր։ Չկար փորձ, պետական հմտություն, հետախուզություն։ «Եղածը շատ թույլ, դյուրին, ազաչական, բայց սեփական հողից ու ուղղությունից զուրկ դիվանագիտական ձեռնարկներ էին, ուրիշ ոչինչ. դա հայկական հին մեթոդի աղերսական ձևն էր, որ վերանորոգված՝ կաղնեկաղ քայլում, գործում էր։ Չէր կարելի մի տեղ թուրքասեր, գերմանասեր երևիլ, մի այլ տեղ՝ ռուսասեր, անգլիասեր, ֆրանսասեր, հարկավոր էր որոշ գիծ, գույն և անհատականություն ունենալ, և դա չկար» (41, էջ 116)։

Հեղափոխական ճանապարհով, պայքարի ուղիով ազատություն նվաճելու մարտիկների դեմ կանգնած էր ոչ միայն թուրքական պետականությունը, այլև ունևոր դասակարգերի այն երկչոտ մարդիկ, որոնք «մատը մատին տալը վնաս էին համարում, ուզում էին հայկական խնդիրը լուծել աղաչելով, պաղատելով... դիվանագիտական ձեռնարկների դիմելով» (41, էջ 148)։

Միայն միամիտները կարող էին հավատալ, որ երիտթուրքերը թույլ կտային հայոց պետության ստեղծում։ Նրանք կռիվ տվին Լիբիայում, Բալկաններում, արաբական երկրներում իրենց անկախության ծարավի ժողովուրդների անջատումը կանխելու համար։ 1913-ի սեպտեմբերին «Նուրը Օսմանիե» սրահում գումարված իթթիհադի տարեկան համաժողովում ասվում էր, որ «այլևս չպետք է կրկնենք անցյալի սխալները. Բալկանյան պատերազմի դժբախտությունները մեզ համար եղան այնպիսի մի դաս, որից չենք կարող չօգտվել» (4, № 25, 1913)։

Բալկանյան պատերազմների ժամանակ ավելի ուժեղանում էին հայ ժողովրդի ազատագրական ձգտումները։ «Եվ ահա թուրքական բռնապետության լուծը թոթափեց ոչ միայն Կրետեն, ապա և Մակեդոնիան, Էպիրոսը, Թրակիան։ Դեռ երեկ գերի, ստրուկ բալկանյան ժողովուրդները փոթորկված ծովի ալիքների պես ծառացած ընկան թուրք պետության մգլած, խարխլած շենքի վրա, խորտակեցին ու ցրիվ տվին դարավոր ոճիրների այդ անիրավ կառուցվածքը։ Այս անգամ իսպառ միայնակ է Հայաստանը իր դարավոր մարտիրոսության ճամփին, դարձյալ հին ու նոր մոխիրների վրա նստած, դարձյալ խոշտանգված ու արյունաքամ» (4, № 6, 1913)։

Արևմուտքի խառնակիչ գործիչները նորից ջուր էին պըղտորում իրենց հակառուսական մարզանքներով, գրելով Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու վտանգավոր հետևանքների, պատերազմի սպառնալիքի մասին։ Մյուսները հայկական հարցը քննարկում էին զուտ տերությունների մրցապայքարի խնդիրներին համապատասխան։

Եվրոպական մամուլը չափազանց աշխույժ քննարկում էր հայոց հարցը։ «Յումանիտեն» պահանջում էր «բավարարություն տալ վերջապես հայ ժողովրդի պահանջներին»։ «Թանը» ամեն օր առանձին բաժին էր հատկացնում հայկական հարցին։ Ժորժ Կլեմանսոն 1913-ի մայիսից լույս տեսնող իր «Լ'օմ լիբր» թերթում գրում էր. «Միայն զգացումը չէ, որ պիտի առաջնորդի մեզ այս գործի մեջ։ Եթե փափագում ենք, որ խաղաղությունը պահպանվի Ասիայում, պետք է հայկական կոտորածները մեկընդմիշտ դառնան անցյալի պատմություն։ Այլապես Հայաստանի համար խոստացված ու չգործադրված բարենորոգումները պետք է հանգեցնեն պատերազմի, ինչպես այդ եղավ Մակեդոնիայում (4, № 152, 1913)։

«Աշխատանք» թերթը կարծում էր (№ 152, 18—31. 5.

1913), որ «...Հայկական հարցն այժմ ներկայանում է բոլորովին նոր գույնով, թոթափված զդացական և աղերսական իր շղթաներեն, հայկական հարցն ի հայտ կուգա այժմ, առաջին անգամն ըլլալով մեր անկախությունը կորսնցնելեն ի վեր, իրավական ու քաղաքական réal շահերու գետնին վրա»։

Շովինիստական քաղաքականության ուժեղացումը, դավառում սկսված իրարանցումը ստիպում էին մտածել ինչպես անհատական, այնպես և հավաքական ինքնապաշտպանության մասին։ Արդեն գրվում էր այն մասին, թե «Համիդը գնաց, ինչո՞ւ սակայն չգացին հայկական տանջանքները։ Ասել է թե տիրող մտայնությունը կամ հոգեբանությունն է, որ աններող ու անհաշտ է դեպի հայությունը» (4, № 126, 130, 1912)։

Երբ հայկական հարցը նորից վերաբացվեց դիվանագիտական ոլորտներում, երիտթուրքերը հայտարարեցին, թե վեց վիլայեթներում հայոց թիվը հաղիվ 20 տոկոս է կազմում։ Պատրիարքարանը ցույց տվեց իթթիհադականների հրապարակած թվերի կեղծությունը։ Իրականում հայերը այդ վիլայեթների ազգաբնակչության 38,9 տոկոսն էին կազմում։ Համարյա նույնպիսին էր «գերմանա-հայկական ընկերության» նախագահ Իոհաննես Լեփսիուսի թվական եզրահանգումը (16, էջ 106—107)։

1912—1913 թվականներին հայկական պատվիրակությունը, նրա ղեկավար Պողոս Նուբարն իրենց կազմած և տերություններին հղած բոլոր հուշագրերում, արևմտահայության դրությունը բարելավելու իրենց առաջարկությունների հիմքում գնում էին Սան-Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի դիվանագիտական դրույթները, առանց նկատելու նրանց մշուշապատ և ընդհանուր բնույթը, նախկինում կատարված տեղաշարժերը։ Նրանց հարցադրումները զուրկ էին քաղաքական նպատակասլացությունից ու որոշակիությունից (26)։

Երիտթուրքական պարագլուխները շարացած էին, քանի որ Պողոս Նուբար փաշան կաթողիկոսի նշանակած պատվիրակության գլուխ անցած գնացել էր Եվրոպա. երիտթուրքերը նրան հեռակա կարգով դատի տվեցին, զրկեցին մեծ հարստություններից, հռչակեցին դավաճան և մահապատժի դատապարտեցին։

1912—1914 թթ. բարենորոգումների շուրջը դիվանագիտական քննարկումների մեջ կորչում էր բուն խնդիրը։ Տերությունները երկար-բարակ խորհրդածում, քննարկում էին յուրաքանչյուր խոսք, ձևակերպում, շարունակելով ավանդական այն քաղաքականությունը, ըստ որի օսմանյան ժառանգությունից ավելի մեծ բաժին ստանալը ետին պլան պետք է մղեր ճնշված ազգերի ազգային-ազատագրական կենսական խնդիրները։ Ինչ խոսք, որ իմպերիալիստական տերությունների հետապնդած նպատակները միօրինակ չէին, բայց նրանք բոլորն էլ բխում էին գաղութատիրական ծրագրերից ու պլաններից։

1913-ի ավարտին տիրապետող մտայնություն էր, որ նպաստավոր ժամանակներ են ստեղծվել հայոց դատի համար։ Գրում ու խոսում էին այն մասին, որ հայոց հարցի լուծումը անհրաժեշտություն էր դառնում միջազգային հարաբերությունների տեսակետից, որ շահագրգռված տերությունները շտապելու էին «ըստ կարելույն շուտ իրագործել այն մինիմումը բարենորոգումների, որոնք կարող են բավարարել հայ ժողովրդին և անդորրություն սահմանել հայկական հողի վրա» (4, № 29, 1913)։

1913-ի ավարտին Փարիզի «Թանը» գրում էր. «Իրենց բոլոր ուժով հայերը պիտի քանդեն Թուրքական իշխանության հիմքերը և մղեն այն դեպի կործանում...» (4, № 29, 1913)։

«Բութանիա» թերթը (1913-ի հունվարի 4/17) արտատպում էր Վիկտոր Բերարի հոդվածը՝ «Հայերը ո՞ր ճեը պետք է ընտրեն— հայկական անկախությո՞ւն, ռուսական կցո՞ւմ, եվրոպական կոնտրո՞լ»։

1913-ին ոչ ոք չէր ցանկանում գործնական խնդիր դարձնել օսմանյան կայսրության բաժանման հարցը, և ոչ ոք հայերի համար պատերազմ չէր ուզում (82, էջ 25)։ Սակայն դա չէր խանգարում երիտթուրքերին դրսի օժանդակությանը ապավինող արևմտահայության նկատմամբ բռնելու ամենամոլի թշնամական դիրք։

Անդրկովկասում կարծում էին, թե «Ռուսաստանը Թուրքիայի հետ ունեցած քաղաքական հարաբերություններով չի կարող արևելյան հարցը վերջնականապես լուծված համարել ո՛չ Բեռլինի կոնգրեսով և ո՛չ երիտասարդ թուրքերի սահմա-

նաղրությամբ...» (32, № 229, 1914)։ Նրանք հույս էին տածում արևելյան հարցում Ռուսաստանի քաղաքականության հետևողականության նկատմամբ։ «Հայ բնակչության վիճակը Թուրքիայում պահանջում է անհապաղ սկսել քննարկումն անհրաժեշտ բարենորոգումների...»,— ազդարարում էր ռուսական կառավարությունը 1913-ի հունիսին տերություններին հղած իր նոտայում (17, էջ 208)։ «Այն պահին, երբ պ-րն Սազոնովը դրդում էր, որպեսզի Ասիական Թուրքիայում անցկացվելիք բարենորոգումների քննարկում լինի, ամենազգուշավոր դիրքավորում էր նկատվում Բեռլինում»,— հայտնում էր Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը Լոնդոնում, Վիեննայում, Կ. Պոլսում, Ս. Պետերբուրգում իր դեսպաններին (17, էջ 221)։ Անգլիան գտնում էր, որ եթե որևէ բաժանում տեղի ունենար Ասիական Թուրքիայում, դա կարող էր դիպչել իր կենսական շահերին (17, էջ 261)։ Կ. Պոլսում գերմանացի դեսպան Վանգենհայմը 1913-ի հունիսի 10-ին գրում էր, թե «Հայկական հարցն այն բանալին է, որը Ռուսաստանի առաջ պետք է բացի նեղուցները» (17, էջ 222)։

Երիտթուրքերի պարագլուխները շարունակում էին խուսանավել եվրոպական տերությունների միջև, սիրախաղալ Կ. Պոլսում նրանց դեսպանների հետ, ձգտելով մի կերպ պահպանել անկայուն հավասարակշռությունը հին սուլթանական քաղաքականության ձևերով ու մեթոդներով։

Բալկանյան հարցը լուծելու նպատակով Լոնդոնում գումարված կոնֆերանսի ժամանակ մեծ տերությունների ղեկավարները, պատասխանելով հայերի թախանձանքներին, միջամտեցին Բ. դռան մոտ՝ պահանջելով իրականացնել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը։ Կ. Պոլսում դեսպաններին հանձնարարվեց մշակել հայոց բարենորոգումների նախագիծ։ Ռուս կառավարության ջանքերով Գիրսը և Վանգենհայմը կազմեցին վեց կետից բաղկացած ռուս-գերմանական մի ծրագիր, ըստ որի Բ. դռան խնդրանքով տերությունները երկու ընդհանուր քննիչ էին նշանակելու Արևելյան Անատոլիայի երկու հատվածների համար, որոնց հսկողության ներքո պիտի կենսագործվեին բարենորոգումները։

1913-ի հոկտեմբերի 14-ին Վանգենհայմը, տեղի տալով իր արտաքին գործերի մինիստրի հաշտարար դիրքին, մեծ

վեզիր Սայիդ Հալիմ փաշային հայտարարում է, թե գերմանական միջամտության շնորհիվ Մանդելշտամի ծրագիրը հասցված է նվազագույնի, որին բոլոր պետությունները համաձայն են, այնպես որ Թուրքիան այժմ գտնվում է միացյալ Եվրոպայի առջև։ Մի այլ հանդիպման ժամանակ Վանգենհայմը նույն մեծ վեզիրին համոզում էր, թե հայկական հարցի միջազգայնացումը իրական բարեփոխություն է Թուրքիայի համար, որովհետև Ռուսաստանը այս խնդրում այլևս Թուրքիայի նկատմամբ չի կարող դիմել բռնի միջոցների, առանց նախօրոք համաձայնվելու մյուս տերությունների հետ (31, էջ 72)։ Գրիգոր Զոհրապը ռեֆորմների նկատմամբ եվրոպական հսկողությունն անհրաժեշտ էր համարում։ Նա Կ. Պոլիս ժամանած Լեփսիուսին (1913-ի օգոստոսին) հայտարարում էր, թե «գերմանական առաջարկներն անընդունելի են հայոց ազգի համար» (27)։

Հայկական բարենորոգումների շուրջը բանակցությունները, ի վերջո, ավարտվեցին 1914-ի փետրվարի 8-ի համաձայնագրով, որ ստորագրվեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի և Գիրսի բացակայության պատճառով, գործերի հավատարմատար Կոնստանտին Գուլկևիչի կողմից։ Ըստ այս համաձայնագրի Արևելյան Անատոլիայի երկու հատվածներում կարգվում էին երկու օտարերկրացի քննիչներ, որոնք հակակշռելու էին այդ հատվածների վարչությունը, արդարադատությունը, ոստիկանությունը և ժանդարմերիան։ Նրանք իրավունք ունեին ստորադաս պաշտոնյաներ նշանակելու, իսկ բարձրաստիճան պաշտոնյաների թեկնածուներ կարող էր առաջարկել կառավարությունը։ Բացի վալիներից, նրանք իրավասու էին աշխատանքից ազատելու բոլոր պաշտոնյաներին։ Իսկ վալիների հարցը կարող էր բարձրացվել ներքին գործերի մինիստրության առջև և մինիստրների խորհրդի միջոցով չորս օրվա ընթացքում համապատասխան լուծում ստանալ։

Գուլկևիչը 1914-ի փետրվարի 10-ին Սազոնովին հղած հեռագրում փետրվարի 8-ի համաձայնագիրը բնութագրում էր մի նոր դարաշրջանի սկիզբ հայ ժողովրդի պատմության մեջ։ Իր քաղաքական կարևորության տեսակետից այս համաձայնագիրը նա համեմատում էր բուլղարական էկզարխա-

տի ստեղծման մասին 1870-ի ֆիրմանի հետ։ Գուլկևիչի կարծիքով, հաստատվում էր Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը։ Մյուս կողմից, Գուլկևիչը հույս էր հայտնում, որ Ռուսաստանի կատարած դերը կայսերական կառավարության կողմն էր գրավում ռուսահայերի համակրանքը և նրանց հեռացնում կայսրության ծայրահեղ կուսակցություններից (65)։ Մանդելշտամը նկատում է, որ «1914-ի փետրվարի 8-ի բարենորոգումների համաձայնագիրը կարծես թե Ռուսաստանի և Գերմանիայի ուժերի հարաբերակցությունն էին հատկանշում և լռելյայն՝ նաև եռյակ համաձայնության և եռյակ զինակցության ուժերի հարաբերակցությունը»։ Այդ համաձայնագիրն իբրև պարկեշտ մի իրավախոհություն, լավագույն ապագայի որոշ վերելքի մի մեկնակետ էր թվում ապարախտ հայ ժողովրդի համար։ Ավա՜ղ, միայն պատրանք եղավ այդ, որ շուտով հօդս ցնդեց (31, էջ 75)։

1914-ի մայիսի 15-ին Հ. Բ. Ընկերության ընդհանուր ժողովի առջև լավատեսական ճառով հանդես եկավ Պողոս Նուբար փաշան։ Նա ոգևորված պատմում էր հայոց բարենորոգումների ծրագրի, նրա իրականացման գործնական ուղիների մասին, խոսում արդարության, ոստիկանական հսկողության մասին։ «Հայերեն լեզուն պիտի ընդունվի վարչական շրջաններուն և դատարաններուն մեջ։ Դատարաններու վճռագրերը Թուրքերեն բնագրի հետ պիտի ունենան նաև հայերեն թարգմանություն» և այլն։ Նա ոգևորված էր, որ յուրաքանչյուր նահանգում «հայ ազգային վարժարաններն իրենց համեմատական բաժինը պիտի ունենան», որ համիդիե հեծելագնդերը պիտի փոխարինվեն պահեստի զորամասերով, խաղաղ ժամանակ առանց զենք գործադրելու իրավունքի։ Նրա կարծիքով, «հավասարության սկզբունքը պիտի գործադրվի ամեն կարգի պաշտոնատարներու վրա՝ քրիստոնյաներու և մահմեդականներու միջև» և այլն (28)։

Ալ. Մարտունին (Մյասնիկյան) իր «Հայկական հարցի գործնականը» հոդվածում գրում էր, որ «հայկական հարցը Թուրքահայերի բարեկեցության, նրանց կայքի ու գույքի, կյանքի ապահովության, նրանց մարդավայել կենցաղի հարց է» (32, № 3, 1914)։ Նա դեմ էր, երբ արևմտահայության

ազատագրության գործը ղեկավարելուն հավակնում էին երկրի իրավիճակից անտեղյակ, ինչ-որ սխեմաներով ղեկավարվող մարդիկ։ «Դրսի ղեկավարությունը,— գրում էր նա,— մեծ մասամբ հիմնված է լինում անտեղյակության ու տհասության վրա. դրսի ղեկավարությունը առաջ է բերում մակերեսային վերաբերմունք դեպի հարցը, շահագործություն և նույնիսկ բախտախնդրություն։ Այդպիսով շարժման հիմքը խախուտ, անբնական և արհեստական է դառնում»։ Նա գտնում էր, որ «Թուրքահայաստանի կամ Թուրքահայերի ազատագրությունն ու Թուրքաց խնդրի լուծումը պետք է Թուրքահայերի ձեռքի գործը լինի (32, № 3, 1914)։

1914-ի աշնանը Վահան Տերյանն իր «Մեր պարտքը» հոդվածում հայ ժողովրդի ճակատագիրը տեսնում էր Ռուսաստանի հետ կապի մեջ։ Նա գրում էր. «Ժողովուրդն անվերջ տառապանքի մեջ կենդանի է պահել իր մաքուր հավատը դեպի ազգի ապագան, դեպի լավագույն գալիքը։ Որպես մի վսեմ ցնորք, որպես դյութիչ մի երազանք նա փայփայել է ազատության և վերածնության բարձր բաղձանքը» (32, № 220, 1914)։

Ռուսական հասարակությունը չէր տարակուսում, որ «Թուրքիայի հետ զինված ընդհարում լինելու դեպքում կասկած չկա, որ էջմիածնի պետը կարող կլինի հայկական ուժերն առաջ մղել այն ճանապարհով, որ ընդունված է անցյալի փորձերով և համապատասխանում է հայերի ու ռուս պետականության շահերին»։ Այսպես էր գրում «Պետերբուրգսկի կուրյեր» թերթը (32, № 203, 1914)։

Ըստ Անդրե Մանդելշտամի, էականն այն էր, որ «Հայաստանի Թուրքական վարչությունը դրվեց միջազգային հակակշռի տակ, որ հայերը ստանում էին մարդկային գոյության երաշխիքներ։ Եթե համաձայնագիրը գործադրության մեջ դրվեր, հավաքական թե անհատական ջարդեր, ավարառություններ, կանանց առևանգումներ, հողի բռնագրավումներ ու Թուրքական հին ռեժիմը բնորոշող ուրիշ համանման դեպքեր անմիջապես կանհետանային և կհաստատվեր ավելի քաղաքակիրթ վարչաձև։ Դժբախտաբար, ճակատագիրն այլ կերպ անօրինեց... Մեծ պատերազմն այլևս ավելորդ դարձ-

ռեց Թուրքահայաստանի բարենորոգումների բոլոր ծրագրերը» (31, էջ 77)։

Երիտթուրքերն արդեն իսկ խանձարուրի մեջ տապալում էին բարենորոգումների իրագործումը։ Հոֆֆի կողմից պաշտոնյաներ ընտրելու և նշանակելու առթիվ, երբ պաշտոնի կոչված թունդ շովինիստ թուրքերի և այլ հարցերով Փաստերմաջյանը և Վռամյանը 1914-ի հունիսին այցելեցին Թալեաթին ու Խալիլին, վերջիններս նրանց ընդունեցին ընդգծված սառնությամբ և ասացին. «Մենք այնպես չենք հասկանում հավասարության սկզբունքը, ինչպես հայերն են ցանկանում այն բացատրել։ Դա նշանակում է լոկ ընդհանրապես բոլոր օսմանների հավասարություն» (29)։ Նրանք ավելացրին նաև, որ իթթիհադը որոշել է ինքնուրույն լուծել բարենորոգումների հարցն իր հասկացողությամբ, հարաբերության մեջ չմտնելով հայերի հետ։ Վճռականորեն դեմ կանգնելով քննիչներից մեկի պաշտոնում Փաստերմաջյանին նշանակելուն, նրանք հայտարարեցին. «Նա շատ խելոք է։ Մենք չենք ուզում այդպիսի պաշտոնյաներ ունենալ»։ «Ինչի՞ դեմ եք բողոքում,— ասում էր Թալեաթը։— Դուք ուզում եք ռեֆորմ ստանալ Եվրոպայի օգնությամբ... Ահա ձեզ և ռեֆորմ» (29)։ Երիտթուրքերի նպատակն էր տապալել ռեֆորմները, որպեսզի ցույց տային, թե Եվրոպան և, առանձնապես, Ռուսաստանը չի կարող դրանք յուրովի մուծել Թուրքիա։ Երիտթուրքերը ուզում էին այնպիսի ծանր վիճակ ստեղծել գլխավոր քննիչների համար, որպեսզի նրանք ոչնչի չհասնեին։ Երիտթուրքերը ծաղրում էին թե՛ հայերին, թե՛ բարենորոգումները։ Նրանք ուզում էին բարենորոգումներն ուղղել հայերի դեմ, դրանք դարձնել անպտուղ, աշխատել վարկաբեկել որևէ բարելավման փորձ (29)։

Վորոնցով-Դաշկովը 1914-ի սեպտեմբերի 2-ին պատասխանելով Գևորգ կաթողիկոսի նույն թվականի օգոստոսի 5-ի՝ հայ ժողովրդի նկատմամբ ռուսաց կառավարության հովանավորության մասին խնդրագրին, պահանջում էր թե՛ ռուսահայերի, թե՛ արևմտահայերի գործողությունները խստորեն համաձայնեցնել իր հետ։ Նա անցանկալի էր համարում որևէ ապստամբական քայլ թուրքահայերի կողմից (22)։

Հայությունն ապրում էր լավատեսական սպասումներով։ Ռուսաստանը նրան ներկայանում էր գլխավոր պաշտպան։ Բարենորոգումների իրականացումն արևմտահայությանը հնարավորություն կընձեռեր շունչ առնելու, ապահովություն ունենալու։ Պատերազմի առաջիկա չարիքը, երիտթուրքական ոճրագործ ծրագրի իրականացման մահաբեր ճանկերը տակավին տեսանելի չէին։

1. «Ազատամարտ», թերթ, Կ. Պոլիս։
2. Ալպոյաճյան Սրշ., Պատմություն Եվդոկիո հայոց, Կահիրե, 1952։
3. Ալպոյաճյան Սրշ., Պատմություն Մալաթիո հայոց, Բեյրութ, 1961։
4. «Աշխատանք», թերթ, Իզմիր։
5. «Բութանիա», թերթ, Կ. Պոլիս։
6. Դրվագներ հայկական եղեռնեն և վերածնունդ։ 1915-ի ջարդերու մասին տեղեկագիրներ եվրոպական, ամերիկյան և հայկական աղբյուրներից, Փարիզ, 1946։
7. «Զարթոնք», թերթ, Բեյրութ։
8. Ջավեն Տ., Թուրք սահմանադրությունը և երիտասարդ թուրք կուսակցությունը, Թիֆլիս, 1908։
9. Ջ-ն և Մ. Կ., Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1913։
10. Թերզյան Հ., Կիլիկիո աղետը, Կ. Պոլիս, 1913։
11. Թումայան Կ., Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի, հ. Ա, Լոնդոն, 1905։
12. Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1969։
13. Ինճիկյան Հ. Գ., Կնունյանցը երիտասարդ թուրքերի հեղափոխության մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1963, № 8։
14. Լեփսիուս Ի., Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն, Կ. Պոլիս, 1919։
15. Հակոբյան Ս., Ազգամիջյան հարաբերությունները Արևմտյան Հայաստանում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Երևան, 1962, № 6։
16. Համբարյան Ս., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը, «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, 1969։
17. «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», ժողովածու, պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ և առաջաբանով, Երևան, 1972։
18. «Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան», վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով, Երևան, 1926։

19. Հովհաննիսյան Ս. Վ., «Երուխան» (Սրմանդ Սրմաքեշխանլյան), «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1966։
20. «Հորիզոն», թերթ Թիֆլիս։
21. «Հերձանք», խմորատիպ շաբաթաթերթ, Վան։
22. ՀՍՍՀ ՊԿՊԱ (պատմության կենտրոնական պետական արխիվ), ֆ. 57, ց. 2, գ. 727, թթ. 1—2։
23. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 666, թ. [illegible]։
24. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 707, թ. 1։
25. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 676, թ. 133։
26. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 687, թթ. 3—5։
27. ՀՍՍՀ ՊԿՊԱ, բաղվածքների ֆոնդ, գ. 37, թ. 4։
28. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 711, թթ. 50—51։
29. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 676, թթ. 144—145։
30. Ղազարյան Հ., Ցեղասպան Թուրքը, Բեյրութ, 1968։
31. Մանդելշտամ Ս., Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքիայում մեծ պատերազմից առաջ, «Վեմ», № 7, 1935, Փարիզ։
32. «Մշակ», թերթ, Թիֆլիս։
33. Մուշեղ Եպիսկոպոս, Ադանայի ջարդը և պատասխանատուները, Կահիրե, 1909։
34. Ոսկեմատյան Հայկական բարեգործական ընդհանուր միության, 1906—1931, Ա. հ., Փարիզ։
35. Չիբուքի, Հուշիկք Հայաստանի, Կ. Պոլիս, 1919։
36. Զորմիսյան Լևոն, Կուսակցությունները, Բեյրութ, 1965։
37. Պալամյան Գրիգորիս, Հայ գողգոթան, զրվագներ հայ մարտիրոսագրությունեն, Բեոլինեն դեպի Զոր, 1914—1920, Ա. հատոր, Վիեննա, 1922։
38. «Պայքար», թերթ, Թիֆլիս։
39. Ռիֆաթ, Մեկան Զաղե, Օսմանյան հեղափոխությունը և մութ ծալքերը (թարգ. թուրք.), Բեյրութ, 1938։
40. Սապահ Գուլյան Ս., Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1900։
41. Սապահ Գուլյան Ս., Պատասխանատուները, Պրովիդենս, 1916։
42. Սապահ Գուլյան Ս., Փոքր Հայքի հիշատակներ, մասն առաջին, մայիս 10—օգոստոսի 1, 1911, Չիկագո, 1917։
43. Սասունի Կ., Քուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները, Բեյրութ, 1969։
44. Սեռոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, 1937, Բեյրութ։
45. Վարդան Լևոն, Հայկական տասնհինգը և լքյալ գույքերը։
46. «Վերածնունդ», ամսաթերթ, Կ. Պոլիս։
47. Տարոնեցի Ադամ, Պատասխանատուները Տարոնի եղեռնին, Սան Ֆրանցիսկո, 1966։
48. Տեր-Հակոբյան Մ., Թուրքահայաստանի կորուստը և արտասահմանի հայոց ապագան, Բեյրութ, 1967։

49. Ցրումպեներ Ոլրիխ, Գերմանիան և օսմանյան կայսրությունը, 1914—1918 թթ., Պրինստոն, ԱՄՆ, 1968, գլուխ 7, «Հայկական հալածանքներ» («Բանբեր Հայաստանի արխիվների», № 2, 1970)։
50. Փարամազ (Մաքենս Սարգսյան), Կյանքն ու գործունեությունը, Պրովիդենս։

51. АВПР (Архив внешней политики России), ф. канцелярия, 1913, д. 48, лл. 70-73.
52. АВПР, ф. канцелярия, 1913, д. 48, лл. 124-126.
53. АВПР, ф. канцелярия, 1913, д. 48, лл. 144-149.
54. Баженов И. Р. Наша внешняя политика на Ближнем Востоке с национальной точки зрения, СПБ, 1914.
55. «Вопросы истории», № 1, 1973.
56. Габидуллин Х. З. Младотурецкая революция, М., 1936.
57. Голобородько И. И. Старая и новая Турция, П.-М., 1914.
58. Горцев, Младотурки и рабочий вопрос, «Современник», СПб, книга IV, 1912.
59. Зографски, Данчо, Европейские державы и Балканы в начале XX века (1900—1914), М., 1970.
60. Каутский К. Национальные проблемы, с предисловием С. Семковского, изд. «Книга». 1918.
61. «Красный Архив», т. 43, 1931.
62. Кряжин В. Политические группировки Турции, Младотурки, «Новый Восток», № 1, 1923.
63. Лавров П. А. Балканский союз и Сербия, СПб, 1913.
64. Лазарев М. С. Крушение турецкого господства на Арабском Востоке, М., 1960.
65. Международные отношения в эпоху империализма, серия III. т. I, 1931, № 210.
66. Миллер А. Ф Оттоманская империя (Султанская Турция), Высшая партийная школа при ЦК ВКП(Б), М., 1946.
67. Письма И. И. Воронцова-Дашкова Николаю Романову, «Красный Архив», т. I (26), 1928.
68. «Правда», газета.
69. Сборник дипломатических документов, реформы в Армении, 26. XI. 1912—10. V. 1914, II. 1915.
70. Сенкевич И. Г. Младотурецкая революция и албанское национальное движение журнал «Советское востоковедение», № 1, 1958.

71. Скиталец А. Два года турецкой конституции, «Московский еженедельник», № 33, 2. VIII. 1910.
72. «Славянские известия», СПб, № 2, 1909.
73. Тер-Арутюнов А. Политические партии в современной Турции, журнал «Русская мысль», № 9, 1908.
74. Тыркова, Ариадна, Старая Турция и младотурки. Год в Константинополе, П., 1916.
75. Шпилькова В. И. Младотурецкая революция, 1908—1909 гг., М., 1977.

76 Apcar, Diana Peace and no Peace. Yokohama, 1912.
77 Benson E. F. Crescent and Iron Cross, Edinburgh University Press, N. Y.— London.
78 Boyajian Dickran H. Armenia: The Case For a Forgotten Genocide, Westwood, New Jersey, 1972.
79 Burtt, Joseph The People of Ararat, London, 1926.
80 Congres de la Jeune, Turquie, 31 aut, 1900.
81 Dale, Darley Armenia and Armenians, «The American Catholic Guarterly Review», vol. XLII, october 1917, N. 168, Philadelphia.
82 Davidson, Roderic H. The Armenian Crisis 1912—1914, N. Y., 1948.
83 Guttman J. The Beginings of Genocide. A Brief Account of the Armenian Massacres in World War I, N. Y., 1948.
84 Fraser, David Persia and Turkey in Revolt, Edinburgh and London, 1910.
85 Macler, Frederic, La Nation Armenienne, Son Passe, Ses Malheurs, Paris, 1923.
86 Middle Eastern Studies, London, 1971, vol. VII, N.I.
87 Morgenthau H. Ambassador Morgenthu's Story, N. Y., 1926.
88 Walker, Christopher Armenia, The Survival of a Nation, N. Y., 1980.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

1908-ի հեղաշրջումը և հայկական քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը: Երկու քարի արանքում: Սուլթանիզմի հետադիմականությունը և երիտթուրքական «առաջադիմականությունը»: Իթթիհադ-դաշնակցության հայավնաս առնչությունները: «Հ. Հ. դաշնակցությունը չէր ձգտում անջատման Թուրքիայից»: «Ֆիդայիներու ու քաջերու փաղանգը զենքերը վար կդնե»: Իրադրությունը պատերազմի նախօրյակին: Թանկարժեք ժամանակը կորսված էր: «Հնչակի» հակաիթթիհադական դիրքը: Հնչակ ղեկավար գործիչները իթթիհադի հակահայկական տեռորի առաջին զոհեր:

Հեղաշրջումից հետո հայկական կուսակցությունների ակտիվիստները «ճանապարհեցին երկիր մտնել առիթից օգտվելու և իրենց «գաղափարական կուսակցական» էքսպերիմենտները երկրայինների գլխին խաղալու» (35, № 8, 1909, էջ 204)։ Շուտով կուսակցական անմիտ կռիվներ ծայր առան երկրի տարբեր շրջաններում։ Հ. Հ. դաշնակցության կողքին իրենց դիրքերն ամրապնդել էին ուզում հին հնչակյան, վերակազմյալ հնչակյան և սահմանադրական ռամկավարական կուսակցությունները։ Սրանք իրենց ջանքերն ավելի շատ միմյանց կռիվ տալու վրա էին վատնում, քան թուրքական բռնակալության դեմ։

Ճիշտ է 1909-ի հոկտեմբերի 30-ին Կ. Պոլսում Հ. Հ. դաշնակցության Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեի, ս.-դ. հնչակյան կուսակցության Տաճկաստանի կենտրոնական վարիչ մարմնի, վերակազմյալ հնչակյան կուսակցության Կ. Պոլսի վարչության, սահմանադրական ռամկավարական կուսակցու-

թյան կենտրոնական վարիչ մարմնի ներկայացուցիչները «համերաշխության ժողով» գումարեցին և իրենց հրապարակած որոշման մեջ պարտավորվեցին ձեռնպահ մնալ «անվանարկիչ և խիստ հարձակումներից» (49, էջ 180), սակայն երբեք միշկուսակցական ազգավնաս ախոյանությունը չդադարեց։

1910-ի ապրիլին դաշնակցության, հնչակի և վերակազմյալի միջև «միշկուսակցական համերաշխության» հանդիպումների որոշումների հիման վրա ժողովրդի ինքնապաշտպանության գործը կուսակցությունները պիտի վարեին միասնաբար՝ անկախ անոնց քաղաքական և ընկերային համոզումներեն» (49, էջ 181)։ Սակայն ուժերի համախմբում տեղի չունեցավ։ Նրանք նաև կռիվ էին տալիս «օրվան ազգային իշխանություններուն, հոգևորականներուն և առհասարակ պահպանողական և հետադիմական որակված տարրերուն դեմ» (51, էջ 52)։

Մոռացության տալով ամենակենսականը՝ հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքական իշխանության վերաբերմունքի ճշտումը, դրա նկատմամբ որոշակի տակտիկայի մշակումը, կենտրոնում թե տեղերում հանրային կյանքը նրանք զբաղեցնում էին «բացուգոցի» խնդրով (եկեղեցիները հրապարակային հավաքույթների տրամադրել, թե ոչ), «գործադուլների» կազմակերպման թույլատրելիության հարցով, Օրմանյանի դեմ հալածանքով։ Հեռավոր Վանում էլ քննարկվում էր «աղատ սիրո» խնդիրը (51, էջ 53)։

Հայ ազգային կուսակցություններից երիտթուրքերի հետ համագործակցելու օգտին ամենաակտիվ դիրքերից հանդես եկավ Հ. Հ. դաշնակցությունը։ Նրա ղեկավար դեմքերը իթթիհադի հետ իշխանությունը բաժանելու, հավասար իրավունքներ նվաճելու դիրքին էին հավակնում։ Թե՛ Փարիզի 1907-ի ընդդիմադիր կազմակերպությունների կոնգրեսի հրավիրմանն ու անցկացմանն իրենց ունեցած ակտիվ մասնակցությամբ, թե՛ սուլթանի դեմ մղած երկարամյա կռիվների ծառայությամբ նրանք անհիմն լավատեսությամբ իթթիհադի հետ ասպարեզ մտնելու դիրք բռնեցին։

Արշ. Ալպոյաճյանը գտնում է, որ դաշնակցության ղեկավարները դարձան իթթիհադի «օժանդակը կամ կամակատարը»։ Նա գտնում է, որ իթթիհադը «իր պոչին կապելի եղք դաշնակցությունը՝ հայ ամենեն ազդեցիկ կազմակերպությունը, այլևս արհամարհեց հայերը և ոչ մեկ բարենորոգչական քայլ արավ երկրին մեջ» (1, էջ 918)։ Անգլիացի դիվանագետ Ջորջ Քիդստոնը 1919-ի նոյեմբերի 11-ին գրում էր, թե «Կ. Պոլսում իմ եղած ժամանակ դաշնակցությունը խիստ մերձավոր կապերի մեջ էր Միությունն և առաջադիմության կոմիտեի հետ...» (75, էջ 907—910)։ «...Կ. Պոլսեն մինչև Վան՝ Հ. Հ. դաշնակցության ղեկավարները կջանային հավատացնել ուրիշներուն, թե իրենք էին, որ հաջողացրին հուլիսյան ժեռն-թուրքական հեղափոխությունը և, իթթիհադականներու ուժին կոթնած՝ իրենց ձեռքն առին թուրքահայ ազգային ու քաղաքական կյանքին ղեկը» (18, էջ 181)։

Տարիներ շարունակ թուրքական բռնապետությանը պայքարի ձեռնոց նետած մարդիկ, կոմիտեները երիտթուրքերի հետ մերձենալու, համագործակցելու ուղեգիծն են որդեգրում։ Ժամանակ առ ժամանակ սոցիալիստական գաղափարախոսության փետուրներով զարդարվելու սովոր դաշնակցությունը, ճնշված, շահագործված աշխատավոր արևմտահայության շահերի պաշտպանության մասին շատախոսած այդ կուսակցության ղեկավարները գործարք էին կնքում թուրքական հասարակության ամենապորտաբույծ դասակարգերի ու խավերի շահերի արտահայտիչ, շովինիստական, հակահայկական ծրագրեր փայփայած իթթիհադի հետ։ Դաշնակցությունն իբր ընտրություն էր կատարում հետադիմության և առաջադիմության միջև։ Սակայն սայթաքում էր, որովհետև հարգանք չուներ տեսության, դասակարգային շահերի ու պայքարի նկատմամբ, որովհետև երիտթուրքերի այլամերժ նացիոնալիզմի վտանգավորությունը խորությամբ չէր զգում։

Ռուսաց դեսպանատան գործերի հավատարմատար Նեխլյուդովը 1908 թ. օգոստոսի 20 (7)-ին գրում էր Փարիզից, որ «Մեշվերեքում» տպված Փարիզի համագումարի առնանգրությունից երևում է, որ «ներկա շարժման ղեկավարները ինչ-որ չափով կապված են հայկական հեղափոխական ընկերությունների հետ և նրանց տվել են հայտնի խոստումներ։ Իսկ դա, իր հերթին, պետք է ստիպի մեզ առանձնապես աչալրջորեն հետևելու հայկական հեղափոխական շարժման հնարավոր ուժեղացմանը մեր սեփական սահմաններում և անհան-

զրստանալ, որ հանկարծ Թուրքիան, իր ներկա զրության մեջ, չդառնար մեր հեղափոխականների և անարխիստների շաբակայանը» (69, էջ 6)։

Հ. Հ. դաշնակցության Կ. Պոլսի պատասխանատու մարմինը 1908-ի հուլիսի 30-ի շրջաբերականով ողջունեց «առաջին հաղթանակը»։ «Օսմանյան կայսրության մի ծայրից մյուսը հնչում է Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն կոչը։ Երեկվան հանրաբանտը վերածված է ազատաշունչ երկրի» (49, էջ 174—175)։ Չափազանցված ոգևորություն, չափազանցված բնորոշումներ։ Թուրքիան հեռու էր ազատաշունչ լինելուց։ Իսկ 1908-ի օգոստոսի 3-ին նա սահմանադրական կառավարության առաջ խնդիր էր հարուցում հայ գաղթականներին (թվով 90 հազար) երկիր վերադառնալու արտոնության ակնկալությամբ (49, էջ 177)։ Երիտթուրքերն այս խնդրին մոտ չեկան։

«Սահմանադրական Թուրքիայի կառավարությանն» ուղղված պաշտոնական պահանջագրի մեջ Հ. Հ. դաշնակցության ներկայացուցիչների խորհուրդը («Դրոշակ», 1908, հոկտեմբերի 9—10) հռչակում էր, որ «Թուրքաց Հայաստանը կկազմե կայսրության անբաժան մասը» (49, էջ 178)։ Իսկ ո՞ւր մնաց արևմտահայության երկարամյա ազատագրական պայքարը։ Այժմ ո՞ւմ անունից էին դաշնակցական ղեկավարները հրաժարվում Արևմտյան Հայաստանից, ո՞ւմ էին թողնում երկիրը։ Իսկ դաշնակցական Ատոմը (Շահրիկյան) գրում էր, թե «ոչ մեկ ազգ՝ ավելի քան հայը, իր աշխարհագրական, ցեղագրական, պատմական պայմանների բերումով այնքան շահագրգռված չէ սիրելու և պահպանելու օսմանյան միությունը։ Օսմանյան միության բոլոր անդամները, առավել ևս հայուն գոյության կենսական շահը պահանջում է սատարել այս պետության, երկրի վերածնությանը և զարգացմանը»։ (7, էջ 52, 88)։

Հրաժարվելով անկախության կամ ինքնավարության հարցադրումից, Հ. Հ. դաշնակցությունը հայտարարում էր, թե «հայ տարրը օսմանյան կայսրության շրջանակներում կարող է իրոք բարգավաճել միայն այն պայմանով, որ նրա ազատությունը կցորդվի բոլոր շրջապատող ժողովուրդների, ամբողջ Թուրքիայի ազատության և նորմալ, բնականոն առաջադիմությանը» (19, № 1, 1909, էջ 7)։ Դաշնակցության գործելակերպի համար բնորոշը այս ուղեգիծն էր, համենայն դեպս մինչև 1913 թվականը։ Նա երիտթուրքական կառավարությունից ակնկալում էր հանդիսավոր հանձնառությունների իրագործում, բոլորովին անտեսելով թուրքական իրականության սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմանները։

1909-ի հուլիսի 25-ին Կ. Պոլսի բրիտանական հյուպատոս Ջ. Բերկլին վկայում էր մայրաքաղաքի փողոցներում մահմեդականների հետ քրիստոնյաների, մասնավորապես հայերի հախուռն եղբայրացման փաստերի մասին (74, էջ 181)։ Ուոկերը գրում է, որ դաշնակներն իսկապես հավատացին, որ սահմանադրականության սկզբունքն իրականանալի է օսմանյան Թուրքիայում և մինչդեռ նրանք հավատարիմ էին այդ հույսին, հեռացան կայսրության ներքին գործերին արտաքին միջամտության անհրաժեշտության ընդունումից, դադարեցին պնդել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կատարման վրա և սեփական ջանքերին կոթնելու փոխարեն «լծվեցին իրենց թուրք գործընկերների ջանքերին։ Ուոկերն այնուհետև նման ընթացքը գնահատում է մի «խիզախ և պատմական փորձ խզվելու դարավոր, հին հայացքներից»։ Թուրքահայաստանի համար նրանք պահանջում էին լոկ ինքնավարություն, հրաժարվելով անկախությունից։ Դաշնակներն այսօր էլ անվերապահորեն հայտարարում են, թե «Թուրքիո հռչակած սահմանադրության շնորհիվ ազատ զարգացման հնարավորություններ ստեղծված էին Թուրքիո մեջ» (60, էջ 25)։

Աղանան երիտթուրքերի ձեռքի գործն էր, հաստատում է Ուոկերը, ցույց տալով երիտթուրքերի հետ դաշնակցության բանակցությունների, համաձայնությունների պրակտիկայի ողջ անօգտավետությունը (74, էջ 186—189)։ Աղանայի կոտորածից անմիջապես հետո համագործակցության մասին մի համաձայնագիր կայացվեց իթթիհադի և դաշնակցության միջև։ Մ. Սերոբյանը նշելով, որ այդ փաստաթուղթը հրապարակվել էր «Ազատամարտ» թերթում, միաժամանակ ցույց է տալիս, որ ընթերցողներից թաքցվել էր կարևորագույն կետը «ընդհանուր ձուլման և միաբան գործակցության մասին»։ Իսկ դաշնակցության տեսաբան Մ. Վարանդյանը «Հորիզոնի»

էջերում շուտով խոստովանելու էր, թե «մենք մեղանչել ենք» (62, էջ 128, 130)։

Իսկ այսօր նրանք ամեն ինչ անում են նոր սերունդներից թաքցնելու իրենց ձախորդ քաղաքականության հանգամանքները։ Կ. Սասունին հպարտությամբ արձանագրում է, թե «Հ. Հ. դաշնակցությունը ռուսական օրիանթասիոն չուներ» (60, էջ 24), թե «...Ռուսական օրիանթասիոնը մեկ կողմ թողված էր», թե իբր «հայությունը և հայ հեղափոխությունը հռչակված սահմանադրության շոյված զավակները կդառնային լայն շունչ մը քաշելով» և այլն, և այլն (57, էջ 193)։ Հենց այստեղ է թաղված շան գլուխը։ Դաշնակցությունն ընթանում էր թուրքականությանը մերձենալու ուղիով, նրա մեջ հեղափոխականություն և առաջադիմություն էր փնտրում հանիրավի, հեռանում էր ռուսական կողմնորոշման հայ ժողովրդի համար միակ ռեալ և ազգօգուտ հաստատուն ուղուց։

Դաշնակցությունն կուսակցության պարագլուխների դիրքորոշումը զուրկ էր որևէ լուրջ հիմնավորումից։ Սրանց մի մասը գոհ թուրքական պառլամենտում տեղ ունենալու փաստից, քարշ էր գալիս երիտթուրքական վարիչների ետևից, առանց որոշակի գործնական կողմնորոշման։ Մյուս մասն արդեն շուտ էր եկել երեսով դեպի եվրոպական դիվանագիտությունն ու արևմտահայկական բարենորոգումների իրականացման հույսերով տարված, ցարիզմի օգնությունն էր հայցում։ Մի աննշան մասն էլ հանգամանքների բերումով ընթանում էր դավառի կարիքներին ու պահանջներին համապատասխան, այսինքն՝ մշտապես աչքի առաջ ունենալով ինքնապաշտպանության հոգսերը։ Սակայն այս վերջին գիծը զուրկ էր հետևողականությունից, կազմակերպվածության պատշաճ մակարդակից։

Հայ ժողովրդի «կառավարական պատասխանատու ֆունկցիան» (60, էջ 28) իրականացրած Հ. Հ. դաշնակցության վարած անհեռատես, ժողովրդավնաս քաղաքականության հետևանքով «Թուրքահայաստանի և ամբողջ Թուրքիո մեջ հայությունը կրկծկվեր ինքնապաշտպանության և ինքնապաշտպանության վարագույրին ետև, սպասողական և անդեն» (60, էջ 30)։ Ահա ստեղծված իրավիճակը իր իսկ՝ դաշնակ տեսաբանի խոստովանությամբ։ Տասնյակ տարիներ անց ինչ

խոսք, որ հեշտ է «հնազանդությունը» «անխելքություն, պարզ կարճամտություն, թուրքերը խաբելու միամտություն» հռչակել և «ապստամբության» անհրաժեշտության խնդիր մեջտեղ բերել։ Իսկ այդպիսի ձեռնարկի համար Հ. Հ. դաշնակցությունը «պատրաստ չէր» (60, էջ 31)։ Հիրավի, ժամանակն ու հնարավորությունները նա ձեռքից բաց էր թողել։

Մինաս Չերազը ռուսահայ դաշնակներին հոսոս անվանեց, երբ իմացավ, որ նրանք որոշել էին երիտթուրքերի հետ կոնգրես գումարել, հայկական հարցը մի կողմ թողնել և «ամբողջ Թուրքիայով զբաղվել»։ 1908-ին Կ. Պոլսում դաշնակցական կազմակերպության ղեկավարներից Ակնունին ասում էր. «Դաշնակցության գերագույն նպատակներից մեկն էլ պիտի լինի օսմանյան սահմանադրության պաշտպանությունը..., իթթիհադի հետ համերաշխ գործակցությունը» (30, էջ 45)։

Ցարական իշխանությունների հետ կոնֆլիկտի մեջ մտած, 1905—1907 թթ. ռուսական հեղափոխությանն իրենց նպատակներով ու ծրագրերով մասնակցած դաշնակցական գործիչները խույս էին տվել բանտից ու աքսորից և հեռացել Կովկասից։ Ոմանք անցել էին Պարսկաստան, մտել պարսից ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հորձանուտը (Եփրեմ, Քեռի և բազմաթիվ ուրիշներ), մյուսները հանգըրվանել էին Կ. Պոլսում, կոնտակտներ հաստատել կամ վերահաստատել երիտթուրքերի հետ, փորձելով ակտիվորեն մասնակցել օսմանյան կայսրությունում սկսված ետհեղափոխական շրջանի քաղաքական անցուդարձին։ Հետաքրքրական է, որ այս գործում չափազանց ակտիվ էին ռուսահայ գործիչները։

Վերևում մեր հիշատակած Արամ բեյ Հալաճյանը 1912-ին ասում էր. «Մեր ազգային շահը կպահանջե իթթիհադին ուժ տալ. ան ինչքան զորեղանա, այնքան ավելի լավ։ Ան եթե զորեղ եղած ըլլար, մինչև հիմա քրդերը զսպված կըլլային և մեր հողային հարցն ալ բավարար կերպով լուծված» (56, էջ 293)։ Նրան պատասխանում էին, որ «թուրք ազգային այդ գայլին ոչ թե պետք էր ուժեղացնել, այլ նրա ատամներն այժմվանից իսկ փշրել, որովհետև նրա ուժեղացումը մեզ

Է՛լ ավելի վնասակար, է՛լ ավելի վտանգավոր պիտի լինի» (56, էջ 294)։

«Երիտթուրքերը նախ և առաջ մեզ մոտ են այն բանի համար, որ նրանք անկեղծ սահմանադրականներ են,— հայտարարում էր թուրքական պառլամենտի անդամ, հետագայում Ռուսաստան անցած Գարեգին Փաստրմաջյանը (նույն Արմեն Գարոն) ռուս լրագրող Արիադնա Տիրկովային։— Նրանք ուզում են ինչ գնով էլ լինի պահպանել Թուրքիայի ամբողջականությունը...»։ Այսպիսով, դաշնակցական գործիչը նախ հիացած էր երիտթուրքական սահմանադրականությամբ և, երկրորդ, գոհ էր, որ նրանք ձգտում են պահպանել կայսրության ամբողջականությունը (70, էջ 67)։ Այն հարցին, թե «ինչպիսի՞ն են Հ. Հ. դաշնակցության և իթթիհադի փոխադարձ հարաբերությունները», դաշնակցության ղեկավարներից Վահան Փափազյանը պատասխանել էր, թե «մենք միշտ իրարու քիրվոներ ենք» (56, էջ 275)։ Ահավասիկ հայ ժողովրդի քաղաքական ճակատագրին ուղղություն տալուն հավակնած դաշնակ գործիչների հավատամքը։

Ռոստոմ Զորյանը Լոնդոնում իր հին բարեկամին ինքնագոհ և լավատեսորեն ասում էր. «Հավատացնում եմ քեզ, թե Թուրքահայաստանի հայ ժողովուրդը 1909-ից ի վեր երբեք այնպես հանգիստ և ապահով կյանք չի ունեցել, ինչպես նոր ռեժիմի տակ։ Ես ապրեցի երկրի մեջ և տեսա։ Կարնո կուսակալը և զինվորական հրամանատարը երբեմն կանչում էին մեզ և խորհրդակցում մեզ հետ կառավարական խնդիրների մասին» (64, էջ 359)։

Հ. Հ. դաշնակցությունը իթթիհադի հետ նոր «համաձայնության» եկավ 1909-ի սեպտեմբերի սկզբին։ Դաշնակցության ղեկավարները պարտավորվում էին պաշտպանել կայսրության ամբողջականությունը, կիրառել սահմանադրությունը, ժխտում էին հայերի անկախության ձգտումը։ Կայացված «համաձայնության» մեջ կար մի կետ, ըստ որի Ադանայի ջարդը հիշատակվում էր որպես «խրատական նախազգուշացում» և խոստացվում էր գործել ձեռք ձեռքի տված (40, էջ 16)։ Սա մի վերջնագիր էր հայությանն այն մասին, որ իշխանության որևէ ձգտում, որևէ ազգային ակտիվություն հանդիպելու էր թուրքական յաթաղանի հարվածներին։

Խաժակը, դաշնակցության ղեկավարներից մեկը, ընտրական պայքարի ժամանակ Մարզվանում տեղի ունեցած մի ժողովում բացեիբաց իթթիհադին հավատարմություն էր քարոզում, նրա հետ համագործակցելու կոչ անում։ Խաժակը գտնում էր, որ «թուրք պետությունն ուժեղացնելը, իթթիհադին համագործակցելը մեզ շատ օգտակար է, որովհետև որքան նա զորանա, այնքան հեշտ կերպով կարելի է քրդերին սանձել և թույլ չտալ, որ կոտորածներ սարքի»։ Նա մեղադրում էր Սապահ Գուլյանին, որը Փոքր Հայքում ճանապարհորդելիս խանգարել էր այդ խնդրի հաջող իրականացմանը։ Դաշնակցության թերթերը նրան անվանեցին «մեծ պառակտիչ» (14, էջ 340—341)։ Վերջինս գտնում էր, որ իթթիլաֆը պետք էր օգտագործել գլխավոր վտանգի՝ իթթիհադի դեմ, իսկ ապա, անհրաժեշտության դեպքում, եթե իթթիլաֆը նույնպես ոտնահարեր հայոց ազգային շահերը, միավորվել նրա դեմ։

Տարածվեց այն մտայնությունը, թե իթթիհադը սահմանադրություն բերեց, թե հայ ժողովուրդը պիտի խմբվի նրա շուրջը, օժանդակի նրան, թե կուսակցությունների գործունեությունը դադարում է անհրաժեշտություն լինելուց։ Այս բովանդակությամբ բազմաթիվ ճառեր արտասանվեցին հայ ազգային ժողովի ամբիոններից։ Մի հռետոր ճչում էր, թե իթթիհադի դեմ խոսելը սուլթան Համիդին օգնել է նշանակում, և թե նրան «պաշտպանելը, ուժեղացնելը մեր ազգային և քաղաքացիական պարտականությունը պիտի լինի» (56, էջ 17)։ Իթթիհադից «փրկություն» ակնկալողների թիվը չափազանց մեծ էր։ Ահա թե ինչպես է մատուցում դաշնակցության ուղեգիծը այդ կուսակցության անդամ, ոմն քահանա. դաշնակցության «նպատակն էր պահել սահմանադրությունը և որի միջոցով էլ ապահովել ու հարթել հայ ժողովրդի ազգային զարգացման ու քաղաքական ձգտումների ճամփան։ Դաշնակցությունն այդ մղումն ստացավ հայ ժողովրդի ընդհանուր մտայնությունից և ինքն էլ այդ հույսով իթթիհադականների հետ անկեղծությամբ լծվեց գործի։ Այդպես էր այն օրմա հայ մտավորականության և ազգային-քաղաքական մտքի հոգեբանությունը» (28, էջ 326—327)։

Այսօր միայն ցավով կարելի է հիշել, որ հայոց քաղա-

քական ճակատագիրը լուծելուն հավակնած կուսակցություններն ու նրանց ղեկավարներն իմաստնություն չունեցան ժողովրդանպաստ որոշումներ ընդունելու գործում։ Չափից ավելի հեղհեղուկ էր նրանց ընթացքը։ Խիստ արկածախնդրական էին երիտթուրքական պարագլուխների հետ դաշնակցական ղեկավարների ոչնչով չհիմնավորված սիրախաղերը, նրանց հետ համագործակցելու գործելակերպը։

Կ. Սասունին խեղաթյուրում է իրական եղելությունները, երբ գրում է, թե իթթիհադի և դաշնակցության գործակցության դաշինքը խզված էր արդեն 1911-ի աշնանը։ Նա հեռանում է ճշմարտությունից, երբ պնդում է, թե «այդ թվականնն հետո ոչ միայն գործակցություն մը գոյություն չուներ պետական տիրող կուսակցությունների միջև, այլ, ընդհակառակը, բալկանյան պատերազմի բերումով հայկական հարցի հետապնդումն ու հաջողությամբ լուծումը թշնամական դարձուցած էր անոնց հարաբերությունները» (59, էջ 767)։ Դաշնակցությունը երբեք չխզեց կապը իթթիհադի հետ մինչև կոտորածի սկիզբը։ Նրա ընթացքը եղավ հեղհեղուկ, անհետևողական, անսկզբունքային։

Արշակ Չոպանյանը 1908-ին «Անահիտ» ամսագրում (№ 1—4, էջ 44—47) գրում էր, որ երիտթուրքերը, բացի թուրքերից, չէին ընդունելու և ոչ մի ազգի գոյություն Թուրքիայում։ Նա նշում էր, որ նույնիսկ հայի արյունով հաստատված սահմանադրությունը պետք է որպես զենք գործածվեր «հայկական դատը վերջնականապես սպանելու համար»։

Իթթիհադ—դաշնակցություն համագործակցության մասին Ս. Պարթևյանը 1908-ի փետրվարի 29-ին «Ազգ» թերթի № 46-ում գրում էր, որ Ահմեդ Ռիզան ու նրա համախոհները բոլորովին չէին հրաժարվել իրենց գաղափարներից։ Ահմեդ Ռիզան հայտարարել էր, որ իր կուսակիցները կողմնակից են օսմանի արքայատոհմի պահպանմանը սահմանադրական միապետության պայմաններում, ու թշնամիների նման պիտի վարվեն բոլոր նրանց հետ, ովքեր անջատողական դրոշ կպարզեն կամ կձգտեն վտանգել կայսրության քաղաքական միությունը և այլն։

Իհարկե, իթթիհադականների հետ հայ «ակտիվիստների»

մերձեցումը կարճ տևեց։ Իրենց դառնությունները, զրկանքները, հալածանքներն ու նահատակները մի կողմ թողած, անկեղծ հավատով երկրի նոր շենքը կառուցելուն նվիրված հայ մարդիկ տեսան, որ իթթիհադի վարիչ մարմիններն այլ գիծ են իրականացնում։ Սկսեցին հայ իթթիհադականներին ծողովների չկանչել։ Սալոնիկից պաշտոնական ցուցում տրվեց տեղական վարչությունները կազմել բացառապես իսլամներից, իսկ ոչ իսլամներին միայն համակիր անդամների դրության մեջ պահել (55, էջ 196)։

1911-ի դեկտեմբերին «Ազատամարտ» դաշնակցական թերթի խմբագիր Վռամյանը Տիրկովային ասում էր, որ Թալեաթը, Ջավիդը, Խալիլը, Նազըմ բեյը թեև տգետ են, բայց իսկական սահմանադրականներ են։ Նա խոստովանում էր, որ երբեմն հարկ է եղել ամիսներ շարունակ նրանց բացատրել ամենատարրական հասկացությունները, ինչպես, օրինակ, համեմատական ներկայացուցչության հարցի էությունը։ Նույն Վռամյանը 1912-ի գարնանը, ընտրությունների ժամանակ, երբ իթթիհադի պարագլուխներն ավելի որոշակիորեն բացահայտեցին իրենց շովինիստական էությունը, խոստովանում էին, թե «մենք սխալվեցինք. մենք նրանց համարում ենք տգետ, բայց ազնիվ մարդիկ. իրականում նրանք խաբեբաներ, քաղաքական սրիկաներ դուրս եկան» (70, էջ 79—80)։

1912-ին արդեն պարզ էր, որ «ուրիշ միջոց չկա, եթե ոչ՝ զենք, հրանյութ, ինքնապաշտպանություն, հեղափոխական գործունեություն» (56, էջ 304)։ Հարկավոր էր գործի կպնել, ժողովրդի կարող ուժերին դիմադրության ուղին մատնացույց անել։

Սակայն Իզմիրում գումարված հրապարակային մի ժողովում դաշնակցության ոչ անհայտ գործիչ է. Ակնունին (խաշատուր Մալումյան) սև գույներով նկարագրելով համիդյան շրջանը, «հայուն հոշոտված և կիսամեռ դրությունը», գովաբանում էր երիտթուրքական հեղաշրջումն ու սահմանադրությունը, թվում «բարիքները, հայուն զինվորագրության նշանակությունը և խրախուսում հայ երիտասարդությանը դիմել դեպի զորաբանակ»։ «Բոլոր տարրերի համերաշխության նոր բաց հորիզոնը, մկրտված թուրք-հայկական հեղափոխու-

թյան դաշինքով,— ոգևորված շատախոսում էր դաշնակցական գործիչը,— ոչ միայն սանձեց Ելդզի ներոնը, այլև կանգնեցրեց արտաքին միջամտության դավը— Եվրոպան հարկադրվեց կանգ առնել ու հարգանքով գլուխ խոնարհել վերածնվող կայսրության բոլոր ազգերի անխառ հափշտակության առջև» (4, 16/29. 6. 1912)։ Եվ այս ամենն ասվում էր 1912-ի հունիսին, երբ երիտթուրքերի հակահայկական ծրագրերն ակնբախ էին յուրաքանչյուրին։ Մի փոքր ժամանակ անց նրա գրվածքներում զգուշորեն հնչում էին դժգոհության նոտաներ. «Նոր ռեժիմը երբեմն տատանվող, հաճախ կասկածոտ և անկարող եղավ արմատից պոկել հին բույսը և շնորհիվ այդ երերուն քաղաքականության՝ օսմանյան ապաբախտ երկիրը շարունակում է մնալ վաթանը մեկուսացման քաղաքականության, ազգայնական և կրոնական հարաճուն պառակտման...» (4, № 106, 1912)։

Շուտով «1908-ի հափշտակվածությունը փոխանցվեց լայնածավալ դժգոհության... պետական միության գաղափարը ցնցվեց...»։ Հին թշնամությունը ցցվեց մեկ այստեղ, մեկ այնտեղ ու «նորից սկսվեց հին երգը՝ անապահովություն, արյուն, թալան, ատամների կրճտոց, քեն ու ատելություն» (4, 16/29. 6. 1912)։ Արդեն սովորական բան էր դարձել հարց տալ՝ «ի՞նչ տարբերություն կա հնի ու նորի միջև»։

Իզմիրի «Աշխատանքը» 1912-ի օգոստոսի 2-ին գրում էր. «Երկիրը պատերազմի հանդեպ. Ալբանիան ապստամբ. Մակեդոնիան հուզված. Հայաստանը հիասթափ. զորքը պառակտված...»։ Թերթը թուրքական պետությունը համարում էր «ոճիրի հայրենիք», որտեղ տարիներ շարունակ «մարդիկ ու ազգեր, աշխատանքն ու արդարությունը խեղդվեցին արյան ու ցավերի մեջ, քաշկռտվեցին զնդանից զնդան, կյանքից՝ կոտորած, օրորոցից՝ տանջարան և տանջարանից՝ դեպի գերեզման»։ Սա «ոճիրի վաթան էր» (4, 28. 7—10. 8. 1912)։

Ակնունին իր ընկերներին համոզում էր անվերապահ վստահություն տածել «իթթիհադի ղեկավարների խոստումների նկատմամբ»։ Դաշնակ ղեկավար գործիչներն անշրջահայաց կերպով երիտթուրքերի պարագլուխներին իրազեկ էին պահում իրենց ծրագրերին, տրամադրություններին։ «Դեռ հավատ ու հույս կար դրական գործ կատարելու մասին, դեռևս

ակնկալություններ կային օսմանյան սահմանադրությունից»,— այսպես էր փաստաբանում իր ավագների օգտին ոչ անհայտ Ա. Աստվածատրյանը տարիներ անց «Հայրենիք» ամսագրի էջերում (5, էջ 74—80)։ Այս հեղինակը գրում է նաև, թե դաշնակցությունը չխզեց իր բարեկամությունը իթթիհադի հետ, կարծելով, թե պիտի պահեր նաև իր իրավունքները՝ միջամտելու և գեթ որոշ չափով ազդելու իթթիհադի պետական գործունեության վրա։

Հետաքրքրական է, որ ռուսական կայսրության սահմաններում նույնպես այդ կուսակցության գործունեությունը ոստիկանության փորձագետները միևնույն ձևով են բնութագրում։ Ցարական ոստիկանության ստեղծած մի փաստաթղթում (1909. 12) կարդում ենք. «Դաշնակցությունը մշտապես ապակենտրոնացման օգտին է խոսել, բայց երբեք ոչ մի տեղ և ոչ մի բանում սեպարատ ձգտումներ չի դրսևորել. ընդհակառակը, նա միշտ ընդգծել է պետության միասնության գաղափարը և ռուսական Հայաստանի բախտը անբաժանելիորեն կապել է կայսրության ճակատագրի հետ։ Նա միշտ եղել է և այժմ էլ մնում է հակակառավարական կուսակցություն, բայց ամենևին էլ ոչ հակապետական։ Բոլոր մեղադրանքները պետական դավաճանության մասին կամ թյուրիմացության արդյունք են, կամ կանխամտածված պրովոկացիա» (43)։

Այս փաստերը ցույց են տալիս այդ կուսակցության հեղհեղուկ բնույթը, նրա խոսքի ու գործի անհամապատասխանությունը։ 1912-ի փետրվարի 7-ին «Գոլոս զեմլի» թերթը (Պետերբուրգ) նկատում էր, թե իր քաղաքական իդեալներով դաշնակցությունը երբեք չէր կապվում հեղափոխական կուսակցությունների հետ։ «Դաշնակցականներից ոմանք,— գրում էր թերթը,— Թուրքահայաստանի փրկությունը տեսնում էին ռուսական օկուպացիայի մեջ, մյուսները երազում էին ինքնավարության մասին Անգլիայի պրոտեկտորատի ներքո, երրորդները սկսեցին խոսել երիտթուրքերի հետ համատեղ աշխատանքի մասին, միակ ելքը տեսնելով իրեն իսկ Թուրքիայի պետական առաջադիմության մեջ»։ Դասակարգային տեսակետից խայտաբղետ, տարբեր պետությունների տարածքների վրա գործող, նրանց յուրահատուկ քաղաքական

պայմաններին ենթարկված այդ կուսակցության տարբեր թևերը վարում էին միանգամայն տարբեր, երբեմն իրարամերժ գիծ, մշտապես փոփոխական, իսկ երբեմն բոլորովին չպատճառաբանված։

Չպետք է մոռանալ, որ 1908—1914 թթ. իրադրությունը մշտապես փոխվում էր կայծակնային արագությամբ. 1909 թ. հակահեղափոխական հեղաշրջման պահին երիտթուրքերի կուսակցությունը նույնը չէր և նրա նկատմամբ վերաբերմունքն էլ այլ էր, քան 1912—1913 թթ. բալկանյան պատերազմների ժամանակ։ Սուլթանի ու նրա կարգերի վերականգնման վտանգը առաջադիմական, դեմոկրատական ուժերին ստիպեցին վերահաս վտանգը կանխելու համար խմբվելու իթթիհադի շուրջը։ 1911-ին իրադրությունն արդեն այլ էր։ Իտալո-թուրքական պատերազմի պահին, երբ իտալական գաղութարարներն իրենց տիրապետությունն էին հաստատում Լիբիայի վրա, թուրքական նացիոնալիստներն ատամ էին կրճտացնում բոլոր քրիստոնյաների դեմ։ Երիտասարդ թուրքերի պարագլուխները շատ շուտով ժխտեցին սուլթանի դեմ պայքարի ելած հայկական կազմակերպությունների դերն ու մասնակցությունը։ 1908-ի սեպտեմբերի 14-ին Փարիզում Ահմեդ Ռիզան ասում էր. «Մենք այսուհետև հնչակյան— Դրոշակ չենք ճանաչում և նրանց հետ խորհրդակցելու պետք չունենք, որովհետև պետության բաղկացուցիչ բոլոր ազգերն էլ կան մեր կուսակցության մեջ... ես ձեզ ասում եմ, որ եթե դրոշակիստները և հնչակիստները շարունակեն իրենց պրոպագանդան, մենք կհարձակվենք նրանց վրա և իմացած եղեք, որ նորեն պիտի ջարդվեք» (41, էջ 143)։ Թրծված երիտթուրքի այսպիսի բացորոշ հակահայկական դիրքորոշումը պետք է զգաստացներ առողջ տրամաբանություն ունեցող, ազնիվ հայրենասիրական նպատակ հետապնդող յուրաքանչյուր հայ գործչի։

Իթթիհադը մերժեց դաշնակցության պահանջած համեմատական ընտրությունը, և թուրքական պետության սահմաններում ապրող 2,6 միլիոն հայերը միայն 10 աթոռ ստացան պառլամենտում։ Տրապիզոնի նահանգի 65 հազար հայությունը չունեցավ իր երեսփոխանը։ Ուրիշ շատ վիլայեթների հայ բնակչության ներկայացուցիչները նույնպես Կ. Պոլսի

ճանապարհը չիմացան։ 1908-ի սեպտեմբերին, երբ ժողովուրդն ընտրական եռուզեռի մեջ էր, պատերին երևացին թռուցիկներ հետևյալ բովանդակությամբ. «Հայերին ու հույներին ազատություն տալը տերության կործանում է նշանակում, և օսմանյան կայսրությունն արդեն կանգնած է կործանման վիհի առաջ, ուստի իսլամի ճշմարիտ բարեկամները լուրջ կերպով պիտի մտածեն ու միջոցներ ձեռք առնեն հայերին ջնջելու և պետությունն անկումից փրկելու համար» (33, էջ 180)։

Իսկ դաշնակցության արևմտյան բյուրոն եղբայացություններ չէր անում, իր գործունեությունը շարունակում էր միևնույն հեղհեղուկ ընթացքով։ Պատահական չէ, որ Թալեաթն իր գործընկերներին բացատրում էր, որ «դաշնակցությունը մխրճված է պաշտոնական աթոռների մեջ, օսմանցիության համար վտանգավոր չի կարող լինել։ Հնչակյաններն են մեր թշնամիները, որոնց վրա էլ տեռորի սարսափով պիտի ազդել և իրենց մտադրությունն իրենց հետ մեռցնել» (13)։

Իթթիհադը «ապակենտրոնացում բառը մանավանդ չէր ուզեր լսել»։ «Ատեմի մերքեզի էրմենիստան»՝ Հայաստանի ապակենտրոնացում բառերը բավական են, որ երիտթուրքերը հարայ-հրոց բարձրացնեին։ Ահա թե ինչ էր գրում Տրապիզոնից 1908-ի աշնանը գործին մոտ կանգնած հայ գործիչներից մեկը. «Եթե Պոլսո մեջ իթթիհադը շատ սիրով կվարվի ձեզի հետ, նկատի ունեցեք, որ գավառներու մեջ հարաբերությունները թշնամական են. մեր հարաբերությունները իթթիհադի հետ գրեթե գոյություն չունեն և հետզհետե կթուլանան» (33, էջ 179)։

Երբ թուրքական թերթերում գրում էին, թե 61-րդ հոդվածի կիրառությունը բացառվում է, սպառնում էին, թե չէին ներելու այդ բարենորոգումների վրա պնդողներին, ապա պարզ էր, որ իթթիհադի հետ համագործակցելն անհնարին էր։ Իթթիհադականներն ասում էին, թե բարենորոգումները պետք է կատարվեն ամբողջ երկրի համար, իսկ հայերը պետք է օգտվեն ընդհանուր բարվոքումի քաղաքականությունից։ Այսինքն՝ ժխտվում էր ազգային հարցի իսկ գոյությու-

նը կայսրության սահմաններում, հայոց հարցի առկայությունը։

Ինչ խոսք, որ երիտթուրքերի հետ համագործակցությունը ստիպողական պայմաններում կատարված հնարավոր տակտիկական քայլերից մեկն էր, լավատեսական, բայց և անհիմն հույսերով։ Բայց բոլոր դեպքերում այն չէր բխում արևմտահայության արմատական շահերից։ 1909-ի հունվարին Հ. Հ. դաշնակցության Տրապիզոնի կազմակերպության շրջանային ժողովում ընդունված բանաձևը վկայում էր այդ բանը. ընդունված որոշման մեջ շեշտվում էր թուրքական սահմանադրության պոչատությունը, որ այն «չի կրնար տալ լիակատար բավարարություն մեր պահանջներուն»։ Բանաձևի բ. կետում ասված էր. «Ընդունելով, որ իթթիհադը բուրժուական կազմակերպություն է, որ նա իր ներկա ծրագրով և գործունեությամբ կըժխտե հպատակ ազգերու ինքնորոշման իրավունքը, այնուամենայնիվ, հնարավոր կգտնենք ներկա բացառիկ պայմաններուն մեջ որպես ընդդիմադիր տարր հանդես միապետության, գործակցել անոր հետ որոշ գործերու մեջ, ժամանակավորապես տեղական պայմաններուն հարմարվելով» (33, էջ 185—186)։

1909-ին Հ. Հ. դաշնակցությունը նպատակահարմար էր համարում սահմանադրության ապահովման համար տիրող անարդար կարգերի դեմ պայքարել պառլամենտական միջոցներով։ «Նախկին տակտիկան ժամանակավորապես կդադարի», այսինքն՝ զինված պայքարի մեթոդներին դադար էր տրվում (33, էջ 186)։ Այդ կուսակցության ղեկավարներն էլ խորհում են կապի մեջ մտնել օսմանյան ազատական Ահրար (իթթիլաֆ) կուսակցության հետ (33, էջ 186), որը հանդես էր գալիս ոչ թուրք ազգերին ապակենտրոնացում շնորհելու պահանջով։

Ս. Վրացյանը, Ռ. Զարդարյանը, Ռ. Դարբինյանը և այլք մոռացած իրենց երեկվա «հեղափոխական» գործունեությունը, հակաթուրքական գործողությունները՝ սուզվել էին թուրքական նոր պետականության վերափոխման, վերաշինման հոգեբանությունը։ Առաջինը դպրոցական սիստեմը բարեփոխելու գործն էր պրոպագանդում, Ռ. Դարբինյանը «Ազատամարտի»

էջերում Թուրքիայի տնտեսական կյանքի վերանորոգման իր դեղատոմսն էր առաջարկում։ Նա գրում էր. «Հայերուս երկարատև պատմության կարմիր գրքին մեջ 1908 և 1909 թվականները անջնջելի պիտի մնան» («Ազատամարտ», № 26, 1911, հունվարի 10/23)։ Այնուհետև՝ «Այսօր թուրքահայը իր վրայեն մեկ կողմ նետած բռնակալության մղձավանջը, որ ամեն բան կմահացներ, ձեռնարկեր է նորոգելու իր կյանքը բոլոր»։

Միքայել Վարանդյանը «Ազատամարտ» շաբաթաթերթի 18/1 հոկտեմբերի 1911 թ. № 10 (62)-ում «Հայ մտավորականությունը, իր գործը ներկային և անցյալին մեջ» դասախոսության մեջ՝ կարդացված Սկյութարիում (11. 9. 1911), գաղափարական մտավորականությանը կոչ էր անում «լինել արևմտյան գաղափարի ջահակիր, լինել համաօսմանյան վերածնության առաջապահ»։ Նա նույնպես գտնում էր, որ «կովի մի նոր շրջան է սկսվում օսմանյան կայսրության մեջ, մի նոր դարագլուխ»։

«Ազատամարտ» թերթում (№ 7, 23/5 օգոստոսի 1910) «Վերագնահատման փորձեր» առաջնորդող հոդվածում Ռ. Դարբինյանը չէր կարող չնկատել, որ «կարճ ժամանակաշրջանին մեջ» «տակնուվրա» էր եղել «հանրային կյանքը», առաջացել էր արտասովոր խառնաշփոթություն, անորոշություն, տատանում մտքերու և կարծիքներու, քան մշակել հստակ ըմբռնում մը հեղաշրջված ու հեղաշրջվող երևույթներու, ճշգրիտ գիտակցություն մը նոր բարքերու, նոր արժեքներու» (էջ 5)։

Լեփսիուսը նույնպես ուշադրություն է դարձնում երիտթուրքերին դաշնակցականների հավատարմության փաստին։ «Կարելի չէ հավատալ, թե ինչպես սերտ էին հարաբերությունները հայ ակումբների և երիտասարդ թուրքերի միջև»,— գրում է նա (27, էջ 246)։ Հիվանդ Ակնունուն այցելում էին Թալեաթն ու Ջավիդը, դոկտոր Նազըմն ու Էսմեր Նաճին։ Վերջինս ամեն շաբաթ «Ազատամարտ» թերթի խմբագրություն էր այցելում։ Սա նա էր, որ հետո ուղարկվեց Էրզրում դաշնակցության III համագումարին մասնակցելու, հայերին դեպի թուրքական կողմնորոշումը մղելու առաքելությամբ։ Լեփսիուսը գրում է, որ երիտասարդ թուրքերի ղեկավար գոր-

ծիշներից ոմանք իրենց կյանքով պարտական էին հայ գործիշներին։ Նա հիշատակում է այն դեպքը, երբ հետադիմական հեղաշրջման ժամանակ արտաքին գործերի մինիստր պատսպարվել էր Զոհրապի տանը և փրկել իր կյանքը (27, էջ 244)։ «Իրողություն է նույնպես,— գրում է Լևոն Զորմիսյանը,— որ դաշնակցական հայտնի ղեկավարներ մտերմական, բարեկամական հարաբերություններ կմշակեին իթթիհադի նույնպես հայտնի ղեկավարներու և նախարարներու հետ» (51, էջ 59)։

Մեր հիշատակած Աստվածատրյանը այսպես է մեկնաբանում. «Հ. Հ. դաշնակցությունը, որ չէր ձգտում անջատման Թուրքիայից, այլ ձգտում էր Թուրքիո բոլոր ժողովուրդների քաղաքական ազատության, օգտագործելով հնարավոր բոլոր պայմանները երկրի առաջադեմ տարրերի հետ համագործակցություն առաջ բերելու համար»։ «Թուրքերու հետ լեզու գտնելու բոլոր փորձերն ու միջոցները սպառված էին. սահմանադրական Թուրքիան հայերի հանդեպ իր վարած քաղաքականությամբ նույնն էր, ինչ որ էր սուլթանական Թուրքիան։ Այնուամենայնիվ, հայերը չէին մտածում անջատվելու մասին, այլ միայն բարենորոգումների մասին. բայց որովհետև օսմանյան կառավարությունը, միապետական թե սահմանադրական, մարդկային այդ իրավացի ու արդար ձգտումներին պատասխանում էր հալածանքներով ու ջարդերով, ուստի հայերը դիմեցին արտաքին միջամտության» (6, էջ 40)։ Դա 1912-ին էր։ Կորսված էր չորս տարի, կորսված էին դիմադրություն կազմակերպելու չափազանց կարևոր հնարավորությունները։ Այժմ արդեն դաշնակցության Կ. Պոլսի կենտրոնական մարմինը շրջաբերական նամակում իր տեղական կազմակերպություններին ինքնապաշտպանության կոչ էր անում, շեշտելով, որ «շարժումը չկորսնցնե իր հանրային, համապետական բնույթը», խնդիր էր դրվում «աշխատել կռվին տալ անկուսակցական ու արտազգային կերպարանք» (49, էջ 182—183)։ Չպետք է մոռանալ, որ դաշնակցությունն իթթիհադի հետ ունեցած հարաբերությունների հարցում միասնական չէր։ Սա այդ կուսակցության բնորոշ գիծն էր։ Գավառի մարդիկ, կյանքը ճանաչող կուսակցականները, երիտթուրքերին վստահություն չտածելով, սեփական ժողովրդի

ազատագրության գործը ղեկավարելու դիրքում էին։ Բայց իթթիհադն էլ քնած չէր։ Երիտթուրքական քաղաքական ոստիկանությունը գործի էր անցել և ուշադիր հետևում էր իթթիհադին ընդդիմադիր ինչպես Թուրքական կազմակերպությունների (իթթիլաֆ, Սապահէդդին), այնպես և դաշնակցության ու հնչակի խոսքին ու գործին։

Այնուամենայնիվ, չնայած երիտթուրքերի հակահայկական կեցվածքին, արևմտահայության վերնախավը գերադասում էր սահմանադրական կարգը, սարսափում հին տենդենցների աշխուժացումից, Աբդուլ Համիդի ժամանակների կոտորածներից։ Ունևոր դասակարգերը պետական կարգապահություն, կապիտալի ու ունեցվածքի ապահովություն էին փնտրում ավանդական Թուրքականությունից պաշտպանվելու համար։ «Հեղափոխություն, ապստամբություն մի արեք, դա շատ վնասակար է. իսկ եթե կանեք՝ դեթ ծովեզրյա քաղաքների, Կ. Պոլսո մեջը մի արեք, որովհետև մեր վաճառականությունը խանգարվում է...» (56, էջ 48)։ Այսպես էին դատում փողատեր մարդիկ։ Զենք, ինքնապաշտպանություն, կազմակերպվածություն՝ այսպիսի կոչերը տեղական հաջի աղաներին սարսափահար էր անում։

«Ադանայեն ետ ալ ՀՀԴԿ-ը շարունակեց անկեղծորեն գործել օսմանյան պետականության նշանակին տակ, վասնզի նոր ի նորե համաձայնություն մը կայացած էր անոր և իթթիհադի միջև։ ՀՀԴԿ-ը այս համաձայնության ապավինելով՝ մեկ կողմ կդնե բոլոր զինվորական ու ռազմական գործունեությունները Թուրքահայաստանի և Թուրքիո մեջ և կանցնի ռազմական գործերու նախ Պարսկաստանի մեջ մինչև 1912, և ապա՝ Բուլղարիո մեջ» (65, էջ 295)։

Այստեղ ամեն ինչ ասված է պարզ և որոշակի։ Դաշնակցությունը շարունակեց համագործակցել իթթիհադի հետ նույնիսկ Ադանայից հետո։ Ինչո՞ւ։ Որովհետև չուներ որոշակի քաղաքական գիծ, ծրագիր, նպատակ։ Եթե այդ կուսակցության խնդիրն Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր Թուրքական լծից, ապա ինչո՞ւ էր դադարեցրել զինվորական գործը, ինչո՞ւ էր կռվի մեջ մտել Պարսկաստանում։ Մի կողմից, համագործակցություն իթթիհադի հետ, մյուս կողմից, Բուլղարիայում, բալկանյան առաջին պատերազմի ժամանակ,

Անդրանիկի ջոկատի միջոցով կռիվ նրա դեմ։ Իսկ ռուս հեղինակ Գոլոբորոդկոն հիշատակում է այն փաստը, որ դաշնակցությունը իթթիհադական կոմիտեին նույնիսկ խոստացել էր 40 հազար կամավոր հայ զինվոր տրամադրել բալկանյան պատերազմի ճակատին (67, էջ 185)։

Կ. աղան գոկտոր Նազըմին մշտապես ֆինանսավորում էր դրամով, իսկ ազգային պետքերին ոչ մի կոպեկ չէր ուզում տալ։ Սապահ Գուլյանը նկարագրում է այս աղայի խայտառակ վարքագիծը, նշում զենքի համար փող չտալու, խաբելու փաստերը (56, էջ 63—69)։ Սրանք հիշեցնում են Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերի» Կարապետ բեյ Երեմյան մեծահարուստին. «...ծնած է 1830-ին։ Կազմով բարեձև, սև աչքերով և սև ընքուիներով մարդ մը։ Մզկիթ մը շինել տված է»։

Դաշնակցությունը, մի կողմից՝ համագործակցում էր իթթիհադի հետ, մյուս կողմից, որոշել էր «բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով ընկնել հայկական հարցի դիվանագիտական հորձանուտը և արագացնել նրա զարգացումը» (52, № 22, 1917)։

Թուրքահայաստանի ազատագրումից բացի այլ գաղափարներ որդեգրելով, ուրիշ երկրների քաղաքական, հեղափոխական անցուդարձին մասնակցելով, դաշնակցությունը հեռացավ իր իսկ հռչակած բուն նպատակից։ Հրաժարվելով դավադրական, ինքնապաշտպանական գործունեությունից Թուրքահայաստանում, ինչպես ասում է Վարանդյանը, «ֆիդայիներու ու քաջերու փաղանգը զենքերը վար կրդնե»։ Մի՞թե Արևմտյան Հայաստանը ազատագրված էր, մի՞թե հայության դահիճներն անհետացած էին։ Փոխանակ ուժ հավաքելու, կազմակերպելու, ընդդիմադրելու ոգի զարգացնելու, ասպարեզ եկավ հարմարվելու, քարշ գալու ուղին։ Ոմանք ասում էին. «Քանի որ սահմանադրությունից օգուտ չկա, իթթիհադը սուլթան Համիդի շարունակությունն է, հայերին պետք է գաղթեցնել Ամերիկա, նաև Աֆրիկա»։ Այսպես մտածողները, ինչ խոսք որ դեմ էին զինվելու, սեփական ինքնապաշտպանությունը կազմակերպելու հարցադրումներին։

Արշ. Զորաբյանը նկատել է, որ դաշնակցությունը մերձեցավ երիտթուրքերի հետ «ոչ թե սահմանադրական հիմունք-

ներով Թուրքիայի վերածնության համար։ Իսկ և իսկ հակառակը։ Նա, ճիշտ է, պաշտպանում է երիտասարդ թուրքերին, բայց այդ միայն նրա համար, որպեսզի նորից չհաղթանակի հին ռեժիմը, որովհետև նա հավատացած էր, որ նոր կարգի մեջ նա կկարողանա իր ազգայնական իդեալներն իրականացնել» (52, № 6, 1917)։ Բայց մի՞թե հնարավոր էր թուրքացման պաշտոնական պայմաններում «ազգայնական իդեալնե, իրականացնել»։

Երիտթուրքերը, մի կողմից, ջնջում էին հայկական ռեֆորմների հարցը, մյուս կողմից, հայերի աջակցությունը խնդրում, նրանց խոստումներ տալիս։ Արտաքնապես նրանք հայ քաղաքական-հասարակական գործիչների բարեկամներ էին ներկայանում, նրանց համոզում հրապարակավ պաշտպանել կառավարությանը ինքնուրույն բարենորոգումներ իրականացնելու մարզում, հրաժարվել օտարերկրյա միջամտությամբ բարենորոգումների գաղափարից։ Իսկ երբ վրա հասավ Բալկաններում թուրքական վերջին ամրոցները խորտակելու պահը, երբ Ռուսաստանի ու Եվրոպայի օգնությամբ արևմտահայության վիճակի բարելավման, բարենորոգումների իրականացման, հայոց ինքնավարության խնդիրը նորից դիվանագիտական սեղանին դրվեց, երիտթուրքական հակահայկական նացիոնալիզմը հասավ իր գագաթնակետին։

Այս վերընթացի ու վայրընթացի շրջանում դաշնակցության գործունեությունը որոշակիորեն զուրկ էր հետևողականությունից ու տրամաբանությունից։

Հ. Հ. դաշնակցության է ընդհանուր ժողովը, որ գումարվեց 1913-ի ավարտին Մեծ Հայքում՝ անլեգալ պայմաններում, իր ընդունած բանաձևերում անդրադարձավ Հայաստանի բարենորոգումների, իթթիհադի նկատմամբ կուսակցության ունենալիք դիրքորոշման և այլ խնդիրների։ Ընդհանուր ժողովը պահանջում էր ճշտել այն «նվազագույն պահանջները», որոնց իրագործմանը պետք է սիստեմատիկորեն հետևեին կուսակցության բոլոր կենտրոնական մարմինները ոչ միայն եվրոպական դիվանագետների և թուրքական կառավարության մոտ, այլև Հայաստանի մեջ» (4, № 47, 1913)։

Համագումարում արդեն նշվում էր, որ իթթիհադը, հակառակ բազմաթիվ խոստումներին, չգոհացրեց հայերի տար-

բական պահանջները (անդորրությունն ապահովող երաշխիքներ, հողերի շուրջը վեճերի լուծում, կրթական գործի կարգավորում և հարգում, հայերի համեմատական ներկայացուցչությունը պետական մարմինների մեջ)։ Նա ապակենտրոնացման սկզբունքն ընդունեց միայն ձևականորեն, իսկ իրականում «պետությունն իբրև խարիսխ կընդունի իսլամ տարրերի առանձնաշնորհյալ դիրքը», որը չէր ապահովում հայ ժողովրդի «իրավահավասար և անկաշկանդ զարգացումը», «բաղկացուցիչ ազգերի միջև համերաշխությունը», որ այդ կուսակցության հետ համագործակցությունը պատասխանատու է դարձնում դաշնակցությանը օսմանյան կառավարության «ձեռնարկներին»։ Որոշվեց «արդեն առաջադրված պահանջների ամբողջական իրագործումը հետապնդել անկախորեն, պահանջելով բարեկամական հարաբերություններ, անհատապես կամ հավաքաբար», «հրատարակության տալ իթթիհադի հետ դաշնակցության հարաբերությունների խզման մանրամասն պատմությունը, վավերագրերով հանդերձ» (4, № 47, 1913)։

Ինչպես նկատում է ընթերցողը, խզումը տակավին վերջնական չէր։ Սողանցք էր թողնվում, բայց անհասկանալի էր, թե ինչու։ Իսկ ընդհանրապես, թանկարժեք ժամանակը կորսված էր, ժողովրդի ինքնապաշտպանության գործը թողնված էր ինքնահոսի։

Թուրքական գործերում ավելի ու ավելի ակտիվ դեր կատարող գերմանացիները ցանկանում էին օսմանյան պետության ներքին հարց դարձնել հայոց հարցը և նրան լուծում տալ հայ-թուրքական բանակցությունների միջոցով։ Այս նպատակով 1913-ին հանդիպումներ տեղի ունեցան Թալեաթի, Խալիլի, Ֆեհմիի և Գրիգոր Զոհրապի, Շահրիկյանի և Վարդգեսի միջև։ Այնուհետև Թալեաթն առանձին հանդիպումներ ունեցավ Հալաջյանի հետ, որն այն ժամանակ երիտթուրքական կառավարության անդամ էր։ Թալեաթը նրանից պահանջում էր հայ գործիչներին համոզել հայկական հարցը վերցնել միջազգային գետնի վրայից։ Հալաջյանը պատասխանում էր, որ այդ բանն իր ուժերից վեր է, բայց խոստանում էր նպաստել հարցին «միջազգայնության ամենաթույլ

ձևն ընդունել տալու», եթե երիտթուրքերն ավելի ուշադիր վերաբերվեն խնդրին (37)։

Հայկական հարցի շուրջը միջազգային ասպարեզում կրքերի բորբոքումը ստիպում էր Թալեաթ բեյին, Օսման Նիզամի փաշային և իթթիհադի ազդեցիկ անդամ Յոմեր Նաջի բեյին ավելի մոտիկից զբաղվելու հայոց պահանջներով։ Սակայն նրանք ավելի շատ ձգտում էին տեղեկանալ հայոց պլաններին, ծրագրերին, քան պոզիտիվ դիրք բռնել հայոց բարենորոգումների խնդրում։

Մարդիկ շարունակում էին հնարավոր համարել «քաղաքականություն խաղալ երիտասարդ թուրքերի հետ»։ Հալաճյանը, Գր. Զոհրապը, Վ. Փափազյանը, Գ. Փաստրմաճյանը անհիմն շարունակում էին հույսեր փայփայել հայոց բարենորոգումների շուրջը զրույցներ վարելով երիտթուրքական ղեկավար գործիչների հետ (48, № 6, 1914)։ Թալեաթը հայ գործիչներից պահանջում էր Պողոս Նուբարին ետ կանչել Եվրոպայից, դադարեցնել բանակցությունները տերությունների կառավարությունների հետ (39)։ Գրիգոր Զոհրապն ասում էր. «Ոչ ոք ինձի չափ խստությամբ, երբեմն անգութ կերպով, մատնանիշ ըրած է իթթիհադ կուսակցության թերիները, բայց պատճառ մը չէ ասիկա, որ չճանչնանք անոր ազատական հիմքերը։ ...Մի մոռանաք, որ իթթիհադը կառավարական կուսակցություն է։ Եթե նույնիսկ զգացումներս այն կողմը չի մղեր զմեզ, մեր ազգային մասնավոր շահերը անոնց հետ համերաշխ գտնվելու պիտի պարտավորեր զմեզ» (2, էջ 218)։

«Պատմական ամենամեծ սխալը, որ Հ. Հ. դաշնակցությունը գործեց, դա այն պայմանագրությունն էր, որ Ադանայի կոտորածից անմիջապես հետո նա կնքեց իթթիհադի հետ, նրա հետ համաձայնելով, համագործակցելով։ Դրանով իթթիհադը հայերի մեջ ոչ միայն մշտական մի նեցուկ ունեցավ, այլ ծանրացավ հայության վրա և իր ուղղակի անել չկարողացածը դաշնակցության ձեռքով, նրա միջոցով արեց» (56, էջ 108)։

1913-ի դեկտեմբերին, բարենորոգումների շուրջը բանակցությունների ժամանակ Ջեմալ փաշան գիշերով իր մոտ է հրավիրում դաշնակ գործիչ Վարդգեսին (հետագայում սպանված երիտթուրքերի ձեռքով) և ասում. «Եթե դուք պնդեք

եվրոպական հսկողության վրա, մենք ստիպված պետք է ընդունենք, բայց դրա հետևանքն այն կլինի, որ այդ վեց վիլայեթների մահմեդական բնակչությունը ոտքի կելնի, և 300—400 հազար հայ կկոտորվի։ Ռուսներն առիթից օգտվելով կգան և կգրավեն այդ նահանգները» (31, № 2, 1922, էջ 41)։ Սրան պատասխան է տրվում, թե կոտորածներ սարքելու դեպքում Հ. Հ. դաշնակցությունն իր գործունեությունը կծավալի Կ. Պոլսում, պատժելով կոտորածների պատասխանատուներին (12, էջ 191—192)։

«Ադանայի կոտորածից հետո հայ հեղափոխականները, անխտիր բոլոր կուսակցությունները միաժամանակ պարտականություն ունեին անմիջապես գործը սկսել, կտրուկ դիրք բռնել և գլխավոր պատասխանատուներին, գեթ, օրինավոր պատժով պատժել։ ...Սակայն հայ հեղափոխականները չշարժվեցան, լուռ մնացին, աչք փակեցին, չտեսնելու, չիմանալու տվեցին»։ «...Ու հայ հեղափոխականը տեսնում, լսում, լռում էր։ Այդտեղ էր, այդ օրվանից էր, որ կատարվեցավ մեծ և անդարմանելի սխալը։ Հայ բոլոր կուսակցությունները դրա համար պատասխանատու են» (56, էջ 99—101),— եզրակացնում էր Սապահ Գուլյանը։

Իթթիհադը դաշնակների միջոցով հարվածեց հայ պատրիարքարանին, դրանով իսկ հեգնելով, ծաղրելով ազգային տարրական իրավունքները։ Երիտթուրքերը ձգտում էին ցույց տալ, թե որպես հայ ազգի միակ ներկայացուցիչ ճանաչում էին դաշնակցությանը։ Վերջինս էլ շոյված այդ թուրքական խաբեությունից, հանուն մի քանի եպեսկոպոսական տեղերի, հանուն մի շարք պետական շահավետ պաշտոնների, մոռացության էր տալիս ժողովրդի ազատագրության գործը, ազգի ցավերն ու շահերը։ «Ո՞վ էր հայ ազգի գոյությանն սպառնացողը... Իթթիհադը։ Իսկ դաշնակցությունը ոչ միայն չէր ընդդիմանում նրան, այլև համագործակցում էր նրա հետ, իր գործելակերպով «մեծապես նպաստում», «զորավիգ հանդիսանում Իթթիհադի ուժեղանալուն, ամրապնդվելուն», ինչը «կործանարար եղավ» մեր ժողովրդի համար։ «Գայլի ուժեղացման մեջ դաշնակցությունը շատ մեծ պատասխանատվություն ունի. սա անուրանալի փաստ է և ոչ մի պատճառաբանությամբ չի կարելի արդարանալ» (56, էջ 109—110)։

Դաշնակցական—երիտթուրք համագործակցության մասին բերենք ևս մեկ օրինակ։ 1913-ի վերջերից մինչև 1914-ի մայիսը Բիթլիսի վիլայեթում (Մուշը, Սասունը նույնպես մբռնում էին այդ նահանգի մեջ) քրդական ապստամբություն էր ծավալվել Սայիդ Ալիի և Շահաբեդդինի գլխավորությամբ։ Պատմաբան Հարություն Թուրշյանն ապացուցում է, որ այդ շարժումը հրահրվել էր իրենց իսկ երիտթուրքերի կողմից, Ռուսաստանին և Արևմտյան Եվրոպային ցույց տալու, թե խզուր են դիվանագիտության ջանքերը հայոց բարենորոգումներ մտցնելու շուրջը, քանի որ այդ շրջաններում տիրապետողը մահմեդական զանգվածն է, տիրապետող ուժը քրդերն են։ Քրդական ապստամբների հետ բանակցելու նպատակով երիտթուրքական կառավարությունը քրդերի կողմից գրավված Բիթլիս է ուղարկում դաշնակցության արևմտյան բյուրոյի անդամ, թուրքական պառլամենտի անդամ, Վանի դաշնակցական կազմակերպության ղեկավար Վռամյանին։ Թե ինչով ավարտվեց նրա առաքելությունը մեզ հայտնի չէ, բայց որ նա գնաց երիտթուրքերի հանձնարարությամբ, դա փաստ է։ Երբ ժամանակը հասավ, 1914-ի մայիսին թուրքական կանոնավոր բանակը վերագրավեց Բիթլիսը, ցաքուցրիվ արեց ապստամբության մասնակիցներին, կախաղան բարձրացրեց նրա ղեկավարներին (25, էջ 105)։

Երբ 1914-ի նոյեմբերին Թուրքիան «ջիհاد» հայտարարեց Ռուսաստանին, բոլոր քուրդ ցեղապետերին ու շեյխերին խոստացան ներում շնորհել ապստամբությանը մասնակցելու համար, պայմանով, որ նրանք կռվի ելնեին անհավատների դեմ։ Սրանք բոլորն էլ պասսիվ դիրք բռնեցին, բացի Բըշարե Ջաթոյից (Հայ հայդուկների ձեռքով գլխատված Բըշարե Խալիլի որդին), որը պայման դրեց ռազմաճակատ մեկնելու ճանապարհին հայերից լուծել հոր վրեժը։ Ահա այս ավազակին երիտթուրքական հրեշները բաց թողեցին Ախլաթի, Ալջևազի, Արճեշի հայ գյուղացիների վրա։ Հայոց շեները քանդվեցին, բնակիչները կոտորվեցին։

Երվանդ Օտյանը 1914 թվականին Կ. Պոլսի «Ժամանակ» թերթում ծաղրում էր դաշնակցության ղեկավարներից Ակնունուն, որը «միշտ դեպի երկիր է հանկերգում, առանց ինքն այն տեսնել ուզելու, նման է մի ժամկոչի, որը զանգակ է

հնչեցնում հավատացյալներին եկեղեցի հրավիրելու, բայց ինքը ներս չի մտնում և աղոթքին չի մասնակցում» (21, էջ 332—333)։

Երբ երիտթուրքերը մերժեցին հայոց պատրիարքարանի, թուրքական պառլամենտի հայազգի երեսփոխանների կողմից տնտեսական բարեփոխումների նպատակին ուղղված առաջարկություններն ու ծրագրերը, երբ ջուրը թափվեցին նրանց բոլոր պատրանքները, հայոց առաջնորդները նորից կանգնեցին Եվրոպայից օգնություն ակնկալելու դիրքերում (72, էջ 50)։ Հ. Հ. դաշնակցության արևմտյան բյուրոն, ս.-դ. հնչակյան կուսակցության Տաճկաստանի կենտրոնի վարիչ մարմինը, սահմանադիր ռամկավարներու կեդրոնական ակումբը և վերակազմյալ հնչակյան կենտրոնի վարչությունը 1913-ին Կ. Պոլսում մի հայտագիր հրապարակեցին, որտեղ խոստանում էին միասնաբար գործել «հայկական բարենորոգումների իրականացման համար, համերաշխորեն ընթանալ երեսփոխանական ընտրությունների և պառլամենտական խնդիրների մեջ»։ «Այլևս ոչ մեկ երկդիմություն, ոչ ալ քայքայիչ հոռետեսություն»,— խոստանում էին նրանք։— «Հարգանք միջկուսակցական համագործակցության», «հարգանք հայ ժողովրդին, որին պիտի ծառայեն բոլոր կուսակցությունները» (49, էջ 187—188)։ Այս բազմախոստում հայտարարություններից իհարկե բան դուրս չեկավ։ Գործնականում համագործակցություն, փոխվստահություն չհաստատվեց։

«Մեր գործունեության ծանրության կենտրոնը պետք է լինի տաճկահայ ժողովրդի ինքնապաշտպանությունը»,— 1913-ի մարտին ուշացած գրում էր «Հորիզոնը» (34, № 65, 1913)։ Ի դեպ նշենք, որ պատասխանատու պահին հայոց պարբերական մամուլը մնաց անգույն, անջիղ և անսկզբունք։ Նա չառաջնորդեց հայ ժողովրդին հասարակական կարծիք կազմելու և ինքն էլ խառնափնթորություն տարածող հանդիսացավ։ Նրա էջերում տպագրված շատ ու շատ լուրեր, նյութեր ավելի վնաս, քան օգուտ տվեցին։ 1912—1913 թթ. սկսած մամուլի էջերում նորից վերականգնվեց հին մտայնությունը, թե Ֆրանսիան, Անգլիան կամ ցարական Ռուսաստանը պետք է օգնություն կազմակերպեին, իրենց դրա-

մը, զենքը տային, բանակ շարժեին, գային և հայոց ազատեին թուրքական լծից։

Սապահ Գուլյանը նկարագրել է իր մի հանդիպման մանրամասները թուրքական ծառայությանը զինվորագրված մի հայ խմբագրի հետ։ Նա թուրքական թերթ էր խմբագրում։ Մերժելով տպագրել Սապահ Գուլյանի թուրքական պետական կազմի, ազգերի զոյության իրավունքի և այլ խնդիրների մասին գրված հոդվածները, նա չէր թաքցնում, որ ինքը կանգնած է թուրքական շահերի պաշտպանության դիրքերում։ Նա ասում էր, որ հայերին պետք է «թուրք ձևանալ, թուրք ըլլալ, թուրք հոտիլ, մինչև որ Մոսկով քեռին գա, այս ափերը տիրե, այն ատեն է, որ բոլորս ալ հայ կըլլանք, հայու պես կխորհինք, կգրենք, կգործենք...» (56, էջ 97)։

Զափազանց ուշ՝ 1914-ի հուլիսին, իրենց VIII համագումարում դաշնակները որոշեցին «տեղական անվտանգության երաշխիքների համար» գաղտնի կերպով զինել բնակչությանը։ Զինվորական ծառայության մասին ասվում էր, որ պետք է ընդհանուր առմամբ ենթարկվել օրենքին, բայց խուսափել, շրջանցել այն (45)։ Նույն համագումարում որոշվեց Արևմտյան բյուրոն դուրս տանել Կ. Պոլսից։ Կ. Սասունին չի թաքցնում, որ Էրզրումի համագումարի շրջանում դաշնակցությունը «կատարյալ երկվության» մեջ էր գլխավոր հարցը լուծելիս (58, էջ 21)։

Երիտթուրքերը հայերին սպառնում էին չմիանալ, չգործակցել Ռուսաստանի հետ, այլապես «մենք տաճկահայերին իսպառ կջնջենք, կփոշիացնենք» (15, էջ 586)։ Այս պահանջը հատկապես խիստ դրվեց 1914-ին՝ Էրզրումի դաշնակցական համագումարի առջև։ Այստեղ հայերը փորձում էին երիտթուրքերին խելք սովորեցնել, խրատելով նրանց հեռու մնալ պատերազմին մասնակցելուց։ «Մենք մեր անելիքի մասին չենք եկել ձեզ հետ խորհրդակցելու,— վրդովված պատասխանում էին երիտթուրքերի բանագնացները։— Եվ սպասում ենք ձեր այո կամ ոչ պատասխանին. դուք կամ մեզ հետ միացեք, կամ չեզոք, լոյալ մնացեք» (15, էջ 588)։

1914-ին երիտթուրքերը հայերին առաջարկեցին «անպատիվ դաշնագրություն մը. անոնք առաջարկեցին միանալ թաթարներուն հետ ու ոտքի կանգնել ռուսներուն դեմ, և

փոխարենը Դուռը հայերուն պիտի տար ինքնօրինություն մը։ Գերմանիա կերաշխավորեր իր դաշնակցին այս առաջարկությունը։ Պետք է ըսել, որ հայերը պատասխանեցին սրտմտած մերժողականով մը։ Եվ երիտասարդ Թուրքերու պաղարյունորեն կանխամտածված և նախապես հայտարարված վրեժխնդրությունը սոսկալի եղավ» (3, էջ 154)։

Թալեաթը Հալաջյան էֆենդու բնակարանում հայ գործիչների հետ ունեցած տեսակցության ժամանակ պահանջում էր հրաժարվել բարենորոգումներից, Ռուսաստանի վրա հույս դնելուց (23, էջ 55)։ Երիտթուրքերը չափազանց դժգոհ էին հայերից, որոնք հույս էին կապում Պետրոգրադի հետ, հրաժարվում էին հակառուսական խռովություններ սարքել Անդրկովկասում (68, էջ 153—154)։

Կ. Սասունին գրում է, թե պատերազմի նախօրյակին Հ. Հ. դաշնակցությունը «համբերության և խոհեմության ճամփան բռնած էր», հնազանդ էր կարգադրություններին, պատրաստ էր զոհել ամեն ինչ, «ֆիզիկական գոյությունը պահպանելու համար, մինչև որ փոթորիկը անցնի»։ «Հայ պաշտոնական շրջանակները, Պոլիսեն մինչև հեռավոր գավառները, հնազանդության, համբերության և խոհեմության հորդոր կկարդային հայ ժողովրդի գլխին...» (59, էջ 712—713)։ Իսկ ո՞ւր մնաց, ինչո՞ւ կորսվեց ազատագրական կռվի ոգին։ «Հ. Հ. դաշնակցության գերագույն մարմինը նույնպես իր շրջաբերականները կներկայացներ պատրիարքարանի պաշտոնական թուղթերուն՝ հավատարիմ ծառայության և շրջահայեցողության հրահանգներով» (59, էջ 755)։ Նման տակտիկան շեշտելով, Կ. Սասունին կարծես ուզում է ասել, թե իրենք խելոք են եղել, էլ ինչու են իրենց կոտորել։

Նման պատմագիրներն այսօր փորձում են մոռացության տալ, նոր սերունդներից թաքցնել, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Կ. Պոլսում, Դալաթիո կեդրոնական դպրոցի մեծ սրահում հանգուցյալ Գաբրիել արքեպիսկոպոս Ճևահիրճյանի նախագահությամբ բացառիկ կերպով ու գաղտնի գումարվում և երկար ժամանակ իր նիստերն էր շարունակում «Հայ Ազգային միացյալ կոնգրեսը»։ ՀՀԴ-ի կողմից սկզբում մասնակցում էր Ս. Զավարյանը և հետո Հարություն Շահրիկյանը, իսկ ս.-դ. հնչակյան կուսակցությունից՝ Ս. Թումաճյանը։ Կոնգրեսի ընդունած որոշման մեջ ասված էր. «Բացարձակ անկեղծ ոգով հավատարիմ գտնվել Թուրքական գերիշխան կառավարությանը, Թուրքահայեր բոլորով սրտիվ օժանդակել անոր հաջողության։ Կատարել զինվորական պարտականությունը խղճմտորեն և երբեք չանսայ արտաքին թելադրանոք և խոստումներու։ Ուժ չտալ բնավ արտասահմանի հայության, եթե անոնք կգործեն ի վնաս Թուրքական կառավարության և եթե հնար է արգելել նույնիսկ» (24, էջ 22, 25)։ Զավարյանը չկար, մահացել էր, բայց ստորագրել էին ՀՀԴ լիազորներ Հար. Շահրիկյանը, «Աղատամարտի» տնօրեն Հրաչը (Հայկ Թիրեաքյանը)։ Սիմոն Զավարյանը Թումաճյանին ասել էր. «Սխալ գացինք, և հեղափոխությունը մեզ համար չէր, Սամվել»։

Ականատեսը վկայում է, որ իսկապես «գյուղացիությանը անհնար եղավ պետք եղածին պես զինել, մարտական, ընդդիմադրական դիրքի մեջ պահել մանավանդ բուն երկրում, ուր վտանգը, սպառնալիքը շարունակական էր և Թուրք, քուրդ ազգաբնակչությունը ոտից գլուխ զինված էր, հաճախ «իթթիհադական» կառավարության դրդումովն ու օգնությամբը» (56, էջ 72)։ Դաշնակցությունն իր դիրքորոշումով ծանր հարված էր հասցրել ժողովրդի ազատագրական պայքարին։ Փոխանակ ուժերը միավորելու ընդհանուր թշնամու դեմ, հայկական կուսակցությունները զբաղվել փոխադարձ ամբաստանությամբ։ Օսմանյան պառլամենտի նախագահ Ահմեդ Ռիզան Համբարձում Բոյաջյանին (Մուրադ) և Գրիգոր Աչըգպաշյանին (Ատոմ) հայտարարել էր, թե դաշնակցության ղեկավարներն իրեն ասել էին, որ Ադանայի կոտորածի «բուն և անմիջական պատճառն ու պատասխանատուն ս.-դ. հնչակյաններն են, որովհետև նրանք ընդհանուր ապստամբություն են քարոզել, ժողովրդին դրդել են ոտքի ելնել՝ իրենց մասնաճյուղերի առաջնորդությամբ. ահա դրանից էլ հառաջացել է շարժումը և նրա հետեանք կոտորածը» (56, էջ 103)։ Դաշնակները երիտթուրքերին ցույց էին տալիս հնչակյանների շրջաբերականները, նրանց մեղադրում խռովություն առաջացնելու մեջ։ Երիտթուրքերը ճկունորեն օգտագործում էին հայ քաղաքական կուսակցությունների ան-

միաբանությունը, իրագործում իրենց մահաբեր հակահայկական ծրագրերը։

Ռուսական թերթերն արդեն 1914-ի աշնանը գրում էին Թուրքիայում հայերի համար ստեղծված բարդ իրադրության մասին։ «Թուրք իշխանավորներն ու գործիչները, ըստ երևույթին, ավելի կոմպետենտ են հայերի դավաճանության հարցերում,— գրում էր «Պետերբուրգսկի կուրյերը»,— քան խելացի կերպով պետական նավը առաջ տանելուն. բայց և այնպես նրանք սխալվում են, երբ հայերի մեջ դավաճանություն են նկատում. ոչ ոք չի կարող խղճին դեմ գնալ և կասկածի տակ առնել հայերի բարեհուսությունը, ինչ հպատակության մեջ էլ գտնվելիս լինեն նրանք» (48, № 203, 1914)։

1914-ի աշնանը Թալեաթին հղած իր մի շարք նամակներում Վանի երեսփոխան Ա. Վռամյանը ցույց էր տալիս, որ «կառավարության հայահալած քաղաքականությունն այլևս տխուր ճշմարտություն մըն է», որ «Թուրք մամուլին, օսմանյան տեղեկատու դիվանին, իթթիհադի գործիչներուն և արդի դահլիճեն հայանպաստ, հանդիսավոր բոլոր հավաստիքները դիվանագիտական խաղեր են հայ ժողովրդի գոյության դեմ նյութվող նոր ոճիր մը պարտկելու համար» (38, թ. 18)։ Ս. Վռամյանը փորձում էր հարմարվել ընթացիկ պահին, անհիմն էր համարում «հին կասկածները, որոնք հայկական ինքնավարության մը երազները կվերագրեին հայերուն կամ հայ հեղափոխական գործիչներուն։ Քարտեզի վրա ակնարկ մը միայն պիտի բավեր համոզվելու համար, թե Փոքր Ասիո մեջ ցիրուցան ապրող հայը անզոր էր քաղաքական այդպիսի ծրագրի մը իրագործումը հետապնդելու»։ Այնուհետև նա անում էր համեմատություններ և գալիս այն եզրակացության, թե «գործնական հայը ամենեն առաջ պիտի կշռեր հնարավորություններն ու պատեհությունները, և վերջին երեսուն տարվա դառը փորձերը չէին կրնար չփարատել իր բոլոր պատրանքները, հարկադրելով զինքը ոչ թե ցնորքներու, այլ իրականության մեջ իր ներշնչումը փնտրելու» (38, թ. 21)։ Նա իր երիտթուրքական «բարեկամներին» շարունակում էր բացատրել հայոց խնդրի պատմականը, երեկն ու այսօրը։ Նա Թալեաթին ասում էր. «Թուրք պետական մարդոց մեծագույն և նշանակալից սխալը եղած է միշտ հայ ժողովրդի

ողբերն ու բողոքները «օտար սատրապներու» կամ «դավաճանության» մը վերագրել, փոխանակ անդրադառնալու, թե անոնք անխուսափելի, բնական հետևանք են հին ռեժիմի ահավոր սխալներուն, անհետացող արձագանք դառած ոճիրներուն։ Եվ եթե բողոքողը չէ, որ հանցավոր էր, այլ անոնք, որ այդ բողոքին առիթ տվող դժոխք կացությունը ստեղծել և անոնք, որ զայն պահպանել ջանացին» (38, թ. 27)։ Դաշնակցության ղեկավար գործիչներից Ռոստոմը 1916-ի սկզբին արդեն խոստովանում էր, թե «ոչ առաջ այդքան պիտի ոգևորվեինք, ոչ էլ այժմ այսքան ղայրանային» (46, թ. 27)։ Արտ. Չիլինգարյանը 1917-ին փորձում էր արդարացնել «դաշինքը» երիտթուրքերի հետ։ Նա գրում է, թե՛ թուրքերի և թե՛ հայերի համար այդ «դաշնը ձեռնտու էր գեթ այն ժամանակվա պայմաններում» (17, էջ 93)։

Մեկ այլ դաշնակցական հեղինակ պնդում է, թե 1907—1908 թթ. «Թուրքահայաստանի ապագան տվյալ պայմաններում հնարավոր էր լուծել միայն Թուրքիո ներսում՝ դաշնակցային ճանապարհով և ոչ թե Թուրքիո սահմաններից դուրս անկախության ուղիով», քանի որ «Թուրքիան կարծեք վերածնության, նոր ուղիներով գնալու փորձեր էր անում» (16, էջ 134)։ Իսկ Միքայել Վարանդյանը երիտթուրքական շարագործությունից հետո «Հորիզոնի» էջերում գրելու էր, թե «մենք մեղանչել ենք իթթիհադի հետ միանալով»։

Այժմ էլ հրապարակ են իջնում գրիչներ, որոնք փորձում են արդարացնել պատմության կողմից խիստ դատապարտված քաղաքականությունը, գրելով, թե «բարեկամական կապեր հաստատած էին իթթիհադի ղեկավարներուն հետ ի շահ ազգության անշուշտ և ի շահ ազգության ամեն ինչ ներելի է» (65, էջ 289)։ Այսպես է գրում դոկտոր Մովսես Տեր-Հակոբյանը։ «Հ. Հ. դաշնակցական կուսակցությունը պահ մը ենթադրեց, թե իթթիհադի հետ գործակցելով պիտի կարողանար իրագործել իր իղձը», թեև «իթթիհադը խուսափած է ճանչնալ ինքնուրույն հայ տարր մը և կամ ուրիշ որևէ ազգության մը մասնավոր իրավունքը օսմանյան կայսրության մեջ...» (65, էջ 289, 294)։ Թուրք պետական վարիչները, իթթիհադական պարագլուխները պետությունը համարում էին զուտ թուրքական և նրա ղեկավարման իրավունքը վերապա-

հում էին միայն իրենց՝ թուրքերին։ Երբ երիտթուրքական ղեկավարներին հարց էին տալիս, թե ինչու նրանք այդքան խիստ կենտրոնացման ուղղության են հետևում, պատասխանում էին, թե «ամենափոքր ապակենտրոնացումն անգամ այս երկիրը դեպի անվերականգնելի կործանում պիտի առաջնորդի։ Մեր երկրի մեջ բովանդակված տարրերը այնքան տարասեռ են, միմյանց խորթացած, որ նրանց իրար հետ կարելի է կապել միայն խիստ կենտրոնացման միջոցով»։

Ոմանք գտնում էին, որ հարկավոր էր զինվել, կազմակերպվել, պատրաստվել, ուժ հավաքել, զենք մթերել։ Նրանք չէին հավատում իթթիհադին, չէին հավատում, որ Թուրքիան կարող էր բարեկարգվել, գոյություն ունենալ։ Նրանք տեսնում էին, որ հայ ժողովրդի շահերի և իթթիհադի հետապնդած նպատակների միջև խոր անդունդ կար, ներքին կռիվ, թեև առժամանակ քողարկված (55, էջ 98)։ Իթթիհադ—դաշնակցություն համագործակցությունը, Կ. Պոլսի դաշնակցական գործիչների հեղհեղուկ ընթացքը, հայոց ազատագրական ոգորումների գործը բարձթթողի մատնելը քննադատվել են հենց այն օրերին։ Շատերի կողմից այն բնութագրվել է որպես իսկական արկածախնդրություն։ Ֆրանսիական «Օրյան ժուր» թերթում (1980, 24 ապրիլի) Բեյրութի ճանաչված դաշնակ գործիչ Հրաչ Տասնապետյանը հաստատում է, որ նույնիսկ Ադանայի կոտորածից հետո Հ. Հ. դաշնակցությունը շարունակեց իր օրինակելի, նույնիսկ անշահախնդիր լոյալությունը երիտթուրքերի ռեժիմին։ Հարց է ծագում, թե ինչո՞ւ։ Այդ ինչուին է, որ չէին պատասխանում ոչ երեկ, չեն պատասխանում նաև այսօր դաշնակ ղեկավար գործիչները։ Տասնապետյանը հաստատում է, որ քաղաքականության մեջ հայ ղեկավարների մոտ այն պահին տիրապետող գաղափարը օտոմանիզմի գաղափարն էր։ Նա խոսում է ինչ-որ ֆեդերատիվ դաշնակցության մասին, որ պետք է ստեղծվեր կայսրության ազգությունների՝ արաբների ու հայերի, հույների ու մակեդոնացիների, թուրքերի ու քրդերի միջև։

1907-ին Վիեննայում դաշնակցության որդեգրած նոր գործելակերպի դեմ բողոքելով, Անդրանիկն իրեն համոզելու փորձեր արած Ակնունու երեսին շպրտեց. «Կուզեմ դուրսը

պարզ մարդ մնալ, քան ձեր մեջ աստված։ Արյուն ձեր ի գլուխ ձեր» (20, էջ 95)։ Նա հրաժարվեց հանդիպել երիտթուրք ղեկավարների հետ, հեռացավ ակտիվ գործունեությունից և շուտով իր կամավորների գլուխն անցած կռվի ելավ թուրքական բանակի դեմ մարտնչող բուլղարական զինված ուժերի շարքերում։

Անդրանիկը «միշտ կասկածանքով» էր վերաբերվում օսմանյան սահմանադրությանը։ Նա 1908-ի հեղաշրջումից հետո թուրքական բռնապետության դեմ պայքարի ելած հայ մարտիկներին խորհուրդ չէր տալիս մտնել օսմանյան կայսրություն լեգալ ուղիով, անհրաժեշտ էր համարում շարունակել անլեգալ գործունեությունը երկրում և նրանից դուրս «Եթե այս հեղափոխական կարծված թուրքերը օր մը ձեզ չկախեն, ես մարդ չեմ։ Օր պիտի գա, որ այս հեղափոխականներն ալ պիտի դառնան սուլթան Համիդի պես գազան մը և բոլորիդ ալ պիտի հոշոտեն» (42, էջ 186, 188)։

1908-ի հուրհեթյան հանդեսներից հետո Անդրանիկը Վիթոշի «ստորոտները կապաստաներ մենավոր... խույս տալու համար համբավեն, խայծերեն ու թախանձանքներեն։ Մեկուսի, քենոտած, վիրավոր, անիկա լուռ մեղադրանքը կըլլար ընկերական կասկածելի ոգևորություններու, հոգնած անձնավորություններու, ողորմելի վրիպումներու հանդեպ»։ Նա մերժում էր երիտթուրքական «ազատությունը»։ «Սուտի և կեղծիքի վրա լաստակերտված... «օսմանցիություն», «սահմանադրություն», «օրինականություն», «համերաշխություն» սին անուններով կռվին իրավունքե զրկված ռազմիկը, ալ մատնված ցեղին խիղճն էր, որ չի ներեր, չի մոռնար» (53)։ Նա լուրջ հիմքեր ուներ մտածելու, որ երիտթուրք «բարեկամները» հայոց հայրենիքը վերածելու էին գերեզմանոցի։

Անդրանիկը գտնում էր, որ «թուրք կառավարությունը երբեք հայ ժողովրդին բարեկամ չէ և չպիտի ալ ըլլա»։ «Հայը թուրքին աչքին այսօր ալ անարդ գյավուր է, երեկ ալ էր և վաղն ալ պիտի ըլլա»։ Նա իր փորձով համոզվել էր, որ թուրք քաղաքագետներին, պաշտոնյաներին բարեկամություն չի կարելի վստահել, որ չի կարելի հավատալ «անոր երդումին ու խոսքերուն» (47, № 180, 1927)։

Տարիներ անց Ֆրեզնոյի «Մշակը» 1908-ի մասին գրում

էր. «Եղբայրության անունեն ճառող թուրք բորենիները շահագործեցին մեր միամտությունը և քնացուցին մեզ իրենց անուշիկ օրորներով, հավատացնելով մեզ, թե համիդյան «ակտը» իր ճիվաղային դիվանագիտությամբ եկավ ավելց ամեն բան, ցարդ իրականությունը մեզ թողեցավ միայն» (47, № 183, 1927)։ Նկատի ունենալով դաշնակցություն կուսակցության գլխավոր դեմքերին, Զապել Եսայանը այսպես է գրում. «Հայ ժողովրդի հասարակական կյանքը ղեկավարող խմբակը ոչ միայն չէր բարեհաճեր իր ծանրակշիռ վճիռներուն մեջ կարծիքը և ձայնը ունենալ նույն այդ արևմտահայ ժողովուրդի ծնունդ, հարազատ եղող մտավորականներուն, այլև իր ձեռնարկած գործերուն իբր անգիտակից նեցուկ կգործածեր գրողները և արվեստագետները» (22, № 71, 1926)։

Դաշնակցության որդեգրած ուղեգիծը քննադատվում էր ոչ միայն այլ կուսակցությունների, այլև իր իսկ անդամների կողմից։ 1908-ի ավարտին մի ոչ շարքային դաշնակցական գրում էր Կ. Պոլիս. «Ապրելով գավառներու մեջ, ուր ռեակցիան կըհոխորտա և մեր ժողովուրդն անպաշտպան է, կըգըտնենք, որ այդ պլատֆորմը ծայրահեղ է գծված, որով մենք հնարավորություն տված կըլլանք մութ ուժերուն իրենց լեզուները շատ ավելի երկարացնելու. ներքին գավառները և հոս ոչինչ, ոչինչ չէ փոխված» (33, էջ 179—180)։

Դեռևս 1911-ի ամռանը Կեսարիայի մյութեսարիֆի օգնականն ասել էր. «Եթե այս իթթիհադականները մնան, սրանք հայ ազգի գլխին նոր և ավելի խիստ փորձանքներ առաջ պիտի բերեն։ Ուստի ձեր ազգի փրկության տեսակետից՝ շուտով աշխատեցեք ձեր օձիքը սրանց ձեռքից ազատել»... Սամսոն քաղաքում 1912-ին երկրաչափ Սամի բեյը մանրակրկիտ տեղեկություններ էր տվել հայերին կոտորելու վերաբերյալ իթթիհադականների ծրագրերի մասին (58, էջ 304)։

Կարելի է ասել, որ բոլոր քիչ թե շատ մտածող մարդիկ հայոց վիճակի բարելավման անկարելիությունը տեսնում և հասկանում էին, բայց իներցիայով շարունակում էին հին ընթացքը։ Թուրքական «շովեն քաղաքականությունը սաստկացել էր»։ «Ամենեն կույրերն ալ տեսան ասիկա, այնպես որ հինգ տարե վերջը Թուրքիո հայերը առհասարակ թուրք կառավարության վրա մեղի չափ հավատք չունեին»։ Այնուամենայնիվ, «բացասական ավելի տխուր հետևանքներու տեղի չտալու համար օսմանյան հայոց երեսփոխաններուն մեծամասնությունը խոհեմություն սեպած էր հայկական պահանջներն իրենց ամբողջ ծավալով բեմին վրա չպարզել, վասնզի նոր ջարդերու վախը երբեք անհետացած չէր» (36, թ. 2)։

Օսմանյան իրականությանը քաջածանոթ մարդկանց մեջ ինչ խոսք, որ կային վտանգը զգացող, վաղվա սարսափները կռահող մարդիկ։ Բայց արդյոք արվո՞ւմ էին համապատասխան հետևություններ, արդյոք ձեռնարկվո՞ւմ էին գործնական միջոցառումներ վերահաս վտանգը շրջանցելու համար։ Իհարկե, ոչ։ «Հովիտ» թերթը (1912, № 45) գրում էր, թե քաղաքագիտական «խաղերը հայերի համար արյան բաղնիքներ են դառնալու», որ այդ շարժումը «մեր գոյության վրա սև խաչ դնելու պատրաստություն է» (15, էջ 599)։ Ավելի հեռատեսները վազուց էին հանգել այն եզրակացության, որ թուրքական իրականությունից առհասարակ լավ բան չպետք է սպասել և պահանջում էին «բարվոքել մեր հարաբերությունները Ռուսիո հետ, իբրև վերջին հենակետ հայության»։ Այս նպատակով աշխատանք է տարվում Կ. Պոլսում ռուսաց դեսպան Զարիկովի հետ «տաճկահայոց վրա ալ տարածելու Ռուսիո համակրությունը և պաշտպանությունը» (36, թ. 2)։

1914-ի մարտի 26-ին հրապարակված դաշնակցության կենտկոմի (Կ. Պոլսո շրջանի) մի շրջաբերականում դժգոհություն էր հայտնվում, որ իշխանություններն ընտրությունների ժամանակ խոչընդոտում էին հայ երեսփոխանների ընտրությունը, միաժամանակ հաջողացնելով իթթիհադական հայերի ընտրությունը (49, էջ 189)։

Դաշնակցության VIII ընդհանուր ժողովը Էրզրումում որոշում ընդունեց, որ «ամեն հայ օրինապահ մնա իր ապրած երկրի վերաբերմամբ և կատարի իր քաղաքացիական պարտականությունը»։ Անդրադառնալով այս խնդրին, դաշնակցական Մովսես Տեր-Հակոբյանը հարում է. «Կարծես թե ոչ հեղափոխություն եղած էր, ոչ ալ ամբողջ 25 տարի հայ ժողովուրդը հազար-հազարով զոհ տված էր. ջարդ, կոտորած, ավեր, բոլորն ալ կարծես թե գոյություն չէին ունեցած։ Բանկ Օտոման, խանասոր, ֆիդայիներ՝ կարծես թե չեն եղած, որ

մեր մարտական կուսակցությունը այս ոչ մարտական կոչը կուղղեր հայության» (65, էջ 296)։

Պատմությունն ապացուցեց, որ իթթիհադի հետ դաշնակցության համագործակցությունը անհեռատես, ազգավնաս գործելակերպ էր, որը նպաստեց թուրքական հայակործան քաղաքականության իրականացմանը։ Ոչ մի պատճառաբանություն, ոչ մի փաստ ու մեղմացուցիչ հանգամանք չի կարող արդարացում հանդիսանալ իր հետևանքներով դավաճանությանը հավասարազոր այդ ձախորդ ուղեգծի համար։

Իթթիհադի նկատմամբ այլ դիրք բռնեց հնչակյան կուսակցությունը։ Այդ տարիներին այն տակավին չէր ապաքինվել նախորդ շրջանի ներկուսակցական կազմակերպչական և գաղափարախոսական ցնցումներից։ Ռուսական առաջին հեղափոխության պահին անհրաժեշտ էր ճշտել սեփական անելիքը, ունենալ գործողությունների ծրագիր։ Հայ ժողովրդի իրավիճակի առանձնահատկությունը՝ երկու հատվածի բաժանված լինելու հանգամանքը, միանգամայն տարբեր սոցիալ-քաղաքական, կուլտուր-ազգային պայմաններում գտնվելու փաստը զրկում էին երկու ճակատում միակերպ գործելու հնարավորությունից։

Հիշեցնենք, որ 1905-ի նոյեմբերին Փարիզում տեղի ունեցած հնչակյան կուսակցության հինգերորդ ընդհանուր պատգամավորական ժողովը քննարկեց «նոր գործունեության հարցը»։ Նախապես կենտրոնական վարչությունը (Նազարբեկ, Խանազատ, Եփրեմ Կաճարյան, Սիմոն Տաշիրյան և Արամ Աշըքպաշյան) «նոր գործունեության» մասին մի շրջաբերական էր պատրաստել, որտեղ խոսվում էր Թուրքիայի սոցիալ-տնտեսական պայմաններին համապատասխան հնչակյան ազգային գործունեության մասին։ Այնտեղ շեշտվում էր, որ Ռուսաստանում գործելու համար անհրաժեշտ էր աշխատել միանգամայն այլ պայմաններում։ Առաջարկվում էր ունենալ երկու կենտրոն. մեկը զուտ սոցիալ-դեմոկրատական՝ Կովկասում, Ռուսաստանում, իսկ մյուսը ազգային՝ Թուրքիայում։ Դրանք ունենալու էին միմյանցից անկախ կենտրոններ և

օրգաններ։ Հնչակյան կուսակցությունը շարունակելու էր ծառայել թուրքահայ դատին, ասպարեզ ունենալով Արևմտյան Հայաստանը, չմիջամտելով Կովկասի, Ռուսաստանի շարժումներին։ Իսկ հնչակյան այն մասնաճյուղերը, որոնք գործելու էին Ռուսաստանում, պետք է միանային սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին։ Այս տեսակետը չընդունվեց։ Մարտովը խորհուրդ էր տվել չմիանալ։ Նազարբեկը, Խանազատը, Գրիգոր Վարդանյանը հեռացան հնչակյան կուսակցությունից և փորձեցին անջատ հոսանք ստեղծել Կովկասի մեջ (32, էջ 203)։

Սակայն տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է այդ կուսակցության գործունեությունը օսմանյան կայսրությունում՝ արևմտահայությանը թուրքական լծից ազատագրելու խնդիրների տեսակետից։ Հնչակ գործիչները գիտեին երիտթուրքական գաղափարախոսության ուղղությունն ու բովանդակությունը, ըմբռնում էին թուրքական սոցիալ-քաղաքական կյանքի պրոցեսները, տեսնում էին իթթիհադականների նացիոնալիզմի հակահայկական որոգայթները, գիտակցում էին, որ հայկական ինքնավարությունը մի խոչընդոտ էր երիտթուրքերի համաթուրանական ծրագրի իրականացման ճանապարհին։ Իհարկե, սկզբում հնչակյաններն էլ շտապեցին օսմանյան պառլամենտը հռչակել «տանջվող ժողովրդի ցավերի հարազատ թարգմանը, նրա հզոր կամքի արտահայտիչը, նրա մարդկային իրավունքների երդվյալ հավատարմատարը, հայրենիքի ազատության մարտիկը» (33, էջ 181)։ Այսպես էր ասված 1908-ի դեկտեմբերի 4-ին Տրապիզոնում հրապարակված հնչակյան մի կոչում։ Հետո տեսնելով իրադարձությունների զարգացման ընթացքը, հնչակյանները հրաժարվեցին որևէ բանակցություն վարել իթթիհադի հետ, քանի որ ձգտում էին հայկական պետություն ստեղծել ռուսական հովանավորության ներքո (71, էջ 60)։ «...Միայն ս.-դ. հնչակյան կուսակցությունն էր, որ պահանջեց ինքնավար Հայաստան։ Մյուս կուսակցություններն այդ պահանջը ցնորական նկատեցին և մնացին բարենորոգումներու կողմնակից, մանավանդ որ Հ. Հ. դաշնակցությունը այդ միջոցին ձեռք տված էր իթթիհադին» (50)։

Հնչակյանների մի մասը անդիջում դիրք էր բռնել բարե-

նորոգումների հարցում, դրանք համարելով խաբեություն։ Նրանք գտնում էին, որ չպետք է ապակողմնորոշել ժողովրդին անհիմն հուսադրումներով և դրանով հարված հասցնել ինքնապաշտպանության առաջնահերթ խնդրին։ Փարամազը և նրա համախոհները տասնյակ տարիներ թուրքական դժնի իրականության մեջ փորձեցին ազգությունների համագործակցության և ներդաշնակության գաղափարն արմատավորել, բռնության դեմ պայքարի հուժկու ճակատ կազմել։ Սակայն համոզվելով համամարդկային գաղափարների իրագործման նկատմամբ թուրքական քաղաքական ուժերի բռնած ազգայնական, շովինիստական դիրքի մեջ, կանխազգալով արևմտահայության զլխին կախված վտանգը, նրանք նորից առաջնայինը համարեցին արևմտահայության ինքնապաշտպանությունը։ Հնչակյանները պահանջում էին հույս չդնել իթթիհադի վրա, չհավատալ ու վարկ չտրամադրել նրան։ Հնչակյանները համոզված էին, որ երիտթուրքերը ոչ մի բարենորոգում չէին գործադրելու և ջանալու էին «հայությանը բնաջնջել, ոչնչացնել և զուտ թուրքական, իսլամական միատարր պետություն ստեղծել»։ Նրանք հեղափոխական ճանապարհը համարում էին անհրաժեշտություն։ «Արթնություն, զենք, ռազմամթերք, հեղափոխական, ընդդիմադրական ուժի զորացում, անխուսափելի կռվի պատրաստություն»— ահա նրանց մոտեցումները (56, էջ 120)։ «Թուրքիան թուրքերին» շովինիստական նշանաբանին «Հնչակը» հակադրում էր «Հայաստանը բոլոր հայաստանցիներին» լոզունգը։

1909-ի հուլիսին Կ. Պոլսում իր աշխատանքն սկսած հնչակյան կուսակցության վեցերորդ ընդհանուր պատգամավորական ժողովը թուրքական նացիոնալիզմի մասին ընդունած բանաձևում հայտարարեց. «Նկատելով, որ թուրք նացիոնալիստները (ազգայնականները) և այդ նացիոնալիզմի արտահայտիչ քաղաքական գործիչները (իմա՝ «Իթթիհադ վե թերաքզ») գիտակցաբար ձգտում են ապազգայնացնել Թուրքիո ազգությունները և ձուլել զանոնք թուրք ազգության մեջ՝ օսմանցի ընդհանուր անվան տակ, ժողովը ժխտելով կժխտի ապազգայնացման այդ գաղափարը և կվճռե պայքարել այդ

ուղղության դեմ, ընդունելով ազգերու անկաշկանդ ու ազատ զարգացման և ինքնորոշման իրավունքը» (8, էջ 42)։

Հնչակյան կուսակցության նույն համագումարում Փարամազը կատաղի ճառ էր արտասանել օսմանականության գաղափարը մերժելու, հայոց ինքնավարության համար պայքարելու օգտին։ Նա կոչ էր անում չխաբվել «ժեան-թուրքերու այսօրվա մեղրածոր խոսքերին»։ Նրա կարծիքով այդ խոսքերը հայ հեղափոխական կուսակցություններին քնեցնելու, նրանց ուժը տկարացնելու համար էր։ Նա ապացուցում էր, որ երիտթուրքերի օսմանականության գաղափարները հայության համար ավելի վտանգավոր էին, քան նույնիսկ սուլթան Համիդի ծրագրերը։ Նա իր խոսքը հիմնավորում էր օսմանականությանը նվիրված երիտթուրքերի պարագլուխների հոդվածներից, գրքերից բերված հատվածներով և մտքերով (63, էջ 52—53)։ Փարամազն ասում էր. «Հազար Նուբար փաշայից և Սազոնովից թանկ արժե լեռան ծայրին հրավառած մի խարույկը» (63)։

Բնականաբար երիտթուրքերը շարքից պետք է հանեին, ոչնչացնեին նախ և առաջ այն գործիչներին, ովքեր առաջադիմական, սոցիալիստական սկզբունքների կիրառման դիրքերից էին մոտենում Թուրքիայի զարգացման խնդիրներին։

1909-ի մարտի 14-ին Իզմիրում հնչակյան կուսակցության մի հրապարակային ժողովում քննարկվում էր բարեկարգվող Թուրքիայի նկատմամբ կուսակցության դիրքորոշման խնդիրը։ Սապահ Գուլյանը ցույց էր տալիս, որ «Թուրք ազգայնականությունը մարմնավորող իթթիհադը իր սկզբունքներով ու հավատամքով մեզ հույս չէր ներշնչում. նա դրական երաշխիք, գրավական չէր ներշնչում, որ ինքը կարող, ընդունակ պիտի լիներ ստեղծելու նորագույն Թուրքիա» (54, էջ 6)։

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին հնչակյան պրոպագանդիստներն ակտիվ աշխատանք էին ծավալել թե՛ Կ. Պոլսում ու Կիլիկիայում, թե՛ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում։ Նրանք ստիպված էին աշխատանքի լեզալ ձևերը զուգորդել անլեգալ մեթոդների, գաղտնի գործողությունների հետ, զգաստություն քարոզել, ուժ տալ դիմադրական գործունեությանը։ Նրանք գտնում

էին, որ ճշմարիտ սահմանադրական Թուրքիայի ստեղծման դեպքում պետք է լիներ քաղաքական ինքնավար Հայաստան։ Մյուսներին թվում էր, թե Թուրքիան արմատապես բարեկարգվելու նախագավթում է և լծվել էին ընդհանուր հայրենիքը վերաշինելու գործին։ Սակայն նրանք գործում էին ամենուր, որտեղ հայ օջախներ կային։ Բայց բոլոր այդ վայրերը Հայաստան չէին։ Փոխանակ ուժը կենտրոնացնելու ռուս Արևմտյան Հայաստանում, հնչակ-պրոպագանդիստները ավելի ակտիվ էին անատոլիական Թուրքիայի քաղաքներում։ Նրանց գործունեությունը դառնում էր համաթուրքական, փոխանակ լինելու համաարևմտահայկական։ Թուրքական իշխանությունները, լրտեսներն ու գործակալները ուշի-ուշով հետևում էին հնչակյաններին, լսում նրանց զեկուցումները, հաշվառում վաղվա իրենց զոհերին։

Սոցիալ-դեմոկրատ հնչակ-գործիչները հակադրվում էին երիտթուրքական քարոզչներին, ցույց տալիս, որ օսմանյան մեկ ազգություն չկա, որ հայերն ազգ են, որ սոցիալիզմը հարգում է ազգերի ինքնորոշման իրավունքը, հերքում էին այն կանխամտածված սուտը, թե սոցիալիզմը նպատակ ունի ջնջել ազգությունը (55, էջ 126—127)։ Շեշտվում էր, որ երկրում ապրող ազգերին իրար դեմ գրգռողը, զինողը, նրանց միջև թշնամություն սերմանողը իթթիհադն է։ Երիտթուրքերն Արևմտյան Հայաստանում ստեղծեցին իրենց ակումբների խիտ ցանց (29, էջ 27), որի միջոցով իրականացնում էին ազգերի համերաշխությունը քանդելու, նրանց միմյանց դեմ գրգռելու իրենց քաղաքականությունը։

1911-ին «Հնչակի» ղեկավարությունը մերձեցավ իթթիլաֆ ընդդիմադիր կուսակցությանը (պարագլուխը Սապահէդդինն էր), փորձելով օգուտ քաղել իթթիհադին հակադրվող այդ կազմակերպությունից։ Հնչակյան թերթերն ուժեղացրին հակաիթթիհադական նյութերի տպագրությունը։ «Թե՛ մայրաքաղաքի և թե՛ գավառների շատ տեղերում՝ մեր աջակցությամբ և օգնությամբ էր, որ իթթիլաֆը կարողացավ մասնաճյուղեր հաստատել,— գրել է Սապահ Գուլյանը։— Դրանք իթթիհադի դեմ կռվող ուժեր, հակաիթթիհադական կայաններ, հանգույցներ, հնոցներ էին»։ Այնուհետև նա վկայում է, որ «մեր համաձայնությունից հետո էր, որ իթթիհադի և

իթթիլաֆի հարաբերությունները ծայրագույն կերպով սրվեցան, անհաշտ բնավորություն ստացան» (56, էջ 286—287)։

Երիտթուրքերը հնչակ-գործիչներին խնդրեցին դադարեցնել հարձակումները սուլթանի դեմ, չխաղալ «փաղիշահության և խալիֆայության» վարկի հետ, ձեռնպահ մնալ փողոցային ելույթներից ու ցույցերից։

Սապահ Գուլյանը 1916-ին հրապարակած իր գրքում բերում է չափազանց կարևոր մի վկայություն. 1908-ի հեղաշրջումից հետո նա իր համախոհների հետ միասին տեսակցել էր նաև Սապահէդդինին։ Վերջինս նրանց ասել էր. «եթե իթթիհադը ութ ամիս կառավարության գլուխ մնա և պետական գործերը ինքը վարի, լավ համոզված եղեք, որ բաղկացուցիչ բոլոր ազգերի և մասնավորապես հայերի ապագան ջախջախված է, վերջացած է։ Ես այս ասում եմ խղճիս թելադրությունից մղված։ Այդ մարդիկ ինձ հետ մտերմական խոսակցություններ են ունեցել, բացվել եմք որպես բարեկամ։ Նրանց արած որոշակի հայտարարություններից և խոստովանություններից դա երևացել է պարզ և մեկին կերպով։ Ուստի օր առաջ ձեր գլխի ճարը պիտի տեսնեք և ձեր անելիքը գիտնաք։ Կրկնում եմ, որպես գործից տեղեկություն ունեցող, ութ ամիս էլ՝ և ձեր ապագան որպես ազգ այլևս խորտակված է անվերականգնելի կերպով» (56, էջ 220)։ Ուրեմն, իթթիհադի հակահայկական որոշումները 1910—1911 թթ. թողնելը, Սալոնիկի կոնգրեսին վերագրելը պատմական տեսակետից, ժամանակի առումով ճիշտ չէ։ Երիտթուրքերը մինչև իշխանության գլուխ անցնելն արդեն հակահայկական ծրագիր ունեին։ Հետաքրքրական է, որ Սապահէդդինը հնչակյաններին խորհուրդ էր տալիս մերձենալ դաշնակցության հետ, փոխըմբռնման հասնել կանխելու համար «ձեր ազգին սպառնացող այս վերահաս վտանգը»։ Նա ասում էր. «Պետք է իրար ձեռք տաք, մեկ գծի վրա կանգնեք, վերջապես հասկանաք ձեր թշնամին ով է, ինչ է խորհում ձեր մասին» Այնուհետև, թե երիտթուրքերը «Թուրքիայի գոյության համար նույնքան վտանգավոր են, որքան Համիդի բռնակալությունը։ Սուլթան Համիդին և նրանց միասին պետք է կործանել» (56, էջ 220—221)։ Հնչակյանները «աղաղակում էին, որ վտանգը, չարիքը պիտի գար զենքերի շտեմարանները, պահեստներն իր

ձեռքին ունեցող հենց իթթիհադից և նրա դեմ էր, որ պետք էր զինվել, կանխապատրաստվել, որովհետև նա նույնքան և ավելի վտանգավոր, թունալից օձ էր, որքան «համիդականը»։ Սրանց պատասխանում էին, թե իզուր ուշադրություն եք հրավիրում մեր վրա, պատճառ տալիս կասկածի, անվստահության։ Դա հանցանք էին համարում։

Հնչակյան կուսակցության Կ. Պոլսի Զ (1909) և Կոնստանցայի է (1913. IX) համագումարներում (Փարամազ, Սապահ Գուլյան, դոկտոր Պեննե) ընդունվեցին հակաթթիհադական բանաձևեր, դատապարտվեցին «օսմանականության» գաղափարն ու քաղաքականությունը, որոշվեց անցնել անլեգալ աշխատանքի և կոիվ տալ ու պահանջել «Թուրքիայից անջատ Հայաստանի քաղաքական ինքնավարություն» (66, էջ 14—15)։ Իհարկե, հիմնականում որդեգրվում էր սպասողական տակտիկա, նպատակ ունենալով գործնականում նայել իթթիհադի ընթացքին։ Իր նամակներում ու ճառերում Փարամազն ապացուցում էր, որ «իթթիհադի զուլումը չափ ու սահման չունի», որ նա «իր վարկը բարձրացնելու և դիրքի տերը մնալու համար ուզում է բաղկացուցիչ ազգություններից որևէ մեկից «արյան տուրք» պահանջել, կոտորել։ Նա կանխազգում էր, որ հարվածն իջնելու է Հայաստանի վրա, հայի վրա» (66, էջ 15)։

Բարենորոգումների և եվրոպական դիվանագիտության կողմնակիցները պայքար ծավալեցին հնչակի քաղաքական լոզունգների դեմ։ Հնչակյանները կապեր հաստատեցին ալբանացի գործիչների հետ, փոխադարձ հասկացողության եկան երիտասարդ արաբների, սիրիացիների հետ, համատեղ ժողովներ գումարեցին, հարցեր քննարկեցին։ Հնչակյանները դառնում էին վտանգավոր ուժ երիտթուրքերի քաղաքականության ճանապարհին։ Իթթիհադական լրտեսները աստիճանաբար շրջափակում էին նրանց գործողությունները։ Կոնստանցայում ընդունված բանաձևում ասված էր. «Նկատելով, որ «Իթթիհադ վե թերագզ» կուսակցությունն իր մեջ կմարմնացնե թուրք հարձակողական ցեղասպան ազգայնականությունը՝ իր բոլոր ստորոգելիներով, որ ան կհանդիսանա թե քաղաքական կուսակցություններու և թե մանավանդ բաղկացուցիչ ազգություններու համար վտանգավոր և վնասակար, կառաջնորդե պայքարի անցնել իլլեգալ հողի վրա բոլորովին փշրելու, տապալելու համար իշխանությունը իթթիհադի» (11, 18. 6. 1972)։

Արդեն 1911-ին գավառից ստացվող տեղեկագրերը հաղորդում էին, թե իթթիհադի կենտրոնը գաղտնի հրահանգներ էր իջեցնում իր մասնաճյուղերին, գաղտնի, առանց աղմուկ հարուցելու և հսկելու հայ քաղաքական կազմակերպությունների գործունեությունը (61, էջ 222)։

«Հնչակ» թերթը 1913-ին (№ 3) գրում էր. «Թուրք ազգայնականությունը, որի ձեռքին է այսօր երկրի կառավարման գործը, առանց տատանվելու, որպես պատմական անհրաժեշտություն, անխնա կերպով պիտի կոտորի հայերին։ Եվ այս անգամ ավելի անողոք, քան 1895—1896-ին, ավելի սաստկությամբ, քան Աղանայի եղեռնը»։ «...Թուրք նացիոնալիզմի հին ու նոր ներկայացուցիչները ոչ մի կերպ չեն ուզում հաշտվել հայ ժողովրդի գոյության, բարգավաճման, կենսունակության գաղափարի հետ»։ 1913-ի աշնանը իթթիհադն արգելել էր «Հնչակ» թերթի մուտքը Թուրքիա, որովհետև նա որպես պատմական անհրաժեշտություն քաղաքական ինքնավար Հայաստանի գաղափարն էր պաշտպանում։

1910-ի հունվարի 26-ի 90-րդ արտոնագրով հնչակյան կուսակցությունը ճանաչվեց և վավերացվեց որպես երկրում գործող քաղաքական լեգալ կազմակերպություններից մեկը։ Սակայն հետապնդումներն ու անօրինականությունները մշտապես շարունակվեցին նրա դեմ։ Գրավոր ու բանավոր դիմում-բողոքները ներքին գործերի մինիստր Թալեաթը «միշտ ժպտաշուրթ ընդունելով, մեզ կհավատացներ, թե պետք եղած հրահանգը տրված է ամեն կողմ և թե եկած բողոքներն անշուշտ թյուրիմացությանց արդյունք ըլլալու են։ Կունկնդրեր, կհուսացրեր և կշարունակեր հավերժացնել հալածանքն ընդդեմ հնչակյանության» (8, էջ 44)։

Թալեաթն ինքն է մեկիկ-մեկիկ ուսումնասիրել հնչակյան կուսակցության Զ. ընդհանուր պատգամավորական ժողովի կանոնագիրքը և այն հրավիրելու թույլտվություն տվել։ Իսկ հետո հրեշավորությամբ հետապնդեց Կոնստանցայի համագումարի մասնակիցներին։

Արշ. Զուրաբյանն իր «Պատերազմը և Թուրքիան» հոդ-

վածում նշելով, որ «Հնչակյանությունը հանձին երիտասարդ թուրքերի տեսնում էր սոսկ օսմանյան նացիոնալիստների» (52, № 22, 1917), թուրքական իրականության մեջ լուսավոր կետ չէր տեսնում։ Նա շեշտում էր քաղաքական կուսակցությունների նացիոնալիստական քաղաքականությունը, բանվորական դեմոկրատիայի բացակայությունը։ Նա նկատում էր, որ թեև հնչակյանները քննադատում էին դաշնակցությանը երիտթուրքերի հետ համագործակցելու համար, բայց իրենք նույնպես սխալվում էին, հավատալով թուրքական իթթիլաֆ կուսակցության պարադլուխներին, որոնք պետական իշխանություն ունենալու դեպքում նույնպես վատ էին վարվելու հայության հետ։

Հիրավի, չափից ավելի բարդ իրավիճակ էր ստեղծվել արևմտահայության քաղաքական կյանքում։ Ասպարեզում գործում էին ամեն տեսակ ինքնակոչ «հեղափոխական» շատախոսներ, անպատասխանատու ու անկարգապահ մարդիկ, նաև լրտեսներ ու պրովոկատորներ։ Այդ «հեղափոխականներից» շատերը, որ հավակնում էին ժողովրդի պայքարը գլխավորելուն, ուսուցիչ լինելուց առաջ իրենք էին, որ աշակերտ պետք է լիներն։ Սրանք խառնաշփոթ մտքեր էին քարոզում, վնասակար գաղափարներ սերմանում։ Ուժերը մնում էին չհամախմբված։ Համազգային հրատապ խնդիրների շուրջը երբեք միաձայնվածություն չստեղծվեց։ Ոչ ոք հայ ժողովրդին այնքան վնաս չի հասցրել, որքան փարիսեցիները, որոնք բարեգործության, հայրենասիրության քողի տակ աշխատել են ժողովրդից բարիք ստանալ, բայց նրան օգուտ չեն տվել։

Մարդիկ ճառում, խոսում էին ամեն ինչից, դատարկաբանում, փոխանակ գործնական դիրք բռնելու, զենքի, մարտական կազմակերպության փարվելու։ «Թուրքիայի մեջ ապրել և սոցիալիզմի անունով իթթիհադի դեմ չկռվել, նրա ատամները փշրելու ջանքը առաջին և հրամայական գործը չանել, թույլ տալ, որ նա անի իր ուզածը, որովհետև «սահմանադրական» բառեր ունի իր բերանին. դա ոչ միայն անտանելի է, նվաստություն, փոքրոգություն, կրավորություն է, այլ առաջին կարգի հարված, աքացի, դավաճանություն՝ ընդդեմ նույն այդ սոցիալիզմի» (56, էջ 54)։

Պատերազմի նախօրյակին դիմագրավելու ոգին բարձրացող վիճակում էր, ինքնապաշտպանությունը՝ տապալված։ Հայոց քաղաքական նպատակների իմաստը պարզ էր երիտթուրքերին։ Թեև ձեռնոց էր նետված թուրքական պետությունը, բայց առանց նախապատրաստության, առանց պայքարի տարրական կանոնների պահպանման։ «Պետության մը դեմ կռիվը, կազմակերպված զինվորական բանակի և ոստիկանության մը դեմ զինված պայքարը, կրոնական մոլեռանդության, միջնադարյան ավատապետական կարգերու մեջ ապրող տգետ բազմություններու և վայրագ մեծ ու պզտիկ բռնատերերու, աշիրեթապետներու դեմ հարձակումը թեթև ու դյուրին գործ մը չէ։ Կը պահանջե երկարատև և լուրջ նախապատրաստություն» (51),— գրում է սփյուռքահայ հեղինակ Լ. Զորմիսյանը։ Բայց այդ նախապատրաստությունը չկար։ Ժամանակը բաց էր թողնված։

1913-ին «Հնչակի» ղեկավարությունը Փարիզում տպագրեց և եվրոպական երկրների կառավարություններին ու ժողովուրդներին հղեց մի կոչ, որով օգնություն, պաշտպանություն էր հայցում, համերաշխություն փնտրում հայ ժողովրդի համար։ Այս կոչը մենք հիշատակեցինք, որովհետև այն երկու տարի անց՝ 1915-ին դարձավ քսան հնչակյան գործիչների նկատմամբ սարքված դատավարության ընթացքում երևան բերված ամենալուրջ «մեղադրանքներից» մեկը։ Կոչում ասված էր. «Հարատև պատերազմ չէ արդյոք, իր ավերներով և կոտորածներով, որ դարեր շարունակ հրահանգած ու գործադրած են թուրք կառավարություններն ընդդեմ անպաշտպան հայ ժողովրդին։ Հետևաբար և բնական չէ՞ մեր աղաղակն այդ կարգերուն դեմ հանուն մարդկության և ժողովուրդներու ազատագրության։ Արդար չէ՞ մեր բողոքը Հայաստանի մեջ մղվող դարավոր սպանդին դեմ, որուն նպատակն է բնաջնջել աշխատասեր, կուլտուրական և կորովի ազգ մը...»։ «...Մենք որևէ թշնամություն ունինք թուրք ժողովրդին դեմ, որ ինքն ալ մեկ զոհն է օսմանյան կառավարությանց» (9, էջ 4)։ Կոչի հեղինակները կարծում էին, որ «քանի դեռ Հայաստանի արյունլվա ուրվականը կհալածե Եվրոպայի վրդով խղճմտանքը», ապա վերջինիս պարտքն էին համարում «արդար բավարարություն տալ բազմաշարշար ազգին», հայ ժողովրդին հնարավորություն ընձեռել «իր ձեռքն,

առնելու երկրի քաղաքական կյանքի կառավարումը» (9, էջ 5)։

Երիտթուրքական ճիվաղներն այս կոչը բնութագրեցին որպես դավաճանություն օսմանյան հայրենիքին և ինքնավար Հայաստանի կողմնակիցներին առանց այլևայլության դատապարտեցին մահվան։ Կոչը գրված էր 1913-ին. քսան հերոսներին գատեցին և կախաղան բարձրացրին պատերազմի պահին՝ 1915-ին։ Իթթիհադական կառավարության առաջին քայլը եղավ ամբողջ երկրով մեկ հնչակյան գործիչների ձերբակալումը և նրա կազմակերպությունների ցրումը։ Դա արվեց պատերազմից ուղիղ մեկ շաբաթ առաջ։ Այս քայլն իրագործումն էր տակավին Սալոնիկի ժողովում Թալեաթի այն հարցադրման, թե՝ «հնչակյաններն են մեր թշնամիները, նրանց վրա էլ տեռորի սարսափով պետք է աղդել և իրենց մտադրություններն իրենց հետ մեռցնել»։

Մի նամակում Փարամազը գրում էր, թե «հայության դահիճներն անձկանոք սպասում են հարմար ադիթին հարվածը իջեցնելու»։ Ահա թե ինչու, գրում էր նա, «մեր աշխատանքը լինելու է ստեղծել ինքնավար Հայաստան՝ ազատ Թուրքիայից»։ Ինչ խոսք, որ այսպիսի մտածելակերպ ունեցած գործիչը պետք է լիներ երիտթուրքական տեռորի առաջին թիրախը։ Հետաքրքրական է Փարամազի «Հայի պահանջը» հոդվածը «Հնչակի» մեջ 1914-ի մայիսին։ Սա նրա վերջին գրավոր ելույթն էր մամուլում։ Նա գրում էր, որ հայ ֆիդային սխալվեց զենքը վայր դնելով, սահմանադրությանը, երիտթուրքական պարագլուխներին հավատալով։ Նա գտնում էր, որ հնարավոր չէ օսմանյան տիրապետության ներքո, նեղմիտ և գծուծ շովինիզմի պայմաններում պաշտպանել բազկացուցիչ ազգերի շահը՝ տնտեսության, մշակույթի, մտավոր գործունեության ասպարեզներում։

Արդեն 1914-ի հուլիսի 16-ին Թալեաթի հրամանով Կ. Պոլսում ձերբակալվեցին հնչակյան կազմակերպության մի շարք աչքի ընկնող դեմքեր։ 1914-ի ամռանը Վանում ձերբակալվեց հնչակ գործիչների մի խումբ։ Հնչակյանների դեմ խիստ հալածանքների ու ձերբակալությունների նոր ալիք ծայր առավ 1914-ի աշնանը (26, էջ 8)։ Ձերբակալվեցին արևելյան վիլայեթների բոլոր ականավոր հնչակ գործիչները։ 1915-ի ապրիլի 8-ին Վանի բանտի 120 բանտարկյալներ մորթվեցին

Ջևդեթի հրամանով (66, էջ 162—163)։ Այնուհետև հնչակ գործիչներին կախեցին Կ. Պոլսում, Ադաբազարում, Կեսարիայում, Ամասիայում, Սեբաստիայում (54, էջ 22)։

Թուրքիայի հնչակյան մասնաճյուղերը պատասխանատու հռչակվեցին Փարիզի մեջ հրապարակված գրության համար։ 1915-ի սկզբից թուրքական ոստիկանատների, բանտերի ու դատարանների տանջանքների միջով անցած Հմայակ Արամյանցը մի քանի տարի անց, սկզբում Չիկագոյում, ապա Կ. Պոլսում, հրապարակեց իր հուշերը, որտեղ նկարագրեց երիտթուրքական հակահայկական գեհենի չափազանց կարևոր մանրամասներ։ Ծանոթանալով նրա գրվածքներին, ընթերցողը համոզվում է, որ երիտթուրքական կլիկն ամեն ինչ անում էր հայոց դեմ քաղաքական մեղադրանքներ սարքելու համար։

1913-ի սեպտեմբերին Կոնստանցայում տեղի ունեցած հնչակյանների համագումարի արձանագրությունները մատնությամբ ընկել էին թուրքական ոստիկանության ձեռքը, տեղիք տվել քաղաքական մեծ պրովոկացիայի։

Մատնիչ Արշավիր Սարգսյանի դեմ մահափորձին Աշըքպաշյանի, Հրանտի և Գարեգինի մասնակցությունը ոչ մի փաստով չհաստատվեց, բայց զինվորական ատյանը մնաց անդրդվելի, կատարելով երիտթուրքական մարդասպանների կամքը։ Դատարանը չապացուցեց Թալեաթի դեմ մահափորձ կազմակերպելու փաստը։ Ըստ էության Փարամազը, զոկտոր Պեննեն և մյուսները դատապարտվեցին ինքնավար կամ անկախ Հայաստան կազմելու գաղափարին տուրք տալու ամբաստանությամբ։ Թալեաթը մի ընդարձակ թեզիսներ էր գրել հնչակյան կուսակցության դեմ։ Այս մեղադրական թուղթը շուտով դարձավ «էրմենի Կոմիթելերի» հատորը, որն ընդդրկեց նաև պատերազմի ութ առաջին ամիսները, Վանի դեպքերի, Կարինի ապստամբության, Շապին Գարահիսարի դիմադրության, Եղեսիո ընդվզումի և այլ անցքերի թուրքական տենդենցիոզ մեկնաբանությունները (10, էջ 13—14)։ Հմայակ Արամյանցը բանտից դուրս գալուց հետո դիմել էր Զավեն պատրիարքին, պատմել Թալեաթի կեղծագրի մասին, որի հայթայթում ու հրապարակումն իր կարծիքով «բավ էր իթթիհադական կառավարությանը հավիտենապես դատապար-

տության սյունին գամելու և հայոց հանդեպ սնուցված հակամարդկային գաղափարները լույս աշխարհ բերելու...» (10, էջ 14)։ Դատարանում Փարամազը հայտարարեց. «Մենք սոցիալ-դեմոկրատներ ենք, մեր հայրենիքը աշխարհն է և մեր ազգը՝ ամբողջ մարդկությունը» (9, էջ 20)։ Հնչակի Թուրքիայի կենտրոնական վարիչ մարմինը 1914-ի օգոստոսի 10-ին մի գրքույկ հրապարակեց «Ս.-դ. Հնչակյան կուսակցության Տաճկաստանի Գ. պատգ. ժողովի որոշումները, 1914 հուլիս 24—օգոստոս 8» վերնագրով։ Այս փաստաթղթում «ապօրինի և վնասակար էին» բնութագրվում Կոնստանցայում ընդունված որոշումները (10, էջ 30)։ Գրքույկում Թուրքիայի Հնչակյան կազմակերպություններից պահանջվում էր կապեր չպահպանել արտասահմանի Հնչակյան կենտրոնի հետ։ Դատարանի նախագահը Վանիկ Գեղամյանին մեղադրանք էր հարուցում «Հնչակի» էջերում Թալեաթի դեմ ընթերցողների ատելությունը հրահրելու համար։ Ըստ էության, թուրք դատավորը ոտնահարում էր երիտթուրքերի կողմից մամուլի «ազատության» մասին հրապարակած օրենքները (10, էջ 34)։

Հնչակ-գործիչներին դատում էին կենտրոնախույս ձգտումների, օսմանյան պետությունից Հայաստանը զատելու փորձերի համար։ Ռազմական տրիբունալի նիստում խուրշիդ բեյ դատախազը, խոսքն ուղղելով Փարամազին և մյուսներին, ասում էր. «Ինչեր չէին կրնար ընել ձեզի պես խանդավառ մարդիկ, եթե հասարակաց երջանկության իդեալը ընդհանուր դրոշի մը տակ հետապնդվեր» (10, էջ 40)։ Փարամազը պատասխանում էր. «Ոչ միայն անտարբերությամբ ամլության դատապարտեցիք դուք մեր ահագին ջանքերը, այլ գիտակցաբար հետամուտ եղաք մեր բնաջնջումին, մոռանալով, որ հայության բնաջնջումը բուն իսկ Թուրքիո կործանման համազոր է։ Դուք քաջալերեցիք ոճիրն ու հարբստահարությունը և լռեցնել ջանացիք բողոքի ամեն մի արտահայտություն։ Դուք մեր կենսական հյութով ապրեցիք դարեր շարունակ և երբեք չուզեցիք, որ այդ հյութին աղբյուրը իրավունք ունենա կանգուն մնալու և արտադրելու... Դուք զայրացաք, երբ մենք Արևելքի մեջ Արևմուտքի քաղաքակրթության սերմերն ուզեցինք աճեցնել՝ մեր ու ձեր ապագան երաշխավորելու մտոք» (10, էջ 40)։ Դատապարտյալների

դեմ արձակված վճռով նրանք մեղադրվում էին «ինքնօրեն Հայաստան» կազմելու փորձի մեջ։

1916-ին Պրովիդենսում տպագրված մի գրքում կարդում ենք. «Ռուբեն, դոկ. Պեննե, Վանիկ, Հրանտ, Թոմմաս և այլն. բոլորն ալ հեղափոխության նոր, կայտառ և կենսունակ սերունդեն, որոնք Պոլսո հայ ուսանողության ծաղիկներն էին, որոնք որչափ հայ տառապանքն իրենց բեռ կնկատեին, նույնչափ մարքսիզմը իրենց կրոնքը, այնչափ հայրենասեր, որչափ մարդասեր, իրենց կանաչ-ջիվան արևը հայ դատի զոհաբերության սեղանին վրա դրին և դարձան առաջին նախավկաները հայ ազատագրության այս արյունոտ արշալույսին (66, էջ 34—35)։

«Անկախ Հայաստանի խնդրով» ամբաստանված Պողոս Նուբար փաշայի դատավարությունն առանձին կատարվեց։ Նա նույնպես հեռակա կարգով դատապարտվեց մահվան։

Դատապարտյալները կախաղան հանվեցին 1915-ի հունիսի 2/15-ին։ «Թուրք կառավարական զազիր և ժանգոտ մեքենան, ուխտված թշնամի առաջադիմության, սարսափահար՝ քաղաքակրթության լույսեն, անոնց վզին անցուց ոճիրի և սպանության դերձանով հյուսված այդ չվանի անուրը, հայը և Հայաստանը շատ սիրելնուն և թուրքն ու Թուրքիան շատ ատելնուն ոճիրին ամբաստանությամբ» (66, էջ 32)։

1920-ին Կ. Պոլսում լույս տեսած մի գրքում կարդում ենք. «Բովանդակ ազգի մը բնաջնջման գործը կազմակերպված է մեթոդավոր կերպով կառավարության կողմե, որուն հրահանգները փոխանցված են հայկական նահանգներու պաշտոնատարներուն շրջաբերականներով և հեռագրերով» (3, էջ 153—155)։

Ահա այսպիսին էր քաղաքական իրավիճակը Արևմտյան Հայաստանում երիտթուրքական հակաժողովրդական ռեժիմի պայմաններում, երբ բռնկվեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի հրդեհը, որի կրակների մեջ ողջակիզվելու էր արևմտահայությունը։ Այս մասին երկրորդ գրքում։

1. Ալպոյաճյան Արշ., Պատմություն Մալաթիո հայոց, Բեյրութ, 1961։
2. Ալպոյաճյան Արշ., Գրիգոր Զոհրապ, իր կյանքը և իր գործը, Կ. Պոլիս, 1919։
3. Անդրանիկ, Մուրադ և Պողոս Նուբար, Բ. հատոր, Կ. Պոլիս, 1920։
4. «Աշխատանք», թերթ, Իզմիր։
5. Աստվածատրյան Ա., Իթթիհադ-դաշնակցական հարաբերությունները, «Հայրենիք», № 12, 1964։
6. Աստվածատրյան Ա., Սողոմոն Թեհլիրյանի մահվան առթիվ, «Հայրենիք» № 12, 1960։
7. Աճառ, Մեր հավատամքը ազգային հարցի մասին, Կ. Պոլիս, 1910։
8. Արամյանց Հմայակ, Վերածնունդի երկունքը, Պատմություն հնչակյան կուսակցության, հ. Ա, Կ. Պոլիս, 1918։
9. Արամյանց Հմայակ, Անկախ Հայաստան. Պատմություն հնչակյան կուսակցության, հ. Բ, Կ. Պոլիս, 1919։
10. Արամյանց Հմայակ, Դեպի կախաղան, Պատմություն հնչակյան կուսակցության հ. Գ., Կ. Պոլիս, 1918։
11. «Արարատ», թերթ, Բեյրութ։
12. Արմեն Գարո, Ապրված օրեր, 1948։
13. Գանգրունի Հ., Կարելի՞ էր գործակցել իթթիհադի հետ, «Արարատ», 29 մայիս, 1973։
14. Գանգրունի Հ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ (1890—1910), Բեյրութ, 1973։
15. Գեղամյանց Եղիշե, Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում կամ հայկական հարցի յոթերորդ շրջանը (մասն 2-րդ), Բաքու, 1917։
16. Գյոզալյան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ. Հ. դաշնակցությունը, Փարիզ, 1927։
17. «Գործ» ամսագիր, Բաքու, 1917, № 1։
18. Դարբինյան Արտակ, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947։
19. «Դրոշակ», թերթ, ժնև։
20. Եվրոպա և Հայաստան։
21. Երամյան Համբ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929։
22. «Երևան», թերթ, Փարիզ։
23. Թալեաթ փաշայի հուշերը (թարգ. թուրքերենից), ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտ։
24. Թումանյան Ս., Հայ հեղափոխությունը պատմական տեսակետ, Կ. Պոլիս, 1932։
25. Թուրշյան Է., Մատը վերքին է դրված, «Լենինյան ուղիով», 1969, № 10։
26. Թուրքահայ ազատը, պատմական փաստաթղթեր, Ա. Տեղեկագիր, Տեր Մ. Արքեպիսկոպոս Օ...-ի (Օրմանյան) նախկին պատրիարք թուրքաց հայոց, Ս. Էջմիածին, 1919։
27. Լեփսիուս Ի., Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն, Կ. Պոլիս, 1919։
28. Հանյան Հավենանես, Հայոց տաժանքի համփաններով, Ա. հատոր, Թեհրան, 1965։
29. Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908—1914), Երևան, 1979։
30. Հայ հեղափոխական կուսակցություններ, 1916։
31. «Հայրենիք» ամսագիր, 1922, № 2, էջ 41։
32. Հիսնամյակ, 1887—1937 ս.-դ. հնչակյան կուսակցության, Պրովիդենս, ԱՄՆ, 1938։
33. Հովակիմյան Հովակիմ (Արշակունի), Պատմություն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967։
34. «Հորիզոն», թերթ, Թիֆլիս։
35. «Հորձանք»խմորատիպ թերթ, Վան։
36. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 707։
37. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 707, թթ. 1—17։
38. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33։
39. ՀՍՍՀ ՊԿՊԱ, քաղվածքների ֆոնդ, գ. 37, թ. 4։
40. Ղազարյան Հ., Ցեղասպան Թուրքը, Բեյրութ, 1968։
41. Ճիզմեճյան Մ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանը, 1890—1925, Ֆրեզնո, 1930։
42. Մարմարյան Արսեն, Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920։
43. ՄԱԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 50։
44. ՄԱԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 11։
45. ՄԱԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 74։
46. ՄԱԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 27։
47. «Մշակ», թերթ, Ֆրեզնո։
48. «Մշակ», թերթ, Թիֆլիս։
49. Նյութեր Հ. Հ. դաշնակցության պատմության համար, Ա. հատոր, Բեյրութ։
50. Զորուրյան Էդուարդ, Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920։
51. Զորմիսյան Լ., Կուսակցությունները, Բեյրութ, 1965։
52. «Պայքար», թերթ, Թիֆլիս։
53. Պարբիյան Սուրեն, Անդրանիկ, «Մշակ», Ֆրեզնո, № 159, 26. 7. 1927։
54. Սապահ Գուլյան Ս., Արմենակ և Աբրահամ, Չիկագո, 1917։
55. Սապահ Գուլյան Ս., Փոքր Հայքի հիշատակները, մասն առաջին, մայիսի 10—1 օգոստոսի, 1911, Չիկագո, 1917։
56. Սապահ Գուլյան Ս., Պատասխանատուները, Պրովիդենս, 1916։
57. Սասունի Կ., Քուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները, Բեյրութ, 1969։

58. Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918), Բոստոն, 1927։
59. Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1957։
60. Սասունի Կ., Թուրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914—1918), Բեյրութ, 1966։
61. Սեռբյան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Կահիրե, 1948։
62. Սեռբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937։
63. Փարամազ (Մաթևոս Սարգսյան), Կյանքն ու գործունեությունը, Պրովիդենս, 1954։
64. Տոնապետյան Պետրոս (Վաղինակ), Հայաստանը և հայ ժողովուրդը դարերի միջով, հատոր Բ., Փարիզ, 1949։
65. Տեր-Հակոբյան Մ., Թուրքահայաստանի կորուստը, Բեյրութ, 1967։
66. Քսան կախաղաններ, Նվեր 1915 հունիս 2/15-ին Կ. Պոլսու մեջ կախաղան հանված քսան ս. դ. հնչակյան ընկերներու հիշատակին, Պրովիդենս, 1916։

67. Голобородько И. Старая и Новая Турция, П.-М., 1914.
68. Готлиб В. Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960.
69. Красный Архив», т. 44, 1931.
70. Тыркова Ариадна, Старая Турция и младотурки, П., 1916.

71 Burtt, Joseph — The People of Ararat, London, 1926.
72 Macler, Frèdéric — La Nation Arméninienne, Son passe, Ses Malheurs, Paris, 1925.
73 Papazian B. — The Tragedy of Armenia, Boston-Chicago, 1918.
74 Walker Chr. — Armenia, The Survival of a Nation, N. Y., 1980.
75 Documents on British Foreign Policy, Volume I, part II, N. 103, pp. 907—910.

ДЖ. КИРАКОСЯН

МЛАДОТУРКИ ПЕРЕД СУДОМ ИСТОРИИ

Резюме

Истребление армянского народа в Османской империи в годы первой мировой войны было организовано и осуществлено партией турецких националистов — младотурок. 1,5 млн. человек стало жертвой младотурецкой государственной политики геноцида армян. Изучение, разоблачение и осуждение вчерашних палачей целого народа имеет актуальное политическое значение. Это тем более важно, что современные турецкие политики и социологи факты истории представляют в кривом зеркале, пытаются оправдать злодеяния султанов, талеатов и других палачей народов. В роли адвокатов турецких фальсификаторов истории сегодня выступают те политические лакеи-историки, советологи, антикоммунисты США, которые лелеют активное участие Турции в осуществлении агрессивных планов НАТО против Советского Союза.

Монография состоит из двух книг. Данная книга охватывает период с середины 90-х годов XIX века — со времени возникновения младотурецкого движения до 1914 года — кануна Первой мировой войны. Для лучшего понимания атмосферы, в которой возникло и развивалось это националистическое течение, дана картина как внутреннего, так и внешнего положения Османской империи конца XIX и начала XX веков. В книге анализируется политическое кредо младотурецких главарей, показаны их главные акции во внешней и внутренней политике. Узловые проблемы истории Западной Армении, национально-освободительной антисултанской борьбы армянского народа в книге рассматриваются в свете анализа и критики младотурецкой государ-

ственной политики. Показано, что, придя к власти (1908), младотурки проявили себя как враги рабочего движения, трудового народа, как воинствующие шовинисты, пантюркисты. Они растоптали элементарные права нетурецких народов, применяя к ним те же старые методы насилия и истребления. Задолго до начала Первой мировой империалистической войны они разработали каннибальскую программу уничтожения западных армян.

В книге приведены новые факты о связях младотурок с сионистами, об их антиармянских акциях, дана картина действий армянских национальных партий и организаций при антинародном режиме младотурок.

В монографии использованы архивные и другие оригинальные материалы. Она состоит из шести глав: Турецкая действительность 90-х годов XIX века; Европейская дипломатия и армянский вопрос в 90-х годах XIX века; Начало младотурецкого движения (конец XIX—начало XX века); Младотурки у государственной власти; Западные армяне под игом младотурок (1908—1914 гг.); Младотурецкий режим и практика армянских национальных партий.

JOHN KIRAKOSSIAN

THE YOUNG TURKS BEFORE THE COURT OF HISTORY

Summary

The decimation of the Armenian people in the Ottoman Empire in the years of World War I was initiated and realized by the party of Turkish nationalists known as the Young Turks. One and a half million people fell victim to the Young Turks' state-enforced policy of massacring the Armenians. The investigation, exposure and condemnation of yesterday's butchers of an entire nation is of transcendent political importance. This criminal act assumes overwhelming significance in view of the fact that contemporary Turkish politicians and historians present historical evidence in a distorting mirror in their efforts to justify the crimes of sultans, taleats and other hangmen of the peoples. Today those political flunkey-historians, sovietologists and US anti-communists patronizing Turkey's presence in the designs of NATO come out as the advocates of the Turkish falsifiers of history.

This monograph consists of two books. The present volume (Book One) covers the period from the mid-nineties of the 19th century to the rise of the movement of the Young Turks, as far as 1914, the eve of World War I. To get a better understanding of the atmosphere in which this nationalistic current originated and developed, a survey is contemplated of the internal and external situation of the Ottoman Empire at the link of the 19th and 20th centuries. The book makes an analysis of and characterizes the political credo of the ringleaders of the Young Turks and singles out the momentous acts in their domestic and foreign policy. The central problems in the history of Western Armenia and the national-libe-

ration anti-sultan campaign of the Armenian people are reviewed in the book in the light of a critical analysis of the state policy of the Young Turks. It is shown that coming to power in 1908 the Young Turks acted as enemies of the working-class movement and the working people in general, as militant chauvinists and pan-Turkists.They trampled underfoot the elementary rights of the non-Turkish peoples, applying to them the same old methods of violence and annihilation. They had mapped out their cannibalic scheme of wiping out the Western Armenians long before the imperialist First World War.

The book quotes fresh facts on the connections of the Young Turks and the Zionists, on their anti-Armenian misdeeds. In addition, a survey is made of the Armenian national parties and organizations under the anti-popular regime of the Young Turks.

Archival and other original data are used in the monograph which consists of six chapters: i) The Turkish Reality in the 90s of the 19th Century; ii) European Diplomacy and the Armenian Question in the 90s of the 19th Century; iii) The Onset of the Young Turks' Movement (the end of the 19th and the beginning of the 20th centuries; iv) Young Turks at the Helm of State Power; v) Western Armenians under the Yoke of the Young Turks (1908—1914); vi) The Young Turks' Regime and the Performance of the Armenian National Parties.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Գլուխ առաջին

Թուրքական դժնի իրականությունը XIX դարի 90-ական թթ. . . 11

Գլուխ երկրորդ

Եվրոպական դիվանագիտությունը և հայկական հարցը XIX դ. 90-ական թթ. 67

Գլուխ երրորդ

Երիտթուրքական շարժման խանձարուրը (XIX դարի վարտ—XX դարի սկիզբ) 116

Գլուխ չորրորդ

Երիտթուրքերը պետական իշխանության գլուխ (1908—1914 թթ.) . 177

Գլուխ հինգերորդ

Արևմտահայությունը երիտթուրքերի կրնկի տակ (1908—1914 թթ.) 250

Գլուխ վեցերորդ

Երիտթուրքական ռեժիմը և հայ ազգային կուսակցությունների դրությունը 301

Ամփոփում 352

Резюме . . . . . .

Կիրակոսյան Ջոն Սահակի
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ
(19-րդ դարի 90-ական թթ.—1914 թ.)

Киракосян Джон Саакович
МЛАДОТУРКИ ПЕРЕД СУДОМ ИСТОРИИ
(90-е годы XIX в. — 1914 г.)
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1982

Հրատ. խմբ.՝ Ի. Ս. Բրուտյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Բ. Մարգարյան

ՀԻԲ 3042
Հանձնված է շարվածքի 1. 06. 1982 թ.:
Ստորագրված է տպագրության 31. 08. 1982 թ.:
Չափսը՝ 84×108 1/32: Թուղթ տպ. № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»
Տպագրություն՝ բարձր: 18,9 պայմ. տպագր. մամ., հրատ.՝ 16,51 մամ.:
Պատվեր՝ 1282: ՎՖ 06882: Տպաքանակ՝ 20 000: Գինը՝ 2 ռ. 20 կոպ.:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван, ул. Алавердяна, 65.